ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

Ս. Կ. Սաղաթելյան

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ա 700

*Հրատարակության է երաշխավորել*
*Երևանի պետական համալսարանի*
*սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտխորհուրդը:*

Կազմող խմբագիր՝ ս.գ.թ. Ս. Կ. Սաղաթելյան
Թարգմ. տեքստերի խմբագիր՝ ս.գ.թ. Ս. Կ. Սաղաթելյան
Թարգմանիչներ՝ Ս. Կ. Սաղաթելյան, Գ. Միքայելյան, Ա. Ղալամդարյան, Տ. Դարբինյան

Ա 700 Առօրեականության սոցիոլոգիա. քրեստոմատիա/ խմբ. Ս. Կ. Սաղաթելյան, Եր.: ԵՊՀ հրատ., 2022, 492 էջ:

Գիրքը ամփոփում է առօրեականության սոցիոլոգիական ուսումնասիրման դիտանկյունից նշանակալի տեսական ռեսուրսները: Այն ներառում է դասական և ժամանակակից արևմտյան սոցիոլոգների մենագրություններից հատվածներ և գիտական հոդվածներ, որոնք առնչվում են դասական սոցիոլոգիական տեսաբանման մոտեցումների վերաիմաստավորման խնդիրներին, առօրյա կյանքի իրականության հայեցակարգման մոտեցումներին և առօրեականության սոցիոլոգիական վերլուծության ուղղություններին:

Ձեռնարկը նախատեսված է սոցիոլոգիայի, մասնավորապես առօրեականության ոլորտը, սոցիոլոգիայի տեսությունն ու պատմությունը ուսումնասիրող, դրանով հետաքրքրվող մասնագետների, ուսանողների և հանրության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-5-8084-2539-2

© ԵՊՀ հրատ., 2022
© Կազմողի համար, 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. Հասարակությունից այն կողմ. հասկացության հիմնախնդրավորումը արդի սոցիոլոգիական մտքում ................................ 5
Ալան Թուրեն. Նոր պատկերացում հասարակական կյանքի մասին ......... 7
Ջոն Ուրի. Սոցիոլոգիան հասարակություններից անդին. XXI դարի մոբիլությունները ................................................................................. 39
Պյոտր Շտոմպկա. Ուշադրության կենտրոնում առօրյա կյանքն է. նոր շրջադարձ սոցիոլոգիայում ........................................................... 65
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. Առօրեականությունն իբրև «Գերագույն իրականություն». իմաստի վերջավոր ոլորտներ ......................................... 91
Ալֆրեդ Շյուց. Բազմակի իրականությունների մասին ............................... 93
Արոն Գուրվիչ. Գոյության կարգերը ........................................................... 140
Թոմաս Լուկման, Փիթեր Բերգեր. Առօրյա կյանքի իմացության հիմքերը ............................................................................................ 159
ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. Առօրեականության հետազոտման ուղղությունները սոցիոլոգիայում ............................................................. 193
Հարոլդ Գարֆինկել. Առօրեական գործողությունների սովորական հիմքերի ուսումնասիրություն ...................................................................... 195
Իրվինգ Գոֆման. Ֆրեյմերի վերլուծություն. Էսսե առօրեական փորձի կազմակերպման մասին ............................................................................ 235
Հերբերտ Բլումեր. Հասարակությունը որպես սիմվոլիկ փոխազդեցություն ........................................................................................ 260
Ռենդալ Քոլինզ. Փոխազդեցության ծիսակարգի շղթաները .................... 271
Լյուկ Բոլտանսկի, Լորան Տևենո. Քննադատական ունակության սոցիոլոգիա ................................................................................................ 305
Թեոդոր Շացկի. Պրակտիկայի զիտակցական կարգերը .......................... 337
ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ. Նյութական իրերի վերաիմաստավորումը. օբյեկտին կողմնորոշված սոցիոլոգիա ................................................................... 351
Բրունո Լատուր. Երբ իրերը հակազործում են. «գիտության հետազոտությունների» հնարավոր ներդրումը հասարակական գիտություններում ................................................................................... 353
Ջոն Լո. Օբյեկտներ և տարածություններ .................................................. 381
Ռոմ Հարե. Նյութական օբյեկտները սոցիալական աշխարհներում ....... 407

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Ժամանակը և տարածությունը առօրեականության աշխարհում .................................................................. 427
Բրունո Լատուր. Մտքի ընթացքները. ժամանակի հինգերորդ չափումը և դրա արտադրումը ........................................................................ 429
Պյեր Բուրդյո. Ֆիզիկական և սոցիալական տարածություններ. ներթափանցում և յուրացում ........................................................................ 468
Անրի Լեֆևր. Առօրեականը և առօրեականությունը .................................. 484

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ.
## ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԱՎՈՐՈՒՄԸ
## ԱՐԴԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՏՔՈՒՄ

ԱԼԱՆ ԹՈՒՐԵՆ

# ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ[1]

**Ներածություն**

Սոցիոլոգիան առաջացել է որպես հասարակական կյանքի վերլուծության հատուկ ձև: Այն ներկայացրել է հասարակական համակարգը շարժման մեջ՝ ավանդույթից դեպի արդիականություն, հավատալիքներից դեպի բանականություն, վերարտադրությունից դեպի արտադրություն կամ, եթե օգտագործենք Թյոնիսի կողմից տրված ամենահավակնոտ ձևակերպումը՝ «Gemeinschaft»-ից դեպի «Gesellschaft»: <>

Բայց արդեն առնվազն կես դար առաջ նշանավորվեց հանրային կյանքի մասին նման պատկերացման ճգնաժամը: Եվ նշանավորվեց այնչափ հստակ, որ մենք այսօր այն անվանում ենք «դասական սոցիոլոգիա»՝ անուղղակիորեն ճանաչելով մեզ դրանից բաժանող հեռավորությունը: Հիմնվելով նույն էվոլյուցիոն հայեցակարգի վրա, ինչպես և մինչ 1914 թ. սոցիոլոգիան, Թալքոթ Պարսոնսը շեշտը դրեց սոցիալական համակարգի ինտեգրման պայմանների և ձևերի, այլ ոչ համակարգի արդիականացման վրա: Սա էլ ավելի ամրապնդեց համապատասխանությունը համակարգի և դրանում գործող դերակատարների վերլուծությունների միջև: Սոցիոլոգիան ամուր հենվեց «ինստիտուտ» և «սոցիալականացում» փոխլրացնող հասկացությունների վրա, որոնք միասին էին պահվում դերի կենտրոնական հասկացության շնորհիվ:

Իրականում այս կառույցը դասական սոցիոլոգիայից էլ ավելի կարճ կյանք ունեցավ: Դերակատարը (actor) շատ արագ ընդվզեց համակարգի դեմ, հրաժարվեց իրեն դիտարկել հանրային համակարգում ունեցած մասնակցության դիտանկյունից, բացահայտեց կառավարող-

[1] Турен, А. (1998) Возвращение человека действующего. Очерк социологии. Москва: Научный Мир, с. 10-41. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

ների իռացիոնալ իմպերիալիզմը և սկսեց դիտարկել իրեն ոչ թե արդիականության մակարդակի, այլ ավելի շուտ սեփական առանձնահատուկ պատմության և մշակույթի առնչությամբ: Արևմտյան հասարակությունները երկար ժամանակ կարող էին իրենց ներսում տեսնել տեղական հանրությունից դեպի ազգային և նույնիսկ միջազգային հանրությանն անցնելու ձևը: Սակայն, հանրային բեմի մասնակիցների թվի մեծացմանը զուգահեռ վերջինիս սահմանումը, ինչպես նաև այն կազմող «արժեքների» սահմանումը, սկսում էր տրոհվել: Հասարակության դերակատարները և հասարակությունը իրար համապատասխանեցվելու փոխարեն հակադրվեցին իրար, և անմիջապես սկսվեց սոցիոլոգիայի ճգնաժամը: Վերջինս սաստկացավ 60-ականների հուզումներից հետո: Այդ ժամանակ առավել լայն ազդեցություն ունեցավ հասարակական կյանքի այնպիսի պատկերացումը, որը տեղ չէր թողնում դերակատարների համար՝ շեշտը դնելով ամենակարող գերիշխանության պահպանման և հարմարվողականության անխիղճ մեխանիզմների վրա: Դերակատարը, մի կողմ նետելով հասարակական կյանքի կանոնները, էլ ավելի ներփակվեց իր ինքնության որոնումներում՝ հասարակությունից մեկուսանալու կամ սեփական գիտակցությունը ու դրա արտահայտման ձևերն ունեցող փոքր խմբերի ստեղծման ճանապարհով:

80-ականների սկզբին հասարակական կյանքի մասին որևէ գերիշխող պատկերացում այլևս գոյություն չուներ: Քաղաքական և հատկապես ազգային գաղափարախոսությունները, որոնք հասարակության գործող դերակատարներին դիտարկում էին նախ և առաջ որպես քաղաքացիներ և հայտարարում, որ հավաքական գործողության ուժեղացումն ու պետական իշխանության նվաճումը հանգեցնում են անհատի ազատությանը, քանդվեցին՝ անտարբերությունից ու մերժումից բացի ոչինչ չառաջացնելով: Այս անգամ անհրաժեշտություն առաջացավ դասական սոցիոլոգիան փոխարինել հասարակական կյանքի մասին մեկ այլ պատկերացմամբ:

Այսպիսով, պետք է հրաժարվել հասարակական համակարգի հետ որևէ առնչություն չունեցող դերակատարներին վերլուծելու թվացյալ

փորձերից կամ, ընդհակառակը, հրաժարվել համակարգի նկարագրությունից՝ առանց դերակատարների:

### Հասարակությունից դեպի սոցիալական գործողություն

#### *Դասական սոցիոլոգիա*

Սոցիոլոգիան ստեղծվել է որպես արդիականության գաղափարախոսություն: Պոզիտիվիստական ավանդույթի համաձայն այն երբեմն ծառայում էր իբրև լուսավորյալ զինվորականների կամ քաղաքացիական տիրակալների արդարացում, ինչպես, օրինակ՝ Բրազիլիայում կամ Թուրքիայում: Ավելի հազվադեպ այն արտացոլում էր նոր սոցիալական շերտերի վերելքը, օրինակ՝ Ֆրանսիայում, որտեղ սկսած Դյուրքհեյմից շատ բան արվեց սոցիոլոգիայի և սոցիալիզմի մերձեցման համար: Բայց առավել հաճախ, հատկապես ի դեմս պարսոնսյան դպրոցի, այն կենտրոնի, հասարակական ինտեգրման, ազգային հասարակության և արդիականության նույնականացման գաղափարախոսություն էր: Սա է պատճառը, որ սոցիոլոգիան տարերայնորեն սահմանվում էր որպես հասարակության մասին գիտություն, ընդ որում, այս բառն օգտագործվում էր ժամանակակից հասարակության իմաստով և հակադրվում «Gemeinschaft»-ին՝ նախկին հասարակությունների կազմակերպման տիպին: Այս անցումը բազմակիից եզակիի հասկանալի է. ազատվելով իր տեղական աշխարհագրական, մշակութային և սոցիալական առանձնահատկություններից՝ մարդկությունը շարժվում է դեպի համընդհանուր արժեքների և Բանականության նորմերի (որոնք միաժամանակ արտադրության և իրավունքի արժեքներ և նորմեր են) կողմից կառավարվող հասարակություն:

Ինչպե՞ս կարող է առաջընթացի, անընդհատ շարժման մեջ գտնվող ամբողջը միևնույն ժամանակ լինել կայուն, ինտեգրված համակարգ, որը կարող է պահպանել ներքին հավասարակշռությունը և կազմակերպումը, որն օժտված է նույնիսկ կարգավորման մեխանիզմներով: Դասական սոցիոլոգիան չի կարող պատասխանել այս հարցին. կոլեկտիվ գիտակցության գաղափարն ավելի շատ շփոթեցնում է, քան

հստակություն հաղորդում: Իսկ իրականում այն, ինչ նման սոցիոլոգիան անվանում է հասարակություն, միայն սոցիալական գործունեության խառնուրդ է, որը սահմանվում է այնպիսի ընդհանուր հասկացություններով, ինչպիսիք են՝ արդյունաբերական արտադրությունը, շուկան կամ ազգային պետությունը: Հասարակության միասնությունն այն է, ինչը տալիս և կարգադրում է օրինական իշխանությունը: Վերջինիս սահմանները ոչ թե տեսական են, այլ իրական. դրանք մաքսային կետեր են: Հասարակությունը հայրենիքի կեղծանունն է:

Դասական եվրոպական սոցիոլոգիան, որը 20-րդ դարի զարգացող երկրների սոցիոլոգիան է, ուսումնասիրում է միայն *խաղը* համակարգերը, որոնք սոցիալական են և քաղաքական միաժամանակ (society և polity): Եվ հաճախ սոցիոլոգիական տեսությունները խաղում էին ազգային միավորման գաղափարախոսությունների դեր: Բոլորովին վերջերս պարսոնսյան սոցիոլոգիան՝ դասական սոցիոլոգիայի այս վերջին զգալի կառույցը, իր ուժի և հեգեմոնիայի գագաթակետին հասած Միացյալ Նահանգների հայելին էր: Այս տեսակի դասական սոցիոլոգիայի հիմնական արդյունքն այն է, որ այն շատ քիչ տեղ է թողնում սոցիալական գործողության համար: Որքան շատ են խոսում հասարակության մասին, այնքան քիչ են խոսում դերակատարների մասին, քանի որ վերջիններս ընկալվում են պարզապես որպես սոցիալական համակարգում իրենց զբաղեցրած տեղին բնորոշ ատրիբուտների կրողներ: Անկախ նրանից՝ գտնվում են նրանք կենտրոնում կամ ծայրամասում, վերևում կամ ներքևում, նրանք ավելի կամ պակաս չափով կիսում են արդիականության արժեքները:

Եթե հաշվի առնենք ավելի բարդ կապերը, ապա դերակատարների վարքը կարելի է բացատրել նրանց դերերի միջև առկա համապատասխանություններով կամ էլ հասարակության արժեքների, նորմերի ու կազմակերպական ձևերի ինտեգրման մակարդակով՝ ուժեղ կամ թույլ: Դաստիարակությունը գործողության այս հայեցակարգի լավագույն վկայությունն է. լավ աշակերտը, ինչպես և լավ ուսուցիչը, անտարբեր են. նրանք նույնացվում են Բանականության հետ, որին կարող են դիմադրել միայն իռացիոնալ կրքերը: Չկա դերակատար համա-

պարփակ բանականության և այն ուժերի կամ գաղափարախոսությունների միջև, որոնք դրան դիմակայում են: Որտեղի՞ց է առաջանում այն ձևավորելու, առաջնորդելու և անգամ պարտադրելու անհրաժեշտությունը: Դասական սոցիոլոգիայում գործող դերակատարները դիտարկվում են միայն այն տեսանկյունից, թե արդյո՞ք նրանք օգնում կամ դիմադրում են առաջընթացին: Նիկոս Պուլանտզասը ծայրահեղության հասցրեց այս ավանդական հայեցակարգը՝ պահանջելով սոցիալական իրավիճակների (որոնք սոցիալական վերլուծության համար միակ կարևորն են) և գործող դերակատարների ամբողջական տարանջատում: Հասարակության այս հայեցակարգի հետ կապված պատմագրությունը, իր հերթին, հաղթահարելով քաղաքակրթության գաղափարը, այսինքն՝ համակազմերի բնական պատմությունը, այն համակազմերի, որոնք ծնվում, մեծանում, ծերանում և մահանում են, կենտրոնական նշանակություն տվեց առաջընթացի, ժամանակակից հասարակության և ազգային պետությունների ձևավորման գաղափարներին: Միևնույն ժամանակ այն քայլ առ քայլ անցավ անհատների և ազգերի ստեղծագործական կամքին հավատացող ռոմանտիկ ուղղությունից դեպի պակաս դինամիկ տեսլականը, որի համաձայն քաղաքական ուժերի և մշակութային պատկերացումների հարաբերակցությունը որոշվում է ենթակառուցվածքի վիճակով: Սկզբում հայտնվում է դարերից եկող առասպելներով պատված դերակատարը, որը այնուհետև ճզմվում է տնտեսական դետերմինիզմով:

Ֆունկցիոնալիստական սոցիոլոգիան բացառում է գործողությունը այլ կերպ, քան մարքսիստական սոցիոլոգիան, բայց ոչ պակաս արդյունավետ: Այն փոխարինում է կոլեկտիվ դերակատարներին կատեգորիաներով, մակարդակներով, շերտերով կամ սոցիալական մասնակցության մակարդակով որոշվող վիճակագրական այլ համակազմերով:

Այս դասական սոցիոլոգիան հանգչում է երեք սկզբունքների վրա․

– հասարակության որոշակի տիպի և «պատմության իմաստի» միաձուլումը ժամանակակից հասարակության հասկացության մեջ,

– սոցիալական համակարգի նույնացումը ազգային պետության հետ, որի պատճառով կենտրոնական տեղ է ձեռք բերում «ինստիտուտ» հասկացությունը,
– հասարակության գործող դերակատարների փոխարինումը վիճակագրական համակազմերով, որոնք որոշվում են սոցիալական մասնակցության մակարդակով կամ ձևով և հասարակական համակարգի գործունեության ներքին տրամաբանության նշաններով:

***Քայքայումը***

XX դարի առաջին կեսին միաժամանակ էվոլյուցիոն և ֆունկցիոնալիստական սոցիոլոգիան քայքայվեց ավելի շուտ պատմական փոփոխությունների պատճառով, քան մտավոր քննադատության: Եվրոպան դադարեց հավատալ արդիականացման և ռացիոնալացման գաղափարին՝ սկսած Մեծ ճգնաժամից, ֆաշիզմի վերելքից, Խորհրդային Միությունում և Գերմանիայում համակենտրոնացման ճամբարների աճից: Եվրոպայի հիասթափությունը լավագույնս փոխանցում է այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «առաջընթացի ճգնաժամը» և «բանականության մայրամուտը»: Միևնույն ժամանակ, XX դարի պատմությունը ակնհայտորեն հուշում էր սոցիալական համակարգի և պետության խառնվելու անհնարինության մասին: Բանն այն է, որ մոլորակն այլևս չէր գտնվում պետությունը վերահսկող բուրժուազիայի իշխանության տակ, ինչը պայմանավորված էր կոմունիստական կամ ազգայնական, արդյունաբերական և ավտորիտար պետությունների վերելքով: Եվ անմիջապես սոցիոլոգիան կորցնում է վստահությունը դերակատարի՝ որպես պատմական դերակատարի նկատմամբ: Պրոլետարիատը, բուրժուազիան, ազգը դարձան քաղաքական իշխանության կողմից կառավարվող գաղափարական կառույցներ կամ խամաճիկներ:

Քննադատական սոցիոլոգիան ուժի հետևում հայտնաբերում է կարգը, կոնսենսուսի հետևում՝ հարկադրանքը, արդիականացման մեջ գտնում է իռացիոնալը, իսկ ընդհանուր սկզբունքներում՝ մասնավոր

հետաքրքրությունները: Մոդեռնիստական Եվրոպան իրեն նույնացնում էր լուսավորականության և առաջընթացի հետ: Ճնշված դասերը, գաղութացված ազգերը, գրաքննությունից դժգոհ ստեղծագործողները, ինչպես նաև իբրև աննորմալ ու մարգինալացված պիտակավորված մարդիկ դեն նետեցին այդ համապարփակության հավակնությունը և արդարության, ազատության և անձնազոհության հետ՝ ինքնանույնականացումը: Այսպիսով, զարգացավ ոչ այնքան այլ սոցիոլոգիա, որքան հակասոցիոլոգիա: Դասական սոցիոլոգիայում կենտրոնական էր արժեքների ինստիտուցիոնալացման և դերակատարների սոցիալականացման միջև համապատասխանության գաղափարը: Այժմ վերջինիս հակադրվել էր համակարգի և դերակատարի տարանջատումը: Համակարգը հասկացվում էր որպես կանոնների և հարկադրանքի ամբողջություն, որը դերակատարը պետք է սովորի ավելի շուտ օգտագործել կամ շրջանցել, քան հարգել: Դերակատարն արդեն քաղաքացի կամ աշխատող չէր, այլ անհատ, մշակութային ավանդույթին կապված առաջնային հանրույթների անդամ: Վերջապես, ինչը առանձնապես կարևոր է, միմյանցից առանձնացան հասարակության գործառման նորմերն ու պատմական զարգացումը: Պատմական փոփոխությունը արդեն չի սահմանվում որպես առաջընթաց կամ արդիականացում, այլ ընկալվում է որպես սահմանափակ ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու և անորոշության գոտիները վերահսկելու ձգտող ռազմավարությունների ամբողջություն:

Հասարակության գաղափարն անհետացավ, և «սոցիալականը» փոխարինվեց մի քաղաքականությամբ, որն ընդունեց երկու հակադիր ձև՝ մի կողմից տոտալիտար իշխանության, որը խժռում էր սոցիալական կյանքը, մյուս կողմից՝ ճնշման խմբերի և ապարատների, որոնք բախվում էին քաղաքական շուկայում: Սա սառը աշխարհ է, որից բացառվում է դերակատարը՝ իր բոլոր հավատալիքներով, նախագծերով, հասարակական հարաբերություններով, զուտ սոցիալական գործնդությունների ունակությամբ:<>

Հասարակական մտքի այս փուլը կապված էր երկու մեծ պատմական փոփոխությունների հետ: Նախ՝ ազատագրական շարժումները

վերածվեցին ավտորիտար պետությունների: Երկրորդ, արդյունաբերականացված երկրներում տեղի ունեցավ մշակույթի փոփոխություն, և առաջ եկան գիտելիքների, տնտեսական ակտիվության և էթիկական մոդելների նոր ձևեր, որոնք ժամանակավորապես կտրված էին սոցիալական և քաղաքական հարաբերություններից: Հասարակությունը պայթեցվեց. մի կողմից այն կլանված էր պետական իշխանության կողմից, մյուս կողմից այն «ետ էր մնում» (ուշացումը ավելի շուտ սոցիալական է, քան մշակութային) մշակութային փոխակերպումների, այսինքն՝ շրջակա միջավայրի հետ հարաբերությունների կառուցման առումով:

Դասական սոցիոլոգիայի ոչնչացումն ունի երկու տիպի հետևանքներ և արժեքներ, որոնց միջև հարաբերությունները բարդ են: Նախ՝ արդիականությանը բնորոշ վերջավորականությունը տեղը զիջում է հասարակական հարաբերությունների ավելի գիտական վերլուծությանը: Միմյանց հետ կապված էվոլյուցիոնիզմի և ֆունկցիոնալիզմի ավերակների վրա աճում է մշակույթի, տնտեսության և նույնիսկ հասարակական համակարգերի այնպիսի վերլուծություն, որը բացառում է որևէ անդրադարձ հասարակության բնույթին կամ պատմության իմաստին: «Հասարակությունը» դադարում է լինել սոցիոլոգիայի օբյեկտը, որի տեղը զբաղեցնում են վարքը և հասարակական հարաբերությունները:

Բայց սոցիալական գործողության հնացած հայեցակարգի ոչնչացումը հանգեցնում է, առնվազն առաջին շրջանում, սոցիալական գործողության գաղափարի ընդհանուր մերժմանը և ժամանակակից հասարակությունների ուսումնասիրման շրջանակներում պակաս բարդ կենդանի էակների ուսումնասիրություններից վերցված հասկացությունների կիրառմանը: Նրանց «երազանքը» ինքնավերարտադրությունն է, իսկ ինքնազղեցությունը նպատակ ունի պահպանել ներքին հավասարակշռությունը: <>

Ահա թե որտեղ ենք մենք գտնվում: Այլևս չկա հասարակության գործող դերակատարների վերլուծության ճանաչված մոդել: Սոցիոլոգիան ճշգրիտ իմաստով այլևս գոյություն չունի. դասական սոցիոլո-

գիան քանդված է, իսկ զուտ քննադատական սոցիոլոգիան կարող է շատ շուտով փլուզվել:

Ստրուկտուրալիստական ուղղվածության՝ «մարդու մասին բնական գիտությունները» զբաղեցնում են այն ոլորտի մի մասը, որը սոցիոլոգիայի ոլորտն էր: Պատմությունը՝ որպես կոնկրետ համակազմերի կոնկրետ ուսումնասիրություն, ծավալվում է ներկայի վրա: Քաղաքական գիտությունը, հետևելով Հաննա Արենդտի առաջարկություններին, ազատվում է սոցիոլոգիայից: Վերջինս, չունենալով ինտելեկտուալ սահմանում, ընկղմվում է մանր նկարագրական աշխատանքների կամ կորպորատիվիզմի անհեթեթության մեջ:

*Հակասոցիոլոգիա*

Այս պայմաններում հարց է առաջանում ինչո՞ւ չընդունել, որ հասարակության սոցիոլոգիան կերպար էր՝ ստեղծված հասարակության որոշակի տեսակով իր իսկ մասին, այն է՝ արդյունաբերական դարաշրջանում գերիշխող կապիտալիստական երկրների: Արդյո՞ք այն դիսկուրս էր, որի դերը նման է աստվածաբանության կամ քաղաքակրթությունների համեմատական պատմության դերին հասարակական կյանքի այլ պատմական տիպերում: Այս մոդելը քայքայվում է մեր աչքի առաջ, ճիշտ այնպես, ինչպես նախորդները: Մենք որոշ սոցիալական համակազմեր անվանում էինք մշակույթներ, մյուսները՝ քաղաքակրթություններ: Այժմ մենք եկել ենք նրան, որ դրանցից մի քանիսը (կամ գուցե մեկը) անվանում ենք հասարակություն: Բայց «հասարակական» և «հասարակություն» բառերն անհետանում են մեր բառապաշարից. մեզանից ո՞վ ինչ-որ շփոթություն չի զգում դրանք արտասանելիս: Նույնիսկ հասարակական իրականության ու հասարակական խնդիրների գաղափարները կասկածի տակ են դրված: Փիլիսոփաները հաճախ առաջարկում են կործանել սոցիալականը, որը դիտարկում են որպես անիսկականության և անհրաժեշտության ոլորտ՝ կոչ անելով հակասոցիալական ազատության, որի կրողը կամ անհատն է, կամ փիլիսոփայական սկզբունքներով առաջնորդվող քաղաքական գործընթացը:

Սոցիալականի նման կործանումը ծայրահեղության է հասցնում աշխարհիկացման շարժումը, որի դիրքերից հասարակության մեջ տեսնում են նոր կուռք՝ մարդկային զոհեր պահանջող և տապալման կարիք ունեցող: Շատերը ցանկանում են շուկայի և անհատական հետաքրքրության բացարձակ հաղթանակ՝ կապված սոցիալական կյանքի նորմերով միշտ ճնշվող ցանկալիի և երևակայականի ազատագրման հետ: Մյուսները, ընդհակառակը, վախենում են հասարակական մարդու մայրամուտից, կամ Ռիչարդ Սեննեթի և Քրիստոֆեր Լեշի կողմից մատնանշված նարցիսիզմի ներխուժումից[2]: Բայց հարցն այն է, թե արդյո՞ք պետք է իսկապես ընտրություն կատարել մի կողմից ուժեղ հասարակության՝ իր հավաքական գիտակցությամբ և արժեքներով, և մյուս կողմից՝ միայն խաղի կանոններով սահմանափակվող շահերի և ցանկությունների ազատագրման միջև:

Ոմանց համար այն քննադատությունը, որը ես առաջ քաշեցի հասարակության գաղափարի և ընդհանրապես դասական սոցիոլոգիայի դեմ, բավարար չէ. այն պետք է փոխարինի ավելի արմատական ժխտողականությունը, հասարակական կյանքի միասնության ցանկացած սկզբունքի կործանումը: Սա է այսօրվա գլխավոր վեճի իմաստը: Համաձայնենք, որ դասական սոցիոլոգիան ճգնաժամ է ապրում, ընդունենք, որ հասարակության՝ որպես կարգուկանոնի և գերիշխանության հարյուր տոկոսանոց համակարգի մասին պատկերացումը միայն գաղափարախոսական տարբերակ է, որի շրջանակներում հնարավոր չէ վերլուծել արագ և բարդ փոփոխություններ ապրող սոցիալական իրականությունը: Բայց քանի մենք արդեն հասել ենք այդ կետին, հարց է առաջանում, թե ո՞ր ուղղությունն է պետք ընդունել: Եվ առաջին հերթին, հնարավո՞ր է արդյոք խուսափել հասարական կյանքի՝ իբրև շուկայի մասին պատկերացումից, որի միակ սահմանը կարող էր լինել աղքատության, մոլեռանդության և միլիտարիզմի իշ-

[2] Տե՛ս Sennett, R. (1974) The Fall of Public Man. New York: A. Knopf, Lash, C. (1978) The Culture of Narcissism. American life in an age of diminishing expectations. New York: W. W. Norton.

խանության տակ գտնվող հեռավոր երկրներից եկող նվաճողների սպառնալիքը:

***Նոր պատկերացում հասարակական կյանքի մասին***

«Հասարակություն» հասկացությունը պետք է բացառվի հասարակական կյանքի վերլուծությունից: Սակայն հնարավոր և անհրաժեշտ է համարվում նկարագրել վերլուծության այն տիպը, որի կենտրոնում սոցիալական գործողության գաղափարն է: Արդյո՞ք դա նշանակում է դասական սոցիոլոգիայի քողի տակ թաքնված և հակասոցիոլոգիայի ջանքերով բացառված գործող դերակատարի վերադարձը: Հիմնականն այստեղ այն է, որ դերակատարի և համակարգի աճող բաժանումը գործողության համակարգի գաղափարի շնորհիվ կարող է փոխարինվել նրանց փոխկապվածության գաղափարով: Բայց ի՞նչ է սա նշանակում:

Եթե դասական սոցիոլոգիան միավորում էր մշակույթը, սոցիալական կազմակերպությունը և էվոլյուցիան՝ ձևավորելու համար այն մեծ մշակութային, սոցիալական և պատմական համակազմերը, որոնք անվանում էր հասարակություններ, մենք ձգտելու ենք առանձնացնել դրանք միմյանցից, որպեսզի ստեղծենք հիմնախնդիրների այն տարածությունը, որում սոցիոլոգիան կարող է տեղավորվել: Սկզբից գալիս է մշակույթը: Ինչպե՞ս կարելի է այլ կերպ մտածել այն ժամանակաշրջանում, որում ստեղծվում է նոր մշակույթ, նոր հարաբերություններ աշխարհի հետ, մինչդեռ հասարակական կյանքի ձևերը մնում են հին, քայքայված կամ անկանոն: Նման մշակույթը հասարակական հարաբերությունների ընդհանուր «շրջանակը» կամ արժեքների ամբողջությունը չէ: Ավելին, այն «գերիշխող գաղափարախոսություն» էլ չէ, ինչպես թեթևամտորեն ներկայացնում է ձախ մտածողությունը: Մշակույթն այն իմաստն է, միջոցների և մոդելների հավաքածուն, որը դերակատարները ձգտում են կառավարել, որը նրանք ցանկանում են վերահսկել, որը նրանք յուրացնում են կամ միմյանց հետ քննարկում այն սոցիալական կազմակերպության վերածելու հնարավորությունները: Վերջինիս ուղղությունները պայմանավորված են կոլեկտիվ աշ-

խատանքով, գործողության (ինքնակառավարման) մակարդակով: Ես *պատմականության մակարդակ* եմ անվանում հիշատակված գործողության մակարդակը, որը դրսևորվում է ինչպես գիտելիքների բնույթում, այնպես էլ տնտեսական ներդրումների մեթոդներում կամ էթիկայում: Այսօր իրականացվում է անցում հասարակական կյանքի տիեզերակենտրոն կերպարից դեպի մարդակենտրոն կերպարը: Երաշխավորներ, այն է՝ մարդկային աշխարհից դուրս գտնվող իրերի նկատմամբ մարդկային գործողության լեգիտիմացման սկզբունքներ, փնտրելու փոխարեն պատմականության ամենաբարձր մակարդակի հասած հասարակությունը մարդուն սահմանում է միայն «գործողություններ» և «հարաբերություններ» հասկացություններով: Իրերի էությանը և բնության վկայակոչումն անհետանում է գիտության ոլորտից: Բարոյագիտության մեջ բարոյականությունը այլևս չի որոշվում պատվիրաններով և շահերի ու կրքերի հաղթահարմամբ, այլ չափվում է ինքնահաստատման և սեփական ընտրության կամքով, ինչպես նաև ուրիշներին իբրև անհատներ ճանաչելով (իրենց ինքնատիպության և գործելու կամքի մեջ):

Հասարակության գործող դերակատարները տիրապետում են պատմականության բնագավառը որոշող մշակութային ուղղություններին և վիճարկում են դրանց նկատմամբ վերահսկողությունը: Այսօր կենտրոնական հասարակական կոնֆլիկտը տրոհում է հանրությունը նրանց, ովքեր այդ մշակութային մոդելների ագենտներն ու տիրապետողներն են, և նրանց, ովքեր կախյալ մասնակցություն են ունենում դրանցում և ձգտում են ազատել դրանք հասարակական իշխանության ազդեցությունից:

Մեկ օրինակը բավարար կլինի: Աշխատավորական շարժումը արդյունաբերական հասարակության կենտրոնական դերակատարն է, քանզի համարում է, որ մեքենաները և աշխատանքի կազմակերպումը լավն են միայն այնքանով, որքանով դրանք ծառայում են աշխատավորներին և բնակչությանը: Ձեռնարկատերերը նույնպես այս հասարակության կենտրոնական դերակատարներն են, քանի որ նմանատիպ լեզվով են խոսում. մեր գործողությունը և մեր շահույթը լավն են,

քանի որ դրանք զարգացնում են արդյունաբերությունը և բարձրացնում ընդհանուր կյանքի ընդհանուր մակարդակը: Արդյունաբերողների և աշխատավորների կոնֆլիկտը այսպիսով հայտնվում է արդյունաբերական հասարակության կենտրոնում. երկու ճամբարներն էլ հավատում են արդյունաբերությանը և կիսում են միևնույն մշակութային նպատակները, բայց պայքարում են արդյունաբերական մշակույթին հակադիր ձևեր հաղորդելու համար:

Այլևս Մարքսին և Վեբերին հակադրելու պատճառ չկա: Մեկը այսօրվա սոցիոլոգիա է բերում այն գաղափարը, որ հասարակական կյանքը հիմնված է գերիշխանության կենտրոնական հարաբերության վրա, մյուսը, որ դերակատարը կողմնորոշված է արժեքներին: Համադրելով այս երկու գաղափարները՝ ստանում ենք *հասարակական շարժման* սահմանումը. դերակատարները, որոնք միմյանց հակադրվում են գերիշխանության և կոնֆլիկտի հարաբերություններով, ունեն միևնույն մշակութային կողմնորոշումները և միմյանց դեմ պայքարում են այդ մշակույթի և մշակույթով թելադրված գործունեության ձևերի հասարակական կառավարման համար: Հասկանալի է, որ նման միացումը հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, եթե հրաժարվենք այն ամենից, ինչը Մարքսի կամ Վեբերի մոտ կապված է հասարակական կյանքի մասին էվոլյուցիոն պատկերացումից: <>

Նույնքան կարևոր է նաև այն, որ մշակույթի և հասարակության միջև հարաբերությունների նման վերակառուցումը նաև սոցիալական կառուցվածքի և պատմական զարգացման հարաբերությունների փոխակերպումն է: Կրկնենք, դասական սոցիոլոգիան տարբերվում էր վերլուծության երկու առանցքների նույնացմամբ. արդիականացումը միաժամանակ փոփոխությունների մշտական ուժ էր և սոցիալական կազմակերպման սկզբունք: Դրանք բաժանելը իսկապես դժվար էր, երբ կար միայն մեկ տեսակի արդյունաբերական հասարակություն, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի Վիկտորյական դարաշրջանը: Այսօր դա ավելի հեշտ է բոլոր արդյունաբերական հասարակությունների նմանության մասին փաստերով բազմիցս հերքված պատրանքից հրաժարվելու պայմանով: Մինչդեռ դա դեռ չի նշանակում, որ ամեն ինչ

կախված է ազգային առանձնահատկություններից, և որ ոչ մի ընդհանուր բան չկա, օրինակ, Խորհրդային Միության և Միացյալ Նահանգների միջև: Արդյունաբերական հասարակությունը՝ որպես միություն, իրեն հատուկ մշակույթով և կենտրոնական հասարակական կոնֆլիկտով ամենուր նույնն է: Բայց արդյունաբերականացման մեթոդները տարբեր են, քանի որ եթե արդյունաբերականացման կամ ավելի լայն՝ պատմական փոփոխության գլխավոր ագենտը միշտ պետությունն է, ապա այն կարող է միավորվել բուրժուազիայի հետ կամ, ընդհակառակը, ինքնուրույն ստանձնել իշխող դասակարգի դերը: Առաջին դեպքում, որը բնորոշ է կապիտալիստական երկրներին, սոցիալական ուժերի ներկայացուցչությունը ինքնավար է պետության նկատմամբ: Երկրորդ դեպքում, որը վերաբերում է սոցիալիստական կոչվող երկրներին, պետությունը չի համաձայնում սոցիալական շահերի ներկայացման հետ կապված կառուցվածքների ինքնավարությանը:

Դասական սոցիոլոգիան, որն ուսումնասիրում էր կապիտալիստական արդյունաբերականացման հասարակությունները, որոնցում պետությունը, համենայնդեպս մետրոպոլիայի տարածքում, շատ քիչ անկախություն ուներ ազգային բուրժուազիայի նկատմամբ, բնավ չէր մտածում պետության մասին հարցի շուրջ՝ պատրաստակամորեն նույնացնելով իշխող դասակարգը ու տնտեսական զարգացման ագենտներին: Այսօր կողք կողքի զարգանում են ավելի ու ավելի քաղաքացիական դարձող հասարակություններ, որոնցում մեծ թվով դերակատարներ ազդում են քաղաքական որոշումների վրա: Մյուս կողմից, կան նաև սոցիալիստական ռեժիմներ, որոնցում պետությունը ամենակարող է: Հետևաբար այլևս չի կարելի հավատարիմ մնալ արդյունաբերական հասարակության գործառման և արդյունաբերականացման շարժման նույնականության տեսակետին: Ընդհակառակը, հասարակական կարծիքը հակադրում է այն երկրները, որոնք կարծես կորցրել են պետության զգացողությունը, և այն երկրները, որոնցում տոտալիտար պետությունը նույնացնում է իրեն հասարակության հետ:

Դասական սոցիոլոգիայի ամենագլխավոր առանձնահատկությունը նրանում է, որ պատմական մեծ համակազմերից ստեղծելով սեփական իմաստի կրողների՝ այն հասարակական գործողության վերլուծությունը հանգեցնում էր համակարգում գործող դերակատարի դիրքի որոնմանը: Գործողության սոցիոլոգիան հրաժարվում է դերակատարի նման բացատրությունից, որը հանգում է համակարգում նրա տեղը մատնանշելու խնդրին: Ընդհակառակը, այն ցանկացած իրավիճակում տեսնում է մշակութային որոշակի կողմնորոշումներ ունեցող և սոցիալական կոնֆլիկտներում ընդգրկված դերակատարների միջև հարաբերությունների արդյունքը: Եթե այն վճռորոշ նշանակություն է տալիս «հասարակական շարժում» հասկացությանը, ապա դա այն պատճառով է, որ վերջինս հարցականի տակ է դնում իշխանության հարաբերությունները, որոնք թույլ են տալիս դերակատարին (որին կարելի է անվանել իշխող դասակարգ) կառավարել առկա մշակութային ռեսուրսները: Անօգուտ և նույնիսկ վտանգավոր է խոսել հասարակական պայմանավորումների մասին, քանի որ անհատական գործող սուբյեկտը միաժամանակ և՛ պայմանավորված է իրավիճակով, և՛ մասնակցում է դրա արտադրությանը: Ճիշտ է, որ մենք զարգանում ենք մեզնից վաղ կառուցված քաղաքներում, բայց էլ ավելի ճիշտ է, որ քաղաքաշինության ծրագրերը փոխանցում են գործող սուբյեկտների (ինչպես սոցիալական, այնպես էլ քաղաքական) հարաբերությունները:

Սա օգնում է վերացնել մեկ թյուրիմացություն. սոցիոլոգները չեն վստահում դիտարկողի և դերակատարի նույնացման ցանկացած ձևերին, քանի որ այդ դեպքում վերլուծությունը հանգում է որոշակի դիսկուրսի մեկնաբանմանը և իջեցվում է, այսպես ասած, երկրորդ աստիճանի գաղափարախոսության մակարդակի: Հասարակական շարժումների սոցիոլոգիան և, ավելի լայն, սոցիալական գործողությունների սոցիոլոգիան նման գաղափարական մեկնաբանության հակոտնյան է, քանի որ այն բաժանում է գործողության տարբեր իմաստները և հասարակական հարաբերությունների տարբեր տեսակները, որոնցում դերակատարը գտնվում է: Սակայն պատմագիտական բացատ-

րությունները, որոնցում հաստատվում է դիտարկվող երևույթների պատմական միասնության գոյությունը, ընկնում են սոցիոլոգիական մեկնաբանման այս մահացու հիվանդության մեջ: Այն պահին, երբ սկսում են ենթադրել, որ երկրում ամեն ինչ կախված է կապիտալիստական բնույթից, արմատավորված է արդիականության մեջ կամ ազգային բնույթում, դուրս են գալիս ապացուցողականության շրջանակներից և տրվում են կամայական մեկնաբանություններին:

Գործողության սոցիոլոգիան և հատկապես սոցիոլոգիական միջամտության (sociological intervention) մեթոդը (որը վերջինիս յուրահատուկ պրակտիկան է) հակադրվում են նշված գլոբալիզմին, ձգտում են միմյանցից տարանջատել վարքի և, մասնավորապես, կոնֆլիկտների տարբեր իմաստները, պատմական կայացման բարդության մեջ առանձնացնել վերլուծության պարզ տարրերը: Չկա ոչինչ ավելի հակադիր գործողության սոցիոլոգիային, քան փիլիսոփայության պատմությունն է: Թուցե ոմանք առաջինում կտեսնեն հերոսական սոցիոլոգիայի նոր վերածնունդ՝ անցյալի և ապագայի միջև բախումների և հեղափոխությունների հարուստ նկարագրություններով: Ինչպիսի՜ կուրություն:<>

Այսօր որակազրկվել է XIX դարի լուսավորականությունից և էվոլյուցիոնիզմից ժառանգած պատմության և առաջընթացի տեսլականը: Բայց սա ամենևին չի նսեմացնում հասարակական շարժումների նկատմամբ ուշադրությունը, թեև պահանջում է այնպիսի վերլուծություն, որը դերակատարին պատմության մեջ տեղավորելու փոխարեն հարց կտար նրանց կողմից պատմական իրավիճակների արտադրության մասին:

Ինչո՞ւմ է այս դեպքում գործող անձի միասնությունը, և ներկայացնո՞ւմ է այն արդյոք դերերի ամբողջությունից տարբերվող ինչ-որ բան: Գործող դերակատարն ունի միասնություն և կարող է կարգավորել ու կազմակերպել իր գործունեության ձևերը միայն այնքանով, որքանով նա անձամբ ապրում է պատմականությունը, այսինքն՝ կարող է ազատվել վարքի և սպառման վերարտադրության ձևերից ու նորմերից՝ մշակութային մոդելների արտադրությանը մասնակցելու համար:

Մարդկային սուբյեկտի առանձնահատկությունը նրանում է, որ նա ապահովում է իր վարքի ձևերի աստիճանակարգը, ավելի շատ գնահատում է գիտական գիտելիքները, այլ ոչ կարծիքները և ասեկոսեները, նորարարությունը և ներդրումը, այլ ոչ սովորական առօրեականությունը, բարին, այլ ոչ հասարակական համաձայնությունները: Որքան պատմականության ավելի բարձր մակարդակի է հասնում հասարակական կյանքը, այնքան ավելի է դերակատարը հաստատում գիտակցության նշանակությունն ու իրավունքները: Արդիականության պատմությունը գիտակցության դերի աճի պատմություն է՝ ի հակակշիռ թագավորի օրենքի, սովորույթի, շահի, տգիտության, վախի: Պատմականությունը կառավարելու նպատակով հակամարտության մեջ ներգրավված հասարակական շարժումը և կոլեկտիվ վարքը գոյություն ունեն միայն այն դեպքում, եթե դերակատարը ունակ է բարձրանալ պարզ պահանջներից և նույնիսկ քաղաքական բանակցություններից վեր, որպեսզի հասկանա իրեն և հաստատվի ավելի շուտ որպես հասարակական իրավիճակի արտադրող, քան սպառող: Նա պետք է կարողանա վերջինս հարցականի տակ դնել՝ դրան համապատասխանելու փոխարեն:

Սոցիալական կյանքը կարող է նախ և առաջ բնորոշվել որպես ինքնարտադրման և ինքնափոխակերպման գործունեություն. ինքնաարտադրումն ու ինքնափոխակերպումն իրականացվում են ներդրումների միջոցով, եթե այդ հասկացությանը տալիս ենք զուտ տնտեսականից ավելի լայն իմաստ: Այդ գործունեությունը բնութագրում են այդ ներդրումների կառավարման համար ծավալվող պայքարի հետ կապված կոնֆլիկտները, գործող դերակատարի ավելի ու ավելի կենդանի գիտակցության առկայությունը՝ այն սուբյեկտի, որը հեռանում է իր ներդրումների արդյունքներից, ճանաչում է դրանք իր իսկ ստեղծագործություններում, խորհում է իր ստեղծագործական ունակության մասին, որպես գլխավոր արժեք է ընտրում սուբյեկտ լինելու գիտակցումն ու փորձը և մյուսների մեջ տեսնում է իր հետ նմանությունը բացառապես սուբյեկտներ լինելու ունակության շնորհիվ: Այստեղ արմատավորվում է սոցիալական համակարգի միասնությունը. սա մի

ոլորտ է, որում արտադրվում է պատմականությունը, որը ներկայացնում է հասարակական կոնֆլիկտների իմաստը և հիմնված է սուբյեկտի գիտակցության վրա: <>

Հասարակության մեջ գործող դերակատարը ո՛չ հասարակության գործառման (կամ «հակասությունների») արտացոլումն է, ո՛չ էլ անհատական շահերի և ցանկությունների հանրագումարը: Երբ գիտության և հատկապես տեխնոլոգիաների ազդեցության տակ աճում է մեր ունակությունը՝ ազդելու մեր իսկ վրա, մեզանից ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են ներգրավվում հասարակական կյանքում: Հասարակական կարծիքը կարող է անտարբեր մնալ, երբ ազգայնացվում են ձեռնարկությունները կամ ընդլայնվում են արհմիությունների իրավունքները: Բայց երբ փոխվում է հեռուստատեսության կարգավիճակը, քննարկվում են կանանց իրավունքները (օրինակ՝ հակաբեղմնավորման առավելությունները և բացասական կողմերը), երբ անդրադառնում են էվթանազիայի կամ գենետիկ մանիպուլյացիաների հետանկարներին, յուրաքանչյուրը զգում է իրեն անձամբ և կոլեկտիվ կերպով ազդված: Վերադարձավ հույզերի ժամանակը՝ բառի ինչպես հոգեբանական, այնպես էլ հին պատմական իմաստով: Դա բացատրվում է նրանով, որ նման սոցիալական և մշակութային խնդիրները, որոնք հղում են կոլեկտիվ ընտրությանը, դեռևս քաղաքական արտահայտում չեն գտել: <>

Այս դրությունը մեզ թույլ է տալիս գոնե վերջապես առանձնացնել հասարակական կյանքի խնդիրները պատմական կայացման խնդիրներից և կտրել վերջին կապերը, որոնք մենք ունեցել ենք սոցիոլոգիայի դասական մոդելների հետ: Աշխատավորական և սոցիալիստական շարժումը մինչև 1914 թ. խոսում էր ապագայի, Պատմության, Առաջընթացի անուններից: Ո՞վ է այսօր իրեն այնքան ուժեղ և վստահ զգում, որ խոսի նման մարգարեական եղանակով: Դերակատարը այլևս չի կարող խոսել Պատմության անունից. նա կարող է միայն իր՝ որպես որոշակի սուբյեկտի անունից խոսել: Մեր դարաշրջանը այլևս սցիենտիստական չէ, այն դառնում է բարոյախոսական: Մենք հիմա չենք ուզում կառավարել իրերի ընթացքը, այլ պարզապես պահանջում

ենք մեր ազատությունը, ինքներս մենք լինելու իրավունքը՝ առանց ճզմված լինելու իշխանության ապարատներով, ուժով ու քարոզչությամբ: Գործող մարդու վերադարձը ունի ոչ թե հաղթական, այլ պաշտպանական բնույթ: Դերակատարը որևէ մեկին կոչ չի անում միախառնվել մի մեծ կոլեկտիվ պոռթկման մեջ. նա ավելի շուտ հակված է հակակոլեկտիվիստական պոռթկմանը: Նա հրաժարվում է աստվածացնել հասարակությանը և առավել ևս՝ պետությանը: Նա ավելի շատ հավատում է անձնական ազատություններին, քան կոլեկտիվ ազատագրմանը՝ պնդելով, որ հասարակական կյանքն ամենևին էլ չի կառավարվում բնական կամ պատմական օրենքներով, այլ ուղղորդվում է նրանց գործողություններով, ովքեր պայքարում են և պայմանավորվում հասարակական ձև հաղորդել իրենց համար նշանակալի մշակութային կողմնորոշումներին:

Հասարակության գործող դերակատարը նախորդ ժամանակներում բողոքում էր ավանդույթների, համաձայնագրերի, հալածանքների ձևերի և արտոնությունների դեմ, որոնք խանգարում էին նրա ճանաչմանը: Այսօր նա բողոքում է նույն ուժով, բայց արդեն ապարատների, դիսկուրսների, արտաքին վտանգի մասին մարգարեությունների դեմ, որոնք խանգարում են նրան պարզաբանել իր նախագծերը, որոշել սեփական նպատակները և անմիջականորեն ներգրավվել այն կոնֆլիկտներում, բանավեճերում և բանակցություններում, որոնցում նա ցանկանում է ներգրավվել: Դերակատարի վերադարձը հրեշտակի վերադարձը չէ, այլ ավելի շուտ հին խլուրդի, և սոցիոլոգիայի աշխատանքն է կոտրել մեռած կամ խեղաթյուրված գաղափարախոսությունների պատը, ինչպես նաև մաքուր անհատականության պատրանքները կամ դեկադանսի կուրացումը՝ օգնելու համար տեսնել դերակատարին և լսել նրա խոսքերը: Սոցիոլոգիական վերլուծությունը, այսպիսով, հեռու է ինքն իր մասին խորհող հասարակության պաշտոնական դիսկուրսներից: Այն շատ ավելի մոտ է բոլոր նրանց հույզերին, երազանքներին, վիրավորանքներին, ովքեր դերակատարներ են, բայց ճանաչված չեն որպես այդպիսին, քանի որ քաղաքական կազմակերպման և գաղափարախոսության ձևերը խիստ հետ են մնում պրակտի-

կայից և իսկապես ժամանակակից գաղափարներից և զգացմունքնե-րից:<>

**Սոցիոլոգիայի տեղաշարժը**

Սոցիոլոգիայի ճգնաժամը վերաբերում է հենց իր սահմանմանը: Այն գալիս է հասարակական կյանքի՝ հետազոտությունների կենտրոնում հասարակության գաղափարը դնելու աճող բարդությունից: Իհարկե, մենք այս բառը հաճախ օգտագործում ենք չեզոք իմաստով. խոսել «ֆրանսիական հասարակության» մասին առավել հաճախ նշանակում է խոսել Ֆրանսիայի մասին: Մինչդեռ սոցիոլոգիան ձևավորվել և զարգացել է՝ ելնելով այն գաղափարից, որ հասարակական ամբողջը կազմակերպվում է ինչ-որ կենտրոնի շուրջ կամ կենտրոնի տրամաբանությամբ: Որպես հետևանք՝ կոլեկտիվ կյանքի տարբեր ոլորտներ կոչված էին իրականացնելու ինստիտուցիոնալացված գործառույթներ, որոնք պահպանվում էին սոցիալական վերահսկողության և սոցիալականացման մեխանիզմներով: Նշված հասարակական ամբողջներն օժտված են հավասարակշռությամբ, որը չի բացառում ո՛չ լարվածությունը, ո՛չ ներքին ճգնաժամերը, բայց վերափոխում է ինստիտուցիոնալ մեխանիզմները կոնկրետ ամբողջության, որի սովորական ձևը ազգային պետությունն է: Հասարակության գաղափարը, ըստ էության, անբաժան է ազգային պետությունների իրականությունից, իսկ հասարակության կենտրոնի կամ կենտրոնացված տրամաբանության ներքո գրեթե միշտ նկատի է առնվում անգլիական և ֆրանսիական ավանդության իրավական պետությունը:

Հասարակության նման պատկերն իրականում ավելի հին է, քան սոցիոլոգիան, և ծագել է XVI, XVII և XVIII դարերում: Հենց այդ ժամանակ ստեղծվեց ինստիտուտի գաղափարը, Լոկը և Մոնտեսկյոն հասարակության ինստիտուցիոնալ կերպարին հաղորդեցին իր դասական ձևը: Սոցիոլոգիան առաջացավ հենց այն պահին, երբ հասարակական միասնության նման իրավական հայեցակարգը հարցականի տակ դրվեց էվոլյուցիոնիզմով: XIX դարի ընթացքում զարգացավ (հատկապես ի դեմս Կոնտի, Դյուրգեյմի, Վեբերի, Թյոնիսի) արդիականության

անդառնալի վերելքի, ռացիոնալացման և ապակրոնականացման գաղափարը:<>

Իր ծայրահեղ գծին հասցված նման հայեցակարգը կարող էր քանդել հասարակության բուն գաղափարը՝ հասցնելով այն շուկայի ընդհանրացված կերպարին: Սակայն հասարակության գաղափարը զարգացել է՝ ձգտելով գտնել կարգը փոփոխության մեջ և ինստիտուցիոնալացնել նոր արժեքներ: Կենտրոնական երկրների և արտոնյալ հասարակական շերտերի համար բարենպաստ այս զարգացումը արդյունաբերականացման օջախից հեռացմանը զուգահեռ առաջ բերեց պաշտպանական ռեակցիաներ, որոնք հղում էին կատարում մշակութային յուրահատկությանը՝ ի հակակշիռ առևտրային և արդյունաբերական բանականության համապարփակության: Բայց նման կոչը, եթե նույնիսկ կարող էր սնել պատմական միտքը, չէր կարող առաջացնել այլ սոցիոլոգիական հայեցակարգեր, քանի որ ծնված լինելով էվոլյուցիայի գերիշխող մոդելից պաշտպանվելու պահանջմունքից՝ այն անդրադառնում էր էությանը և մշակույթին, այլ ոչ թե տնտեսական և հասարակական կազմակերպման ձևերին:

Արդյունաբերական հասարակություններն ակոսված են հզոր ռոմանտիկ հոսանքներով, որոնք դիմակայում են անմարդկային արդիականությանը: Սակայն հասարակական միտքը, այնուամենայնիվ, ձևավորվում է «ինստիտուտ» և «էվոլյուցիա» հասկացությունների հատման կետում: Հենց այդպես է ստեղծվել սոցիոլոգիան, և Օգյուստ Կոնտը դարձավ սոցիոլոգիայի արարիչը հենց այն պատճառով, որ նա միաժամանակ պաշտպանում էր և՛ առաջընթացը, և՛ կարգը:

Գծի մյուս ծայրում դասական սոցիոլոգիայի վերջին խոշոր հայեցակարգը ստեղծած Թալքոթ Պարսոնսն է, որը հենվում էր էվոլյուցիոն տեսության և դրանում ներկայացված ավանդույթի ու արդիականության միջև տարբեր հակադրությունների վրա: Դասական սոցիոլոգիայի այս գագաթնակետին կարգը, ի վերջո, հաղթեց փոփոխությանը, իսկ հասարակությունն ընդունեց գործիքային բանականության շուրջ կազմակերպված կայուն ամբողջի տեսք: Անշուշտ, հասարակության ներսում միշտ կա լարվածություն և դիմադրություն այդ արժեքների

նկատմամբ: Բայց դա ոչ մի կերպ չխանգարեց Պարսոնսի՝ սոցիոլոգիայի կամ Լիփսետի քաղաքական փիլիսոփայության հաղթանակին այնպիսի ժամանակաշրջանում, որում Միացյալ Նահանգներին կարծես անվերապահորեն պատկանում էր աշխարհի առաջնությունը: Այսպիսով, հասարակությունն այն ամբողջությունն է, որը գոյանում է բանականության վրա հենվելով, ինչը թույլ է տալիս միայն զարգացնել հաշվարկները, փոխանակումը, առևտուրը և, բացի այդ, անհրաժեշտ պատասխաններ տալ իրավիճակների շարունակական փոփոխություններին:

*Կործանումը*

Չնայած այն հանգամանքին, որ այս դասական սոցիոլոգիան միշտ վիճարկվել է որևէ մեկի կողմից, այնուամենայնիվ, ինչպես հետևում է 60-ականների և երբեմն նույնիսկ այսօր օգտագործվող դասագրքերից, հաջողությամբ ընդունվել է մեծամասնության կողմից: Բայց այսօր դասական սոցիոլոգիան ոչ միայն ճգնաժամի մեջ է, այլ նաև, ըստ երևույթին, անդառնալի անկման: Մինչ սոցիոլոգիան այս փակուղուց հանելու ուղղություններ փնտրելը պետք է հստակեցնել այն ձևերը, որոնք ընդունել է դասական սոցիոլոգիայի քայքայումը:

Առաջին և ամենախորը հարվածները սոցիոլոգիայի՝ իբրև գիտակարգի ուղղությամբ հասցվեցին կազմակերպությունների տեսության զարգացմամբ: Վերջինս ցույց տվեց, որ ցանկացած կազմակերպություն, ամենևին չարտահայտելով բանականության գլխավոր սկզբունքը, ներկայացնում է միայն տարբեր բնույթի հասարակական հարաբերությունների անկայուն, թույլ կապակցված և անընդհատ վիճարկվող արդյունք: Եվ դա տեղի է ունենում ինչպես քաղաքացիական պատերազմի պարագայում, այնպես էլ կոնֆլիկտներով հարուստ բանակցային գործընթացների, ընդ որում, դա ճիշտ է *բոլոր* կազմակերպությունների տիպերի համար՝ լինեն դրանք ֆորմալ կամ ոչ ֆորմալ: Սոցիոլոգիական ոչ մի այլ տեսություն, բացի սրանից, այդքան վճռորոշ արդյունքներ չի տվել հիսունականների և վաթսունականների ընթաց-

քում: Դասական սոցիոլոգիայի հիմնական սկզբունքները լրջորեն վիճարկվեցին:

Զուգահեռաբար առաջացավ դասական սոցիոլոգիայի էլ ավելի արմատական քննադատությունը, որը հաճախ կոչվում էր ֆունկցիոնալիստական: Զարգացնելով էվոլյուցիոն թեմաները՝ այն պնդում էր, որ դերակատարների հասարակական վարքը չի կարող փաստացիորեն բացատրվել համակարգին նրանց պատկանելությամբ, այլ ավելի շուտ կապված է նրանց անկայուն դիրքորոշման և անընդհատ ու բազմաթիվ ազդեցությունների կամքով փոփոխվող ռազմավարության հետ: Դա հասարակության գաղափարի իրական ոչնչացումն էր, որը զարգացավ երկու տարբեր ուղղություններով: Մի կողմից ռազմավարական մակարդակում, որը ներկայացնում էր դերակատարների՝ հնարավորինս օպտիմալ, այն է՝ հնարավորինս քիչ ներդրումներ պահանջող որոշումների որոնումներում: Դա էլիտիստական հայեցակարգ էր, քանի որ շատ արագ պարզվեց, որ ամենաքիչ բարենպաստ դիրքում գտնվող խաղացողներին պարտադրվում էր պաշտպանական ռազմավարություն, մինչդեռ ավելի ուժեղ խաղացողները կամ ավելի մեծահարուստները կարող էին ռիսկի դիմել և դրսևորել իրենց ձեռնեբեցության և նորարարության հակումները: Մյուս կողմից, հասարակության գաղափարի ոչնչացումը տեղի ունեցավ դերակատարին շուկաներում նվազագույն գնով առավելագույն արդյունքի ձգտող սպառողի հետ նույնացնելու ճանապարհով: Սա ծայրահեղ անհատականության արտահայտումն էր, որը ձգտում էր միանգամայն ազատական թվալ, բայց կասկածելի էր՝ հաշվի առնելով այն մանիպուլյացիաները, որոնց օգնությամբ տարբեր խաղացողներ կարող էին ազդել պահանջարկի վրա:

Ի հակակշիռ դերակատարի այս հայեցակարգերի՝ ձևավորվեց համակարգի հայեցակարգը, որում ժխտվում էր վերջինիս ազդեցությունը կանոնի վրա, որն անգամ օրենք էլ չէ: Դեռ վաղուց Թոքվիլը ցույց էր տվել, թե ինչպես կարող էր պատկանելիությունների և միջանկյալ օղակների լուծարումը միաժամանակ տանել և՛ սոցիալական ատոմիզմի, և՛ պետության ամենակարողության: Այսպիսով, բնական է, որ

ֆունկցիոնալիստական սոցիոլոգիայի ճգնաժամն իր հետևից բերեց հասարակական կազմակերպման քննադատական և հոռետեսական վերլուծություններ, որոնց շրջանակներում հասարակությունն այլևս ընկալվում էր միայն որպես ճնշման, հարկադիր ինտեգրման կամ բացառման համակարգ: Կարող է տարօրինակ թվալ, որ նման մտքերը տարածվել են աշխարհի այն հազվագյուտ մասերից մեկում, որտեղ բացարձակ պետություններ պարզապես չկան:

Այս երևույթը չի բացատրվում ընդհանուր պատմական պատճառներով: Այն կարող է ավելի լավ հասկացվել, եթե անդրադառնանք այն մտավորականների դիրքորոշմանը, որոնք ցավով են ընկալում նախկինում հասարակական փորձը միավորող և վերջինիս արժեքների հիմք հանդիսացող սկզբունքների անհետացումը, ինչպես նաև պայքարի նախկին ձևերի և համապատասխան գաղափարախոսությունների թուլացումը: Խոսքը մարքսիզմի հետ քիչ թե շատ կապված մտքի հոսանքների մասին է, որոնք էլ հանգեցրին վերոնշյալ դիրքորոշման զարգացմանը: Բայց այս տեսանկյունից թերևս հասարակությունն իրենից ներկայացնում էր ոչ այնքան հասարակական դասակարգերի բախում, որքան գերիշխանության իր տրամաբանությունն ունեցող տարածություն, որը հաստատվել էր ինչպես որոշակի գաղափարախոսության, այնպես էլ ճնշման ապարատների ազդեցության ներքո՝ բառի խիստ իմաստով: Այս առումով ժամանակակից ֆրանսիական հասարակական գիտություններում ամենամեծ ազդեցությունն ունեցան Միշել Ֆուկոյի աշխատանքները: Նա կարողացավ զարգացնել նշված թեմաները հրաշալի խորագիտությամբ՝ հենվելով ծավալուն պատմական հետազոտությունների վրա և արտահայտելով մտքի հազվագյուտ խստություն:

Սոցիոլոգիայի ճգնաժամի այս երկու հակադիր, բայց փոխլրացնող ձևերի միջև, որոնցից մեկը ներկայացնում է գործող դերակատարին ցանկացած համակարգից դուրս, իսկ մյուսը՝ համակարգն առանց դերակատարի, կա նաև երրորդ հոսանքը, որը նույնպես վկայում է դասական սոցիոլոգիայի ճգնաժամի մասին և վարքի բացատրությունը հանգեցնում է փոխազդեցությունների խաղին: Ինստիտուցիոնալաց-

ված և ներանձնայնացված նորմերով այլևս չկազմակերպված սոցիալական տարածության մեջ գործող դերակատարները դառնում են դերասաններ՝ բառի ճշգրիտ իմաստով: Նրանք խաղում են սոցիալական դերեր՝ այլևս չունենալով դրանց հավատալու կարիք, նրանք կանգնած են միմյանց դեմ՝ անկասկած ձգտելով սեփական առավելություններին, բայց հաճախ պահպանելով նաև թյուրիմացության, խուսափման և այլնի վրա հիմնված հարաբերություններ: Էթնոմեթոդաբանության և Իրվինգ Գոֆմանի փայլուն աշխատանքի հաջողությունը[3] հրաշալի ցույց է տալիս հետֆունկցիոնալիստական հիասթափության այս մթնոլորտը:

Կա հասարակության՝ որպես ինստիտուտների և վարքի կենտրոնացված կառավարման գաղափարը վերացնելու երեք ճանապարհ.

- համարել, որ դերակատարը առաջնորդվում է բացառապես առավելությունների և հաճույքների որոնումներով,
- ցույց տալ կույր և բացարձակ կարգի ամենակարողությունը,
- որոշ ցինիզմով դիտարկել մարդկային կատակերգությունը:

Հասարակության գաղափարի արևամուտն ունի խորը պատճառներ: Եթե ճիշտ է այն, որ դասական սոցիոլոգիան առաջացել է «ինստիտուտ» և «էվոլյուցիա» հասկացությունների համադրությունից, ապա ակնհայտ է, որ դրա ճգնաժամը պետք է վերագրել այս երկու հիմնական հասկացությունների ճգնաժամերին:

Էվոլյուցիոնիզմի ճգնաժամն ավելի քան ակնհայտ է: XIX դարի եվրոպական հասարակագիտական միտքը առնվազն իր հիմնական գծում իրեն նույնացնում էր արդիականության հետ՝ դրան բնորոշ ռացիոնալացմամբ և աշխարհիկացմամբ, այսինքն՝ բոլոր այն սկզբունքների աստիճանական ոչնչացմամբ, որոնք դեմ էին փոփոխությանը, հասարակական տարբերակմանը և ինստիտուտների ինքնավարությանը: Արդիականության այսօրինակ կերպարը ամրագրված է առաջին հերթին շուկայի գաղափարում (ոչ միայն տնտեսական իմաստով), որը մատնանշում է հասարակական կյանքի գրեթե բոլոր այլ ոլորտնե-

[3] Հատկապես Goffman, E. (1959) The Presentation of Self in Everyday Life. New York: Doubleday:

րը: Տնտեսական կյանքը, որտեղ կենտրոնացած են արդյունաբերական դարաշրջանի փոփոխությունների ամենակարևոր սկզբունքները, ռացիոնալության ոլորտ է և ազատ է ցանկացած արտաքին ազդեցությունից: Այդ պատճառով այն դարձավ ազատական մտքի միջուկը: Բայց երբ արդյունաբերականացումը սկսում է գրավել նոր երկրներ, տնտեսական ինստիտուտների և շուկայի նման ինքնավարությունը գնալով ավելի ու ավելի քիչ է հնարավոր դառնում. տնտեսական և սոցիալական փոփոխությունների ձևերը ամուր կապվում են քաղաքական գործընթացների և մշակութային առանձնահատկությունների հետ: Գծային էվոլյուցիայի գաղափարը, որը բաղկացած է միշտ նույն կարգով ընթացող հաջորդական փուլերից, ի վերջո իր տեղը զիջում է այն հայեցակարգերին, որոնք ընդունում են տնտեսական փոխակերպման տարբեր ուղիների հնարավորությունը: Մտքի որոշ դպրոցներ գնում են ընդհուպ զարգացման գաղափարի մերժումը, որը նրանց թվում է չափազանց ծանրաբեռնված միասնականության սկզբունքով, որի վտանգը վերջիններս ընդգծում են: Նրանք նախընտրում են պնդել տնտեսական և սոցիալական փոխակերպման եղանակների տարբերակման գաղափարը:

Մյուս կողմից, ինչ-որ կենտրոնի շուրջ տեղակայված ինստիտուցիոնալ համակարգի գաղափարը նույնպես ճգնաժամ է ապրում: Դժվար է, օրինակ, աշխատանքի իրավունքը հանգեցնել դրան նախորդած իրավաբանական ընդհանուր սկզբունքների հատուկ դեպքի: Քաղաքական գործընթացների բոլոր տարատեսակները շատ քիչ համակարգված ձևով են զարգանում հասարակության բազմաթիվ հատվածներում: Դրան գումարած՝ այն երկրները, որոնք հենց ստեղծել ու զարգացրել են դասական սոցիոլոգիան, մեծամասամբ կորցնում են ազգային պետության գծերը: Արևմտյան Եվրոպան, առանց կասկածի, կես դարի ընթացքում չգիտեր ավելի խորը փոխակերպում, քան նախկինում անհատական և կոլեկտիվ փորձի հիմնական շրջանակ հանդիսացող ազգային պետության ետընթաց շարժումը: Այս գաղափարը հաստատվում է նաև ձևավորվող ազգային պետությունների դեպքում, օրինակ՝ Լատինական Ամերիկայում: Չնայած հակառակ կարգի որո-

շակի տեսանելիությանը՝ հասարակական միտքն այնտեղ մեծ մասամբ ֆունկցիոնալիստական բնույթ ունի և կենտրոնական նշանակություն է վերագրում ազգային և հասարակական ինտեգրման մեխանիզմներին կամ, ընդհակառակը, մարգինալացմանը:

*Արարումը*

Ջուր է ձգտել վերադառնալ հետ՝ նոր կյանք հաղորդելու համար հասարակության գաղափարին: Բայց կարելի է նաև բոլորովին այլ դիրքորոշում որդեգրել՝ հրաժարվելով սահմանափակել ժամանակակից հասարակական միտքն այն ձևերի ուսումնասիրմամբ, որոնցում տեղի է ունեցել հասարակության գաղափարի կործանումը: Չէ՞ որ, երբ սկսվում է հասարակության ինչ-որ տիպի ճգնաժամը, թվում է, թե գործող դերակատարները և նրանց ընդհանուր բեմը քայքայվում են, որ մի կողմում անհատներն են, մյուս կողմում՝ անտարբեր կարգը: Բայց այսպիսի իրավիճակը, եթե այն առաջարկվում է ընդհանուր սոցիոլոգիական վերլուծության համար, վկայում է միայն գուցե որոշակի պատմական ժամանակաշրջանի վերջի մասին: Ուստի, նախքան սոցիոլոգիական նոր վերլուծություն կատարելը, պետք է ամեն ինչ հստակեցնել, ձևակերպել սեփական տեսական դիրքորոշման պատմական նախադրյալները:

Անձամբ ես կարծում եմ, որ մենք հեռանում ենք արդյունաբերական հասարակությունից և դրան բնորոշ մտածելակերպից, բայց հեռանում ենք ո՛չ նոր հավասարակշռության՝ հասարակության և բնության հաշտության (որի մասին ոմանք երազում են) հասնելու համար, ո՛չ էլ միայն փոփոխություններով բնորոշվող նոր հասարակական իրավիճակի մեջ մտնելու համար: Կարծում եմ, ընդհակառակը, մենք մտնում ենք հասարակական այնպիսի իրավիճակի մեջ, որը որոշվում է կոլեկտիվների ինքնազդեցության աճող ունակությամբ, հատկապես այնտեղ, որտեղ իշխանությունը որոշում է ոչ միայն աշխատանքի ձևերը, այլև կենսակերպը, վարքը, պահանջմունքները: Կարելի է ասել, որ այս հասարակությունը գերարդյունաբերական է այն իմաստով, որ մեծ կազմակերպությունները տարածում են իրենց ազդեցությունը ոչ

միայն արտադրության ոլորտի վրա, այլև հասարակական կյանքի գրեթե բոլոր դիտանկյունների՝ տեղեկատվությունից մինչև առողջապահություն, գիտական հետազոտություններից մինչև ուրբանիզացիա:

Եթե այս վարկածը ճիշտ է, ապա պետք է սպասել գրեթե ամենուր նոր դերակատարների և նոր հասարակական կոնֆլիկտների ի հայտ գալուն: Այդ ժամանակ սոցիոլոգիայի խնդիրը կլինի ուսումնասիրել այդ դերակատարներին և կոնֆլիկտները, ինչը նշանակում է բոլորովին հրաժարվել «հասարակական կյանքի օրենքների» որոնումից: Հասարակական կազմակերպումն այժմ պետք է ընկալվի բոլորովին այլ կերպ, այն է՝ որպես հասարակական ուժերի կոնֆլիկտային հարաբերությունների արդյունք, որոնք պայքարում են հանուն այն մոդելների վերահսկողության, որոնց համապատասխան կոլեկտիվը նորմատիվային կերպով կազմակերպում է իր հարաբերությունները շրջապատի հետ: Ես պատմականություն եմ անվանում հենց հասարակական պրակտիկան կառավարող այդ մշակութային մոդելների ամբողջությունը: Բայց դրա համար վերջիններս պետք է անցնեն հասարակական հարաբերությունների միջով, որոնք միշտ մարմնավորում են իշխանական աստիճանակարգը: Նման հայեցակարգն արգելում է կենտրոնացնել վերլուծությունը հասարակության գաղափարի շուրջ: Կազմակերպության տեսությունների նման այն ճանաչում է սոցիալական ամբողջի կամ դրա որևէ մասի կայունության և անգամ կապակցվածության թույլ աստիճանը: Այն, իհարկե, հասարակական իրականությունը չի համարում բոլորովին անկանոն հոսքերի համակարգ: Ընդհակառակը, այն ընդունում է ինչ-որ կենտրոնի գոյությունը, որից ելնելով՝ ամեն ինչ միավորվում է: Բայց այդ կենտրոնը ո՛չ կամք է, ո՛չ իշխանություն, այլ նպատակ է, պատմականություն՝ որպես հարաբերությունների և պայքարի նպատակ այն մարդկանց միջև, որոնց ընդունված է անվանել հասարակական դասակարգեր: Այն հարաբերությունները, որոնք սահմանվում են ինստիտուցիոնալ համակարգում կամ ավելի սահմանափակ մակարդակում՝ կազմակերպական համակարգերում, այդպիսով կառավարվում են տվյալ պատմականության վի-

ճակով, հակառակ դասակարգերի միջև գոյություն ունեցող իշխանության և վիճարկման հարաբերություններով: Ըստ այդ հայեցակարգի՝ սոցիոլոգիայի կենտրոնում է հայտնվում «*հասարակական շարժում*» հասկացությունը. եզրույթ, որը նախատեսված է ոչ թե փոփոխությունների ցանկացած ուժ կամ կոլեկտիվ գործողության ցանկացած տեսակ, այլ իսկապես կենտրոնական կոնֆլիկտները մատնանշելու համար, այսինքն՝ նրանք, որոնք կասկածի տակ են դնում պատմականության հասարակական վերահսկողությունը՝ կոնկրետ սոցիալական ամբողջի և իր շրջապատի միջև հարաբերությունների ստեղծման մոդելները: Հիշյալ «հասարակական շարժումը» նոր հասկացություն է այն ամենի նկատմամբ, ինչ կարող էին անվանել «հասարակական ուժեր»՝ լինի դա էվոլյուցիայի (առաջընթացի ուժի կամ առաջընթացի դիմադրության) կամ տվյալ համակարգի գործունեության շրջանակներում: Երբ խոսում են նորմից շեղվելու կամ քայքայված հասարական տարրը վերականգնելու միտման կամ գերիշխանության ինչ-որ համակարգի ներքին հակասությունների մասին, ապա կոլեկտիվ վարքի տեսակները ներկայացվում են իբրև մեխանիզմների հետևանքներ, որոնց իմաստը դերակատարներից և նրանց հարաբերություններից դուրս է: Հատկանշական է, որ մինչև վերջերս մեր արդյունաբերական հասարակություններում մշտապես կարևոր դեր ունեցող աշխատավորական շարժմանը նվիրված չի եղել գրեթե ոչ մի խորը հետազոտություն: Դրանում տեսնում էին դարավոր ուժերի նոր մարմնավորումը (այն ուժերի, որոնք մարդուն դրդում էին որոնել ազատագրման ուղիները) կամ նույնիսկ կապիտալիզմին բնորոշ հակասությունների պարզ դրսևորումը: Կապիտալիզմի ներսում փակված շարժումը մնում էր սահմանափակ, քանի որ չէր կարող ազատվել այդ հակասությունների համակարգից՝ լինի դա հեղափոխական մտավորականների գիտելիքների ուժով, թե հզոր պետության շնորհիվ:

Այսպիսով, հասարակական շարժման գաղափարը նոր է և ստիպում է հաշվի նստել այն փաստի հետ, որ դերակատարները ոչ միայն գտնվում են իրավիճակի ազդեցության տակ, այլև արտադրում են այդպիսիք: Նրանք միաժամանակ որոշվում են թե՛ իրենց մշակութային

կողմնորոշումներով, թե՛ այն հասարակական կոնֆլիկտներով, որոնցում նրանք ներգրավված են: Մշակութային կողմնորոշումների տակ նկատի չունենք այն արժեքները, որոնք հակադիր են հակառակորդի արժեքներին, այլ հակառակը, նրանք, որոնք ընդհանուր են և որոշում են կոնֆլիկտների խաղագումարը: Վերջիններս դատարկ խաղեր չեն, քանի որ ձգտում են վերափոխել կոլեկտիվ կյանքի կազմակերպական և ինստիտուցիոնալ ձևերը: Սոցիոլոգիայի դաշտի նման փոփոխությունը և հասարակության գաղափարի անհետացման նման մեկնաբանությունը միգուցե ավելի կարևոր հետևանք ունի մյուս բոլորի համեմատությամբ: Ես ասել եմ, որ հասարակության գաղափարը չի առանձնացվել ազգային պետությունների ձևավորումից և զարգացումից: Դասական սոցիոլոգիայի անցումը գործողության սոցիոլոգիայի ուղեկցվում է հասարակական կյանքի և պետության տարանջատմամբ: Եթե հասարակական կյանքը կորցնում է իր միասնությունը, կենտրոնը, ինստիտուցիոնալացման, վերահսկողության և սոցիալականացման իր մեխանիզմները, ապա պետությունը չի դադարում ամրապնդվել: Հասարակական կյանքի նկատմամբ այլևս չի կարելի կիրառել Միասնականի կերպարը, վերջինս նույնիսկ իր դեմ է շրջվում: Միասնականը կարող էր նույնացվել հասարակական կարգի մետասոցիալական երաշխիքների հետ՝ լինի դա Աստվածը, Բանականությունը, թե Պատմությունը: Բայց այսօր Միասնականն այլևս մետասոցիալական չէ. այն ձգտում է փոխարինել հասարական կյանքին, ճզմել սոցիալական հարաբերությունները, վարքի բազմազանությունը և սոցիալական գործունեության տեսակների ինքնավարությունը: Հասարակության գաղափարի ավերակների վրա ակնթարթորեն և միմյանց հետ մրցակցության մեջ զարգանում են պատմականությունը, այսինքն՝ հասարակությունների՝ իրենց արտադրելու ունակությունը, և տոտալիտար պետությունները, որոնք սահմանում են բոլոր սոցիալական հարաբերությունները ոչնչացնող միասնության սկզբունքները:

Այսպիսով, սխալ է դերակատարի վերադարձում տեսնել գրեթե Աստված դարձած, արտադրության և փոխակերպման հսկայական հնարավորություններ տնօրինող մարդու զարմանահրաշ հայտնությունը:

Այստեղից հետևում է նաև (եթե ոչ ավելին) պետությունների նոր տիպի զարգացումը. ոչ թե նախկին բռնապետական պետությունների, ոչ թե «գերգործող դերակատարների», որոնք հակված են իրենց հզորության ավելացմանը, այլ *տոտալիտար* պետությունների, որոնց գլխավոր գործառույթն է արմատախիլ անել հասարակական կյանքը՝ ի շահ նրանց, ովքեր իրենց ձեռքում են կենտրոնացնում իշխանությունը՝ ցանկանալով կառավարել ժամանակը և տարածությունը, ապագան և ամբողջ մոլորակը: Հենց այս սատանայական ձևով է տեղի ունեցել հասարակությունների անհետացումը օրինակ Վեյմարյան Գերմանիայում, որտեղ հասարակական շարժումներով, քաղաքական գործընթացներով և կազմակերպական փոփոխություններով լի բարդ հասարակությունը կլանված էր նացիզմի դժոխքով, կամ Ռուսաստանում, որտեղ հետհեղափոխական խորհրդային հասարակությունը խեղդվեց՝ տեղը զիջելով ստալինյան տոտալիտարիզմին:

Այստեղից սոցիոլոգիայի համար այսօր բխում են երկու գլխավոր կոնկրետ խնդիրներ: Առաջինը՝ ամենակարևորը, վերաբերում է համաշխարհային մակարդակին և վերաբերում է հասարակական կյանքի վերածննդի բոլոր ձևերի աջակցմանը տոտալիտար պետություններում, որոնց ջանքերը՝ ուղղված հասարակության քայքայմանը, երբեք չեն եղել ո՛չ ամբողջական, ո՛չ էլ վերջնական: Սոցիոլոգիայի մյուս մեծ խնդիրն այն է, որ անհրաժեշտ է հայտնաբերել և վերլուծել նոր դերակատարների, նոր կոնֆլիկտներ և հատկապես նոր նպատակներ այնտեղ, որտեղ գործառման և սոցիալական փոփոխության մեխանիզմները պահպանել են բավարար ինքնավարություն պետական իշխանության նկատմամբ: Դա պահանջում է խզում մտածողության նախկին ձևերի հետ, քանի որ մեծ է երեկվա լեզուն այսօրվա իրողություններին հնարավորինս հարմարեցնելու գայթակղությունը: Ինչպես նախորդ դարում, երբ երկար ժամանակ ձգտում էին վերլուծել արդիականացման հետ կապված կոնֆլիկտները և հետևաբար հասկանալ աշխատավորական շարժումը Ֆրանսիական հեղափոխությունից փոխառված հասկացություններով (միայն Փարիզյան Կոմունան վերջ դրեց այդ արխաիզմին), այդպես էլ մենք հաճախակի փորձում ենք վերլուծել

հետարդյունաբերական հասարակություններին բնորոշ իրողություն-ները արդյունաբերական հասարակությունների ուսումնասիրության համար ստեղծված հասկացությունների միջոցով: Մենք հատկապես պետք է վերջ դնենք այն օբյեկտիվիզմին, որին մենք այդքան սովոր ենք, այսինքն՝ այն սկզբունքին, որը մեզ կենտրոնական էր թվում և պահանջում էր հարաբերակցել դերակատարի վարքը հասարակա-կան համակարգում նրա զբաղեցրած դիրքին: Սակայն վերլուծության այս մեթոդից պետք է հրաժարվել. դերակատարի վարքն այժմ պետք է հասկացվի կախված այն տեղից, որը նա զբաղեցնում է պատմականու-թյան արտադրությանն ուղղված հասարակական հարաբերություննե-րում: Երկու բանաձևերն էլ կարող են մոտիկ թվալ, բայց դա այդպես չէ: Քանի որ առաջին դեպքում իմաստն առանձնացվում է գիտակցությու-նից, մինչդեռ երկրորդում իմաստը պետք է հասկանալի լինի՝ ելնելով ամենանորմատիվորեն կողմնորոշված գործողությունից, այսինքն՝ գի-տակցության մեկնաբանման միջոցով:

Արդյո՞ք չի եկել սոցիոլոգիայի ճգնաժամից դուրս գալու ժամանա-կը: Արժանի տուրքը մատուցենք այն մեծ ստեղծագործություններին, որոնք դասական սոցիոլոգիայից, հատկապես՝ Դյուրկհեյմից մինչև Պարսոնս, տպավորիչ ինտելեկտուալ շինություն են կառուցել, բայց միաժամանակ փորձենք ստեղծել սոցիոլոգիա, որը կանդրադառնար մեր ժամանակների խնդիրներին: Մինչ «հասարակությունների մասին գիտությունը» գոյություն ուներ «քաղաքակրթությունների համեմա-տական ուսումնասիրությունը» և նույնիսկ «մշակույթների մեկնաբա-նությունը»: Քանի որ այսօր վերանում է այն պատմական իրավիճակը, որում ձևավորվել է հասարակությունների մասին գիտությունը, ապա պետք է ստեղծել գործողության սոցիոլոգիա: Այս խնդիրն էլ ավելի ան-հրաժեշտ է՝ հաշվի առնելով, որ հասարակական կյանքին մշտապես սպառնում են տոտալիտար ուժերը, իսկ հասարակական նոր շար-ժումները չեն կարող զարգանալ, քանի դեռ քաղաքական ազենտները և հատկապես մտավորականները հրահանգում են նրանց ձևավորվել որոշակի ինստիտուցիոնալ ալիքներում և առաջարկում արդեն չքա-ցած անցյալից ժառանգած լեզու:

ՋՈՆ ՈՒՐԻ

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՆԴԻՆ. XXI ԴԱՐԻ ՄՈԲԻԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[4]

## Ներածություն

Նոր հարյուրամյակի շեմին ես մտադիր եմ զարգացնել այնպիսի կատեգորիալ ապարատ, որը պիտանի կլինի սոցիոլոգիայի՝ իբրև «գիտակարգի» համար: Ես պատրաստվում եմ առաջարկել մանիֆեստը այն սոցիոլոգիայի, որն ուսումնասիրում է մարդկանց, օբյեկտների, պատկերների, տեղեկատվության և թափոնների մոբիլությունների տարբեր տեսակները, նրանց միջև առկա բարդ փոխհարաբերությունները և այդ տարբեր տեսակի մոբիլությունների սոցիալական հետևանքները: Ես ցույց եմ տալիս, թե ինչպես են տարբեր տեսակի մոբիլությունները փոխակերպում պատմականորեն ձևավորված սոցիոլոգիայի առարկան իր «արևմտյան» տարբերակում, որն ուղղված էր առանձին հասարակությունների և դրանց հիմնական բնութագրերի ուսումնասիրությանը: Ես իմ ուշադրությունը կենտրոնացնում եմ այն բանի վրա, թե ինչպես է տարբեր գլոբալ «ցանցերի և հոսքերի» զարգացումը խաթարում էնդոգեն սոցիալական կառուցվածքները, որոնք, ինչպես ենթադրվում էր սոցիոլոգիական դիսկուրսում, ունակ են ինքնավերարտադրելու: Ես հարցականի տակ եմ դնում սոցիալականի՝ որպես հասարակության ըմբռնումը, և ուզում եմ ցույց տալ, որ ինչպիսին էլ եղած լինի դրա նշանակությունը անցյալում, ապագայում այն չի կարող որևէ էական դեր խաղալ՝ որպես սոցիոլոգիական վերլուծությունը կազմակերպող հասկացություն:

[4] Urry, J. (2001) Sociology beyond societies. mobilities for the twenty-first century. New York: Routledge, ch. 1: ‘Societies’, pp.1-21. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

**«Չկա այնպիսի բան, ինչպիսին հասարակությունն է»**

Ես կսկսեմ սոցիալականի՝ իբրև հասարակության հասկացությունից: Երբ նախկին վարչապետ Մարգարեթ Թեթչերն արտասանեց հետագայում հայտնի դարձած «չկա այնպիսի բան, ինչպիսին հասարակությունն է» արտահայտությունը, սոցիոլոգները սկսեցին քննադատել նրա հայտարարությունը: Նրանք պնդում էին, որ հասարակությունն, անկասկած, գոյություն ունի, իսկ Թետչերի թեզը խոսում է միայն նրա քաղաքական ծրագրի անընդունելիության մասին, քանի դեռ վերջինս հիմնված է հասարակականը «առանձին տղամարդկանց, կանանց և նրանց ընտանիքների» շահերին ստորադասելու տրամաբանության վրա: Ես չեմ պատրաստվում այստեղ Թեթչերին ներկայացնել որպես ինդիվիդուալիստական սոցիալական տեսության կենտրոնական կերպար (որի դրույթներն իրենցից ներկայացնում են Հայեկի թեզերի ազատ մեկնաբանությունները): Սակայն Թեթչերի արտահայտություններին Բրիտանական սոցիոլոգիական հանրության ամբարտավան արձագանքը արդարացված չէր: Չէ՞ որ իրականում պարզ չէ, թե ի՞նչ է նշանակում «հասարակություն» եզրույթը: Չնայած սոցիալական կյանքում կա «ավելին», քան «առանձին տղամարդիկ, կանայք և նրանց ընտանիքները», այնուամենայնիվ ակնհայտ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում այդ ավելցուկը: Սոցիոլոգների մեծ մասը չի կարող համաձայնության գալ դրա բնույթի վերաբերյալ, ինչը բավականին հեգնական է, քանի որ եթե սոցիոլոգիան ունի ինչ-որ կենտրոնական հասկացություն, ապա դա իհարկե «հասարակություն» հասկացությունն է (նույնիսկ այն ժամանակ, երբ օգտագործվում են այլընտրանքային եզրույթներ, ինչպիսիք են՝ «երկիրը», «սոցիալական կառուցվածքը», «ազգը» կամ «սոցիալական ֆորմացիան»):

Այս կապակցությամբ ես նախ և առաջ ուզում եմ ցույց տալ, որ «հասարակություն» հասկացությունը կենտրոնական էր սոցիոլոգիական դիսկուրսի համար: Ապա ես մտադիր եմ ապացուցել, որ եթե գոյություն ունի որոշակի համաձայնություն «հասարակություն» հասկացության վերաբերյալ, ապա այն ներկառուցված է «ազգային պետություն», «քաղաքացիություն» և «ազգային հասարակություն» հասկա-

ցություններին, որոնք հիմնված են «տափակ ազգայնականության» վրա[5]: Այնուհետև ես պատրաստվում եմ ցույց տալ, որ հենց հասարակությունը «ազգային պետության հասարակություն» իմաստով հարցականի տակ է դրվում ժամանակակից մոբիլությամբ, իսկ դա նշանակում է, որ Թեթչերը, որքան էլ դա տարօրինակ է, կարող էր իրավացի լինել՝ հայտարարելով, որ հասարակության նման բան գոյություն չունի: Միևնույն ժամանակ, նա խորապես սխալվում էր, քանի որ ծանոթ չէր բազմաթիվ «հետհասարակական» գործընթացներին, որոնք տեղի են ունենում առանձին տղամարդկանց և կանանց կյանքից դուրս: Նա նաև աչքաթող արեց ազգի պահպանվող գաղափարախոսական ուժը, գլխավորապես այն պատճառով, որ հակված էր համարել այն «բնական», այլ ոչ թե «հասարակական»:

Սոցիոլոգիական դիսկուրսը իսկապես հիմնված էր հասարակության՝ որպես ուսումնասիրության առարկայի վրա[6]: Դա հատկապես սկսեց նկատելի դառնալ 1920-ական թվականներից սկսած, երբ սոցիոլոգիան վերաինստիտուցիոնալացվեց ամերիկյան ակադեմիական կորպորացիայի ներսում: Մակայվերի և Փեյջի դասական «Հասարակություն. ներածական վերլուծություն» աշխատությունում ասվում է, որ սոցիոլոգիան գիտություն է «սոցիալական հարաբերությունների ցանցի մասին, որը մենք անվանում ենք հասարակություն»[7]: Արմատական տեսակետների հարող Գոուլդները իր «Արևմտյան սոցիոլոգիայի գալիք ճգնաժամը» գրքում խոսում է «այն շեշտադրման մասին, որ ամերիկյան սոցիոլոգիան անում էր հասարակության ուժի և նրան մարդու ենթարկվելու վրա»[8]: Հիմնարար «Սոցիալական գիտությունների հանրագիտարանում» Շիլզը խոսում է այն մասին, որ համագործակցային գիտելիքները «ձեռք են բերվում ամբողջ հասարակության և

[5] Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications.

[6] Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications pp. 52-53; Hewitt, R. (1997) The Possibilities of Society. Albany: SUNY Press, ch. 1.

[7] MacIver, R., Page, C. (1950) Society: an introductory analysis. London: Macmillan, p, v.

[8] Gouldner, A. (1972) The Coming Crisis of Western Sociology. London: Heinemann, p. 52.

նրա մասերի ուսումնասիրությամբ»[9], իսկ Քորնբլումը սահմանում է սոցիոլոգիան որպես «մարդկանց հասարակությունների և հասարակությունը կազմող տարբեր խմբերում մարդկային վարքի գիտական ուսումնասիրություն»[10]: Աշխարհ-համակարգային վերլուծության տեսաբան Վալերշտայնը ընդհանուր հայտարարի է բերում իրավիճակը՝ «ոչ մի հասկացություն տարածված չէ ժամանակակից սոցիալական գիտության մեջ այնպես, ինչպես «հասարակություն» հասկացությունը»[11]:

Սոցիոլոգիական դիսկուրսի ծավալումը «հասարակություն» հասկացության շուրջ մասամբ պայմանավորված էր XX դարի ողջ ընթացքում ամերիկյան հասարակության հարաբերական ինքնավարությամբ: Այսինքն՝ այն ամերիկյան սոցիետալ հասարակության ունիվերսալացում է: Թալքոթ Պարսոնսը, որը ներկայացրեց ԱՄՆ-ն՝ իբրև ժամանակակից տիպի օրինակելի հասարակություն, սահմանում էր հասարակությունը՝ որպես «սոցիալական համակարգի այնպիսի տեսակ, որն ունի ինքնավարության բարձրագույն աստիճան իր միջավայրի հանդեպ, որը ներառում է նաև այլ համակարգեր»[12]: Իհարկե, էմպիրիկորեն նման ինքնավար հասարակությունները հազվադեպ են հանդիպում և սովորաբար հենվում են իրենց՝ ֆիզիկական և սոցիալական միջավայրում ունեցած գերիշխող դիրքի վրա, ինչպես նաև այն երաշխիքի, որ իրենց «անդամների գործողությունները ... կծառայեն իբրև համարժեք «ներդրում» իրենց հասարակական գործունեության մեջ»[13]:

Վալերշթայնը ևս պնդում է, որ ոչ մի հասկացություն չի կիրառվում այդքան ոչ ռեֆլեքսիվ կերպով, որքան «հասարակություն» հաս-

[9] Shils, E. (1985) Sociology/ A. and J. Kuper (eds) The Social Science Encyclopaedia, London: Routledge, p. 799.

[10] Kornblum, W. (1988) Sociology in a Changing World, New York: Holt, Rinehart & Winston, p. 4.

[11] Wallerstein, I. (1987) World-systems analysis// J. Turner and A. Giddens (eds) Social Theory Today, Cambridge: Polity, p. 315.

[12] Parsons, T. (1971) The System of Modern Societies. New Jersey: Prentice-Hall, p. 8.

[13] Ibid, p. 20.

կացությունը[14]: Դա կարելի է նկատել՝ դիտարկելով սոցիոլոգիայում գլխավոր «տեսական հեռանկարները» և վերակառուցելով հասարակության այն ըմբռնումը, որը դրանցում պարունակվում է: Այդ հեռանկարների շարքում (պարտադիր չէ, որ դրանք նման լինեն միմյանց կազմակերպման ձևով, կառուցվածքով կամ մտավոր համաձայնեցվածությամբ) կարող են դիտարկվել քննադատական տեսության, էթնոմեթոդաբանության, ֆեմինիզմի, ֆունկցիոնալիզմի, ինտերակցիոնիզմի, մարքսիզմի, ստրուկտուրացիայի տեսության, համակարգերի տեսության և վեբերյան տեսության դիրքերը[15]: Ստորև նշված են հեռանկարներից յուրաքանչյուրին համապատասխանող պատկերացումները հասարակության վերաբերյալ:

| | |
|---|---|
| Քննադատական տեսություն | Հասարակությունը՝ որպես զանգվածային հասարակության ինստիտուտների կողմից վերարտադրվող օտարված գիտակցության ձև: |
| Էթնոմեթոդաբանություն | Հասարակությունը՝ իբրև փխրուն կարգ, որը կայացվում է հանրության անդամների կողմից օգտագործվող առողջ բանականության մեթոդներով: |
| Ֆեմինիզմ | Հասարակությունը՝ որպես սոցիալական հարաբերությունների փոխկապակցված համակարգ, որում տղամարդկանց հետաքրքրությունները գերիշխում են կանանց հետաքրքրությունների հանդեպ: |
| Ֆունկցիոնալիզմ | Հասարակությունը՝ որպես սոցիալական համակարգ, որի տարբեր մասերը գործառական առումով կապված են միմյանց հետ: |

[14] Wallerstein, I. (1987) World-systems analysis// J. Turner and A. Giddens (eds) Social Theory Today, Cambridge: Polity, p. 315.
[15] Urry, J. (1995) Consuming Places. London: Routledge, p. 41; Hewitt, R. (1997) The Possibilities of Society. Albany: SUNY Press, ch. 1, 2.

| | |
|---|---|
| Ինտերակցիոնիզմ | Հասարակությունը՝ որպես անկայուն սոցիալական կարգ, որի շուրջ պայմանավորվածություններն անընդհատ վերանայվում են դերակատարների կողմից: |
| Մարքսիզմ | Հասարակությունը՝ որպես տնտեսական հիմքի և քաղաքա-գաղափարախոսական վերնաշենքի միջև հարաբերությունների կառուցվածք: |
| Ստրուկտուրացիայի տեսություն | Հասարակությունը՝ որպես ինստիտուտների խմբավորում ժամանակի և տարածության մեջ, որը ձևավորվում է՝ հիմնվելով որոշակի կառուցվածքային սկզբունքների վրա և հաջորդաբար վերարտադրում է դրանք: |
| Համակարգերի տեսություն | Հասարակությունը՝ որպես ինքնակառավարվող և շրջելի հաղորդակցությունների աուտոպոեյտիկ ցանց, որոնք կազմակերպական առումով տարբերվում են իրենց միջավայրից: |
| Վեբերյան տեսություն | Հասարակությունը՝ որպես յուրահատուկ սոցիալական կարգերի և ամեն կարգում ներկայացված անհավասար բաշխված սոցիալական խմբերի միջև հարաբերություններ: |

Եվ այսպես, գոյություն ունեն «հասարակություն» եզրույթի տարբեր իմաստներ, և դրանցից յուրաքանչյուրը ենթադրում է որոշակի այլ որակի առաջացում հասարակության այն մակարդակում, որը գտնվում է «առանձին տղամարդկանցից, կանանցից և նրանց ընտանիքներից» վեր: Գիդենսը եզրակացնում է, որ «հասարակությունը» գրեթե չհետազոտված եզրույթ է սոցիոլոգիական դիսկուրսում[16], մինչ-

[16] Giddens, A. (1987) Social Theory and Modern Sociology. Cambridge: Polity, p. 25.

դեռ Մանը փաստարկում է, որ նման տարաձայնությունների և տարբերությունների պարագայում մենք առհասարակ պետք է հրաժարվենք այս եզրույթից[17]:

Այս ձևակերպումների մեծ մասում անտեսվում է այն, թե ինչպես է հասարակությունը կապված ազգերի կամ ազգային պետությունների համակարգի հետ: Բիլինգը պնդում է, որ սոցիոլոգիայի ինքնորոշման հիմքում ընկած է «հասարակությունը ստեղծվել է ազգային պետության կերպարով»[18] համոզմունքը: Հետաքրքիր է, որ հասարակության ամերիկյան տեսությունները հաճախ անտեսում էին սեփական հասարակության (իրականում՝ բոլոր արևմտյան հասարակությունների) «ազգայնական» հիմքը: Սովորաբար նրանք ազգայնականությունը համարում էին հասարակության հավելումը, որը պետք է օգտագործվի միայն «բացառիկ» ծայրահեղականության իրավիճակներում (որը, ինչպես ենթադրվում է, ոչ մի ընդհանուր բան չունի Արևմուտքի հետ): Սակայն Էլիասը հստակ նշում է, որ «XX դարի շատ սոցիոլոգներ «հասարակության» մասին խոսելիս այլևս նկատի չունեն... «բուրժուական հասարակությունը» կամ «մարդկային հասարակությունը» պետությունից դուրս և գնալով ավելի հաճախ ենթադրում են ազգային պետության ինչ-որ լղոզված իդեալական կերպար»[19]:

Ուստի հասարակության հետագա հայեցակարգման շրջանակներում առանցքային դեր են խաղում ինքնիշխանությունը, ազգային քաղաքացիությունը և սոցիալական կառավարելիությունը: Յուրաքանչյուր «հասարակություն» ազգային պետության հետ միասին ինքնիշխան սոցիալական կազմավորում է, որը կարգավորում է հասարակության յուրաքանչյուր անդամի կամ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները: Համարվում է, որ սոցիալական հարաբերությունների հիմնական փաթեթը ծավալվում է տվյալ հասարակության տարածքային սահմաններում: Պետությունը մտածվում է որպես կազմավորում, որն ունի որոշակի տարածքում կամ տարածաշրջանի

[17] Mann, M. (1986) The Sources of Social Power, vol. 1, Cambridge: Cambridge University Press, p. 2.

[18] Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications, p. 53, 10.

[19] Elias, N. (1978) The History of Manners. Oxford: Blackwel, p. 241.

սահմաններում ապրող հասարակության անդամներին կառավարելու իրավազորություն կամ մենաշնորհ: Տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, դասակարգերը, զենքերը և այլն կառուցվածքայնացվում են սոցիետալապես: Ընդհանուր առմամբ, նրանք ձևավորում են որոշակի թանձրուկ կամ այն, ինչը սովորաբար հայեցակարգվում է իբրև «սոցիալական կառուցվածք»: Վերջինս կազմակերպում և կարգավորում է տվյալ հասարակության յուրաքանչյուր անդամի կենսական հնարավորությունները:

Այս հասարակական կառույցը ոչ միայն նյութական է, այլև՝ մշակութային, ուստի վերջինիս անդամները հավատում են, որ ունեն ընդհանուր ինքնություն, որը մասամբ կապված է այն տարածքի հետ, որը հասարակությունը զբաղեցնում է կամ որին հավակնում է: Ի հեճուկս գրեթե ողջ սոցիոլոգիական գիտությանը բնորոշ գերակա պատկերացման՝ նման հասարակությունների մեծ մասի կենտրոնական տարրը տեղական ազգայնականությունն է, որը մասամբ որոշում է այն, թե ինչպես են մարդիկ մտածում և ինչպես են իրենց զգում որպես մարդ: Սովորական ազգայնականությունը, որը կառուցում է յուրաքանչյուր հասարակության ինքնությունը, ունի բազմաթիվ դրսևորումներ: Դրանց թվում են տոնական դրոշների ծածանումը, ազգային օրհներգերի կատարումը, պետական շենքերի վրա դրոշների ցուցադրումը, նույնականացումը ազգային սպորտի աստղերի հետ, անկախության օրվա տոնակատարությունը և այլն[20]: Մետաֆորիկորեն այս տեղական ազգայնականությունը կարելի է բնութագրել որպես որոշակի ֆրակտալ, սխալ, բայց տարօրինակ կերպով նման ձևերի ամբողջություն, այն ձևերի, որոնք հայտնաբերվում են սոցիալական մարմնի ամենատարբեր մակարդակներում, մասնատված երևույթներում: Մենք կարող ենք նկատել այդ ինքնանմանությունը նրանում, թե ինչպես են յուրաքանչյուր մակարդակում՝ սկսած տեղականից և վերջացրած պետության կենտրոնով, հասարակության անդամներն անում նման բաներ, կիսում ընդհանուր համոզմունքներ, մտածում իրենց մասին՝ որպես տիպիկ «ֆրանսիացիների» կամ «ամերիկացիների» մասին:

[20] Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications.

Դրա հետ մեկտեղ, դժվար թե հասարակությունները կարող են ներկայացվել որպես լիովին ինքնաբավ կազմավորումներ[21]: Սոցիոլոգիան հակված է դիտարկելու այն, ինչ գտնվում է հասարակությունից դուրս՝ որպես չուսումնասիրված միջավայր: Այնուամենայնիվ, նույնիսկ անցյալ դարի առաջին կեսին՝ ազգային պետության ծաղկման շրջանում, ոչ մի հասարակություն առանձնացված չէր այդպիսի պետությունների համակարգից՝ կախված լինելով ինքնիշխան հասարակությունները մոբիլիզացնող «ազգային ինքնություն» հասկացությունից: Կալհունը նշում է. «Ոչ մի ազգային պետություն ինքնիրեն գոյություն չուներ»[22]: Հենց այդ փոխկապակցվածության շնորհիվ է, որ նման հասարակությունները կառուցվում են՝ որպես ինքնակառավարվող կազմավորումներ՝ որոշակիանալով հիմնականում միմյանցից ունեցած հասարակ և տեղային տարբերություններում: Ինչպես նկատում է Վալերշթայնը, «անիմաստ է վերլուծել մեր բազմակի (ազգային) հասարակությունների սոցիալական զարգացման գործընթացները այնպես, կարծես դրանք ինքնավար, ներքուստ զարգացող կառույցներ են, երբ իրականում դրանք եղել և մնում են, նախ և առաջ, կառույցներ, որոնք ստեղծվել են ընդհանուր մասշտաբի գործընթացներով և ի պատասխան այդ գործընթացների»[23]: Հյուսիսային Ատլանտյան երկրները ձևավորվել են իբրև հստակ սահմաններ և բազմաթիվ հասարակ ազգայնականություններ (որոնք հանդես են գալիս իբրև միմյանցից տարբերվելու հիմքեր) ունեցող ազգային հասարակությունների համակարգ[24]: Հասարակությունները տարբերվում էին կապակցվածության աստիճանով և հատկապես, ինչպես պնդում է Թուրենը, այնքանով, որքանով դրանք կազմակերպված էին մոբիլիզացնող «մշակույթով» և միավորված էին դրանով. միևնույն ժամանակ առանց այդ հասարա-

---

[21] Հասարակության աուտոպոյետիկ նկարագրությունը տե՛ս Luhmann, N. (1995) Social Systems, Stanford, CA: Stanford University Press:

[22] Calhoun, C. (1997) Nationalism. Buckingham: Open University Press, p. 118.

[23] Wallerstein I. (1991) Unthinking Social Science. Cambridge: Polity, p. 77.

[24] Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications; Held, D. (1995) Democracy and the Global Order. Cambridge: Polity; Calhoun, C. (1997) Nationalism. Buckingham: Open University Press.

կական մշակույթի դժվար է որոշել, թե որոնք են այս կամ այն հասարակության սահմանները[25]:

Վերջին առնվազն երկու հարյուրամյակների ընթացքում հասարակության այս հայեցակարգը կենտրոնական էր ամերիկյան և եվրոպական պատկերացումների համար: Լինել մարդ, նշանակում էր լինել կոնկրետ հասարակության անդամ կամ քաղաքացի: Պատմական և հայեցակարգային առումով սերտ կապ կար մարդկության գաղափարի և հասարակության մեջ անդամակցության գաղափարի միջև: Հասարակությունն այստեղ նշանակում էր մի բան, որը կանոնակարգված է ազգային պետության կողմից, ունի հստակ տարածքային և քաղաքացիական սահմաններ, ինչպես նաև քաղաքացիների կառավարման համակարգ: Հայեցակարգորեն և պատմականորեն գոյություն ուներ քաղաքացիների և հասարակությունների անբաժանելի երկակիություն: Ռոուզը այս մոդելը բնութագրում է որպես կառավարում «սոցիալական տեսանկյունից»[26]: Նման հասարակական կառավարելիությունը իրականացվում էր փորձաքննության նոր ձևերի միջոցով, որոնք մասամբ հիմնված էին սոցիոլոգիայի՝ որպես նման հասարակությունների և սոցիալական քաղաքացիության համապատասխան ձևերի մասին գիտության վրա:

Նման մոտեցման դեպքում «հասարակությունը» և վերջինիս բնորոշ սոցիալական տարբերակման ձևերը, հատկապես դասակարգային բաժանումը, ամուր միահյուսված են «ազգային պետության» հետ: Մանը իր՝ Արևմուտքում 1760-1914 թթ. ընկած ժամանակաշրջանում դասակարգերի և ազգային պետությունների առաջացմանը նվիրված ծավալուն ուսումնասիրության շրջանակներում ցույց է տալիս, որ հասարակությունները, ազգը և պետությունները սերտորեն փոխկապված էին միմյանց հետ իրենց պատմական զարգացման ողջ ընթացքում[27]: Վերջիններս զարգացել են միասին, ուստի հնարավոր չէ դրանք պատ-

[25] Touraine, A. (1998) Culture without Society// Cultural Values, 2, pp. 140–5.7.

[26] Rose, N. (1996) Refiguring the territory of government// Economy and Society, 25, pp. 327–56, p. 328.

[27] Mann, M. (1993) The Sources of Social Power. Vol. 2, Cambridge: Cambridge University Press, p. 737.

կերացնել միմյանց հետ միայն արտաքին հարաբերությունների մեջ գտնվող բիլիարդի՝ իրար բախվող գնդակների տեսքով: Մանը համոզիչ կերպով խոսում է սոցիալական աշխարհի վերջնական խճճվածության, դասակարգի և ազգի փոխադարձ ուժեղացման մասին, հասարակությունների «հավաքական իշխանության» (որը տարբերվում է մարդու հանդեպ մարդու դիստրիբյուտիվ իշխանությունից) ընդլայնման մասին[28]: Նա վստահաբար պաշտպանում է հավաքական իշխանության գաղափարը՝ ցույց տալով, թե ինչպես է հեղափոխվել Արևմտյան հավաքական իշխանությունը: «Հասարակությունները դարձան ավելի լավ կազմակերպված՝ մարդու ունակությունների մոբիլիզացման և բնության, ինչպես նաև պակաս զարգացած հասարակությունների շահագործման տեսանկյունից: Արտակարգ սոցիալական խտությունը թույլ տվեց կառավարողներին և ժողովրդին իսկապես դառնալ նույն «հասարակության» անդամներ»[29]:

Այս կարգի հավաքական իշխանությունը ենթադրում էր հստակ տարբերակում սոցիալական կառավարելիության և հասարակությունից դուրս գտնվող բնության միջև: Այս դիրքորոշումը պահպանվում է՝ անկախ նրանից՝ դիտարկվում է արդյոք այս նախասոցիալական բնությունը Հոբսի և Լոքի ոգով՝ որպես ագրեսիվ ինչ-որ բան, թե հակառակը՝ որպես խաղաղ մի բան[30]: Լարված հակամարտությունը բնության և հասարակության միջև Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում իր գագաթնակետին հասավ XIX դարի վերջում: Բնությունը հանգեցվում էր անազատության և թշնամանքի տարածության, որը պետք է սանձել և ենթարկեցնել: Արդիականության դարաշրջանը ենթադրում էր հավատ առ այն, որ մարդկային հասարակության առաջընթացը պետք է չափվի և գնահատվի բնության նկատմամբ ունեցած տիրապետության տեսանկյունից, այլ ոչ թե հասարակության և մարդկանց միջև հարաբերությունների փոխակերպման: Նման հասարա-

---

28 Parsons, T. (1960) Structure and Process in Modern Societies// American Journal of Sociology, 66, p. 5.

29 Mann, M. (1993) The Sources of Social Power. Vol. 2, Cambridge: Cambridge University Press, p. 4.

30 Macnaghten, P., Urry, J. (1998) Contested Natures. London: Sage, 1998, ch 1.

կությունների հավաքական իշխանության իրացումը հանգեցրեց էներգիայի արդյունահանման և օգտագործման ինտենսիվության զգալի աճին: Սոցիոլոգիան՝ որպես հատուկ ակադեմիական պրակտիկա, այս պատմական պահի՝ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի արդյունաբերական կապիտալիզմի ծագման արդյունք էր: Այն ընդունեց ժամանակակից տիպի հասարակությունների հաջողությունը բնության նվաճման գործում իբրև իրողություն: Սոցիոլոգիան մասնագիտացել է հենց ժամանակակից տիպի հասարակությունների բնույթի նկարագրության և բացատրության վրա, այն հասարակությունների, որոնք հիմնված էին արդյունաբերության ճյուղերի վրա, որոնք ներդրել և կիրառել էին էներգիայի սկզբունքորեն նոր ձևեր և դրանց հիման վրա առաջացող հասարակական կյանքի նմուշներ: Ըստ էության՝ սոցիոլոգիան ըմբռնեց ավանդույթի և արդիականության բաժանման տարբերակներից մեկը, որը ենթադրում էր, որ հյուսիսատլանտյան տարածաշրջանի հասարակություններում հեղափոխական փոփոխությունները տեղի ունեցան 1700-1900 թթ. ընկած ժամանակահատվածում: Համարվում էր, որ այդ Արդիականության հասարակությունները որակապես տարբերվում էին անցյալի հասարակություններից: Ավանդույթի և արդիականության երկատումը ձևակերպվել է տարբեր եղանակներով: Մանը նկարագրել է այն՝ որպես անցում կարգավիճակից պայմանագրի, Մարքսը՝ որպես շարժում ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ, Թյոնիսը՝ որպես Gemeinschaft-ից դեպի Gesellschaft, Սպենսերը՝ ռազմական հասարակությունից արդյունաբերական հասարակության, Ֆուկոն՝ դասական դարաշրջանից դեպի բուրժուական, Դյուրկհեյմը՝ աշխատանքի բաժանման մեխանիկական ձևերից դեպի օրգանական ձևեր:

Այսպիսով, սոցիոլոգիան հիմնված էր ակադեմիական աշխատանքի՝ արդեն իսկ ստեղծած բաժանման ընդունման և զարգացման վրա: Վերջինս հիմնված էր սոցիալականի այն ոլորտի առանձնացման վրա, որը, ըստ Դյուրկհեյմի, պետք է ուսումնասիրվի և բացատրվի իր ինքնավարության մեջ[31]: Սրանով սոցիոլոգիան իրականացրեց կենսաբա-

[31] Durkheim, E. (1952) Suicide. London: Routledge.

նության նմուշով ինքնակառուցման ռազմավարությունը՝ պաշտպանելով իր հատուկ և անկախ փաստերի ոլորտը, որը տվյալ դեպքում վերաբերում էր սոցիալականին կամ սոցիետալին: Մինչև վերջերս նման ակադեմիական բաժանումը բնական փաստերի աշխարհի և սոցիալական փաստերի աշխարհի միջև համարվում էր անվիճելի: Այն իմաստ էր հաղորդում սոցիոլոգիայի պրոֆեսիոնալացման ռազմավարությանը, քանի որ ապահովում էր գիտակարգը հետազոտության պարզ և սահմանափակ ոլորտով: Այս ոլորտը չէր հատվում, չէր դրվում կասկածի տակ և հակասության մեջ չէր մտնում բնական գիտությունների այն ոլորտների հետ, որոնք գործ ունեին ակնհայտորեն գերազանց վերլուծվող բնության հետ և զգալիորեն առաջ էին անցել սոցիոլոգիայից ակադեմիական հեղինակության և ֆինանսավորման մրցավազքում[32]:

Ենթադրվում էր, որ բնության և հասարակության միջև անջրպետ է (երբեմն այն համարվում էր մեթոդաբանական, երբեմն՝ գոյաբանական): Բնական գիտությունները համարվում էին հենց «բնական», իսկ դրանց գիտական մեթոդը կիրառվում էր համատարած կերպով: Իհարկե, ես բնավ չեմ պնդում, որ բոլոր սոցիոլոգները դյուրքհեյմական էին: Առանձին ուղղություններ դուրս էին գալիս այդ ձևակերպումներից, երբ պնդում էին այնպիսի կատեգորիաների առաջնահերթությունը, ինչպիսիք են «սուբյեկտը», «ինտերակցիան», «խմբի անդամների ներկայացումները», «աշխարհ-համակարգը» կամ «մշակույթը»: Դրա հետ մեկտեղ, այդ դիսկուրսները բավական մարգինալ էին մնում սոցիոլոգիական ընդհանուր ձգտման նկատմամբ, այն է՝ հաստատել հասարակական կարգի բնույթը, որը հիմնարար կերպով առանձնացված էր բնական կարգից:

Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում կազմակերպված կապիտալիզմի դարաշրջանում (1900-1970 թթ.) ենթադրվում էր նաև, որ տնտեսական և սոցիալական խնդիրների ու ռիսկերի մեծ մասը արտադրվում և համապատասխանաբար լուծվում են առանձին հասարակության մակարդակում: Յուրաքանչյուր հասարակություն ինքիշ-

[32] Macnaghten, P., Urry, J. (1998) Contested Natures. London: Sage, ch. 1, 4, 6.

խան էր՝ հիմնված իր սոցիալական կառավարելիության և բնությունից զատված կազմավերպման վրա: Վերջինիս խնդիրները լուծվում էին ազգային ծրագրերի միջոցով, իսկ 1930-ական թվականներից սկսած՝ գլխավորապես քեյնսյան համընդհանուր բարեկեցության պետության միջոցով, որը կարող էր բացահայտել և արձագանքել կապիտալիզմի ռիսկերին[33]: Վերջիններս ընդունված էր համարել տեղայնացված՝ առավելապես աշխարհագրական սահմաններում և յուրաքանչյուր առանձին հասարակության ժամանակային շրջանակներում: Որոշումները ևս մշակվում և կիրառվում էին այս սոցիետալ սահմաններում: Ազգային հասարակությունները հիմնվում էին «քաղաքացի» հասկացության վրա, որը ազգային պետության հիմնական ինստիտուտների շնորհիվ ստանում էր իրավունքների և պարտականությունների փաթեթ:

Մնացյալ աշխարհի մեծ մասը գտնվում էր օտարի տիրապետության տակ: Հյուսիսատլանտյան տարածաշրջանի հասարակությունները գաղութային տերություններ էին, որոնք զգալի տնտեսական, ռազմական, սոցիալական և մշակութային հարաբերություններ էին պահպանում իրենց սահմաններից դուրս: Այսպես, 1913 թ. Եվրոպական և Հյուսիսամերիկյան հասարակություններին բաժին էր ընկնում արդյունաբերական ողջ արտադրության 90%-ը[34]: Ընդ որում, ազգային հասարակություններից մեկը՝ գերմանականը, մոտեցել էր իր ռազմական հեգեմոնիան ողջ Եվրոպայի վրա հաստատելու հնարավորությանը: Առավել հզոր հասարակությունը՝ ԱՄՆ-ն գրեթե ողջ XX դարում գործում էր գլխավորապես որպես գերտերություն, որը ներքաշված էր աճող դիվանագիտական, քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային առճակատման մեջ մեկ այլ հզորագույն կայսերական հասարակության՝ ԽՍՀՄ-ի հետ: Ես արդեն նշեցի այն պարադոքսը, որ հասարակության՝ որպես փոխկապված, հարաբերականորեն ինքնա-

---

[33] Lash, S., Urry, J. (1987) The End of Organized Capitalism. Cambridge: Polity.
[34] Mann, M. (1993) The Sources of Social Power. Vol. 2, Cambridge: Cambridge University Press, p. 14.

վար «գործառական» միավորի տեսություններն առանձնակի զարգացում են ստացել հենց ԱՄՆ-ում:

Այսպիսով, այս հատվածում ես ցույց տվեցի, որ «հասարակություն» հասկացությունը կենտրոնական դեր է խաղացել սոցիոլոգիական դիսկուրսում, հատկապես՝ ԱՄՆ-ում: Դրա հետ մեկտեղ սոցիոլոգիական տարբեր ուղղություններում այդ հասկացությունն օգտագործվել է բոլորովին տարբեր, իրար հակասող եղանակներով: Ես ցույց տվեցի նաև, որ եթե «հասարակություն» հասկացությունն իմաստ ունի, ապա միայն ներդրված լինելով ազգային պետությունների հասարակությունների համակարգի վերլուծության մեջ:

Հաջորդ հատվածում ես կշարունակեմ վերլուծել այս համակարգը, որը հարցականի տակ է հայտնվել այսօր տեղի ունեցող փոփոխությունների լույսի ներքո՝ հիմք տալով ենթադրելու հասարակության սկզբունքային գոյության վերաբերյալ Մարգարետ Թետչերի ունեցած կասկածի ճշմարտացիությունը: Բայց եթե հասարակության մեջ նման բան իսկապես չկա, դա կապված է ոչ թե առանձին անհատական սուբյեկտների ուժի հետ, այլ պարզապես գլոբալացման «անմարդկային», կոշտ գործընթացների առջև նրանց թուլության: Վալերշթայնը նշում է. «Հասարակության հասկացությունը հիմնարար սխալ է, քանի որ այն նյութականացնում և հետևաբար բյուրեղացնում է սոցիալական երևույթները, որոնց իրական նշանակությունը ոչ թե իրենց կայունության մեջ է, այլ ընդհակառակը՝ հոսունության և պլաստիկության»[35]: Այժմ ես մանրամասնորեն կանգ կառնեմ վերջին շրջանում գլոբալացման շուրջ ծավալվող որոշ վեճերի քննարկման վրա, որոնք ցույց են տալիս սոցիալական երևույթների ճկունությունը և հոսունությունը:

### Արտամարդկային գլոբալացումը

«Գլոբալացում» եզրույթը հաճախ շփոթություն է առաջացնում, քանի որ միաժամանակ մատնանշում է որոշ գլոբալ գործընթացներ (գլոբալացնել բայից) և գլոբալ արդյունքներ (գլոբուս, երկրագունդ գո-

[35] Wallerstein I. (1991) Unthinking Social Science. Cambridge: Polity, p. 71.

յականից): Ես օգտագործում եմ «գլոբալացում» եզրույթը առաջին իմաստով, քանի որ, ինչպես տեսնում ենք, քննարկվող գործընթացներից շատերը անավարտ բնույթի են, և չկա մի բան, որը կարող էր ներկայացվել որպես միասնական գլոբալ տնտեսություն կամ միասնական հասարակություն:

Ես հարց եմ տալիս՝ գոյություն ունեն արդյո՞ք ինչ-որ կոնկրետ գլոբալ գործընթացներ, և արդյո՞ք նկատվում է գլոբալ որևէ մակարդակի գոնե մասնակի բարելավում: Եթե այո, ապա ինչպե՞ս կարելի է դա չափել, և որոնք են դրա հետևանքները «հասարակությունների» վերլուծության համար:

*Աղյուսակ 1*

Գլոբալացման գլխավոր ձևերը

| | |
|---|---|
| **Ռազմավարություն** | Համաշխարհային մասշտաբներով գործառող և առանձին տարածաշրջանների, աշխատուժի կամ կառավարությունների կարիքների մասով որևէ պարտավորություններ չունեցող անդրազգային կորպորացիաների կողմից մշակված: |
| | |
| **Կերպար** | «Երկրի» և «երկրագնդի» կերպարները, որոնք օգտագործվում են տարբեր ապրանքների (օրինակ՝ ավիաընկերությունների) գովազդներում և «գլոբալ միջավայրի» սպառնալիքների դեմ բողոքող խմբերում մարդկանց ներգրավելու համար: |
| | |
| **Գաղափարախոսություն** | Նրանք, ովքեր կապված են ամբողջ աշխարհում կապիտալիզմի խթանման տնտեսական շահերի հետ, պնդում են, որ գլոբալացումն անխուսափելի է, և ազգային կառավարությունները չպետք է միջամտեն գլոբալ շուկայի կարգավորմանը: |

| | |
|---|---|
| **Քաղաքական մոբիլիզացման հիմք** | Խնդրի «գլոբալության» ճանաչումը հեշտացնում է անհատների և կազմակերպությունների լայն շրջանակի մոբիլիզացումը հանուն կամ ընդդեմ ինչ-որ երևույթի: |
| | |
| **Ուղիներ և հոսքեր** | Մարդիկ, փողը, կապիտալը, տեղեկատվությունը, գաղափարներն ու կերպարները դիտարկվում են որպես «հոսք», որը շարժվում է տարբեր «ուղիներով», որոնք ստեղծում են բարդ, միահյուսված ցանցեր՝ անցնելով ինչպես որոշակի հասարակությունների միջով, այնպես էլ վրայով (օրինակ՝ դրամական ուղիները և հոսքերը Լոնդոնի, Նյու Յորքի և Տոկիոյի միջև): |

Օգտակար ելակետ կարող է դառնալ Մանի առաջարկած արդի աշխարհի նկարագրությունը. «Այսօր մենք ապրում ենք գլոբալ հասարակության մեջ: Այն ունիտար չէ և իրենից չի ներկայցնում գաղափարական հանրություն կամ պետություն, փոխարենը եզակի ուժային ցանց է: Պայթուցիկ ալիքները տարածվում են դրա վրա՝ ջարդելով կայսրությունները, տեղափոխելով մարդկանց, նյութերի և հաղորդագրությունների հսկայական զանգվածները՝ վերջիվերջո սպառնալով մոլորակի էկոհամակարգին և մթնոլորտին»[36]: Այստեղ պետք է նշել մի քանի կետեր.

– գոյություն չունի միասնական գլոբալ հասարակություն, կան միայն գլոբալ փոխկապակցվածությունների առանձին մակարդակներ,
– անկանխատեսելի պայթուցիկ ալիքները մի մասից «քաոտիկ» կերպով տարածվում են ամբողջ համակարգի վրա,

[36] Mann, M. (1993) The Sources of Social Power. Vol. 2, Cambridge: Cambridge University Press, p. 11.

– գոյություն ունեն ոչ թե «հասարակություններ», այլ չափազանց հզոր «կայսրություններ», որոնք շարժվում են երկրագնդով,
– գոյություն ունի նաև մարդկանց, իրերի և մարդկային գործունեության վտանգավոր թափոնների մոբիլություն: <>

Գլոբալացման վերը նշված թեզին հնարավոր են երկու տարբեր արմատական առարկություններ: Կան գլոբալացման էնտուզիաստներ, որոնք կարծում են, որ նշված գործընթացները ծնում են նոր դարաշրջան՝ կոսմոպոլիտ «անսահմանության» ոսկե դարը: Այս դարաշրջանը խոստանում է իսկայական նոր հնարավորություններ, որոնք առաջին հերթին թույլ են տալիս հաղթահարել այն սահմանափակումներն ու արգելքները, որոնցով հասարակությունները և հատկապես ազգային պետությունները նեղացրել են կորպորացիաների և անհատների ազատությունը և ուղղված են աշխարհը՝ որպես «սեփական կալվածքը» տնօրինելուն[37]:

Մյուսները գլոբալացումը նկարագրում են ոչ թե իբրև սահմաններ չունեցող, այլ՝ իբրև նոր դիստոպիա: Գլոբալ աշխարհը վերածվում է նոր միջնադարի, իսկ Արևմուտքը վերադառնում է նախաարդիական դարաշրջան[38]: Միջնադարյան աշխարհը բնութագրվում էր հստակ տարածքային սահմանների և «հասարակությունների» բացակայությամբ. այստեղ կայսրություններն էին՝ իրենց կենտրոններով և ծայրամասերով, փոխթափանցող բազմաթիվ ցանցերով և մրցակցող իրավասություններով. այստեղ կային նաև բազմաքանակ լեզվական համայնքներ[39]: Նոր միջնադարյան գլոբալ աշխարհը կարծես թե բաղկացած է նաև իրար համընկնող իրավազորություններ և ինքնություններ ունեցող մրցակցող ինստիտուտներից[40]: Պետությունները փոխակերպվում

---

[37] Ohmae, K. (1990) The Borderless World. London: Collins.
[38] Cerny, P. (1997) Globalization, fragmentation and the governance gap: toward a new mediaevalism in world politics// Globalization Workshop, University of Birmingham, March.
[39] Mann, M (1995). The Sources of Social Power. Vol 1, Cambridge: Cambridge University Press; Billing, M. (1995) Banal Nationalism. London: SAGE Publications, p. 20-21.
[40] Նոր միջնադարի գաղափարի քննադատությունը տե՛ս Hirst, G., Thompson, P. (1996) Globalization in Question. The International Economy and Possibilities of Governance. Wiley, p. 184.

են պետություն-մրցակիցների. նրանցից շատերին չի սպառնում արտաքին ռազմական վտանգը, ինչը ազգերի մեջ դժվարություններ է առաջացնում սեփական միասնության մասին պատկերացումը պահպանելու հարցում: Տարբեր հզոր կայսրություններ, ինչպիսիք են Microsoft-ը և Coca-Cola-ն, որոնք թափառում են մոլորակով՝ վերաձևելով տնտեսություններն ու մշակույթները՝ սեփական զլոբալ շահերին համապատասխան: Նկատելի է նաև մրցակցող քաղաք-պետությունների աճը, ինչպիսիք են՝ Նյու Յորքը, Սինգապուրը, Լոնդոնը, Հոնկոնգը, Սիդնեյը, Տոկիոն և այլն:

Ինչպես լավատեսական, այնպես էլ հոռետեսական վերլուծությունները ցույց են տալիս, որ հենց *արտամարդկային* օբյեկտներն են վերափոխում մեքենաներով, տեխնոլոգիաներով, առարկաներով, տեքստերով, կերպարներով, ֆիզիկական միջավայրերով ստեղծվող և փոխակերպվող սոցիալական հարաբերությունները: Մարդկային աճող հնարավորություններն ավելի ու ավելի հաճախ են պայմանավորվում մարդկանց և նյութական իրերի՝ նշանների, մեքենաների, տեխնոլոգիաների, տեքստերի, ֆիզիկական միջավայրի, կենդանիների, բույսերի և արտադրական թափոնների բարդ փոխկապվածություններով: Իրականում մարդկային հնարավորությունները խիստ սահմանափակ են, իսկ ունեցվածքի մեծ մասը կարող է իրականացվել միայն նման արտամարդկային բաղադրիչների հետ փոխգործակցության միջոցով: Հայտվում են գոյաբանական խորություն և փոխակերպող ուժ ունեցող բացարձակ նոր արտամարդկային մշակումներ՝ գերփոքր չափերի հասցված էլեկտրոնային տեխնոլոգիաներ, որոնց մարդիկ «միացված են» ամենատարբեր եղանակներով, և որոնք շրջապատում են մեզ աշխատանքում և տանը, կենսաբանության վերափոխումներ գենետիկորեն կոդավորված տվյալների համակցության, հեշտությամբ տեղափոխվող թափոնների և վիրուսների ծավալի և մասշտաբի ավելացում, բնության ու մշակույթի խթանման ահռելի հնարավորություններ, վայրկենական ֆիզիկական մոբիլություն ապահովող տեխնոլոգիաների փոփոխություն, տեղեկատվական և հաղորդակցական հոսքերի առաջացում, որոնք կտրուկ կերպով

կրճատում են ժամանակային հեռավորությունները և տարածություն-ները՝ բաժանելով մարդկանց, ընկերությունները և երկրները:

Հաշվի առնելով զարգացող արտամարդկային հիբրիդների նշա-նակությունը՝ ես չեմ անդրադառնա գործողության (agency) հայեցա-կարգերին, որոնք գլխավորապես կկենտրոնանային մարդկանց՝ նշա-նակություններ տալու, զգացմունքներ արտահայտելու և սոցիալական կանոններին հետևելու ունակությունների վրա: Դա չի նշանակում, որ մարդիկ զբաղված չեն նման բաներով կամ գործողության սուբյեկտներ չեն: Պարզապես նրանք այդպիսին չեն դառնում իրենց կողմից ստեղ-ծած հանգամանքներում, այլ հենց այդպիսի հանգամանքները՝ սուբյեկտների և օբյեկտների կայուն և գնալով ավելի սերտ դարձող կապերը, ձեռք են բերում առաջնային նշանակություն: Ասվածը նշա-նակում է, որ մարդկային և ֆիզիկական աշխարհները սերտորեն փոխկապակցված են, և դրանք հնարավոր չէ վերլուծել առանձին-առանձին՝ որպես հասարակություն և որպես բնություն կամ որպես մարդիկ և օբյեկտներ <>:

Սուբյեկտի մասին հարցը օբյեկտներից անկախ գործող, ինչպես նաև նշանակություններ հաղորդելու և սոցիալական կանոններին հետևելու իբր բացառիկ ունակություններով օժտված մարդկանց մա-սին հարցը չէ: Որոշիչն, ավելի շուտ, այն է, թե ինչպե՞ս են ֆիզիկական աշխարհը և արտեֆակտերը վերապրվում մարդկանց զգայական փոր-ձում: Գործողության հասկացությունը (agency) մարմնավորման կա-րիք ունի, և ես պատրաստվում եմ զարգացնել այդ միտքը զգացմունք-ների վերլուծության միջոցով: Այս զգացմունքները առանցքային դեր են խաղում ոչ միայն, ինչպես համարում էր Զիմելը, մարդկանց միջև հարաբերությունների առումով, այլև բնության, տեխնոլոգիաների, օբյեկտների, տեքստերի և պատկերների նկատմամբ մարդկանց վերա-բերմունքի:

Եթե մարդկային գործունեության ինքնավար ոլորտ գոյություն չու-նի, ապա պետք չէ պատկերացնել նաև սոցիալական իրականության առանձին մակարդակ, որը մարդկային գործողությունների և հատուկ ունակությունների եզակի արդյունք կլիներ: Տարբեր հեղինակներ

փորձել են զարգացնել անհատների կողմից ստեղծված հասարակության դիալեկտիկայի գաղափարը, ինչպես նաև՝ անհատների կողմից ձևավորված հասարակության[41]: Նման դիալեկտիկան, սակայն, կարող է համոզիչ լինել միայն այն դեպքում, եթե հասարակության տակ մենք նկատի ունենանք պարզունակ մի բան, այն է՝ արտամարդկայինի հետ փոխազդեցության բարդ ցանցերից առանձնացված մաքուր սոցիալական ինտերակցիաները: Քանի որ գրեթե բոլոր սոցիալական էակները ներգրավված են մարդկանց այլ բաղադրիչների հետ կապող ցանցերում, գոյություն չունեն բացառապես *մարդկային* հասարակություններ՝ որպես այդպիսին: Հասարակությունները միշտ հիբրիդներ են:

Ավելին, ինչպես հետագայում կտեսնենք, արտամարդկային տարբեր փոխակերպումները թուլացնում են հասարակությունների՝ իրենց քաղաքացիներին համախմբելու, նրանց ազգային ինքնությունն ապահովելու և համերաշխ դիրք դրսևորելու հնարավորությունները: Ռոուզը պնդում է, որ մինչ մեր քաղաքական, մասնագիտական, բարոյական կամ մշակութային իշխանությունները նախկին խանդավառությամբ խոսում են «հասարակության» մասին, այդ եզրույթի բուն նշանակությունը և էթիկական բովանդակությունը հարցականի տակ է, քանի որ «հասարակությունը» ներկայացվում է իբրև իրարամերժ հավատարմություններ և անհամաչափ պարտավորություններ ունեցող բազմաթիվ բարոյական և մշակութային համայնքների պատառոտված[42]:

Լաքլաուն և Մուֆը, ավելի ընդհանուր թեզ առաջ քաշելով, ցույց են տալիս հասարակության՝ որպես դիսկուրսի վավերական առարկայի անհնարինությունը[43]: Պատճառը ցանկացած ամբողջի անխուսափելիորեն թերի բնույթն է: Մասնավորապես, չկա հիմնարար մի սկզբունք, որը կարձանագրեր և այդպիսով կսահմաներ այն տարբերակումների դաշտը, որը թույլ կտար տարանջատել մի հասարակությունը մյուսից: Օգտագործելով Լականի մետաֆորը՝ նրանք ենթա-

[41] Berger, P., Luckmann, T. (1967) The Social Construction of Reality. London: Allen Lane.

[42] Rose, N. (1996) Refiguring the territory of government// Economy and Society, 25, pp. 327–56, p. 353.

[43] Laclau, E. and Mouffe, C. (1985) Hegemony and Socialist Strategy. London: Verso.

դրում են, որ սոցիալական հարաբերությունները միշտ և անընդհատ բաց են. մաշկը պատռված է, և միշտ կա հեգեմոնային լրացման պահանջմունք կամ հասարակությունը կրկին կարելու անհրաժեշտություն[44]: Նման լրացումը կամ հակառակը՝ սոցիալականի վերակարումը համարվում է անհնար: Այն պարզապես ուրիշ տեղում կպատռվի, վերքը կրկին կսկսի արյունահոսել, քանի որ անցյալը կշարունակի դաջել «սոցիալական մարմնի» մակերեսը:

Եվ այսպես, Լաքլաուն ու Մուֆը հարց են տալիս, թե ի՞նչն է կարում հասարակությունը, երբ արտամարդկային ցանցերը սկսում են ակոսել այն ամենաանսպասելի ուղղություններով և աճող արագություններով: Այստեղ ես ելնում եմ այն ենթադրությունից, որ մեթոդաբանական ինդիվիդուալիզմի և հոլիզմի արժանիքների վերաբերյալ դասական փիլիսոփայական-սոցիոլոգիական վեճերը կամ ավելի ուշ տարբերակում՝ կառուցվածքայնացման տեսության և կառուցվածքային դուալիզմի, չեն կարող օգնել մեզ: Այս վեճերը կապ չունեն տարբեր տիպի մոբիլությունների բարդ հետևանքների հետ, տարբեր օբյեկտների հետ մարդկանց զգայական հարաբերությունների միահյուսման, հասարակության սահմաններից դուրս գտնվող հարաբերությունների տարածական և ժամանակային որակի, բազմաթիվ «տարածաշրջանների, ցանցերի և հոսքերի բարդ և անկանխատեսելի փոխհամընկնումների հետ»: Նկարագրել դրանք որպես «կառուցվածքներ» կամ «գործողություններ» (agency), նշանակում է հաշվի չառնել նման հարաբերությունների տարածական և ժամանակային բարդությունը: Այս գրքում ենթադրվում է, որ սոցիալական կյանքի կարգաբերումը պատահական, անկանխատեսելի, կտրատված բնույթ է կրում, որը չի կարող հանգեցվել մարդկային սուբյեկտներին: Լումանն այս միտքն արտահայտում է այսպես. «Չի կարող լինել «ինտերսուբյեկտիվություն» սուբյեկտի հիմքով»[45]:

Այս կետերը կարելի է հստակեցնել՝ հակիրճ դիտարկելով Մարգարետ Արչերի մորֆոգենետիկ սոցիալական տեսությունը, որը

[44] Ibid, p. 88.
[45] Luhmann, N. (1995) Social Systems. Stanford, CA: Stanford University Press, p. xli.

ստեղծվել է հասարակության «սրտնեղիչ» բնույթը հասկանալու համար[46]: Նա տեղադրում է «ժամանակը» իր «չմիավորվող» սոցիալական տեսության կենտրոնում՝ հիմնված երկու առանցքային թեզիսների վրա: Նախ, սոցիալական աշխարհը գոյաբանորեն շերտավորված է այնպես, որ կառուցվածքների և ագենտների զարգացող հատկությունները չեն կարող հանգեցվել միմյանց և վերլուծական առումով սկզբունքորեն տարբեր են: Երկրորդ, ագենտները և կառուցվածքները տարբերվում են ժամանակային առումով, այսինքն՝ հնարավոր է խոսել կամ կառուցվածքի, կամ ագենտի համապատասխան առաջացման մասին[47]: Այսպիսով, հիմք է ստեղծվում մորֆոգենեզի՝ հասարակության արմատական և անկանխատեսելի բարեփոխման ուսումնասիրման համար, որը բխում է կառուցվածքի և գործողության (agency)՝ պատմականորեն պայմանավորված փոխազդեցությունից: Այս փոխազդեցությունը ժամանակի ընթացքում ծնում է բաց հասարակություն, որը նման է միայն ինքն իրեն և ուրիշ ոչնչի:

Բայց ժամանակի հասկացությանը վերաբերող նրա հետազոտությունները մնում են խնդրահարույց: Նախ, ժամանակը վերլուծվում է տարածությունից զատ, ինչը հակասում է ինչպես XX դարի գիտության ընթացքի տրամաբանությանը, այնպես էլ սոցիալական գիտություններում կուտակված լայնածավալ փաստարկներին: Սա ժամանակի նյուտոնյան հայեցակարգն է: Չեն շոշափվում ժամանակի սոցիոլոգիայի ոլորտում ծավալված բանավեճերը, որոնք ցույց տվեցին, որ սոցիալական կյանքը կազմված է տարբեր «ժամանակներից»: Արչերը համարում է ժամանակը գծային, այսինքն՝ ընդունում է այն՝ իբրև չորրորդ հարթություն, իբրև պարզագույն «առաջ և հետո»: Կառուցվածքները և ագենտներին նա տեղադրում է ժամանակի մեջ՝ իբրև չորրորդ տարածության վրա շարված հուլունքներ: Այս իմաստով նա մերժում է այն հնարավորությունը, որ ժամանակը (և տարածությունը) նույնպես հզոր «էություններ» են, կամ որ գոյություն ունեն ժամանակի ինչ-որ

[46] Archer, M. (1995) Realist Social Theory: the morphogenetic approach. Cambridge: Cambridge University Press.
[47] Ibid, p. 66.

նետեր և դրանք բոլորը հասարակությունների ներսում չեն: Արչերը հաշվի չի առնում նաև այն հանգամանքը, որ չնայած ժամանակն ինքնուրույն ազդեցություն չի ունենում, կան հատուկ ժամանակներ, որոնք որոշակի ազդեցություն ունեն: Մասնավորապես, «ժամացուցային ժամանակի» հիբրիդը XIX և XX դարերում զգալի չափով ծառայել է (իհարկե, միայն մյուս պատճառական գործընթացների հետ միասին) իբրև բնական աշխարհի ենթարկեցման գործիք: Նման կերպ ենթադրվող «հասարակության վերջը» կարող է հայտնվել սոցիոլոգիայի օրակարգում ընթացիկ գլոբալ փոփոխություններ առաջացնող «տարածության – ժամանակի» արտասովոր խեղաթյուրման պատճառով. փոփոխություններ, որոնց ժամանակը՝ իբրև ակնթարթային ինչ-որ բան, ձեռք է բերում հատկապես ուժեղ հիբրիդի տեսք:

Հասարակության հիպոթետիկ «վերջը», ամենայն հավանականությամբ, կնշանակի սոցիոլոգիայի վերջը, որը, ըստ Ռոուզի, «վավերացրեց այս [սոցիալական] տարածքի գոյությունը», իսկ հաշվի առնելով, որ այդ տարածքը վերափոխվում է նոր արազություններ և տարածական տոպոլոգիաներ ձևավորվող ուժի ազդեցության ներքո, սոցիոլոգիան «ենթարկվում է ինքնության ճգնաժամին»[48]: Նման կարծիք է հայտնել նաև Թուրենը, որը հայտարարել է, որ դասական սոցիոլոգիայի շրջանակները փլուզվում են, քանի որ քայքայվում է հասարակությունը: Նա նկարագրում է «ապաարդիականացման» գործընթացը և «այն միասնության քայքայումը, որը մենք դեռ անվանում ենք հասարակություն»[49]:

Մասնավորապես, եթե չկա կապակցված հասարակություն, ապա ինչպե՞ս կարելի է առանձնացնել ֆունկցիոնալ պահանջները, որոնց բավարարումը յուրաքանչյուր այդպիսի «հասարակության» գոյության պայմանն է: Չունենալով նրանց առաջարկելու հնարավորություն՝ սոցիոլոգ - ֆունկցիոնալիստը չի կարողանա բացատրել ո՛չ հատուկ կազմակերպությունների կամ գործընթացների ազդեցությունը հասա-

---

[48] Rose, N. (1996) Refiguring the territory of government// Economy and Society, 25, pp. 327–56; Mol, A., Law, J. Regions, networks and fluids: anaemia and social topology// Social Studies of Science, 24, pp. 641–71.
[49] Touraine, A. (1998) Culture without Society// Cultural Values, 2, pp. 140–57.

րակության վրա, ո՛չ էլ, ինչն ավելի զավեշտալի է, այդ կարգի կազմակերպություններից ցանկացածի առաջացումը և պահպանումը՝ իր գործառական հետևանքների առումով[50]: Բայց նույնիսկ եթե մենք այլևս «ֆունկցիոնալիստներ» չենք, դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս մենք կարող ենք հայեցակարգել որոշակի էություն (կամ կազմավորումը), եթե ոչ հասարակության հանդեպ ունեցած «գործառույթների» առումով: Հաջորդիվ ես պատրաստվում եմ ցույց տալ, որ այսօրվա պետությունները պետք է նկարագրել հիմնականում «կարգավորման» տեսանկյունից: Բայց ի՞նչն է հատկապես կարգավորվում, և ինչպե՞ս կարելի է որոշել այդ գործառույթը, եթե այն, ինչ մենք անվանում ենք հասարակություն, այլևս չունի հստակ սահմաններ: <>

Գլոբալ հոսքերը և ցանցերը առաջացրել են նոր գործառական պահանջ՝ հաշվի առնելով, որ պետություններն այսուհետ ստիպված են կարգավորել այդ ցանցերի հոսքերի մասշտաբային հետևանքները: Այս գլոբալ մակարդակում առաջացող գործառական պահանջը փոխակերպում է պետությունները, որոնք անցում են կատարում ժողովուրդների էնդոգեն կարգավորումից (Ֆուկոյի ոգով) դեպի էկզոգեն պետական աջակցություն կամ տարբեր տիպի մոբիլությունների հետևանքների կարգավորում:

Այսպիսով, թվում է, որ սոցիոլոգիան բաց ծով է դուրս գալիս. մենք լքում ենք ինտեգրված, կապակցված հասարակության և լումանյան աուտոպոեյտիկ հասարակական համակարգի անվտանգ ջրերը[51]: Առաջանում է տեսական և էմպիրիկ հորձանուտ, որտեղ մահանում է միջանկյալ այն ճշմարտությունների մեծ մասը, որոնք սոցիոլոգիան փորձում էր ամրագրել:<> Մենք պետք է բախվենք այն սակավաթիվ դրույթների քայքայման հետ, որոնք սոցիոլոգիան վերջին մի քանի տասնամյակների ընթացքում թեթևամտորեն հայտարարել էր կայուն:

[50] Isajiw, W. Causation and Functionalism in Sociology, London: Routledge, 1968, Elster, J. Logic and Society, Chichester: Wiley, 1978.
[51] Luhmann, N. (1995) Social Systems. Stanford, CA: Stanford University Press.

Այս սոցիալական և մտավոր մոբիլության հորձանուտում ես հարց եմ տալիս՝ արդյո՞ք ընդհանրապես կպահպանվեն գոնե ինչ-որ մեկընդմիշտ ամրագրված սկզբունքներ:

**Սոցիոլոգիական մեթոդի ավելի շատ կանոններ**

Ասվածը կցանկանայի ամփոփել որոշ մտքերով, որոնք վերաբերում են այն հարցին, թե ինչպիսի՞ն պետք է լինեն «սոցիոլոգիական մեթոդի կանոնները» մի քանի հաջորդ տասնամյակներում: Ես արդեն ցույց տվեցի, որ «հասարակությունները» կարելի է հասկանալ միայն այլ «հասարակությունների» հետ հարաբերությունների միջոցով: Բացի այդ, բոլորովին պարտադիր չէ, որ հասարակությունները կազմակերպված լինեն որոշակի առաջացնող կենտրոնի շուրջ: Մասամբ դրանք տրված են օբյեկտներով նույնքան, որքան սուբյեկտներով, իսկ քանի դեռ նրանց սահմաններն անցանելի են, բավականին բարդ է որոշել, թե ինչն է կազմում այս կամ այն հասարակության սահմանը: Ավելին, հասարակությունները առաջացող սոցիալական կյանքի մակարդակներից միայն մեկն են: Դրանք միակ կազմավորումները չեն, որոնք այս կամ այն իմաստով ինքնավերարտադրվող են իրենց միջավայրի հանդեպ:

ՊՅՈՏՐ ՇՏՈՄՊԿԱ

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՆ Է. ՆՈՐ ՇՐՋԱԴԱՐՁ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ[52]

**Ներածություն**

Թվում է, թե վերջին ժամանակներում սոցիոլոգիայի ուշադրության կիզակետը կտրուկ փոխվում է: Հասարակական գիտությունների ոլորտում հեղինակավոր աշխատություններ հրատարակող պարբերականների (Blackwell, Cambridge University Press, Polity Press) գրացուցակներում տեղ են գտնում մի շարք վերնագրեր, որոնք ընդամենը տասը տարի առաջ պարզապես աներևակայելի կլինեին և կպիտակավորվեին որպես «ոչ գիտական»: Լուրջ հեղինակները մեծ ոգևորությամբ գրում են գրքեր՝ սիրո, մտերմության, ընկերության, տանից դուրս մատուցվող սննդի, փոփ երաժշտության, գնումների, ռիսկերի, անվստահության, մենության, առողջության, մարմնամարզության և շատ ու շատ այլ թեմաների մասին: Հարյուր տարի առաջ նման սոցիոլոգիայի նախահայրը դարձավ Գեորգ Զիմելը: Սակայն հաշվի առնելով, որ նա գործունեություն էր ծավալում «գիտական» սոցիոլոգիայի, հատկապես վերջինիս գերմանական տարբերակի ծաղկման շրջանում, իր յուրօրինակ հայացքները թույլ չտվեցին նրան հռչակ ձեռք բերել գիտության ասպարեզում: Հիմա ամեն բան այլ է. Զիմելը ազատվել է մոռացության ճիրաններից՝ իր արժանի տեղը զբաղեցնելով ժամանակակից սոցիոլոգիայի կուռքերի (Կարլ Մարքս, Մաքս Վեբեր և Էմիլ Դյուրկհեյմ) պանթեոնում:

Միևնույն ժամանակ, սոցիոլոգիական մեթոդներում նկատվում է էական տեղաշարժ՝ սոցիոլոգիական հետազոտություններում տասնամյակներ շարունակ իրենց գերակա դիրքը զբաղեցնող զանգվա-

[52] Sztompka, P. (2008) The focus on everyday life: a new turn in sociology// European Review 16(01), pp. 23-37. Թարգմանությունը՝ Գայանե Միքայելյանի:

ծային քանակական հարցումներից դեպի առավել որակական մոտեցումներ՝ դիտարկում, դեպքերի հետազոտում, խորին հարցազրույցներ, «էգո-փաստաթղթերի» (չկանխամտածված կերպով ստեղծված այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ նամակները, կյանքի պատմությունները, ընտանեկան լուսանկարները և այլն) մեկնաբանություններ: Արագորեն ոտքի է կանգնում վիզուալ սոցիոլոգիան: Կան նաև այնպիսիք, ովքեր ազդարարեցին սոցիոլոգիայում տեղի ունեցող «կուռքերի շրջադարձի» մասին:

Տեսական և մեթոդաբանական միտումները, անշուշտ, փոխկապակցված են: Իսկապես, եթե առօրյա կյանքի իրադարձությունները դիտարկենք իբրև սոցիոլոգիայի կենտրոնական օբյեկտ, ապա անհրաժեշտ կլինի վերադառնալ դիտարկման մեթոդներին, որոնք XX դարասկզբից ի վեր լայնորեն կիրառվում են սոցիալական մարդաբանների ու ազգագրագետների կողմից, քանզի առօրյա կյանքն, անկասկած, «տեսանելի է» և հետևապես՝ դիտարկելի. ըստ այդմ, վերջինս նաև վերարտադրելի է լուսանկարչական (և այլ վիզուալ) միջոցներով[53]: Մտաբերում եմ հանրաճանաչ գերմանացի սոցիոլոգի, ով իր կարիերայի մեծագույն մասը նվիրել է նրբաճաշակ զանգվածային սոցիոլոգիական հարցումներին: Նա մեր ունեցած մասնավոր զրույցում խոստովանեց. «Գիտեք, եթե ես իսկապես ցանկանայի հասկանալ իտալական հասարակությունը, հարցաթերթեր չէի ուղարկի, այլ կգնայի փողոցի անկյան հետևում գտնվող սրճարան: Այ, գերմանական հասարակությունը հասկանալու համար, ես գնում եմ գարեջրատուն, իսկ եթե ցանկանում եմ բրիտանական հասարակությունը հասկանալ, գնում եմ փաբ և այնտեղ պարզապես շուրջս եմ նայում»: Պարզապես «շուրջս եմ նայում»՝ լավագույն խորհուրդը սոցիոլոգիական երևակայությունը զարգացնելու համար:

[53] P. Sztompka (2005) Socjologia wizualna: fotografia jako metoda badawcza [Visual Sociology: Photography as a Research Method]. Warszawa: PWN Publishers.

**«Երրորդ սոցիոլոգիա»**

Ի՞նչ ընդհանուր բան կա առաջին հայացքից իրար հետ որևէ ընդհանրություն չունեցող «սովորական առարկաների» երփներանգ ծիածանում, որոնց վրա կենտրոնացել են ժամանակակից հեղինակները: Նրանք սոցիալական օրգանիզմների, սոցիալական համակարգերի, սոցիալ-տնտեսական կազմավորումների, սոցիալական կառուցվածքների, սոցիալական գործընթացների և այլ խիստ վերացական մակրոսոցիոլոգիական խնդիրների մակարդակից սոցիոլոգիան իջեցնում են այլ մարդու առօրյա կյանքի մակարդակ. մարդու, որը ապրում է այլ մարդկանց մեջ, նրանց հետ, կողք կողքի՝ փոխազդեցության, մրցակցության, կոնֆլիկտի կամ պայքարի, սիրո և ատելության, սակայն ոչ երբեք միայնության և մեկուսացման մեջ: Այժմյան ուսումնասիրությունները առնչվում են մարդկանց ամենապարզ և առավել բնորոշ փորձին և հակված են քանդելու կոլեկտիվ և միջանձնային անորսալի չափումները և վերջիններիս ներքին մեխանիզմները: Այդ գրքերի մեծ մասը նկարագրական, վերլուծական և տիպաբանական են: Սակայն, անշուշտ, կան նաև առօրյա կյանքի վրա սևեռված լայնածավալ բացատրական տեսությունների ստեղծման մի շարք փորձեր: Կհիշատակեմ միայն երեք արդիական տեսություն՝ Ջոնաթան Թերների դեմ առ դեմ փոխազդեցության[54], Ռենդալ Քոլինզի փոխազդեցության ծիսակարգի շղթաների[55], և Ջեֆրի Ալեքսանդերի ու նրա խմբի՝ մշակութային պրագմատիզմի ու սոցիալական կատարումների (social performances) տեսությունները[56]:

Սակայն արդյո՞ք ներկայիս շրջադարձը դեպի առօրյա կյանքը, պատկերագրական մեթոդները և աղբյուրները, նորաձևությամբ տարվող սոցիոլոգիական գիտության հերթական անցողիկ հետաքրքրություններից չէ, թե՞ այն իսկապես տեսական և մեթոդաբանական շրջադարձի վկայությունն է, որը պետք է բերի իրական հարացուցային տե-

---

[54] Turner, J. (2002) Face to Face: Toward a Sociological Theory of Interpersonal Behavior. Stanford: Stanford University Press.

[55] Collins, R. (2004) Interaction Ritual Chains. Princeton: Princeton University Press.

[56] Alexander, J., Giesen, B., Mast, J. (2006) Social Performance, Cambridge: Cambridge University Press.

դաշարժի[57]: Ես փաստարկներ կբերեմ հօգուտ վերջինիս: Ինձ համար այն մատնանշում է «երրորդ սոցիոլոգիայի»՝ սոցիալական գոյության (սոցիալական էքզիստենցիայի) սոցիոլոգիայի ծնունդը, որը պետք է հաջորդի «առաջին սոցիոլոգիային»՝ սոցիոլոգիայի դասականներ Օգյուստ Կոնտի, Հերբերտ Սպենսերի, Կարլ Մարքսի, իսկ ավելի ուշ նաև Թալքոտ Պարսոնսի կողմից մշակված սոցիալական ամբողջների կամ օրգանիզմների, համակարգերի սոցիոլոգիային, և «երկրորդ սոցիոլոգիային»՝ սոցիալական «ատոմների», այն է՝ վարքի, գործողությունների կամ նույնիսկ «ենթաատոմային» «մասնիկների»՝ իմաստների, գրությունների, տեքստերի, որի սկիզբը դրեց Մաքս Վեբերը, իսկ շարունակեցին Հերբերտ Միդը, Կլոդ Լևի-Ստրոսը և այլոք[58]:

«Երրորդ սոցիոլոգիան» որպես հետազոտության հիմնական օբյեկտ է վերցնում սոցիալական իրադարձությունները, այն է՝ մարդկային գործողությունը կոլեկտիվ համատեքստերում, որը սահմանափակված է մի կողմից մասնակիցների ագենտային պոտենցիալով, մյուս կողմից՝ գործողության կառուցվածքային և մշակութային միջավայրով: Այսպիսով, առաջին և երկրորդ սոցիոլոգիաների իրեղենացված վերացարկումները շրջանցվում են երկու կողմից՝ մարդկանց գլխավերևում կախված համակարգերի ու կառուցվածքների մակրովերացարկումների և մարդ արարածների իրական կյանքում դրսևորվող վարքի և գործողությունների միկրովերացարկումների: «Երրորդ սոցիոլոգիան» մերժում է սոցիալական կյանքի պարզեցման այս երկու եղանակները, այսինքն՝ վերին պարզեցումը, որի շրջանակներում սոցիալական կյանքը դիտարկվում է որպես համակարգային կամ կառուցվածքային պայմանավորումների դրսևորում, և ստորին պարզեցումը, որը սոցիալական կյանքը հանգեցնում է վարքի և գործողությունների պարզ համախմբի: Սոցիալական գոյության գաղափարը կենտրոնացած է մարդկային հասարակության մեջ իրապես տեղի ունեցող այն ամենի վրա, ինչը գտնվում է կառուցվածքների և գործն-

[57] Kuhn, T. (1970) The Structure of Scientific Revolutions. Chicago: University of Chicago Press.

[58] Dawe, A. (1978) Theories of social action // Bottomore T., Nisbet R. (eds). A History of Sociological Analysis, New York: Basic Books, pp. 362 – 417.

ղությունների միջև ընկած մակարդակում, որում կառուցվածքային սահմանափակումներն ու գործողության դինամիկան արտադրում են իրական, ապրվող և դիտարկելի սոցիալական իրադարձությունները, սոցիալ-անհատական պրակտիկաները, որոնք կազմում են առօրյա կյանքը, մարդկանց ունեցած այն միակ կյանքը, որը ո՛չ ամբողջությամբ պայմանավորված է և ո՛չ էլ ամբողջությամբ ազատ: «Սոցիալական իրադարձություն» հասկացության մեջ գործող անհատների ագենտային (անհատական) ազդեցությունները և կառուցվածքային (իրավիճակային) համատեքստը, որում վերջիններս գործառում են, մեկտեղվում են մեկ անբաժանելի երևույթում:

Այդ կերպ, «երրորդ սոցիոլոգիան» հրաժարվում է առողջ բանականության երկու պատրանքներից.

1. Այն վերացնում է ամբարտավան, եսակենտրոն հավատը մեր անհատական ինքնավարության, կարևորության, բացառիկ որակների և մնացյալ հասարակությունից անկախության նկատմամբ, քանի որ եթե մենք իսկապես դրան նայում ենք զուտ մարմնական տեսանկյունից, ապա հանգում ենք նրան, որ մենք առանձին կաշվե պարկեր ենք՝ մսով լցված: Բայց սա մեր մարդկության էությունը չէ:
2. Այն հրաժեշտ է տալիս ճակատագրապաշտական, խոնարհ համոզմունքին, որի համաձայն մեր ճակատագիրը ամբողջովին ձևավորվում է անտեսանելի, գերբնական և անվերահսկելի ուժերի կողմից, քանզի մենք անընդհատ բախվում ենք մեր ազատությունը սահմանափակող օրենքների, կանոնների, սկզբունքների և չափանիշների պատնեշին, որը մենք չենք ստեղծել: Պատնեշն անտեսելու կամ վերջինս ժամանակին չճանաչելու արդյունքում մենք ձեռք ենք բերում տարատեսակ ցավագին փորձառություններ, ինչպես, օրինակ՝ ստորացումը, մերժումը, սոցիալական մեկուսացումը, արտաքսումը և նույնիսկ ազատազրկումը: Սակայն միևնույն է այս ամենը չի բացառում մարդկային ագենտության կարևորությունը:

Ի տարբերություն վերջինների՝ «երրորդ սոցիոլոգիան» նկարագրում է մարդկային կյանքի կամ «սոցիալական գոյության» առավել իրատեսական պատկերը, որը ներառում է նաև մեր «որևէ բանից ազատության» և «ինչ-որ բան անելու» ազատության սահմանները: Եթե առաջինը տրված է ազատ և հասարակական կյանքին ստեղծագործ մասնակցություն ունեցող այլ մարդկանց հետ հարաբերություններում, ապա ազատության երկրորդ դրսևորումը հնարավոր է այլ մարդկանց (որոնք կարող են ենթարկվել մեր ազդեցությանը) հետ ավելի լայն սոցիալական համակցումներում մեր եզակի տեղակայման շնորհիվ:

Սոցիալական գոյությունը մշտապես դինամիկ է: Հասարակական «կյանքի» հին մետաֆորը բավականին լավ է արտահայտում այս հանգամանքը: Ինչպես և կյանքը բուն իմաստով, այնպես էլ սոցիալական գոյությունը երբեք չի մնում նույն տեղում կանգնած, քանզի եթե այն կանգ առնի, կյանքը ուղղակիորեն կավարտվի: Սակայն հարկ է նշել, որ այն դինամիկ է ոչ միայն անընդհատ չդադարող գործողության կամ գործառման (սովորական վերարտադրողական «փոփոխություններ ինչ-որ բանում»,- ինչպես գրում են որոշ սոցիոլոգներ) իմաստով, այլև «ինչ-որ բանում» (սոցիալական գործընթացներ, փոխակերպումներ) արդյունավետ, երկարատև «փոփոխություններ» խթանելու իմաստով: Տարիներ առաջ ես առաջարկեցի սոցիալական կյանքի դինամիկայի մեկնաբանման հայեցակարգային մոդել[59]: Ես պայքարում էի երկու ճակատներում: Մի կողմից՝ ես ժխտեցի զարգացման, էվոլյուցիայի, արդիականացման հասկացությունները, որոնք այդքան բնորոշ են «առաջին սոցիոլոգիային»: Այն սոցիալական (պատմական) գործընթացներին վերագրում է որոշակի գծային, անխուսափելի ուղղվածություն՝ համարելով, որ դրանք որոշված և գործադրված են արտամարդկային, վերացական, մեզանից վեր գտնվող և իրեղենացված ուժերի կողմից: Մյուս կողմից՝ ես մերժեցի «երկրորդ սոցիոլոգիայի» կողմից ենթադրվող այն գաղափարը՝ ըստ որի մարդկային գործողությունները կրում են լիովին ազատ, պատահական, հատվածային և կամայական

[59] Sztompka, P. (1991) Society in Action: The Theory of Social Becoming. Cambridge: Polity Press.

բնույթ, քանզի նման մոտեցումը մեզ հնարավորություն չի տալիս տեսնելու ժամանակային որևէ կանոնավորություններ: Այդ ամենի փոխարեն ես ներդնում եմ «սոցիալական կայացման» (social becoming) հայեցակարգը, որը համադրականորեն ծածկում է մետադաշտամի երկու կողմերը՝ մարդ-դերակատարների կենսատու, կարևոր գործողություններ կատարելու հնարավորություններ ստեղծող (կամ սահմանափակող) գործընթացների ներունակ շարժման և տարբեր ռեսուրսների տիրապետող դերակատարների անհատական ներդրման, ինչը թույլ է տալիս նրանց կա՛մ օգտագործել այդ հնարավորությունները, կա՛մ խուսափել դրանցից: Այս երկու ազդեցությունների հանդիպման մակարդակը սոցիալական փոփոխությունների անբաժանելի հոսքի մեջ ես կոչեցի «մարդկային գործունություն» («human agency»): Սոցիալական գոյությունը, որը հաստատվում է առօրյա կյանքի սոցիալական պրակտիկաներով, գործի է դնում սոցիալական կայացման գործընթացը՝ հասարակության ինքնավերափոխումը սոցիալական գործունեության շնորհիվ, այսինքն՝ յուրօրինակ ռեսուրսներով օժտված մարդկանց, որոնք գործում են սոցիալական գործողության սահմանափակումների կամ խթանների շրջանակում, որը տրված է սոցիալական գործողության ժառանգված փուլով, որն ինքնին նախորդող պրակտիկայի արդյունք է՝ նախնիների կողմից գործընթացների առավել վաղ փուլերում իրականացված: Սոցիալական գոյությունն ու սոցիալական կայացումը կազմում են այն, ինչն «իսկապես իրական է» կամ այն, ինչը մարդկանց հասարակության մեջ գոյաբանորեն հիմնային է և նախորդող: Իրականության հենց այս մակարդակի վերլուծության, տիպաբանության և տեսական բացատրության ուղղությամբ է, որ «երրորդ սոցիոլոգիան» այժմ առաջ է շարժվում:

**Վիզուալ սոցիոլոգիայի հեռանկարները**

Ինչպես արդեն նշվել է, առօրյա կյանքի կիզակետման մեթոդաբանորեն հակառակ կողմը շրջադարձն է դեպի որակական մեթոդները: Այդպիսի մեթոդներից է դիտարկումը և վերջինիս շարունակումը լուսանկարչական (և նմանատիպ այլ) տեխնիկաների օգնությամբ: Ժա-

մանակակից հասարակության մեջ շատ բան կարելի է տեսնել ուղղակի շուրջը նայելով՝ մինչ այս հիշատակված գերմանացի սոցիոլոգի խորհրդի համաձայն: Սակայն դրանք բոլորն ի հայտ են գալիս հենց առօրյա կյանքի մակարդակում: Անկարելի է ուղղակիորեն դիտարկել մակրո օբյեկտները, սոցիալական դասակարգերը, պետությունը, ինստիտուտները կամ ազգերը ճիշտ այնպես, ինչպես և միկրո-իմաստները, շարժառիթները, անձի կատարած գործողության դրդապատճառները և մտադրությունները: Բայց և այնպես, առօրյա կյանքի մակարդակում առկա է «տեսանելիի մի ամբողջ լուսապատկեր»: Մի ծայրում տարերային, մշակութապես գունավորված ժեստերն են, մարմնի լեզուն, դիմախաղը, ինչպես նաև մեզ շրջապատող միջավայրի քաղաքակրթական և տեխնիկական «դիզայնը» (որը ժամանակակից քաղաքներում պաշեցնում է իր գունազեղությամբ ու բազմազանությամբ): Մյուս ծայրում որոշակի իմաստներ և ուղերձներ փոխանցելու նպատակով ստեղծված տարատեսակ պատկերներն են (հայտարարություններ, գովազդներ, թերթերում և ամսագրերում տեղադրված լուսանկարներ): Եվ վերջապես, այս երկու ծայրերի միջև մարդկանց գիտակցված ոճավորումներն են, «ինքնաներկայացումները»՝ միտված մեր և մեր կարգավիճակի մասին տեղեկատվություն փոխանցելուն, այն է՝ մեր գործողությունները, խոսելաձևը, վարքի ոճը, «ապրելու ունակությունը», նորաձևությունը և ապրանքանիշերը, որոնք ուղղված են ուրիշների վրա տպավորություն գործելուն (օրինակ՝ «Ռոլեքս» ժամացույցը, որը ոմանք կրում են, այն տները, որոնցում նրանք ապրում են, ավտոմեքենաները. ճիշտ այնպես, ինչպես ասվում է «Մերսեդես»-ի գովազդում՝ «հայտարարել պետք չէ, բայց դուք կարո՞ղ եք»):

Առայժմ սահմանափակվելով միայն լուսանկարման քննարկմամբ՝ ներկայացնեմ առօրեականության սոցիոլոգիայում վերջինիս կիրառման երկու եղանակները, այն է՝ սոցիալական իրավիճակի լուսանկարում և ստացված պատկերի մեկնաբանում: Իրականում լուսանկարումը ունի կիրառման բազում հնարավորություններ: Սկսեմ նրանից, որ այն բարձրացնում է մեր դյուրազգայունությունը սոցիալական իրավիճակների նկատմամբ, քանզի փոխարինում է մեր «պասիվ» դիտարկու-

մը (երբ անհամար քաոսային տպավորություններ են հայտնվում մեր աչքի առաջ) «նպատակաուղղված» դիտարկմամբ (երբ մենք գիտակցաբար ընտրում և դասակարգում ենք պատկերները՝ըստ դրանց կարևորության): Այստեղ կարևոր են լուսանկարչական սարքի հետևյալ երեք տեխնիկական բնութագրիչները.

1. որևէ բանի վրա կենտրոնացումը, ինչը նշանակում է դիտարկվող իրավիճակում ամենակարևորի ընտրություն,
2. տեսանելիի շրջանակի հաստատումը, ինչը նշանակում է իրավիճակի այն բնութագրերի ընդգծում/հեռացում, որոնք պակաս կարևոր կամ մարգինալ են թվում,
3. տեսադաշտի խորության սահմանումը, ինչը ենթադրում է առջևի և հետին պլանների սահմանազատում:

Լուսանկարը «սառեցնում է» շարժուն, արագ փոփոխվող և բարդ սոցիալական իրավիճակները՝ մեզ հնարավորություն ընձեռելով մանրազնին կերպով վերլուծելու դրանք: Այս կերպ այն մեծացնում է նաև սոցիոլոգիական նկարագրության և ախտորոշման որակը: Այն օգնում է նաև բացատրել, դուրս բերել միտումները, կանոնավորությունները կամ նույնիսկ զուցե «սոցիալական օրենքները»: Վերջինս վերաբերում է ոչ թե մեկ, այլ մի շարք լուսանկարներին: Մենք, կրկնելով միևնույն սոցիալական իրավիճակի լուսանկարահանումը ժամանակի տարբեր պահերին, հնարավորություն ենք ստանում վեր հանել ժամանակային միտումները, իսկ մարդկանց վարքի միևնույն տիպի լուսանկարները (ընտանեկան կյանք, կրոնական կյանք, աշխատանք, հանգիստ և այլն) տարբեր մշակույթների համեմատական հետազոտություններում կարող են օգնել բացահայտելու ընդհանուրը, «միջմշակութային ընդհանուրը», մշակութապես տրված «էքզոտիկ» յուրահատկությունները:

Մեր օրերում մեզ հասանելի են բավական հարուստ, տարատեսակ (և հազվադեպ հետազոտվող) այնպիսի պատկերագրական աղբյուրներ, ինչպիսիք են սոցիալական որևէ իրավիճակի վերաբերյալ առկա բազմաթիվ լուսանկարները ԶԼՄ-ներում, ֆոտոլրագրությունում, սիրողական ընտանեկան լուսանկարների մասնավոր հավաքածուները, թանգարանային նմուշները, գովազդները, հայտարարու-

թյունները և այլն: Դրանք կարելի է հետազոտել հանուն սոցիոլոգիական մեկնաբանության, որը հնարավորություն է ընձեռում բացահայտել չորս տիպի թաքնված կառուցվածքներ․ այն է՝

1. փոխազդեցությունների կառուցվածքները (միջանձնային շփումների, ամբոխների, խմբերի ուրվագծերի և այլնի բնութագրական նմուշների, մոդելների, «երկրաչափության» դիտարկման ճանապարհով),
2. նորմատիվային կառուցվածքները (ստանդարտ, կրկնվող վարքաձևերի դիտարկման միջոցով),
3. իդեալական կառուցվածքները (հավատքի և գաղափարախոսության դրսևորումների դիտարկումները, օրինակ՝ պաստառների վրա քաղաքական ցույցերի, ընդհարումների և ընդվզումների ժամանակ), և վերջապես՝
4. պատահական կառուցվածքները կամ անհավասարության բաշխումները (հարստության և աղքատության, իշխանության և անիշխանության, համբավի և մարգինալացման, նշանավոր մարդկանց և անհաջողակների կարգավիճակի առավել տեսանելի նշանները):

**«Երրորդ սոցիոլոգիայի» աղբյուրները**

Որպես կանոն՝ հասարակական գիտություններում տեղի ունեցող հարացուցային շրջադարձերը արձագանք են երկու տիպի հանգամանքների: Դրանց մի մասն ունեն ներունակ բնույթ և կապված են ինտելեկտուալ միտումների հետ՝ որևէ բանից հոգնածություն, հիասթափություն կամ պարզապես ձանձրույթ, և ածանցվում են նախկին գաղափարներից: Գործոնների մնացյալ մասը կապված է հենց հասարակական կյանքի բնույթի փոփոխությունների հետ, որոնք անհնար է բացատրել մինչ այդ գոյություն ունեցող մոտեցումներով: Սոցիոլոգիայում դեպի առօրյա կյանքի որակական հետազոտություններ տանող ուղին հարթվել է XX դարի երկրորդ կեսերին ի հայտ եկած երեք տեսական միտումների շնորհիվ: Առաջին միտումը ծնունդ է առել այն վերացական սոցիոլոգիական համակարգերի քննադատությունից,

որոնք մարմնավորված էին Թալքոթ Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմում[60]: Քննադատությունների այդ ալիքը ընթանում էր երեք ուղղություններով՝

– սուբյեկտիվիստական շրջադարձ դեպի սոցիալական գործողությունների հիմքում ընկած մտադրությունների, շարժառիթների, դատողությունների հետազոտում,
– ագենտային շրջադարձ դեպի սոցիալական դերակատարների և նրանց կողմից սոցիալական կառուցվածքների, ինստիտուտների, կազմակերպությունների և այլնի ստեղծման և կառուցման եղանակների հետազոտում,
– մշակութային շրջադարձ դեպի մարդկանց վարքը կարգավորող իմաստների, կանոնների, արժեքների, նորմերի, տպավորությունների, «սրտի ունեցած սովորույթների» աննկատ, անտեսանելի հյուսվածքների որոնմանը:

Սոցիոլոգիական որոնման այս ուղղությունները զարգացնող ամենանշանակալի հեղինակներն են Ի. Գոֆմանը՝ իր դրամատուրգիական տեսությամբ[61], Հ. Գարֆինկելը և իր էթնոմեթոդաբանությունը[62], Ա. Շյուցը, Պ. Բերգերը և Տ. Լուկմանը՝ իրենց ֆենոմենոլոգիական մոտեցմամբ[63]:

Երկրորդ խոշորագույն միտումը նախկին սոցիոլոգիայի հետմոդեռնիստական քննադատությունն էր, հատկապես «հետմոդեռնիզմի» առավել ողջամիտ և իրատեսական ծրագիրը, որը ոչ միայն դեն չի նետում հասարակական գիտության հնարավորությունները, այլ նաև առաջարկում է սոցիալական փոփոխությունների ժամանակակից փուլի

---

[60] Gouldner, A. (1971) The Coming Crisis of Western Sociology. London: Heinemann.

[61] Goffman, E. (1963) Behavior in Public Places. New York: Free Press; Goffman, E. (1967) Interaction Ritual. Garden City: Doubleday; Goffman, E. (1979) Relations in Public. New York: Harper.

[62] Garfinkel, H. (1967) Studies in Ethnomethodology. Englewood Cliffs: Prentice Hall; Garfinkel, H. (2002) Ethnomethodology's Program. Ed by A. Rawls, Boston: Rowman and Littlefield.

[63] Berger, P., Luckman, T. (1967) The Social Construction of Reality. New York: Doubleday Anchor; Schutz, A. (1970) On Phenomenology and Social Relations. Ed by H. Wagner, Chicago: University of Chicago Press.

(որն անվանում են ուշ արդիականություն, բարձր արդիականություն, ռեֆլեքսիվ կամ հոսուն արդիականություն) խորաթափանց դիտարկումներ: Հետմոդեռնիզմի այսօրինակ բազմազանությունը[64] ներկայացնող հեղինակները պնդում էին, որ նախկին սոցիոլոգիան անտեսում էր մեր հասարակությանը բնորոշ այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են ֆրագմենտացիան, պատահականությունը, քաոսը, ռիսկը, վաղանցիկ, ինքնաբերական կամ նյարդային դրսևորումները, մարմնական, զգացմունքային և ինքնառեֆլեքսիվ բնութագրիչները, գլոբալացումը և այլն:

Երրորդ ազդեցիկ միտումը ֆեմինիստական սոցիալական քննադատությունն է, որը սկսեց փնտրել առօրյա կյանքում, մասնավորապես՝ ընտանիքի ներսում և աշխատավայրում կանանց ճնշման, շահագործման և նրանց հանդեպ դրսևորվող խտրականության պատճառները:

Զարգացման այս ինտելեկտուալ ներքին գործընթացները սոցիոլոգիայում արտացոլվեցին դարավերջին հասարակության մեջ ի հայտ եկած նոր երևույթներում: Մարդիկ սկսեցին առավել հստակորեն գիտակցել իրենց արագ փոփոխվող և մի շարք առումներով զարմանալիորեն նոր «կենսաշխարհը»: Սոցիոլոգիան, որը վերջին հաշվով շատ չի տարբերվում հայեցակարգված և էմպիրիկորեն հիմնավորված առողջ բանականությունից, չի կարող չարտացոլել այս նոր կամ խորացված գիտակցումը: Սոցիալական կյանքի նոր որակները կարելի է ամփոփել այնպիսի խորագրերի ներքո, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական փոփոխությունները (հատկապես հաղորդակցություններում և փոխադրումներում), գլոբալացումը, մեգա-ուրբանացումը, սպառողականությունը, աշխատանքի ճկուն ձևերը, ինտիմ ոլորտի վերափոխումը, ռիսկերի աճը և հազեցվածությունը վիզուալությունից: Սոցիալական փոփոխությունների լավ ցուցանիշ կարող են համարվել մարդկանց՝

[64] Baudrillard, J. (1994) Simulacra and Simulations. Ann Arbor: University of Michigan Press; Bauman, Z. (1978) Hermeneutics and Social Sciences. London: Hutchinson; Bauman, Z. (1991) Modernity and Ambivalence. Cambridge: Cambridge University Press; Beck, U. (1992) Risk Society. London: Sage; Giddens, A. (1990) The Consequences of Modernity. Cambridge; Polity Press.

սեփական աշխարհի մեկնաբանման և նկարագրման լեզվում, բառարաններում տեղի ունեցող փոփոխությունները: Հատկանշական է այն հանգամանքը, որ առօրյա կյանքում նոր եզրույթները առավել վաղ և արագ են հայտնվում, քան սոցիոլոգների հայեցակարգային սխեմաներում: Այլ կերպ ասած, բոլորովին էլ պատահական չէ այն, որ մենք այժմ խոսում ենք «շոփինգի», այլ ոչ թե գնումների մասին, սիրով զբաղվելու, այլ ոչ թե սիրո, բոդի-բիլդինգի և ոչ թե ֆիզիկական դաստիարակության, «չաթերի» և ոչ թե զրույցների մասին, բլոգինգի, այլ ոչ թե հիշողություններ գրելու, իմեյլինգի ու ոչ նամակագրության մասին և այլն:

**«Երրորդ սոցիոլոգիայի» գոյաբանական նախադրյալները**

Սոցիոլոգիայում առօրյա կյանքի որակական հետազոտությունների վրա կենտրոնացման նոր միտումը դեռևս զարգացման սկզբնական փուլում է: Տեսանելի տեսական կողմնորոշում դառնալու համար վերջինիս անհրաժեշտ են հայեցակարգային գործիքներ: Ցանկանում եմ ներկայացնել և հակիրճ նկարագրել հասկացությունների տարբերակմանը վերաբերող որոշ մտքեր: «Երրորդ սոցիոլոգիայի» կենտրոնական հասկացությունը՝ օժտված գոյաբանական հարուստ հնարավորություններով, սոցիալական գոյությունն է: Իմ խորհրդով (Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ լինելու ժամանակ) սա դարձավ Դուրբանում 2006թ. տեղի ունեցած համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսի հիմնական թեման: Մասնակիցների արձագանքները, բանավեճերի սրությունը ցույց տվեցին, որ ես շոշափել եմ կարևոր ինչ-որ բան:

«Սոցիալական գոյություն» հասկացությունը հիմնված է արիստոտելյան այն հիմնարար դատողության վրա, ըստ որի՝ մարդիկ՝ սոցիալական կենդանիները, ավելի ստույգ, նրանց գոյությունը միշտ՝ ի ծնե մինչ մահ, կոլեկտիվ է: Ո՛չ անհատը, ո՛չ հասարակությունները առանձին կամ ինքնավար միավորներ չեն: Թե՛ առաջինները և թե՛ երկրորդները համընդհանուր անհատական-սոցիալական իրականության կամ անհատական-սոցիետալ դաշտի, կամ սոցիալական ցանցի, կամ,

ինչպես գրում էր լեհ բանաստեղծ Զբիգնև Հերբերթը, միջմարդկային տարածության զուտ վերլուծական դիտանկյուններ են:

Սոցիալական հյուսվածքի անօտարելի երկակիությունը արդեն իսկ գիտակցվել է XX դարի սոցիոլոգիայի դասականներից մեկի՝ Նորբերտ Էլիասի կողմից[65]: Մարդկային բանաձևի առաջին մասը տեղավորվում է «անհատը հասարակության մեջ» խորագրի ներքո: Չկա առանձին, ինքնուրույն, ինքնավար անհատ: Մեզանից յուրաքանչյուրը որոշակի կոլեկտիվի անդամ է և որոշակի անհատական ինքնության (ես-նա) կրող, որն էլ արդյունք է առավել լայն խմբում զբաղեցրած անհատի դիրքի (մենք): Ես այն եմ, ում հետ հանդիպում եմ, խոսում եմ, ընկերություն եմ անում, ամուսնանում եմ, դասախոսություններ եմ կարդում, և այս բոլոր հանդիպումների հետքերն իմ կենսագրության մեջ են: Ինքնությանս յուրօրինակությունը պայմանավորված է յուրատեսակ՝ անցյալ, ներկա և ապագայում հնարավոր փոխհարաբերությունների չկրկնվող ցանցով, իսկ ավելի հստակ՝ այդպիսի կապերի առկա հնարավորություններով, որոնք ստեղծվում են իմ մասնագիտական դիրքով, դասակարգային պատկանելիությամբ, գենդերով, կարգավիճակով և այլն: Անհատը «մարդկային ցանցի» յուրօրինակ «հանգույց է», սոցիալական կապերի յուրահատուկ համադրության կրողը: Մարդկային հավասարման երկրորդ մասը հանգում է «անհատների հասարակություն» խորագրին: Հավանաբար սա ինտուիտիվորեն ավելի ակնհայտ է: Չկա անհատներից դուրս կամ նրանց վերևում գտնվող հասարակություն: Իր դրսևորումներից յուրաքանչյուրում, որոնք հաճախ մենք հակիրճ բնորոշում ենք որպես պետություն, ազգ, ինստիտուտ, կազմակերպություն և այլն, հասարակությունը ոչ այլ ինչ է, քան դերակատարների և նրանց գործողությունների որոշակի համադրություն: Բոլոր քիչ թե շատ վերացական կամ ավելի կայուն սոցիալական հատկանիշները հետևանք են (հաճախ ոչ կանխամտածված և նույնիսկ չնկատվող) այն արժանիքների, որոնք ունեն դրա անդամները, և այն ամենի, ինչ նրանք իրականում անում են տվյալ պայ-

[65] Elias, N. (1991) The Society of Individuals. Oxford: Blackwell.

մաններում ու այն սահմանափակումների շրջանակներում, որոնք ժառանգել են նախկին սերունդներից:

Այսինքն՝ «սոցիալական գոյություն» հասկացությունը հղում է ուղերձ, այն է՝ սոցիալական աշխարհը ոչ այլ ինչ է, քան միջանձնային, միջմարդկային տիրույթ, տարածություն, որը լի է հանդիպումներով, փոխհարաբերություններով, փոխազդեցություններով, սոցիալական հանգույցներով, «լիգատուրաներով»[66] կամ ուրիշների հետ տարատեսակ կապերով, որոնք ծածկում են ողջ սպեկտրը՝ սիրուց մինչև ատելություն, պատերազմից խաղաղություն, համագործակցությունից մրցակցություն, համերաշխությունից կոնֆլիկտ: Եվ մարդկանց այս ներկառուցվածությունը այլ մարդկանց հետ հարաբերություններում տեղի է ունենում ոչ թե ինչ-որ տեղ, այլ մեր իսկ առօրյա փորձում: Դա մարդկային գոյության կենտրոնական սոցիալական դիտանկյունն է: Հասարակության մնացած բոլոր դիտանկյունները՝ մակրոկառուցվածքները, մակրոգործընթացները, մշակույթը, քաղաքակրթությունները, տեխնիկական համակարգերը, կազմակերպությունները, ինստիտուտները, փաստացիորեն գոյություն ունեն հենց մեր սոցիալական գոյության մեջ: Հասարակությունը ընկած է մեր ներսում, այլ ոչ՝ մեզանից դուրս:

Ահա հենց դրա համար էլ առօրյա կյանքը հանդես է գալիս որպես սոցիալական գոյության առավելագույն դրսևորման ասպարեզ, ինչպես նաև՝ առավել բարեբեր «ռազմավարական հետազոտական հարթակ»[67] սոցիոլոգիայում: Եվ առօրյա կյանքի անասելի հարուստ, վիզուալ, արտաքինից դիտարկելի դեմքը դառնում է առօրյա կյանքի վերլուծության և մեկնաբանման ռազմավարական ռեսուրս, որից մենք բացահայտում ենք սոցիալական գոյության զաղտնիքները:

Այսպիսին է կապը սոցիալական գոյության սոցիոլոգիայի և վիզուալ սոցիոլոգիայի միջև:

---

[66] Dahrendorf, R. (1979) Life Chances. Chicago: University of Chicago Press.

[67] Archer, M. (1988) Being Human: The Problem of Agency. Cambridge: Cambridge University Press.

**Առօրյա կյանքի իմաստը և անատոմիան**

«Առօրյա կյանք» հասկացությունը, իր մեջ պարունակելով խաբուսիկ տարրեր, ինքնին ակներև հասկացություն չէ: Եվ ուրեմն, նախ և առաջ մեզ անհրաժեշտ է պարզել, թե ինչ չէ «առօրյա կյանքը» և հետո նոր շարժվել վերջինիս դրական գծերի որոշակիացման ուղղությամբ:

1. Առօրյա կյանքը սահմանափակված չէ նրանով, ինչը Է. Դյուրկհեյմը կոչել էր «աշխարհիկ» (profane)՝ հակադրելով այն «սրբազանին» (sacred): Այն իր մեջ է ներառում նաև դյուրկհեյմյան «սրբազան»-ը, այսինքն՝ խորհրդանշական, սիմվոլիկ իմաստով օժտված դեպքերը: Մոգական, կրոնական, ծիսական, սիմվոլիկ, հանդիսավոր, արարողակարգային փորձառությունները ներառված են նրանում երկրային առօրեական փորձառությունների հետ միասին: Նախաճաշը աշխատավայրում, պատարագը եկեղեցում, գնումները սուպերմարկետում, մասնակցությունը հայրենասիրական ցույցին, հեռուստացույցի դիտումը երեկոյան, Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը լայն իմաստով առօրյա կյանքի դրվագներ են:
2. Առօրյա կյանքը սահմանափակված չէ շարքային մարդու կյանքով որոշակի «դասակարգային» իմաստով (անգլերեն լեզվում սա անվանում են հասարակ ժողովրդի կյանք), այլ իր մեջ է ներառում նաև հեղինակությունների, հայտնիների, վերնախավերի կյանքը (մի ամերիկյան հաղորդման մեջ այն բնորոշում են իբրև «գեղեցիկ, հարուստ և հայտնի մարդկանց կանք»): Իհարկե հայտնի մարդկանց կյանքն ավելի գունազեղ է և հրապուրիչ, իսկ դրա դիտարկումն ահռելի եկամուտներ է բերում գովազդային ընկերություններին, լրագրողներին և թերթային բամբասանքներին: Սակայն «առօրյա կյանք» հասկացությունը անցնում է բոլոր դասակարգային սահմաններով:
3. Առօրյա կյանքը հանրային կյանքին հակադրվող մասնավոր կյանքի հոմանիշը չէ: Այն ընդգրկում է երկու բնագավառներն էլ, անգամ եթե մասնակից դերակատարները տարբերվում են: Բայց քաղաքական գործիչների, լրագրողների, ակտիվ քաղա-

քացիների և նույնիսկ մարդկանց մեծամասնության համար ընտրությունների ժամանակ հանրային ոլորտում իրականացվող գործողությունները նույնքան առօրեական են, որքան ցանկացած մասնավոր իրադարձություն: Քաղաքական ելույթ արտասանելը կամ լսելը, քաղաքական բողոքին մասնակցելը, քվեարկելը այդ առումով չեն տարբերվում ընկերների հետ կինոթատրոն գնալուց կամ ընտանեկան հանդիպմանը մասնակցելուց:

Որո՞նք են այս դեպքում առօրյա կյանքը սահմանող և որոշակիացնող դրական գծերը:

1. Ինչպես արդեն նշվել է, առօրյա կյանքը սոցիալական գոյության դիտարկելի դրսևորումների ամբողջությունը չէ, ուստի այն ներառում է նաև ուրիշների հետ փոխհարաբերությունները: Այն միշտ տեղի է ունենում հասարակական համատեքստում: Անգամ երբ մենակ ենք, «ուրիշները» միշտ ներկա են մեր մտքերում, հիշողություններում և երազանքներում. նրանք, ում մենք սիրում ենք կամ ատում, ովքեր մեր բարեկամներն են կամ թշնամիները, որոնց հետ մենք աշխատում ենք միասին կամ մրցում, ում ներկայությունը մեզ ուրախացնում է կամ վանում, ում խորհուրդը մենք գնահատում ենք կամ մերժում, ում առջև մենք հպարտանում ենք կամ ամաչում: Մենք մշտապես նրանց հետ վարում ենք, ինչպես Մ.Արչերն է գրել, «ներքին զրույց»[68], ինչն էլ դառնում է մեր գործողությունների շարժառիթներն ու մտադրությունները պայմանավորող կարևորագույն գործոն:
2. Առօրյա կյանքի իրադարձությունները կրկնվում են, դրանք յուրօրինակ չեն: Երբեմն դրանք անգամ ցիկլային են, ռիթմիկ, սովորական: Դրանք տեղի են ունենում օրեցօր, ամսեամիս կամ որոշակի պահերին տարվա ընթացքում: Նման իրադարձությունների օրինակ են Սուրբ Զատիկը և Սուրբ Ծնունդը, Ամա-

[68] Archer, M. (1988) Being Human: The Problem of Agency. Cambridge: Cambridge University Press.

նորը, ձմռանը սահնակ քշելը, աշխատանքային օրերին դրսում ճաշելը և այլն:
3. Բավական հաճախ առօրյա կյանքը ենթադրում է ծիսական, խաղարկվող, ոճավորված որոշակի ձևեր, որոնք բնորոշ են առօրյա գործողություններին (թերթերի և ամսագրերի ընթերցումը նախաճաշին, առավոտյան մարմնամարզությունը, ճաշը աշխատանքային օրվա կեսին, մեկ բաժակ ըմպելը երեկոյան և այլն): Վերոնշյալը հատկապես տեսանելի է դառնում հանդիսավոր, սրբազան դեպքերում (օրինակ՝ կրոնական արարողակարգերը, դասերի մեկնարկը համալսարանում, դատավարությունը, դիվանագիտական ընդունելությունը):
4. Առօրյա կյանքը ծանրաբեռնում է մեր մարմինը՝ մեր կենսաբանական տվյալները: Մեր մարմինը անփոխարինելի օգնության աղբյուր է ուրիշների հետ փոխհարաբերություններում: Անգամ երբ խոսում ենք որոշակի հեռավորության վրա գտնվելով, միևնույն է շարունակում է կարևոր մնալ մեր ձայնի հնչերանգը, ինչի համար էլ մենք ստեղծում ենք որոշակի տեխնոլոգիաներ զրուցակցի երեսը գոնե էկրանին տեսնելու համար: Մենք զգում ենք, որ համացանցում անծանոթների հետ անմարմնական և անանուն փոխհարաբերությունները (երբ մենք անգամ չենք կարող պատկերացնել նրանց արտաքին տեսքը) զուրկ են որոշակի կարևոր տարրից, անլիարժեք են, թերի և անբավարար:
5. Սովորաբար առօրյա կյանքը տեղայնացված է տարածության մեջ ու տեղի է ունենում որոշակի վայրում՝ տանը, փողոցում, եկեղեցում, մարզադաշտում և այլուր: Հարթակի բնույթը զգալիորեն սահմանում է սոցիալական իրադարձությունների էությունը, ոճը, ձևը, բովանդակությունը: Առօրյա կյանքի դրվագներն ու իրադարձությունները ունեն որոշակի ժամանակային տևողություն. դրանք քիչ կամ շատ են տևում որոշակի ժամանակահատվածում: Համեմատենք մարդկանց հանդիպումը փողոցում, ճաշը ռեստորանում, գիտական սեմինարը, թռիչքն ինքնաթիռով կամ արձակուրդային ծովագնացությունը: Ինչպես

պնդում էր Ռ. Մերտոնը, վերջիններս կարող են ունենալ նոր, տարբերվող «կառուցվածքայնորեն սպասվող տարածականություն»[69]. ֆուտբոլային խաղը, սիմֆոնիկ համերգը, խորհրդարանի նիստը, առաջին անգամ որևէ մեկի տուն հյուր գնալը և այլն: Իրական կամ ակնկալվող տևողությունը լրջորեն ազդում է սոցիալական իրադարձության բնույթի վրա:

6. Առօրյա կյանքը հաճախ ընթանում է առանց ռեֆլեքսիայի և ինքնավերլուծության՝ սովորույթներին և սովորական կարգերին հետևելով, ընդ որում, այս հանգամանքը ոչ միշտ է գիտակցվում դերակատարների կողմից: Ահա թե ինչու հեռախոսազրույցի ժամանակ հնչող «ի՞նչ ես անում» հարցին ի պատասխան լսվում է «ոչինչ» արտահայտությունը, ինչը անշուշտ ճիշտ չէ, քանզի անգործությամբ միայն մեռյալներն են զբաղված: Քանի դեռ ողջ ենք, մենք մշտապես գործում ենք:

Հետազոտության յուրաքանչյուր բնագավառ ստեղծում է երևույթի չափերի և վերլուծական դիտանկյունների հետ աշխատելու հասկացությունների շարք: Սոցիալական գոյության սոցիոլոգիան դեռևս չի մշակել նման հասկացությունների ստանդարտ շրջանակ: Ուստի ստորև կներկայացնեմ որոշ նկատառումներ, որոնելի հասկացությունների նախնական շարք, որը մեզ հնարավորություն է ընձեռում առավել վերլուծականորեն և համակարգված կերպով մոտենալու առօրյա կյանքին:

1. Յուրաքանչյուր սոցիալական իրադարձության մեջ առկա են որոշակի քանակությամբ միմյանց հետ ինչ-որ կերպ փոխկապված մասնակիցներ: Մասնակիցները մարմնավորում են որոշակի դերեր: Նրանց միջև փոխհարաբերությունները կարող են լինել ուղիղ, դեմ առ դեմ՝ ներառելով թե՛ տարածական և թե՛ ժամանակային համաներկայությունը (զրույց ճաշի սեղանի շուրջ), սակայն փոխհարաբերությունները կարող են կրել միջնորդավորված բնույթ (հեռախոսազրույց), ունենալ ժամանա-

[69] Merton, R. (1996) Socially Expected Durations // P. Sztompka ed. On Social Structure and Science, Chicago: University of Chicago Press, p. 162 – 172.

կային «ընդմիջումներ» (նամակագրություն) կամ էլ բացարձակ անանուն լինել (շփում համացանցում): Չափազանց կարևոր է մասնակիցների քանակը: Դեռևս Գեորգ Զիմելն էր առաջինը ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ զուտ թվաքանակը կարող է որոշել և սահմանել իրադարձությունների, դրանցում տեղի ունեցող փոխանակումների և փոխհարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Նա ցույց տվեց, թե ինչպես է մասնակիցների թվի ավելացումը փոխում ցանցի որակը[70]:

2. Յուրաքանչյուր սոցիալական իրադարձություն տեղի է ունենում անմիջական միջավայրում: Մասնավորապես կարևոր է համարվում հանդիսատեսի՝ այդ իրադարձությանը չմասնակցող վկաների ներկայությունը կամ բացակայությունը: Այս կերպ մասնավոր իրադարձությունները տարբերվում են հանրային իրադարձություններից: Ամենից ուժեղ ազդեցություն են թողնում հատկապես նրանք, ովքեր ակտիվորեն կենտրոնացած են իրադարձության վրա, սակայն չհետաքրքրված և չկենտրոնացած ուրիշների ուղղակի ներկայությունն անգամ կարող է կարևոր լինել: Օրինակ՝ հասարակական վայրերում անհայտ և չեզոք ուրիշների ներկայությամբ մենք իջեցնում ենք մեր ձայնը և անձնական տարածության նշաձող սահմանում: Մեր վարքագիծը փոխվում է, սակայն, երբ ցանկանում ենք հետաքրքրել այդ ուրիշներին և ներգրավել նրանց որևէ իրադարձության մեջ՝ լինի դա քաղաքական հանրահավաք, ցույց, թե բնակարանի հրդեհի հանգցման աշխատանքներ: Գուստավ Լե Բոնը և «ամբոխային հոգեբանությամբ» զբաղվող այլ ներկայացուցիչներ կարող են շատ բան պատմել զանգվածային համաներկայության՝ մեր վարքի վրա ունեցած հսկայական, տարատեսակ ազդեցությունների մասին: Յուրաքանչյուր սոցիալական իրադարձություն տեղի է ունենում որոշակի լայն սոցիալական համա-

[70] Simmel, G. (1971) On Individuality and Social Forms. (Ed. D. Levine), Chicago: University of Chicago Press.

տեքստում՝ ընտանիքի, աշխատանքի, սպառման, հանգստի, պարապության, կրթության, քաղաքականության և այլն, որոնցում մարդիկ շարունակական շրջապտույտի մեջ են գտնվում, որոնց մեջ մտնում և որոնցից դուրս են գալիս օրվա, շաբաթվա կամ ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում: Յուրաքանչյուր համատեքստում մենք մեզ այլ կերպ ենք պահում, այլ կերպ ենք դիտվում, այլ կերպ ենք խոսում, հագնվում, ներշնչում ենք բոլորովին տարբեր «մթնոլորտ»: Համատեքստի յուրաքանչյուր փոփոխություն դրսևորվում է որոշակի ծեսերով՝ համակարգչի միացումը հոսանքին աշխատավայրում, հողաթափեր հագնելը և մի կում գինի ըմպելը տուն վերադառնալուն պես, սպորտային համազգեստ հագնելը թենիսահարթակում, գիշերազգեստով գտնվելը հիվանդանոցում և այլն: Մուտքը դեպի համատեքստ և վերջինից դուրս գալը մենք բնորոշում ենք սովորական ողջույններով: Օրվա ընթացքում քանիցս ասում ենք «բարև», «բարև Ձեզ», «ողջույն», «հաջողություն», «ցտեսություն», «կհանդիպենք», «մնաք բարով», «մինչ հանդիպում» և այլն: Երբեմն, ճիշտ նույն կերպ, մենք օգտագործում ենք ժեստերը, օրինակ՝ կրեդիտային քարտը կամ դրամապանակը հուշում են մատուցողին, որ մենք գնում ենք, դասախոսը հավաքում է գրառումները՝ արձանագրելով դասախոսության ավարտը, եկեղեցում հանգցվում են մոմերը, ինչը խոսում է պատարագի ավարտի մասին:

3. Սոցիալական իրադարձությունները տեղի են ունենում այս կամ այն համատեքստի համար տիպիկ վայրերում ու հարթակներում, ուր իրադարձությունները, որպես կանոն, ունեն նման բովանդակություն՝ տուն, գրադարան, եկեղեցի, հիվանդանոց, մարզադաշտ, դպրոց, զարեջրատուն, ակումբ և այլն: Նման վայրերում տեղի ունեցող իրադարձությունները միմյանց նման են, քանզի մարդիկ այստեղ սովորաբար միանման բաներ են անում, օրինակ՝ գրադարանում ընթերցում են, հիվանդանոցում՝ պառկում, փողոցում՝ նայում ցուցափեղկերին, մարզա-

դաշտում՝ խաղում, եկեղեցում՝ աղոթում, ռեստորանում՝ ուտում և այլն:

4. Սոցիալական իրադարձությունները բարդ կազմածներ են: Տարբեր համատեքստերում և տեղայնացումներում հանդիպում են տիպիկ սոցիալական դեպքեր՝ իրադարձությունների բարդ կազմածներ, որոնցում առանձին մարդիկ միասին կատարում են տարբեր դերեր՝ համակարգելով իրենց գործողությունները (օրինակ՝ հարսանիքները, թաղումները, երեկույթները, վիրահատությունները, դպրոցական դասերը, ֆուտբոլային խաղերը, կրոնական արարողակարգերը): Սոցիալական իրադարձությունները կարող են նաև ինքնակարգավորվել ժամանակային կազմածների և իրադարձությունների տիպային հաջորդականությունների: Կարելի է խոսել նաև որոշակի ընթացակարգերի մասին, որոնց կատարումը կարող է վերջիններս կազմող իրադարձություններին իմաստ հաղորդել: Օրինակ՝ աշխատանքի ընդունման գործընթացը, դատական գործընթացները, ընտրությունները, համալսարանական քննությունները և այլն: Եթե նման ընթացակարգերը ժամանակատար են, բաղկացած են մի քանի փուլից, պլանավորվում են նախապես և ունեն որոշակի նպատակ, խոսքը նախագծերի մասին է: Նախագծերի օրինակ են համալսարան ավարտելը, առաջնության համար մարզվելը, մասնագիտական կարիերա կառուցելը, գիրք գրելը, բնակարան գնելու համար գումար կուտակելը, երեխաներին մեծացնելը և այլն: Մարդիկ իրենց նախագծերում տարբերվում են կտրուկ կամ ինքնաբուխ կատարմամբ, հետևողականությամբ կամ ճկունությամբ: Երբեմն սոցիալական իրադարձությունները, սոցիալական դեպքերն ու ընթացակարգերը հենվում են սիմվոլիկ ժեստերի և շատ ճշգրիտ սցենարների վրա: Ավելի կարևոր է, թե ինչպես է արվում, այլ ոչ թե ինչ է արվում կամ ինչ նպատակով: Այս դեպքում կարելի է խոսել սոցիալական ծեսերի մասին: Շատ ծեսեր կան քաղաքականության մեջ և ռազմական կյանքում՝ շքերթներ, հանրահավաքներ, հրապարակային ելույթներ,

պահակախմբերի փոփոխություն և այլն: Ծեսերից շատերը դառնում են այն, ինչ կոչվում է «կենցաղային ազգայնականություն»՝ դրոշի բարձրացում, օրհներգի կատարում, ազգային տոներ: Բազմաթիվ են ծեսերը նաև հանգստի և սպորտի ոլորտներում, օրինակ՝ փառատոները և դիմակահանդեսները, զանգվածային շքերթները, ռոք համերգներին ձեռքերը թափահարելը և այլն:

Սոցիալական իրադարձություններում առավել կարևոր է սիմվոլիկ բովանդակությունը, որի հիմնական իմաստը առավել լայն հանրույթին սիմվոլների օգնությամբ որոշակի ուղերձ փոխանցելն է: Վերջերս սա սկսել են անվանել կատարողական (դերակատարման) գործողություն: Այստեղ սոցիալական իրադարձությունները դրամատուրգիական, քվազի-թատերական ներկայացման տեսք են ստանում: Սա վերը թվարկվածների շարքում ամենաբարդ կատեգորիան է: Վերջինիս վերլուծությունն իրականացրել է Ջեֆրի Ալեքսանդերը[71]՝ հետևելով Ի. Գոֆմանին: Սոցիալական կատարումը ենթադրում է վերջինիս հիմքում ընկած առասպելի նման մշակութային սցենար կամ շրջանակային պայմաններ, բանավոր ավանդույթ կամ գրավոր տեքստ: Դրանք էլ, իրենց հերթին, իրագործվում են սոցիալական դերակատարների կողմից, որոնք ձգտում են բովանդակությունը փոխանցել հանդիսատեսին: Նրանք հանդիսատեսներին փորձում են համոզել իրենց ճշմարտացիության և ազնվության մեջ: Միևնույն ժամանակ, հանդիսատեսը փորձում է հավատալ դերակատարներին և նույնականացնում է իրեն վերջիններիս հետ: Բեմական գործողությունները տեղի են ունենում որոշակի վայրում, որտեղ դերակատարները օգտագործում են ուղերձի սրությունը ընդգծելու նպատակով ստեղծված նշանային հնարքներ և ատրիբուտներ: «Բեմում սցենարը սկսում է «քայլել և խոսել»,- գրում է Ալեքսանդերը: Հենց այսպես է, որ գոյություն ունի մշակույթը ի տարբերություն իր գոյության պոտենցիալ ձևից՝ տեքստային:

---

[71] Alexander, J., Giesen, B., Mast, J. (2006) Social Performance. Cambridge: Cambridge University Press; Goffman, E. (1997) The Goffman Reader. Lemert C, Branaman A. (eds), Oxford: Blackwell.

Ինչպես բավականին վաղուց նկատել է մշակութային մարդաբաննե-րից մեկը, պրիմիտիվ կրոնը «չեն մտածում, այլ երգում են և պարում»[72]:

**Նոր հեռանկարի հեռանկարները**

Առօրեականության սոցիոլոգիան նոր գիտաճյուղ կամ ուղղություն չէ սոցիոլոգիայում: Ավելի շուտ, այն նոր հեռանկար է, դիտանկյուն, որը հնարավորություն է ընձեռում տեսնել սոցիոլոգիայում առկա բոլոր խնդիրները նոր լույսի ներքո[73]: Այն չի փոխարինում առաջին և երկրորդ սոցիոլոգիաները: Անհեթեթ է ասել, թե բոլոր սոցիոլոգները այժմ պետք է ձեռնամուխ լինեն առօրյա կյանքի հետազոտմանը: Հումանիտար գիտությունների պատմությունը չի անցել մերժումների և փոխարինումների մոդելով: Նոր հարացույցները երբևէ չեն արժեզրկել հները, այլ ավելանալով նրանց՝ հարստացրել են մեր պատկերացումը: Առօրեականության սոցիոլոգիան առաջարկում է իրական, ակնհայտ, առօրյա կյանքում տեղի ունեցող սոցիալական իրադարձությունների վերլուծությամբ համալրել բարդ վերացարկումների, սոցիալական համակարգերի, կառուցվածքների, սոցիալական գործողությունների վերլուծությունը: Այն պնդում է, որ նման վերացարկումները իրականացվում են առօրյա կյանքի դրվագներում: Եվ ուրեմն, առավել լավ է դրանք ուսումնասիրել, դիտարկել, արձանագրել հենց այդտեղ: Հենց այստեղ ենք գտնում անհավասարությունը, դասակարգերը, իշխանությունը, գլոբալացումը, ինքնությունը, արդիականացումը, քաղաքակրթական գործընթացները և սոցիոլոգիայի համար կարևոր այլ հիմնախնդիրները: Եվ նման տիպի հետազոտություններն առավել գրավիչ են դառնում՝ հաշվի առնելով, որ այս մակարդակում ծավալվող սոցիալական կյանքի մեծ մասը տեսանելի ու դիտարկելի է, ուստի բաց է արդյունավետ վիզուալ տեխնիկական միջոցների կիրառման համար, հատկապես՝ լուսանկարչության, որը ես առանձնակի շեշտում եմ: Առօրեականության սոցիոլոգիան տալիս է սոցիալական գոյության

[72] Marrett, R. (1914) The Threshold of Religion, London: Methuen.

[73] Bennett, T., Watson, D. (2002) Understanding Everyday Life. Oxford: Blackwell; Maffesoli, M. (1989) The Sociology of Everyday Life // Current Sociology, 1989, V. 37, No. 1.

անճանաչելի զաղտնիքների հետազոտման հեռանկարային մոտեցում: Այն առաջարկում է ընդհանուր տեսական օրակարգ, որից ես ընտրում եմ չորս խնդիրներ.

1. հասարակության գործառման մեջ տարատեսակ սոցիալական կապերի և համայնքների տարբեր ձևերի ունեցած դերը,
2. մարդու ստեղծագործ էության՝ խոչընդոտների հաղթահարման, նորանոր վարկածների առաջ քաշման և սոցիալական կայացման գործում սեփական նպաստը ունենալու անվերջանալի ձգտումները,
3. մարդկանց գործողությունների ինքնաբերականությունը, հուզականությունը և անկայուն բնույթը անգամ արտաքին հզոր սահմանափակումներից ունեցած իրենց ներունակ ազատությամբ,
4. մարդու ձգտումը իր և այլոց գործողություններն իմաստավորելու, սոցիալական կյանքում և սոցիալական կազմակերպման մեջ իմաստ փնտրելու:

Համարվում է, որ սոցիալական գոյության սոցիոլոգիան՝ օգտագործելով առօրյա կյանքը որպես հետազոտական լաբորատորիա, կարող է մոտեցնել մեզ հավերժ թվացող սոցիոլոգիական հանելուկների լուծմանը:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ «ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ». ԻՄԱՍՏԻ ՎԵՐՋԱՎՈՐ ՈԼՈՐՏՆԵՐ

## ԱԼՖՐԵԴ ՇՅՈՒՑ

# ԲԱԶՄԱԿԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ[74]

Իր «Հոգեբանության սկզբունքները» գրքում Ուիլյամ Ջեյմսը վերլուծում է մեզ ներհատուկ իրականության զգացումը[75]: «Իրականությունը ոչ այլ ինչ է, քան մեր զգացմունքային և գործունյա կյանքի հետ կապը»,- ասում է նա: Ամեն տեսակ իրականություն իր ծագմամբ սուբյեկտիվ է. իրական է այն ամենը, ինչն արթնացնում և գրավում է մեր հետաքրքրությունը: Երբ մենք այս կամ այն երևույթ իրական ենք կոչում, դա նշանակում է, որ վերջինս ինչ-որ կերպ առնչվում է մեզ: «Կարճ ասած, «իրական» բառը ոչ այլ ինչ է, քան շրջանակավորում»[76]: Մեզ բնորոշ է ընկալելի ամենի իրականության անհապաղ հաստատման տարրական ազդակը, քանի դեռ դրան ոչինչ չի խոչընդոտում: Սակայն կան իրականության մի քանի (հավանաբար անվերջ շատ) հաջորդականություններ, որոնցից յուրաքանչյուրն օժտված է գոյության՝ իրեն ներհատուկ, առանձնակի ոճով: Ջեյմսը կոչում է դրանք «ենթաաշխարհներ» և իբրև օրինակներ նշում զգայությունների կամ ֆիզիկական առարկաների աշխարհը (որպես գերագույն իրականություն), գիտության աշխարհը, իդեալական հարաբերությունների աշխարհը, «ցեղի կուռքերի» աշխարհը, դիցաբանական և կրոնական բոլոր հնարավոր գերբնական աշխարհները, անձնական կարծիքների տարատեսակ աշխարհները, բացարձակ տարօրինակության և խելագարության աշխարհները[77]: Առօրեական բանականությունը բոլոր այդ ենթաաշխահները ընկալում է՝ որպես միմյանից քիչ թե շատ առանձ-

---

[74] Schutz A. (1945) On Multiple Realities // Philosophy and Phenomenological Research, vol. V, № 4, pp. 533–576. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի և Գայանե Միքայելյանի:*

[75] James, W. (1890) Principles of Psychology. Henry Holt and Company, Vol. II, Ch. XXI, pp. 283–322.

[76] Ibid, p. 320.

[77] Ibid, p. 291.

նացված և դրանցից որևէ մեկի հետ գործ ունենալիս ժամանակավորապես մոռանում է վերջինիս՝ մնացյալի հետ ունեցած կապի մասին: Ցանկացած օբյեկտ, որի մասին մտածում ենք, վերջին հաշվով, հարաբերակցության մեջ է վերոհիշյալ ենթաաշխարհներից որևէ մեկի հետ: «Յուրաքանչյուր աշխարհ, քանի դեռ դրա վրա ուշադրություն է դարձվում, իրական է յուրովի. միայն ուշադրության հետ է, որ իրականությունն անհետանում է»[78]: Սույն դատողություններում Ջեյմսի հանճարն անդրադարձ է կատարել փիլիսոփայական կարևորագույն խնդիրներից մեկին: Նպատակաուղղված կերպով սահմանափակվելով ներկայացված խնդրի միայն հոգեբանական դիտանկյան հետազոտմամբ՝ Ջեյմսը ձեռնպահ է մնացել խնդրի բազմաքանակ հետևանքների դիտարկումից: Հաջորդիվ ներկայացվելիք մտորումներում (թեև մի փոքր կցկտուր) փորձ է արվում ուրվագծելու ընդհանուր մոտեցում որոշ այդ դիտանկյունների վերաբերյալ: Շեշտը կդրվի հատկապես երկու իրականությունների՝ առօրյա կյանքի աշխարհի և տեսական հայեցողության աշխարհի միջև կապի դուրս բերման վրա:

## Առօրյա կյանքի աշխարհի իրականությունը

### *Առօրյա կյանքի բնական դիրքորոշումը և վերջինիս պրագմատիկ շարժառիթը*

Սկսենք առօրյա կյանքի աշխարհի վերլուծությունից, որը գործառող և այլոց հետ միասին այդ աշխարհի վրա ներազդող հասուն, սթափ մարդը բնական դիրքորոշման մեջ վերապրում է որպես իրականություն:

«Առօրյա կյանքի աշխարհ» ասելիս հետայսու նկատի կունենանք միջսուբյեկտային աշխարհը, որը, նախքան մեր լույս աշխարհ գալը գոյություն ունենալով, մեր նախնիների կողմից վերապրվել և մեկնաբանվել է՝ իբրև կազմակերպված աշխարհ: Այժմ այն հանձնված է մեր մեկնաբանմանն ու վերապրմանը: Այս աշխարհի ցանկացած մեկնաբանություն հիմնվում է վերջինիս նախկին վերապրումների (ինչպես

[78] Ibid, p. 293.

մեր, այնպես էլ մեր ծնողներից, ուսուցիչներից մեզ փոխանցված) պահոցի վրա, որը հանդես է գալիս «կանխիկ գիտելիքների» տեսքով և գործառում՝ որպես հարաբերակցման սխեմա:

Այս առկա վերապրումների պահոցի մեջ մտնում են մեր գիտելիքները, որոնցում աշխարհը ներկայանում է որպես համապատասխան որակներ ունեցող և հստակ ուրվագծված օբյեկտների աշխարհ, այն օբյեկտների, որոնց միջև մենք շարժվում ենք, որոնք մեզ դիմադրում են, և որոնց վրա մենք կարող ենք ազդել: Բնական դիրքորոշման համար այս աշխարհը երբևէ չի եղել գունային բծերի, ցրված աղմուկների, ջերմության և սառնության աղբյուրների պարզ կուտակում: Մեր ապրումների կառուցակցման փիլիսոփայական և հոգեբանական վերլուծությունը կարող է հետադարձ հայացք գցելով, ռետրոսպեկտիվ կերպով նկարագրել ու ներկայացնել, թե ինչպե՞ս են այս աշխարհի տարրերը ազդում մեր ապրումների վրա, և թե ինչպես ենք մենք պասիվ, անորոշ կերպով ու անճշտություններով ընկալում դրանք, ու վերջապես, թե ինչպես է մեր միտքը ակտիվ գիտակցական ըմբռնման շնորհիվ ընկալման դաշտից մասնատում և մեկուսացնում այս կամ այն գծերը՝ յուրացնելով դրանք որպես սահմանազատված տարրեր, որոնք առանձնանում են քիչ թե շատ անորոշ ֆոնի կամ հորիզոնի վրա: Բնական դիրքորոշմանը այս խնդիրները հայտնի չեն: Վերջինիս համար ի սկզբանե այս աշխարհը ոչ թե առանձին մարդու մասնավոր աշխարհն է, այլ բոլորիս համար ընդհանուր միջսուբյեկտային աշխարհը, որի նկատմամբ մենք ցուցաբերում ենք ոչ թե տեսական, այլ բարձրագույն աստիճանի գործնական հետաքրքրություն: Առօրյա կյանքի աշխարհը մեր գործողությունների ու փոխազդեցությունների և՛ բեմն է, և՛ օբյեկտը: Մենք պետք է տիրենք այն և փոխենք՝ իրագործելու համար այն նպատակները, որոնք դրանում հետապնդում ենք: Այսպիսով, մենք ոչ միայն աշխատում և գործում ենք այդ աշխարհում, այլև ներազդում ենք վերջինիս վրա: Մեր մարմնական շարժումները՝ կինեստետիկ, լոկոմոտիվային, օպերատիվ, ներկառուցվում են այս աշխարհին՝ ձևափոխելով իր օբյեկտները և փոխադարձ կապերը: Իրենց հերթին, այդ օբյեկտները դիմադրում են մեր գործողություններին. մենք կամ պետք

է հաղթահարենք այդ դիմադրությունը, կամ խոնարհաբար ընդունենք այն: Այս առումով, ճիշտ կլինի ասել, որ առօրյա կյանքի աշխարհի նկատմամբ մեր բնական դիրքորոշումը կառավարվում է պրագմատիկ շարժառիթով:

*Արտաքին աշխարհում մարդկային կյանքի ինքնաբուխ դրսևորումները և դրա որոշ ձևերը*

Ի՞նչ է պետք հասկանալ քիչ առաջ օգտագործված «գործողություն» եզրույթի տակ: Ինչպե՞ս է բնական դիրքորոշման մեջ գտնվող մարդը վերապրում այս աշխարհում տեղի ունեցող և աշխարհի վրա ազդող սեփական «գործողությունները»: Ակնհայտ է, որ «գործողությունները» մարդու ինքնաբուխ կյանքի դրսևորումներ են: Այնուամենայնիվ, ոչ բոլոր նման դրսևորումներն է անձը վերապրում՝ որպես գործողություններ և ոչ բոլոր գործողություններն են նրա կողմից վերապրվում՝ որպես արտաքին աշխարհում փոփոխություններ առաջացնող: Ցավոք, ժամանակակից փիլիսոփայական մտքում հստակ տարբերակում չի առաջարկվում այս փորձառությունների տարբեր ձևերի միջև, ուստի բացակայում է նաև դրանց բնորոշման ընդունված տերմինաբանությունը:

Անօգուտ կլիներ խոսքային ակտերում առկա ինքնաբուխ դրսևորումները նկարագրելիս օգնություն խնդրել ժամանակակից վարքաբանությունից և դիմել վերջինիս կողմից առաջարկվող տարբերակումներին, այն է՝ խոսքային ակտերի ինքնաբուխ դրսևորումների նկարագրություններում բացահայտ (overt) վարքի և թաքնված (covert) վարքի առանձնացումը, թեև, երբեմն, բերված տիպերի շարքը համալրվում է նաև, այսպես կոչված, կիսաբաց (subovert) վարքի տեսակով: Վարքաբանական մոտեցման արմատական սխալականության քննադատությունը, ինչպես նաև նշված տիպականացման ներքին հակասությունների մատնանշումն ու քննումը դուրս են մեր նպատակների շրջանակից: Մեր առջև դրված խնդիրների համար լիովին բավական է ցույց տալ, որ տարբերայնության վարքաբանական մեկնաբանումը ի զորու չէ տալ մեզ հետաքրքրող հարցի, այն է՝ «ինչպե՞ս է բանա-

կանությունը վերապրում տարերայնության տարբեր ձևերը, որոնց սկզբնաղբյուրը հենց իր մեջ է», պատասխանը: <> Կարճ ասած, մեզ հետաքրքրում է այն սուբյեկտիվ իմաստը, որը մարդը հաղորդում է իր տարերային կյանքի այս կամ այն վերապրումներին: Այն, ինչը օբյեկտիվորեն միևնույն վարքը կարող է թվալ դիտարկողի աչքում, գործող սուբյեկտի համար կարող է օժտված լինել տարբեր իմաստներով, կամ էլ առհասարակ իմաստազուրկ լինել:

Իմաստը կամ նշանակությունը, ինչպես արդեն ավելի վաղ ցույց ենք տվել[79], մեր գիտակցության հոսքում առաջացող վերապրումների ներքին որակը չէ, այլ արդյունք է անցյալի փորձի մեկնաբանման, որը տեսանելի է Հիմա-ի դիրքից ռեֆլեքսիվ դիրքորոշման մեջ: Քանի դեռ ես ապրում եմ համապատասխան օբյեկտներին ուղղված իմ ակտերում, այդ ակտերը որևէ նշանակություն չունեն: Դրանք նշանակալի են դառնում, երբ ես ըմբռնում եմ դրանք՝ որպես հստակ ուրվագծված անցյալի վերապրումներ, ուստի միայն ռետրոսպեկտիվ եղանակով: Հետևաբար, սուբյեկտիվորեն նշանակալի են միայն այն վերապրումներն ու փորձառությունները, որոնք կարող են հիշվել՝ անկախ իրենց արդիականությունից, և որոնց հիմնարարության մասին կարող են հարցեր դրվել:

Սակայն, եթե ընդունում ենք իմաստի այս բնութագիրը, ապա հարց է առաջանում, թե կա՞ն ընդհանրապես իմ տարերային կյանքի այնպիսի դրսևորումներ, որոնք սուբյեկտիվորեն նշանակալի չեն: Մենք ենթադրում ենք, որ այս հարցին պետք է տալ դրական պատասխան: Գոյություն ունեն պարզ ֆիզիոլոգիական ռեֆլեքսներ, օրինակ՝ ծնկային ռեֆլեքսը, աչքերի թարթումը և այլն, կան նաև պասիվ արձագանքներ, որոնք առաջանում են Լեյբնիցի կողմից մատնանշված՝ անորոշ և ոչ հստակ մանր ընկալումների հետևանքով, այս ամենից զատ, կան իմ քայլվածքը, դեմքի արտահայտությունը, սեփական տարերայնության արտաքին դրսևորումները, որոնք իրենց արտահայտումն են ստանում գրաֆոլոգիական մեկնաբանության ենթարկվող իմ ձեռագրի առանձնահատկություններում և այլն: Տարերայնության այդ բոլոր

[79] Schutz, A. (1932) Der sinnhafte Aufbau der sozialen Welt. Wien, pp. 29–43, 72–93.

ձևերը ակամայից վերապրվում են՝ ըստ վերջիններիս դրսևորման հերթագայության՝ առանց հիշողության մեջ անգամ չնչին հետք թողնելու. իբրև վերապրումներ՝ դրանք ընկալվում են, բայց չեն գիտակցվում: Այդ ինքնաբուխ դրսևորումները անկայուն են և չեն տարբերվում շրջակա վերապրումներից, ինչպես նաև չեն կարող վերականգնվել ու առանձնացվել հիշողության մեջ: Դրանք դասվում են *էապես արդիական վերապրումների* շարքին, այն է՝ գոյություն ունեն վերապրումների արդիականության հովանու ներքո և չեն կարող որսալի լինել ռեֆլեքսիվ դիրքորոշմամբ[80]:

Մեր ինքնաբուխ կյանքից բխող սուբյեկտիվորեն նշանակալի վերապրումները հետայսու կանվանենք վարք (conduct): (Մենք ձեռնպահ կմնանք behavior եզրույթի կիրառումից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս ներառում է նաև տարերայնության սուբյեկտիվորեն աննշանակալի դրսևորումները, օրինակ՝ ռեֆլեքսները): «Վարք» եզրույթը, այն իմաստով, որով գործածում ենք այստեղ, բնորոշում է տարերայնության վերապրումների սուբյեկտիվորեն նշանակալի բոլոր ձևերը՝ լինեն դրանք ներքին կյանքի վերապրումները, թե արտաքին աշխարհին ներկառուցված փորձառությունները: Եթե մեզ հնարավորություն ընձեռվեր օգտվել օբյեկտիվ հասկացություններից՝ սուբյեկտիվ վերապրումների նկարագրման համար (իսկ նախորդող մեկնաբանությունները հուշում են, որ այստեղ կասկածի որևէ վտանգ լինել չի կարող), ապա հնարավոր կլիներ ասել, որ գործառումը կարող է լինել արտաքին և թաքնված: Առաջինը կարող ենք անվանել պարզապես կատարում (mere doing), իսկ երկրորդը՝ պարզապես մտածողություն (mere thinking): Այնուամենայնիվ, «վարք» եզրույթը՝ այստեղ ընդունված իմաստով, չի ենթադրում որևէ հարաբերակցում մտադրու-

---

80 «Ռեֆլեքսիվ դիրքորոշման» վերաբերյալ տե՛ս՝ Marvin, F. (1943) The Foundation of Phenomenology. Cambridge, p. 523, 378 և վերջինիս հաջորդող էջերում: Տե՛ս նաև Dorion, C. (1940) An Approach to Phenomenology// Farber M. (ed.). Philosophical Essays in Memory of Edmund Husserl, Cambridge, p. 8 և դրան հաջորդող էջերում: Հուսերլի աշխատություններում «էականորեն արդիական վերապրումներ» հասկացությունը գտնելն անկարելի է: Բանն այն է, որ վերջինիս պնդմամբ, յուրաքանչյուր գործողություն սկզբունքորեն որսալի է ռեֆլեքսիայում:

թյունների հետ: Ներքին կամ արտաքին կյանքի ավտոմատացված ակտիվությունների բոլոր տիպերը՝ սովորական, ավանդական, հուզական, կարող են վերաբերել այն դասին, որը Լեյբնիցն անվանել է «էմպիրիկ վարքի դաս»:

Վարքը, որը կանխավ ծրագրավորված է, հետայսու կանվանենք *գործողություն* (action)՝ անկախ այն բանից՝ արտաքին է այն, թե թաքնված:<> Եթե ծրագիրն իրականացնելու մտադրությունը բացակայում է, ապա ծրագրավորված թաքնված գործողությունը մնում է պատրանք, օրինակ՝ երազանքը, իսկ եթե այն առկա է, ապա մենք կարող ենք խոսել նպատակաուղղված գործողության կամ կատարման (performance) մասին: Կատարում հանդիսացող թաքնված գործողության օրինակ է գիտական որևէ խնդիր մտքում լուծելու փորձը:

Ինչ վերաբերում է, այսպես կոչված, արտաքին գործողություններին, այն է՝ մարմնական շարժումների օգնությամբ արտաքին աշխարհին ներկառուցվող գործողություններին, ապա այս դեպքում մտադրության առկայության և բացակայության հիմքով տարբերակումների իրականացումը պարտադիր չեն: Ցանկացած արտաքին գործողություն (վերը տրված սահմանմամբ) կատարում է: Պարզապես մտածողության (թաքնված) կատարումները մարմնական շարժումներ պահանջող (բացահայտ) կատարումներից սահմանազատելու համար մենք վերջիններս կանվանենք աշխատանք (*working*):

Ստացվում է, որ աշխատանքն արտաքին աշխարհում իրականացվող այնպիսի գործողություն է, որը ծրագրավորված է և բնութագրվում է մարմնական շարժումների միջոցով դրա իրականացման մտադրությամբ: Տարերայնության՝ վերը ներկայացված բոլոր ձևերի շարքում աշխատանքը խաղում է ամենակարևոր դերը առօրեականության աշխարհի իրականության կառուցման գործում: Ինչպես շուտով ցույց կտրվի, իր աշխատանքում և աշխատանքի միջոցով «արթուն Ես»-ը ինտեգրում է իր ներկան, անցյալը և ապագան յուրահատուկ ժամանակային չափման մեջ: Իր աշխատանքային ակտերում այն ինքնաիրականացվում է՝ որպես միասնական ամբողջ, աշխատանքային ակտերի միջոցով այն հաղորդակցվում է ուրիշների հետ և շնորհիվ

աշխատանքային ակտերի՝ այն կազմակերպում է առօրյա կյանքի տարաբնույթ տարածական հեռանկարները: Սակայն, նախքան այս խնդիրներին անդրադառնալը, մենք պետք է բացատրենք, թե ինչ ի նկատի ունենք «արթուն Ես» ասելով:

### *Գիտակցության լարվածությունները և կյանքի հանդեպ ուշադրությունը*

Բերգսոնի փիլիսոփայության կարևորագույն դրույթներից մեկն այն է, որ մեր գիտակից կյանքը արտահայտում է անսահման քանակությամբ տարբեր հատույթներ՝ սկսած գործողությունների հատույթից ընդհուպ անուրջների հատույթը: Այս հատույթներից յուրաքանչյուրը բնութագրվում է գիտակցության համապատասխան լարվածությամբ՝ գործողության հատույթը ցուցադրում է գիտակցության բարձրագույն լարվածությունը, իսկ անուրջների հատույթը՝ ամենացածրը: Բերգսոնի խոսքերով մեր գիտակցության լարվածության այս տարբեր աստիճանները կյանքի նկատմամբ մեր փոփոխվող հետաքրքրությունների գործառույթներն են. եթե գործողությունը իրականության և վերջինիս պահանջների համաչափ ընկալման հանդեպ բարձրագույն ուշադրության կենտրոնում է, ապա անուրջներում այսօրինակ հետաքրքրությունը բացակայում է: Attention à la vie՝ կյանքի նկատմամբ ուշադրությունը մեր գիտակցական կյանքը կարգավորող սկզբունքն է, որը գծում է աշխարհի՝ մեզ համապատասխանող ոլորտները:

«Սթափություն» եզրույթով մենք կցանկանայինք մատնանշել գիտակցության այն հատույթը, որն ունի առավելագույն լարվածություն և բխում է կյանքի և կյանքի պահանջների հանդեպ ամբողջական ուշադրության դիրքորոշումից: Միայն կատարող (և հատկապես՝ աշխատող) Ես-ն է լիակատար ուշադրություն դրսևորում կյանքի հանդեպ և հետևաբար արթուն է: Այն ապրում է իր ակտերում և իր ողջ ուշադրությունն ուղղում է բացառապես իր ծրագրի իրականացմանը: Սա ոչ թե պասիվ, այլ ակտիվ ուշադրություն է. պասիվ ուշադրությունը հակադրվում է լիակատար սթափությանը: Պասիվ ուշադրության մեջ ես վերապրում եմ, օրինակ, աղոտ, մանր ընկալումներ, որոնք ինչպես

նշել ենք, էապես արդիական վերապրումներ են և ոչ տարբերայնության նշանակալի դրսևորումներ: Նշանակալի տարբերայնությունը, հետևելով Լեյբնիցին, կարելի է սահմանել որպես այլ, անպայմանորեն ուրիշ ընկալումներին գալու փորձ: Իր ամենաստորին ձևում այն միավորում է մի շարք պերցեպցիաներ՝ փոխակերպելով դրանք ապերցեպցիայի. իր բարձրագույն ձևում այն արտահայտում է գտնում աշխատանքի կատարման մեջ, որը ներկառուցվում է արտաքին աշխարհին և ձևափոխում է այն:

Սթափության կատեգորիան ապահովում է մեր ճանաչողական կյանքի պրագմատիկ մեկնաբանության ելակետը: Լիակատար սթափության պայմաններում աշխատող Ես-ը առանձնացնում է աշխարհի այն հատվածը, որն իր համար պրագմատիկ առումով համապատասխան է. այս համապատասխանությունները սահմանում են մեր մտածողության հոսքերի ձևը և բովանդակությունը՝ ձևը, քանի որ կարգավորում են մեր հիշողության լարվածությունը և դրանով իսկ վերհիշվող անցյալ և կանխատեսվող ապագա վերապրումների սանդղակը և բովանդակությունը, քանի որ բոլոր այս վերապրումները անցնում են նախապես կազմված ծրագրի և վերջինիս իրականացման գործողությունների ազդեցության ներքո տեղի ունեցող ուշադրության ձևափոխումների միջով: Սա անմիջականորեն դուրս է բերում մեզ այն ժամանակային չափման վերլուծությանը, որում աշխատող Ես-ը վերապրում է իր սեփական ակտերը:

### *«Ego agens»-ների «ժամանակային հեռանկարները» և դրանց միաժամանակացումը*

Սկսենք ինչպես արտաքին, այնպես էլ թաքնված գործողությունների միջև զուգահեռների անցկացմամբ, մասնավորապես՝ գործողության՝ որպես տևող կամ ծավալվող գործընթացի (actio) և որպես արդեն իսկ կատարված գործողության (actum) միջև: Ապրելով սեփական գործողությունների ծավալման գործընթացում՝ ես կենտրոնացած եմ որոշակի իրավիճակների վրա, որոնք պետք է որ առաջացած լինեն իմ գործողությունների հետևանքով: Այս դեպքում, սակայն, կատարվող

գործողությանս ծավալման գործընթացի վերապրումները դուրս են իմ տեսադաշտից: Դրանք տեսադաշտումս ներգրավելու համար ես պետք է հետ վերադառնամ գործողություններիս գործընթացին՝ ռեֆլեքսիվ դիրքորոշման մեջ: Ինչպես Դյուին է ասել․ «Ես պետք է կանգ առնեմ և մտածեմ»: Սակայն, եթե ես ընդունեմ այդ ռեֆլեքսիվ դիրքորոշումը, այն ինչ կկարողանամ որսալ, ամենևին էլ չի լինի գործողության ծավալման գործընթացը: Միակ բանը, որը կկարողանամ որսալ այդ դեպքում, կլինի արդեն իսկ կատարված և, հետևապես, ավարտված գործողությունս, կամ, եթե գործողությանս գործընթացը դեռևս չի ավարտվել, ապա հետադարձ հայացք գցելով՝ կարող եմ բռնել նաև դրա նախորդող փուլերը (գործողությանս իրականացումը ներկա ժամանակում): Երբ ես ապրում էի իմ ծավալվող գործողության մեջ, այն կենդանի ներկայիս բաղադրատարրն էր: Այնինչ, այժմ այդ ներկան վերածվել է անցյալի, իսկ ծավալվող գործողությանս կենդանի փորձառությունն իր տեղը զիջել է վերջինիս մասին առկա հիշողություններին:<>

Ներկայացված դատողությունները, սակայն, բոլորովին չեն նշանակում, թե իմաստալի ու նշանակալի են միայն կատարված և ավարտված և ոչ թե կենդանի ժամանակում ծավալվող գործողությունները: Հարկավոր է ի նկատի ունենալ, որ գործողությունները միշտ հենված են նախապես կազմված նախագծի վրա և հարաբերակցումը նախորգող ծրագրին իմաստ է հաղորդում թե՛ գործողությանը, թե՛ դրա արդյունքին:

Ինչպիսի՞ ժամանակային կառուցվածք ունի նախագծված գործողությունը: Ինչպես Դյուին է նշում[81], ես գործողություններս նախագծելիս մտայնորեն փորձում եմ դրանք իմ երևակայության մեջ: Դա նշանակում է, որ ես նախապես կանխագիտում եմ իմ ապագա գործողության վերջնարդյունքը: Երևակայորեն ես տեսնում եմ այդ կանխագիտված գործողությունը՝ իբրև ակտ, որը ապագայում իմ կողմից *արդեն* կատարված *կլինի*: Ես գործողությունս նախագծելիս նայում եմ դրան ապագա ապառնի ժամանակում, մտածում եմ դրա մասին modo future

[81] Dewey, J. (1922) Human Nature and Conduct. New York, Part III, Section III: «The Nature of Deliberation».

exacti-ում: Այլ հարց է, որ ունեցածս երևակայական ակնկալիքները մասամբ դատարկ են. գործողության կատարումից և ավարտից հետո վերջիններս կարող են ինչպես իրականացվել, այնպես էլ չիրականացվել: Մինչդեռ գործողությունը անցյալ և ներկա ժամանակում չի դրսևորում այսօրինակ դատարկ կանխազիտումներ: Այն, ինչը ծրագրում դատարկ էր կամ լցվել է բովանդակությամբ, կամ չի լցվել: Չի մնում չհաստատված, անորոշ որևէ բան: Իհարկե, ես կարող եմ հիշել ակտի մեջ ներառված բացահայտ կանխազիտումները և անգամ գործողության կատարման ծավալվող ընթացքում ունեցած նախնական ակնկալիքներս: Բայց հիմա՝ ռետրոսպեկցիայում, ես հիշում եմ դրանք իմ *նախորդ* կանխազիտումների (ճիշտ կամ սխալ) պրիզմայով: Հետևաբար, միայն ավարտված գործողությունը կարող է պսակվել հաջողությամբ կամ ձախողվել, և ոչ՝ ընթացող գործողությունը:

Վերոնշյալը լիովին վերաբերում է գործողությունների բոլոր ձևերին: Այժմ անհրաժեշտ է անդրադարձ կատարել աշխատանքի (մարմնական կատարմանը արտաքին աշխարհում) հատուկ կառուցվածքին: Բերգսոնի և Հուսերլի հետազոտություններում ընդգծվել է մարմնական շարժումների ունեցած կարևորությունը արտաքին աշխարհի և դրա ժամանակային հեռանկարի կառուցման գործում: Մեր մարմնի շարժումները մենք վերապրում ենք երկու տարբեր հատույթներում՝ արտաքին և ներքին: Քանի դեռ մարմնի շարժումները արտաքին աշխարհում կատարվող շարժումներ են, մենք նայում ենք դրանց՝ իբրև տարածության և տարածական ժամանակում իրականացվող իրադարձությունների, որոնք չափվում են անցած ճանապարհի կատեգորիաներով: Բայց հաշվի առնելով, որ դրանք նաև վերապրվում են ներսից՝ իբրև տեղի ունեցող փոփոխություններ կամ մեր ինքնաբուխ կյանքի դրսևորումներ, և պատկանում են մեր գիտակցության հոսքին, վերջիններս առնչվում են մեր ներքին ժամանակին կամ durée-ին: Այն ամենն, ինչ տեղի է ունենում արտաքին աշխարհում, պատկանում է նույն ժամանակային չափմանը, որում տեղի են ունենում իրադարձությունները անկենդան բնության մեջ: Դրանք կարող են գրանցվել պատշաճ սարքավորումներով և չափվել ժամանակաչափերով: Տարա-

ծականացված, համասեռ այս ժամանակն, ըստ էության, օբյեկտիվ կամ տիեզերական ժամանակի համընդհանուր ձևն է: Մյուս կողմից, հենց ներքին ժամանակում են մեր ապրումները կապվում անցյալ հիշողությունների և ապագա կանխազգումների հետ: Մարմնի զանազան շարժումների օգնությամբ մենք անցում ենք կատարում մեզ ներհատուկ ներքին ժամանակից դեպի տիեզերական ժամանակը: Մենք վերապրում ենք աշխատանքային գործողությունը՝ որպես իրադարձությունների շարունակականություն, որն ընթանում է միաժամանակ ներքին և արտաքին ժամանակներում՝ միավորելով այս երկու հարթությունները մեկ հոսքում, որն այսուհետ կանվանենք *կենդանի ներկա*: <>

### *Առօրյա կյանքի աշխարհի սոցիալական կառուցվածքը*

Ինչպես արդեն նշեցինք, առօրյա կյանքի աշխարհը, որում մենք լույս աշխարհ ենք գալիս, ի բնե միջսուբյեկտային աշխարհ է: Մի կողմից՝ դա նշանակում է, որ վերջինս իմ մասնավոր աշխարհը չէ, այլ բոլորինն է, իսկ մյուս կողմից՝ այնտեղ կան մարդիկ, որոնց հետ ես կապված եմ բազմաթիվ սոցիալական հարաբերություններով: Աշխատանքովս ես ազդում եմ ոչ միայն անշունչ իրերի, այլև մարդկանց վրա. նրանք ինձ դրդում են գործել, իսկ ես դրդում եմ նրանց արձագանքել գործողություններիս: <> Օրինակ, երբ որևէ մեկին ինչ-որ հարց եմ տալիս, անում եմ դա նրա պատասխանը ստանալու մտադրությամբ, իսկ նրա պատասխանը տվածս հարցով խթանված գործողություն է: Այս օրինակը մեկն է «սոցիալական գործողությունների» բազում տիպերից: Սա այն տիպն է, որում իմ գործողության «նրա համար, որ շարժառիթը» («in-order-to motive») դառնում է նրա պատասխան գործողության «որովհետև շարժառիթը» («because motive»):

Սոցիալական գործողությունները ներառում են հաղորդակցություններ, իսկ ցանկացած հաղորդակցություն անխուսափելիորեն հիմնվում է աշխատանքի ակտերի վրա: Այլ մարդկանց հետ շփվելու համար ես պետք է արտաքին գործողություններ կատարեմ արտաքին աշխարհում, որոնք, ենթադրաբար, այլոց կողմից կմեկնաբանվեն՝

իբրև նշաններ այն բանի, ինչը նրանց ցանկանում եմ հաղորդել: Ժեստերը, խոսքը, գրառումները և այլ անվերջ քանակությամբ երևույթներ հենված են մարմնական շարժումների վրա: Մինչ այժմ հաղորդակցության վարքաբանական մեկնաբանումը արդարացի է եղել: Սակայն այն դառնում է թյուր այն պահից ի վեր, երբ հաղորդակցության միջոցը, մասնավորապես՝ աշխատանքային ակտը, նույնականացվում է փոխանցվող իմաստի հետ:

Դիտարկենք հաղորդակցման մեխանիզմը մեկնաբանողի տեսանկյունից: Ես կարող եմ տվյալ մեկնաբանությունս հայտնաբերել ուրիշի հաղորդակցական ակտերի պատրաստի վերջնարդյունքում, կամ կարող եմ ուշադրությամբ հետևել ժամանակի մեջ ծավալվող միաժամանակյա հաղորդակցական գործընթացների շարունակականությանը: Առաջին դեպքը տեղ է գտնում այն ժամանակ, երբ, օրինակ, ես պետք է մեկնաբանեմ որևէ մեկի կողմից տեղադրված ճանապարհային երթևեկության նշանը կամ որևէ մեկի կողմից արտադրված գործիքը: Փոխհարաբերությունների երկրորդ տիպն առկա է այն ժամանակ, երբ ես ունկնդրում եմ զրուցակցիս խոսքը: Վերջինս քայլ առ քայլ, բառը բառին, նախադասությունը նախադասությանը, պարբերությունը պարբերության վրա շարելով՝ կառուցում է այն միտքը, որը ցանկանում է ինձ հաղորդել: Մինչ նա դա անում է, այդ ընթացքում իմ մեկնաբանողական գործողությունները միևնույն ռիթմով հետևում են նրա հաղորդակցական գործողություններին: Երկուսս էլ՝ ես և ուրիշը, վերապրում ենք հաղորդակցական գործընթացների ծավալումը կենդանի ներկայում: Զրուցակիցս քայլ առ քայլ իր միտքը հնչեցնելիս ոչ միայն վերապրում է այն, ինչ արտաբերում է, այլև իր գիտակցության հոսքում գտնվող կանխագիտման բարդ մեխանիզմը կապում է իր խոսքի այս կամ այն տարրը նախորդողի և հաջորդողի հետ՝ ձևավորելով այն միասնական միտքը, որը նա ցանկանում է փոխանցել: Այս բոլոր փորձառությունները պատկանում են նրա ներքին ժամանակին: Մյուս կողմից, նրա խոսքային իրադարձությունները ծավալվում են արտաքին աշխարհի տարածքայնացված ժամանակում: Կարճ ասած, հա-

ղորդակցվողը վերապրում է հաղորդակցության ծավալման ընթացքը՝ որպես աշխատանք իր կենդանի ներկայում:

Ես՝ որպես ունկնդիր, ևս վերապրում եմ իմ մեկնաբանական գործողությունները՝ իբրև իմ կենդանի ներկայում կատարվող, թեև այդ մեկնաբանումը ոչ թե աշխատանք է, այլ՝ կատարում (վերը սահմանված իմաստով): <>

Մինչ այժմ կենդանի ներկայում տեղի ունեցող փոխհարաբերությունների մեր վերլուծությունը սահմանափակված էր միայն ժամանակային հարթության մեջ վերջիններիս դիտարկմամբ: Այժմ կանդրադառնանք ուրիշի մարմնական շարժումների գործառույթներին. դա որոշակի էքսպրեսիվ ոլորտ է, որը սկզբունքորեն հնարավոր է մեկնաբանել՝ իբրև նրա մտածողության նշանների ամբողջություն: Ակնհայտ է, որ այս ոլորտի տարածման սահմանները (անգամ եթե հաղորդակցությունը ծավալվում է կենդանի ներկայում) կարող են տարբեր լինել: Այն կունենա առավելագույն տարածում, եթե ժամանակային ընդհանրությունից զատ զուգընկերների միջև գոյություն ունենա նաև տարածական ընդհանրություն. սա փոխազդեցության այն տեսակն է, որը սոցիոլոգներն անվանում են դեմ առ դեմ փոխազդեցություն:

Վերոնշյալը պարզաբանելու համար թույլ տվեք կրկին վերադառնալ խոսողի և ունկնդրի օրինակին: Նախ և առաջ, այստեղ գործ ունենք բառերի հետ, որոնք արտաբերվում են իրենց բառարանային և քերականագիտական իմաստներով, ինչպես նաև ստանում են հավելյալ շրջանակավորում՝ պայմանավորված խոսքի համատեքստով, զուգակցվող ասոցիացիաներով և խոսակցի կոնկրետ կենսապայմաններով: Բացի այդ, գոյություն ունեն խոսքին օժանդակող այնպիսի միավորներ, ինչպիսիք են՝ խոսակցի ձայնային տարբեր հնչերանգները, դիմախաղն ու ժեստերը: Նորմալ պայմաններում խոսողի կողմից նախագծվում է մտքի փոխանցումը, որն իրականացվում է զուտ պատշաճ կերպով ընտրված բառերի օգնությամբ, ուստի, համաձայն մեր սահմանմանը, հենց դա է կառուցում «աշխատանքը»: Մեկնաբանվող ոլորտի մնացյալ տարրերը խոսողի տեսանկյունից ծրագրավորված չեն և հետևապես ոչ այլ ինչ են, քան պարզապես վարք (ուղղակի կատա-

րում) կամ սովորական ռեֆլեքսներ: Եվ ուրեմն, դրանք էապես արդիական վերապրումներ են, որոնք զուրկ են սուբյեկտիվ իմաստից: Այնուամենայնիվ, դրանք չեն դադարում լինել ունկնդրի կողմից դիմացինի գիտակցության վիճակի մեկնաբանման անբաժանելի տարրեր:<>

Դեմ առ դեմ հարաբերություններում փոխազդեցության սուբյեկտները ոչ միայն համագործակցում են կենդանի ներկայում, այլև նրանցից յուրաքանչյուրն իր ինքնաբուխ կյանքի բոլոր դրսևորումներով մյուսի համար հանդես է գալիս նաև իբրև միջավայրի մաս. երկուսն էլ մասնակցում են արտաքին աշխարհի փորձառությունների ամբողջությանը, որին կարող են ներկառուցվել յուրաքանչյուրի աշխատանքի ակտերը: Եվ վերջապես, դեմ առ դեմ հարաբերություններում (և միայն դրանցում) զուգընկերներից յուրաքանչյուրը կարող է տեսնել այլ մարդու Ես-ը կենդանի ներկայում՝ իբրև ամբողջ, որը ենթակա չէ մասնատման: <>

Գոյություն ունեցող հնարավոր բոլոր բազմաբնույթ սոցիալական հարաբերությունները բխում են ժամանակի և տարածության ընդհանրության մեջ ուրիշի Ես-ի ամբողջականության սկզբնական վերապրումներից: «Միջավայր» հասկացության (այսօր սոցիալական գիտություններում ամենավատ պարզաբանված հասկացություններից մեկի) տեսական վերլուծությունը պետք է բխի դեմ առ դեմ հարաբերություններից, որոնք պետք է հասկանալ՝ իբրև առօրյա կյանքի աշխարհի հիմնային կառուցվածքներ:

Այստեղ մենք չենք կարող իրականացնել վերոհիշյալ ածանցյալ հարաբերությունների կառուցվածքի մանրազնին վերլուծություն: Մեր առջև դրված խնդրին լուծում տալու համար կարևոր է հասկանալ, որ ոչ մի նման հարաբերության մեջ ուրիշի Ես-ը երբեք չի կարող հասանելի լինել զուգընկերոջը իբրև ամբողջություն: Ուրիշը ներկայանում է իբրև մասնակի Ես, իբրև այս կամ այն ակտերի աղբյուր, որոնցում ես չեմ համագործակցում նրա հետ կենդանի ներկայում: Մենք-հարաբերությունների կենդանի ներկան ենթադրում է զուգընկերների համաներկայություն:<>

*Իրականության շերտերը աշխատանքի առօրեական աշխարհում*

Բնական դիրքորոշում ունեցող սթափ մարդը հետաքրքրված է իր առօրյա կյանքի աշխարհի այն ոլորտով, որը գտնվում է իր հարևանությամբ և կենտրոնացած է իր շուրջ՝ թե՛ ժամանակի և թե՛ տարածության մեջ: Մարմնիս զբաղեցրած տեղը, իմ այժմեական Հիմա-ն մեկնարկային այն կետն է, որի օգնությամբ ես կողմնորոշվում եմ տարածության մեջ: Այն իմ կոորդինատային համակարգի կենտրոնն է: Ես, հարաբերակցելով իմ շուրջ գտնվող տարրերը մարմնիս հետ, խմբավորում եմ դրանք ըստ կատեգորիաների՝ «աջ» և «ձախ», «առջևում» և «հետևում», «տակ» և «վրա», «մոտ» և «հեռու» և այլն: Իմ այժմեական Հիմա-ն, իր հերթին, այն տարբեր ժամանակային հեռանկարների աղբյուրն է, որոնց համաձայն ես կազմակերպում եմ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: Խոսքն այնպիսի կատեգորիաների մասին է, ինչպիսիք են, օրինակ՝ «առաջ» և «հետո», «անցյալ» և «ապագա», «միաժամանակություն» և «հաջորդականություն» և այլն:

Միևնույն ժամանակ, այս հիմնարար կողմնորոշման սխեմայի շրջանակներում աշխատանքի աշխարհը կառուցվածքայնացվում է իրականության տարբեր շերտերի վրա: Ջորջ Հ. Միդի[82] մեծագույն վաստակը դարձավ մարդկային գործողությունների հետ կապված իրականության կառուցվածքայնացման վերլուծությունը (առնվազն՝ ֆիզիկական իրերի իրականության), հատկապես՝ ձեռքերի օգնությամբ օբյեկտների մանիպուլյացիայի: Իրականության միջուկը կազմավորվում է նրանով, ինչը Միդն անվանում է «մանիպուլյացիայի գոտի»: Այդ գոտին իր մեջ է ներառում այն օբյեկտները, որոնք տեսանելի են գործող անձի համար և վերջինիս կողմից անմիջապես գործածվում են՝ ի տարբերություն հեռավոր օբյեկտների, որոնք թեև տեսանելիության դաշտում են, սակայն չեն կարող վերապրվել անմիջական շփման մեջ: Միայն մանիպուլյացիայի գոտում ֆիզիկական իրերի վերապրումն է հնարավոր դարձնում ամեն տիպի իրականության հենա-

[82] Mead, G.H. (1932) The Philosophy of the Present, Chicago, p. 124 և դրան հաջորդող էջերում; Mead, G.H. (1938) The Philosophy of the Act. Chicago, pp. 103–106, 121, 151, 190–192, 196–197, 282–284:

կետային ստուգումը, մասնավորապես՝ վերջինիս կողմից ցուցաբերվող դիմադրության միջոցով: Միայն նրանք են պայմանավորում և «սահմանում» այն, ինչ Միդը անվանում է իրերի «ստանդարտ չափեր», որոնք, գտնվելով մանիպուլյացիայի գոտուց դուրս, օպտիկական հեռանկարի ազդեցության ներքո խեղաթյուրված են երևում:

Մանիպուլյացիայի գոտու առաջնահերթության այս տեսությունը լիովին համապատասխանում է այս հոդվածում առաջ քաշված այն դրույթին, որի համաձայն մեր աշխատանքի, մարմնի շարժումների, օբյեկտների մանիպուլյացման, իրերի և մարդկանց հետ վարվելու աշխարհը կառուցում է առօրյա կյանքի աշխարհի յուրօրինակ իրականությունը: Այնուամենայնիվ, մեր առջև դրված խնդրի լուծման առումով՝ շփման մեջ վերապրվող օբյեկտների և հեռավոր օբյեկտների (շատ այլ հարաբերություններում չափազանց կարևոր) միջև առկա տարբերությունը այդքան էլ նշանակալի չէ: Դժվար չէ ցույց տալ, որ այս երկճյուղումը բխում է Միդի հենակետային վարքաբանական դիրքից և «ազդակ-արձագանք» սխեմայի ոչ քննադատական կիրառումից: Մինչդեռ մեզ հետաքրքրում է սթափ, հասուն մարդու կողմից ընդունվող բնական դիրքորոշումը առօրյա կյանքում: Նրա տրամադրության տակ միշտ ապես գտնվում է անցյալի փորձառությունների պահոցը. վայր, որտեղ ներառվում են հեռավորության և վերջինիս հաղթահարման (աշխատանքի գործողություններով, մասնավորապես՝ տեղաշարժմամբ) հնարավորությունների մասին պատկերացումները: Այսպիսով, բնական դիրքորոշման մեջ հեռավոր օբյեկտի տեսողական ընկալումը ենթադրում է կանխազգիտում. մենք կռահում ենք, որ տեղաշարժումը հնարավոր կդարձնի այդ հեռավոր օբյեկտների հետ շփումը, որի հետևանքով օբյեկտների խեղաթյուրված հեռանկարը կվերանա, և վերջիններիս «ստանդարտ չափերը» կվերականգնվեն: Այդ կանխազգիտումը (ինչպես ցանկացած այլ կանխազգիտում) կարող է հետագայում կա՛մ հաստատվել, կա՛մ հերքվել իրական փորձով: Դրա հերքումը կնշանակեր, որ այս հեռավոր օբյեկտը իմ աշխատանքի աշխարհին չի պատկանում: Երեխան կարող է աստղերին դիպչելու անհագ ցանկություն ունենալ: Այնինչ, բնական դիրքորոշման մեջ գտնվող

մեծահասակի համար աստղերը ոչ այլ ինչ են, քան իր աշխատանքի ոլորտից դուրս գտնվող փայլփլուն կետեր, անգամ այն պարագայում, երբ նա օգտվում է աստղերի դիրքերից՝ տարածության մեջ կողմնորոշվելու նպատակով:

Հետևաբար մեր նպատակներից ելնելով, մենք առաջարկում ենք անհատի կողմից որպես իր իրականության միջուկ վերապրվող աշխատանքի աշխարհի շերտը անվանել *իր հասանելիության սահմաններում ընկած աշխարհ*: Այն ներառում է ոչ միայն միդյան մանիպուլյացման գոտին, այլև մարդու տեսողության և լսողության դաշտում ընկած իրերը, իրական աշխատանքի համար բաց աշխարհի ոլորտը և պոտենցյալ աշխատանքի շրջակա ոլորտները: Այդ ոլորտները, իհարկե, զուրկ են հստակ սահմաններից, շրջապատված են սեփական շրջանակներով և ունեն իրենց հետաքրքրությունների փոփոխություններին և ուշադրության դիրքորոշումներին ենթարկվող բաց հորիզոններ: Հասկանալի է, որ «իմ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհի» ողջ համակարգը փոփոխության է ենթարկվում իմ ցանկացած տեղաշարժի արդյունքում. ես, մարմինս տեղաշարժելով, տեղաշարժում եմ կոորդինատային համակարգիս O կենտրոնը, և միայն դա բավարար է, որ այդ համակարգին վերաբերող կոորդինատային բոլոր թվերը փոփոխվեն:

Կարելի է ասել, որ իմ իրական հասանելիության սահմաններում գտնվող աշխարհը իր բնույթով պատկանում է ներկա ժամանակին: Իմ պոտենցիալ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհը ժամանակային ավելի բարդ կառուցվածք է դրսևորում: Հարկավոր է տարբերակել պոտենցյալության առնվազն երկու գոտի: Անցյալին վերաբերող առաջին գոտուն պատկանում է այն, ինչը նախկինում իմ ակտուալ հասանելիությանն է պատկանել, և ինչպես ես եմ ենթադրում, կարող է կրկին վերադարձվել իմ այժմեական հասանելիություն (*իմ վերականգնելի հասանելիության սահմաններում գտնվող*): Այս ենթադրությունը հիմնված է բնական դիրքորոշման ոլորտում իրականացվող ցանկացած վարքը ղեկավարող իդեալականացումների վրա, ըստ որոնց ես կարող եմ շարունակել գործել այնպես, ինչպես

գործել եմ մինչ այժմ և ի զորու եմ կրկին ու կրկին կատարել միևնույն գործողությունը միևնույն պայմաններում: Հուսերլը, հետազոտելով այդ իդեալականացումների համընդհանուր դերը տրամաբանության հիմնավորումներում, կոչում է դրանք՝ «և այդպես շարունակ և նման բաներ» ու «ես-կրկին-կարող-եմ-անել-դա», ընդ որում, վերջինս առաջինի սուբյեկտիվ կորելյատն է[83]: Բերենք օրինակ: Շարժման արդյունքում այն, ինչը նախկինում «հասանելիությանս սահմաններում գտնվող աշխարհին էր», դուրս է եկել այդ սահմաններից: Կոորդինատային համակարգիս O կենտրոնի տեղաշարժը իմ՝ նախկինում *այստեղ* (hic) գտնվող աշխարհը վերածել է այժմ *այնտեղ* (illic) գտնվող աշխարհի[84]: Այնուամենայնիվ, «ես կրկին կարող եմ անել դա» իդեալականացման շնորհիվ ես ենթադրում եմ, որ կարող եմ փոխակերպել այժմեական այնտեղը նոր այստեղի: Իմ հասանելիության սահմաններում գտնվող նախորդ աշխարհը, շնորհիվ այդ իդեալականացման, կարող է կրկին իմ հասանելիության սահմաններ վերադարձվել: Այսպես, օրինակ, իմ մանիպուլյացման նախկին գոտին շարունակում է գործառել իմ ներկայում՝ որպես մանիպուլյացման պոտենցյալ գոտի *այնտեղ* հարթության մեջ և օժտված է վերականգնման յուրատեսակ հնարավորությամբ:

Ինչպես պոտենցիալության առաջին գոտին կապված է անցյալի հետ, այնպես էլ երկրորդը հիմնված է ապագայի կանխագիտումների վրա: Ի թիվս այլ բաների՝ իմ պոտենցյալ հասանելիության սահմաններում գտնվում է մի աշխարհ, որը չկա և երբևէ չի եղել իմ իրական հասանելիության սահմաններում, և, չնայած դրան, հասանելի է ինձ «և այդպես շարունակ և նման բաներ» (իմ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհ) իդեալականացման շնորհիվ: Պոտենցիալության այս երկրորդ գոտու կարևորագույն օրինակ է ժամանակակցիս իրական հասանելիության սահմաններում գտնվող աշխարհը: Օրինակ՝ նրա մանիպուլյացման գոտին չի համընկնում կամ գոնե ամբող-

---

83 Husserl, E. (1929) Formale und Transzendentale Logik. Halle: Max Niemeyer, § 74, p. 167.

84 Մենք հավատարիմ ենք մնում Հուսերլի «Կարտեզիական մտորումներ» գրքի § 53-ում և դրան հաջորդող գլուխներում օգտագործված տերմինաբանությանը:

ջովին չի համընկնում[85] իմ մանիպուլյացման գոտու հետ, քանզի միայն նրա համար է մանիպուլյացիայի այդ գոտին գտնվում *այստեղ*, այն դեպքում, երբ ինձ համար այն գտնվում է *այնտեղ*:<> Այն, ինչ ասվեց ժամանակակցիս մանիպուլյացիայի գոտու մասին, կարող է նույնությամբ ասվել յուրաքանչյուրի (քո, նրա, նրանցից յուրաքանչյուրի) հասանելիության սահմաններում գտնվող աշխարհի մասին: Ընդ որում, սա վերաբերում է ոչ միայն ուրիշի իրական հասանելիության սահմաններում գտնվող աշխարհին, այլ նաև աշխարհներին, որոնք գտնվում են վերջինիս՝ վերականգնելի և հասանելի (հասանելի դառնալու հնարավորություն ունեցող) մատչելիության սահմաններում: Այս կերպ հասարակական աշխարհի բոլոր շերտերն ընդգրկող համակարգը դրսևորում է այն բոլոր երանգները, որոնք սկիզբ են առնում սոցիալականության այնպիսի հեռանկարներում, ինչպիսիք են, օրինակ՝ ինտիմությունը և անանունությունը, օտարությունն ու ծանոթությունը, սոցիալական մոտիկությունն ու սոցիալական հեռավորությունը և այլն. սրանք սոցիալականության այն հեռանկարներն են, որոնք կառավարում են իմ հարաբերությունները ընկերներիս, ժամանակակիցներիս, նախնիներիս և իրավահաջորդներիս հետ: Այս ամենը, սակայն, մենք այստեղ դիտարկել չենք կարող: Մեր առջև դրված նպատակների համար բավարար է ցույց տալ, որ ողջ սոցիալական աշխարհը, ընդհանուր առմամբ, ինձ մատչելի հասանելիության սահմաններում գտնվող աշխարհ է, որն ունի իմ կողմից հասանելի դառնալու յուրահատուկ հնարավորություններ: <>

### *Աշխատանքի աշխարհը որպես գերագույն իրականություն; հիմնարար տագնապ; բնական դիրքորոշման էպոխե*

Իրականության բազում այլ ենթաշխարհներից աշխատանքի աշխարհը առանձնանում է որպես գերագույն իրականություն: Այն ֆիզիկական իրերի (որոնց թվին է դասվում նաև մարմինս) աշխարհ է, իմ

[85] Դեմառդեմ փոխհարաբերություններում աշխարհները, որոնք գտնվում են իմ և զուգընկերոջս հասանելիության սահմաններում, հատվում են, ինչի արդյունքում աշխարհների որևէ հատված հայտնվում է երկուսիս ընդհանուր հասանելիության սահմաններում:

ֆիզիկական տեղափոխումների և մարմնական օպերացիաների աշխարհը, աշխարհ, որն ընդդիմանում է ինձ և ստիպում լրջագույն ջանքեր գործադրել այդ դիմադրությունը հաղթահարելու համար: Այն իմ առջև դնում է խնդիրներ, թույլ է տալիս իրականացնել ծրագրերս և հաջողություններ կամ ձախողումներ գրանցել նպատակներիս հասնելու ճանապարհին:

Աշխատանքիս ակտերի միջոցով ես միանում եմ արտաքին աշխարհին. ես փոխում եմ այն, և թեև այդ փոփոխությունները իմ աշխատանքի արդյունք են, դրանք կարող են վերապրվել և ստուգման ենթարկվել ոչ միայն իմ, այլև այլոց կողմից՝ որպես այս աշխարհին պատկանող, իմ աշխատանքի գործողություններից սերված, բայց դրանցից որևէ կախում չունեցող իրադարձություններ: Ես կիսում եմ այս աշխարհը և իր օբյեկտները այլ մարդկանց հետ. նրանց հետ ես կիսում եմ ընդհանուր նպատակներ և միջոցներ, աշխատում բազմաթիվ սոցիալական ակտերում և փոխազդեցություններում՝ վերահսկելով ուրիշներին և գտնվելով նրանց վերահսկողության տակ: Ավելին, աշխատանքի աշխարհը իրականություն է, որում հնարավոր են դառնում թե՛ հաղորդակցությունը և թե՛ փոխադարձ շարժառիթների միակցումը: Հետևաբար, այն կարող է վերապրվել ինչպես շարժառիթների պատճառականության հարաբերակցման սխեմայում, այնպես էլ նպատակների թելեոլոգիայի հարաբերակցման սխեմայում:

Ինչպես արդեն հաստատեցինք, մեր բնական դիրքորոշման մեջ այս աշխարհը ոչ թե մեր մտածողության օբյեկտն է, այլ գերիշխանության տիրույթը: Վերջինիս հետ մեզ կապում է ակնհայտ գործնական հետաքրքրությունը, որն էլ, իր հերթին, ի հայտ է գալիս մեր կենսական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունից: Այնուամենայնիվ, աշխատանքի աշխարհի ոչ բոլոր շերտերի նկատմամբ ենք մենք *միանման* հետաքրքրություն դրսևորում: Մեր հետաքրքրության ընտրողական գործառույթն է, որ կազմակերպում է այս աշխարհը ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ՝ տրոհելով այն առավել կամ պակաս համապատասխան շերտերի: Իմ ակտուալ և պոտենցյալ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհից որպես

առաջնահերթ կարևորություն ունեցող են ընտրվում այն օբյեկտները, որոնք այժմ կամ ապագայում հանդիսանում կամ դառնալու են ծրագրերիս իրականացման հնարավոր նպատակներ և միջոցներ, կամ նրանք, որոնք ինձ համար վտանգավոր կամ հաճելի են, կամ էլ երբևէ դառնալու են այդպիսին: Ես մշտապես կանխատեսում եմ այդ օբյեկտներից ակնկալվող ապագա հետևանքները, այն փոփոխությունները, որոնք կառաջանան իմ ծրագրավորված աշխատանքի շնորհիվ:

Այժմ պարզաբանենք, թե ինչ է նշանակում «համապատասխանություն» (relevance) հասկացությունը այս համատեքստում: Օրինակ, երբ ես, գտնվելով բնական դիրքորոշման մեջ, մոլեգնաբար հետաքրքրված եմ գործողությանս արդյունքներով, և ինձ հատկապես մտահոգում է, թե արդյո՞ք իմ կանխագիտումները կդիմանան գործնական ստուգման փորձությանը: Ինչպես արդեն տեսանք, բոլոր կանխագիտումներն ու ծրագրերը հարաբերակցվում են հենց այս պահին առկա նախորդ փորձառություններիս հետ, որոնք ինձ թույլ են տալիս ծանր ու թեթև անել հնարավորություններս: Բայց դա դեռ ամենը չէ: Մի բան է, թե *հատկապես ինչն* եմ ես կանխագիտում, մեկ այլ բան՝ *ինչու* եմ ես, առհասարակ, դա անում: Մի բան է, թե ինչ տեղի կունենա որոշակի հանգամանքների և պայմանների առկայության պարագայում, և լրիվին այլ բան, թե ինչու են գործողություններիս հետևանքները շարժում հետաքրքրությունս, և թե ինչու եմ ես մոլեգնաբար սպասում սեփական մարզարեությունների արդյունքներին: Այս երկճյուղումներից առաջինն է միայն, որ կարող է լուծվել նախորդ փորձի նստվածք հանդիսացող փորձառությունների առկա պահոցին դիմելիս: Ինչ վերաբերում է երկճյուղման երկրորդ մասին, ապա վերջինս հարաբերակցվում է համապատասխանությունների համակարգի հետ, որով մարդն առաջնորդվում է իր առօրյա կյանքում բնական դիրքորոշման մեջ գտնվելիս:

Թեև մենք չենք կարող այստեղ քննարկել համապատասխանությունների բոլոր նրբությունները, սակայն, առիթից օգտվելով, ցանկանում եմ նշել, որ համապատասխանությունների ողջ համակարգը, որը ղեկավարում է մեզ բնական դիրքորոշման մեջ, հենվում է բոլորիս հատուկ հիմնարար վերապրման վրա, այն է՝ ես գիտեմ, որ մահանալու

եմ և վախենում եմ, որ կմահանամ: Այս առաջնային վերապրումը մենք առաջարկում ենք կոչել *հիմնարար տագնապ*: Սա սկզբնական կանխազիտում է, որից սկիզբ են առնում բոլոր մյուսները: Հիմնարար տագնապից են սերում մի շարք փոխկապված համակարգեր՝ հույսերի և կասկածների, պահանջմունքների և բավարարումների, ռիսկերի և հնարավորությունների, որոնք բնական դիրքորոշման մեջ գտնվող մարդուն դրդում են աշխարհի նվաճմանը, դժվարությունների հաղթահարմանը, ծրագրերի նախազծմանը և դրանց իրականացման փորձերի նախաձեռնմանը:

Միայն թե հիմնարար տագնապն ինքնին ընդամենը առօրյա կյանքի գերագույն իրականությունում մարդկային մեր գոյության կորելյատն է: Եվ հետևաբար, հույսերն ու կասկածները և դրանց հետ կապված պահանջմունքների բավարարումներն ու հիասթափությունները արմատավորված են աշխատանքի աշխարհում և միայն այնտեղ են հնարավոր: Դրանք այս իրականության անքակտելի տարրերն են, թեև որևէ կերպ կախված չեն մեր՝ վերջինիս նկատմամբ տածած հավատից: Մենք վստահում ենք այդ վերապրումներին, քանի դեռ մի անգամ հաստատված համապատասխանեցման սխեման կամ հուսալիորեն հաստատված վերապրումների համակարգը (ինչպես մեր, այնպես էլ այլ մարդկանց) աշխատում են, իսկ վերջիններիս վերահսկողությամբ իրականացված գործողությունները և օպերացիաները բերում են ցանկալի արդյունքների: Մենք որևէ պատճառ չունենք կասկածի տակ դնելու մեր՝ հուսալիորեն հաստատված փորձառությունները, որոնք, ինչպես հավատում ենք, ներկայացնում են մեզ իրերն այնպես, ինչպիսին որ դրանք իրականում կան: Մեր նախկին հավատալիքները վերանայելու համար մեզ անհրաժեշտ է յուրահատուկ շարժառիթ, ինչպես, օրինակ՝ հանկարծակի «տարօրինակ» փորձառություն, գիտելիքի առկա պահուստին չպատկանող կամ դրան հակասող վերապրում:

Ֆենոմենոլոգիան մեզ է տվել «ֆենոմենոլոգիական էպոխե» հասկացությունը, որը պետք է հասկանալ իբրև խուսափում աշխարհի իրական լինելու նկատմամբ հավատից, ինչը թույլ է տալիս հաղթահարել բնական դիրքորոշումը փիլիսոփայական կասկածի կարտե-

զյան մեթոդի արմատականացման ճանապարհով[86]: Համարձակվենք ենթադրել, որ բնական դիրքորոշման մեջ մարդը ևս յուրահատուկ էպոխե է օգտագործում. անշուշտ, ոչ այնպիսին, ինչպիսին ֆենոմենոլոգը: Նա ձեռնպահ է մնում ոչ թե արտաքին աշխարհի և վերջինիս օբյեկտների հանդեպ հավատից, այլ, ընդհակառակը, այդ աշխարհի գոյությունը կասկածի տակ դնելուց: Մենք առաջարկում ենք անվանել այդ էպոխեն «*բնական դիրքորոշման էպոխե*»:

**Բազմակի իրականություններն ու վերջիններիս կառուցակցումը**

Հոդվածի սկզբնամասում մենք անդրադարձ կատարեցինք Ուիլյամ Ջեյմսի բազմակի ենթաշխարհների տեսությանը: Այդ ենթաշխարհներից յուրաքանչյուրը (քանի դեռ դրա վրա կենտրոնացած է ուշադրությունը) կարող է յուրովի ընկալվել որպես իրականություն: Ջեյմսը նշում է, որ այդ ենթաշխարհներից յուրաքանչյուրը օժտված է գոյության՝ իրեն հատուկ և անկրկնելի ոճով: Նա շեշտում էր նաև, որ այդ ենթաշխարհներից յուրաքանչյուրի վերաբերյալ «բոլոր պնդումները՝ լինեն դրանք հատկությունների կամ գոյության մասին, հավատ են առաջացնում իրենց ընկալման փաստի ուժով միայն, եթե չեն բախվում միաժամանակ առաջացած և հավատ ներշնչող այլ ընկալումներին»[87]: Սա տեղի է ունենում, քանի դեռ ընկալման իրողության ազդեցության ներքո առաջին պնդումների հասկացությունները համընկնում են վերջիններիս հասկացություններին: «Իրականի» և «ոչ իրականի» ցանկացած տարբերակում հիմնված է մտածողության երկու առանձնահատկությունների վրա: «Առաջինը, մենք հակված ենք միևնույն բանի մասին մտածել տարբեր կերպ, երկրորդը՝ այդուհանդերձ մենք կարող ենք ընտրել մտածողության որ ձևը ընդունել և որը մերժել»: Հետևաբար Ջեյմսը խոսում է «իրականության զգացողության» մասին, որը և կարելի է հետազոտել հավատի և հավատի բացակայության հոգեբանական կատեգորիաներով:

---

[86] Marvin, F. (1943) The Foundation of Phenomenology. Cambridge, p. 526 և դրան հաջորդող էջերում:
[87] James, W. (1890) Principles of Psychology. Henry Holt and Company, vol. II, p. 290.

Սույն կարևոր ըմբռնումը հոգեբանական համատեքստից ազատելու համար մենք նախընտրում ենք խոսել ոչ թե իրականության բազմաթիվ ենթաշխարհների, այլ *իմաստի վերջավոր ոլորտների* մասին, որոնցից յուրաքանչյուրին մենք կարող ենք հաղորդել իրականության առանձնահատուկ գծեր: Մենք խոսում ենք իմաստի *ոլորտների*, այլ ոչ իրականության բազմաթիվ ենթաշխարհների մասին, քանզի իրականությունը կառուցակցվում է մեր փորձառությունների հիմքում դրված կամ վերջինիս վերագրվող իմաստների, այլ ոչ օբյեկտների գոյաբանական կառուցվածքների միջոցով: Այդ իսկ պատճառով մեր վերապրումների համալիրները, որոնք ունեն յուրօրինակ ճանաչողական ոճ և *այդ ոճի հանդեպ* ոչ միայն չունեն ներքին հակասություններ, այլև սկզբունքորեն համադրելի են, մենք անվանում ենք իմաստի վերջավոր ոլորտներ: Ընդգծված բառերը չափազանց կարևոր են, քանզի միևնույն ճանաչողական ոճին հատուկ փորձառությունների անհամակցվածությունը և անհամատեղելիությունը ոչ թե անպայմանորեն հանգեցնում են իմաստի որոշակի ոլորտի իրականության տարբերակիչ գծերի բացառմանը, այլ միայն նպաստում են որևէ վերապրման կամ վերապրումների խմբի արժեզրկմանը տրված ոլորտի շրջանակներում:

Եվ ուրեմն, եկեք հասկանանք, թե ինչ ասել է «ճանաչողական յուրօրինակ ոճ» և ինչ նկատի ունենք՝ «իրականության տարբերակիչ առանձնահատկություններ» ասելով:

Եկեք, այս անգամ ևս, իբրև օրինակ դիտարկենք արդեն իսկ սահմանված և վերլուծված առօրյա կյանքի աշխարհը: Թեև առօրյա կյանքի աշխարհը ներկայանում է իբրև գերագույն իրականություն (այս մասին խոսվել է նախորդ ենթաբաժիններում), այն «ենթաշխարհ» կամ «իմաստների վերջավոր ոլորտ» է: Վերջինիս յուրօրինակ ճանաչողական ոճը ձևավորող գլխավոր բնութագրիչները ի մի բերելով՝ մենք բացահայտում ենք.

1. կյանքի հանդեպ լիակատար ուշադրությունից բխող, սթափ գիտակցության յուրահատուկ լարվածություն,
2. յուրահատուկ էպոխե կամ խուսափում կասկածից,

3. ինքնաբուխ ակտիվության գերակա ձև, ավելի կոնկրետ՝ աշխատանքի (իմաստավորված ինքնաբուխ ակտիվություն, որը հիմնվում է ծրագրի վրա և բնութագրվում է արտաքին աշխարհին ներկառուցվող մարմնական շարժումներով նախագծվածն իրականացնելու մտադրությամբ),
4. սեփական Ես-ի վերապրման յուրահատուկ ձև (աշխատող Ես-ը՝ որպես ամբողջական Ես),
5. սոցիալականության յուրահատուկ ձև (հաղորդակցության և սոցիալական գործողության ընդհանուր միջսուբյեկտային աշխարհ),
6. ժամանակային յուրօրինակ հեռանկար (սկիզբ է առնում տիեզերական ժամանակի՝ իբրև միջսուբյեկտային աշխարհի համընդհանուր ժամանակային կառուցվածքի և անձի՝ ժամանակի ներքին զգացողության, հատման խաչմերուկում):

Համենայն դեպս, այդպիսինն են իմաստի այս ոլորտին հատուկ ճանաչողական ոճի որոշ հատկությունները: Քանի դեռ այս աշխարհի մեր վերապրումները (ինչպես հավաստի, այդպես էլ արժեզրկված) ենթարկվում են նշված ոճին, մենք կարող ենք իմաստների և նշանակությունների այս վերջավոր ոլորտները դիտարկել իբրև իրական, այլ կերպ ասած՝ հաղորդել դրանց իրականության գծեր: Բնական դիրքորոշման մեջ գտնվելով՝ մենք ստիպված ենք առօրյա կյանքի գերագույն իրականության հանդեպ գործել հենց այսպես, քանի որ մեր գործնական փորձը հաստատում է աշխատանքային օպերացիաների աշխարհի միասնությունը և ներդաշնակությունը և վերջինիս իրական լինելու մասին վարկածի անհերքելիությունը: Ավելին, այդ իրականությունը առավել բնական է թվում մեզ համար այնքան ժամանակ, քանի դեռ մենք «յուրահատուկ ցնցում» չենք ապրել. ցնցում, որը կդրդի մեզ դուրս գալ այս ոլորտից և տեղափոխել իրականության շեշտադրումը իմաստի մեկ այլ «վերջավոր» ոլորտի վրա:

Իհարկե, նման ցնցումային վերապրումները հաճախակի են պատահում մեր առօրյա կյանքում, քանի դեռ դրանք ներհատուկ են իրականությանը: Ցնցումները ցույց են տալիս ինձ, որ ստանդարտ ժամա-

նակում գործառող աշխատանքային օպերացիաների աշխարհը իմաստի միակ վերջավոր ոլորտը չէ, այլ իմ նպատակաուղղված կյանքին հասանելի բազմաթիվներից մեկը:

Շոկի վերապրման ձևերը նույնքան շատ են, որքան և իմաստի վերջավոր ոլորտները, որոնց ես կարող եմ վերագրել իրականության գծեր: Ահա մի քանի օրինակներ. քնելու ցնցումը՝ որպես թռիչք դեպի երազների աշխարհ; ներքին այլափոխումը, որը մեզ մոտ կատարվում է թատերական վարագույրի բարձրանալուն պես և տեղափոխում բեմական աշխարհ; մեր դիրքորոշման արմատական փոփոխությունը, երբ նկարի առջև կանգնած ընկղմվում ենք պատկերային աշխարհ; ծիծաղ առաջացնող մեր տարակուսանքը, երբ սրամտություն լսելիս կարճ ժամանակով պատրաստ ենք որպես իրականություն ընդունել կատակների հորինված աշխարհը; երեխայի շփումը խաղալիքի հետ՝ որպես տեղափոխում խաղերի աշխարհ և այլն: Բոլոր հնարավոր կրոնական ապրումները, օրինակ՝ «ակնթարթ»-ի՝ որպես կրոնական ոլորտ թռիչքի կյերկեգորյան վերապրումը, նույնպես նման ցնցում է, ինչպես նաև գիտնականի՝ «այս աշխարհի» գործերին կողմնակալ մասնակցությունից հրաժարվելու որոշումը՝ հանուն անկողմնակալ հայեցողական դիրքորոշման:

Այժմ կարող ենք ամփոփել վերոնշյալ գաղափարները ներքոբերյալ թեզիսներում:

1. Այդ բոլոր աշխարհների՝ երազների, երազանքների, անուրջների, արվեստի, կրոնական փորձառության, գիտական հայեցողության, երեխայի խաղի, խելագարության, նշանակությունների վերջավոր ոլորտներ են: Սա նշանակում է, որ դրանք
   (ա) օժտված են առանձնահատուկ ճանաչողական ոճով (որը թեև տարբերվում է բնական դիրքորոշման մեջ գտնվող աշխատանքի աշխարհից),
   (բ) այդ աշխարհներից յուրաքանչյուրում առկա վերապրումները ներքուստ անհակասական են և համադրելի մեկը մյուսի հետ՝ այդ ճանաչողական ոճի հարաբերակցությամբ (թեև համադրելի չեն առօրյա կյանքի նշանակության հետ),

(գ) նշանակությունների վերջավոր ոլորտներից յուրաքանչյուրը կարող է ստանալ իրականության յուրահատուկ գծեր (թեև ոչ նրանք, որոնցով օժտված է աշխատանքի աշխարհը):

2. Վերապրումների անհակասականությունը և համադրելիությունը կոգնիտիվ ոճի շրջանակներում գոյություն ունի միայն նշանակությունների այն ոլորտում, որին այդ վերապրումները պատկանում են: Համապատասխանությունը P նշանակությունների ոլորտին ամենևին չի ենթադրում համապատասխանություն Q նշանակությունների ոլորտի հետ: Ընդհակառակը, P ոլորտից, որը ենթադրվում է իբրև առանձին իրականություն, Q ոլորտը և վերջինիս պատկանող բոլոր վերապրումները թվալու են կեղծ, հակասական, անհամադրելի և հակառակը:
3. Հենց դրա համար է, որ մենք, իրավամբ, կարող ենք խոսել նշանակությունների վերջավոր ոլորտների մասին: Այդ վերջավորությունը ենթադրում է այդ ոլորտների համադրման անհնարինությունը և որևէ փոխակերպման բանաձևերի գոյության անհնարինությունը: Ըստ Կյերկեգորի՝ մի ոլորտից անցումը մեկ այլ ոլորտի կարող է կատարվել միայն «թռիչքների» միջոցով, ընդ որում, այդ թռիչքները դրսևորվում են ցնցման սուբյեկտիվ վերապրումներում:
4. Այն, ինչ քիչ առաջ անվանեցինք «թռիչք», «ցնցում» կամ «շոկ», ոչ այլ ինչ է, քան մեր գիտակցության լարվածության մեջ տեղի ունեցող ծայրահեղ վերափոխություն:
5. Այսպիսով, նշանակությունների ցանկացած ոլորտին հատուկ ճանաչողական ոճն իր մեջ ներառում է գիտակցության յուրահատուկ լարվածության և, հետևաբար, էպոխե, տարբերայնության գերակայող ձև, սեփական *Ես-ի* վերապրման ձև, սոցիալականության և ժամանակային հեռանկարներ:
6. Աշխատանքի աշխարհը առօրյա կյանքում մեր իրականության վերապրման նախատիպն է: Համապատասխանաբար, իմաստ-

ների մնացյալ ոլորտները կարելի է դիտարկել որպես վերջինիս ձևափոխություններ[88]:

Հետաքրքիր կլիներ փորձել համակարգել իմաստների վերջավոր ոլորտներն իրենց կազմավորող սկզբունքների հիման վրա, այսինքն՝ ըստ գիտակցության լարվածության մակարդակի նվազման, որը դրսևորվում է առօրյա կյանքից մեր ուշադրության թուլացման, անջատման մեջ: Նման վերլուծությունը ցույց կտար մի օրինաչափություն, այն է՝ որքան բանականությունը երես է թեքում կյանքից, այնքան աշխատանքի առօրեական աշխարհի առավել մեծ հատվածներ ու առօրյա կյանքի իրականության առավել մեծ թվով շերտեր են կասկածի տակ առնվում: Բնական դիրքորոշման էպոխեն, որը ստիպում է զերծ մնալ վերջինիս գոյության վերաբերյալ կասկածներից, փոխարինվում է այլ էպոխեներով, որոնք ստիպում են զերծ մնալ առօրյա կյանքի իրականության բազմակի շերտերի գոյության հանդեպ հավատից՝ առնելով դրանք փակագծերի մեջ: Այլ կերպ ասած, իմաստների վերջավոր ոլորտների տիպականացումը հնարավոր կլիներ սկսել առօրյա կյանքի այն գործոնների վերլուծությունից, որոնց պատասխանում են իրականության գծերը՝ պայմանավորված դեպի կյանքը շահագրգիռ ուշադրության կիզակետից դուրս անկմամբ: Այդ դեպքում փակագծերից այն կողմ մնացածն ամբողջությամբ հնարավոր կլիներ սահմանել՝ որպես վերապրման ճանաչողական ոճի, իմաստների՝ այդ կերպ սահմանափակված ոլորտներին պատկանող բաղադրատարրերի ամբողջություն: Այն էլ, իր հերթին, կկարողանար ձեռք բերել իրականության կամ կեղծ իրականության (ցանկացած իրականության նախատիպային իրականության) գծեր:

---

[88] Այստեղ երևի թե պետք է մեկ վերապահում անել: «Իմաստների վերջավոր ոլորտներ» հասկացությունը ընդհանրապես չի ենթադրում այնպիսի լրացուցիչ իմաստների ստատիկ կոնոտացիաներ, որոնցից կարծես թե մենք պետք է ընտրեինք այդ ոլորտներից մեկը՝ իբրև տուն, որում պետք է ապրենք և ուր անընդհատ պետք է վերադառնանք: Ոչ մի նման բան: Ընդամենը մեկ ժամում մեր գիտակցությունը կարող է անցնել լարվածության ամենատարբեր մակարդակներով և դեպի կյանքը ուշադրության կենտրոնացման տարատեսակ դիրքորոշումներ ընդունել: <>

Վերջին նկատառումը ի հայտ է բերում յուրատեսակ մի խոչընդոտ, որին բախվում է վերոհիշյալ կեղծ իրականությունների նկարագրման ցանկացած փորձ: Դրա էությունը նրանում է, որ ցանկացած լեզու, ինչպես հաղորդակցակցություն κατ' εποχην[89], պատկանում է աշխատանքի միջսուբյեկտային աշխարհին և, հետևապես, համառորեն հրաժարվում է ծառայել՝ իբրև այդ շրջանակներից դուրս եկող իմաստների արտահայտման միջոց: Այստեղից էլ ի հայտ են գալիս անուղղակի հաղորդակցության բազմաթիվ ձևեր, որոնցից մի քանիսին մենք դեռ կանդրադառնանք: Օրինակ՝ գիտական տերմինաբանությունը յուրօրինակ միջոց է, որը հնարավորություն է տալիս հաղթահարելու նշված խոչընդոտը գիտական ոլորտի սահմաններում:

Այստեղ մենք ստիպված ենք հրաժարվել այս սկզբունքների հիմքով բազմաթիվ իրականությունների մանրակրկիտ դասակարգման մշակումից: <> Մենք առաջ կշարժվենք աստիճանաբար և կփորձենք համադրել աշխատանքի աշխարհը իմաստի վերջավոր ոլորտների երկու տիպական նմուշների՝ երևակայության աշխարհի և երազների աշխարհի հետ: Մասնավորապես մենք, հենվելով այդ երկու ոլորտների ճանաչողական ոճերի վերլուծության արդյունքների վրա, կհետազոտենք գիտական հայեցողության աշխարհի կառուցվածքը:

**Պատրանքների տարբեր աշխարհներ**

Այս ենթագլխում մենք կքննարկենք ճանաչողական ոճի որոշ ընդհանուր հատկություններ, որոնք բնորոշ են իմաստների հիմնական վերջավոր ոլորտների՝ մյուս բոլոր առումներով տարասեռ խմբերին. խմբեր, որոնցից և ոչ մեկը մյուսի հետ համատեղելի չէ: Այս խումբը հայտնի է իբրև պատրանքների և երևակայության աշխարհ և ընդգրկում է անուրջների և երազանքների, ազատ խաղի, գեղարվեստական գրականության, հեքիաթների, առասպելների, կատակների թազավորությունները: Մինչ օրս փիլիսոփայությունը չի մտածել մեր երևակայության անթիվ կենսոլորտների կառուցման ինքնատիպու-

[89] Հունարեն արտահայտություն, թարգմանաբար՝ գլխավորապես – *խմբագրի ծանոթագրություն*:

թյան մասին: Դրանցից յուրաքանչյուրը սկիզբ է առնում հատուկ փոփոխությունից, որին ենթարկվում է մեր առօրյա կյանքի գերագույն իրականությունը, շնորհիվ այն բանի, որ, ինչպես արդեն նշեցինք, մեր բանականությունը, հեռանալով աշխատանքի աշխարհից և վերջինիս խնդիրներից, դրա որոշ շերտերից, հանում է իրականության բնութագիրը՝ փոխարինելով այն ենթադրաբար կեղծ պատրանքների համատեքստով: Մեր առջև դրված խնդրի պարզայում բավարար կլինի հպանցիկ հայացք ձգել այդ աշխարհների միջև առկա ընդհանրությունների վրա:

Պատրանքների անթիվ աշխարհներից որևէ մեկում ապրելով՝ մենք արդեն պարտավոր չենք տիրանալու արտաքին աշխարհին և հաղթահարելու վերջինիս օբյեկտների դիմադրությունը: Մենք ձերբազատվում ենք առօրեականության աշխարհի հանդեպ ունեցած մեր բնական դիրքորոշումը կառավարող պրագմատիկ շարժառիթից, ինչպես նաև մեզ սահմանափակող «միջօբյեկտային» տարածությունից և միջսուբյեկտային ստանդարտ ժամանակից: Մեզ այլևս չեն սահմանափակում մեր իրականության՝ հասանելի կամ վերականգնելի հասանելիության սահմանները: Արտաքին աշխարհում կատարվելիք իրադարձությունները մեզ չեն դրդում այլընտրանքներից ընտրություն կատարելու և չեն սահմանափակում մեր հնարավոր ձեռքբերումները:

Մինչդեռ պատրանքների աշխարհում չկան «հնարավոր նվաճումներ», եթե մենք այս բառակապակցությունը օգտագործում ենք որպես «իրագործելի» բառի հոմանիշ: Երևակայող *Ես-ը* չի աշխատում և չի իրագործում ոչինչ այն իմաստով, որը մինչ այժմ հասցրել ենք ձևակերպել և որոշակիացնել: Երևակայության գործունեությունը հնարավոր է նախազծել միայն այնքանով, որքանով այն կարող է պատկերացվել նախապես և ներառվել ծրագրերի աստիճանակարգում: Սակայն, նախագիծ հասկացության իմաստը ամբողջությամբ չէ, որ համապատասխանում է մինչ այժմ մեր կողմից վերջինիս վերագրված իմաստին: Նախազծված գործողությունը միշտ երևակայորեն իրականացված ակտ է, այն է՝ երևակայված ապագա ապառնի ժամանակում: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ պատրանքը, որպես այդպի-

սին, մշտապես զրկված է անրջելիի իրականացման մտադրությունից: Այլ կերպ ասած, նպատակային «պարտադրանքը» բացակայում է: Օգտագործելով հուսսերլյան «գաղափարների» լեզուն՝ կարելի է ասել, որ երևակայական ցանկացած գործողություն «չեզոք» է, այսինքն՝ զուրկ է գիտակցության կոնկրետ դիրքորոշումից:

Այնուամենայնիվ, հարկավոր է հստակ տարբերակում դնել երևակայական գործունեության՝ որպես մեր տարերային կյանքի դրսևորման, և անրջելի կերպարների միջև: Գործողությունը կարող է պատկերացվել որպես իսկական գործողություն, և կամ նույնիսկ աշխատանքը՝ մեր կողմից արդեն իսկ նախորդ ենթաբաժիններում տրված սահմանումների իմաստով, կարող է երևակայվել իբրև նախապես կազմված ծրագրի հետ հարաբերակցվող, իբրև սեփական յուրահատուկ շարժառիթներն ունեցող («նրա համար, որ» և «որովհետև»), ինչը բխում է ընտրությունից և որոշումների ընդունումից և զբաղեցնում իր տեղը ծրագրերի աստիճանակարգում: Ավելին, այն կարող է պատկերացվել որպես նախագծի իրագործման մտադրություն և ներկայացվել արտաքին աշխարհին ներկառուցված պատրանքում: Միայն թե, այս ամենը վերաբերում է և ամբողջովին պարտական է *երևակայման* գործողության մեջ արտադրված կերպարներին: Երևակայման ակտիվությունն ինքնին մշտապես ապարդյուն է և ցանկացած պարագայում մնում է աշխատանքի աշխարհում նշանակալի ծրագրերի և նպատակների աստիճանակարգից դուրս:

Երևակայության բուն ակտիվությունն ինքնին միշտ անարդյունք է և ցանկացած պարագայում դուրս է մնում աշխատանքի աշխարհում կարևոր ծրագրերի և նպատակների աստիճանակարգից: Երևակայությունն ինքնուրույն չի ստեղծում որևէ փոփոխություն արտաքին աշխարհում: Բայց ինչպե՞ս է այսպես ստացվում: Դոն Քիշոտն արտաքին աշխարհի մեջ չէ, երբ հարձակվում է հողմաղացների վրա՝ իր երևակայության մեջ պատկերացնելով, որ դրանք հսկաներ են: Արդյո՞ք իր այս վարքը կանխորոշված չէ աշխատանքի աշխարհում գործառող շարժառիթներով, այն է՝ իր հսկաներին սպանելու «նրա համար, որ» շարժառիթով և իր ասպետական առաքելության բարձունքին լինելու

«որովհետև» շարժառիթով, որն ի թիվս այլ բաների ենթադրում է չար հսկաների դեմ պայքարելու պարտականությունը: Արդյո՞ք այս ամենը ներառված չէ Դոն Քիշոտի կյանքի ծրագրերի աստիճանակարգում: Պատասխանենք այսպես՝ Դոն Քիշոտը, գործելով նկարագրված ձևով, չի ներխուժում աշխատանքի աշխարհի սահմաններ: Նրա՝ իբրև իրողություններին դիմակայող երևակայողի համար, իր աշխատանքի աշխարհի իրականության մեջ չկան երևակայական հսկաներ, փոխարենը՝ այնտեղ իրական հսկաներն են: Հետին թվով նա ընդունում է, որ իր առջև հայտնված օբյեկտի մեկնաբանությունը արժեզրկվել է հետագա իրադարձություններով: Սա նույն տեսակի փորձառություն է, ինչ մենք բոլորս ունենում ենք բնական դիրքորոշման մեջ, երբ հայտնաբերում ենք, որ այն, ինչը մենք հեռվից ծառի տեղ էինք ընդունել, իրականում մարդ էր[90]: Բայց հետո Դոն Քիշոտը արձագանքում է այլ կերպ, քան մենք կարձագանքեինք նմանատիպ իրավիճակներում:

Նա չի հաշտվում «իր փորձի արժեզրկմանը», չի ընդունում, որ խաբվել է և չի համաձայնում նաև, որ իր վրա հարձակված օբյեկտները միշտ եղել են հողմաղացներ, այլ ոչ հսկաներ: Իհարկե, նա ստիպված է ընդունել հողմաղացների արդիական իրականությունը, որոնց դիմադրությանը նա զիջել է, բայց այդ փաստը մեկնաբանում է այնպես, կարծես այն ոչ մի կապ չի ունեցել իրական աշխարհի հետ: Այս փաստը բացատրելու համար նա դիմում է սեփական տեսությանը, թե իբր իր ոխերիմ թշնամին՝ կախարդը, հավանաբար վերջին պահին ավելի քան իրական հսկաներին վերածեց հողմաղացների: Եվ միայն հիմա, հանգելով այս եզրակացությանը, Դոն Քիշոտն աներկբա հեռացրեց իրականության բնութագիրը աշխատանքի աշխարհից և տեղափոխեց այն սեփական կերպարների աշխարհ: Վերջինիս տեսանկյունից հողմաղացները ոչ թե իրականություն են, այլ պարզապես թվացյալ պատկերներ կամ երևակայություն: Կախարդների և հսկաների գոյությունը և վերջիններիս վերածումը հողմաղացների (որքան էլ դա անհամատե-

---

[90] Այդ իրավիճակը ուշադրությամբ վերլուծվել է Հուսերլի «Գաղափարներ»-ում՝ § 103, ինչպես նաև՝ Husserl, E. (1939) Erfahrung und Urteil, Prague, 1939, s. 99 և հաջորդող էջերում, 370 և հաջորդող էջերում:

դելի է Դոն Քիշոտի, Սանչո Պանսի և սափրիչի աշխատանքի աշխարհում գերիշխող բնական դիրքորոշման հետ) բավականին լավ է համատեղվում Դոն Քիշոտի այլ երևակայությունների հետ, որոնք առկա են իր անձնական երևակայության վերջավոր ոլորտում, որտեղ դա նույնքան «իրական» է, որքան մնացածը: Mutatis mutandis[91], նման վերլուծություն կարելի էր անել նաև այլ քվազիիրականությունների նկատմամբ, ինչպիսիք են նախնադարյան մարդու մոգական աշխարհը, մանկական խաղի հորինված աշխարհը և այլն:

Եթե պատկերացնենք ստացված եզրակացությունը ավելի ընդհանուր առումով, ապա ստացվում է, որ այն համահունչ է Ջեյմսի այս պնդմանը. «Ցանկացած օբյեկտ, որին ոչինչ չի հակասում, ipso facto դառնում է հավատքի առարկա և ենթադրվում է որպես բացարձակ իրականություն» : «Եթե ես պարզապես թևերով ձի եմ երազում, իմ ձին ոչնչին չի խանգարում, և, հետևաբար, նրան ոչինչ հնարավոր չի հակադրել: Այս ձին, նրա թևերը, նրա տեղը՝ բոլորը, հավասարապես իրական են: Այս ձին գոյություն ունի ոչ այլ կերպ, քան թևերով, ավելին՝ գոյություն ունի այստեղ, քանի որ այս տեղը գոյություն ունի ոչ այլ կերպ, քան որպես այս ձիու տեղը և չի հավակնում կապ ունենալ աշխարհի որևէ այլ տեղերի հետ: Բայց եթե այս ձիու հետ ես ներխուժում եմ մի աշխարհ, որը հայտնի է այլ կերպ, և ասում եմ, օրինակ, «դա իմ զամբիկ Մեգին է, որի մոտ զույգ թևեր են աճել, մինչև նա կանգնած էր իր տաղավարում», - ամեն ինչ արմատապես փոխվում է, քանի որ այժմ ձին և տեղը նույնացվում են ձիու և այլ կերպ հայտնի տեղի հետ, և այն, ինչ ես գիտեմ այս օբյեկտների մասին, անհամատեղելի է նրա հետ, ինչ ես պատկերացնում էի առաջին դեպքում: «Մե՞գին, իր տաղավարո՞ւմ, թևերո՞վ: Ո՛չ, երբեք»: Թևերն անիրատեսական են, դա ինձ միայն թվաց:

[91] Միջնադարյան լատինական արտահայտություն է, որը նշանակում է «փոփոխված բաներով, որոնք պետք է փոխվեն» կամ «փոխելով այն, ինչ պետք է փոխվի» կամ «անհրաժեշտ փոփոխությունների ներմուծումից հետո» - *խմբագրի ծանոթագրություն:*

Հուսերլը, որն ավելի խորն է ուսումնասիրել այստեղ ներկայացվող հիմնախնդիրը, քան որևէ այլ փիլիսոփա[92], գալիս է նույն եզրակացության: Նա առաջարկում է տարբերակում դնել գոյության պրեդիկատների (Existenzialprädikationen) և իրականության պրեդիկատների (Wirklichkeitsprädikationen) միջև: Առաջինին հակադրվում են «անգոյության» պրեդիկատները, երկրորդին՝ «անիրականության», պատրանքների պրեդիկատները: Հետազոտելով իրականության պրեդիկատների աղբյուրը՝ Հուսերլը հանգում է հետևյալ եզրահանգմանը. «Բնական դիրքորոշման համար ի սկզբանե (մինչ ռեֆլեքսիան) գոյություն չունի «իրական» պրեդիկատը և «իրականություն» կատեգորիան: Միայն, երբ մենք երևակայում ենք և տեղափոխվում երևակայության մեջ կյանքի բնական վիճակից (այսինքն՝ կեղծ փորձառություններն իրենց բոլոր ձևերում) դեպի տրված իրողություններ և դրանով դուրս ենք գալիս եզակի, պատահական երևակայության և դրա արդյունք հանդիսացող պատրանքի սահմաններից՝ վերցնելով թե՛ առաջինը, թե՛ երկրորդը՝ իբրև երևակայելու և պատրանքի հնարավոր օրինակներ, մենք ստանում ենք մի կողմից պատրանքի հասկացությունը (և հետևաբար՝ երևակայելու), իսկ մյուս կողմից՝ «հնարավոր վերապրումը որպես այդպիսին» և «իրականություն» հասկացությունները… Մենք չենք կարող ասել, որ երևակայողը և երևակայական աշխարհում ապրողը («երազողը») պատրանքներին վերաբերում է իբրև պատրանքների. նա փոփոխել է իրականությունները, «իրականություններն ինչպես եթե» («realities as if»)… Պատրանք և իրականություն հասկացությունները կարող է ունենալ միայն նա, ով ապրում է սեփական վերապրումներում և այդտեղից ձգտում դեպի երևակայությունների և պատրանքների աշխարհ, այն պայմանով, որ դրանք չեն համապատասխանում նրա փորձառություններում առկա վերապրումներին:

Դոն Քիշոտի վարքի մեր վերլուծությունից և Հուսերլից մեջբերված տողերից կարելի է մեկ այլ կարևոր պատկերացում կազմել: Ապրումների համատեղելիությունը, որը բնորոշ է աշխատանքի աշխարհին, երևակայության արքայությունում բացակայում է, սակայն համաձայ-

[92] Husserl, E. (1939) Erfahrung und Urteil, Prague, §§ 39–42, s. 195–214.

նեցվածության տրամաբանական կառուցվածքը կամ, Հուսերլի խոսքով, գոյության և անգոյության պրեդիկատները մնում են ուժի մեջ: Ես կարող եմ իմ երևակայության մեջ պատկերացնել հսկաներ, կախարդներ, թևավոր ձիեր, կենտավրեր, նույնիսկ՝ perpetuum mobile, բայց երբեք չեմ կարող ճշգրիտ պատկերացնել տասանկյուն երկրաչափական պատկեր, բացառությամբ, եթե կանգ առնեմ (ինչպես ես ստիպված կլինեի դա անել ամբողջովին արթուն գիտակցության մեջ) դատարկ եզրույթների կույր համադրման վրա: Այլ կերպ ասած, երևակայության թագավորության մեջ կարելի է հաղթահարել միայն փաստացի անհամատեղելիությունը, բայց ոչ՝ տրամաբանական:

Վերջին պնդման հետևանքն այն է, որ պատրանքների աշխարհում փաստային իրավիճակներին հասնելու և վերականգնելու հնարավորություն չկա այն իմաստով, որով դրանք գոյություն ունեն աշխատանքի աշխարհում: Այն, ինչ վերջինում հնարավորություն է, առաջինում այն է, ինչը հռոմեական իրավաբանները կոչում են conditio potestativa[93], այսինքն՝ այն հանգամանքը, որն առաջացնելը կամ չառաջացնելը առավել շահագրգիռ կողմի հայեցողության տակ է: Կարելի է ասել, որ երևակայող անհատը իր հնարավորությունների տերն է. սեփական երևակայությունների դատարկ կանխագիտումները նա կարող է սեփական ցանկությամբ լցնել ցանկացած բովանդակությամբ, քանի դեռ այստեղ նա ունի ընտրության լիարժեք ազատություն: Այս դիտարկումը բերում է մեզ երևակայության աշխարհի ժամանակային հեռանկարներին, որոնք բացառիկ կարևորություն ունեն վերջինիս կազմավորման համար: Երևակայությունների ժամանակային չափմանը վերաբերող իր սքանչելի հետազոտություններում Հուսերլը նշել է, որ պատրանքները չունեն իրենց ամրագրված դիրքը օբյեկտիվ ժամանակի կարգում: Հետևաբար պատրանքները անհատականացված չեն, և նույնականության կատեգորիան դրանց հանդեպ կիրառելի չէ: «Միևնույն» պատրանքը կարող է կրկին հայտնվել երևակայելու միավոր

[93] Պայմանագրում պարունակվող պայմանը, որի կատարումն ամբողջությամբ գտնվում է պայմանագրի կողմերից մեկի վերահսկողության ներքո – *խմբագրի ծանոթագրություն:*

ակտիվության անընդհատ շարունակականության մեջ, որի միասնությունը ապահովվում է ներքին ժամանակի շարունակականությամբ, որում և այդ ակտիվությունը տեղի է ունենում: Բայց երևակայության տարբեր գծերին պատկանող պատրանքները կամ, ըստ մեր տերմինաբանության, իմաստի տարբեր վերջավոր ոլորտները չեն կարող ենթարկվել համեմատության՝ ըստ դրանց նույնականության և նմանության առարկայի: Անիմաստ է հարցնել, թե արդյո՞ք կախարդը մի հեքիաթից նույնն է, ինչ մյուսից:

Մեր առջև դրված խնդիրը չի պահանջում այլևս խորությամբ հետևել Հուսերլի՝ ներկայացված խնդիրների կոնստիտուտիվ վերլուծությանը: Սակայն, միևնույն ժամանակ, կարևոր է ընդգծել, որ երևակայական *Ես-ը* իր պատրանքներում կարող է ոչնչացնել ստանդարտ ժամանակի բոլոր հատկությունները՝ բացառությամբ վերջինիս անշրջելիության: Կարելի է երևակայել ցանկացած իրադարձություն այնպես, ասես վերջինս տեսանելի է, այսպես ասած, ժամանակի դանդաղեցման կամ արագացման պրիզմայում: Երազների, պատրանքների և երևակայությունների մեջ սուզվելով՝ ես, միևնույն է, շարունակում եմ ծերանալ: Այն փաստը, որ ես կարող եմ վերամոդելավորել սեփական անցյալս ներկայիս երևակայությամբ, չի հակասում տվյալ փաստարկմանը. ես, միևնույնն է, շարունակում եմ ծերանալ:

Իմ անուրջներում ես կարող եմ պատկերացնել ինձ՝ ուզածս ցանկացած դերում: Բայց ես, այդ կերպ վարվելով, կասկածի տակ չեմ դնում այն իրողությունը, որ իմ ամբողջական *Ես-ի* բոլոր հնարավոր դերերից երևակայական *Ես*-ս «Me»-ի ընդամենը մի մասն է: Իմ պատրանքներում ես անգամ կարող եմ փոխել ֆիզիկական տեսքս, սակայն այսօրինակ ընտրության ազատությունը սահմանափակվում է մարմնիս եզրագծերի նախնական վերապրումներով: Դրանք շարունակում են մնալ այնպիսին, ինչպիսին էին անկախ այն բանից, թե ես ինքս ինձ երևակայում եմ որպես գաճաճի, թե հսկայի:

Երևակայության գործունեությունը կարող է լինել ինչպես առանձնացված, այնպես էլ սոցիալական, հետևապես՝ «Մենք հարաբերություններ»-ում և դրանցից ածանցվող ձևերում և ձևափոխություննե-

րում տեղ ունեցող: Առանձնացված պատրանքների օրինակներ են հենց երազանքներն ու անուրջները, իսկ սոցիալական երևակայությունների օրինակ են երեխաների՝ փոխադարձ ուղղվածություն ունեցող, միջսուբյեկտային, մտացածին կանոններից սերող խաղերը: Մեկ այլ կողմից, երևակայության գործունեության օբյեկտներ կարող են դառնալ այլ մարդիկ, ինչպես նաև սոցիալական հարաբերությունների, գործողությունների և արձագանքների տիպերից ցանկացածը: Երևակայող *Ես-ի* գործողությունների ազատությունը չափազանց մեծ է: Հնարավոր է նույնիսկ, որ երևակայությունը ներառի երևակայելի այլոց հետ երևակայական համագործակցություն, ընդհուպ այն, որ վերջիններիս երևակայելի արձագանքները կարող են աջակցել կամ ամբողջովին ոչնչացնել պատրանքներս:

**Երազների աշխարհը**

Եթե սթափությունը մենք անվանում ենք գիտակցության՝ կյանքի հանդեպ լիարժեք ուշադրությանը համապատասխանող գերագույն լարվածություն, ապա երազը կարելի է սահմանել որպես լիակատար հանգստի վիճակ՝ անջատում և հեռացում կյանքից: Քնած Ես-ի մոտ չկա որևէ պրագմատիկ հետաքրքրություն՝ փոխակերպելու իր աղոտ ընկալումները մասնակի պարզություն և հստակություն ունեցող ընկալումների: Այլ կերպ ասած, նա հետաքրքրված չէ դրանք փոխակերպելու ապերցեպցիաների: Այնուամենայնիվ, այն շարունակում է ընկալել, հիշել և մտածել: Շարունակվում են պահպանվել նաև սեփական մարմնի, վերջինիս դիրքի, քաշի, սահմանների, ինչպես նաև առհասարակ լույսի, ձայնի, ջերմության և այլնի ընկալումները, թեև, միևնույն ժամանակ, բացակայում է լսելու, տեսնելու, ուշադրություն դարձնելու և նման ցանկացած այլ գործողություն, որը կարող էր դարձնել այդ ընկալումները ապերցեպտիվ: Բացի այդ, շարունակվում են պահպանվել նաև փոքր, արթուն եղած վիճակում կուտակված անգիտակցական ընկալումները. ընկալումներ, որոնք խոսքային արտահայտում դեռևս չեն ստացել: Վերջիններս կյանքի հանդեպ ուշադրության զրաքննությունից խույս տալով՝ մեծ նշանակալիություն են ստա-

նում երազների աշխարհում: Թեև ընկալումները չեն դառնում ակնհայտ ու հստակ և շարունակում են մնալ աղոտ վիճակում, դրանք այլևս չեն թաքնվում և չեն խեղաթյուրվում *ակտիվ*, պրագմատիկ պայմանավորում ունեցող ուշադրությամբ: Միայն *պասիվ* ուշադրությունը՝ ներգործությունների ընդհանուր գումարը, որն իրականանացվում է փոքր ընկալումներով և միայն այն է որոշակիացնում երազ տեսնողի հետաքրքրությունը և սահմանում այն թեմաները, որոնք դառնում են նրա երազների թեմաներ: <>

Երազ տեսնող Ես-ը չի աշխատում և չի գործում: Ես պնդում եմ, որ երևակայության աշխարհները բնութագրվում են գործողությունների ազատականությամբ այն դեպքում, երբ երազների աշխարհը զրկված է նման ազատությունից: Երևակայող Ես-ը, իր երևակայության դատարկ ակնկալիքները ցանկացած բովանդակությամբ լցնելով, կարող է վերջիններիս իրականության երանգ հաղորդել: Նա կարող է ուզածի պես մեկնաբանել իր իսկ տնօրինության տակ գտնվող հնարավորությունները: Մինչդեռ երազ տեսնողը ոչ միայն չունի գործողությունների ազատություն, այլև սեփական կամքով սեփական հնարավորությունները ազատ տնօրինելու ու վերահսկելու հնարավորություն: Մասնավորապես, գիշերային մղձավանջը հստակ արտացոլում է երազների աշխարհում տեղի ունեցած իրադարձության անխուսափելիությունը և երազ տեսնողի անզորությունը որևէ կերպ իրավիճակի վրա ազդելու գործում:

Այս ամենը, սակայն, չի նշանակում, թե երազների կյանքը սահմանափակվում է միայն պասիվ գիտակցությամբ: Ընդհակառակը, գիտակցության գործունեության մեծ մասը, որը Հուսերլն անվանում է մտադրված գործունեություն (որն իհարկե չպետք է շփոթել կանխամտածված գործունեության հետ), պահպանվում է նրանում՝ առանց աշխատանքի արտաքին աշխարհին ուղղված լինելու և ակտիվ ուշադրության կենտրոնում գտնվելու: Երազների կյանքը զուրկ է նպատակներից և նախագծերից: Իրական կամքը, իրական նախագծերը և իրական նպատակները երազների աշխարհում բացակայում են. դրանք ուղղակի գոյություն չունեն: Երազներում արձանագրվող

դրանց տարրերն էլ երազ տեսնող Ես-ից չէ, որ սկիզբ են առնում, այլ արթուն կյանքից: <>

Երազների աշխարհի ժամանակային հեռապատկերն ունի բավականին խճճված կառուցվածք: Նախորդողն ու հաջորդողը, ներկան, անցյալն ու ապագան կարծես իրար են խառնված. ապագայի իրադարձությունները ընկալվում են իբրև անցյալի իրադարձություններ. անցյալի և անցյալում կատարված-ավարտված իրադարձությունները ենթադրվում են իբրև բաց, փոփոխության ենթակա և հետևաբար՝ «ապագայականության» տարօրինակ բնույթ ունեցող: Երազներում կատարվող իրադարձությունները թվում են (միայն թվում են) մեկուսացված և ներքին ժամանակային հոսքից (durée) անկախ: Դրանք չունեն իրենց տեղն օբյեկտիվ ժամանակային հաջորդականությունում: Դրանք պտտվում են ներքին ժամանակի սուբյեկտիվության մեջ, թեև երազների աշխարհի մեջ սողոսկում են անցյալ Ես-ի կողմից վերապրված և այժմ փշուր-փշուր եղած ստանդարտ ժամանակի հատվածներ: *Durée*-ի անշրջելիությունը երազների աշխարհում պահպանվում է: Միայն արթնացող միտքն է, որ երազը հիշելիս երբեմն ունենում է հնարավոր շրջելիության պատրանք:

Վերջին նկատառումը լրջագույն խոչընդոտ է վեր հանում, որն ամեն անգամ ի հայտ է գալիս երազների և երևակայության երևույթների հետ աշխատելիս: Այն պահից ի վեր, երբ ես մտածում եմ դրանց մասին, ես արդեն իսկ քնած չեմ և չեմ երևակայում: Ես արթուն եմ և օգտվում եմ աշխատանքի աշխարհին պատկանող խոսքի և մտածողության միջոցներից, մասնավորապես՝ հասկացություններից, որոնք ենթարկված են համաձայնեցվածության և համատեղելիության սկզբունքներին: Որքանո՞վ ենք մենք համոզված, որ արթնացածը կարող է իրապես պատմել իր երազը: Այստեղ մենք բախվում ենք լրջագույն դիալեկտիկական դժվարությանը՝ երազ տեսնողը զրկված է ուղղակի հաղորդակցության հնարավորությունից, որը դուրս չի գալիս այն ոլորտի սահմաններից, որին վերաբերում է: Ուստի մենք կարող ենք մոտենալ երազների և երևակայության ոլորտներին միայն «անուղղակի հաղորդակցության» միջոցով: Այս եզրույթը մենք փոխա-

ռում ենք Կյերկեգորից, որն առաջարկում է այս երևույթների աներևակայելի վերլուծություն: Ի տարբերություն գիտնականի կամ փիլիսոփայի՝ բանաստեղծը և նկարիչը շատ ավելի մոտ են կանգնած երազների և երևակայության աշխարհների համաչափ մեկնաբանմանը, քանի դեռ նրանց հաղորդակցության կատեգորիաներն ինքնին վերաբերում են երևակայության ոլորտին: Նրանք կարող են եթե ոչ հաղթահարել, ապա գոնե թափանցիկ դարձնել այստեղ ընկած դիալեկտիկ կոնֆլիկտը:

Առաջադրված խնդիրներով համեստորեն սահմանափակելով՝ մենք, այնուամենայնիվ, չպետք է խուսափենք վերոնշյալ դժվարություններից: Մեր հիմնական նպատակն է պատկերացնել երևակայման և երազների ոլորտներին բնորոշ կոնկրետ ճանաչողական ոճերի յուրահատկությունները և բացատրել դրանք՝ որպես առօրյա կյանքի աշխարհի վերապրման ճանաչողական ոճի ածանցյալներ: Հետևաբար մենք մեզ իրավունք ենք վերապահում երևակայության և երազների երևույթների նկատմամբ այս աշխարհից բխող հասկացությունները կիրառելու: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հասկանալ այս դիալեկտիկական դժվարության կարևորությունը, քանի որ մենք կրկին բախվելու ենք վերջինիս գիտական հայեցողության վերլուծություններում, որոնց շրջանակներում արդեն կհետազոտենք գիտության կողմից վերջինիս հաղթահարման համար ստեղծված կոնկրետ միջոցները, ավելի կոնկրետ՝ գիտական մեթոդը:

Երևակայության գործընթացը կարող է ընթանալ ինչպես մենակության մեջ, այնպես էլ սոցիալապես, և այդ ժամանակ այն առկա է Մենք-վերաբերմունքում, ինչպես նաև դրա բոլոր ածանցյալ դրսևորումներում և ձևափոխումներում: Առաջին դեպքի օրինակ են երազները, երկրորդի՝ երեխաների՝ փոխադարձաբար կողմնորոշված միջսուբյեկտիվ խաղը կամ որոշ այլ երևույթներ, որոնք ուսումնասիրվում են զանգվածների հոգեբանությամբ: Մյուս կողմից, ուրիշները, ինչպես և ցանկացած տիպի սոցիալական հարաբերությունները, սոցիալական գործողությունները և արձագանքները, կարող են դառնալ երևակայության օբյեկտներ: Երևակայող Ես-ի հայեցողության ազատությունը

այստեղ չափազանց մեծ է: Հնարավոր է նույնիսկ, որ անուրջը կարող է երևակայական համագործակցության մեջ մտնել մարդու հետ, այն աստիճանի, որ վերջինիս երևակայական արձագանքերը կհաստատեն կամ չեղյալ կհայտարարեն իմ սեփական երևակայությունները:

**Գիտական տեսության աշխարհը**

Սահմանափակվելով աշխարհի՝ որպես գիտական հետազոտման օբյեկտի վերլուծությամբ, մենք մտադրված կերպով շեղվում ենք հայեցողության բազմաթիվ դիրքորոշումներից, որոնք հաճախ տեղ են գտնում մեր աշխատանքային գործունեության մեջ, և որոնց, ի հակադրություն աշխատանքի գործնական դիրքորոշումների, նույնպես կարելի է անվանել տեսական դիրքորոշումներ: Երբ կյանքում ի հայտ եկող լրջագույն ճգնաժամային պահերին մենք «նստում ենք» և կրկին ու կրկին մտածում մեր խնդիրների մասին, երբ մենք կառուցում, մերժում կամ ձևափոխում ենք մեր նախագծերն ու ծրագրերը այնքան, մինչև կայացնենք որևէ որոշում, օրինակ, երբ մենք՝ իբրև հայրեր, մտածում ենք երեխաների դաստիարակության մասին կամ իբրև քաղաքական գործիչներ՝ խորհում ենք հասարակական կարծիքի մասին, մենք տրվում ենք տեսական հայեցողությանը՝ բառի ամենալայն իմաստով: Այնուամենայնիվ, ցանկացած մտորում տեղի է ունենում հանուն գործնական նպատակների ու խնդիրների և կառուցում է ոչ թե իմաստների հիմնական ոլորտը, այլ տեսական հայեցողության «անկլավը» աշխատանքի աշխարհում: Մտորումների ևս մեկ տիպ, որը մենք գիտակցաբար դուրս ենք թողնում ուսումնասիրման շրջանակից, մաքուր հայեցողությունն է, որը հիմնված չէ գործառական կանոնների պարտադիր կիրառման անհրաժեշտությամբ միայն իրագործվող նախագծի վրա: Դրա վառ օրինակն է կրոնական խորհրդածությունը: Այստեղ մեզ հետաքրքրում է միմիայն և բացառապես գիտական տեսությունը:

Գիտական տեսաբանումը (հետայսու «տեսություն» և «տեսաբանում» հասկացությունները կօգտագործվեն բացառապես այս նեղ իմաստով) որևէ գործնական խնդրի չի ծառայում: Վերջինիս նպատա-

կը ոչ թե աշխարհի «զավթումն» է, այլ դրա դիտարկումը և, թերևս, հասկացումը:

Այստեղ ես կցանկանայի կանխարգելել հնարավոր առարկությունը: Արդյո՞ք գիտության նպատակը աշխարհին տիրանալը չէ:Արդյո՞ք բնական գիտությունների կոչումը տիեզերական ուժերի նվաճումը չէ, հասարակական գիտություններինը՝ վերահսկողության իրականացումը, իսկ բժշկական գիտություններինը՝ հիվանդությունների դեմ պայքարը: Ի վերջո, արդյո՞ք մարդու կողմից գիտությամբ զբաղվելու պատասխանատվությունն ու բեռը իր վրա վերցնելու միակ շարժառիթը սեփական առօրյա կյանքի բարելավմանը և մարդկության երջանկության որոնումներին ծառայող անհրաժեշտ միջոցների ստեղծումը չէ: Իհարկե, այս ամենը այնքան ճիշտ է, որքան և պարզունակ, բայց որևէ կերպ չի առնչվում մեր առջև դրված խնդրին: Բնականաբար աշխարհը ավելի լավը դարձնելու ցանկությունը գիտությամբ զբաղվելուն դրդող ուժեղագույն շարժառիթներից մեկն է, իսկ գիտական տեսության կիրառումը, անկասկած, հանգեցնում է աշխարհին տիրելու տեխնիկական միջոցների արարմանը: Այնուամենայնիվ, ո՛չ այդ շարժառիթները և ո՛չ էլ դրանց արդյունքների կիրառումը՝ ուղղված «երկրային» խնդիրների լուծմանը, գիտական տեսաբանման գործընթացի մաս չեն կազմում: Գիտական տեսաբանումը մի բան է, աշխատանքի աշխարհում գիտությամբ զբաղվելը՝ լիովին այլ: Մեզ հետաքրքրում է նշվածներից առաջինը, թեև մեր հիմնական խնդիրներից է պարզել, թե ինչպես կարող է բոլորիս համար ընդհանուր կենսաշխարհը դառնալ տեսական հայեցողության օբյեկտ, և ինչպես կարող է այդ հայեցողության արդյունքը կիրառվել աշխատանքի աշխարհում:

Տեսական բոլոր խորհրդածությունները իրենց էությամբ «գործողություններ» են, ավելին՝ «կատարումներ» այն իմաստով, որով մենք արդեն սահմանել ենք: Դրանք գործողություններ են, քանզի բխում են մեր տարերային կյանքից և իրականացվում են նախագծին համապատասխան, և կատարումներ են, քանզի դրանց ավելանում են նախագծի իրականացման և նախագծված արդյունքի ստացման մտադրությունները: Այսպիսով, գիտական տեսաբանումը ունի իր սեփական «նրա

համար, որ» և «որովհետև» շարժառիթները և ծրագրավորված է՝ գիտական գործունեությամբ զբաղվելու որոշմամբ պայմանավորված ծրագրերի աստիճանակարգում: (Միայն այն, որ տեսաբանումը օժտված է «գործողության բնույթով», արդեն բավարար է երազից այն տարբերելու համար): Բացի այդ, գիտական տեսաբանումը նաև նպատակաուղղված գործունեություն է (և այդ նպատակաուղղվածությունը բավական է պարզ երևակայությունից այն տարբերելու համար), ընդ որում, վերջինիս նպատակը գիտական խնդրին լուծում տալն է: Այնուամենայնիվ, տեսական խորհրդածությունները աշխատանքի ակտեր չեն, քանզի դրանք չեն կառուցվում արտաքին աշխարհում: Իհարկե, տեսական խորհրդածությունները հենվում են աշխատանքի ակտերի վրա (օրինակ՝ չափումները, գործիքակազմի հետ աշխատանքը, գիտափորձերի իրականացումը) և կարող են փոխանցվել միմիայն աշխատանքի ակտերով (ինչպես, օրինակ՝ հոդվածներ գրելը կամ դասախոսելը): Աշխատանքի աշխարհում կատարվող և վերջինիս պատկանող այդ բոլոր գործողությունները իրենցից ներկայացնում են կամ տեսաբանման պայմաններ, կամ հետևանքներ, բայց չեն պատկանում տեսական դիրքորոշմանը որպես այդպիսին, որից հեշտությամբ տարանջատելի են: Համանմանորեն, մենք պետք է տարբերակումներ դնենք գիտնականի՝ իբրև այլ մարդկանց մեջ իր առօրյա կյանքով ապրող և գործող մարդու, և գիտնականի՝ իբրև մտածող-տեսաբանի միջև, որը հետաքրքրված է ոչ թե աշխարհի զավթմամբ, այլ դիտարկման միջոցով գիտելիքի ձեռքբերմամբ:

Չեզոք դիտարկողի այս դիրքորոշումը հենվում է կյանքի հանդեպ յուրահատուկ ուշադրության (attention à la vie) կենտրոնացման վրա, ինչը ցանկացած տեսաբանման անհրաժեշտ նախապայմանն է: Դրա էությունը բնական դիրքորոշման գործնական ոլորտում գերակայող համապատասխանությունների համակարգի լուծարման մեջ է: Կյանքի՝ իբրև ամբողջի կշիռը, այն, ինչ Հուսերլն անվանում է *Lebenswelt* (կենսաշխարհ), սկզբնապես տրված է ինչպես աշխատանքի աշխարհում ապրող մարդուն, այնպես էլ տեսաբանող մտածողին: Այնուամենայնիվ, առաջինի համար (աշխատանքի աշխարհում ապրող մարդու)

համապատասխան կլինեն այս աշխարհի այլ հատվածներ և տարրեր, այնինչ երկրորդի (տեսաբանող մտածողի) համար՝ լրիվ այլ: Վերնամասում մենք ցույց տվեցինք, որ բնական դիրքորոշման վիճակում գտնվող մարդու համար համապատասխանությունների համակարգը, որով նա առաջնորդվում է, սկիզբ է առնում նրանից, ինչ մենք անվանեցինք հիմնարար տագնապի առաջնային վերապրում: Մտածող-տեսաբանը, «թռիչք» կատարելով դեպի անկողմնակալ դիրքորոշում, միանգամից ազատվում է հիմնարար տագնապից և դրանից բխող հնարավոր հույսերից և վախերից: Նա ևս ունի ակնկալիքներ, որոնք վերաբերում են մի կողմից նրա նախորդ վերապրումների պահոցին, մյուս կողմից՝ նրա յուրահատուկ համապատասխանությունների համակարգին, որին մենք կանդրադառնանք փոքր-ինչ ուշ: Ամեն դեպքում, ի տարբերություն առօրյա կյանքում գտնվող մարդու, նա հետաքրքրված է նրանով, թե արդյոք իր կանխատեսումները (եթե իրականացվեն) օգտակար կլինեն իր գործնական խնդիրների լուծման համար, թե ոչ: Նրան հետաքրքրում է միայն, թե արդյո՞ք դրանք կդիմանան հետագա վերապրումների փորձությանը: Սա ենթադրում է որոշակի հեռացում կյանքի նկատմամբ հետաքրքրությունից և սթափության վիճակի անջատում:

Քանի դեռ տեսական միտքը ներկառուցված չէ արտաքին աշխարհին, այն շրջելի է (այն իմաստով, որով մենք արդեն սահմանել ենք): Սա նշանակում է, որ այն ենթակա է մշտական վերանայման, կարող է չեղարկվել, «ջնջվել», «զրոյացվել», ձևափոխվել՝ առանց արտաքին աշխարհում փոփոխություններ առաջ բերելու: Տեսական մտածողության ընթացքում ես կարող եմ կրկին ու կրկին վերադառնալ ելակետային ենթադրություններիս, չեղարկել եզրակացություններս, զրոյացնել վճիռներս, ընդլայնել կամ նեղացնել հետազոտվող խնդիրների շրջանակը և այլն:

Վերջին դրույթից բխում է տեսական մտքի առանձնահատկությունը, որը կախված չէ աշխարհի այն հատվածից, որը գտնվում է մտածողի հասանելիության տիրույթում:<>

Ինչպես արդեն տեսանք, «մեր հասանելիության սահմաններում գտնվող աշխարհ» հասկացությունը կախված է մեր մարմնից, որը հասկացվում է իբրև այն կոորդինատային համակարգի կենտրոնը, որի շուրջ մենք կազմակերպում ենք աշխարհը: Ի տարբերություն առօրյա կյանքում գործառող մարդու՝ մտածողը չի փնտրում աշխարհի համապատասխան հատվածում (որն անվանում է միջավայր) սեփական հոգեֆիզիկական գոյությունից սերող իր անձնական և մասնավոր պրագմատիկ խնդիրների լուծումը: Տեսաբան-մտածողին հետաքրքրում են այնպիսի խնդիրներ և լուծումներ, որոնք իրենց բնույթով արդիական են բոլորի համար, ամենուր և միշտ, երբ և որտեղ առկա են իր ենթադրության մեջ ընկած պայմանները: Դեպի տեսական մտածողության ոլորտ «թռիչքը» ենթադրում է անհատի՝ սեփական սուբյեկտիվ տեսակետների կասեցման որոշման կայացում:<>

Այժմ մենք կարող ենք ամփոփել գիտական դիրքորոշմանը բնորոշ էպոխեի որոշ առանձնահատկություններ: Այդ էպոխեի շրջանակներում «փակագծերի մեջ են առնվում» (կամ դադարեցվում են)՝

1. մտածողի՝ իբրև մարդկանց շրջանում ապրող, իր մարմնական գոյությունն ունեցող , առօրյա կյանքում գործառող մարդու սուբյեկտիվությունը,
2. կողմնորոշման համակարգը, որին համապատասխան առօրյա կյանքի աշխարհը կազմակերպվում է ըստ գոտիների, որոնք գտնվում են իրական, վերականգնելի հասանելիության սահմաններում,
3. հիմնային տագնապը և վերջինիցս ծնունդ առնող պրագմատիկ համապատասխանությունների համակարգը: Վերափոխված այս համակարգում մեզ համար համընդհանուր կենսաշխարհը շարունակում է գոյություն ունենալ իբրև իրականություն, բայց արդեն որպես տեսական հայեցողության իրականություն, որն այլևս գործնական հետաքրքրություն չի ներկայացնում: Համապատասխանությունների համակարգում տեղի ունեցող տեղաշարժերի հետ մեկտեղ, որոնք տեղի են ունենում գործնական ոլորտից դեպի տեսական ոլորտ անցնելու ժամանակ, աշխա-

տանքի աշխարհում գործողությանը և կատարմանը վերաբերող բոլոր հասկացությունները (ինչպես, օրինակ՝ «ծրագիր», «շարժառիթ», «նախագիծ»), փոխում են իրենց իմաստը և առնվում են «չակերտներում»:

Այժմ մենք պետք է հակիրճ բնութագրենք գիտական հայեցողության բնագավառում գերիշխող համապատասխանությունների համակարգը: Այս համակարգը սկիզբ է առնում գիտնականի հզոր կամային ակտում. ակտ, որի միջոցով վերջինս ընտրում է իր հետագա հետազոտման օբյեկտը, կամ, այլ կերպ ասած, ձևակերպում է գիտական հետազոտության հիմնախնդիրը: Սրանով սույն խնդրի կանխագիտված լուծումը դառնում է գիտական գործունեության գերագույն նպատակը: Մեկ այլ կողմից, հիմնախնդրի սահմանումը արդեն ինքնին սահմանում է աշխարհի այն հատվածներն ու տարրերը, որոնք ներկայումս կապված են կամ պոտենցիալ կերպով կարող են կապված լինել վերջինիս հետ. նշված կապի միջոցով այդ հատվածներն ու տարրերը դառնում են համապատասխան կամ նշանակալի առկա հարցի համար: Հետագայում համապատասխանության ոլորտի այս սահմանափակումը կուղղորդի հետազոտական ողջ գործընթացը: Նախ և առաջ, այն սահմանում և որոշակիացնում է հետազոտության այսպես կոչված «մակարդակը»: Ըստ էության՝ «մակարդակ» եզրույթը զատման գծի ևս մեկ դրսևորում է, որը տարանջատում է ամենը, ինչը կապված է հետազոտվող խնդրի հետ այն ամենից, ինչը որևէ առնչություն չունի վերջինիս հետ: Եթե առաջինը ներառում է հետազոտվող, վերհանվող և պարզաբվող թեմաները, երկրորդը՝ գիտնականի գիտելիքի մնացյալ այն տարրերը, որոնք (հաշվի առնելով դրանց անհամապատասխանությունը դրված խնդրին) նա որոշում է ընդունել պարզապես իբրև «տվյալներ»՝ առանց դրանք կասկածի տակ առնելու:<>

ԱՐՈՆ ԳՈՒՐՎԻՉ

# ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ[94]

## Գոյության կարգերը

Մենք սահմանում ենք գոյության կարգերը իբրև բնական խմբավորումներ, որոնցում իրերը ներկայանում են գիտական և մինչտեսական փորձում, ինչպես նաև բացատրական համակարգերը, որոնք ստեղծվել են որոշ գիտություններում՝ աշխարհի, նյութականի, պատմականի և սոցիալականի ռացիոնալ բացատրման համար: Մենք պետք է հիշատակենք նաև գոյության զուտ իդեալական կարգերը, ինչպիսիք են՝ տրամաբանական համակարգերը, առանձին երկրաչափական համակարգերը, բնական թվերի համակարգը, ընդհանրացված թվային համակարգերը և այլն: Վերջապես, կան գեղարվեստական ստեղծագործության աշխարհներ, ինչպիսին է երաժշտության աշխարհը: Գոյության յուրաքանչյուր կարգին բնորոշ են համապատասխանության (relevance) հատուկ սկզբունքներ, որոնք սահմանում են այդ կարգը և ապահովում դրա միասնությունը: Գոյության կարգերի տարբերությունները կարող են արտահայտվել և սահմանվել վերջիններիս բնորոշ համապատասխանության տարբեր սկզբունքներով:

## Իրականության կարգը և դրա ենթակարգերը

Ինչպես հետագայում կտեսնենք, իրականության (որի հիմնարար շերտն ընկալվող աշխարհն է) համար ընդհանուր համապատասխանության որոշիչ սկզբունքը օբյեկտիվ ժամանակն է: Ընկալվող աշխարհ ասելով՝ մենք հասկանում ենք իրականության այնպիսի կարգ, որը

[94] Gurwitsch, A. (2010) The Field of Consciousness // Gurwitsch A. The Collected Works. Vol. III: The Field of Consciousness: Phenomenology of Theme, Thematic Field, and Marginal Consciousness. Berlin: Springer, ch. 10: Ontological problems, pp. 369–402. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

առօրեական փորձի մինչտեսական կամ ոչ տեսական պայմաններում անվիճելիորեն ընդունվում է բոլորի կողմից՝ իբրև արտաքին իրականություն: Մեր գիտակից կյանքի յուրաքանչյուր պահին մենք ընկալելի աշխարհում ենք: Այս աշխարհում է, որ մենք իրականացնում ենք մեր բոլոր գործողությունները, հանդիպում ենք այլ մարդկանց, որոնց հետ մենք գտնվում ենք ամենատարբեր հարաբերություններում: Ապրելով և գործելով իրական, ընկալելի աշխարհում մենք կողմնորոշվում ենք դրանում յուրահատուկ, բայց չձևակերպված և ներունակ հասկացման և ծանոթության օգնությամբ: Նման ներունակ հասկացումը և չձևակերպված ծանոթացումը՝ իրական ընկալելի աշխարհի՝ իբրև առօրեական գործողությունների բեմի, ընդհանուր ֆոնի և հիմքի հետ, կախված չեն հետագա տեսական և գիտական բացատրություններից և նախորդում են դրանց:

Գերագույն իրականության մեջ, որը բոլորիս համար ընդհանուր ընկալելի աշխարհն է, առանձնանում են կենսագործունեության մի քանի ոլորտներ: Նման ոլորտների շարքում մենք կարող ենք նշել մեր մասնագիտական գործունեության ոլորտը, մեր ընտանեկան կյանքը, քաղաքական ոլորտը, որում մենք գործում ենք որպես քաղաքացիներ: Ժամանակակից քաղաքակրթության պայմաններում կյանքի այդ ոլորտների տարանջատումն ուժգնացել է. յուրաքանչյուր մասնավոր ոլորտ սկսել է ավելի մեծ ինքնավարություն ձեռք բերել: Այս ոլորտներից յուրաքանչյուրը (և նմանատիպ այլ ոլորտներ) պետք է համարվի գոյության կարգ, այն է՝ համակարգված համատեքստ, որը կառուցվում է և միասնական է համապատասխանության յուրահատուկ սկզբունքի հարաբերությամբ:

Ինչ վերաբերում է մասնագիտական կյանքի ոլորտներին, համապատասխանության սկզբունքները ակնհայտորեն տարբերվում են՝ կախված մասնագիտական գործունեության տեսակից: Ինչ էլ որ լինի դրա էությունը, մասնագիտական կյանքի յուրաքանչյուր ոլորտ կարելի է բնութագրել՝ որպես նպատակների, ծրագրերի, նախագծերի, մտահղացումների, խնդիրների, միջոցների և գործողությունների համակարգ: Դրանք բոլորը հարաբերակցվում են միմյանց հետ, և յուրա-

քանչյուր տարր զբաղեցնում է իր որոշակի տեղը աստիճանակարգում: Այլ մարդիկ, որոնց մենք բախվում ենք մասնագիտական գործունեության ոլորտում, իրենց ներկայացնում են այն դերերում, որոնք կատարում են այս ոլորտում և որոնք սահմանում են նրանց: Նրանք հայտնվում են աշակերտների, ուսուցիչների, բժիշկների, հիվանդների, վարձատուների, աշխատողների, գործընկերների, իշխանությամբ օժտված քաղծառայողների, գնորդների տեսքով և այլն: Նմանապես, իրերը վերապրվում են կոնկրետ գործողության իրավիճակների հեռանկարում՝ ծառայելով որպես գործիքներ և զենքեր՝ դրանով իսկ բացահայտելով իրենց այդ իրավիճակներին համապատասխանող նպատակների հարաբերակցությամբ: Իրերը բացահայտում են իրենց ոչ միայն կոնկրետ գործիքային իմաստով, այլև որպես տիպական իրավիճակներին վերաբերող երևույթներ, այսինքն՝ որպես որոշակի էքզիստենցիալ ինդեքս ունեցող, որը խոսում է գործողության այս ոլորտին իրենց պատկանելության գիտակցման մասին: Ենթադրենք, որ մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում մենք բախվում ենք այն մտքին, ծրագրին, իրին կամ անձին, որը չի ենթարկվում սույն կարգը սահմանող համապատասխանության սկզբունքներին: Այդ ժամանակ «խախտողը» վերապրվում է որպես այս ոլորտում անտեղի և գոյություն չունեցող: Քանի դեռ ցանկացած ակնհայտ օբյեկտ (բառի ամենալայն իմաստով) իր երևակայության մեջ հղում է կատարում իր գոյության կարգին, չհամապատասխանող օբյեկտի ներթափանցումը վերապրվում է՝ որպես օտար համակարգի ներխուժման սկիզբ այն համակարգ, որում մենք այժմ ապրում ենք:

Կենսագործունեության նման ոլորտները պետք է դասել բնական խմբավորումների շարքին, որոնցում օբյեկտները ներկայանում են ամենօրյա փորձով: Այլ բնական խմբավորումների օրինակներն են մեր արդի ներկայի կարգն ու մեր անցյալի հականդիր կարգը: Մեր առկա ներկան ընդգրկում է այն ամենը, ինչ մենք ընկալում ենք այս պահին: Մեր առկա ներկայությանը համապատասխանող օբյեկտները ոչ միայն օգտագործվում են ֆենոմենալ ժամանակի ներկա պահին տեղի ունեցող ակտերի միջոցով, այլ նաև ընկալվում, կանխադրվում, հայ-

տարարվում և ենթադրվում են՝ որպես միմյանց հետ գոյակցող և օբյեկտիվ ժամանակում, ավելի ճիշտ՝ օբյեկտիվ ներկայի փուլում համատեղ տևող[95]: <> Օբյեկտիվ ժամանակում միաժամանական տևողության վրա հիմնված օբյեկտիվ համատեղության միասնությունը տարածվում է օբյեկտիվ տևողության ողջ միասնության վրա, բայց ոչ ավելի հեռու:

Մեր անցյալի առանձին հատվածներին, ինչպես նաև մեր առկա ներկային պատկանող օբյեկտիվ տևողության միասնությունների միաժամանակացման շնորհիվ հնարավոր են դառնում հատուկ հարաբերությունները տարբեր տարածական միջավայրերի՝ մեր առկա ներկայի բեմի և մեր անցյալի հատվածների համապատասխան տեսարանների միջև: Բոլոր այն օբյեկտներին ու իրադարձություններին, որոնք դեր են խաղացել մեր կյանքում, վերագրվում են որոշակի տեղեր այս օբյեկտիվ ժամանակում, որը և մեր կյանքի պատմության ժամանակն է: Հետևաբար, այդ օբյեկտներն ու իրադարձությունները միմյանց հետ գտնվում են որոշակի օբյեկտիվ ժամանակային հարաբերություններում: Այդ բարդ հարաբերությունների հիման վրա կարող են հաստատվել տարածական հարաբերություններ համապատասխան միջավայրերի միջև, որոնցում տեղի են ունեցել իրադարձություններ, և որտեղ գոյություն են ունեցել կամ շարունակում են գոյություն ունենալ օբյեկտներ: Այսպես է կառուցվում համապարփակ միասնական տարածությունը՝ փոխկապված, բայց և սահմանափակ: Մեզանից յուրաքանչյուրի համար դա իր կենսաշխարհի տարածությունն է (Lebenswelt)՝ մի աշխարհ, որում մենք վարել և մինչ օրս շարունակում ենք վարել մեր գոյությունը: <>

*Հիմնվելով միասնական, եզակի օբյեկտիվ ժամանակի վրա*, որում տեղակայվում են բոլոր մարդկանց կյանքի պատմությունները, այդ *կյանքի պատմությունները միավորվում են մեկ համապարփակ գոյության կարգում*, այն է՝ *իրական, օբյեկտիվ, տարածաժամանակային* աշխարհը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն միմյանց հետ հաղորդակցվող բոլոր մարդկանց կենսաշխարհը: Օբյեկտիվ ժամանակը

[95] Husserl E. (1985) Erfahrung und Urteil: Untersuchungen zur Genealogie der Logik. Hamburg: Felix Meiner, § 36.

«օբյեկտիվ փորձի ցանկացած հնարավոր աշխարհի ձևն է ... առաջին և հիմնարար ձևը, բոլոր ձևերի ձևը, նախադրյալը ցանկացած կապերի, որոնք սահմանում են միասնությունը այլ եղանակներով»[96]: Օբյեկտիվ ժամանակը իրականության *համապատասխանելիության հիմնարար սկզբունքն է*, քանի որ իրականության միասնությունը կախված է օբյեկտիվ ժամանակից: Այն, ինչ վերաբերում է նրանց հնարավոր միավորմանը, գոյության նախկինում քննարկված բոլոր կարգերը՝ բոլոր մարդկանց կյանքի պատմությունները, տարածական միջավայրերը, որոնցում այդ կյանքի պատմությունները տեղի են ունեցել, գործունեության ոլորտները, մասնագիտական կյանքը, բոլոր մարդկանց ընտանեկան կյանքը, պետք է համարվեն գոյության համապարփակ և համակողմանի կարգի՝ իրականության ենթակարգեր: Այսպիսին է գործերի դրությունը՝ համեմատական ինքնավարությանը, անկախությանը և, որոշ դեպքերում, տարբեր ենթակարգերի առանձնացվածությանը հանդերձ, ինչպես նաև անկախ համապատասխանելիության կոնկրետ սկզբունքներից, որոնք որոշիչ են տարբեր ենթակարգերի համար:

**Գոյության ինքնավար կարգերը**

Երևակայության արդյունքները բացառված են իրականությունից: Երևակայության արդյունքները հայտնաբերում են ժամանակային կառուցվածքներ: Ազատորեն պատկերացնելով ցանկացած օբյեկտ, վերագրելով դրան ցանկացած որակներ և հատկություններ՝ մենք պատկերացնում ենք այդ օբյեկտը՝ իբրև ժամանակի մեջ տևող, անկախ նրանից, մնում է այն անփոփոխ, թե ոչ: Կարելի է պատկերացնել, թե ինչպես են ցանկացած տիպի իրադարձությունները զարգանում և անցնում ժամանակային փուլերի միջով: Միմյանց հետ չկապված տարբեր երևակայություններով սահմանափակվելու փոխարեն մենք կարող ենք հարաբերակցել և միմյանց կապել երևակայության տարբեր արդյունքները: Մենք կարող ենք սահմանել միասնությունը երևակայության տարբեր արդյունքների միջև՝ հորինելով երևակայական

[96] Ibid, p. 191.

աշխարհը: Նման աշխարհը երևակայության կայուն շարունակական գործընթացի արմատավորումն է, այն գործընթացի, որի մեջ յուրահատուկ կերպով մտնում են երևակայության եզակի ակտերը: Երևակայական աշխարհները, որոնց օրինակներն են էպոսը, պոեմը, պիեսը կամ վեպը, կարող են ցույց տալ իբրև միմյանց հետ կապված պատկերացվող իրադարձությունների և դեպքերի զգալի բարդություն: <> Որպեսզի երևակայական աշխարհը ներկայանա որպես միասնական աշխարհ, այնտեղ չպետք է լինեն անհամապատասխանություններ և հակասություններ: Իրադարձությունները պետք է ընդունեն կարգավորված հաջորդականությունների ձև, որոնցում որոշ իրադարձություններ բխում են նախորդներից և, իրենց հերթին, հանգեցնում են իրադարձությունների հետագա զարգացմանը: Արարելով երևակայական աշխարհը կամ, ինչպես ընթերցանության դեպքում, հետևելով հեղինակի երևակայությանը, մենք անցնում ենք մի փուլից մյուսը: Ամեն պահի, երբ մենք երևակայում ենք, երևակայական աշխարհի որոշակի փուլը ներկայանում է որպես ներկա՝ ուղարկելով հետ՝ դեպի նախորդ փուլեր, և առաջ՝ դեպի հաջորդները:

Երևակայական աշխարհը՝ որպես արդի ներկայի և անցյալի հատվածներ, նույնպես ժամանակի մեջ միասնություն է ձեռք բերում: Հարկ է նշել, որ ժամանակն այստեղ ֆենոմենալ ժամանակը չէ, այլ երևակայության գործողությունների տևողությունն ու ժամանակային կարգը: Գործ ունենալով երևակայական օբյեկտների և իրադարձությունների կամ երևակայական աշխարհի հետ՝ մենք կարող ենք դա անել ինչպես ժամանակի մի հատվածի ընթացքում, այնպես էլ բազմաթիվ ակտերի միջոցով, որոնք միմյանցից բաժանված են ժամանակի մեծ կամ փոքր հեռավորություններով, ինչպես, օրինակ, երբ մենք շարունակում ենք ընթերցել այն տեղից, որտեղ կարճ ժամանակ առաջ ընդհատել ենք ընթերցանությունը: Մենք կարող ենք պատկերացնել օբյեկտը կամ իրադարձությունը այն էքսպլիցիտ գիտակցությամբ, որ այն մեզ համար ճիշտ նույնն է, ինչ մենք պատկերացնում էինք նախորդ դեպքում: Երևակայական ժամանակի շարունակականությունը, այն ժամանակի, որում երևակայական օբյեկտները և իրադարձությունները հայտնվում

են, և որտեղ նրանք գտնվում են միմյանց հետ որոշակի հարաբերություններում, որևէ կերպ ազդեցության չի ենթարկվում երևակայության գործընթացի ընդհատումներով։<>

Եթե երևակայական օբյեկտների և իրադարձությունների ժամանակայնությունը չպետք է շփոթել ֆենոմենալ ժամանակայնության հետ, ապա այն չպետք է շփոթել նաև օբյեկտիվ ստանդարտ ժամանակի հետ։ Հարց տալ, թե արդյո՞ք ինչ-որ երևակայական իրադարձություն ժամանակակից է ինչ-որ իրական իրադարձության, թե դրանցից որն է ավելի շուտ տեղի ունեցել, ակնհայտորեն անիմաստ է։ Չնայած երևակայական ժամանակը օբյեկտիվացված ժամանակ է, քանի դեռ կապված է երևակայական բաների տևողության և ժամանակային կարգի հետ, այլ ոչ երևակայության ակտերի, այն դեռևս ոչ այլ ինչ է, քան «կեղծ ժամանակ», այնպես, ինչպես երևակայական աշխարհը ոչ այլ ինչ է, քան «կեղծ աշխարհ»[97]։ Այն, ինչը պատկերացվում է՝ լինեն դա մարդիկ, իրադարձությունները կամ իրերը, ենթարկվում է չեզոքության ձևափոխմանը։ Չեզոքացումը ներառում է երևակայության արդյունքների բոլոր ատրիբուտները և հատկությունները, ինչպես նաև այն ժամանակը, որում երևակայական օբյեկտները և իրադարձությունները կարգաբերվում են միմյանց հանդեպ։ Քանի որ ներառումն իրական օբյեկտիվ ժամանակում ցանկացած օբյեկտի՝ իրականության կարգին պատկանելու անհրաժեշտ պայման է, ոչ մի երևակայական աշխարհ իրականության ենթակարգ չէ։ Հետևաբար, ցանկացած երևակայական աշխարհ պետք է համարել գոյության ինքնուրույն կարգ։

Տարբեր երևակայական աշխարհներ ոչ միայն տարանջատված են իրականությունից, այլև կարող են կապված չլինել միմյանց հետ։ Երբ երևակայական իրադարձությունների բազմությունը հարաբերակցվում է իրար, որոշ կեղծ ժամանակներ, որոնցում այդ իրադարձությունները համապատասխանաբար ընթանում են, ընկալվում են որպես *մեկ* կեղծ ժամանակի փուլեր, որի հետ համապատասխանությամբ բազմաթիվ երևակայական իրադարձություններ միավորվում են համապարփակ երևակայական աշխարհում։ Նման միավորումը,

---

[97] Ibid, p. 196.

սակայն, արտաքին է երևակայության արդյունքների նկատմամբ: Իր նախնական իմաստով երևակայական իրադարձությունը կամ երևակայական իրադարձությունների հաջորդականությունը չի պահանջում ընդգրկում ավելի լայն համատեքստում: Նման միավորումն ամբողջությամբ կախված է երևակայող սուբյեկտի կամքից և քմահաճույքից: Երևակայող սուբյեկտը լիակատար ազատություն ունի միավորելու կամ հրաժարվելու երևակայության արդյունքների միավորումից: Երևակայական աշխարհը պետք է զերծ լինի հակասություններից, սակայն տարբեր երևակայական աշխարհների իրադարձությունների կապվածության կամ չկապվածության հարցը լեգիտիմ չէ[98]: Այսպիսով, կան այնքան անկախ և ինքնավար գոյության կարգեր, որքան որ առանձին երևակայական աշխարհներն են: <>

**Գոյության կարգերի համար որոշիչ համապատասխանության սկզբունքները**

Անցյալի հատվածների, երևակայական աշխարհների և արդիական ներկայի քննարկման ընթացքում մենք ամբողջովին հետևում էինք Հուսերլի վերլուծությանը: Սակայն նրա խնդիրը չի համընկնում այն խնդրի հետ, որը մեզ հետաքրքրում է այստեղ: Երբ Հուսերլը վերլուծում է տարբեր ձևերը, որոնցում կարող են միավորվել իրերը, նա դա անում է այն պատճառով, որ նման ձևերի հիման վրա հաստատվում են իրերի միջև հարաբերությունները: Հուսերլի վերջնական նպատակն է բացատրել տարբերությունները գաղափարների հարաբերությունների և իրերի հարաբերությունների միջև այն ձևերի տեսանկյունից, որոնցում այդ հարաբերակցվող երևույթները միավորվում են[99]: Իսկ մեզ ավելի շատ հետաքրքրում է այն սկզբունքը, որի շնորհիվ գոյության կարգերն ունեն միասնություն և ամբողջականություն:

Օբյեկտիվացված ժամանակը, ինչպես իրական, այնպես էլ կեղծ, որոշ գոյության կարգերի անհրաժեշտ պայմանն է: Որպեսզի իրադարձությունը պատկանի անցյալի որոշակի հատվածին, այն պետք է լինի

---

[98] Ibid, p. 201.
[99] Ibid, §45.

անցյալի այդ հատվածը կազմող այլ իրադարձությունների հետ ժամանակային հաջորդականության մեջ: Ճիշտ այնպես, ինչպես երևակայական իրադարձությունը չի կարող պատկանել երևակայական աշխարհին, մինչև այն տեղ չգրավի կեղծ ժամանակում, որում երևակայվում են տվյալ աշխարհի իրերը և իրադարձությունները: Մյուս կողմից, այն պատճառով, որ կան գոյության սկզբունքորեն անժամանակային կարգեր, օրինակ՝ էյդետիկ ոլորտները, օբյեկտիվ ժամանակը չի կարելի համարել ընդհանուր կանոն կամ գոյության բոլոր կարգերի որոշիչ սկզբունք:

Օբյեկտիվացված ժամանակը միասնության և ամբողջականության անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է, անգամ գոյության այն կարգերի համար, որոնք էյդետիկ ոլորտներ չեն: Ենթադրենք, որ անցյալի հատվածն է Ֆրանսիայի պատմությունը միջնադարում: Մի իրադարձություն, որը տեղի է ունեցել Չինաստանում XII դարում, ժամանակային առումով համընկնում է գոյության այս կարգին պատկանող որոշակի իրադարձություններին: Սակայն, եթե իրադարձությունը Չինաստանում ընդհանրապես ոչ մի կապ չունի տվյալ ժամանակահատվածում Ֆրանսիայի պատմական փոխակերպումների հետ, ապա այդ իրադարձությունը չի պատկանում գոյության այդ կարգին և դրանում տեղ չունի: Չնայած այն հանգամանքին, որ դա իսկապես տեղի է ունեցել, և չնայած այն հանգամանքին, որ շնորհիվ իր ժամանակային դիրքի՝ Չինաստանում տեղի ունեցած իրադարձությունը բավարարում է անցյալի տվյալ հատվածում ընդգրկվելու համար անհրաժեշտ պայմանին, այն իրադարձությունը Ֆրանսիայի միջնադարյան պատմության համար և շրջանակներում գոյություն չունի: Դիտարկենք մեկ այլ օրինակ: Ենթադրենք՝ կա երևակայական մի աշխարհ, և ինչ-որ մարդ այդ աշխարհում, որի կյանքը հոսում է կեղծ ժամանակին համապատասխան: Ենթադրենք, սակայն, որ նա չի միջամտում այս երևակայական աշխարհին և չի զգում դրա ազդեցությունը․ այնպես որ այդ մարդու բացակայությունը կամ ներկայությունը որևէ նշանակություն չունի իրադարձությունների և գործերի ընթացքի համար: Շնորհիվ երևակայական աշխարհներ հորինելու մեր լիակատար ազատությանը՝ նույն

աշխարհի սահմաններում անհամապատասխանություններից խուսափելու միակ պայմանով[100] մենք կարող ենք երևակայել մի մարդու, ում կյանքն ընթանում է այս ժամանակում, բայց ով որևէ առնչություն չունի դեպքերին և իրադարձություններին: Չնայած այս մարդը համապատասխանում է տվյալ երևակայական աշխարհին պատկանելու անհրաժեշտ պայմանին, սակայն հաշվի առնելով, որ նա այս աշխարհում անօգուտ է, ասել, որ նա դրանում գոյություն ունի, նույնն է, ինչ ասել, որ երաժշտության կատարման ժամանակ *հնչող կողմնակի ձայնը գոյություն ունի երաժշտական համատեքստում:*

Գոյության միայն մեկ կարգը կարելի է ամբողջությամբ և բավարար կերպով բացատրել օբյեկտիվացված ժամանակի կատեգորիայով: Դա իրականությունն է՝ իբրև ամբողջություն, որը հասկացվում է՝ իբրև ժամանակային անընդհատություն: Այն ամենն, ինչ տեղի է ունենում այսօր կամ տեղի է ունեցել օբյեկտիվացված ստանդարտ ժամանակի ինչ-որ պահին՝ ցանկացած ֆիզիկական, կենսաբանական իրադարձություն, ցանկացած մարդու վերապրում, քաղաքական կամ պատմական իրադարձություն, վերաբերվում է իրականությանն՝ իբրև ամբողջի: Սահմանվելով իբրև ժամանակային անընդհատություն՝ իրականությունը դառնում է իրականում տեղի ունեցած իրադարձությունների հանրագումարը՝ անկախ որևէ տարբերակումներից և մասնավորեցումներից: <>

Որպեսզի իրադարձությունը վերաբերի իրական նյութական աշխարհին, այն պետք է տեղի ունենա ոչ միայն օբյեկտիվացված ստանդարտ ժամանակի համապատասխան պահին, այլև՝ օբյեկտիվ տարածության որոշակի վայրում: Այն պետք է գտնվի որոշակի տարածական հարաբերություններում այլ իրերի և իրադարձությունների հետ, որոնք վերաբերում են նյութական աշխարհին: Տարածական հարաբերությունները կարող են հաստատվել միայն այն իրերի և իրադարձությունների միջև, որոնք վերաբերում են օբյեկտիվ ժամանակի տևողության միևնույն միասնությանը: Չնայած տարածականությունը հիմնվում է ժամանակայնության վրա, այդուհանդերձ, այն պետք է համա-

[100] Ibid, p. 201, 203.

րել հատուկ և պարզեցմանը չենթարկվող: Ըստ էության՝ իրական նյութական աշխարհը, ընկալվող աշխարհը ցույց է տալիս տարածաժամանակային, այլ ոչ թե պարզապես ժամանակային միասնությունն ու ամբողջականությունը: Նմանապես, որպեսզի վերապրման ակտը պատկանի որոշակի մարդու կյանքի պատմությանը, բավարար չէ, որ այն տեղի ունենա օբյեկտիվ ստանդարտ ժամանակի որոշակի կետում: Ի լրումն իր ընդգրկվածությանն օբյեկտիվ ժամանակում՝ այդ վերապրման ակտը պետք է նաև *առնվազն* տեղի ունենա հատուկ ժամանակում, որը վերաբերում է մարդու կյանքի պատմությանը: Ճիշտ նույն կերպ վերապրման ակտը պետք է որոշակի հարաբերություններ ի մեջ լինի տվյալ հատուկ ժամանակի շրջանակներում մարդու այլ ապրումների հետ: <>

**Գոյության հասկացության մասին**

Ցանկացած օբյեկտ ոչ միայն հայտնվում է թեմատիկ դաշտում, այլև, ինչպես տեսնում ենք, հղում է ավելի լայն համատեքստի, որը դուրս է գալիս թեմատիկ դաշտից և միաժամանակ ներառում է այն: Այդ դեպքում օբյեկտի փորձը ստանալը նշանակում է ընկալել այն ավելի լայն համատեքստում՝ գոյության կարգում, որն ունի միասնականության և ամբողջականության որոշակի համակարգված ձև՝ համապատասխանության յուրահատուկ որոշիչ սկզբունքի ուժով: Ըստ այդմ, երբ օբյեկտը ներկայացնում է իրեն որպես գոյություն ունեցող, այն ներկայանում է իբրև գոյություն ունեցող որոշակի հատուկ կարգի շրջանակներում: Մենք կարծում ենք, որ ցանկացած օբյեկտի համար գոյություն ունենալը նշանակում է կոնկրետ կարգին վերաբերվելը և այնտեղ որոշակի տեղ զբաղեցնելը:<>

Գոյության երևույթի մեր մեկնաբանությունը ցույց տանք մի քանի օրինակներով:

Մենք արդեն ցույց տվեցինք, որ որպեսզի հարց առաջանա, թե արդյո՞ք օբյեկտը կամ իրադարձությունը գոյություն ունի իրականության ոլորտում, այդ օբյեկտը կամ իրադարձությունը պետք է ներկայանա որպես օբյեկտիվ ժամանակում ընկղմված: Ինչ վերաբերում է ըն-

կալվող արտաքին իրականությանը, ապա համապատասխան պայման է եզակի օբյեկտիվ տարածաժամանակային կարգում ընդգրկվելը: Եթե օբյեկտը կամ իրադարձությունը ընկալվում կամ կանխադրվում է որպես իրականում գոյություն ունեցող, ապա այն ընկալվում կամ կանխադրվում է՝ իբրև օբյեկտիվ ժամանակի և տարածության որոշակի վայրում առկա և, հետևաբար, իբրև որոշակի հարաբերությունների մեջ գտնվող այլ օբյեկտների և անհատների հետ, որոնք նույնպես հասկացվում են որպես իրականում գոյություն ունեցող: Նյութական իրի դիրքի բացատրությունը պահանջում է անդրադարձ աշխարհի երևույթին: *Նյութական իրի գոյությունը ենթադրում է գոյություն տարածական և ժամանակային հարաբերությունների համակարգում, տարածաժամանակային հորիզոնում, կարգի ներսում, որի համապատասխանության որոշիչ սկզբունքը օբյեկտիվ տարածական ժամանակայնությունն է*[101]: Այսպիսի գոյության կարգի դերում հանդես է գալիս ընկալվող աշխարհը: Ցանկացած նյութական իր, որը հասկացվում է որպես իրականում գոյություն ունեցող, համապատասխան է ցանկացած այլ իրի, քանի դեռ դրանց միջև կա որոշակի տարածաժամանակային կապ: Գոյության կարգից նյութական իրի ստացված էքզիստենցիալ ինդեքսը բնութագրում է այն որպես *սովորական կերպով գոյություն ունեցող*, այսինքն՝ ընկալվող աշխարհին պատկանող և այլ նյութական իրերի մեջ գոյություն ունեցող և դրանց հղում կատարող:

Մենք արդեն խոսեցինք նրա մասին, որ ընկալվող նյութական իրը հայտնվում է որոշակի պերցեպտիվ միջավայրերում՝ առաջանալով այդ միջավայրերից, որոնք կազմում են դրա ֆոնը և հղում է այդ միջավայրերին: Հաջորդը, մենք տեսանք, որ այն վերաբերում է ոչ միայն ընթացիկ ընկալման թեման հանդիսացող օբյեկտի անմիջական միջավայրում ընկալվող իրերին, այլև արտաքին հորիզոնին, որը ներառում է տվյալ պահին չընկալվող, սակայն պոտեցիալ առումով ընկալելի իրերը:<> Ցանկացած կոնկրետ իրի ընկալումը ուղեկցվում և պահպանվում է աշխարհի ընդհանուր գիտակցմամբ: Կարելի է նույնիսկ ասել, որ ընկալումը առաջանում է այս գիտակցումից: Աշխարհի գի-

---

[101] Ibid, p. 29.

տակցումը նշանակում է գիտակցված կյանքի երևույթ, որը պահանջում է ավելի ուշադիր ուսումնասիրություն և ավելի խորը վերլուծություն, որը տվյալ համատեքստից դուրս է:

Հավաստիությունը պայմանների և թեորեմների հետ գտնվում է նույն հարաբերություններում, ինչ սովորական գոյությունը՝ նյութական իրերի: Այն, որ թեորեմի կամ պայմանի հավաստիությունը, ըստ էության, հղում է տրամաբանական համատեքստին, ակնհայտ է և չի պահանջում լրացուցիչ մեկնաբանություններ: Պայմանի հավաստիությունը պայմանների համակարգում և վերջինիս հանդեպ տվյալ համակարգին տվյալ պայմանի պատկանելիության ընդհանուր երևույթի հատուկ ձևն է և դրանով իսկ ենթադրում է այդ պատկանելությունը: Պարզության համար սահմանափակվենք այստեղ պայմանների գոյությամբ՝ մի կողմ թողնելով վերջիններիս՝ իբրև սեփական ոլորտին կամ տարածությանը պատկանող իմաստային միավորների գոյությունը[102]:

Նմանապես, մաթեմատիկական գոյությունը ենթադրում է գոյություն մաթեմատիկական համակարգում: Սա ճիշտ է մաթեմատիկայի փիլիսոփայության ինչպես ֆորմալիստական, այնպես էլ ինտուիցիոնիստական մոտեցումների համար. ինչպես այն դեպքում, երբ մաթեմատիկական գոյությունը որոշվում է պարզ համադրելիության և հակասությունների բացակայության առումներով, այնպես էլ այն դեպքում, երբ մաթեմատիկական գոյության համար պահանջվում է ակտուալ կառուցելիություն: Պարզագույն օրինակ. հայտնի է, որ «կարո՞ղ է արդյոք տվյալ հանրահաշվական հավասարման համար լուծում գոյություն ունենալ» հարցը կարող է առաջանալ միայն որոշակի թվային դաշտի նկատմամբ: Օրինակ՝ X + 1= 0 և X2 + 1 = 0 հավասարումները բնական թվերի դաշտում լուծում չունեն: Առաջին հավասարումն ունի միայն մեկ լուծում ամբողջ թվերի դաշտում, իսկ վերջինն ունի երկու լուծում կոմպլեքսային թվերի դաշտում: Վերջապես, եկեք անդրադառնանք Գոլդշտեյնի դատողություններին կենսաբանական իրականության հասկացության մասին: Օրգանիզմում տեղի ունեցող ամեն իրադարձություն չէ, որ կարող է պարզապես իր տեղի ունենալու հաշվին

102 Husserl E. (1929) Formale und Transzendentale Logik. Halle: Max Niemeyer, § 48.

համարվել օրգանիզմի փաստ, այսինքն՝ հասկացվել որպես կենսաբանական իրականություն[103]: Ցանկացած իրական իրադարձությունը որոշելու, գնահատելու և համարժեքորեն հասկանալու համար մենք պետք է ենթադրենք, թե ինչ պայմաններ են ընկած այս իրադարձության հիմքում: Այստեղ առավելագույն նշանակություն ունի տվյալ օրգանիզմի նորմալ կյանքի պայմաններում նկատվող իրադարձությունների և մեկուսացման պայմաններում տեղի ունեցող իրադարձությունների միջև տարբերությունը: Նման մեկուսացումը կարող է ստեղծվել արհեստականորեն՝ վիրաբուժական վիրահատության միջոցով, փորձարարական պայմաններում կամ կարող է ուղեկցել հիվանդությանը կամ շոկին: Երկրորդ դասի իրադարձությունների շարքին կարելի է դասել ռեֆլեքսները, այսինքն՝ մնացյալ օրգանիզմից օրգանի կամ օրգանների համակարգի մեկուսացման (որքան հնարավոր է) և խթանման ժամանակ առաջացած ռեակցիաները: Քննարկելով մի շարք փորձարարական տվյալներ Գոլդշտեյնը ընդգծում է, որ մարմնի բնույթն ու կառուցվածքը չի կարելի բացատրել ռեֆլեքսների կամ ռեֆլեքսանման տարրական գործընթացների առումով[104]: Այլ կերպ ասած, անհնար է բացատրել մարմնի ձեռքբերումներն ու գործողությունները նորմալ կյանքում այն գործընթացների և երևույթների միահյուսմամբ և փոխազդեցությամբ, փոխադարձ ուժեղացմամբ և թուլացմամբ, որոնք առաջանում են համապատասխան մեկուսացման պայմաններում: Գոլդշտեյնը նույնիսկ պնդում է, որ նրանք գոյություն ունեն միայն նման պայմաններում: Մարմինը հասկանալու, օրգանիզմի կերպարը կամ գաղափարը զարգացնելու համար պետք է սկսել կոնկրետ փաստերից և երևույթներից, նույնիսկ նրանցից, որոնք սահմանված են վերլուծական մեթոդներով: Հենց այդպիսի փաստերն ու երևույթները պետք է ծառայեն որպես նյութեր, քանի որ չկա այլ մեկնարկային կետ: Սակայն օրգանիզմի գաղափարը չի կարելի մշակել ո՛չ կոնկրետ փաստերի համադրման միջոցով, ո՛չ էլ՝ ինդուկցիայի և ընդհանրացման:

[103] Goldstein K. (1934) Der Aufbau des Organismus: Einführung in die Biologie unter besonderer Berücksichtigung der Erfahrungen am kranken Menschen. Den Haag: Martinus Nijhoff, p. 244.
[104] Ibid, ch. 2.

Այստեղ պահանջվում է ստեղծագործական երևակայության ակտ, որի միջոցով, ինչպես դա տեղի է ունենում տեսական ֆիզիկայում, խորհրդանիշները, մոդելները կամ գաղափարները իմաստավորվում են՝ ելնելով այն ռացիոնալ և մտավոր կարգից, որը կարող է սահմանվել դիտարկվող փաստերի միջև: Նման խորհրդանիշը կամ գաղափարը պետք է ընկալվի ոչ թե որպես լինելիության հիմք (Realgrund), որի վրա հենվում է գոյությունը, այլ, ավելի շուտ, որպես գիտելիքի հիմք (Erkenntnisgrund), որը հասկանալի է դարձնում կոնկրետ փաստերը և երևույթները, երբ հաշվի են առնվում դրանց առաջացման պայմանները[105]: Օրգանիզմի գաղափարը և վերջինիս առնչվող դիտարկելի փաստերը վերաբերում են երկու տարբեր հարթություններին[106]: Կենսաբանական գիտելիքը Գոլդշտեյնը մեկնաբանում է իբրև դիալեկտիկական գործընթաց, որը շարունակաբար տատանվում է փաստերի հարթության և գաղափարների հարթության միջև: Օրգանիզմի գաղափարին կամ պատկերին պետք է հղում կատարի ցանկացած կոնկրետ փաստ, որպեսզի այն հասկանալի լինի, այսինքն՝ հասկացվի իր համապատասխան իմաստով և նշանակությամբ: Գոլդշտեյնը պնդում է, որ կենսաբանական գիտելիքը երբեք չպետք է սահմանափակվի երևույթների իրական առկայության պարզ հավաստմամբ: Երևույթները պետք է ընկալվեն իրենց «որակական արժեքի» մեջ[107], այսինքն՝ օրգանիզմի համար իրենց կատարած գործառույթում և այն իմաստով, որ նրանք պետք է համարվեն մարմնի դրսևորումներ: Մեկուսացման պայմաններում տեղի ունեցող ռեֆլեքսները և այլ իրադարձությունները ներկայացնում են օրգանիզմի ռեակցիաները սահմանափակ իրավիճակներում, այլ ոչ թե հավաստի և իսկական դրսևորումները[108]: Ոչ մի իրադարձություն չի կարող համարվել օրգանիզմի փաստ, քանի դեռ ապացուցված չէ, որ այն իսկապես նշանակալի է օրգանիզմի համար: <> Այսպիսով, օրգանիզմի գոյությունը և իրականությունը գոյություն են

[105] Ibid, p. 242.
[106] Ibid, p. 251.
[107] Ibid, p. 255.
[108] Ibid, ch. 5.

համակարգում և համակարգի որոշակի վայրում, իսկ համակարգը մարմնի գաղափարն է:

Գոյության կարգերը միասնություն և ամբողջականություն ունեն այդ կարգերի համար նախատեսված համապատասխանության կոնկրետ սկզբունքների նկատմամբ: Հետևաբար, գոյության կարգերի միջև տարբերությունները պետք է հստակեցվեն համապատասխանության սկզբունքների միջև եղած տարբերությունների առումով: Խոսելով գոյության կարգերի տարբերությունների մասին՝ ի տարբերություն մասնագիտական կենսագործունեության ոլորտների և տարբեր երևակայական աշխարհների՝ մենք նկատի չունենք առանձին մարդկանց կյանքի պատմությունների և տարբեր քաղաքակրթությունների պատմական ժամանակաշրջանների տարբերությունները: Ավելի շուտ, մենք նկատի ունենք ավելի հեռավոր և խորը տարբերությունները, որոնք վերաբերում են գոյության կարգերի բուն ոճին և տիպին: Այս տարբերությունները տարբերակումներ են իրականության աշխարհի և *ցանկացած* երևակայական աշխարհի, *ցանկացած* երկրաչափական համակարգի կամ *ցանկացած* թեմատիկ համակարգի միջև: *Քանի որ օբյեկտի գոյությունը* («օբյեկտ» եզրույթը հասկացվում է այստեղ հնարավոր ամենալայն իմաստով՝ իբրև «էություն» եզրույթի հոմանիշ) *նշանակում է գոյություն գոյության որոշակի կարգում. տվյալ կարգի համար որոշիչ համապատասխանության սկզբունքը սահմանում է այդ կարգին վերաբերող օբյեկտների գոյության իմաստը կամ եղանակը:* Օբյեկտները, որոնք պատկանում են տարբեր կարգերին, տարբերվում են միմյանցից յուրահատուկ գոյության եղանակով կամ գոյության իմաստով: Նյութական իրի գոյությունն ըստ էության նշանակում է գոյություն օբյեկտիվ ժամանակում և տարածության մեջ: Քանի որ, ինչպես տեսանք, օբյեկտիվ տարածական ժամանակայնությունը արտաքին աշխարհի որոշիչ սկզբունքն է, դրա միջոցով է որոշվում այն ամենի գոյության իմաստը, ինչը պատկանում է այս աշխարհին: Տարածական և ժամանակային պայմանավորումները, սակայն, բացակայում են ցանկացած տիպի իմաստներում և բոլոր այլ *իդեալական էություններում:*<>

Գոյության երևույթի մեր նախնական մեկնաբանությունից հետևում է երկու եզրակացություն.

1. Գոյության հասկացության իմաստը տարբերվում է գոյության առանձին կարգերում: Գոյության հասկացությունը հստակեցվում է տվյալ կարգի էությանը համապատասխան այնպես, որ դիտարկվող կարգի նկատմամբ հատկորոշման մեջ դրա իմաստը համաչափ է գոյության համապատասխան կարգի նկատմամբ այլ հատկորոշման իմաստին: Հետևաբար, թեև գոյության հասկացությունը միշտ չէ, որ նույն իմաստն է պարունակում, այն միևնույն է պահպանում է իմաստային միասնությունը: Այս միասնությունը, սակայն, միասնություն է համանմանությամբ՝ արիստոտելյան սահմանման ոգով:
2. Քանի որ գոյություն ունենալը նշանակում է գոյություն ունենալ որոշակի կարգում, պնդումները և խնդիրները, որոնք վերաբերում են այդ կարգի ներսում օբյեկտի գոյությանը, պետք է տարբերվեն այն պնդումներից և խնդիրներից, որոնք վերաբերում են ինքնին գոյության կարգին կամ որոշակի կարգին օբյեկտի պատկանելությանը: Ոչ մի դեպքում չի կարելի ասել, որ աշխարհը գոյություն ունի նույն իմաստով, ինչ սովորական բանը գոյություն ունի աշխարհում: Համապատասխանաբար, նույնը վերաբերում է գոյության բոլոր կարգերին, օրինակ՝ օրգանիզմի փաստերի հարթությանը, որը տարբերվում է օրգանիզմի մասին գաղափարի հարթությունից:

Առաջարկված տարբերությունը համապատասխանում է Հուսերլի կողմից առաջարկված իրականության պրեդիկատների (Wirklichkeitsprädikationen) և գոյության պրեդիկատների (Existenzialprädikationen) միջև եղած տարբերությանը[109]: Իրականության պրեդիկատների միջոցով հաստատվում է, որ օբյեկտը պատկանում է իրականության աշխարհին, իրականության բացասական պրեդիկատների դեպքում այն վերաբերում է երևակայության ոլորտին: Եթե մենք դա արտահայտենք մեր հասկացություններում, ապա օբյեկ-

[109] Ibid § 74.

տը էքսպլիցիտ կերպով համեմատվում է իր գոյության կարգի հետ։ Գոյության պրեդիկատները, ընդհակառակը, արտահայտում են գոյության մոդալությունը։ Օբյեկտը կարող է պարզապես կանխադրվել իբրև գոյություն ունեցող կամ բացասական գոյության պրեդիկատների պարագայում՝ մերժվել իբրև գոյություն ունեցող կամ չեղարկվել որպես գոյություն չունեցող։ Բացի այդ, վերջինիս գոյությունը կարելի է պարզապես ենթադրել կամ պնդել՝ որպես հավանական կամ կասկածելի։ Թատրոնի նոր պիեսը դիտելիս մենք կարող ենք կանխագիտել որոշ գործողություններ՝ իբրև քիչ թե շատ հավանական։ Պիեսի որոշակի հատվածում մենք կարող ենք կանխատեսել և դրանով իսկ կանխորոշել այն իրադարձությունները, որոնք այդ ընթացքում տեղի ունեցածի պատճառով պետք է չեղարկենք հետագա փուլերում։ Կանխադրվող գոյության չեղարկումը հնարավոր է ինչպես իրական, այնպես էլ հորինված օբյեկտների առնչությամբ։ Երբ որոշակի օբյեկտ կանխադրվել է իբրև իրականության աշխարհում գոյություն ունեցող, և երբ ավելի ուշ փորձը դրդում է այդ օբյեկտի չեղարկմանը, այն դրանով չի կանխադրվում՝ իբրև երևակայական աշխարհի օբյեկտ։ Ավելի շուտ, այդ օբյեկտը մնում է սովորական օբյեկտ, որը, եթե գոյություն ունենար, ապա իր տեղը կզբաղեցներ իրականության աշխարհում։ Դրա համար էլ իրականության աշխարհում օբյեկտի գոյության մերժումը չի նշանակում գոյության այլ կարգին դրա վերագրում։ Հակադրությունը գոյության և անգոյության միջև չի համընկնում իրականության և հորինվածքի կամ երևակայության միջև առկա հակադրությանը։

Ապրելով իրականության աշխարհում՝ մենք կարող ենք կանխադրել օբյեկտները՝ իբրև գոյություն ունեցող, հավանական, ենթադրելի, կամ մենք կարող ենք չեղարկել դրանք՝ իբրև գոյություն չունեցող։ Քանի դեռ մենք անմիջական կապի մեջ ենք օբյեկտների հետ և չենք զբաղեցնում ռեֆլեքսիվ դիրքորոշում, այն օբյեկտները, որոնց հետ մենք գործ ենք ունենում, ըստ Հուսերլի, չեն ենթարկվում իրականության հասկացությանը[110]։ Նմանապես, տրվելով երևակայությանը, սուբյեկ-

[110] Ibid § 74a.

տը բախվում է երևակայական օբյեկտների և իրադարձությունների՝ առանց իմպլիցիտ եղանակով դրանք ըմբռնելու:

Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են իրականությունը և երևակայությունը, առաջանում են միայն այն դեպքում, եթե առարկան, ապրելով իրականության աշխարհում, ընկղմվում է երևակայական աշխարհի մեջ կամ, ընդհակառակը, տրվելով երևակայությանը, ընկալում է այս իրականությունը կամ վերադառնում է դրան: Այս հասկացությունները առաջանում են իրական և երևակայական օբյեկտների և իրադարձությունների միջև առճակատման փորձի և հակադրության ռեֆլեքսիվ դիրքորոշման մեջ, որոնք դիտվում են որպես համապատասխան հնարավոր իրողությունների կամ երևակայության հնարավոր արդյունքների նմուշներ: Իհարկե, նույնիսկ մինչև իրական օբյեկտների էքսպլիցիտ ըմբռնումը՝ իբրև իրական, իսկ երևակայական օբյեկտներինը՝ իբրև երևակայական, իրական օբյեկտները ներկայանում են իրականության համատեքստում, որից երևակայական օբյեկտները, ինչպես տեսանք, բացառվում են՝ ձևավորելով իրենց սեփական համատեքստը: Այլ կերպ ասած, մինչռեֆլեքսիվ ուղղակի դիրքորոշման մեջ վերապրվող օբյեկտները ներկայանում են յուրաքանչյուրն իր սեփական էքզիստենցիալ ինդեքսով: Այս ցուցանիշը գործում է նախառեֆլեքսիվ դիրքորոշման մեջ այնքանով, որքանով այն նպաստում է վերապրվողի, այն է՝ իր գոյության կարգը մատնանշող և դրան հղող օբյեկտի ներկայության իմաստի սահմանմանը: Էքզիստենցիալ ինդեքսը գործառում է անձայն. այն վերապրվում է իմպլիցիտ եղանակով: Իրականության պրեդիկատները, որոնք ենթադրում են հասկացում ռեֆլեքսիվ դիրքորոշման մեջ (իրական օբյեկտների՝ իբրև իրական, երևակայական օբյեկտների՝ իբրև երևակայական), արտահայտում են էքզիստենցիալ ինդեքսի հայտնաբերում, էքսպլիկացիա և թեմավորում: Հուսերլի առաջարկած իրականության պրեդիկատների տեսությունը, թեև նա այն սահմանափակում է իրականության և երևակայության կարգերով, կարելի է ընդհանրացնել և տարածել գոյության բոլոր կարգերի վրա:

ԹՈՄԱՍ ԼՈՒԿՄԱՆ
ՓԻԹԵՐ ԲԵՐԳԵՐ

# ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ[111]

## Առօրյա կյանքի իրականությունը

Քանի որ այս ուսումնասիրության նպատակն է առօրյա կյանքի իրականության սոցիոլոգիական վերլուծությունը, ավելի ճիշտ՝ առօրյա կյանքում վարքը որոշող գիտելիքի, ապա մեզ այնքան էլ չի հետաքրքրում, թե ինչպե՞ս է այս իրականությունը երևում ինտելեկտուալներին տարբեր տեսական հեռանկարներում: Նախ և առաջ մենք պետք է անդրադառնանք առօրեական իրականությանը՝ հասարակության շարքային անդամների կողմից դրա իմաստավորման մեջ: <> Այնպես որ, չնայած մեր նախաձեռնությունը ևս տեսական բնույթ է կրում, այն կապված է էմպիրիկ սոցիոլոգիայի առարկան կազմող իրականության հասկացման հետ, ասել է, թե՝ առօրյա կյանքի աշխարհի:

Մեր նպատակն, իհարկե, փիլիսոփայության մեջ խորանալը չէ: Սակայն, առօրյա կյանքի իրականությունը հասկանալու համար, պետք է հստակեցնել վերջինիս իրական բնույթը՝ նախքան սոցիոլոգիական վերլուծությանն անցնելը: Առօրյա կյանքը մի իրականություն է, որը մեկնաբանվում է մարդկանց կողմից և սուբյեկտիվ նշանակալիություն ունի նրանց համար՝ որպես ամբողջական աշխարհ: Մենք, լինելով սոցիոլոգներ, վերածում ենք այդ իրականությունը մեր վերլուծության օբյեկտի: Էմպիրիկ սոցիոլոգիայի շրջանակներում կարելի է ընդունել այս իրականությունը որպես իրողություն, իսկ դրա որոշակի երևույթները՝ որպես փաստեր, առանց այդ իրականության հիմքերի հետագա ուսումնասիրության, ինչը փիլիսոփայական խնդիր է: Սա-

[111] Berger, P. L., Luckmann T. (1991) The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge. London: Penguin Books, ch. 1, pp. 31-49. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

կայն, հաշվի առնելով սույն ուսումնասիրության նպատակը, մենք չենք կարող ամբողջությամբ շրջանցել փիլիսոփայական հիմնախնդիրը: Հասարակության շարքային անդամներն իրենց սուբյեկտիվորեն իմաստավորված վարքում առօրյա կյանքի աշխարհը ոչ միայն համարում են ինքնին հասկանալի իրականություն: Դա մի աշխարհ է, որը ստեղծվում է նրանց մտքերում և գործողություններում, որոնք նրանք վերապրում են՝ որպես իրական: Ուստի, նախքան մեր հիմնական խնդրին անդրադառնալը, մենք պետք է փորձենք հստակեցնել առօրյա կյանքի իմացության հիմքերը, մասնավորապես սուբյեկտիվ գործընթացների (և իմաստների) օբյեկտիվացման, որի միջոցով ինտերսուբյեկտիվ առօրեական աշխարհը կառուցվում է: Մեր հետազոտության հիմնական նպատակի համար դա նախնական խնդիր է, և մենք կարող ենք միայն ուրվագծել այն, ինչը համարում ենք փիլիսոփայական խնդրի համարժեք լուծում, շտապենք ավելացնել՝ համարժեք միայն այն իմաստով, որ այն կարող է ծառայել որպես սոցիոլոգիական վերլուծության ելակետ: Ուստի հետագա դատողությունները կրում են սոցիոլոգիական վերլուծությանը նախորդող փիլիսոփայական պրոլեգոմենների[112] բնույթ: Առօրյա կյանքի իմացության հիմքերի առավել համապատասխան պարզաբանման մեթոդ ենք համարում ֆենոմենոլոգիական վերլուծությունը՝ զուտ նկարագրական մեթոդ, և որպես այդպիսին՝ «էմպիրիկ», այլ ոչ թե «գիտական», որքանով մենք հասկանում ենք էմպիրիկ գիտության բնույթը:

Առօրյա կյանքի կամ անգամ վերջինիս սուբյեկտիվ ընկալման ֆենոմենոլոգիական վերլուծությունը ձեռնպահ է մնում պատճառահետևանքային և գենետիկ վարկածներից, ինչպես նաև վերլուծվող երևույթների գոյաբանական կարգավիճակի վերաբերյալ պնդումներից: Դա կարևոր է հիշել: Սովորական գիտակցությունը պարունակում է առօրյա կյանքի բազմաթիվ նախնական և քվազի գիտական մեկնաբանություններ, որոնք համարվում են ինքնին հասկանալի: Հետևաբար, նկարագրելով առօրեականության իրականությունը, առաջին հերթին պետք է անդրադառնալ այս մեկնաբանություններին՝ հաշվի

[112] Նախնական, ներածական դատողությունների - *խմբագրի ծանոթագրություն:*

առնելով դրանց ակնհայտ, ինքնին հասկանալի բնույթը, թեև ֆենոմենոլոգիական փակագծերի շրջանակներում:

Գիտակցությունը միշտ ինտենցիոնալ է: Այն միշտ ուղղված է օբյեկտների կամ ենթադրում է դրանք: Մենք երբեք չենք կարող հասկանալ գիտակցության ինչ-որ երևակայական սուբստրատի էությունը, հնարավոր է միայն ինչ-որ բանի կամ որևէ մեկի գիտակցության հասկացումը, անկախ նրանից, թե գիտակցության օբյեկտը ընկալվում է որպես արտաքին ֆիզիկական աշխարհի կամ ներքին սուբյեկտիվ իրականության տարր: Եթե ես նայում եմ (առաջին դեմքը այստեղ և հաջորդիվ օգտագործվում է անհատի առօրեական գիտակցությունը ցույց տալու համար) Նյու Յորքի համայնապատկերին կամ զգում եմ ներքին անհանգստություն, տեղի ունեցող գործընթացները գիտակցության մեջ երկու դեպքում էլ ինտենցիոնալ են: Կարիք չկա բացատրելու, որ Նյու Յորքի համայնապատկերը տեսնողի գիտակցությունը տարբերվում է տագնապի գիտակցումից: Մանրակրկիտ ֆենոմենոլոգիական վերլուծությունը օգնում է բացահայտել կենսափորձի տարբեր շերտեր և տարբեր իմաստային կառույցվածքներ, որոնք պարունակվում են, օրինակ, նրանում, որ ձեզ կծել է շունը, այն հիշողությունում, որ ձեզ կծել է շունը, բոլոր շների հանդեպ ունեցած վախերում և այլն: Մեզ այստեղ հետաքրքրում է ցանկացած գիտակցության ընդհանուր ինտենցիոնալ բնույթը:

Տարբեր օբյեկտներ ներկայանում են գիտակցությանը՝ որպես իրականության տարբեր ոլորտների բաղկացուցիչ տարրեր: Ես ընդունում եմ, որ այն մարդիկ, ում ես հանդիպում եմ առօրյա կյանքում, կապ ունեն իրականության հետ և խիստ տարբերվում են իմ երազների անխոհեմ պատկերներից: Օբյեկտների երկու համակարգերն իմ գիտակցության մեջ բոլորովին տարբեր լարվածություն են առաջացնում, և իմ ուշադրությունը նրանց նկատմամբ բոլորովին այլ է: Դա նշանակում է, որ իմ գիտակցությունը կարող է շարժվել իրականության տարբեր ոլորտներում: Այլ կերպ ասած, ես հասկանում եմ աշխարհը, որը բաղկացած է բազմաթիվ իրականություններից: Շարժվելով մի իրականությունից մյուսը՝ ես ընկալում եմ այս անցումը որպես

մի տեսակ ցնցում, որն առաջ է գալիս այդ անցման հետ կապված ուշադրության փոփոխություններից: Դա լավագույնս ցույց է տալիս այն վիճակը, որը մարդը զգում է արթնանալիս:

Ի թիվս բազմաթիվ իրողությունների՝ կա մեկը, որը ներկայացնում է իրականությունը par exellence: Դա առօրյա կյանքի իրականությունն է: Իր արտոնյալ դիրքի շնորհիվ այն իրավունք է ստանում կոչվելու բարձրագույն իրականություն: Գիտակցության լարվածությունն առավել բարձր է առօրյա կյանքում, այսինքն՝ վերջինս ծածկում է գիտակցությունն առավել ուժեղ, համառորեն և խորը: Անհնար է չնկատել և դժվար է թուլացնել առօրյա կյանքի պարտադրող ներկայությունը: Հետևաբար, այն ստիպում է ինձ չափազանց ուշադիր լինել իր հանդեպ: Ես առօրյա կյանքն ընկալում եմ արթուն վիճակում: Գոյության արթուն վիճակը առօրյա կյանքի իրականության մեջ և դրա ընկալումը ընդունվում է իմ կողմից որպես նորմալ և ակնհայտ, այսինքն՝ կազմում է իմ բնական դիրքորոշումը:

Ես ենթադրում եմ առօրյա կյանքի իրականությունն՝ իբրև կարգաբերված իրականություն. դրա երևույթներն արդեն համակարգված են նմուշներում, որոնք կարծես անկախ են իմ հասկացումից և որոնք ծածկում են այն: Առօրյա կյանքի իրականությունն արդեն օբյեկտիվացված է, այսինքն՝ կառուցված այն օբյեկտների կարգով, որոնք նշանակվել են որպես օբյեկտներ իմ հայտնվելուց առաջ: Առօրյա կյանքում օգտագործվող լեզուն մշտապես ինձ տրամադրում է անհրաժեշտ օբյեկտիվացումներ և սահմանում է այն կարգը, որի շրջանակներում իմաստ և նշանակություն են ստանում և՛ այդ օբյեկտները, և՛ առօրյա կյանքը:

Ես ապրում եմ աշխարհագրական որոշակի վայրում, գործածում եմ որոշակի գործիքներ՝ դանակից մինչև սպորտային ավտոմեքենաներ, որոնք նշված են իմ հասարակության տեխնիկական բառապաշարում. ես ապրում եմ մարդկային կապերի միահյուսման մեջ՝ իմ շախմատային ակումբից մինչև Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որոնք նույնպես կարգաբերված են բառարանի միջոցով: Այսպիսով, լեզուն

նշում է հասարակության մեջ իմ կյանքի կոորդինատները և լցնում է այդ կյանքը նշանակալի օբյեկտներով:

Առօրյա կյանքի իրականությունը կազմակերպվում է իմ մարմնի՝ «այստեղ»-ի և իմ ակտուալ ժամանակի «հիմա»-ի շուրջ: «Այստեղ-և-հիմա»-ն առօրյա կյանքի իրականության հանդեպ իմ ուշադրության կիզակետն է: Առօրյա կյանքի իրականությունը, սակայն, չի սպառվում այդ անմիջական ներկայությամբ, այլ ընդգրկում է նաև այն երևույթները, որոնք չեն տրված «այստեղ և հիմա»: Սա նշանակում է, որ ես ընկալում եմ առօրյա կյանքը՝ կախված տարածական և ժամանակային մոտիկությունից կամ հեռվությունից: Ինձ ամենամոտն է առօրյա կյանքի այն գոտին, որն ուղղակիորեն հասանելի է ֆիզիկական մանիպուլյացիաների համար: Այդ գոտին ներառում է իմ հասանելիության սահմաններում գտնվող աշխարհը, որում ես գործում եմ այնպես, որ ձևափոխեմ իր իրականնությունը, կամ այն աշխարհը, որում ես աշխատում եմ: Այս աշխատանքի աշխարհում իմ գիտակցությունը առաջնորդվում է պրագմատիկ շարժառիթով, այսինքն՝ իմ ուշադրությունը այս աշխարհի հանդեպ որոշվում է հիմնականում նրանով, ինչ ես արել եմ, անում եմ կամ պատրաստվում եմ անել: Այնպես որ, սա իմ par excellence[113] աշխարհն է: Իհարկե, ես գիտեմ, որ առօրյա կյանքի իրականությունը պարունակում է նաև այլ գոտիներ, որոնք այնքան էլ մատչելի չեն իմ հասկացմանը: Կամ ես այդ գոտիներում պրագմատիկ հետաքրքրություն չունեմ, կամ իմ հետաքրքրությունն ուղղակի չէ, քանի որ դրանք կարող են ինձ համար մանիպուլյացիայի պոտենցիալ գոտիներ լինել: Սովորաբար իմ հետաքրքրությունը այդ հեռացված վայրերում պակաս ինտենսիվ է և, իհարկե, ոչ այնքան համառ: Ես շատ հետաքրքրված եմ մի շարք օբյեկտներով, որոնք ներգրավված են իմ ամենօրյա աշխատանքում, օրինակ՝ ավտոտնակի աշխարհով, եթե ես մեխանիկ եմ: Ինձ հետաքրքրում է, թեև անուղղակի, այն, ինչ տեղի է ունենում Դետրոյտի ավտոմոբիլային արդյունաբերության գիտահետազոտական լաբորատորիաներում: Քիչ հավանական է, որ մի օր ես կայցելեմ այդպիսի լաբորատորիաներից մեկը, բայց այնտեղ կատար-

---

[113] Գլխավոր – *խմբագրի ծանոթագրություն:*

ված աշխատանքը, վերջին հաշվով, կազդի իմ ամենօրյա կյանքի վրա: Ինձ կարող է հետաքրքրել, թե ի՞նչ է տեղի ունենում Քենեդիի հրվանդանում կամ ինչ-որ տեղ, բայց սա հետաքրքրություն է՝ մասնավոր գործ կամ ավելի շուտ ժամանցի ընտրություն և ոչ առօրյա կյանքի հրատապ անհրաժեշտություն:

Առօրյա կյանքի իրականությունն ինձ երևում է՝ իբրև միջսուբյեկտիվ աշխարհ, որը ես կիսում եմ այլ մարդկանց հետ: Հենց միջսուբյեկտիվության շնորհիվ է, որ առօրյա կյանքը կտրուկ տարբերվում է իմ կողմից գիտակցվող մյուս իրականություններից: Ես միայնակ եմ երազների աշխարհում, բայց ես գիտեմ, որ առօրյա կյանքի աշխարհը նույնքան իրական է ուրիշների համար, որքան ինձ համար: Իսկապես, առօրյա կյանքում ես չեմ կարող գոյություն ունենալ առանց մշտական փոխազդեցության և այլ մարդկանց հետ շփվելու: Ես գիտեմ, որ իմ բնական դիրքորոշումն այս աշխարհի նկատմամբ համապատասխանում է այլ մարդկանց բնական դիրքորոշումներին, որ նրանք նույնպես հասկանում են այն օբյեկտիվացումները, որոնց միջոցով այս աշխարհը կարգաբերված է և կազմակերպված «այստեղ-և-հիմա»-ի շուրջ: Իհարկե, ես գիտեմ և այն փաստը, որ այլ մարդիկ ունեն մեր ընդհանուր աշխարհի սեփական հեռանկարները, որոնք նույնական չեն իմ հեռանկարին: Իմ «այստեղ»-ը նրանց «այնտեղ»-ն է: Իմ «հիմա»-ն ամբողջությամբ չի համընկնում իրենց «հիմա»-ին: Իմ նախագծերը ոչ միայն տարբերվում են, այլև կարող են անգամ հակասել նրանց նախագծերին: Միևնույն ժամանակ, ես գիտեմ, որ ապրում եմ նրանց հետ ընդհանուր աշխարհում: Բայց ամենակարևորն այն է, որ ես գիտեմ, որ այս աշխարհում կա մշտական համապատասխանություն իմ նշանակությունների և նրանց նշանակությունների միջև, որ մենք ունենք ընդհանուր պատկերացում այս իրականության մասին: Հենց այդ պատճառով է, որ բնական դիրքորոշումը առօրեական գիտակցության դիրքորոշումն է, քանի դեռ այն կապված է բոլորի համար ընդհանուր աշխարհի հետ: Առօրեական գիտելիքն այն գիտելիքն է, որը ես կիսում եմ ուրիշների հետ՝ առօրյա կյանքի սովորական ինքնաակնհայտության մեջ:

Առօրյա կյանքի իրականությունն ունի ինքնին հասկանալի բնույթ: Այն չի պահանջում որևէ լրացուցիչ ստուգում, բացի այն, որ այդ իրականությունն ուղղակի գոյություն ունի: Այն գոյություն ունի՝ որպես ակնհայտ և անհաղթահարելի փաստականություն: Ես գիտեմ, որ այն իրական է: Չնայած ինձ մոտ կարող են կասկածներ առաջանալ վերջինիս իրական լինելու մեջ, ես պետք է զերծ մնամ դրանցից, քանի որ ապրում եմ առօրյա կյանքով ՝ համաձայն սահմանված կարգի: Կասկածից ձեռնպահ մնալն այնքան հաստատուն է, որ դրանից հրաժարվելու համար, օրինակ, տեսական կամ կրոնական մտորումներում, ես պետք է կտրուկ թռիչք կատարեմ: Առօրյա կյանքի աշխարհին ինքն է իրեն հռչակում, և եթե ես ուզում եմ մարտահրավեր նետել դրան, ապա պետք է զգալի ջանքեր գործադրեմ: Գիտնականի կամ փիլիսոփայի անցումը բնական դիրքորոշումից դեպի տեսական դիրքորոշում լավ ցույց է տալիս այս պահը: Այնուամենայնիվ, այս իրականության ոչ բոլոր դիտանկյուններն են հավասարապես խնդրահարույց: Առօրյա կյանքը բաժանված է հատվածների, որոնցից մի քանիսը ընկալվում են սովորական կերպով, իսկ մյուսներում ես բախվում եմ այս կամ այն տեսակի խնդիրների հետ: Ենթադրենք, ես ավտոմեխանիկ եմ, քաջատեղյակ ամերիկյան մակնիշի ավտոմեքենաների մասին: Այն ամենը, ինչ կապված է դրանց հետ, իմ ամենօրյա կյանքի՝ սովորական և ոչ խնդրահարույց կողմն է: Բայց մի օր ավտոտնակում հայտնվում է նա, ով խնդրում է ինձ վերանորոգել ֆոլքսվագեն մակնիշի ավտոմեքենա: Եվ հիմա ես ստիպված ներգրավվում եմ արտասահմանյան մակնիշի մեքենաների խնդրահարույց աշխարհ: Ես կարող եմ դա անել մասնագիտական հետաքրքրասիրությունից դրդված կամ այն պատճառով, որ ստիպված եմ, բայց ամեն դեպքում հիմա ես բախվում եմ այնպիսի խնդիրների, որոնք ինձ համար սովորական չեն դարձել: Միևնույն ժամանակ, ես, իհարկե, չեմ հեռանում առօրյա կյանքի իրականությունից: Ըստ էության, այն դառնում է ավելի հարուստ, քանի որ դրանում հայտնվում են գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են արտասահմանյան մակնիշների մեքենաների վերանորոգման համար:

Առօրյա կյանքի իրականությունը ներառում է երկու տեսակի հատվածներ, քանի որ այն, ինչ խնդիր է մեկ իրականության համար, այդպիսին չէ այլ աշխարհներում (օրինակ՝ տեսական ֆիզիկայի իրականության կամ գիշերային մղձավանջների իրականության): Քանի որ առօրյա կյանքի սովորական կարգը չի ընդհատվում, այն ընկալվում է որպես ոչ խնդրահարույց:

Բայց նույնիսկ առօրեական իրականության ոչ խնդրահարույց հատվածները մնում են այդպիսին, քանի դեռ չկան հակառակի ապացույցներ, այսինքն՝ քանի դեռ հիմնախնդրի առաջացմանը զուգահեռ չի ընդհատվում իրենց հետևողական գործառումը: Երբ դա տեղի է ունենում, առօրյա կյանքի իրականությունը ձգտում է ինտեգրել խնդրահարույց հատվածը նրա մեջ, որն արդեն խնդրահարույց չէ: Առօրեական գիտելիքը պարունակում է բազմաթիվ առաջարկություններ, թե ինչպե՞ս է պետք դա անել: Օրինակ, մարդիկ, որոնց հետ ես աշխատում եմ, խնդրահարույց չեն ինձ համար, քանի դեռ նրանք ինչ-որ ծանոթ, ինքնըստինքյան հասկանալի բան են անում, օրինակ՝ հարևան սեղաններին գրամեքենայի վրա տպում են: Նրանք դառնում են խնդրահարույց, եթե խախտում են այդ սովորական կարգը, օրինակ՝ անկյունում հավաքվելով և շշնջալով: Քանի որ ես պետք է հասկանամ այդ անսովոր գործողությունների իմաստը, ես ունեմ այս խնդիրը լուծելու և ոչ խնդրահարույց, սովորական առօրեական ընթացքին իմ առօրեական գիտելիքը վերաինտեգրելու մի քանի հնարավոր տարբերակներ: Նրանք կարող են խորհրդակցել, թե ինչպե՞ս է պետք վերանորոգել ավտոմեքենան, կամ գուցե նրանցից մեկը ստացել է ղեկավարի հրատապ կարգադրություններ և այլն: Մյուս կողմից, ես կարող եմ հայտնաբերել, որ նրանք քննարկում են գործադուլի կազմակերպումը, ինչը դուրս է իմ փորձից, սակայն դեռևս գտնվում է այն հիմնախնդիրների սահմաններում, որոնց հետ կապված է իմ առօրեական գիտելիքը: Այս փաստի հայտնաբերումը ավելի շուտ հանդես է գալիս հիմնախնդրի կարգավիճակով, այլ ոչ իբրև պարզապես վերաինտեգրում առօրյա կյանքի ոչ թափանցիկ հատվածին: Սակայն, եթե ես գալիս եմ այն եզրակացության, որ իմ գործընկերները հավաքական կերպով

խանգարվել են, ապա այդ խնդիրը միանգամայն այլ լույսի ներքո է հայտնվում: Այժմ ես բախվում եմ մի խնդրի, որը դուրս է առօրյա կյանքի իրականությունից և վկայում է բոլորովին այլ իրականության մասին: Իսկապես, իմ գործընկերների խելագարության մասին եզրակացությունը ipso facto նշանակում է, որ նրանք հայտվել են մի աշխարհում, որն այլևս առօրյա կյանքի մեր ընդհանուր աշխարհը չէ: Առօրյա կյանքի իրականության համեմատությամբ մյուս իրականությունները դառնում են իմաստների վերջավոր ոլորտներ, գերագույն իրականության անկլավներ: Գերագույն իրականությունը շրջապատում է դրանք բոլոր կողմերից, և գիտակցությունը միշտ վերադառնում է այդ իրականությանը ինչպես ճանապարհորդությունից: Դա ավելի հասկանալի է դառնում երազների կամ տեսական մտածողության իրականության՝ արդեն իսկ բերված օրինակների վրա:

Համանման են «անցումները» առօրյա կյանքի աշխարհից դեպի խաղի աշխարհ: Այսպիսի խաղի փայլուն օրինակ է թատրոնը: Անցումը մի իրականությունից մյուսին երևում է վարագույրի բարձրանալով և իջնելով: Երբ վարագույրը բարձրանում է, հանդիսատեսը «տեղափոխվում է» այլ աշխարհ՝ իր սեփական իմաստներով և կարգով, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն կամ հակառակը, շատ ընդհանրություններ ունեն առօրյա կյանքի կարգի հետ: Երբ վարագույրը իջնում է, հանդիսատեսը «վերադառնում է իրականությանը», ավելի ճիշտ, առօրեական կյանքի բարձրագույն իրականությանը, որի համեմատությամբ բեմին ծավալվող իրականությունն այժմ կարծես աննշան և անցողիկ է, անկախ նրանից, թե որքան կենդանի էր այն մի քանի րոպե առաջ: Գեղագիտական և կրոնական փորձը հարուստ է այս տեսակ անցումներով, քանի որ արվեստը և կրոնը ստեղծում են իմաստների վերջավոր ոլորտներ: <>

Առօրյա կյանքի աշխարհն ունի տարածական և ժամանակային կառուցվածքներ: Տարածական կառուցվածքն այստեղ մեզ քիչ է հետաքրքրում: Բավական է միայն ասել, որ այն ունի սոցիալական չափում այն բանի շնորհիվ, որ իմ մանիպուլյացիայի գոտին հատվում է

այլ մարդկանց մանիպուլյացիաների գոտիների հետ: Մեր նպատակի համար շատ ավելի կարևոր է ժամանակային կառուցվածքը:

Ժամանակայնությունը գիտակցությանը բնորոշ առանձնահատկություն է: Գիտակցության հոսքը միշտ կարգաբերված է ժամանակի մեջ: Կարելի է առանձնացնել ժամանակայնության տարբեր մակարդակներ, քանի որ այն բնորոշ է ցանկացած սուբյեկտի: Յուրաքանչյուր անհատ զգում է ներքին ժամանակը, որը հիմնված է մարմնի հոգեբանական ռիթմերի վրա, թեև նույնական չէ վերջիններիս: Միջսուբյեկտիվ ժամանակայնության մակարդակները մանրամասն վերլուծելու համար պետք է զգալիորեն ընդլայնել հասկացությունը որոշակիացնող դատողությունների շրջանակը:

Ինչպես արդեն նշեցինք, առօրյա կյանքի միջսուբյեկտիվությունը նույնպես ունի ժամանակային չափումներ: Առօրյա կյանքի աշխարհում կա ստանդարտ ժամանակ, որը միջսուբյեկտիվորեն հասանելի է: Ստանդարտ ժամանակը կարելի է հասկանալ որպես տիեզերական ժամանակի և հասարակության մեջ գոյություն ունեցող օրացույցի հատում, որը հիմնված է բնության ժամանակային ցիկլերի և ներքին ժամանակի վրա: Ժամանակայնության այս տարբեր մակարդակների լիակատար միաժամանակություն լինել չի կարող, ինչի մասին վկայում է սպասման ընկալումը: Ինչպես իմ օրգանիզմը, այնպես էլ իմ հասարակությունն ինձ ու իմ ներքին ժամանակին իրադարձությունների որոշակի հաջորդականություն են տալիս, որը ներառում է նաև սպասումը: Ես կարող եմ ցանկանալ մասնակցություն ունենալ սպորտային մրցմանը, բայց ես պետք է սպասեմ, մինչև իմ վնասված ծունկը վերականգնվի: Կամ կրկին պետք է սպասեմ, մինչև պատրաստ լինեն այն թղթերը, որոնք անհրաժեշտ են իմ որակավորման պաշտոնական ճանաչման համար: Լրիվ հասկանալի է, որ առօրյա կյանքի ժամանակային կառուցվածքը չափազանց բարդ է, քանի որ էմպիրիկ ժամանակայնության տարբեր մակարդակներն անընդհատ պետք է համապատասխանեցվեն միմյանց: Ես բախվում եմ առօրյա կյանքի ժամանակային կառուցվածքին՝ իբրև փաստայնության, որը ես պետք է հաշվի առնեմ, այսինքն՝ պետք է փորձեմ անել այնպես, որ իմ ծրագրերը հա-

մընկնեն վերջինիս հետ՝ ըստ ժամանակի: Առօրյա կյանքում ես ընկալում եմ ժամանակը որպես անընդհատ և վերջավոր: Իմ ողջ գոյությունն այս աշխարհում, որը մշտապես կանոնակարգվում է ժամանակով, ամբողջովին համակված է դրանով: Իմ սեփական կյանքը արտաքին պայմանական ժամանակային հոսքի միայն մի դրվագ է: Այն գոյություն է ունեցել մինչև իմ ծնունդը և գոյություն կունենա իմ մահվանից հետո: Իմ մահվան անխուսափելիության իմացությունը այդ ժամանակը դարձնում է վերջավոր ինձ համար: Ես ունեմ միայն որոշակի քանակությամբ ժամանակ, որը թույլ է տալիս իրականացնել իմ ծրագրերը, և դրա իմացությունը ազդում է այդ նախագծերի նկատմամբ իմ վերաբերմունքի վրա: Քանի որ ես չեմ ուզում մահանալ, այս գիտելիքը անհանգստությամբ է թունավորում իմ ծրագրերը: Ես գիտեմ, որ չեմ կարող անվերջ մասնակցել սպորտային մրցումների: Ես գիտեմ, որ մեծանում եմ: Կարող եմ նույնիսկ վախենալ, որ սա իմ մասնակցության վերջին հնարավորությունն է: Իմ սպասումը տագնապային կլինի այնքանով, որքանով ժամանակի վերջավորությունը սպառնում է իմ ծրագրերին: Ինչպես արդեն նշվել է, ժամանակային կառուցվածքը հարկադրող է: Ես չեմ կարող սեփական կամքով շրջել իրադարձությունների հերթականությունը, որը վերջինս սահմանում է՝ «առաջինը-սկզբում». սա առօրյա կյանքի իմ իմացության նշանակալի տարրն է: Այսպես, ես չեմ կարող այս կամ այն քննությունը հանձնել, քանի դեռ չեմ յուրացրել որոշակի կրթական ծրագրեր, չեմ կարող անցնել աշխատանքի, մինչև քննություն չհանձնեմ և այլն: Բացի այդ, ժամանակային կառուցվածքը ենթադրում է պատմականություն, որը որոշում է իմ իրավիճակն առօրյա կյանքի աշխարհում: Ես ծնվել եմ մի օր, գնացել դպրոց մեկ այլ օր, սկսել եմ աշխատել որևէ երրորդ օր և այլն: Սակայն այդ ժամկետները միշտ «տեղադրված» են ավելի լայն պատմական շրջանակներում, և այդ «տեղադրումն» անկասկած ձևավորում է իմ իրավիճակը: Այսպես, ես ծնվեցի լիակատար սնանկության տարում, երբ իմ հայրը կորցրեց իր ողջ ունեցվածքը: Ես գնացի դպրոց անմիջապես հեղափոխությունից առաջ, սկսեցի աշխատել համաշխարհային պատերազմից անմիջապես հետո և այլն: Ժամանակային կառուցված-

քը սահմանում է ոչ միայն ցանկացած օրվա «օրակարգի» նախահաստատված հաջորդականությունը, այլև իմ ողջ կենսագրության: Ժամանակային կառույցվածքի կողմից սահմանված կոորդինատային համակարգի շրջանակներում ես ընկալում եմ ինչպես ամենօրյա «ծիսակատարությունը», այնպես էլ իմ ողջ կենսագրությունը: Ժամացույցն ու օրացույցը հաստատում են, որ ես իրականում «իմ ժամանակի մարդ եմ»: Միայն այս ժամանակային կառուցվածքի շրջանակներում է առօրյա կյանքն ինձ համար պահպանում իրականության իր շեշտադրումը: Այսպես, այն դեպքերում, երբ ես այս կամ այն պատճառով կարող եմ «ապակողմնորոշվել» (ասենք, եթե ավտոմոբիլային աղետի արդյունքում կորցնեմ հիշողությունս), ես զգում եմ գրեթե բնազդային ձգտում «վերակողմնորոշվելու» առօրյա կյանքի ժամանակային կառուցվածքի շրջանակներում: Ես նայում եմ իմ ժամացույցին և փորձում եմ հիշել ամսաթիվը: Միայն այդ գործողությունների շնորհիվ է, որ ես կրկին վերադառնում եմ առօրյա կյանքի իրականություն:

**Սոցիալական փոխազդեցությունն առօրյա կյանքում**

Առօրյա կյանքի իրականությունը ես կիսում եմ այլ մարդկանց հետ: Բայց ինչպե՞ս են այդ մյուսներն ընկալվում առօրյա կյանքում: Կրկին կարելի է տարբերակել այս ընկալման մի քանի եղանակներ: Առավել կարևոր է այլ մարդկանց ընկալումը դեմ առ դեմ իրավիճակում, որը սոցիալական փոխազդեցության նախատիպն է: Մյուս բոլոր դեպքերը շեղումներն են:

Դեմ առ դեմ իրավիճակում ուրիշն ինձ ներկայանում է կենդանի ներկայում, որը մենք երկուսս էլ վերապրում ենք: Ես գիտեմ, որ այդ նույն կենդանի ներկայում ես կանգնած եմ նրա առջև: Իմ և նրա «այստեղ-և-հիմա»-ն մշտապես բախվում են իրար, քանի դեռ տևում է դեմ առ դեմ իրավիճակը: Արդյունքում տեղի է ունենում իմ և նրա արտահայտչականության անընդհատ փոխանակում: Ես տեսնում եմ նրա ժպիտը, հետո, արձագանքելով իմ մռայլ տեսքին, նա դադարում է ժպտալ, հետո կրկին ժպտում է՝ տեսնելով իմ ժպիտը և այլն: Իմ յուրաքանչյուր արտահայտություն ուղղված է նրան և հակառակը. ինք-

նաարտահայտման ակտերի այս շարունակական փոխադարձությունը միաժամանակ հասանելի է երկուսիս: Դա նշանակում է, որ դեմ առ դեմ իրավիճակում ես կարող եմ «բռնել» մյուսի սուբյեկտիվության բազմաթիվ նշաններ։ Իհարկե, դրանցից որոշները կարող եմ մեկնաբանել սխալ: Ես կարող եմ մտածել, որ ուրիշը ժպտում է, թեև նա, ըստ էության, քմծիծաղ է տալիս: Այնուամենայնիվ, սոցիալական հարաբերությունների որևէ այլ ձև չի կարող նման լիարժեքությամբ վերարտադրել սուբյեկտիվության հատկություններն այնպես, ինչպես դեմ առ դեմ իրավիճակը: Միայն այստեղ է, որ մյուսի սուբյեկտիվությունը էմպատիկորեն «մոտ է»: Այլ մարդկանց հետ կապի մնացյալ ձևերն այս կամ այն չափով «հեռու են»:

Դեմ առ դեմ իրավիճակներում մյուսը բացարձակ իրական է: Այս իրականությունը առօրյա կյանքի ողջ իրականության մաս է կազմում: Իհարկե, ուրիշը կարող է ինձ համար իրական լինել առանց դեմ առ դեմ հանդիպման, օրինակ՝ իր հեղինակության կամ նամակագրական կապի շնորհիվ: Սակայն, բառի ամենախորը իմաստով, նա ինձ համար իրական է դառնում միայն դեմ առ դեմ հանդիպման պարագայում: Կարելի է անգամ ասել, որ դեմ առ դեմ իրավիճակում մյուսն ինձ համար շատ ավելի իրական է, քան ես ինքս: Իհարկե «ես գիտեմ ինձ ավելի լավ», քան կարող եմ իմանալ նրան: Սեփական սուբյեկտիվությունն ինձ հասանելի է այնպես, ինչպես երբեք հասանելի չի կարող լինել նրանը՝ անկախ նրանից, թե որքան մոտիկ են մեր հարաբերությունները: Իմ անցյալն իմ հիշողության մեջ է և, թեև ես չեմ կարող վերականգնել այն ողջ ծավալով, միևնույն է, դա ավելին է, քան ուրիշը կարող է ասել դրա մասին: Սակայն սեփական անձի «ավելի լավ իմացությունը» պահանջում է ռեֆլեքսիա: Այն ինձ տրված չէ ուղղակիորեն, այնինչ մյուսը դեմ առ դեմ իրավիճակում տրված է հենց այդպես: Սա է պատճառը, որ նա հասանելի է ինձ այնպիսին, «ինչպիսին որ կա»: Այս հասկացումն անընդհատ է և մինչռեֆլեքսիվ: Մյուս կողմից, այն, թե «ինչպիսին եմ ես», այնքան էլ հասկանալի չէ: Ինքս ինձ հասկանալու համար ես պետք է դադարեցնեմ վերապրման անընդհատ ինքնաբերականությունը և գիտակցաբար ուշադրություն դարձնեմ ինքս ինձ:

Բացի այդ, սեփական անձի վերաբերյալ նման ռեֆլեքսիան սովորաբար առաջանում է մեկ այլ մարդու կողմից իմ նկատմամբ դրսևորված այս կամ այն վերաբերմունքից: Սովորաբար դա «հայելային» արձագանքն է իմ նկատմամբ մյուսի վերաբերմունքին: Դրանից հետևում է, որ դեմ առ դեմ հանդիպումներում ուրիշների հետ հարաբերությունները շատ շարժուն են:

Բավականին դժվար է հաստատել փոխազդեցության կարծր նմուշներ դեմ առ դեմ իրավիճակներում: Ինչպիսին որ լինեն նմուշները, դրանք անընդհատ փոխվելու են՝ շնորհիվ չափազանց բազմազան և դժվար ընկալելի սուբյեկտիվ նշանակությունների փոխադարձ փոխանակման: Օրինակ, ինձ կարող է թվալ, որ ուրիշն իմ հանդեպ անբարյացակամ է, և այդ ժամանակ իմ վարքն իր հանդեպ դուրս չի գա «անբարյացակամ հարաբերությունների»՝ յուրովի հասկացվող նմուշից: Սակայն դեմ առ դեմ իրավիճակում ես կարող եմ բախվել մյուսի դիրքորոշումներին ու գործողություններին, որոնք այնքան են հակասում այս նմուշին, որ ես ստիպված կլինեմ հրաժարվել անտեղի նմուշից և համարել նրան բարյացակամ: Այլ կերպ ասած, նմուշը չի կարող տեղավորել ուրիշի սուբյեկտիվության հատկությունների ողջ բազմազանությունը, որը հասանելի է իմ հասկացողությանը դեմ առ դեմ իրավիճակում: Ինձ համար, ընդհակառակը, շատ ավելի հեշտ է հաշվի չառնել այս բազմազան հատկությունները՝ նախքան մյուսի հետ դեմ առ դեմ հանդիպելը: Նույնիսկ նամակագրության տիպի «մտերիմ» հարաբերությունների պարագայում ես միանգամայն կարող եմ հաշվի չառնել մյուսի՝ ընկերության վստահեցումները՝ համարելով, որ դա չի արտացոլում նրա իրական վերաբերմունքն իմ նկատմամբ պարզապես այն պատճառով, որ նամակագրության մեջ ինձ պակասում է նրա անմիջական, չընդհատվող և իրական արտահայտչականությունը: Իհարկե, միանգամայն հնարավոր է, որ նույնիսկ դեմ առ դեմ իրավիճակում ես սխալ եմ մեկնաբանում մեկ այլ մարդու նշանակությունը, իսկ նա «երեսպաշտորեն» թաքցնում է այն: Միևնույն ժամանակ, դեմ առ դեմ հարաբերություններում շատ ավելի դժվար է սխալ մեկնաբա-

նել և «կեղծավորել», քան պակաս «մտերիմ» տիպի սոցիալական կապերում:

Մյուս կողմից, նույնիսկ դեմ առ դեմ իրավիճակում ես ընկալում եմ ուրիշին տիպականացման սխեմաների օգնությամբ, թեև դրանք ավելի են հակված նրա անմիջական միջամտությանը, քան փոխազդեցության «հեռու» ձևերը: Այլ կերպ ասած, թեև դեմ առ դեմ փոխազդեցության պարագայում բավականին դժվար է կիրառել կարծր նմուշներ, այն ի սկզբանե կարգաբերված է, եթե տեղի է ունենում առօրյա կյանքի սովորական կարգի շրջանակներում: Առօրյա կյանքի իրականությունը ներառում է տիպականացման սխեմաներ, որոնց լեզվով հնարավոր է հասկանալ ուրիշներին և շփվել նրանց հետ դեմ առ դեմ իրավիճակներում: Այսպես, ես ուրիշին ընկալում եմ որպես «տղամարդ», «եվրոպացի», «գնորդ», «կենդանի տիպ» և այլն: Այս բոլոր տիպականացումները շարունակաբար ազդում են նրա հետ իմ փոխազդեցության վրա: Մեր դեմ առ դեմ փոխազդեցությունը կկարգաբերվի այդ տիպականացումներով, մինչև որ դրանք կդառնան խնդրահարույց՝ իր միջամտության արդյունքում: Օրինակ՝ կարող է լինել այնպես, որ թեև նա «տղամարդ է», «եվրոպացի», «գնորդ», նա նաև կեղծ բարեպաշտ և բարոյախոս է, իսկ այն, ինչ սկզբում կայտառություն էր թվում, իրականում ամերիկացիների և մասնավորապես ամերիկյան առևտրականների հանդեպ արհամարհանքի արտահայտում է: Իհարկե, այստեղ իմ տիպականացման սխեման պետք է ձևափոխվի: Սակայն, քանի դեռ մարտահրավեր չի նետվել և հակառակի մասին խոսող վկայություններ չկան, տիպականացումները կպահպանվեն և կորոշեն իմ գործողությունները տվյալ իրավիճակում: Տիպականացման սխեմաները, որոնք հանդես են գալիս որպես դեմ առ դեմ իրավիճակի բաղկացուցիչ տարրեր, իհարկե, փոխադարձ են: Մյուսն էլ ինձ որոշակի տիպականության մեջ է ընկալում՝ որպես «տղամարդ», «ամերիկացի», «վաճառական» և այլն: Մյուսի տիպականացումը իմ կողմից ենթարկվում է միջամտության այնպես, ինչպես իմը՝ նրա կողմից: Այլ կերպ ասած, երկու տիպականացման սխեմաները դեմ առ դեմ իրավիճակներում մտնում են շարունակական բանակցությունների մեջ: Առօրյա կյան-

քում նման «բանակցությունները», ամենայն հավանականությամբ, պետք է կարգաբերվեն որոշակի տիպականության մեջ՝ իբրև տիպիկ գործարք վաճառողի և գնորդի միջև:

Այնպես որ, ժամանակի մեծ մասի ընթացքում իմ հանդիպումները ուրիշների հետ առօրյա կյանքում տիպական են կրկնակի իմաստով՝ ես ընկալում եմ մյուսին որպես տիպ և փոխազդում նրա հետ այն իրավիճակում, որն ինքնին տիպական է: Որքան ավելի շատ են սոցիալական փոխազդեցության տիպականացումները հեռանում դեմ առ դեմ իրավիճակից, այնքան դրանք ավելի ու ավելի անանուն են: Իհարկե, յուրաքանչյուր տիպականացում պարունակում է անանունության ծիլը: Եթե ես տիպականացնում եմ իմ ընկեր Հենրիին որպես X կատեգորիայի ներկայացուցիչ (ասենք՝ որպես անգլիացի), ես դրանով մեկնաբանում եմ նրա վարքագծի առնվազն որոշ դիտանկյուններ՝ իբրև այս տիպացման արդյունք: Օրինակ՝ նրա ճաշակը սննդի հարցում բնորոշ է անգլիացու համար ճիշտ այնպես, ինչպես նրա վարվելակերպը, որոշ հուզական ռեակցիաները և այլն: Ենթադրվում է, որ իմ ընկերոջ՝ Հենրիի այս բնութագրերը և գործողությունները նույնն են լինելու, ինչպես անգլիացիների կատեգորիայի *ցանկացած* մեկինը, այսինքն՝ ես ընկալում եմ նրա լինելիության այդ դիտանկյունները անանուն տերմիններով: Այնուամենայնիվ, քանի դեռ իմ ընկեր Հենրին իմ կողմից ընկալվում է դեմ առ դեմ իրավիճակում իր դրսևորումների ամբողջության մեջ, նա անընդհատ դուրս է գալիս անանուն անգլիացու տիպից և ներկայանում է որպես եզակի և, հետևաբար, ոչ տիպիկ անհատ, այսինքն որպես իմ ընկեր Հենրին: Ակնհայտ է, որ այս տիպի անանունությունն ավելի քիչ է ենթարկվում այս տեսակի անհատականացմանը, երբ դեմ առ դեմ իրավիճակը տեղի է ունեցել անցյալում (իմ ընկեր Հենրի՝ անգլիացի, որին ճանաչում էի քոլեջում), կամ երբ այն մակերեսային է և անցողիկ (անգլիացի, որի հետ ես կարճատև զրույց էր ունեցել գնացքում), կամ եթե այն երբեէ տեղի չի ունեցել (իմ բիզնես մրցակիցները Անգլիայում):

Առօրյա կյանքում ուրիշների ընկալման կարևոր դիտանկյուն է նման ապրումների անմիջականությունը կամ միջնորդավորվածու-

թյունը: Ցանկացած պահի կարելի է խոսել այն գործընկերներիս մասին, որոնց հետ ես փոխազդում եմ դեմ առ դեմ իրավիճակում, և նրանց մասին, ովքեր միայն ժամանակակիցներս են, որոնց մասին ես կարող եմ քիչ թե շատ խորը հիշողություններ ունենալ կամ որոնց մասին ես գիտեմ միայն լսելով: Դեմ առ դեմ իրավիճակում ես ունեմ իմ գործընկերոջ, նրա գործողությունների, ատրիբուտների և այլնի անմիջական տրվածությունը: Ժամանակակիցներիս դեպքում հակառակն է. նրանց մասին ես միայն քիչ թե շատ հավաստի գիտելիք ունեմ: Ավելին, դեմ առ դեմ փոխազդեցության իրավիճակում ես պետք է հաշվի նստեմ իմ գործընկերների հետ, այնինչ ժամանակակիցներիս մասին ես ընդամենը կարող եմ, բայց պարտավոր չեմ մտածել: Տիպականացումների անանունությունը, որի միջոցով ես «բռնում» եմ գործընկերներին դեմ առ դեմ իրավիճակներում, մշտապես «հարստանում» է կոնկրետ մարդու բազմաթիվ հատկանիշներով:

Սա իհարկե դեռ ամենը չէ: Իմ ժամանակակիցներին ես բոլորովին այլ կերպ եմ ընկալում: Ոմանց ես կրկին ու կրկին ընկալում եմ դեմ առ դեմ իրավիճակներում և հույս եմ տածում, որ նրանց հետ պարբերաբար հանդիպելու եմ (իմ ընկեր Հենրին): Ուրիշների՝ որպես կոնկրետ մարդկանց մասին ես հիշում եմ միայն անցյալ հանդիպումների հիման վրա (փողոցում հանդիպած շիկահերը), որոնք, սակայն, անցողիկ են, և որոնք, ամենայն հավանականությամբ, այլևս չեն կրկնվի: Ուրիշներին ես ընկալում եմ միայն քիչ թե շատ անանուն, խաչվող տիպականացումների միջոցով (իմ բրիտանական մրցակիցները, Անգլիայի թագուհին): Վերջիններիս կարելի է բաժանել դեմ առ դեմ իրավիճակներում հավանական գործընկերների (իմ Բրիտանական մրցակիցները) և պոտենցիալ, բայց հազիվ թե հավանական գործընկերների (Անգլիայի թագուհին):

Սակայն անանունության աստիճանը, որը բնութագրում է մեր ուրիշների ընկալումն առօրյա կյանքում, կախված է մեկ այլ գործոնի հետ: Ես տեսնում եմ թերթերի վաճառողին փողոցի անկյունում այնքան հաճախակի, որքան և կնոջս: Բայց նա պակաս կարևոր է ինձ համար, և նրա հետ ես սերտ հարաբերություններ չունեմ: Նա կարող է

մնալ համեմատաբար անանուն ինձ համար: Կախված հետաքրքրության աստիճանից և մտերմության աստիճանից՝ ընկալման անանունությունը կարող է նվազել կամ աճել: Ես կարող եմ շատ մոտ հարաբերություններ ունենալ թենիսի ակումբի՝ իմ մի շարք գործընկերների հետ և շատ ֆորմալ հարաբերություններ ունենալ իմ ղեկավարության հետ: Սակայն, առաջինները, թեև անանուն չեն, կարող են դառնալ պարզապես «շրջապատ», մինչդեռ վերջինս եզակի անձնավորություն է: Հաջորդը, որոշակի տիպականացումների դեպքում անանունությունը կարող է գրեթե ամբողջական դառնալ՝ առանց դրանք անհատականացնելու մտադրության, ինչպես, օրինակ՝ լոնդոնյան «Թայմս»-ի տիպիկ ընթերցողը: Եվ, վերջապես, տիպականացման «սահմանները» և ըստ այդմ դրա անանունությունը կարելի է ընդլայնել՝ խոսելով «բրիտանական հասարակական կարծիքի» մասին: Այսպիսով, առօրյա կյանքի սոցիալական իրականությունը կարելի է հասկանալ տիպականացումների անընդհատության շրջանակներում, որոնց անանունությունը աճում է «այստեղ և հիմա» դեմ առ դեմ իրավիճակից ունեցած հեռավորությանը համապատասխան: Այս անընդհատության մի բևեռում մարդիկ են, որոնց հետ ես հաճախ և ինտենսիվորեն փոխազդում եմ դեմ առ դեմ իրավիճակներում: Սա, այսպես ասած, «իմ շրջապատն է»: Մեկ այլ բևեռում չափազանց անանուն վերացարկումներ են, որոնք իրենց բնույթով երբեք չեն կարող հասանելի դառնալ դեմ առ դեմ փոխազդեցությանը: Սոցիալական կառուցվածքը տիպականացումների և դրանց օգնությամբ ստեղծված փոխազդեցության կրկնվող նմուշների ողջ գումարն է: Որպես այդպիսին՝ սոցիալական կառուցվածքը առօրյա կյանքի իրականության էութենական տարրն է: Հարկ է նշել ևս մի կետ, որը թեև մենք չենք կարող ամբողջովին մեկնաբանել: Իմ հարաբերությունները ուրիշների հետ չեն սահմանափակվում միայն գործընկերների և ժամանակակիցների հետ հարաբերություններով: Ես հարաբերությունների մեջ եմ մտնում նաև նախորդների և հաջորդների հետ՝ այն ուրիշների, ովքեր ապրել են ավելի վաղ, և ովքեր կապրեն ինձանից հետո իմ հասարակության ընդհանուր պատմության մեջ: Բացի իմ նախկին գործընկերներից (իմ մահացած ընկեր

Հենրին), ես կապված եմ նաև իմ նախորդների հետ խիստ անանուն տիպականացումների միջոցով՝ «իմ նախահայրերը գաղթականներ են» կամ «հիմնադիր հայրեր»: Հասկանալի պատճառներով իմ հաջորդներն էլ ավելի անանուն են տիպականացվում՝ «իմ թոռները» կամ «ապագա սերունդները»: Այս տիպականացումներն, ըստ էության, անհատական բովանդակությունից բոլորովին զուրկ, դատարկ վերացարկումներ են, այնինչ նախորդների տիպականացումները գոնե ինչ-որ չափով, թեև բավականին առասպելական բնույթի բովանդակություն են պարունակում: Ինչևէ, տիպականացման երկու համակարգերի անանունությունը չի խանգարում դրանց դառնալ առօրյա կյանքի իրականության տարրեր, երբեմն բավականին կարևոր: Ի վերջո, ես կարող եմ կյանքս զոհաբերել հանուն հիմնադիր հայրերի հավատարմության կամ հանուն ապագա սերունդների:

**Լեզուն և գիտելիքը առօրյա կյանքում**

Մարդկային էքսպրեսիվությունը օբյեկտիվացվում է, այսինքն՝ դրսևորում է իրեն մարդկային գործունեության արդյունքներում, որոնք հասանելի են ինչպես իր ստեղծողներին, այնպես էլ այլ մարդկանց՝ որպես բոլորի համար ընդհանուր աշխարհի տարրեր: Նման օբյեկտիվացումները դրանք ստեղծողների սուբյեկտիվ գործընթացների քիչ թե շատ կայուն ցուցանիշներ են, որոնք թույլ են տալիս այդ գործընթացները դուրս բերել այն դեմ առ դեմ իրավիճակի շրջանակներից, որոնցում դրանք կարելի էր անմիջականորեն դիտարկել: Օրինակ, զայրույթի սուբյեկտիվ դիրքորոշումն ուղղակիորեն արտահայտվում է դեմ առ դեմ իրավիճակում մի շարք մարմնական նշանների՝ դեմքի արտահայտությունների, ամբողջ մարմնի դիրքի, ձեռքերի, ոտքերի հատուկ շարժումների օգնությամբ և այլն: Այս նշանները կարելի է դիտարկել միայն դեմ առ դեմ իրավիճակում, ուստի այն կարելի է դիտարկել իբրև այլ մարդու սուբյեկտիվության մեջ մուտք գործելու հնարավորություն ընձեռող օպտիմալ իրավիճակ: Նույն նշանները չեն կարող պահպանվել կենդանի դեմ առ դեմ իրավիճակից դուրս: Սակայն զայրույթը կարելի է օբյեկտիվացնել զենքի միջոցով: Օրինակ, ես վի-

ճում էի մի մարդու հետ, ով ինձ բավականաչափ արտահայտիչ ապացույց ներկայացրեց իմ հանդեպ ունեցած իր զայրույթի վերաբերյալ: Գիշերը ես արթնացա իմ մահճակալի վերևի պատի մեջ մխրճված դանակի ձայնից: Դանակը՝ որպես օբյեկտ, արտահայտում է իմ թշնամու զայրույթը: Այն ճանապարհ է բացում դեպի նրա սուբյեկտիվությունը, թեև դանակը նետելու պահին ես քնած էի: Եթե ես դանակը թողնեի նույն տեղում, հաջորդ առավոտ ես կրկին կտեսնեի նետողի զայրույթն արտահայտող դանակը: Բացի այդ, ինչ-որ մեկը ևս կարող էր տեսնել այն և գալ նույն եզրակացության: Այլ կերպ ասած, իմ պատի մեջ խրված դանակը օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրականության տարր է, որը ես կիսում եմ իմ թշնամու և այլ մարդկանց հետ: Հավանաբար, այս դանակը չէր պատրաստվել բացառապես ինձ վնասելու համար: Բայց այն արտահայտում է բռնության սուբյեկտիվ նպատակադրումը՝ անկախ նրանից, թե որն էր նետելու շարժառիթը: Զենքը՝ որպես իրական աշխարհի օբյեկտ, արտահայտում է բռնություն կատարելու ընդհանուր մտադրությունը, որը ճանաչվում է ցանկացած անձի կողմից, ով գիտի, թե ինչ է զենքը: Այդ դեպքում զենքը դառնում է ինչպես մարդկային գործունեության արդյունք, այնպես էլ մարդկային սուբյեկտիվության օբյեկտիվացում:

Առօրյա կյանքի իրականությունը ոչ միայն լի է օբյեկտիվացումներով, այլև այն հնարավոր է միայն դրանց շնորհիվ: Ես մշտապես շրջապատված եմ օբյեկտներով, որոնք ցույց են տալիս իմ գործընկերների սուբյեկտիվ մտադրությունները, թեև երբեմն դժվարություններ են առաջանում, երբ փորձում եմ ճիշտ հասկանալ, թե ինչ է «նշանակում» որոշակի օբյեկտը, հատկապես, եթե այն ստեղծվել է այն մարդկանց կողմից, որոնց ես լավ չգիտեի կամ ընդհանրապես չգիտեի դեմ առ դեմ իրավիճակներում: Ցանկացած ազգագրագետ կամ հնէաբան պատրաստակամորեն կհաստատի այդ դժվարությունների առկայությունը, սակայն այն փաստը, որ դրանք կարելի է հաղթահարել և արտեֆակտի օգնությամբ վերակառուցել վաղուց անհետացած հասարակություններում ապրած մարդկանց սուբյեկտիվ մտադրությունները,

մարդկային օբյեկտիվացումների իսկայական ուժի պատկերավոր ապացույցն է:

Օբյեկտիվացման հատուկ և շատ կարևոր դեպք է նշանավորման գործընթացը (signification), այսինքն՝ մարդու կողմից նշանների գիտակցումը: Նշանը տարբերվում է այլ օբյեկտիվացումներից իր՝ հստակ սուբյեկտիվ նշանակությունների ցուցանիշ լինելու բացահայտ նպատակադրմամբ: Իհարկե, բոլոր օբյեկտիվացումներն օգտագործվում են որպես նշաններ, նույնիսկ եթե դրանք ի սկզբանե ստեղծվել են առանց նման մտադրության: Օրինակ, զենքը կարող էր սկզբում ստեղծվել գազաններին սպանելու համար, բայց հետագայում, ասենք, ծիսակատարության մեջ, այն դառնում է ագրեսիվության և բռնության նշան: Կան սակայն որոշակի օբյեկտիվացումներ, որոնց ի սկզբանե անէրկիմաստորեն կանխորոշված էր նշաններ լինելու: Օրինակ, ինձ վրա դանակ նետելու փոխարեն (մի գործողություն, որի ընթացքում ենթադրվում էր սպանել ինձ, բայց դա կարող էր լինել նաև գործողություն, որի միջոցով ենթադրվում էր միայն ցույց տալ այդ հնարավորությունը) իմ հակառակորդը կարող էր սև խաչ քաշել իմ դռան վրա՝ ի նշան այն բանի, որ մենք այժմ պաշտոնապես գտնվում ենք թշնամության վիճակում: Նման նշանը, որը այլ մարդու սուբյեկտիվ իմաստը մատնանշելուց բացի այլ նպատակ չունի, սուբյեկտիվորեն հասանելի է դառնում այլ մարդկանց, որոնց հետ մենք կիսում ենք մեր ընդհանուր իրականությունը: Ինչպես ես, այնպես էլ այլ մարդիկ ընդունում են այն իմաստը, որն այն ենթադրում է և որը ներկայանում է իր ստեղծողին՝ իբրև նախնական մտադրության օբյեկտիվ «հիշեցում»: Վերը նշվածից պարզ է դառնում, որ նման օբյեկտիվացումների գործիքային և նշանային օգտագործումը սերտորեն միահյուսված են: Հատուկ դեպք է մոգությունը, որում այս երկու պահերը միաձուլվում են, բայց հիմա դա մեզ չի հետաքրքրում:

Նշանները խմբավորվում են համակարգերում: Այսպես, կան ժեստային նշանների համակարգեր, ստանդարտ մարմնական շարժումների, նյութական արտեֆակտների տարբեր համակարգեր և այլն: Նշանները և նշանային համակարգերը օբյեկտիվացումներ են այն

իմաստով, որ դրանք օբյեկտիվորեն հասանելի են այլ մարդկանց սուբյեկտիվ նպատակադրումների «այստեղ և հիմա» արտահայտումներից դուրս: Նշանների համար բնորոշ է «հեռավորությունը» սուբյեկտիվության անմիջական դրսևորումներից և սուբյեկտի միջնորդավորված ներկայությունը: Այսպես, ագրեսիվ մտադրություն արտահայտող պարի կատարումը կտրուկ տարբերվում է նրանից, թե ինչպես է բարկության նոպայի մեջ մարդը սեղմում բռունցքները կամ կռվում դեմքի չար արտահայտությամբ: Վերջին գործողությունները արտահայտում են իմ սուբյեկտիվությունը «այստեղ և հիմա», իսկ առաջինը կարող է բացարձակապես առանձնացված լինել այս սուբյեկտիվությունից:

Այլ կերպ ասած, եթե պարը կարող է առանձնացվել պարողի սուբյեկտիվությունից, ապա զայրույթը չի կարող առանձնացվել նրանից, ով բարկանում է: Ե՛վ պարը, և՛ չարությունը մարմնային արտահայտչականության դրսևորման էությունն են, բայց միայն առաջինը օբյեկտիվորեն հասանելի նշանի բնույթ ունի: Բոլոր նշանները և նշանային համակարգերը տարբերվում են այնքանով, որքանով նրանք առանձնացված են դեմ առ դեմ իրավիճակներից: Այնպես որ ակնհայտ է, որ պարը ավելի քիչ է առանձնացված, քան միննույն սուբյեկտիվ նշանակությունն արտահայտող արտեֆակտը:

Լեզուն, որը կարող է սահմանվել որպես բառային նշանների համակարգ, մարդկային հասարակության ամենակարևոր նշանային համակարգն է: Իհարկե, լեզվի հիմքում մարդկային օրգանիզմին բնորոշ բանավոր արտահայտումների ունակությունն է, բայց լեզվի մասին սկսում են խոսել միայն այն դեպքում, երբ հնարավոր է բանավոր արտահայտությունների տարանջատումը «այստեղ և հիմա» սուբյեկտիվ կառուցվածքներից: Սա դեռ լեզու չէ, երբ ես մռնչում եմ, խռխռացնում եմ, ֆշշացնում կամ ոռնում եմ, չնայած այդ ձայնային արտահայտությունները կարող են դառնալ լեզվական, քանի դեռ դրանք ինտեգրված են օբյեկտիվորեն մատչելի նշանային համակարգում: Առօրյա կյանքի ընդհանուր օբյեկտիվացումները հիմնականում պահպանվում են լեզվական նշանների միջոցով: Բացի այդ, առօրեականությունն այն կյանքն է, որը ես կիսում եմ ուրիշների հետ լեզվի միջոցով: Լեզվի

հասկացումը, ըստ էության, նշանակալի է առօրյա կյանքի իրականությունը հասկանալու համար: Լեզուն առաջանում է դեմ առ դեմ իրավիճակում, բայց կարող է հեռացվել դրանից: Եվ ոչ միայն այն պատճառով, որ ես կարող եմ բարձրաձայն գոռալ մթության մեջ, խոսել հեռախոսով, ռադիոյով կամ փոխանցել լեզվական նշանները նամակի միջոցով (վերջինս երկրորդ կարգի նշանային համակարգ է): Լեզվի տարածման արմատները «այստեղ և հիմա» անմիջականորեն սուբյեկտիվություն չարտահայտող հաղորդագրություններ փոխանցելու ունակության մեջ են: Այս ունակությունը բնորոշ է ոչ միայն լեզվին, այլև այլ նշանային համակարգերին, սակայն լեզվի բարդությունն ու հսկայական բազմազանությունը այն դարձնում են դեմ առ դեմ իրավիճակից շատ ավելի հեռացված, քան մյուս համակարգերը (օրինակ՝ ժեստերի համակարգը): Ես կարող եմ խոսել անհամար մատերիաների մասին, որոնք երբեք չեն տրվել ինձ դեմ առ դեմ իրավիճակում, այդ թվում և նրանց, որոնք ես երբևէ չեմ վերապրել և չեմ վերապրելու անմիջականորեն: Այսպիսով, լեզուն կարող է դառնալ կուտակված նշանակությունների, կյանքի փորձի հսկայական բազմազանության օբյեկտիվ պահոց, որը հնարավոր է պահպանել ժամանակի մեջ և փոխանցել հաջորդ սերունդներին:

Դեմ առ դեմ իրավիճակներում լեզուն ունի իրեն բնորոշ փոխադարձության որակը, որը տարբերում է այն այլ նշանային համակարգերից: Զրույցի ընթացքում բառային նշանների շարունակական ստեղծումը կարող է ուղեկցվել խոսողների շարունակական սուբյեկտիվ մտադրություններով: Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ. նույն կերպ է վարվում նաև իմ զրուցակիցը: Մեզանից յուրաքանչյուրը լսում է, թե ինչ է ասում մյուսը նույն պահին, ինչը հնարավորություն է տալիս միաժամանակ և փոխադարձաբար «բռնել» մեր սուբյեկտիվությունները, դեմ առ դեմ իրավիճակում առաջացող ինտերսուբյեկտիվ մտերմությունը, որը չի կարող վերարտադրել որևէ այլ նշանային համակարգ: Խոսելիս ես լսում եմ ինքս ինձ, իմ սեփական սուբյեկտիվ նշանակությունները դառնում են ինձ օբյեկտիվորեն և մշտապես մատչելի և, ipso facto, ավելի իրական են ինձ համար: Այստեղ պետք է հիշել, թե

ինչ է խոսվել ավելի վաղ այն մասին, որ մեկ ուրիշը դեմ առ դեմ իրավիճակում ունի «ավելի լավ գիտելիք» իմ մասին, քան ես ինքս: Այս, անշուշտ, պարադոքսալ փաստը մենք նախկինում բացատրում էինք նրանով, որ դեմ առ դեմ իրավիճակներում հնարավոր է անընդհատ, ամբողջական և նախառեֆլեքսիվ կերպով որսալ այլ մարդու լինելիությունը, մինչդեռ ինքներս մեզ որսալու համար պահանջվում է ռեֆլեքսիա: Սակայն հիմա, երբ ես լեզվի միջոցով օբյեկտիվացնում եմ իմ սեփական լինելիությունը, ես այն խորը և անընդհատ որսում եմ այն նույն պահին, ինչ մյուսը, և կարող եմ ինքնաբուխ արձագանքել դրան՝ «առանց ընդհատելու» սահուն ռեֆլեքսիան: Ուստի կարելի է ասել, որ լեզուն իմ սուբյեկտիվությունն «ավելի իրական» է դարձնում ոչ միայն իմ զրուցակցի, այլև ինձ համար: Լեզվի այս ունակությունը՝ ինձ համար հասկանալի և կայուն դարձնելու իմ սեփական սուբյեկտիվությունը, պահպանվում է (թեև փոփոխված ձևով), երբ լեզուն սկսում է զատվել դեմ առ դեմ իրավիճակից:

Լեզուն առաջանում է առօրյա կյանքում և սերտորեն կապված է դրա հետ: Բացի այդ, այն համեմատվում է այն իրականության հետ, որը ես ընկալում եմ արթուն գիտակցությամբ, և որը ղեկավարվում է պրագմատիկ շարժառիթով. խոսքը այն ներկա և ապագա գործողությունների հետ անմիջական առնչություն ունեցող արժեքների ամբողջության մասին է, որը ես կիսում եմ այլ մարդկանց հետ՝ որպես մի բան, որը տրվում է իբրև ինքն իրեն ենթադրվող: Թեև լեզուն կարող է օգտագործվել այլ իրականությունների նկատմամբ, բայց նույնիսկ այդ ժամանակ այն պահպանում է իր արմատները առօրյա կյանքի իրականության մեջ: Լեզուն՝ որպես նշանային համակարգ, օժտված է օբյեկտիվության որակով: Ես բախվում եմ լեզվին՝ որպես ինձ համար արտաքին փաստայնության, և այն իր հարկադիր ազդեցությունն է ունենում ինձ վրա: Լեզուն ինձ ենթարկում է իր կառուցվածքներին: Ես չեմ կարող օգտագործել գերմանական շարահյուսության կանոնները, երբ խոսում եմ անգլերեն, ես չեմ կարող օգտագործել իմ երեք տարեկան որդու հորինած բառերը, եթե ես պետք է շփվեմ որևէ մեկի հետ իմ ընտանիքի սահմաններից դուրս. տարբեր դեպքերում ես պետք է հաշ-

վի առնեմ ճիշտ խոսքի գերակա չափանիշները, նույնիսկ եթե նախընտրում եմ իմ սեփական «սխալները»: Լեզուն ինձ ապահովում է իմ հետզհետե աճող փորձի շարունակական օբյեկտիվացման պատրաստի հնարավորությամբ: Այլ կերպ ասած, լեզուն տարածում է իր շրջանակներն այնպիսի ճկունությամբ, որ թույլ է տալիս օբյեկտիվացնել փորձառությունների ահռելի բազմությունը իմ ողջ կյանքի ընթացքում: Լեզուն նաև տիպականացնում է իմ ապրումները և փորձը, ինչը թույլ է տալիս դրանք բաշխել ավելի լայն կատեգորիաներում այնպես, որ վերջիններս նշանակություն ձեռք բերեն ոչ միայն ինձ համար, այլև՝ այլ մարդկանց: Այնքանով, որքանով լեզուն տիպականացնում է իմ փորձը, այն դարձնում է վերջինս անանուն, քանի դեռ տիպականացման ենթարկված փորձը սկզբունքորեն կարող է վերարտադրվել ցանկացած մեկի կողմից, ով ընկնում է տվյալ կատեգորիայի մեջ: Օրինակ՝ ես վեճ ունեմ զոքանչիս հետ: Այս կոնկրետ և սուբյեկտիվորեն եզակի փորձը լեզվաբանորեն տիպականացվում է՝ «անախորժություններ զոքանչի հետ»: Այս տիպականացումն իմաստ է ստանում ինձ համար, ուրիշների համար, և, հավանաբար, իմ զոքանչի համար նս: Բայց այս նույն տիպականացումը անանուն է: Ոչ միայն ես, բայց ցանկացածը (ավելի ճիշտ, ցանկացածը «փեսա» կատեգորիայից) կարող է ունենալ «անախորժություններ զոքանչի հետ»: Այնպես որ, իմ կենսագրական փորձը այժմ դասակարգած է՝ ըստ նշանակությունների կազմակերպման կանոնների, և թե՛ օբյեկտիվորեն, թե՛ սուբյեկտիվորեն իրական է:

«Այստեղ և հիմա»-ի շրջանակներից դուրս գալու իր ունակության շնորհիվ լեզուն կապում է առօրյա կյանքի իրականության տարբեր գոտիները և ինտեգրում դրանք մեկ իմաստային ամբողջության մեջ: Սահմաններից դուրս գալը (transcendence) ունի տարածական, ժամանակային և սոցիալական չափումներ: Լեզվի շնորհիվ ես կարող եմ հաղթահարել իմ մանիպուլյացիայի գոտու և ուրիշի մանիպուլյացիայի գոտու միջև եղած անջրպետը: Ես կարող եմ համապատասխանեցնել իմ և նրա կենսագրական ժամանակային հաջորդականությունները, և ես կարող եմ զրուցել նրա հետ մարդկանց խմբերի մասին, որոնց հետ մենք չենք ունեցել դեմ առ դեմ փոխազդեցություն: Այդ

տրանսցենդենցիայի արդյունքում լեզուն կարող է ստեղծել բազմաթիվ օբյեկտների «ներկայության էֆեկտ», որոնք տարածական, ժամանակային և սոցիալական առումով «այստեղ և հիմա» բացակայում են: Ipso facto կուտակված բազմաթիվ իմաստներն ու փորձառությունները օբյեկտիվանում են «այստեղ և հիմա»: Պարզ ասած, լեզվի օգնությամբ ամբողջ աշխարհը կարող է ցանկացած պահի արդիականացվել: Լեզվի այս տրանսցեդենտացնող և ինտեգրող ուժը պահպանվում է, երբ ես ներկա պահին չեմ խոսում ուրիշների հետ: Լեզվական օբյեկտիվության շնորհիվ է, որ նույնիսկ երբ ես խոսում եմ «ինքս ինձ հետ» մեկուսի մտորումներում, ցանկացած պահի ամբողջ աշխարհը կարող է կանգնել իմ առջև: Ինչ վերաբերում է սոցիալական հարաբերություններին, լեզուն «ներկա է դարձնում» ինձ համար ոչ միայն ներկա պահին բացակա մարդկանց, այլև նրանց, ովքեր վերաբերում են իմ հիշողություններին և վերակառուցվող անցյալին, ինչպես նաև ապագայի մարդկանց, որոնց ես պատկերացնում եմ երևակայության մեջ: Իհարկե, նրանց բոլորի «ներկայությունը» կարող է մեծ նշանակություն ունենալ առօրյա կյանքի ընթացիկ իրականության համար:

Ավելին, լեզուն ընդհանրապես կարող է դուրս գալ առօրյա կյանքի իրականության սահմաններից: Այն կարող է առնչություն ունենալ հույզերին իմաստների վերջավոր ոլորտներում և միակցել իրարից պոկված իրականության ոլորտները: Օրինակ, կարելի է լեզվի միջոցով մեկնաբանել քնի «նշանակությունը»՝ ինտեգրելով այն առօրյա կյանքի կարգի սահմաններին: Այսպիսի մեկնաբանությունը տեղափոխում է քնի իրականությունը առօրյա կյանքի իրականություն, որը դառնում է անկլավ վերջինիս սահմաններում: Այժմ երազը նշանակություն է ձեռք բերում ավելի շուտ առօրյա կյանքի իրականության հասկացություններում, քան սեփական իրականության: Այսպիսի տեղաշարժման արդյունքում առաջացող անկլավները պատկանում են իրականության երկու ոլորտներին: Դրանք «տեղակայված են» մեկում, բայց «վերաբերում են» մյուսին:

Այսպիսով, առարկա-նշանավորումը, որը կապում է իրականության տարբեր ոլորտներ, կարելի է սահմանել իբրև սիմվոլ, իսկ այն

լեզվական ձևը, որի օգնությամբ տեղի են ունենում այսպիսի տեղաշարժեր, կարելի է անվանել սիմվոլիկ լեզու: Սիմվոլիկ մակարդակում լեզվական նշանակումը հասնում է առավելագույն տարանջատման առօրյա կյանքի «այստեղ և հիմա»-ից, և լեզուն ճախրում է այնպիսի բարձունքներ, որոնք ոչ միայն de facto, այլև a priori անհասանելի են առօրեական ընկալմանը: Այժմ լեզուն կառուցում է սիմվոլիկ պատկերացումների վիթխարի համակարգեր, որոնք վեր են խոյանում առօրյա կյանքի իրականությունից: Կրոնը, փիլիսոփայությունը, արվեստը, գիտությունը այս տիպի համակարգերի առավել կարևոր օրինակներն են: Անվանել դրանք արդեն նշանակում է ասել, որ, չնայած առօրեական փորձից դրանց առավելագույն կտրվածությանը, այդ համակարգերի կառուցումը պահանջում է, որպեսզի դրանք կարևորություն ներկայացնեն առօրյա կյանքի իրականության համար: Լեզուն կարող է ոչ միայն կառուցել առօրեական փորձից վերացարկված սիմվոլներ, այլև «վերածել» դրանք առօրյա կյանքի՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարրերի: Այսպիսով, սիմվոլիզմը և սիմվոլիկ լեզուն դառնում են առօրյա կյանքի իրականության և այդ իրականության սովորական հասկացման էական տարրեր: Ամեն օր ես ապրում եմ նշանների և սիմվոլների աշխարհում:

Լեզուն ձևավորում է լեզվի միջոցով նշանավորված սեմանտիկ դաշտեր և իմաստային գոտիներ: Բառարանը, ուղղագրությունը և շարահյուսությունը նպաստում են այդ սեմանտիկ դաշտերի կազմակերպմանը: Այսպիսով, լեզուն ձևավորում է դասակարգման սխեմաներ, որոնք ուղղված են օբյեկտների տարբերակմանը: Օրինակ, այն լեզուներում, որոնցում ֆորմալ և մտերմիկ դիմելաձևը տարբերակվում է դերանուններով (օրինակ tu և vous ֆրանսերենում կամ du և Sie գերմաներենում), վերջիններս նշանակում են այն սեմանտիկ դաշտի կոորդինատները, որը կարելի է անվանել ինտիմ գոտի: Այստեղ է գտնվում եղբայրության աշխարհը՝ (Tutoiement, Bruderschaft) իր բազմաթիվ նշանակություններով, որոնք ինձ հասանելի են՝ սեփական սոցիալական փորձը կարգաբերելու համար: Այսպիսի սեմանտիկ դաշտ կա, իհարկե, և անգլալեզու մարդկանց մոտ, որը թեև լեզվաբանորեն

ավելի սահմանափակ է: Վերցնենք մեկ այլ օրինակ: Իմ մասնագիտության համապատասխանող լեզվական օբյեկտիվացումների գումարն իրենից ներկայացնում է մեկ այլ սեմանտիկ դաշտ, որը նշանակալիորեն կարգաբերում է իմ առօրեական աշխատանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները: Ստեղծված սեմանտիկ դաշտերի սահմաններում կարելի է օբյեկտիվացնել, պահպանել և կուտակել կենսագրական և պատմական փորձ: Իհարկե, կուտակումն ընտրովի է և կախված է այն սեմանտիկ դաշտերից, որոնք սահմանում են, թե ինչը պետք է պահպանվի մարդու կամ հասարակության ողջ փորձի շրջանակներում, իսկ ինչը պետք է «մոռացվի»: Այսօրինակ կուտակման արդյունք է դառնում գիտելիքի սոցիալական պաշարը, որը փոխանցվում է սերնդեսերունդ և հասանելի է անհատին իր առօրյա կյանքում: Ես ապրում եմ առօրյա կյանքի սովորական աշխարհում՝ ունենալով գիտելիքի ինքնատիպ համակարգեր: Բացի այդ, ես գիտեմ, որ ուրիշները կիսում են այդ գիտելիքի որոշ մասը, և նրանք գիտեն, որ ես դա գիտեմ: Դա է պատճառը, որ առօրյա կյանքում այլ մարդկանց հետ իմ փոխազդեցությունների վրա անընդհատ ազդում է մեր համատեղ առնչությունը գիտելիքի սոցիալական պաշարին:

Գիտելիքի սոցիալական պաշարը ներառում է իմ իրավիճակի և դրա սահմանների իմացությունը: Օրինակ, ես գիտեմ, որ աղքատ եմ և հույս չունեմ ապրել թանկ արվարձաններում: Իհարկե, այս գիտելիքը կիսվում է ինչպես աղքատների, այնպես էլ ավելի արտոնյալ վիճակում գտնվողների կողմից: Այսպիսով, առնչությունը գիտելիքի սոցիալական պաշարին նպաստում է հասարակության մեջ անհատների «տեղակայմանը» և նրանց հանդեպ համապատասխան վերաբերմունքին: Դա անհնար է բոլոր նրանց համար, ովքեր չեն առնչվում այդ գիտելիքի հետ, օրինակ՝ օտարերկրացիների, որոնք կարող են ինձ ընդհանրապես աղքատ չհամարել, քանի որ աղքատության չափանիշներն իրենց հասարակության մեջ բոլորովին այլ են: Ինչպե՞ս կարող եմ աղքատ լինել, եթե ես ունեմ կոշիկներ և սոված չեմ երևում: Քանի դեռ առօրյա կյանքում գերակայում է պրագմատիկ շարժառիթը, գիտելիքի սոցիալական պաշարում կարևոր տեղ է զբաղեցնում բաղադրատոմ-

սերի իմացությունը, այսինքն՝ այն գիտելիքը, որը հանգեցվում է պրակտիկ կոմպետենտությանը առօրյա գործերում: Օրինակ, ես ամեն օր օգտվում եմ հեռախոսից իմ սեփական պրակտիկ նպատակներով: Ես գիտեմ, թե ինչպես պետք է դա անեմ: Ես գիտեմ նաև ինչ անել, եթե հեռախոսս ջարդվի. սա չի նշանակում, որ ես գիտեմ, թե ինչպես կարելի է վերանորոգել հեռախոսը, բայց ես գիտեմ, թե ում կարելի է կանչել օգնության: Հեռախոսի հետ կապված իմ գիտելիքը ներառում է նաև հեռախոսային հաղորդակցության համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը, օրինակ՝ ես գիտեմ, որ որոշ մարդկանց հեռախոսահամարները ներառված չեն հեռախոսային գրքում, որ համապատասխան պայմաններում ես կարող եմ խոսել ինձանից մեծ հեռավորության վրա գտնվող երկու բաժանորդների հետ միաժամանակ, որ պետք է հիշեմ ժամանակային գոտիների տարբերության մասին Հոնկոնգ զանգահարելիս և այլն: Այս ամենը բաղադրատոմսերի իմացություն է, քանի որ չի վերաբերում որևէ այլ բանի բացի՝ իմ արդի և հնարավոր ապագա պրակտիկ նպատակներից: Ինձ չի հետաքրքրում, թե ինչու է հեռախոսն աշխատում հենց այսպես, կամ որն է հեռախոսի կառուցումը հնարավոր դարձնող՝ գիտական և ինժեներական գիտելիքի համակարգը: Ինձ չի հետաքրքրում հեռախոսի օգտագործումը, որը դուրս է իմ նպատակների սահմաններից, օրինակ՝ ինձ չեն հետաքրքրում կարճ ալիքային ռադիոյի հետ հեռախոսի համակցման հնարավորությունները՝ նավերի հետ կապ հաստատելուն ուղղված: Ճիշտ նույնությամբ ես գիտեմ մարդկային փոխհարաբերություններին վերաբերող բաղադրատոմսերը: Օրինակ, ես գիտեմ, թե ինչ է պետք անել անձնագիր ստանալու համար: Բայց ինձ ամենևին չի հետաքրքրում և ես չգիտեմ, թե ինչ ճանապարհ է անցնում իմ դիմումը վարչական ծառայություններում, ով և ինչից հետո է համաձայնություն տալիս, ում կողմից է կնիք դրվում անձնագրում և այլն: Ես չեմ ուսումնասիրում պետական բյուրոկրատիան, ես պարզապես ուզում եմ արձակուրդներս անցկացնել արտասահմանում: Անձնագրի ստացման՝ ինձ անհայտ ընթացակարգի հանդեպ կարող է հետաքրքրություն առաջանալ միայն այն դեպքում, եթե համապատասխան ժամկետը լրա-

նալուն պես իմ անձնագիրը պատրաստ չլինի: Այդ դեպքում ես կդիմեմ համապատասխան փորձագետի, օրինակ՝ իրավաբանին, կոնգրեսմենին կամ ԱՄՆ-ում մարդու իրավունքների պաշտպանին (այնպես, ինչպես հեռախոսի խափանման պարագայում դիմում են հեռախոսի վերանորոգման վարպետին):

Mutatis mutandis[114] գիտելիքի սոցիալական պաշարի նշանակալի մասն իրենից ներկայացնում է առօրեական խնդիրների լուծման բաղադրատոմսերի ամբողջություն: Սովորաբար ինձ քիչ է հետաքրքրում այդ պրակտիկորեն անհրաժեշտ գիտելիքի (որի օգնությամբ կարող եմ լուծել իմ խնդիրները) սահմաններից դուրս գալը:

Գիտելիքի սոցիալական պաշարը տարբերակում է իրականությունը՝ ըստ ծանոթության աստիճանի: Այն տալիս է բարդ և մանրամասն տեղեկություններ առօրյա կյանքի այն հատվածների մասին, որոնց հետ ես հաճախակի գործ եմ ունենում և շատ ավելի ընդհանուր և ոչ ճշգրիտ տեղեկություններ հեռու գտնվող ոլորտների մասին: Այսպիսով, իմ սեփական մասնագիտության ոլորտի իմացությունը շատ հատուկ, խորը և ամբողջական է, մինչդեռ այլ մարդկանց մասնագիտական աշխարհների մասին ես բավականին մակերեսային գիտելիքներ ունեմ: Սոցիալական գիտելիքների պաշարը ինձ տրամադրում է տիպականացման սխեմաներ, որոնք անհրաժեշտ են առօրյա կյանքի գործերի մեծ մասի համար. խոսքը ոչ միայն վերը քննարկված այլ մարդկանց տիպականացումների, այլև ցանկացած տեսակի իրադարձությունների և փորձի տիպականացումների մասին է՝ ինչպես սոցիալական, այնպես էլ բնական: Այսպիսով, ես ապրում եմ ծանոթ աշխարհում՝ հարազատների, ծանոթների, գործընկերների և այլն: Հետևաբար, այս աշխարհում ես ունենում եմ ընտանեկան, մասնագիտական հանդիպումներ, բախումներ ճանապարհային ոստիկանության հետ և այլն: Այդ իրադարձությունների բնական ֆոնը նույնպես տիպականացվում է գիտելիքների պաշարի շրջանակներում: Իմ առօրյա կյանքի շրջանակներում «ես գիտեմ, թե ինչ պետք է անեմ» բոլոր այլ մարդկանց և իրադարձությունների հանդեպ:

---

[114] Որոշ վերապահումներով – *խմբագրի ծանոթագրություն:*

Ինձ տրված լինելով որպես մեկ ամբողջություն՝ սոցիալական գիտելիքի պաշարը տրամադրում է նաև իմ սեփական գիտելիքի մասնատված տարրերի ինտեգրման միջոցներ: Այլ կերպ ասած, «այն, ինչ գիտի յուրաքանչյուրը» ունի իր տրամաբանությունը և այն կարող է օգտագործվել մեր իմացած տարաբնույթ բաները կարգաբերելու համար: Օրինակ, ես գիտեմ, որ իմ ընկեր Հենրին անգլիացի է, և ես գիտեմ, որ նա միշտ շատ ճշտապահ է հանդիպումների ժամանակ: Քանի որ «բոլորն էլ գիտեն», որ ճշտապահությունն անգլիացիներին բնորոշ գիծ է, ես այժմ կարող եմ միավորել իմ գիտելիքի այս երկու տարրերը Հենրիի մասին տիպականացման շրջանակներում, որը նշանակալի է գիտելիքի սոցիալական պաշարի դիտանկյունից: Առօրյա կյանքի իմացության արժանահավատությունը իմ և այլ մարդկանց կողմից համարվում է ինքնին ենթադրվող, քանի դեռ չկան հակառակի մասին վկայություններ, այսինքն՝ այնքան ժամանակ, քանի դեռ չկա մի խնդիր, որը չի կարելի լուծել իմ գիտելիքի հիման վրա: Քանի դեռ իմ գիտելիքը գործում է առանց հապաղելու, ես հեռացնում եմ բոլոր կասկածները վերջինիս վերաբերյալ: Որոշ առումներով, որոնք հեռու են առօրյա իրականությունից՝ կատակում, թատրոնում, եկեղեցում, փիլիսոփայական մտորումներում և այլն, ես կարող եմ կասկածներ ունենալ վերջինիս առանձին տարրերի վերաբերյալ: Բայց այդ կասկածները «պետք չէ լուրջ ընդունել»: Օրինակ, որպես գործարար, ես գիտեմ, որ ոչ ոքի հետ չպետք է հաշվի նստեմ: Ես կարող եմ ծիծաղել մի կատակի վրա, որում շահարկվում է այս սկզբունքի սխալականությունը, ես կարող եմ հուզվել, երբ քահանան կամ դերասանը խոսում է բարության ու մյուսի հանդեպ ուշադրության մասին: Եվ փիլիսոփայական մտորումներում կարող եմ համաձայնել, որ բոլոր սոցիալական հարաբերություններում պետք է առաջնորդվել ոսկե կանոնով: Ծիծաղելով, հուզվելով և փիլիսոփայելով ես վերադառնում եմ բիզնեսի «լուրջ» աշխարհին՝ ճանաչելով վերջինիս սկզբունքների տրամաբանությունը և գործելով դրանց համապատասխան: Միայն այն ժամանակ, երբ այդ սկզբունքները չեն արդարացնում հույսերն այն աշխարհում, որում կիրառվում

են, դրանք դառնում են ինձ համար խնդրահարույց՝ «առանց կատակի»:

Չնայած սոցիալական գիտելիքի պաշարը ներկայացնում է առօրեականության աշխարհը՝ որպես ինտեգրված, որի առանձին մասերը տարբերակվում են ծանոթ և հեռու համարվող գոտիներին համապատասխան, ընդհանուր առմամբ, այս աշխարհը մնում է անթափանց: Այլ կերպ ասած, առօրյա կյանքի իրականությունը միշտ էլ լավ հասկանալի տարածություն է, որից դուրս մութ ֆոն է: Եթե որոշ իրականություններ բավականին լավ են լուսավորված, ապա մյուսները մթեցված են: Ես չեմ կարող իմանալ այն ամենն, ինչ պետք է այս իրականության մասին: Օրինակ, նույնիսկ եթե ես իմ ընտանիքում համարվում եմ ամենազոր բռնապետ, ես չգիտեմ բոլոր այն գործոնները, որոնք ընկած են իմ այս կերպարի հիմքում: Ես գիտեմ, որ իմ հրահանգները միշտ էլ կատարվում են, բայց այդ կատարման բոլոր քայլերն ու շարժառիթներն անհասանելի են իմ հասկացողությանն ամբողջությամբ: Միշտ կան բաներ, որոնք մնում են «իմ տեսադաշտից դուրս»: Սա վերաբերում է նաև ավելի բարդ սոցիալական կապերին և բացատրում է, ի թիվս այլ բաների, թե ինչո՞ւ բռնակալները, որպես կանոն, նյարդային մարդիկ են: Իմ առօրյա կյանքի իմացությունը հիշեցնում է մի գործիք, որը հատում է անտառի ճանապարհը, և լույսի նեղ շերտն է թափում անմիջապես առջևում և կողք կողքի գտնվող ամենի վրա, իսկ ճանապարհի բոլոր այլ հատվածները թաքնված են խավարի ներքո: Այս պատկերը նույնիսկ ավելի շատ վերաբերում է բազմակի իրականություններին, ուր անընդհատ տեղափոխվում է առօրյա կյանքի իրականությունը: Վերջին դատողությունը կարելի է վերաձևակերպել (եթե ոչ սպառիչ, ապա բանաստեղծականորեն)՝ ասելով, որ առօրյա կյանքը ծածկված է մեր երազների խավարով:

Առօրյա կյանքի իմ իմացությունը կազմակերպված է համապատասխանությունների (relevances) հասկացություններում: Դրանցից մի քանիսը որոշվում են իմ անմիջական պրակտիկ հետաքրքրություններով, մյուսները՝ հասարակության մեջ իմ ողջ իրավիճակով: Ինձ համար կարևոր չէ, թե ինչպե՞ս է իմ կինը պատրաստում իմ սիրելի գու-

յաշը, եթե այն լավ է ստացվում: Ինձ չի հետաքրքրում նաև այն, որ բաժնետոմսերը արժեզրկվում են, եթե ես չեմ տիրապետում այդ բաժնետոմսերին, ինձ չի հետաքրքրում նաև այն, որ կաթոլիկները արդիականացնում են իրենց ուսմունքը, եթե ես աթեիստ եմ, որ կարելի է թռչել Աֆրիկա ուղիղ չվերթով, եթե ես այնտեղ ուղևորվել չեմ պատրաստվում: Սակայն, քանի որ շատ առումներով իմ համապատասխանության կառուցվածքները հատվում են ուրիշների համապատասխանության կառուցվածքների հետ, կան բաներ, որոնք մեզ փոխադարձաբար «հետաքրքրում են», և մենք միմյանց ասելու բան ենք ունենում: Առօրյա կյանքի իմացության կարևոր տարրն այլ մարդկանց համապատասխանության կառուցվածքների իմացությունն է: Ես «ավելի լավ գիտեմ» իմ սեփական կապիտալի ներդրման հետ կապված խնդիրները, քան իմ բժիշկը, ավելի լավ գիտեմ ստամոքսային խոցիս մասին, քան իմ փաստաբանը, և ավելի լավ գիտեմ իմ կրոնական ճշմարտության որոնումների մասին, քան իմ հաշվապահը: Հիմնական համապատասխանության կառուցվածքները, որոնք վերաբերում են առօրյա կյանքին, տրվել են ինձ արդեն պատրաստի վիճակում գիտելիքի սոցիալական պաշարում: Ես գիտեմ, որ «կանանց խոսակցությունները» իմ՝ իբրև տղամարդու համար անտեղի են, «պարապ մտորումները» անտեղի են իմ՝ իբրև գործունյա մարդու համար և այլն: Ի վերջո, սոցիալական գիտելիքի պաշարն՝ իբրև ամբողջություն, ունի իր համապատասխանությունների կառուցվածքը: Այսպես, ամերիկյան հասարակության մեջ օբյեկտիվ գիտելիքի պաշարի առումով տեղին չէր լինի ուսումնասիրել աստղերի շարժումը՝ ֆոնդային բորսայում գործերի վիճակը կանխագուշակելու համար, սակայն միանգամայն տեղին է հետևել խոսակցությանը՝ այս կամ այն անհատի սեռական կյանքի մասին տեղեկանալու համար և այլն: Փոխարենը, այլ հասարակություններում աստղագուշակությունը կարող է միանգամայն տեղին լինել տնտեսության մասին գիտելիք ստանալու համար, իսկ խոսքային վերլուծությունը միանգամայն անտեղի՝ էրոտիկայի ոլորտում հետաքրքրասիրությունը բավարարելու համար և այլն:

Եվ վերջապես, պետք է ասել գիտելիքի սոցիալական բաշխման մասին: Ես գտնում եմ, որ գիտելիքը առօրյա կյանքում սոցիալապես բաշխված է, այսինքն՝ տարբեր անհատներ և անհատների տիպեր տիրապետում են այն տարբեր աստիճանների: Ես չեմ կիսում իմ գիտելիքները հավասարապես բոլոր գործընկերներիս հետ, և կարող եմ ունենալ այնպիսի գիտելիք, որը չեմ կիսում որևէ մեկի հետ: Ես կիսում եմ իմ մասնագիտական գիտելիքները գործընկերներիս հետ, բայց ոչ ընտանիքիս և չեմ կարող որևէ մեկի հետ կիսել իմ խաղաքարտային խարդախության ունակությունը: Գիտելիքի սոցիալական բաշխումը կարող է լինել շատ բարդ և նույնիսկ հանգեցնել շփոթության: Ես ոչ միայն չունեմ գիտելիք, որն անհրաժեշտ է իմ ֆիզիկական հիվանդությունների բուժման համար, այլև գիտելիք, թե ինչու շատ բժիշկներ պահանջում են, որպեսզի ես ամենայն պատասխանատվությամբ վերաբերվեմ իմ հիվանդությանը: Այդ դեպքում ինձ պետք է ոչ միայն փորձագետի, այլ փորձագետների փորձագետի ավելի կարևոր խորհուրդը: Այսպիսով, գիտելիքի սոցիալական բաշխումը սկսվում է այն պարզ փաստից, որ ես չգիտեմ այն ամենը, ինչ իմ գործընկերները գիտեն, և հակառակը. այն հասնում է գագաթնակետին անսովոր բարդ և թաքնված գիտելիքների համակարգերում: Սոցիալապես մատչելի գիտելիքի պաշարի բաշխման իմացությունը (առնվազն ընդհանուր գծերով) այդ գիտելիքի պաշարի կարևոր տարրն է: Առօրյա կյանքում ես գիտեմ (գոնե մոտավորապես) ինչը և ումից կարող եմ թաքցնել, ինչպես կարող եմ ստանալ այն տեղեկությունները, որոնք չունեմ, և ընդհանրապես, ինչ գիտելիքներ կարելի է ակնկալել տարբեր մարդկանցից:

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

# ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ

## ՀԱՐՈԼԴ ԳԱՐՖԻՆԿԵԼ

# ԱՌՕՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[115]

### Հիմնախնդրի սահմանում

Եթե ըստ Կանտի բարոյական օրենքը «մեզանում» առաջացնում է առեղծվածային երկյուղածություն, ապա սոցիոլոգիայի համար բարոյական օրենքի գոյությունը «մեզանից դուրս» դառնում է տեխնիկական խնդիր: Սոցիոլոգիական տեսություններում բարոյական օրենքը «առարկայանում» է որոշակի կանոններով կարգավորվող առօրեական գործողություններում: Հասարակության անդամները բախվում են դրան և ճանաչում՝ իբրև իրերի սովորական կարգ, որը տեսնում են առօրեական կենսագործունեության ծանոթ տեսարաններում, առօրյա կյանքում, որը ծանոթ է թե՛ նրանց և թե՛ մնացած բոլորին և ընկալվում է իբրև ինքնին հասկանալի:

Մարդիկ այս աշխարհին անվանում են «կյանքի բնական իրադարձությունների ամբողջություն». վերջիններս մասնակիցների համար միաժամանակ բարոյական փաստեր են: Հասարակության անդամների համար սովորական բաները ոչ միայն հստակ կարգավորված են, այլև ներկայանում են իբրև «ճիշտ» կամ «սխալ»: Առօրեական գործունեության ծանոթ պատկերները, որոնց մարդիկ վերաբերվում են ինչպես «կյանքի բնական իրադարձությունների», իրենց առօրեական գոյության բազմաթիվ փաստերն են, որոնք և՛ իրական աշխարհին են, և՛ այդ աշխարհում մարդկանց կենսագործունեության արդյունքը: Այս տեսարանները ապահովում են «արձանագրման», ճանաչման («սա՛ այն») հնարավորություններ, դրանց ամեն անգամ մարդը վերադառ-

[115] Garfinkel, H. (1967) Studies in Ethnomethodology. New Jersy: Prentice Hall Inc., Ch. 2: ‘Studies of the routine grounds of everyday activities’, pp. 35-75. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի, Գայանե Միքայելյանի:*

նում է արթնանալիս: Վերջիններս հանդիսանում են առօրեական աշխարհի ցանկացած փոխակերպման ինչպես մեկնարկային կետ, այնպես էլ վերադարձի կետ, այն փոխակերպման, որն իրականացվում է խաղերում, երազանքներում, զմայլանքներում, թատերական վերամարմնավորումներում, գիտական տեսաբանումներում կամ հանդիսավոր ծիսակատարություններում:

Առողջ բանականության ծանոթ աշխարհը, առօրեականության աշխարհը ցանկացած գիտակարգի՝ լինի դա հումանիտար, թե բնական, անանցանելի հետաքրքրության առարկան է: Հասարակական գիտություններում, մասնավորապես սոցիոլոգիայում, այն ուսումնասիրման հիմնական առարկան է, որը սահմանում է սոցիոլոգիական խնդիրների ամբողջությունը, մտնում է իրականության հանդեպ սոցիոլոգիայի վերաբերմունքի բուն էության մեջ և զարմանալիորեն պահպանում է իր ինքնիշխանությունը այն բացատրելու՝ սոցիոլոգների հավակնություններից:

Սակայն, չնայած սոցիոլոգիայում այս թեմայի ունեցած կենտրոնական դիրքի, առկա լայնածավալ գրականությունը ներկայացնում է փոքրածավալ տեղեկություններ և գրեթե բոլորովին չի առաջարկում մեթոդներ, որոնք հնարավորություն կտային դուրս բերել սոցիալապես ընդունված «ծանոթ տեսարանների» էական գծերը և հարաբերակցել դրանք սոցիալական կազմակերպման պարամետրերի հետ: Թեև սոցիոլոգներն ընդունում են առօրեական կյանքի՝ սոցիալապես կառուցակցվող դրվագները՝ որպես իրենց հետազոտությունների ելակետ, այնուամենայնիվ, նրանք հազվադեպ են նկատում[116], որ առողջ բանականության աշխարհի գոյության բուն հնարավորությունն ինքնին սոցիոլոգի համար հետազոտական խնդիր է: Նման հնարավորությունը հիմնավորվում է կա՛մ տեսականորեն, կա՛մ էլ համարվում ինքնին հասկանալի: Թեև առօրեական աշխարհի սահմանումը ճիշտ այնպես, ինչպես որ այն ներկայանում է առողջ բանականությանը, ան-

---

[116] Ալֆրեդ Շյուցի աշխատությունները, որոնք մեջբերվում են երրորդ տողատակում, հիանալի բացառություն են: Շյուցի աշխատանքներին ծանոթ ընթերցողները կարող են նկատել, թե որքան է սույն հոդվածը պարտական նրան:

կասկած, «տեղավորվում է» սոցիոլոգիական հետաքրքրությունների շրջանակում և՛ իբրև ինքնուրույն խնդիր, և՛ իբրև սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական հիմք, մինչ օրս այս հիմնախնդիրը չի հետազոտվել: Սույն հոդվածում ես մտադիր եմ ցույց տալ, որ առօրյա բանականության վրա հիմնված գործողությունների հետազոտումը միանգամայն կարևոր նշանակություն ունի սոցիոլոգիայի համար, և, պատմելով մեր կողմից իրականացված հետազոտությունների մասին, կցանկանայի խթանել անդրադարձն այդ հիմնախնդրին:

**Ինչպես դարձնել առօրեական դրվագները տեսանելի**

Առօրեական գործունեության կայուն բնութագրիչները վերլուծելիս սոցիոլոգները, որպես կանոն, ընտրում են փորձարկվողներին ծանոթ հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ՝ բնակարանային միջավայրը կամ աշխատավայրը, և փնտրում են փոփոխականներ, որոնք ապահովում են այդ բնութագրիչների կայունությունը: Ճիշտ նույն կերպ, նրանք չեն դիտարկում այդ հանգամանքների ինչ-որ կոնկրետ դիտանկյուն՝ առօրեական իրադարձությունների սոցիալապես ստանդարտացված և ստանդարտավորող, «տեսանելի, սակայն ոչ նկատելի» սպասվող, ֆոնային առանձնահատկությունները: Մինչդեռ հասարակության անդամները իրականությունը մեկնաբանելիս օգտվում են հենց այդ ֆոնային սպասումներից, որոնց շնորհիվ այստեղ և հիմա իրականացվող իրադարձությունները դառնում են նրանց համար հասկանալի և ճանաչելի ՝որպես «ծանոթ-իրադարձությունների արտահայտումներ»: Այն փաստը, որ ամեն մարդ զգում է այդ ֆոնը, բավականին ակնհայտ է, և, միևնույն ժամանակ, յուրաքանչյուրը կարող է դժվարություններ ունենալ, եթե նրան խնդրեն հստակորեն պատմել, թե հատկապես ինչում են այդ սպասումները: Երբ մարդուն հարցնում են այդ մասին, նա կարող է շատ անորոշ պատասխան տալ կամ առհասարակ ոչինչ չպատասխանել:

Որպեսզի այդ ֆոնային սպասումները երևան գան, իրականում անհրաժեշտ է կա՛մ «սովորական կյանքի» հանդեպ զբաղեցնել կողմնակի դիտարկողի դիրք, կա՛մ կարողանալ ինչ-որ կերպ առանձնանալ

դրանից: Ինչպես մատնանշել է Ալֆրեդ Շյուցը, այդ ակնկալիքներն իբրև խնդիր հետազոտելու համար «յուրահատուկ շարժառիթ» է հարկավոր: Սոցիոլոգները նման շարժառիթ ունեն. դա հասարակության անդամների կյանքի հանգամանքների դիտարկման (որպես տեսական հետաքրքրության առարկայի) ծրագրի ստեղծումն է, իսկ հասարակության անդամների դիտանկյունից այդ հանգամանքներն անհրաժեշտաբար ներառում են իրենց բազմաթիվ ֆոնային բնութագրիչների բարոյական դիտանկյունները: Արդյունքում, առօրեական գործողությունների տեսանելի, սակայն, որպես կանոն, ոչ ակներև ֆոնը երևան է գալիս և նկարագրվում է այն կյանքի տեսանկյունից, որում մարդիկ իրականում ապրում են՝ ունենում են երեխաներ, զգում են, մտորում են, մտնում են հարաբերությունների մեջ հենց նրա համար, որպեսզի հնարավորություն ընձեռեն սոցիոլոգին լուծելու իր տեսական խնդիրները:

Սոցիոլոգ-տեսաբաններից Ալֆրեդ Շյուցը գործնականորեն միակն է, ով իր ուշ շրջանի աշխատություններում (առօրյա կյանքի աշխարհի կոնստիտուտիվ ֆենոմենոլոգիայի դասական հետազոտությունների շարքից) նկարագրել է այս տեսանելի, սակայն ոչ ակներև ֆոնային սպասումներից շատերը: Նա անվանում էր դրանք «առօրյա կյանքի դիրքորոշումներ» և վերջիններիս տեսանելի դրսևորումները բնութագրում՝ որպես «միատեղ ճանաչելի աշխարհ, որն ընդունվում է իբրև ինքնին հասկանալի»:[117] Շյուցի հիմնարար աշխատանքը հնարավոր է դարձնում այն հետագա խնդիրների ձևակերպումը և լուծումը, որոնք կվերաբերեն ֆոնային սպասումների բնույթին և ազդեցությանը, ֆոնային սպասումների և գործողությունների համաձայնեցման գործընթացների հարաբերակցությանը, ինչպես նաև ցանկացած հասարակության մեջ վերջիններիս տեղի որոշմանը:

[117] Schutz, A. (1932) Der Sinnhafte Aufbau Der Sozialen Welt. Vein: Verlag von Julius Springer; Collected Papers I: The Problem of Social Reality, ed. Maurice Natanson, The Hague: Martinus Nijhoff, 1962; Collected Papers.
II: Studies in Social Theory, ed. Arvid Broderson, The Hague: Martinus Nijhoff, 1964; Collected Papers III.
Studies in Phenomenological Philosophy, ed. Schutz, I.,The Hague: Martinus Nijhoff, 1966.

Այս հոդվածում ներկայացվող հետազոտություններում փորձ է արվում դուրս բերել որոշ այն ֆոնային սպասումները, որոնք առօրյա կենցաղային դրվագներին ծանոթ և սովորական բնույթ են հաղորդում, ինչպես նաև հարաբերակցել այդ սպասումները առօրեական զբաղմունքների կայուն սոցիալական կառուցվածքների հետ: Ինչ վերաբերում է ներկայացման կարգին, ես նախընտրում եմ սկսել ծանոթ դրվագներից և այն հարցից, թե ի՞նչ կարելի է անել իրերի սովորական ընթացքը խախտելու նպատակով: Թե ինչպես են ձևավորվում և սովորաբար վերարտադրվում առօրեական գործողությունների կառուցվածքները[118], կարող էին պարզաբանել այն գործողությունները, որոնք ստիպված կլինեինք ձեռնարկել սովորական փոխազդեցություններում տարակուսանք, լարվածություն, շփոթություն առաջացնելու, սոցիալապես պայմանավորված զգացումներ խթանելու՝ ամոթ, անհանգստություն, մեղք, վրդովմունք, և այդպիսով առօրեական գործողություններն ապակայունացնելու նպատակով:

Մի փոքր շեղում: Չնայած ընթացակարգի նկատմամբ ընդգծված ուշադրությանը՝ իմ հետազոտությունները փորձարարական չեն: Դրանք ցուցադրություններն են, և ինչպես կասեր Հերբերտ Շպիգելբերգը, «ծառայում են ծույլ երևակայության օժանդակմանը»: Գտնում եմ, որ դրանք տանում են դեպի մտորումներ, որոնք հնարավորություն են ընձեռում երևան հանել մեզ ծանոթ աշխարհի «տարօրինակությունը»:

## Ընդհանուր ըմբռնումների որոշ էական առանձնահատկությունները

Մի շարք նկատառումներ ցույց են տալիս, որ ըմբռնումների ընդհանրությունը հազիվ թե հնարավոր լինի չափել որևէ հարցի շուրջ մարդկանց փոխադարձ համաձայնության ծավալով: Անգամ եթե այդ հարցերի թիվն ու բազմազանությունը սահմանափակ լինեին, իսկ

[118] Մյուս կողմից, առօրեական գործողությունների կառուցվածքների պարբերական վերարտադրման մասին գիտելիքը պետք է հնարավորություն ընձեռի մեզ պատասխանելու այն հարցին, թե ինչպես մենք կարող ենք արդյունավետ կերպով իրականացնել ցանկալի անկարգությունները:

չափման գործնական դժվարությունները՝ հաղթահարելի, պատկերացումն այն մասին, թե մենք գործ ունենք փոխադարձ համաձայնության որոշակի ծավալի հետ, իր էությամբ սխալ կլիներ:

Ուսանողներին հանձնարարվել էր ներկայացնել զեկույցներ «ամենաառօրյական» զրույցների մասին՝ թղթի ձախ հատվածում սղագրելով այն ամենն, ինչն արտահայտում են զրույցի մասնակիցները, իսկ աջում՝ այն ամենն, ինչ զրուցակիցներն այդ ամենի տակ նկատի են ունեցել, այլ կերպ ասած՝ ինչի մասին էր զրույցն իրականում: Ուսանողներից մեկը ներկայացրել էր զեկույց մի զրույցի մասին, որի մասնակից կողմերից մեկը հենց ինքն էր, իսկ զրուցակիցը՝ նրա կինը: Ներկայացված զեկույցի մի մասը ստորև.

| | | |
|---|---|---|
| Ամուսին | Դանան այսօր կարողացավ պեննի (անգլիական և ֆիննական մանրադրամ) զցել ավտոկանգառի հաշվիչում, ընդ որում, ես նրան չբարձրացրեցի: | Այսօր կեսօրին, երբ ես Դանային՝ մեր 4- ամյա երեխային մանկապարտեզից տուն էի տանում, նա կարողացավ ձգվել այնքան բարձր, որքան անհրաժեշտ էր ավտոկանգառի հաշվիչում պեննի զցելու համար, այն դեպքում, երբ մինչ այդ ես միշտ բարձրացնում էի նրան, որպեսզի կարողանար հասնել անհրաժեշտ բարձրությանը: |
| Կին | Դու ի՞նչ է նրան հետդ էիր տարել ձայնասկավառակներ գնելու: | Եթե նա պեննին ավտոկանգառի հաշվիչում է զցել, ուրեմն դու կայանել ես, երբ նա արդեն քեզ հետ էր: Գիտեմ, որ կանգ ես առել երաժշտական |

| | | |
|---|---|---|
| | | խանութի մոտ կամ երբ նրա հետևից էիր գնում, կամ հետ դառնալիս: Արդյո՞ք հետ դառնալիս էր, և դա էր պատճառը, որ նա քեզ հետ էր, թե՞ կանգ էիր առել, երբ դեռ նոր էիր գնում նրան բերելու, իսկ հետ դարձի ճանապարհին կանգ էիր առել էլի ինչ-որ տեղ: |
| Ամուսին | Ոչ, կոշիկների վերանորոգման արհեստանոց: | Ոչ, ես նրան վերցնելու ճանապարհին կանգնել էի ձայնասկավառակների խանութի մոտ, իսկ հետ դառնալիս, երբ նա արդեն ինձ հետ էր, մտա կոշիկների վերանորոգման արհեստանոց: |

Այս զրույցի վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

1. զրուցակիցները հասկանում են, թե ինչի մասին է խոսվում, թեև զրույցի հետ առնչվող մի շարք բաներ ուղղակիորեն չեն հիշատակվում;
2. զրուցակիցների կողմից ընկալելի տեղեկատվության մի մասը հասկանալի է ոչ միայն շնորհիվ իրականում ասվածի, այլև չասվածի;
3. տեղեկատվության մեծ մասը հասկանալի է՝ շնորհիվ այն բանի, որ զրուցակիցները կենդանի զրույցում հետևում են ասվելիք տեղեկատվության ժամանակային հաջորդականությանը՝ ընկալելով այն որպես զրույցի ծավալման հաստատում, այլ ոչ իբրև բառերի փոխկապված ամբողջություն;

4. բովանդակությունը, որը զրուցակիցներից յուրաքանչյուրն ընկալում է նույն կերպ, հնարավոր է միայն ըմբռնման հատուկ աշխատանքի շնորհիվ, որի ընթացքում նրանք տեղի ունեցող խոսքային իրադարձություններին վերաբերվում են ինչպես «փաստաթղթերի» կամ «ցուցիչների», որոնք հանդես են գալիս նրանցից յուրաքանչյուրի կողմից կանխավ ենթադրված քննարկման թեմաների ամբողջության անունից, որի առնչությամբ զրուցակիցներից մեկը նախապես ենթադրել է, որ մյուսը որևէ բան արտաբերելիս նկատի է ունենալու հենց այդ առարկաները: Ընդ որում, խնդիրն այն չէ միայն, որ թեմաների ենթադրյալ ամբողջությունը դուրս էր բերվում առանձին «փաստաթղթային» վկայությունների հաջորդականությունից, այլև այն է, որ այդ փաստաթղթային վկայություններն ինքնին մեկնաբանվում էին այն տեղեկատվության հիման վրա, որն «արդեն իսկ հայտնի է» կամ կարող էր հայտնի լինել թեմաների ենթադրվող ամբողջության առնչությամբ[119]: Այսպիսով, փաստաթղթային վկայությունները և քննարկման ենթադրյալ թեմաների ամբողջություններն օգտագործվում էին փոխադարձ ճշգրտման համար;
5. հետևելով արտահայտություններին՝ որպես զրույցում-տեղի-ունեցող-իրադարձությունների, զրուցակիցներից յուրաքանչյուրն ի նկատի է ունեցել ինչպես տվյալ փոխազդեցության նախապատմությունը, այնպես էլ հաջորդող հնարավոր իրադարձությունները՝ օգտագործելով այդ փոխազդեցությունը՝ որպես զրուցակցի ասելիքի մեկնաբանման և սեփական մտքերի արտահայտման սխեմա և վերագրելով զրուցակցին գործողությունների բացարձակապես նույն բնույթը;

[119] Կառլ Մանհայմը իր «On the Interpretation of 'Weltanschauung' in Essays on the Sociology of:
Knowledge. New York: Oxford University Press, 1952, p. 33-83 էսեյում խոսում է այդ աշխատանքի մասին՝ ներկայացնելով այն որպես «մեկնաբանման փաստաթղթային մեթոդ»:

6. ամեն նախորդ ասվածը հասկանալու համար զրուցակիցներից յուրաքանչյուրը սպասում էր, որ էլի ինչ-որ բան ասվի, և ուշադրավ էր նրանցից յուրաքանչյուրի սպասելու պատրաստակամությունը:

Պատկերացումների ընդհանրությունը կարող էր չափվել փոխադարձ համաձայնության ծավալով, եթե այդ պատկերացումները կազմվեին այնպիսի իրադարձություններից, որոնց հաջորդականությունը կհամապատասխաներ ժամացույցի սլաքի դիրքերի փոփոխությանը, այլ կերպ ասած՝ իրական ժամանակում տեղի ունեցող իրադարձություններին: Այնինչ, ներկայացված արդյունքները, որոնք ստացվել են արտահայտությունների փոխանակման՝ իբրև «զրույցում-տեղի-ունեցող-իրադարձությունների» դիտարկման տեսանկյունից, մատնանշում են նս մեկ պարամետրի ներմուծման անհրաժեշտությունը՝ ժամանակի յուրահատուկ դերի, որը վերածում է խոսակցության առարկան («այն, ինչի մասին խոսում են») իրեն ստեղծող գործողությունների գործընթացում ծավալվող և ծավալված իրադարձության; ժամանակի այն դերի, որը թույլ է տալիս ամեն մասնակցին հասկանալ թե՛ գործընթացը, թե՛ արդյունքը այդ ծավալման *ներսից*, ընդ որում, յուրաքանչյուրն ընկալում է ինչպես իր, այնպես էլ դիմացինի անունից:

Ներկայացված զրույցը վեր է հանում մի շարք այլ առանձնահատկություններ ևս:

1. Արտաբերված տեղեկատվության մեծ մասը այնպիսին է, որ ընկալողը չի կարող հասկանալ վերջինիս իմաստը՝ առանց խոսակցի կենսագրությանը, նպատակներին, տեղեկատվության արտաբերման հանգամանքներին, զրույցին նախորդող իրադարձությունների ընթացքին կամ խոսողի և ունկնդրողի միջև առկա և հնարավոր փոխհարաբերությունների մասին ինչ-որ բան իմանալու կամ գոնե ենթադրելու: Արտահայտված տեղեկատվությունը զուրկ է այնպիսի իմաստներից, որոնք կշարունակեին հաստատուն մնալ անգամ դրանց կիրառման հաջորդականությունների փոփոխման դեպքում:

2. Իրադարձությունները, որոնց մասին ընթանում էր զրույցը, առանձնապես հստակեցված չէին: Նրանք ոչ միայն չէին ուրվագծում սահմանափակ թվով պայմանավորվածություններ, այլև հենց իրենք նկարագրվող իրադարձությունները ներառում էին որոշակի ուղեկցող պայմանավորվածություններ (իբրև ի սկզբանե ենթադրվող և անօտարելի գծեր), որոնք բաց էին ներքին փոխհարաբերությունների, այլ իրադարձությունների հանդեպ վերաբերմունքի կամ նախկին և ապագա հնարավորությունների հանդեպ վերաբերմունքի համար:
3. Որպեսզի առանձին վերցրած արտահայտությունը լինի իմաստավորված, արտաբերվելուց անմիջապես հետո զրուցակիցներից յուրաքանչյուրը, գտնվելով ինչպես սեփական, այնպես էլ զրուցակցի «արտադրանքի» ունկնդրի դերում, զրույցի յուրաքանչյուր տրված պահին պետք է ենթադրեր, որ արդեն իսկ ասվածի իրական իմաստը կարող է հստակեցվել միայն իր կամ զրուցակցի կողմից ավելի ուշ ասվելիք տեղեկատվության միջոցով: Այս կերպ, արտահայտությունների մեծ մասը զրուցակիցները ընկալում և հասկանում էին միայն զրույցի հետագա ընթացքում:
4. Դժվար թե կարիք կա առանձնակի շեշտելու, որ ասվածի իմաստը կախված էր արտահայտությունների հաջորդականության մեջ զբաղեցրած տեղից, վերջինս կազմող բառերի արտահայտչականությունից, ինչպես նաև նկարագրվող իրադարձությունների՝ զրուցակիցների համար ունեցած նշանակությունից և կարևորությունից:

Ընդհանուր պատկերացումների այս հատկությունները տարբերվում են այն հատկություններից, որոնք վերջիններս կարող էին ունենալ, եթե մենք անտեսեինք ժամանակային բնույթը և վերաբերվեինք դրանց իբրև հիշողության ժապավենի վրա արված գրառումների: Նման ձայնագրությունները կարող էին դառնալ ճշգրտման որոշակի հիմք կամ այլընտրանքային արժեքների որոշակի փաթեթ, որոնցից տրված պայմաններում պետք էր ընտրել տարբերակներ, որոնք

կիստակեցնեին, թե այլընտրանքային միջոցների հավաքածուից որն է պետք ընտրել իրավիճակը հասկանալու համար այն դեպքերում, երբ առաջանում է նման որոշում կայացնելու կարիք: Վերջին հատկությունները խիստ ռացիոնալ դիսկուրսի հատկություններ են, որոնք իդեալականացված են համարժեք տրամաբանական փաստարկման կանոններում:

*Իրենց առօրյա գործերը վարելիս*, մարդիկ երբեք թույլ չեն տալիս միմյանց հասկանալ, թե «ինչի մասին են նրանք իրականում խոսում»: Առօրեական դիսկուրսի թույլատրելի հատկություններն են՝ ակնկալիքը, որ մարդիկ ինքնուրույն կհասկանան այն, ինչ նկատի է ունեցել զրուցակիցը, արտահայտությունների ընտրության պատահականությունը, հղումներին հատուկ անորոշությունը, ներկա իրադարձությունների հետհայաց և հեռանկարային զգացողությունը, խոսակցության շարունակման սպասումը՝ ուղղված նախապես ասվածը հասկանալուն: Այս հատկությունները կազմում են առօրեական դիսկուրսի տեսանելի, բայց աննկատ գծերի ֆոնը, այնինչ ներկայացվող արտահայտությունները ճանաչվում են իբրև սովորական, բանական, ընկալելի և հստակ խոսակցության իրադարձություններ: Մարդկանց պետք են դիսկուրսի այդ որակները՝ որպես պայմաններ, որոնց դեպքում նրանք իրավունք են ստանում և ուրիշներին իրավունք են տալիս պնդելու, որ իրենք գիտեն, թե ինչի մասին են խոսում, իսկ այն, ինչ նրանք ասում են, մատչելի է հասկանալու համար և պետք է հասկացվի: Կարճ ասած, տեսանելի, սակայն աննկատ այդ կանոնների կիրառումը մարդկանց հնարավորություն է տալիս վարել զրույց առանց ընդհատումների: Ցանկացած շեղումն այս կանոններից հանգեցնում է նրան, որ անհապաղ փորձեր են ձեռնարկվում՝ իրերի ճիշտ կարգը վերականգնելու համար:

Այդ առանձնահատկությունների սանկցավորված բնույթը հնարավոր է ցույց տալ հետևյալ կերպ: Ուսանողները առաջադրանք էին ստացել, որի համաձայն նրանց հարկավոր էր սովորական զրույցի մեջ ներգրավվել իրենց մտերիմներից կամ ընկերներից որևէ մեկին, և, ցույց չտալով, որ փորձն իրականացնողը զրուցակցից որևէ արտասո-

վոր բան է խնդրում, պահանջել, որպեսզի վերջինս հստակեցնի իր սովորական արտահայտությունների իմաստը: Քանիինգ ուսանողներ ներկայացրել էին իրենց զեկույցները այդպիսի քանիինգ զրույցների վերաբերյալ: Ստորև ներկայացված է տիպիկ մեջբերում զեկույցներից մեկից:<>

**Դեպք 1**

Զրուցակից, այսուհետ՝ «Զ», փորձարկող, այսուհետ՝ «Փ»

(Զ) Ողջու՛յն, Ռե՛յ: Ընկերուհիդ ինչպե՞ս է:

(Փ) Ի՞նչ նկատի ունես, «ինչպե՞ս է նա» հարցնելով. քեզ ֆիզիկական որպիսությո՞ւնն է հետաքրքրում, թե՞ մտավոր:

(Զ) Նկատի ունեմ՝ ինչպե՞ս է իրեն զգում: Քեզ ի՞նչ եղավ (բարկացած է երևում):

(Փ) Ոչինչ: Ուղղակի ավելի հստակ բացատրի՛ր, թե ինչ նկատի ունես:

(Զ) Լավ, արի՛ թողնենք դա: Ինչպե՞ս են բժշկական դպրոցի հետ կապված գործերդ:

(Փ) Մասնավորապես ի՞նչ նկատի ունես:

(Զ) Դու գիտես՝ ես ինչ նկատի ունեմ:

(Փ) Չէ՛, չգիտեմ:

(Զ) Ի՞նչ է քեզ հետ կատարվում: Հո չե՞ս հիվանդացել: <>

**Ֆոնային ըմբռնումները և առօրեական իրադարձությունների «համարժեք» ճանաչումը**

Ո՞ր ակնկալիքներն են կազմում փոխհասկացման «տեսանելի, բայց ոչ աննկատ» ֆոնը և ինչպե՞ս են դրանք կապված մարդկանց կողմից միջանձնային փոխազդեցությունների հաստատված եղանակների ճանաչման հետ: Այս մասին որոշ տեղեկություններ կարելի է ստանալ, եթե հարցնենք, թե ինչպե՞ս է մարդն ընկալում սովորական, ծանոթ դրվագները և ի՞նչ է նա տեսնում, եթե խնդրենք նրան նայել դրան այնպես, իբրև թե դրա մեջ ակնհայտ որևէ բան չկա:

Ավարտական կուրսի ուսանողներին հանձնարարվել էր շուրջ 15 րոպեից 1 ժամ անցկացնել տանը՝ վերաբերվելով տանը կատարվող իրադարձություններին բնակարանի վարձակալների աչքերով: Նրանք նաև հրահանգ էին ստացել ոչ մի դեպքում չխոստովանել, որ առաջադրանք են իրականացնում: Իրենց փորձի մասին տեղեկացրել էին 33 ուսանողներ: Նրանք իրենց գրավոր զեկույցներում բիհեվիորիզացրել էին տանը տեղի ունեցած դրվագները: Ահա այդպիսի մի դրվագ, որը հնարավորություն կտա պարզաբանել, թե ինչ ի նկատի ունենք:

«Կարճահասակ, գիրուկ մի տղամարդ ներս մտավ, համբուրեց ճակատս և հարցրեց. «Ինչպե՞ս են գործերդ համալսարանում»: Ես քաղաքավարի պատասխանեցի նրան: Նա գնաց խոհանոց, երկու կանանցից տարիքով փոքրը համբուրեց, իսկ մյուսը բարևեց նրան: Կանանցից տարիքով փոքրը հարցրեց ինձ. «Ի՞նչ կցանկանաս ուտել ճաշին, արևս»: Ես պատասխանեցի «ոչինչ», իսկ նա ի պատասխան ուսերը թոթվեց և ոչինչ չասաց: Կանանցից ավելի տարիքովը, ոտքերը քստքստացնելով ու ինչ-որ բան քթի տակ մռթմռթալով, քայլում էր խոհանոցում: Տղամարդը լվաց ձեռքերը, նստեց սեղանի մոտ ու թերթը ձեռքն առավ: Նա կարդում էր, մինչև կանայք սեղան էին գցում: Բոլորը նստեցին սեղանի շուրջ: Նրանք փոխանակվում էին օրվա իրադարձությունների վերաբերյալ ոչինչ չասող դիտողություններով: Կանանցից տարիքով մեծը օտար լեզվով ինչ-որ բան ասաց, ինչը ծիծաղ առաջացրեց մնացածի մոտ»:

Մարդիկ, հարաբերությունները և գործողությունները նկարագրվում են առանց մատնանշելու կապը պատմության հետ, առանց ցույց տալու այս դրվագի տեղը կյանքի մի շարք զարգացող հանգամանքների շարքում, իրադարձությունների այն ամբողջ կտավի, որը նշանակալի է մասնակիցների համար: Ինչպես կարելի է նկատել, զեկույցում բացակայում են շարժառիթների, այս կամ այն գործողության նպատակահարմարության, սուբյեկտիվ ապրումների, իրադարձությունների սոցիալապես ստանդարտացված (նորմալ) բնույթի մասին հիշատակումները: Տպավորություն էր ստեղծվում, որ նկարագրությունները կազմված են դրան անցքից ծիկրակող դիտարկողի կողմից,

որը միտումնավոր բաց էր թողնում իրեն և փարձարկվողներին հայտնի՝ դիտարկվող դրվագներին վերաբերող տեղեկատվության մեծ մասը: <>

Ուսանողները հայտնում էին, որ չափազանց դժվար էր դիտարկման սահմանված ձևին ապավինելը: Ծանոթ անձիք՝ ընտանիքի անդամները, ծանոթ իրերը՝ կահույքը, տան սենյակների կահավորանքը ընդդիմանում էին ուսանողների՝ տանը կատարվող իրադարձություններն իբրև անծանոթ դիտարկելու ջանքերին: Ուսանողներից շատերը նկատել էին, որ իրենց համար բավական տհաճ էր գիտակցել, թե հատկապես ինչ եղանակներով են կատարվում առօրյա գործողությունները, օրինակ՝ թե *ինչպես* է մարդը օգտվում ճաշի պարագաներից, *ինչպես* է բացում դուռը կամ ողջունում ընտանիքի մյուս անդամին: Շատերն էլ զեկուցել էին, որ նրանց համար դժվար էր դիտարկումը շարունակելը, քանզի դիտարկման ընթացքում բախվել էին վեճերի, անախորժությունների և անբարյացակամ վերաբերմունքի, ինչը վշտացրել էր նրանց: Հաճախ՝ առաջին անգամ նկատված հիմնախնդիրները նկարագրելիս, ուսանողները շեշտում էին, որ այս հաշվետվությունը ընտանեկան խնդիրների մասին չի արտացոլում իրական պատկերը, և *իրականում* իր ընտանիքը շատ երջանիկ է: Կային նաև ուսանողներ, որոնք իրենց զգացել էին «մասամբ կոնֆորմիստներ» և փոքր-ինչ ճնշված էին այդ հանգամանքով: Ուսանողների մի մասն էլ փորձարկման ընթացքում ձգտել էր համարել, որ «ես-ը-սովորական-հանգամանքներում» նույնն է, ինչ «իրական-ես-ը»: Ուսանողներից մեկն էլ իր համար բացահայտում էր համարել այն, որ փորձարկման ընթացքում հստակորեն կարողացել էր կանխատեսել ընտանիքի անդամների արձագանքները, և դա վերջինիս մոտ որևէ անհանգստություն կամ լարվածություն չէր առաջացրել:

Ընդհանուր առմամբ, ներկայացված զեկույցներից շատերը պարունակում էին «ես ուրախ էի, երբ այդ մեկ ժամը ավարտվեց, քանզի վերջապես ես դարձա ես» դիրքորոշումը:<>

Այդ զեկույցներից կարելի է առանձնացնել դիտարկման այդ եղանակի տարբերությունները «սովորական», «պահանջվող» դիտարկման ձևերից:

1. Սեփական բնակարանը վարձակալի աչքերով դիտարկելու ընթացքում փորձարկում իրականացնող ուսանողները փոխարինում էին իրադարձությունների ճանաչելի համատեքստը մեկնաբանման մի նոր եղանակով, որը պահանջում էր *ժամանակավորապես* հաշվի չառնել այդ համատեքստերը:
2. Այս նոր դիտանկյունից ինքը ընդհանուր ճանաչում ունեցող համատեքստը դառնում էր դիտարկման ինքնուրույն առարկա իր իսկ էական կառուցվածքների որոշակիացման նպատակով:
3. Դրա համար դիտարկողը փոխազդում էր այլոց հետ այն դիրքից, որի էության և նպատակի մասին գիտեր միայն ինքը, որը չէր բացահայտվում ուրիշների համար, բայց կարող էր ցանկացած պահի ընդունվել կամ մի կողմ դրվել դիտարկողի կողմից:
4. Նման կանխամտածված դիրքորոշումը պահպանվում էր միակ հստակ կանոնին հետևելու շնորհիվ, որը, ինչպես լինում է խաղերում, կարգադրում էր նայել շուրջը կատարվող ամենին՝ առաջնորդվելով հենց այդ կանոնով:
5. Եվ վերջապես, դիտարկման այս տեսակը բացառում էր դիտարկողի վարքի և փորձարկման ենթարկվողների վարքի համաձայնեցման հնարավորությունը:

Այս բոլոր դիտանկյունները ուսանողները համարեցին բավականին տարօրինակ:

Այն դեպքերում, երբ ուսանողները փորձում էին օգտագործել այս ֆոնային սպասումները, ոչ միայն ընտանեկան դրվագները դիտարկելու, այլև դրանցում մասնակցելու համար, այդ դրվագներն ուղղակի քանդվում էին, քանի որ ընտանիքի այլ անդամները չէին հասկանում, թե ինչ է կատարվում, և սկսում էին զայրանալ:

Հաջորդ փորձարկման ժամանակ ուսանողներին հանձնարարվել էր շուրջ 15 րոպեից մինչև 1 ժամ անցկացնել տանը, սակայն անգամ բնակարանի երևակայական վարձակալներ լինելուց զատ ուսանողնե-

րից պահանջվում էր նաև այդ դերին համապատասխան գործել: Նրանց ցուցվել էր դրսևորել զգուշավորություն և հարգալից վերաբերմունք: Նրանք պետք է խուսափեին զգացմունքային արտահայտումներից, օգտագործեին ֆորմալ դիմելաձևեր և խոսեին միայն այն ժամանակ, երբ նրանց կդիմեին:

49 դեպքերից 9-ում ուսանողները կա՛մ հրաժարվել էին կատարել առաջադրանքը (5 դեպք), կա՛մ ձախողել էին առաջադրանքի կատարումը (4 դեպք): Հրաժարված ուսանողներից չորսը հայտնեցին, որ վախեցել էին կատարել առաջադրանքը, իսկ հինգերորդը բացատրեց, որ գերադասել է չանհանգստացնել սրտի հիվանդություն ունեցող մորը: «Ձախողված» դեպքերից երկուսում ընտանիքի անդամներն իրավիճակը որակել էին իբրև «կատակ», մերժել էին այն և չէին փոխել այդ դիրքորոշումը՝ չնայած ուսանողի՝ առաջադրանքը շարունակելու բազում փորձերի: Երրորդ ընտանիքում վճռել էին, որ ինչ-որ բան է թաքնված «կատարվելիքի» ետևում, սակայն վերջիններիս չէր հետաքրքրել, թե այդ ինչը կարող էր լինել: Չորրորդ ընտանիքում փորձարկում իրականացնողի ծնողները ուսանողին համարել էին «չափազանց սիրալիր», ինչը պայմանավորել էին այն հանգամանքով, որ իրենց աղջկան, հավանաբար, ինչ-որ բան է անհրաժեշտ, և որ շուտով ամեն բան պարզ կդառնա:

Մյուս 40 դեպքերում ընտանիքի անդամները տարակուսանքի մեջ էին ընկել: Նրանք ակնհայտորեն փորձում էին ինչ-որ կերպ հասկանալ ուսանողի տարօրինակ վարքը և վերադարձնել իրավիճակը նորմալ հունի մեջ: Ուսանողների հաշվետվությունները լի էին ցնցումների, շփոթության, շոկի, անհանգստության, զայրույթի մասին հիշատակումներով, ինչպես նաև ընտանիքի անդամներից լսված ամենատարբեր մեղադրանքների մասին՝ անազնվության, կարեկցանքի բացակայության, եսասիրության մեջ: Ընտանիքի անդամները բացատրություններ էին պահանջում: Ինչո՞ւմ է գործը: Ի՞նչ է կատարվում քեզ հետ: Քեզ ի՞նչ է, վռնդե՞լ են: Հիվանդացե՞լ ես: Խելագարվե՞լ ես, թե՞ պարզապես ապուշ ես: Ուսանողներից մեկը սարսափելի զայրացրել էր իր մորը, երբ նրա ընկերների ներկայությամբ հարցրել էր, թե արդյոք մայրը դեմ

չի լինի, եթե նա սառնարանից որևէ խորտիկ վերցնի: «Դեմ չե՞մ լինի: Դու այստեղ տարիներով ուտում ես առանց իմ թույլատվությունը հարցնելու: Քեզ ի՞նչ պատահեց»: Ընտանիքի անդամները փորձում էին գտնել ուսանողների արտասովոր վարքի խելամիտ բացատրություններ՝ չափից շատ է պարապել, հիվանդացել է, վիճել է հարսնացուի/փեսացուի հետ և այլն: <>

Չի գրանցվել որևէ դեպք, որում ուսանողների մեկնաբանություններից և բացատրություններից հետո իրավիճակը «չկայունանար»: Փորձարկմանը մասնակցող ընտանիքների մեծ մասի համար փորձարկումը ամենևին էլ զվարճալի չէր, և շատ քչերն էին դրանում գտել այս փորձառության մեջ որևէ ուսուցողական բան: Ավելին, բացատրությունը լսելուց հետո փորձարկում իրականացնող ուսանողի քույրերից մեկը անտարբեր պատասխանել էր ընտանիքի մյուս չորս անդամների անունից. «Խնդրում եմ այլևս ոչ մի փորձարկում: Գիտե՞ս ինչ կա, մենք առնետներ չենք»:<>

**Ֆոնային հասկացում և սոցիալական աֆեկտներ**

Չնայած հասարակական գիտություններում սոցիալական աֆեկտների նկատմամբ շարունակաբար աճող հետաքրքրությանը և այն լուրջ ուշադրությանը, որը վերջինիս նկատմամբ դրսևորում է կլինիկական հոգեբուժությունը, մինչ օրս զարմանալիորեն քիչ է գրված սոցիալապես կառուցակցված այն պայմանների մասին, որոնցում առաջանում և երևան են գալիս սոցիալական աֆեկտները: Այն դերը, որը ընդհանուր հասկացման ֆոնը ունի վերջիններիս ձևավորման, ճանաչման և կառավարման գործում, գործնականում մնում է terra incognita[120]: Կիրառական հետազոտողների կողմից նման ուշադրության պակասը առավել ուշագրավ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց դրանով են մտահոգված մարդիկ, որոնք ցանկանում են ողջամտորեն վարել իրենց ամենօրյա գործերը այնպես, որ առաջացնեն խանդավառություն ու ընկերասիրություն, ինչպես նաև խուսափեն մեղքի, ամոթի, ձանձրույթի զգացումներից: Ընդհանուր ըմբռնման

[120] Անհայտ – *խմբագրի ծանոթագրություն:*

և սոցիալական աֆեկտների միջև կապը հնարավոր է ցույց տալ՝ դիտարկելով վարձակալ-ուսանողների զիտափորձի ընթացակարգը՝ իբրև տարակուսանքի և զայրույթի հրահրման միջոց. «վարձակալը» վերաբերվում է «ակնհայտ», «նորմալ» և «իրական» իրադարձություններին այնպես, կարծես թե իր համար դա ամենևին էլ այդպես չէ:

Ընդհանուր հասկացման և սոցիալական աֆեկտների միջև որոշակի և ուժեղ կապի գոյությունը կարելի է ցույց տալ (և միաժամանակ դուրս բերել այդ կապի որոշ գծերը) անվստահության բացահայտ դրսևորման միջոցով. ընթացակարգ, որը մեր խորին համոզմամբ տալիս է բավականին ստանդարտացված արդյունք:

Շյուցի կողմից նկարագրված ֆոնային սպասումներից մեկը վերաբերում է անվստահության՝ որպես միատեղ հասկացվող աշխարհի բաղադրիչի սանկցավորված կիրառմանը: Շյուցը ենթադրում էր, որ մարդը իր *առօրյա գործերն անելիս* ընդունում է այն ենթադրությունը, համաձայն որի նորմալ հարաբերությունը որևէ ենթադրյալ օբյեկտի և տրված հանգամանքներում վերջինիս տրված կոնկրետ դրսևորումների միջև միանշանակ համապատասխանության հարաբերություն է: Ընդ որում, նա համարում է նաև, որ ուրիշը ընդունում է նույն ենթադրությունները ինչպես օբյեկտի և դրա դրսևորումների, այնպես էլ իր վերաբերյալ, այսինքն՝ ակնկալում է իրենից նույն ենթադրությունները: Առօրյա գործեր վարող մարդու համար օբյեկտները այնպիսին են, ինչպիսին որ պատկերացվում են, և նա ակնկալում է, որ ուրիշները մտածում են նույն կերպ: Որպեսզի այդ հարաբերությունները դիտարկվեն *կասկածի* կանոնի տեսանկյունից, հարկավոր է հիմնավորել այդ կանոնի կիրառման անհրաժեշտությունը և դրդապատճառները:

Մենք ակնկալում էինք, որ կասկածի (անվստահության)[121] կանոնի բացահայտ դրսևորումը մի իրավիճակում, որում դիմացինը փոխա-

---

[121] «Վստահություն» և «անվստահություն» հասկացությունները մշակվել են Garfinkel, H. (1963) A Conception of and Experiments with 'Trust' as a Condition of Stable Concerted Actions// Motivation and Social Interaction, ed. Harvey, O. J. New York: The Ronald Press Company, pp. 187-23 հոդվածում: Այդտեղ «վստահություն» հասկացությունը կիրառվում է մարդու առօրյա կյանքի դիրքորոշման սպասումներին՝ իբրև բարոյականության ենթարկվելու երևույթը նկարագրելու նպատակով: <>

դարձ ակնկալիքների համատեքստին վերաբերվում է հենց այնպես, ինչպես որ ցույց է տալիս, պետք է տարբեր զգացմունքներ ի հայտ բերեր թե՛ այն մարդու մոտ, ով կասկածում է, և թե՛ այն մեկի, ում կասկածում են: Մարդը, ում չեն վստահում, պետք է բացատրություններ պահանջի, և եթե այդպիսիք չներկայացվեն (քանզի «յուրաքանչյուրին պարզ է», որ դրանք կարող են անգամ գոյություն չունենալ), ապա պետք է զայրույթ զգա: Ինչ վերաբերում է փորձարկում իրականացնողին, ապա այստեղ մենք շփոթմունք և իրարանցում էինք ակնկալում, քանզի վերջինս հայտնվում էր բավականին հակասական իրավիճակում՝ զոհի սևեռուն հայացքում նա ոչնչություն էր երևում, քանի դեռ անվստահություն էր հայտնում այն ամենի հանդեպ, ինչը հայտնի էր յուրաքանչյուրին. միևնույն ժամանակ, նա շարունակում էր մնալ կոմպետենտ մարդ, որին ինքը մնացածի հետ միասին հոգու խորքում ճանաչում է, թեև ընթացակարգի պահանջների համաձայն՝ չէր կարող ներկայանալ որպես այդպիսին:<>

Համաձայն նոր հրահանգավորման՝ ուսանողները պետք է զրույցի բռնվեին որևէ մեկի հետ և, ելնելով զրույցի ընթացքից, պատկերացնեին (իսկ այնուհետև նաև դրանից ելնելով գործեին), որ այդ մարդու խոսքերի հետևում որոշակի թաքնված շարժառիթներ կան, որոնցով նա առաջնորդվում է: Նրանք պետք է ենթադրեին, որ զրուցակիցը ողջ ընթացքում փորձում է խաբել կամ մոլորեցնել:

Երեսունհինգ ուսանողներից միայն երկուսը փորձեցին առաջադրանքը կատարել՝ օտար մարդկանց հետ զրույցի բռնվելով: Մյուսները, իրավիճակի անվերահսկելի դառնալու հեռանկարից վախենալով, առաջադրանքը իրականացնելու համար ընտրեցին իրենց ընկերներին, հանրակացարանի սենյակակիցներին կամ ընտանիքի անդամներին: <>

Անվստահության մթնոլորտը դժվար էր ինչպես ընդունելը, այնպես էլ պահելը: Ուսանողները զեկուցում էին «ինչ-որ արհեստականորեն կառուցված խաղին» մասնակցելու սուր զգացում ունենալու մասին, հրահանգված «դերի մեջ մտնելու» անհնարինության տպավորության մասին, ինչպես նաև խոստովանում, որ բավական հաճախ «բոլո-

րովին չեն իմացել, ինչ անել հետո»: Զրուցակցին լսելիս փորձարկում իրականացնողները մոռանում էին առաջադրանքի մասին: Ուսանողներից մեկը իր զեկույցում նշել էր, որ չի կարողացել որևէ արդյունք ստանալ, քանզի անվստահության մթնոլորտի պահպանումը այնքան ուժ էր խլում, որ անհնար էր դառնում հետևել զրույցի ընթացքին: Նա այդպես էլ չի կարողացել զրուցակից ընկերոջը դիտարկել իբրև ենթադրյալ «խաբեբայի», քանզի զրույցի ողջ ընթացքում խոսել են ընդամենը աննշան բաներից:

Փորձարկում իրականացնող ուսանողներից շատերի համար առաջադրանքի հրահանգավորման մեջ ամրագրված ենթադրությունը, ըստ որի զրուցակիցը այն չէ, ինչ փորձում է ներկայանալ, հավասարազոր է եղել այն ենթադրությանը, համաձայն որի՝ զրուցակիցը զայրացած է և ատելություն է տածում նրանց հանդեպ: Մյուս կողմից, «զոհերից» շատերը թեև բողոքել էին, որ փորձարկում իրականացնողը ոչ մի պատճառ չուներ իրենց հետ այդպես վատ վարվելու, սեփական նախաձեռնությամբ փորձել էին բացատրություններ տալ և հաշտվել: Եվ միայն, երբ այդ փորձերը ձախողվել էին, ի հայտ էին եկել զայրույթի և «զզվանքի» բացահայտ դրսևորումներ:

Այն երկու ուսանողները, որոնք փորձարկումն իրականացրել էին օտար մարդկանց հետ, նշում էին, որ փորձարկման ենթարկվողի սպասվող դժգոհությունը բավականին արագ երևան եկավ՝ շատ սուր արտահայտում ստանալով: Ուսանողներից մեկը պահանջել էր երթուղային փոխադրամիջոցի վարորդից հավաստիացնել, որ ավտոբուսի երթուղում ներառված է իր ճանապարհը: Նա մի քանի անգամ հավաստիացրեց, որ ավտոբուսը անցնելու է այդ ճանապարհով, և հերթական կասկածը լսելուց հետո կորցրեց ինքնատիրապետումը և բղավեց. «Լսե՛ք, օրիո՛րդ: Ես Ձեզ արդեն մի քանի անգամ ասացի, այնպես չէ՞: Դեռ քանի՞ անգամ պետք է կրկնեմ»: Ուսանողուհին իր զեկույցում նշում է. «Ես վազեցի դեպի ավտոբուսի ետնամաս ու կուչ եկա նստարաններին: Ոտքերս սառել էին, դեմքս ասես այրվում էր, ես ատում էի առաջադրանքս»: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ մտերիմներին իբրև փորձարկման մասնակիցներ ընտրած ուսանողները իրենց

զեկույցներում առհասարակ չեն խոսել ամոթի և շփոթմունքի զգացումների մասին <>:

**Ֆոնային հասկացում և խառնաշփոթ**

<> Հասարակության անդամների համար առողջ բանականությունը՝ հասարակական կյանքի փաստերի իմացությունը, իրական աշխարհի մասին ինստիտուցիոնալացված գիտելիքն է: Առօրեական գիտելիքը ոչ միայն պատկերում է «իրական հասարակությունը» վերջինիս անդամների համար, այլև իրական հասարակության բուն հատկությունները՝ որպես ինքաիրականացվող մարգարեություններ (self-fulfilling prophecies) ինքնին վերարտադրվում են մարդկանց կողմից ֆոնային սպասումներին ենթարկվելու միջոցով: Հետևապես, համաձայնեցված գործողությունների կայունությունը պետք է ուղղակիորեն կախված լինի հասարակական կազմակերպման ցանկացած և բոլոր իրական պայմաններից, որոնք ապահովում են մարդկանց ենթարկումը «պատշաճությունների» ֆոնային համակարգին, այն է՝ հասարակության մեջ կյանքի մասին պատկերացումների օրինական կարգին այնպես, ինչպես այդ պատկերացումները երևում են հասարակության ներսից: Առանձին մարդու մակարդակում ֆոնային սպասումներին շահագրգիռ ենթարկման հակումը պայմանավորված է «առօրյա կյանքի բնական փաստերի» հասկացմամբ և ընդունմամբ:

Այս նկատառումներից հետևում է, որ որքան ավելի ամուր են հասարակության անդամների պատկերացումները այն մասին, ինչը «յուրաքանչյուր-նորմալ-մարդ-անպայմանորեն-գիտի», այնքան ավելի մեծ կլինի շփոթմունքը, եթե սեփական կյանքի իրական հանգամանքները նկարագրելիս սկսեն կասկածի տակ դրվել «առօրեական կյանքի բնական փաստերը»: Ներկայացված վարկածը ստուգելուն կոչված ընթացակարգը պետք է փոխի մասնակիցներին ծանոթ, հայտնի միջավայրի *օբյեկտիվ* կառուցվածքը՝ դարձնելով ֆոնային սպասումները չաշխատող: Մասնավորապես այդ փոփոխությունները պետք է մարդուն դնեն առօրեական ֆոնային սպասումների խախտման փաստի առաջ և դրա հետ մեկտեղ՝

1. թույլ չտան նրան իրադարձությունը մեկնաբանել՝ իբրև խաղ, փորձարկում, խաբեություն, ասել է թե՝ որևէ այլ բան, որը առօրեական դիրքորոշմանը համապատասխան ծանոթ է նրան իբրև թույլատրելի բարոյականություն կամ բարոյական վարքի արտահայտում,
2. ստիպեն նրան վերակառուցել «առօրեական կյանքի բնական փաստերը»՝ միաժամանակ չընձեռելով նրան իրավիճակի վերակառուցման համար բավարար ժամանակ՝ գործնական հանգամանքներին տիրապետելու տեսանկյունից, ինչի համար նրան անհրեժեշտ կլինի օգտագործել «բնական փաստերի» իմացությունը,
3. պահանջեն, որպեսզի նա ինքնուրույն և առանց համաձայնեցված հիմնավորումների կարողանա վերակառուցել բնական փաստերը:

Ենթադրվում է, որ մարդը չի ունենա այլընտրանք. նա պետք է վերացնի առօրյա կյանքի իրադարձությունների կարգում ի հայտ եկող անհամապատասխանությունները: Սակայն հենց այս ջանքերի արդյունքում իրադարձությունները կսկսեն կորցնել իրենց թվացյալ նորմալ բնույթը: Փորձարկման ենթարկվողը ի վիճակի չէ բնորոշել կատարվելիք իրադարձությունը՝ իբրև տիպական: Նա ի զորու չէ դատողություններ անել կատարվելիքի մասին ո՛չ նման որևէ բանի հետ համեմատելու հիմքով, ո՛չ էլ ընթացիկ իրադարձությունները նախկինում հանդիպած իրադարձությունների կարգերի հետ կապելու միջոցով: Նա չի կարողանա մատնանշել այն հանգամանքները, որոնց պարագայում նման իրադարձությունները կարող էին կրկնվել, ինչպես նաև չի կարողանա ճանաչել դրանք «առաջին հայացքից»: Նա ունակ չէ կարգաբերելու այս իրադարձությունները «նպատակներ-միջոցներ» հարաբերությանը համապատասխան:<> Կարճ ասած, մասնակիցների կողմից իրապես ընկալվող իրավիճակը, կորցնելով «բոլորին հայտնի»-

ի ֆոնը, պետք է դառնա «հստակ-անիմաստ»[122]: Իդեալական դեպքում մասնակիցների վերաբերմունքն այս անիմաստ իրադարձությանը պետք է արտահայտի նրանց շփոթվածությունը, անորոշությունը, ներքին կոնֆլիկտները, հոգեսոցիալական մեկուսացումը, կտրուկ և չուղղորդված անհանգստությունը, ինչպես նաև երևան հանի սուր ապաանհատականացման տարբեր ախտանիշներ: Բնականաբար, փոխազդեցության կառուցվածքները ևս կապակազմակերպվեն:

Այս ամենը ենթադրում է ֆոնային սպասումների կտրուկ խախտումներ: Անհրաժեշտ է, սակայն, ցույց տալ, թե ինչ սպասումների և ակնկալիքների հետ ենք մենք հատկապես գործ ունեցել:<>

Ես մշակել եմ այդ սպասումների խախտման ընթացակարգ՝ երեք պայմանների պահպանմամբ, որոնց խախտման դեպքերը պետք է ենթադրաբար առաջ բերեն շփոթություն, այն է՝

1. մարդը չի կարողանա ստեղծված իրավիճակը վերածել խաղի, կատակի, փորձարկման և այլն (ինչպես կասեր Լևինը՝ չի կարողանա «լքել դաշտը»),
2. նա չի ունենա բավարար ժամանակ իրադարձության հանգամանքների սեփական սահմանումները մշակելու համար և
3. նա զրկված կլինի սոցիալական իրականության այլընտրանքային սահմանումների կոնսենսուալ աջակցությունից:

Փորձարկման ընթացքում իրականացվել են երեքժամյա անհատական հարցազրույցներ 28 ուսանողների (ապագա բուժքույր/բուժեղբայրներ) հետ: Փորձարկում իրականացնողի լեգենդը (նա հանդես էր գալիս որպես Ամերիկայի արևելյան ափի բժշկական դպրոցի ներկայացուցիչ, ով փորձում էր հասկանալ, թե ինչու են բժշկական դպրոցի ընդունելության հարցազրույցները նման լարվածություն առաջացնում) ծառայում էր որպես ուսանողներին դիմելու արդարացում և վերջիններիս հետ զրույցի բռնվելու միջոց: Մենք ենթադրում էինք, որ փորձարկում իրականացնողին բժշկական կրթության հետ կապված

[122] Հասկացությունը փոխառվել է Weber, M. (1946) The Social Psychology of the World Religions աշխատությունից (From Max Weber: Essays in Sociology, New York: Oxford University Press, pp. 267-301): Ես աղապտացրել եմ հասկացության իմաստը:

մասնագետ ներկայացնելով՝ կդժվարացնենք ուսանողների «դաշտից փախուստը», երբ սկսվի սպասումների խախտումը: Թե ինչպես իրականացվեցին պայմաններից երկուսը՝ հանգամանքների վերասահմանումը սուղ ժամանակահատվածում և սոցիալական իրականության այլընտրանքային սահմանումներ մշակելիս փոխադարձ աջակցությանը հենվելու անկարողությունը, պարզ կդառնա ստորև:

Հարցազրույցի առաջին ժամում ուսանողը «բժշկական դպրոցի ներկայացուցչին» հայտնում էր տարաբնույթ տեղեկություններ ընդունելության հարցազրույցի մասին՝ պատասխանելով նրա հետևյալ հարցերին՝ «ի՞նչ աղբյուրներից կարող են բժշկական դպրոցները տեղեկանալ դիմորդների մասին», «ինչպիսի՞ մարդկանց են փորձում ընտրել բժշկական դպրոցները», «ինչպե՞ս պետք է դիմորդը պահի իրեն հարցազրույցի ժամանակ» և «ի՞նչ չարժե անել»: Այնուհետև ուսանողին հաղորդում էին, որ փորձարկում իրականացնողի հետազոտական հետաքրքրությունները ամբողջապես բավարարվել են, և հարցնում, թե արդյոք վերջինս չի՞ ցանկանա լսել իրական դիմորդի ընդունելության հարցազրույցի ձայնագրությունը: Հատկանշական է, որ բոլոր ուսանողները նման ցանկություն հայտնեցին:

Ձայնագրությունը իրենից ներկայացնում էր հատուկ փորձարկման նպատակներով պատրաստված զրույց՝ «բժշկական դպրոցի ներկայացուցչի» և «դիմորդի» միջև: Դիմորդը «ձանձրալի» անձնավորություն էր, նրա խոսքը լի էր քերականական սխալներով, ժարգոնային բառերով և արտահայտություններով, նա խուսափողական պատասխաններ էր տալիս, առարկում զրուցակցին, պարծենում էր, նսեմացնում այլ դպրոցները և մասնագիտությունները, պնդում էր, որ անմիջապես իրազեկեն իրեն հարցազրույցի արդյունքների մասին: Ձայնագրությունը լսելուց անմիջապես հետո, ուսանողները հանձնարարական էին ստանում մանրակրկիտ գնահատական տալ «դիմորդին»:

Այնուհետև ուսանողները ծանոթանում էին դիմորդի «անձնական գործին»՝ սկզբում կենսագրական («օբյեկտիվ») տվյալներին, այնուհետև՝ բնութագրին: «Օբյեկտիվ տվյալները» ներառում էին դիմորդի զբաղվածության, գնահատականների, ընտանիքի, կրթության, բարե-

գործական գործունեության և այլնի մասին տեղեկատվություն: Բնութագրերի խումբը ներառում էր «հարցազրույցն իրականացնող բժիշկ Գարդների», «ձայնագրությունը գնահատող և հոգեբուժական որակավորում ունեցող հանձնաժողովի վեցը անդամների» և «մյուս ուսանողների» կողմից գրված տեքստային նկարագրությունները:

Այդ տվյալները դիտավորյալ ընտրվել էին այնպես, որ վերջիններս հնարավորինս հակասեին ուսանողների կողմից դիմորդի գնահատման հիմնական կետերին: Օրինակ, եթե ուսանողը ասում էր դիմորդը պետք է որ աղքատ ընտանիքից լինի, նրան հայտնում էին, որ վերջինիս հայրը գնացքների և ավտոբուսների դռներ արտադրող ընկերության փոխնախագահն է: Դիմորդը տգե՞տ է երևում: Այդ դեպքում ուսանողին տեղեկացնում էին, որ նա գերազանցությամբ ավարտել է այնպիսի դասընթացներ, ինչպիսիք են՝ «Շեքսպիրի դրամատուրգիան» կամ «Միլթոնի պոեզիան»: Եթե ուսանողը ասում էր, որ դիմորդը կարծես թե չի կարողանում ընդհանուր լեզու գտնել մարդկանց հետ, նրան հակադարձում էին, թե վերջինս կամավոր կերպով անդամակցել է Նյու Յորք Սիթիի հիվանդանոցներից մեկի համար կազմակերպված արյան նվիրատվության միջոցառմանը՝ հաջողելով ստանալ շուրջ 32000 դոլլար 30 «խոշոր դոնորներից»: <>

Ուսանողները շատ էին ցանկացել իմանալ, թե ինչ են մտածել «ուրիշները» դիմորդի մասին, և արդյոք նա ի վերջո ընդունվել է բժշկական դպրոց: Նրանց հետաքրքրությանն ի պատասխան՝ վերջիններիս տեղեկացրել են, որ դիմորդը ընդունվել է բժշկական դպրոց՝ արդարացնելով «բժիշկ Գարդների», «հոգեբուժական որակավորում ունեցող փորձագետների» սպասելիքները և հաստատելով նրան տրված խոստումնալից բնութագիրը: Ինչ վերաբերում է «այլ ուսանողների կարծիքներին», ապա փորձարկման ենթարկվող ուսանողներին տեղեկացնում էին, որ, օրինակ, հարցված այլ 30 ուսանողներից 28-ը լիովին համամիտ են եղել վերոնշյալ անդամների գնահատականի հետ, իսկ մնացյալ 2-ը սկզբում թեթևակի անվստահություն են հայտնել, սակայն «օբյեկտիվ տվյալներին» ծանոթանալուն պես տվել են նույն գնահատականը:

Այնուհետև ուսանողներին խնդրում էին մեկ անգամ ևս լսել ձայնագրությունը, ապա կրկին փորձել գնահատել դիմորդին:

*Արդյունքներ.* 28 ուսանողներից 25-ը տեղի տվեցին ներկայացված մոլորեցման փորձերին և հարցվածներից միայն 3-ը շարունակեցին համառորեն պնդել, որ իրենց խաբում են: Այս դեպքերից 2-ը հանգամանալից կքննարկվեն այս բաժնի եզրափակիչ մասում:

Նկատելով, որ իրենց նախնական (չափազանց բացասական) գնահատականը խստորեն հակասում է դիմորդի օբյեկտիվ տվյալներին, ուսանողները մեծ ջանքեր գործադրեցին այդ տվյալներն իրենց սեփական գնահատականներին համահունչ դարձնելու համար: Օրինակ, եթե սկզբում ուսանողները պնդում էին, թե դիմորդը, ամենայն հավանականությամբ, աղքատ ընտանիքից է, իմանալով, որ վերջինիս հայրը գնացքների և ավտոբուսների համար օդի ճնշմամբ գործող դռներ արտադրող ընկերության փոխնախագահն է, արձագանքում էին այսպես. «Նա պետք է ասեր, որ գումարի *կարիք* չունի»: «Դա բացատրում է, թե ինչո՞ւ էր նա ասում, որ ստիպված էր աշխատել: Երևում է հայրն է ստիպել: Այնպես որ նրա բողոքները մեծամասամբ անհիմն են այն իմաստով, որ նրա գործերը այնքան էլ վատ չեն»: «Եվ ի՞նչ, ի՞նչ կապ ունի դա նրա ունեցած արժեքների հետ»:<>

Մոլորեցման փորձերին տեղի տված 25 ուսանողներից 7-ը այդպես էլ չկարողացան հաշտվել այն մտքի հետ, որ սխալվել են նման պարզ հարցում ու չեն կարողացել «տեսնել» հակառակ պատկերը: Մնացյալ ուսանողներից 5-ը իրենց համար պարզաբանել էին խնդիրը՝ հայտարարելով, որ բժշկական դպրոցը ընդունել է լավ մարդու կամ որոշելով, որ ընդունված դիմորդը ձանձրալի մարդ է (եվս 5 ուսանող): Մի քանիսն էլ, որոշակիորեն փոփոխելով նախապես հնչեցրած կարծիքները, լիովին չէին հրաժարվել դրանցից: Նրանք համարում էին, որ «ընդհանուր առմամբ» բժիշկ Գարդների տեսակետը կարելի է ընդունել, սակայն այդ հասկացմանը պակասում էր համոզվածությունը: Այն պահին, երբ իրենց ուշադրությունն ուղղում էին կոնկրետ դետալներին, հասկացումը չքանում էր: Համաձայնությունը «ընդհանուր պատկերի» հետ ուղեկցվում էր նոր բնութագրերով, որոնք ոչ միայն հակասում էին

փորձարկվողի նախորդ դատողություններին, այլև լի էին գերդրական սահմանումներով: Այսպես, եթե սկզբում դիմորդի խոսքը անշնորհք էր համարվում, ապա հիմա այն չափազանց «սահուն» էր թվում, նա արդեն ոչ թե կոպիտ էր, այլ «շատ բնական», ոչ թե հիստերիկ, այլ «շատ հանգիստ» ու, բացի այդ, ուսանողները բացահայտում էին դիմորդի նոր որակներ՝ կապված նրանից, թե ինչպես էր բժիշկը «քննում» դիմորդներին: Փորձարկման ենթարկվողները, *տեսել* էին, օրինակ, թե ինչպես բժիշկը *ժպտաց*, երբ դիմորդը մոռացավ ծխախոտ առաջարկել նրան:

Փորձարկման ենթարկվողներից 3-ը խորապես համոզված էին, որ նրանց փորձում են մոլորեցնել և հարցազրույցի ողջ ընթացքում այդպիսի վարք էին դրսևորում: Նրանց մոտ չկար շփոթության և ոչ մի նշույլ: Այդ 3 ուսանողներից 2-ը սարսափելի ապրումների մեջ էին հայտնվել, երբ պարզվել էր, որ հարցազրույցն ավարտված է, և նրանք կարող են հեռանալ, բայց այդպես էլ ոչ ոք չի փորձում ենթադրյալ խաբեությունը խոստովանել:

Լուռ տառապող ևս 3 ուսանողներ փորձարկում իրականացնողներին ծանր կացության մեջ էին դրել: Որևէ կերպ դա ցույց չտալով փորձարկողին՝ նրանք իրավիճակը դիտարկել էին որպես փորձարարական՝ համարելով, որ նրանցից պահանջվում է ողջախոհ լուծումներ տալ որոշակի խնդիրների, ուստի համարում էին, որ պետք է կարողանան լավագույնս հաղթահարել փորձությունը՝ որևէ շտկումներ չանելով, քանի որ միայն այդպես կարող էին օգնել հետազոտությանը: <>

Եվ վերջապես, ևս 3 փորձարկվողներ էապես տարբերվել էին մյուսներից: Նրանցից մեկը պնդում էր, որ ներկայացված բնութագրերը «իմաստաբանորեն միանշանակ չեն», և քանի որ տեղեկատվությունը սակավ է, նրանք չէն կարող «բավարար չափով ճշգրիտ» լինել: Մեկ այլ փորձարկվող, ընտրանքում միակը, երկրորդ պատկերը համարեց առաջինից ոչ պակաս համոզիչ: Երբ մոլորեցման փորձերը բացահայտվեցին, վերջինս բավական վշտացել էր այդպես հեշտությամբ խաբվելու համար: Երրորդ փորձարկվողին ներկայացված նյութերը երկար չէին շփոթեցրել: Փորձարկվողների խմբում միայն նա էր արդեն

անցել հարցազրույցը բժշկական դպրոցում և միայն նա այնտեղ հիանալի կապեր ուներ: Չնայած այն բանին, որ նրա առաջադիմությունը ոչ ավելին քան բավարար էր, նա ընդունվելու իր շանսերը բավական բարձր էր գնահատում՝ միևնույն ժամանակ շեշտելով, որ դիվանագիտական կարիերան առավել նախընտրելի է բժշկական կարիերայից:

Եվ վերջին դիտարկումը. փորձարկման ենթարկվող 28 ուսանողներից 22-ը ակնհայտ թեթևություն և հանգստություն էին զգացել (նրանցից 10-ը խիստ զգացմունքային), երբ խաբեությունը բացահայտվել էր: Նրանք միահամուռ կերպով նշել էին, որ խաբեության մասին իրազեկումը հնարավորություն էր ընձեռել նրանց վերադառնալ իրենց նախկին տեսակետին: Փորձարկման ենթարկվողներից 7-ի պարագայում պահանջվել էր խաբեության փաստի առկայությունը հավաստող համոզիչ փաստարկներ ներկայացնել: Երբ նրանց իրազեկել էին խաբեության փաստի մասին, վերջիններս փորձում էին հասկանալ, թե ինչին պետք է հավատան: Միգուցե փորձարկում իրականացնողը այդպես է ասում, որպեսզի նրանք այդքան վատ չզգա՞ն իրենց: Այդ ժամանակ փորձարկում իրականացնողները համոզիչ փաստարկներ ներկայացրեցին՝ նրանց վերջնականապես համոզելով, որ «մոլորեցման փորձեր» իսկապես եղել են:

Քանի որ, առանձին վերցրած, մարդու տեսանկյունից առօրյա կյանքի դիրքորոշումները կազմող սպասումներին և ակնկալիքներին համապատասխանելու նրա պատրաստակամությունը հիմնված է «կյանքի բնական օրենքների» հասկացման և ընդունման վրա, ուստի կազմակերպված հանգամանքներում կոլեկտիվի տարբեր անդամների նման պատրաստակամության դրսևորումների տարբերակները ևս պետք է պայմանավորված լինեն «կյանքի բնական օրենքների» հասկացման և ընդունման տարբերություններով: Հետևաբար, վերոնշյալ ազդեցությունների արտահայտվածությունը պետք է ուղղակիորեն կախված լինի փորձարկվողի՝ սեփական «կյանքի բնական օրենքների» հասկացմանը հակվածությունից: Բացի այդ, բարոյական կարգի մասնակիցների կողմից ընկալվող և ընդհանուր՝ կոլեկտիվ կյանքի փաստերի *օբյեկտիվ* բնույթի հետևանքով այդ ազդեցությունների արտահայտվածությունը պետք է կախված լինի և՛ այդ կյանքի բնական փաս-

տերի ձևավորված հասկացումից, և՛ անկախ լինի «անհատական հատկանիշներից»: Անհատական հատկանիշներ ասելիս նկատի ունեմ անհատի բոլոր հատկությունները, որոնք օգտագործվում են փորձառարական մեթոդներում՝ մարդու գործողությունները բացատրելու համար. այդ գործողությունները նրա շարժառիթների և «ներքին կյանքի»՝ քիչ թե շատ համակարգված կերպով դիտարկելի փոփոխականների հետ համադրելու միջոցով՝ առանց հաշվի առնելու սոցիալական և սոցիալ-մշակութային ազդեցությունները: Այս պայմանին բավարարում են անհատի գնահատման ամենատարածված մեթոդների և կլինիկական հոգեբուժության ընթացակարգերի կիրառման արդյունքների մեծ մասը:

Այսպիսով, պետք է հայտնաբերվի հետևյալ երևույթը: Պատկերացնենք, թե գոյություն ունի որոշակի ընթացակարգ, որը հնարավորություն է ընձեռում համոզիչ կերպով գնահատել անձի հակվածության աստիճանը դեպի «սոցիալական կյանքի բնական փաստերի» սեփական հասկացումը: Ենթադրենք նաև, որ գոյություն ունի մեկ այլ ընթացակարգ, որը թույլ է տալիս գնահատել անձի շփոթության աստիճանը վերը նկարագրված վարքի ինտենսիվության և զուգակցությունների լայն սպեկտրում: Այդ դեպքում կամայականորեն ընտրված անձանց համար և անկախ վերջիններիս ընտրման եղանակից «բնական փաստերի հասկացման» հանդեպ ունեցած նվիրվածության և շփոթության միջև նախնական հարաբերակցությունը պետք է պատահական լինի: Երբ կյանքից ունեցած ակնկալիքներն ու սպասումները խախտվում են (այն պայմանով, որ այդ խախտումները ստեղծվում են օպտիմալ կերպով), մարդիկ կտարբերվեն՝ ըստ արտահայտվող շփոթմունքի այն մեծության, որը համահարաբերակցվում է (կորելյացվում է) «կյանքի բնական փաստերի» սեփական հասկացման հանդեպ ունեցած նախնական հակվածության հետ:

Երևույթը, որը, ինչպես ենթադրում եմ, պետք է հայտնաբերվի, ցուցադրված է պատկեր 1-ում և պատկեր 2-ում, որտեղ արտացոլված են բժշկական դպրոցի 28 ուսանողների հետազոտության նկարագրված տվյալները: Նախքան ուսանողների պատկերացումներին հակասող նյութի ներկայացումը՝ բժշկական դպրոցի կյանքի փաստերի ընդհա-

նուր բարոյական կարգի հանդեպ ուսանողների նվիրվածության և վերջիններիս տագնապայնության համահարաբերակցությունը կազմում էր 0,026: Հակասական նյութի ներկայացումից և այդ նյութի «կարգավորման» անհաջող փորձերից հետո, նախքան կեղծիքի բացահայտումը, համահարաբերակցությունը կազմեց 0,751: Հաշվի առնելով գնահատման ընթացակարգերի կոպտությունը՝ փորձարկումների մշակման և իրականացման ժամանակ թույլ տված սխալները և post hoc փաստարկումները, այս տվյալները բացառապես ցուցադրումներ են, որոնք ոչ մի պարագայում չեն կարող համարվել բացահայտումներ:




**Պատկեր 1. Համահարաբերակցությունը «բնական փաստերի» հանդեպ մարդու հակվածության (ինստիտուցիոնալացված՝ ըստ բժշկական դպրոց ըն-**

դունվելու հանգամանքների իմացության կարգի) և տագնապի ելակետային մակարդակի միջև (r=0,026)




Պատկեր 2. Համահարաբերակցությունը «բնական փաստերի» հանդեպ մարդու հակվածության (ինստիտուցիոնալացված՝ ըստ բժշկական դպրոց ընդունվելու հանգամանքների իմացության կարգի) և տագնապի հարաբերական մակարդակի միջև (r=0.751)

## Ընդհանուր ըմբռնումները և այն փաստը, որ հասարակության մեջ մարդու մոդելները պատկերում են նրան՝ իբրև «ողջամիտ հիմար»

Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ ընդհանուր հասկացումների սոցիալական ստանդարտացումը, անկախ այն բանից, թե ինչ է ստանդարտացվում, կողմնորոշում է մարդու գործողու-

թյունները դեպի դիտարկվող իրադարձություններ և ապահովում է հիմքեր իրերի ենթադրյալ նորմալ ընթացքից շեղումների ճանաչման, ընկալման և վերականգնման, ապա նաև՝ ակտիվ գործողությունների համար:

Հասարակական գիտությունների ոլորտի տեսաբանները, մասնավորապես՝ սոցիալական հոգեբանության և հոգեբուժության մասնագետները, մարդաբանները և սոցիոլոգները, ստանդարտացման երևույթը կիրառում են ստանդարտացված ակնկալիքներին և սպասումներին համահունչ գործողությունների բնույթի և հետևանքների վերաբերյալ իրենց ենթադրություններում: Ընդհանուր առմամբ, նրանք ընդունում են այն փաստը (որոշ դեպքերում՝ անտեսում), որ մարդիկ իրենց համար հայտնաբերում են ստանդարտացումը, իրականացնում և պահպանում այն միևնույն գործողությունների միջոցով: Նման անտեսման առավել կարևոր հետևանք է դառնում կայուն գործողությունների բնույթի և հանգամանքների վերաբերյալ մոլորությունը: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ հասարակության անդամին համարում են ողջամիտ հիմար՝ մշակութային և/կամ հոգեբանական առումով, և հետևաբար մարդկանց գործողությունների և ստանդարտացված ակնկալիքների միջև առկա կապերի ցանկացած ավարտված հետազոտության շրջանակից դուրս է մնում մեծ քանակով *չհրապարակված նյութ* և հրապարակված տվյալների լուրջ վերանայում պահանջող հակասական նյութ:

Ես «մշակութային հիմար» ասելիս նկատի ունեմ սոցիոլոգների-կողմից-կառուցված-հասարակության-միջի-մարդուն, որը վերարտադրում է համայնքի կայուն հատկանիշները՝ գործելով վարքի նախասահմանված և լեգիտիմ այլընտրանքներին համատասխան, որոնք, իրենց հերթին, պայմանավորված են հոգեբուժական կենսագրությամբ, դաստիարակության պատմությամբ և հոգեկանի գործառման փոփոխականներով: «Մարդու մոդելների» կիրառության մեջ ընդհանուր է այն փաստը, որ դատողությունների ողջամիտ հիմքերը[123] (այսինքն՝ ա-

[123] Ողջամիտ հիմքերը առավել հանգամանալից քննարկվում են Shutz, A. (1962) Common sense and Scientific Interpretation of Human Action// Collected Papers, vol. I: The

ռողջ դատողության մակարդակում սոցիալական կառուցվածքների մասին գիտելիքի օգտագործումը «այստեղ և հիմա» իրավիճակների ժամանակային հաջորդականության փոխարեն) համարվում են ածանցյալ երևույթներ:

Ստանդարտացված ակնկալիքների և գործողությունների ընթացքի միջև կապը նկարագրելու համար կիրառվող «ողջամիտ հիմար» հասկացության ապակողմնորոշող բնույթը կապված է համաչափ բացատրության խնդրի հետ, այն է՝ փաստարկ, որով առաջնորդվում է հետազոտողը՝ հասկանալու համար՝ պետք է արդյոք գործողության տարատեսակ գործընթացների միջև անհրաժեշտ կապերը որոշելիս հաշվի առնել առողջ բանականության նկատառումները, թե կարելի է մի կողմ թողնել դրանք՝ հաշվի առնելով այնպիսի խնդրահարույց նկատառումները, ինչպիսիք են հնարավոր հեռանկարների միջև ընտրությունը, սուբյեկտիվությունը և ներքին ժամանակը: <>

Ի՞նչ է անում հետազոտողը, որպեսզի հասարակության անդամին վերածի ողջամիտ հիմարի: Բերեմ մի քանի կոնկրետ օրինակներ և ներկայացնեմ դրանց հետևանքները:

Ես ուսանողներին հանձնարարել էի փոխազդել վաճառողների հետ և փորձել սակարկել սովորական ապրանքների գները, որոնք հստակ սահմանված էին: Այս դեպքում ստանդարտացված սպասումը մարմնավորված է «միասնական գնի ինստիտուցիոնալացված կանոնում», որը, ըստ Պարսոնսի[124], համաձայնագրի ինստիտուտի բաղադրիչն է: Այդ սպասումը, լինելով ներանձնայնացված, պետք է ստիպեր ուսանող-գնորդներին վախ և ամոթ զգալ նախքան առաջադրանքի կատարումը և միայն ամոթ՝ առաջադրանքի կատարումից հետո: Համապատասխանաբար, վաճառողները պետք է արտահայտեին անհանգստության և զայրույթի զգացումներ:

Առաջադրանքի կատարմանը մասնակցել էին ուսանողների երկու խմբեր: Առաջին խմբի անդամները (68 ուսանող) պետք է իրականաց-

---

Problem of Social Reality, pp. 3-47; Shutz, A. (1964) The Problem of Rationale in the Social World»// Collected Papers, vol. II: Studies in Social Theory, pp. 64-88:

[124] Parsons, T. (1959) Economy, Polity, Money and Power, dittoed manuscript.

նեին միայն մեկ այսպիսի փորձարկում՝ 2 դոլարը չգերազանցող ապրանքի գնի դիմաց առաջարկելով վճարել պահանջվածից ավելի քիչ գումար: Մյուս խմբի անդամները (67 ուսանող) պետք է մի շարք (6) փորձարկումներ իրականացնեին. 3-ը՝ 2 դոլարը չգերազանցող և ևս 3-ը՝ 50 և ավելի դոլար արժողությամբ ապրանքների գների նկատմամբ:

*Արդյունքներ*

1. Վաճառողներին կարելի է առհասարակ չդիտարկել. նրանք կա՛մ դրսևորել էին իրենց ինչպես հիմարներ (ոչ այն տեսակի, ինչպիսին նկարագրված է ստանդարտացված սպասումների ժամանակակից տեսություններում), կա՛մ այնքան էլ հիմար չէին եղել: Շատ քչերն էին որոշակի անհանգստություն դրսևորել, և նրանցից միայն մեկն էր զայրացել:
2. Առաջին խմբի ուսանողների 21%-ը հրաժարվել էր իրականացնել հանձնարարված միակ փորձարկումը կամ կեսից դադարեցրել էր այն, մինչդեռ երկրորդ խմբի ուսանողների միայն 3%-ն էր նման կերպ վարվել:
3. Դրվագների (փորձարկման մեկնարկին սպասում, դիմում վաճառողին, սահմանված գնից ցածր գնի առաջարկում, հետագա փոխազդեցություններ, դրվագի ավարտ, ավարտին հաջորդող իրադարձություններ) փուլային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ երկու խմբերում էլ առավել բարձր հաճախականությամբ վախի զգացումն ի հայտ էր եկել փորձարկման մեկնարկին սպասելու և վաճառողին դիմելու առաջին փորձերի ժամանակ: Երկրորդ խմբի ուսանողների մեծ մասը հայտնել էր, որ երրորդ փորձարկումից ի վեր սկսել է վայելել հանձնարարության կատարման ընթացքը:
4. Ուսանողների մեծ մասը նշել էր, որ առավել հեշտ է եղել թանկ ապրանքների գների սակարկումը, ինչը չի կարելի ասել էժան ապրանքների գների սակարկման մասին:

5. 6 դրվագներ հաղթահարած ուսանողներից շատերը զարմանքով նկատել էին, որ անգամ ստանդարտ գների պայմաններում կարելի է սակարկել՝ հաջողության հասնելու իրատեսական շանսեր ունենալով. նրանք նշել էին, որ պատրաստվում են այդպես վարվել նաև ապագայում, մասնավորապես թանկարժեք ապրանքներ գնելիս:

Վերոնշյալ արդյունքները ցույց են տալիս, որ հասարակության անդամին կարելի է «մշակութային հիմարի» տեղ դնել, եթե.

1. նրան ներկայացնենք որպես կանոններին հետևող անձի, այնինչ իրականում նա խոսում է փորձարկման մեկնարկի հետ կապված տագնապի մասին (որը ոչ միայն խանգարում է նրան թույլ տալ իրադարձություններին ինքնուրույն զարգանալ, այլև, առավել շատ, իրավիճակը վերահսկել և հաղթահարել ի հայտ եկող դժվարությունները), որը նրան ընտրություն է թողնում՝ գործել կանոնի համաձայն, թե ոչ;
2. անտեսենք վախը հաղթահարելու տեսական և պրակտիկ կարողությունը:
3. Եթե անհանգստության ի հայտ գալու դեպքում մարդը փորձում է խուսափել «ստանդարտացված» որոշակի սպասումներին բախվելուց, ապա նման ստանդարտացումը, ըստ ամենայնի, վերագրվող է, ինչը և հաստատվում է այն հանգամանքով, որ մարդիկ խուսափում են հենց այն իրավիճակներից, որոնցում նրանք կարող են տեսնել նմանօրինակ սպասումների էությունը:

Թե՛ առօրեական և թե՛ մասնագիտական գիտելիքը կանոններով կարգավորվող գործողությունների էության մասին, ինչպես նաև այդ կանոնների խախտման հետևանքների մասին, ըստ էության, հիմնված է հենց նման ընթացակարգի վրա: Իսկապես, որքան ավելի կարևոր է կանոնը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ գիտելիքը հիմնված չէ սեփական ստուգումների վրա: Ամեն մարդու, ով փորձում է հետազոտել առօրեական գործողությունների սովորական ֆոնը ձևավորող սպասումները, սպասում են զարմանալի բացահայտում-

ներ, քանզի այդ սպասումները հետազոտողների կողմից հազվադեպ են քննության առնվում, հատկապես դրանք խախտելու եղանակով:<>

Ուսանողները հանձնարարական էին ստացել խաղալ «X-եր և 0-ներ» խաղը տարբեր (ըստ տարիքի, սեռի և մտերմության աստիճանի) մարդկանց հետ: Աղյուսակը նկարելուն պես ուսանողը պետք է առաջարկեր խաղընկերոջը (փորձարկման ենթարկվողին) կատարել առաջին քայլը: Այն բանից հետո, երբ փորձարկման ենթարկվողը կկատարեր իր քայլը, ուսանողը պետք է ջնջեր դրված նշանը, տեղափոխեր այն մեկ այլ վանդակ և դներ սեփական նշանը՝ ձևացնելով, թե իբր արտասովոր ոչինչ տեղի չի ունենում: Ուսանողների կարծիքով 247 դեպքերի կեսում խաղընկերները համարել էին, որ կատարվելիքը ունեցել է թաքնված, սակայն բավական որոշակի իմաստ: Փորձարկման ենթարկվողները վստահ էին, որ փորձարկում իրականացնողները «X-եր և 0-ներ խաղի հետ որևէ առնչություն չունեցող ինչ-որ բանի են ձգտել», օրինակ՝ կոկետություն են արել (հակառակ սեռի ներկայացուցիչների հետ), ակնարկել են խաղընկերոջ տգետ կամ հիմար լինելը, անգամ փորձել են վերջինիս ինչ-որ կերպ վիրավորել:<>

Մարդկանց մշակութային հիմարի տեղ դնելու մեկ այլ միջոց է նրա վարքային միջավայրի հաղորդակցական հյուսվածքի պարզեցումը: Այսպես, շրջակա միջավայրի ֆիզիկական դիտանկյուններին առանձնահատուկ նշանակություն տալով՝ տեսականորեն հնարավոր է էքզիստենցիալ շրջանակներից դուրս բերել այն փաստը, որ միջավայրը (որում գտնվում է մարդը), լինելով պոտենցյալ և իրական իրադարձությունների միահյուսում, ընդգրկում է ոչ միայն տեսանելի օբյեկտներ և դրանց վերագրվող հատկություններ, այլև իր սեփական վառ ներքին վիճակները: Մենք նշված վերջին կանխադրույթը ստուգել ենք ներքոբերյալ փորձարկումներում:

Ուսանողները առաջադրանք էին ստացել ընտրել իրենց ընտանիքի անդամ չհանդիսացող որևէ մեկին և սովորական առօրյա զրույցի ընթացքում, առանց կատարվելիքի արտասովոր բնույթի մասին որևէ ակնարկ կատարելու, դեմքը մոտեցնել զրուցակցի դեմքին այնպես, որ նրանց քթերը գրեթե հպվեն իրար: Արձանագրվել էր 79 զեկույց: Դրանց

մեծ մասում, անկախ զրուցակիցների միջև եղած սեռային (միևնույն սեռի, տարբեր սեռերի), տարիքային (բացառությամբ երեխաների), մտերմության աստիճանի (պարզապես ծանոթներ, մտերիմ ընկերներ. *անծանոթ անձանց հետ փորձարկում իրականացնելը նախապես արգելվել էր*) տարբերությունների, նման վարքագիծը *երկուստեք* (թե՛ փորձարկում իրականացնողի և թե՛ փորձարկման ենթարկվողի մոտ) առաջացնում էր զրուցակցի կողմից սեռական մտադրության ակնարկի տպավորություն, թեև այդպիսի մտադրության ցանկացած հաստատում նախապես բացառվել էր ինքնին ընթացակարգի բնույթով: Խոսակցին նմանատիպ մտադրությունների վերագրումը ուղեկցվում էին այդ մարդու սեփական ազդակներով, որոնք, իրենց հերթին, դառնում էին կատարվող իրադարձության մաս. նա ոչ միայն ցանկալի էր զգացել իրեն, այլ նաև ինքն էր ցանկություն զգացել զրուցակցի նկատմամբ: <> Ստեղծված անորոշ վիճակին բնորոշ են եղել խուսափման փորձերը, շփոթմունքը, խիստ արտահայտված անհանգստությունը, առավել հաճախ՝ իրավիճակի անորոշության զգացումը, որն ուղեկցվում էր անորոշ վախերով, հույսերով և զայրույթով: Այսպիսի արդյունքներ գրանցվել են հատկապես տղամարդկանց միջև:

Որպես կանոն, փորձարկում իրականացնողներին չի հաջողվել կարգավորել իրավիճակը: Փորձարկվողները միայն մասնակիորեն էին ընդունել նրանց բացատրությունները՝ համաձայն որոնց կատարվածը ոչ այլ ինչ էր, քան սոցիոլոգիայի դասընթացի շրջանակներում իրականացված փորձարկում: Հաճախ նրանք մեղադրում էին ուսանողներին՝ ասելով. «Շատ լավ, դա փորձարկում էր, բայց ինչո՞ւ հենց ես»: Սովորաբար և՛ փորձարկվողը, և՛ փորձարկողը ցանկանում էին շարունակել իրավիճակի պարզաբանումը այս բացատրությունից դուրս, բայց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չգիտեին, թե ինչպիսին այն կարող էր լինել և պետք է լիներ:

Եվ վերջապես, հասարակության անդամին հնարավոր է ողջամիտ հիմարի տեղ դնել՝ ենթադրելով, որ սովորական, առօրեական գործողությունները վերահսկվում են նախապես ձեռք բերված համաձայնության միջոցով՝ միաժամանակ նաև հավանական համարելով այն, որ

անձը ճանաչում է իրերի և երևույթների սովորական ընթացքից շեղումը հենց այդպիսի համաձայնությունների շնորհիվ: Այն, որ սա զուտ ակադեմիական ենթադրություն է, որը, սակայն, հնարավորություն է տալիս էքզիստենցիալ շրջանակներից դուրս հանել ծայրաստիճան կարևոր երևույթ, հաստատվում է այն հանրաճանաչ փաստի դիտարկմամբ, որ մարդիկ մշտապես ստիպում են միմյանց պահպանել համաձայնությունները, որոնց պայմանները նրանք երբևէ չեն քննարկել: <>

Սխալ և ապակառուցողական կլիներ այսպիսի համաձայնությունները դիտարկել՝ իբրև որոշակի ապահովագրություն, որը մարդկանց կարող էր հնարավորություն տալ փոխազդեցության ցանկացած պահին հավաստի կանխատեսումներ անել գործընկերոջ ապագա գործողությունների վերաբերյալ: Ավելի հստակ, համաձայնության սկզբունքով ձևավորված ընդհանուր հասկացումը օգտագործվում է մարդկանց կողմից իրենց իրական գործողությունների հետևանքները կարգաբերելու համար: Չկանխատեսված հանգամանքները ոչ միայն տեղի են ունենում, այլև մարդիկ միշտ և ամենուր գիտեն, որ չկանխատեսված հանգամանքները կարող են հայտնվել կամ հորինվել ցանկացած պահի, երբ կարիք է առաջանում ուրոշելու, թե արդյոք կողմերի իրական գործողությունները համապատասխանում էին ընդունված համաձայնագրին:<>

Այս գործընթացը, որը ես կանվանեի պրակտիկ հանգամանքների կանոնի նկատմամբ հարգանքի հայտնաբերման կամ պարտադրման միջոցով համաձայնությունների վերհանման մեթոդ, գործնական էթիկայի տարբերակներից մեկն է: Ու թեև այն դեռևս չի գրավել հասարակական գիտությունների հետազոտողների արժանի ուշադրությունը, այն չի դադարում լինել անփոփոխ և ընդհանուր մտահոգության առարկա, ինչպես առօրեական գործերում, այնպես էլ առողջ բանականության մակարդակի պատկերացումներում:<> Դա մի մեխանիզմ է, որի միջոցով մարդը մի կողմից վերահսկում է իր պոտենցյալ և իրական ձեռքբերումները, ինչպես նաև անկանխատեսելի հաջողությունները, իսկ մյուս կողմից՝ հաղթահարում է հիասթափությունները, ֆրուստրացիաները ու ձախողումները (որոնք անխուսափելիորեն

առաջանում են նման համաձայնությունները պահպանելու փորձերում)՝ միևնույն ժամանակ պահպանելով սոցիալապես կազմակերպված իրական փոխազդեցությունների ողջամիտ լինելու զգացողությունը:

Այս երևույթի գոյության մասնավոր, սակայն խիստ տեղին օրինակներ բազմիցս արձանագրվել են հետևյալ փորձարկման իրականացման արդյունքում: Փորձարկում իրականացնողը, ում վերնազգեստի տակ նախապես (փորձարկման ենթարկվողներից գաղտնի) թաքցված էր ձայնագրման սարք, մարդկանց ներգրավում էր զրույցի մեջ: Զրույցի ընթացքում նա անսպասելիորեն բացում էր բաճկոնը և, զրուցակիցներին ցույց տալով հաղորդիչը, ասում. «Տեսե՛ք՝ ինչ ունեմ»: Նախնական դադարին գրեթե միշտ հաջորդում էր հետևյալ հարցը. «Ի՞նչ ես պատրաստվում դրանով անել»: Փորձարկվողների կարծիքով խախտվել էր իրենց սպասումն առ այն, որ այս խոսակցությունը «մեր մեջ է»: Երբ պարզվեց, որ զրույցը ձայնագրվում է, իրավիճակը փոխվեց, այդ հանգամանքն առաջ բերեց նոր հնարավորություններ, որոնք երկու մասնակիցներն էլ փորձեցին դիտարկել նոր համաձայնության իրավազորության ներքո, այն համաձայնության, որը նրանք մինչ այդ չէին էլ հիշատակել, և որը փաստացիորեն գոյություն չուներ: Ձայնագրման փաստի բացահայտվելուն պես զրույցը բոլորովին այլ և խնդրահարույց բնույթ ձեռք բերեց՝ հաշվի առնելով, որ հետագայում այն կարող էր օգտագործվել բացարձակապես անհայտ եղանակով: Ինչպես պարզվեց, մինչ այդ համարվում էր, որ անանունության սկզբունքը պահպանվում է մեքենայաբար:

**Ամփոփիչ դատողություններ**

Ես հնարավորինս փորձեցի ցույց տալ, որ ողջամիտ, իրատեսական և վերլուծելի գործողությունների բնույթի, էության, ծագման և ճանաչման նկատմամբ հետաքրքրությունը փիլիսոփաների և արհեստավարժ սոցիոլոգների մենաշնորհը չէ: Հասարակության բոլոր անդամները ևս բնականոն կերպով և անհրաժեշտության դեպքում հետաքրքրվում են դրանցով՝ թե՛ ինքնին, թե՛ կապված իրենց առօրյա

գործերի սոցիալական վերահսկողության հետ: Ողջախոհ պատկերացումներն ու գործողությունները հետազոտելու համար հարկավոր է խնդիր տեսնել այն միջոցներում ու եղանակներում, որոնց օգնությամբ հասարակության բոլոր անդամները, անկախ սոցիոլոգիայով զբաղվելու մակարդակից (կենցաղային կամ մասնագիտական), տեսանելի են դարձնում առօրեական գործողությունների սոցիալական կառուցվածքները: Առողջ բանականության «վերաբացահայտումը», այնուամենայնիվ, հնարավոր է թվում, քանզի արհեստավարժ սոցիոլոգները, ինչպես նաև հասարակության մյուս անդամները, պարզապես սովոր են չափից շատ ուշադրություն հատկացնել սոցիալական կառուցվածքների մասին առկա ողջամիտ պատկերացումներին՝ հետազոտության թեմաների և ռեսուրսների տեսքով, և թերագնահատում են դրանց դերը՝ որպես ծրագրային, եզակի և բացառիկ սոցիոլոգիական թեմատիկայի:

## ԻՆՐՎԻՆԳ ԳՈՖՄԱՆ

# ՖՐԵՅՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԷՍՍԵ ԱՌՕՐԵԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ[125]

**Ներածություն**

Ես ելնում եմ նրանից, որ, այս կամ այն իրավիճակում հայտնվելով, մարդկանց մեջ միշտ հարց է առաջանում՝ «Ի՞նչ է այստեղ կատարվում»: Կարևոր չէ, թե արդյոք այս հարցը հստակորեն դրվում է (շփոթության կամ կասկածի դեպքում) կամ առաջանում է լռելյայն (սովորական իրավիճակներում), պատասխանը կախված է այս իրավիճակում դրսևորվող վարքի եղանակից: Իմ նպատակն է առանձնացնել ֆրեյմերի որոշ հիմնարար համակարգեր (frameworks), որոնք օգտագործվում են մեր հասարակության մեջ՝ հասկանալու համար կատարվող իրադարձությունները, ինչպես նաև վերլուծել ֆրեյմերի օգտագործման դժվարությունները: Ես ելնում եմ նրանից, որ մարդուն կարող է իրական թվալ այն, ինչն իրականում խաղարկություն է, քուն, պատահականություն, սխալ, թյուրիմացություն, խաբեություն, թատերական ներկայացում և այլն: Առանձնակի ուշադրություն կդարձվի մեր ընկալման այն առանձնահատկությունների քննարկմանը, որոնք պայմանավորում են իրավիճակի տարբեր ընթերցումների անհրաժեշտությունը:

**Ֆրեյմերի առաջնային համակարգեր**

Երբ մեր արևմտյան հասարակության մեջ մարդը ճանաչում է որևէ կոնկրետ իրադարձություն, բոլոր դեպքերում նա իր ընկալման

[125] E. Goffman (1986) Frame Analysis: An Essay on the Organization of Experience. Boston: Northeastern University Press, introduction, ch. 1: ‘Primary Frameworks’, ch. 2: Keys and Keyings, ch. 3: Designs and Fabrications, pp. 1-123. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

մեջ է դնում ֆրեյմերի մեկ կամ մի քանի համակարգեր կամ մեկնաբանության սխեմաներ, որոնք կարելի է անվանել առաջնային: Իրականում ֆրեյմերը ներկա են ցանկացած ընկալման մեջ: Ես խոսում եմ հենց առաջնային ֆրեյմերի մասին, քանի որ մարդու կողմից սխեմայի կամ հեռանկարի կիրառումը կախված չէ որևէ այլ հիմնարար կամ «իրական» մեկնաբանություններից և չի գնում դեպի դրանք. անկասկած, ֆրեյմերի առաջնային համակարգը հենց այն է, ինչը հայտնաբերում է ինչ-որ իմաստալից բան դրվագների այն առանձնահատկություններում, որոնք այլ դեպքում ոչ մի իմաստ չէին ունենա:

Ֆրեյմերի առաջնային համակարգերը տարբերվում են ըստ կազմակերպման աստիճանի: Դրանցից որոշները հաստատությունների, պոստուլատների և կանոնների լավ մշակված համակարգ են, մյուսները՝ դրանց մեծամասնությունը, առաջին հայացքից հստակ արտահայտված ձև չունեն և տալիս են միայն ընդհանուր հասկացում, որոշակի մոտեցում, հեռանկար: Սակայն, անկախ իր կառուցվածքային ձևակերպվածության աստիճանից, ֆրեյմերի առաջնային համակարգը թույլ է տալիս տեղայնացնել, ընկալել, որոշել եզակի իրադարձությունների գրեթե անսահման քանակությունը և անուններ տալ դրանց: Թվում է, թե մարդը չի գիտակցում ֆրեյմերի ներքին կառուցվածքը և, եթե հարցնեք նրան, դժվար թե կարողանա նկարագրել այն քիչ թե շատ ամբողջական կերպով, ինչը չի խանգարում նրան օգտվել ֆրեյմերից առանց որևէ սահմանափակումների:

Մեր հասարակության առօրյա կյանքում, եթե անգամ բավականաչափ հետևողականորեն չի մատնանշվում, ապա գոնե հստակ զգացվում է տարբերությունը ֆրեյմերի առաջնային համակարգերի երկու ընդարձակ դասերի միջև. անվանենք դրանք բնական և սոցիալական: Ֆրեյմերի բնական համակարգերը իրադարձությունները սահմանում են որպես ոչ ուղղորդված, աննպատակ, անշունչ, անկառավարելի, ասել է թե՝ «զուտ ֆիզիկական»: Ընդունված է համարել, որ անկառավարելի իրադարձություններն ամբողջությամբ՝ սկզբից մինչև վերջ, տեղի են ունենում «բնական» գործոնների շնորհիվ, որ ոչ մի կամարտահայտություն՝ պատճառական կամ նպատակային, չի միջա-

մտում դրանց բնականոն ընթացքին, և չկա մեկը, ով անընդհատ դրանք ուղղի նպատակին: Հնարավոր չէ պատկերացնել այդ իրադարձությունները հաջողության կամ անհաջողության առումներով. այստեղ տեղ չունեն ո՛չ բացասական, ո՛չ էլ դրական սանկցիաները: Այստեղ տիրում են դետերմինիզմը և նախասահմանվածությունը: Ֆրեյմերի բնական համակարգերի էլեգանտ տարբերակները կարելի է գտնել, բնականաբար, ֆիզիկական և կենսաբանական գիտություններում: Որպես ամենապարզ օրինակ՝ կարելի է վերցնել եղանակի տեսությունը:

Սոցիալական շրջանակները, ընդհակառակը, ապահովում են իրադարձությունների ֆոնային ըմբռնումը, որում ներգրավված են կամքը, նպատակասլացությունը և խելամտությունը՝ կենդանի գործունեություն, որի մարմնավորումը մարդն է: Նման գործուն ուժի մեջ չկա բնական օրենքի անողոքություն. դրա հետ կարելի է պայմանավորվել, այն կարելի է սիրաշահել, վախեցնել, դրան կարելի է դիմակայել: Այն, ինչ դա անում է, կարելի է անվանել «նպատակային բաժանում»: Ինքը անելը ենթարկեցնում է անողին որոշակի «ստանդարտներին», գործողության սոցիալական գնահատմանը, որը հիմնված է ազնվության, արդյունավետության, խնայողության, զգուշության, նրբագեղության, նրբանկատության, ճաշակի և այլնի վրա: Գործունեության հետևանքների շարունակական կառավարումը, այսինքն՝ շարունակական ուղղիչ վերահսկողությունը, հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ գործողությունը անսպասելիորեն արգելափակվում է կամ բախվում խեղաթյուրման ազդեցություններին, և երբ անհրաժեշտ են զգալի ջանքեր դրանք փոխհատուցելու համար:

Հաշվի են առնվում դրդապատճառներն ու մտադրությունները, ինչը օգնում է որոշել, թե բազմաթիվ սոցիալական ֆրեյմերից հատկապես որն է կիրառելի իրադարձությունները հասկանալու համար: Այսպիսի «նպատակասլաց անելու» օրինակ կարող է ծառայել կրկին եղանակի տեսությունը: Այստեղ մենք գործ ունենք գործողությունների հետ, այլ ոչ պարզապես իրադարձությունների: Մենք օգտագործում ենք նույն «պատճառականություն» տերմինը բնության կույր ուժերի և

մարդու կանխամտածված գործողությունների հետևանքների նկատմամբ՝ առաջինները դիտարկելով որպես պատճառների և հետևանքների անվերջ շղթա, իսկ երկրորդները՝ որպես այն, ինչը այս կամ այն ձևով սկսվում է մտային որոշումից:<>

Նպատակային գործողությունները կարելի է հասկանալ երկակի. նախ, դա այս կամ այն չափով վերաբերում է բոլոր գործողություններին, խոսքը կոնկրետ հնարավորություններին և սահմանափակումներին համապատասխան բնական աշխարհի առարկաների ակնհայտ մանիպուլյացիաների մասին է, երկրորդ, գործողության սուբյեկտը կարող է ընդգրկվել հատուկ, յուրատիպ և բազմազան աշխարհների մեջ: Դրա համար շախմատային խաղը պարունակում է երկու սկզբունքորեն տարբերվող հիմքեր. մեկը լիովին պատկանում է ֆիզիկական աշխարհին, որում տեղի է ունենում նյութական առարկաների տարածական տեղաշարժը, մյուսը ուղղակիորեն վերաբերում է հակառակորդների սոցիալական աշխարհին, որում քայլը կարելի է կատարել և՛ ձայնով, և՛ ժեստով, և՛ առարկայի տեղաշարժով:<>

Մենք ընկալում ենք իրադարձությունները առաջնային ֆրեյմերի համակարգում, և օգտագործվող ֆրեյմի տիպը կանխորոշում է իրադարձության նկարագրման ձևը: Արևածագը բնական իրադարձություն է, բայց երբ մենք քաշում ենք վարագույրը, որպեսզի չտեսնենք այն, իրականացվում է նպատակաուղղված գործողություն: Եթե քննիչը հետաքրքրվում է *մահվան պատճառով*, նա սպասում է ֆիզիոլոգիական մանրամասներով ձևակերպված պատասխանի, բայց երբ նա հարցնում է, թե *ինչպես է դա տեղի ունեցել*, նա ակնկալում է ստանալ ողբերգական սոցիալական նկարագրություն, որը, հավանաբար, ներառում է տեղի ունեցածի որոշակի կանխամտածվածության նկարագրություն: Այսպիսով, ֆրեյմերի հիմնարար համակարգի կատեգորիան առաջնային նշանակություն ունի, և ես կցանկանայի կենտրոնանալ դրա վրա ավելի հանգամանորեն: Բավականին մտահոգիչ է այն հանգամանքը, որ իր գործունեության ցանկացած պահին անհատն օգտագործում է միանգամից ֆրեյմերի մի քանի համակարգ: («Մենք սպասեցինք, մինչև անձրևն ավարտվի, իսկ հետո կրկին շա-

րունակեցինք խաղը»): Իհարկե, երբեմն պարզվում է, որ ֆրեյմերի ինչ-որ կոնկրետ համակարգ վերին աստիճանի համապատասխանություն է ցուցաբերում իրավիճակը նկարագրելու համար և ապահովում է նախնական պատասխանն այն հարցին, թե՝ «ի՞նչ է այստեղ կատարվում»: Պատասխանը հետևյալն է՝ ֆրեյմերի որոշակի բազային համակարգում նկարագրված իրադարձություն կամ գործողություն: Եվ միայն դրանից հետո կարելի է զբաղվել մանրամասն վերլուծությամբ, թե ի՞նչ է նշանակում «մենք», «դա», «այստեղ», և ինչպե՞ս է ստացվում ենթադրվող համաձայնությունը:

Այս խնդրի ուսումնասիրության մեջ առաջ շարժվելու համար պետք է ընդունել որոշակի մտածական ենթադրություն, աշխատանքային վարկած, որ առօրյա կյանքի ակտերը բաց են հասկանալու համար՝ շնորհիվ դրանք իմաստով լցնող ֆրեյմերի հիմնարար համակարգի (կամ մի քանի համակարգերի), և որ ներթափանցումն այս համակարգ պարզունակ և, հուսամ, անհնարին խնդիր չէ:

Մինչև այս ես սահմանափակվում էի ֆրեյմերի այն առաջնային համակարգերի նկարագրությամբ, որոնք օգտագործվում են անհատի կողմից (առողջ մտքում և ամուր հիշողության մեջ) տեղի ունեցողի իմաստը որոշելիս: Իհարկե, անհատը կարող է «կեղծ» դիրք զբաղեցնել իր մեկնաբանություններում, այսինքն՝ մոլորվել, չիմանալ գործերի իրական դրությունը, ինչ-որ բան չկանխամտել: «Կեղծ» մեկնաբանություններն անընդհատ լինելու են մեր ուշադրության կենտրոնում: Այստեղ ես կցանկանայի նշել ընդունված այն կարծիքը, որ մեր հասարակության մեջ մարդիկ հաճախ հաջողության են հասնում՝ հետևելով ֆրեյմերի որոշակի համակարգերին: Այն տարրերն ու գործընթացները, որոնք մարդը համարում է նշանակալի վարքը սահմանելիս, հաճախ իսկապես նույնական են վարքում դրսևորվողներին. ինչու ոչ, եթե հասարակական կյանքն ինքնին հաճախ կազմակերպվում է այնպես, որ մարդիկ կարողանան հասկանալ և գործել դրանում: Այսպիսով, մենք ընդունում ենք ընկալման համապատասխանությունը կամ իզոմորֆիզմը ընկալվողի կառուցվածքին՝ անկախ այն հանգամանքից, որ գոյություն ունեն իրականության կազմակերպման բազմաթիվ

սկզբունքներ, որոնք կարող են արտացոլվել, բայց չեն արտացոլվում ընկալման մեջ: Քանի որ մեր հասարակության մեջ շատերն այս պնդումն օգտակար են գտնում, ես էլ եմ միանում նրանց:

Այստեղ պետք է ընդգծել մեկ ընդհանուր դրույթ: Ֆրեյմերի առաջնային սխեմաները՝ բնական և սոցիալական, որոնք մենք կիսում ենք որպես հասարակության անդամներ, ազդում են ոչ միայն գործունեության անմիջական մասնակիցների վրա. երրորդ կողմի դիտորդները նույնպես խորապես ներգրավված են այդ սխեմաներում: Ամենայն հավանականությամբ, մենք չենք կարող նույնիսկ ակնթարթային հայացք նետել տեղի ունեցողին, որպեսզի չկիրառենք ինչ-որ բացատրական սխեմա, որի օգնությամբ կառուցվում են նախորդ իրադարձությունների մասին ենթադրությունները և այն սպասումները, թե ինչ տեղի կունենա այժմ:

### Բանալիներ և փոխարկումներ

1952 թ. Գրեգորի Բեյթսոնը Ֆլեյշհաքերի կենդանաբանական այգում դիտարկում էր ջրասամույրների վարքը: Նա հայտնաբեց, որ ջրասամույրները ոչ միայն կռվում են իրար հետ, այլև խաղում են կռիվ[126]: Ընդհանուր առմամբ կենդանիների խաղերն առաջին անգամ նկարագրվել են Կարլ Գրոոսի գրքում[127], որը դեռևս չի կորցրել իր նշանակությունը, սակայն Բեյթսոնի կողմից բարձրացված հարցերն այս թեմային ժամանակակից հնչողություն հաղորդեցին:

Բեյթսոնը նկատել է, որ որոշակի ազդանշաններ տալով՝ ջրասամույրները սկսում են հետապնդել միմյանց և հարձակվել, մինչդեռ այլ ազդանշանները հանգեցնում են խաղի դադարեցմանը: Բեյթսոնի դիտարկումներից պարզ երևում է, որ կենդանիների խաղերը ինքնաբավ չեն. խաղային գործողությունները ինքնին իմաստ չունեն, դրանք միշտ առկա են ի հակադրություն իրականում գործող նշանակությունների որոշակի համակարգի: Ավելին, խաղային գործունեությունը տրված է

---

126 G. (1955) The message «This Is Play»// Group processes / Ed. by B. Schaftner, New York: Josiah Macy, Jr., Foundation Proceedings, p. 175.
127 Groos, K. (1896) The play of animals. New York: D. Appleton & Company.

նրանով, ինչն արդեն ունի իր նշանակությունը, այս դեպքում՝ նպատակային վարքի բոլորին հայտնի տեսակով՝ կռվով: Իրական կռիվը հանդես է գալիս որպես *արտաքին* մոդել՝ նմանակող օբյեկտի տեսքով: «Իդեալակա՞ն է արդյոք սխեման» հարցը մնում է բաց: Այլ կերպ ասած, դա «ինչ-որ բանի համար մոդել է», այլ ոչ թե մոդել-նմուշ, որը մանրամասնորեն մշակված նմանակման նմուշ է և խաղի ձևակազմավորման հիմք: Ակնհայտ է, որ կռվի նմուշը ոչ միայն չի պահպանվում բոլոր մանրամասներում, այլև որոշակի հարաբերություններում պարբերաբար փոխվում է: Խաղալիս կենդանիները չեն խայթում իրար, փոխարենը՝ ցույց են տալիս խայթոցներ: Կարճ ասած, տեղի է ունենում որոշակի փոխադրում (transcription, transponation)՝ կռվի «հատվածի» փոխակերպում խաղի «հատվածի»: Բացի այդ, խաղի բոլոր մասնակիցները, ըստ երևույթին, ունեն հստակ պատկերացում, որ տեղի ունեցողը խաղ է: Հազվադեպ բացառություններով թե՛ պատրաստված դիտարկողները, թե՛ հանրությունը առանց դժվարության ճանաչում են կենդանիների վարքագծի որոշ դրվագներ՝ որպես խաղ. խաղ այն իմաստով, որով մարդկանց շրջանում ընդունված է մտածել խաղի մասին: Իրականում խաղը հանդիպում է և՛ մարդկանց, և՛ կենդանիների շատ տեսակների շրջանում. փաստ, որը մենք սովորաբար անտեսում ենք, երբ շոյում ենք մեր ինքնասիրությունը մեր և նրանց միջև տարբերությունների մասին մտածելիս:

Կենդանիների խաղի մասին նախնական դատողություններից հետո անցնենք ֆրեյմերի վերլուծության կենտրոնական հասկացություններից մեկին՝ «բանալի» (key): Այս հասկացությունը վերաբերում է այն համաձայնությունների շարքին, որոնց միջոցով որոշակի գործունեություն, որն արդեն իմաստավորված է ֆրեյմերի հիմնարար համակարգում, վերափոխվում է բոլորովին այլ գործունեության տեսակի (մասնակիցների տեսանկյունից): Այս գործընթացը կարելի է անվանել փոխարկում: <>

Սահմանափակվելով ջրասամույրներով և կապիկներով՝ մենք խաղի նման քիչ բան կգտնենք, թեև թվում է, որ խաղն ամենուրեք է: Բեյթսոնը վարքի նման տիպերի շարքին է դասում սպառնալիքը, խա-

բեությունը և ծեսը: Նա համարում է, որ այս բոլոր երեք դեպքերում այն, ինչը ցուցադրվում է ոչ թե ինքնին «իրն է», այլ «իրի մոդելը»: Ուսումնասիրելով մարդուն՝ մենք կհայտնաբերենք բազմաթիվ տարբեր «կապիկային խորամանկություններ»: Բանալիներն անհամար են: Ի լրումն նրան՝ ինչ կարող են անել ջրասամույրները․ մենք կարող ենք սցենարին համապատասխան *բեմադրել կռիվ,* կարող ենք *հորինել այն,* նկարագրել *հիշողությամբ, վերլուծել* և այլն:

Այժմ կարելի է առաջարկել փոխարկման ամբողջական սահմանումը:

1. Փոխարկման ժամանակ տեղի է ունենում մեկնաբանման որոշակի սխեմայում արդեն իսկ իմաստավորված սուբյեկտների, գործողությունների, առարկաների համակարգված փոխակերպում. եթե չկա ելակետային սխեմա, ապա փոխարկելու բան ևս չկա:
2. Ենթադրվում է, որ այս գործունեության մասնակիցները գիտեն և բացահայտորեն ընդունում են, որ տեղի են ունենում համակարգված փոփոխություններ, որոնք կտրուկ փոխակերպում են տեղի ունեցողի իմաստը:
3. Փոխակերպման սկիզբը և վերջը ամրագրվում են ժամանակային շրջանակներով կամ որոշակի փակագծերով, որոնց ներսում տեղի է ունենում փոխակերպումը: Նույնությամբ, տարածական փակագծերը ցույց են տալիս, թե որ սահմաններում է աշխատում փոխարկումը, իսկ որտեղ այն չի աշխատում:
4. Փոխարկումը կարող է կիրառվել ոչ միայն որևէ մեկնաբանական սխեմայի շրջանակներում ընկալվող իրադարձությունների հանդեպ: Խաղի տարր կարող է ներմուծվել նաև զուտ կիրառական կողմնորոշում ունեցող գործողությունների մեջ, օրինակ՝ատաղձագործության, նույն կերպ կարելի է խաղալ ծես, օրինակ՝ հարսանեկան ծիսակատարությունը, անգամ ցույց տալ ձյուն կամ ընկնող ծառ, չնայած որ ընդհանուր կարծիքով որպես բնական ընկալվող իրադարձություններ՝ պակաս պի-

տանի են փոխարկման համար, քան որպես սոցիալական ընկալվող գործողությունները:

5. Կռիվ խաղացողների և շախմատ խաղացողների միջև շատ ավելի ընդհանրություններ կան, քան լրջորեն կռվողների և շախմատ խաղացողների: Այդ պատճառով փոխարկման ժամանակ տեղի ունեցող համակարգված փոխակերպումը կարող է միայն թեթևակիորեն փոխել գործունեության արտաքին ձևը, բայց արմատապես փոխել այն, ինչ մասնակիցները կարող էին պատմել տեղի ունեցողի մասին: Կողքից կարող է թվալ, որ սա կռիվ է կամ շախմատային խաղ, բայց իրականում մասնակիցները կարող էին ասել, որ իրականում նրանք խաղում են: Հետևաբար փոխարկումը, եթե այն տեղի է ունենում, սկզբունքային դեր է խաղում նրա սահմանման հարցում, ինչը մենք ընդունում ենք իբրև իրականում տեղի ունեցող:

Քանի որ այն հարցին, թե «ի՞նչ է այստեղ կատարվում», մեր անհատն այժմ կարող է պատասխանել «պարզապես խաղում ենք», մենք ստանում ենք այս հարցին տրվող պատասխանները տարբերակելու եղանակ. եղանակ, որը նախկինում չկար: Խոսքը իրերին նայելու եղանակի հասարակ փոփոխության մասին չէ:<>

Երբ գործում են առանց փոխարկման՝ օգտագործելով միայն սովորական մեկնաբանությունները, ֆրեյմերի տեսքով պատասխանը տեղին չէ, եթե, իհարկե, պետք չէ ինչ-որ մեկին համոզել հակառակում կամ, օրինակ, ապացուցել, որ «նրանք չեն խաղում կռիվ, այլ իսկապես կռվում են»: Մյուս դեպքերում «ճշմարիտ», չփոխարկված գործունեության սահմանումը ֆրեյմերով իրավիճակի սահմանումներում առաջ է բերում օտարում, հեգնանք և հեռացում: Համեմատելով խաղի հետ իսկական, չփոխարկված գործունեությունը՝ մենք հակված ենք այն դասել «լուրջերի» շարքին: Սակայն ամեն լուրջ գործունեություն չէ, որ զրկված է փոխարկումից, և ամեն փոխարկված գործունեություն չէ, որ կարելի է համարել լուրջ:<>

Այժմ մենք կարող ենք անդրադառնալ իրականության սահմանումներին: Իրական, գոյություն ունեցող գործողությունների մասին,

որոնք իսկապես տեղի են ունենում, որպես կանոն խոսում են այն դեպքում, երբ դրանք լիովին սահմանված են ֆրեյմերի հիմնարար համակարգում: Նույն գործողությունների փոխարկումը բեմական սխեմաներով մեզ կարող է հուշել, որ տեղի ունեցողը «ճշմարիտ», իրական, իսկական չէ: Դրա հետ մեկտեղ, մենք կարող ենք ասել, որ այդ գործողությունների բեմականացումն իսկապես տեղի է ունենում իրականում: Անիրական գործողությունն իրական է այն իմաստով, որ տեղի է ունենում առօրյա կյանքում: Ի դեպ, իրականում տեղի ունեցողի խոսքում մենք տարբերակում ենք ֆրեյմերի առաջնային համակարգում մեկնաբանվող իրադարձությունները և որպես փոխակերպված, վերափոխված սահմանվող իրադարձությունները: Պետք է հավելել նաև, որ իրականությունը ռետրոսպեկտիվ կերպով կառուցվող մի բան է, որը գիտակցված է հենց այն եղանակով, որը թույլ չի տալիս վերափոխում:

Բայց դա ևս մեծ պարզեցում է: Գործունեության որոշ հատվածներ, թեև հստակ ենթադրում են փոխարկում, բայց չեն դիտվում որպես փոխարկված: Օրինակ, ողջույնի ծիսակատարության մեջ մտնում են որպիսության մասին հարցերը, որոնք ոչ ոք բառացիորեն չի ընկալում: Մարդիկ իրար ողջունելիս երբեմն համբուրվում են, սակայն այս ժեստը զրեթե զուրկ է մարմնականությունից: Տղամարդիկ, ողջունելով միմյանց, երբեմն փոխանակվում են ուսին հասցվող հարվածներով, բայց ակնհայտ է, որ ոչ ոք դա չի ընկալում իբրև հարձակում: Նման արարողություններին հետևելու որոշակի փորձ ձեռք բերելով՝ մենք կսովորենք անսխալականորեն ճանաչել ողջույնները: Ողջույնի փոխարկումը տեսնելու համար հավանաբար, պետք է այն դիտարկել բեմականացման կամ էթիկետի դասընթացների շրջանակներում: <>

Քննարկենք մեր հասարակության մեջ օգտագործվող հինգ հիմնական բանալիները՝ հորինվածք (make-believe), մրցույթ (contest), արարողակարգ (ceremonial), տեխնիկական վերակարգավորում (technical redoing) և տեղափոխում (regrounding): Տարբերելով նմուշը կրկնօրինակից՝ ես բացարձակապես չեմ անդրադառնում այն հարցին, թե ինչպե՞ս է կրկնօրինակը կարող ազդել բնօրինակի վրա, ճիշտ այնպես,

ինչպես, օրինակ, քրեական գործերի մասին ֆիլմերը կարող են ազդել իրական քրեական հանցագործների լեզվի և վարքի վրա:

1. Ես հորինվածք (make-believe) եմ անվանում այն գործունեությունը, որը մասնակիցները չփոխարկված գործունեության հետ հարաբերակցության մեջ համարում են ցուցադրական իմիտացիա կամ փորձ (running through), որը չունի ոչ մի գործնական ազդեցություն:
   ա) հորինվածքի հիմնական տեսակը խաղունությունն է (playfulness), որը պետք է հասկանալ որպես անլրջության որոշակի տարրերի համեմատաբար կարճ ներմուծումը միջանձնային փոխազդեցության մեջ: Գործունեության ցանկացած հատված կարող է վերածվել խաղայինի: <> Ակնթարթային փոխարկումները խաղային եղանակի հասարակության մեջ տեղի են ունենում այնքան լայնորեն, որ դժվար է իմաստավորել վերջինիս բոլոր տարբերակները: Ակնհայտ է, որ խաղը կարող է ներմուծվել գործունեության ամենատարբեր տեսակներում, բայց յուրաքանչյուր սոցիալական խումբ որոշում է խաղի սահմանները յուրովի. այդ սահմանները և պետք է բացահայտի ֆրեյմերի վերլուծությունը:
   բ) Այսպիսով, խաղային ձևացումը տարբեր տեսակի հորինվածքների ձևերից մեկն է: Մեկ այլ ձև է երևակայությունը կամ անուրջները (daydreaming): <> Մարդն իր երևակայության մեջ կյանքի որևէ դրվագ է ստեղծում և սեփական կամքով կառավարում իրադարձությունների ընթացքն ու արդյունքները: Նշենք, որ սովորաբար երազում են մտքում. անուրջները գրեթե չեն ուղեկցվում արտաքինից դիտարկելի վարքով, եթե միայն երազողը չի սկսում բարձրաձայն խոսել:
   գ) Այժմ դիտարկենք դրամատիկական տեքստերը (dramatic scripting): Վերցնենք հատվածներ անձնական փորձից, որոնք մատչելի են հանդիսատեսի կամ ընթերցողների կողմնակի մասնակցության համար, հատկապես տիպային

ստեղծագործությունները, որոնք հանրությանը առաջարկվում են հեռուստատեսությամբ, ռադիոյով, թերթերով, ամսագրերով, գրքերով, ինչպես նաև բեմական (կենդանի) ներկայացումներով: Տեքստերի այս ամբողջությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն ժամանցի ոլորտում ունեցած հասարակական դերի շնորհիվ կամ, ինչպես ընդունված է համարել, անմիջական ուսումնասիրության համար հասանելիության: Տեքստերի ամենախորը նշանակությունը նրանում է, որ դրանք իրենցից ներկայացնում են առօրյա կյանքի մանրօրինակ (mock-up), չգրված սոցիալական գործողությունների գրառումների հավաքածու և, հետևաբար, կյանքի այս ոլորտի ներքին կառուցվածքին վերաբերող ամենատարբեր ակնարկների և երանգների աղբյուր:

2. Մրցումներ (contests): Վերցրե՛ք բռնցքամարտը, ձիարշավները, ասպետական մրցաշարերը, աղվեսների որսը և այլն: Թվում է, որ այդ սպորտաձևերի նմուշը կոփվն է, և համապատասխան կանոնները պարունակում են ագրեսիայի աստիճանի և ձևերի սահմանափակումներ: <> Որոշ մարզաձևեր, կարծես, երևում են իբրև սովորական մարտական վարքի փոխարկումներ: Սակայն այդ տեսակետը շատ սահմանափակ է: Շատ մարզաձևեր, ինչպիսիք են հոկեյը և թենիսը, մրցակցող կողմերին կառուցվածքային դիմակայության մեջ են դնում, և միայն հատուկ սարքավորումները և պայքարի նպատակը կարող են հիշեցնել փոխազդեցության սկզբնական ֆրեյմը: Կարելի է պատկերացնել անընդհատություն, որի մի բևեռում խաղային ներկայացումները ուտիլիտար գործողությունը վերածում են զվարճության, իսկ մյուսում՝ սպորտի և խաղերի: Թեև օբյեկտների և անհատների խաղային վերամարմնավորումը երկար չի տևում և երբեք չի ամրապնդվում ամբողջությամբ, կազմակերպված խաղերում և սպորտում այս վերամարմնավորումն ինստիտուցիոնալացվում է, այսինքն՝ կայունանում է ֆորմալ կանոնների ներդրմամբ: (Հենց այդ իմաստն եմ ես դնում «կազմակերպված խա-

դեր» բառի մեջ): Կանոնների ֆորմալացմանը զուգընթաց խաղը գնալով ավելի քիչ է նմանվում առօրյա գործունեությանը և աստիճանաբար է վերածվում ֆրեյմերի ինքնուրույն առաջնային համակարգի:

3. Արարողակարգեր (ceremonials): Սա սոցիալական ձևերի որոշակի տեսակ է, որը ներառում է պսակադրությունները, թաղումները, տիտղոսների և կոչումների շնորհումը: Այստեղ տեղի է ունենում սովորական կյանքից տարբերվող ինչ-որ բան, միևնույն ժամանակ, երբեք չի կարելի վստահաբար ասել, թե հատկապես ի՞նչ է տեղի ունենում արարողակարգերում: Ինչպես բեմական ներկայացումները, դրանք կառուցված են նախապես մշակված սցենարով, ընդ որում, անցկացվում են փորձեր, որոնք հեշտ է տարբերել «իրական» կատարումից (performance): Բայց եթե բեմական ներկայացումն ուղղված է կյանքի ընդօրինակմանը, ապա արարողակարգի գործառույթը տեղի ունեցողի իմաստը մեկ գործողության մեջ տեղավորելն է, այն առօրեականի հյուսվածքից հանելը և դրանով իսկ ամբողջ իրադարձությունը լցնելը: Կարճ ասած, պիեսն ուղղված է կյանքի պատկերմանը, իսկ արարողակարգը կենտրոնացված է զուտ իրադարձության վրա: <> Վերջապես, բեմական ներկայացման մեջ դերասանն ու նրա մարմնավորած կերպարը հստակ առանձնացված են, իսկ արարողակարգում կատարողն ինքն իրեն պետք է ներկայացնի գլխավոր սոցիալական դերերից մեկում՝ ծնողի, ամուսնու, քաղաքացու և այլն: (Առօրյա կյանքում անհատը նույնպես ներկայացնում է ինքն իրեն, բայց դա չի ընդունում այդքան հստակ խորհրդանշական ձև):

4. Տեխնիկական վերակարգավորում: Առօրյա գործունեության որոշ «հատվածներ», որոնք հանված են իրենց սովորական համատեքստից, կարող են արտահայտվել ուտիլիտարիստական նպատակներին համապատասխանող ձևերով. դրանով իսկ վերջիններս սկզբունքորեն տարբերվում են իրական կատարումներից, որոնցում արդյունքը հատուկ նշանակություն չունի:

<> Եկեք համառոտ դիտարկենք նման ուտիլիտար գործողությունների որոշ տեսակներ:

ա) Մեր հասարակության մեջ և գուցե բոլոր մյուսներում նպատակային գործունեության ունակությունը (այսինքն՝ որոշակի հմտությունների տիրապետումը) հաճախ զարգանում է մի տեսակ ուտիլիտարիստական հորինվածքների միջոցով: Նրանց նպատակն է հնարավորություն տալ նորեկին ձեռք բերել կատարողական փորձ՝ առանց աշխարհի հետ կոշտ կապակցման, երբ իրադարձությունները կարծես գիտակցաբար «անջատվում են» իրենց սովորական տրամաբանական ավարտից: Լինում է, որ վրիպումներն ու անհաջողությունները ուսանելի և նույնիսկ օգտակար են դառնում: Սա ներառում է փորձերը, ստուգումները, մի խոսքով՝ վարժանքները (practicing): Երբ անհրաժեշտ է կատարել ինչ-որ գործնական խնդիր, մենք խոսում ենք ընդօրինակման կամ վարժման մասին: <>

բ) Տեխնիկական վերակարգավորումների առանձին դաս են կազմում «ցուցադրությունները», այսինքն՝ սովորական գործառական համատեքստից դուրս այնպիսի կատարումը, որի դեպքում ոչ մասնագետին հնարավորություն է տրվում մոտիկից ծանոթանալ դրա իրականացման գործընթացին: Ցուցադրությունները տեղի են ունենում, օրինակ, այն դեպքերում, երբ վաճառողը ցույց է տալիս, թե որքան հրաշալի է իր փոշեկուլը ներծծում աղբը, որը նա մինչ այդ լցրել է տանտիրուհու հատակին, երբ սոցիալական աշխատողը ցույց է տալիս, թե ինչպես պետք է լվանալ երեխային, երբ հետևակային ստորաբաժանումների հրամանատարները ցուցադրում են հրետանու հնարավորությունները և այլն: Նկատենք, որ ցուցադրությունը, ի տարբերություն վարժանքի, սովորաբար կատարվում է հմուտ վարպետի կողմից և կրկնվում է մեկ կամ երկու անգամ: Իհարկե, փոխարկման այս երկու տեսակները կարող են նաև համադրվել. ուսուցի-

չը գործողությունը կատարում է որպես ցուցադրություն, իսկ ուսանողը՝ որպես վարժություն:

գ) Մեր հասարակության մեջ լայն տարածում է ստացել (և շարունակում է տարածվել) տարբեր տեսակի գրառումների և վկայությունների կրկնօրինակումը (replicative records), այսինքն՝ գործունեության որոշակի հատվածի վերարտադրումը՝ այն որպես անցյալի փաստ կառուցելու համար: Եթե սովորական ցուցադրությունը հանգեցվում է ուսուցման նպատակով գործունեության որոշ իդեալական նմուշների ցուցադրմանը, ապա փաստաթղթավորման ժամանակ արձանագրվում է այն, ինչ մի անգամ տեղի է ունեցել իրականում և նախատեսված չի եղել գրանցման համար: <> Փաստագրական ֆրեյմի ազդեցությունը ընկալման վրա փորձարարական եղանակով ցուցադրվում է Ռիչարդ Լացարուսի կողմից սթրեսի ուսումնասիրության շրջանակներում[128]: Փորձարկվողների հատուկ ընտրված խմբերում մարդկանց վրա տեղադրվում էին հատուկ սարքեր, որոնք չափում էին զարկերակը ու ափերի լարվածությունը: Ռեակցիաների փոփոխությունները գրանցվում էին պրիմիտիվ ծեսերի մասին ֆիլմի ցուցադրության ժամանակ, որտեղ ցույց էին տրվում մարդու մարմնի վրա կտրվածքներ կատարելու դրվագներ: Փոխելով ֆիլմի հնչունային ուղեկցումը՝ փորձարարը կարող էր մասնակիորեն ազդել լսարանի դիրքորոշման վրա: Մասնավորապես, մեկնաբանության «ինտելեկտուալացումը» դաժան ծիսակատարությանը հաղորդում էր յուրահատուկ մարդաբանական հնչեղություն՝ մասամբ վերածելով տեսանյութը փաստաթղթի. այս անցումը զգալիորեն նվազեցնում էր փորձարկվողների՝ համալսարանի ուսանողների սթրեսի մակարդակը:

[128] Lazarus, R.S., Alfert, E. (1964) Short circuiting of threat by experimentally altering cognitive appraisal // Journal of Abnormal and Social Psychology, vol. LXIX, No. 2, August, pp. 195-205.

դ) Խմբային հոգեթերապիան և դերային փոխազդեցության այլ իրավիճակները արժե նշել գոնե այն պատճառով, որ այդ ոլորտի լայնածավալ գրականությունը թույլ է տալիս ֆորմալացնել փոխարկումների փոխակերպող պրակտիկաները և հնարները: Դրանք կառուցվում են այն ենթադրության վրա, որ թերապևտի ղեկավարությամբ անցյալի փորձի վերապրումը ծառայում է ոչ միայն վերլուծական առումով նշանակալի թեմաների պարզաբանմանը, այլև անձի դիրքորոշումների փոփոխությանը:

ե) Անկախ նրանից, թե տեղի է ունեցել արդյոք ընթացիկ գործունեության փոխարկում, միշտ մնում է «պարզապես փորձելու» հնարավորությունը՝ ոչ թե հանուն շարքային նպատակին հասնելու, այլ հանուն հետաքրքրասիրության, հետաքրքրության. ուզում եմ իմանալ, թե ինչ կստացվի, ստուգել որևէ վարկած, պատկերացնել գործի հանգամանքները՝ առանց որևէ տեսանելի նպատակի, իրականացնել մանրակրկիտ չափում և վերլուծություն: «Բնական» պայմանները կարելի է պահպանել երկար ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ արտաքին կատարման բնական պատճառներ չկան: Նկատենք, որ «բանալի» բառն անվերապահորեն օգտագործելու համար մենք պետք է ենթադրենք, որ իրավիճակի բոլոր մասնակիցները՝ փորձարարները, փորձարկվողները (եթե նրանք կան) և գիտական հանրությունը նմանապես որակում են տեղի ունեցածը հենց իբրև գիտափորձ:

*5.* Տեղափոխում (regrounding): Մենք դիտարկեցինք փոխարկումների հիմնական տիպերը՝ հորինվածքը, մրցակցությունը, արարողակարգը և տեխնիկական վերակարգավորումը: Մեզ մնում է դիտարկել ևս մի տիպ, որը դժվար է ենթարկվում հայեցակարգման: Ներգրավվածությունը ինչ-որ գործունեության արտաքին ներկայացմանը թույլ է տալիս պահպանել դրա հիմքերի կամ շարժառիթների որոշակի թափանցիկությունը, որոնք, ինչպես

թվում է, արմատապես տարբերվում են սովորական իրավիճակներում մարդկանց վարքը պայմանավորող շարժառիթներից: Այսպիսով, «տեղափոխում» հասկացությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ որոշ շարժառիթներ կատարողին պահում են սովորական գործունեության շրջանակում, մինչդեռ մյուսները՝ հատկապես կայուն և ինստիտուցիոնալացված, նրան դուրս են բերում սովորականի սահմաններից: Տեղափոխման տիպիկ օրինակ է միջին դասի վերին շերտին պատկանող և բարեգործությամբ զբաղվող կանանց մասնակցությունը էժան իրերի տոնավաճառներին: <> Այս Նույն շարքում է այսօր գրեթե մոռացված փոխադարձ պարտավորությունը (arrangement), որի համաձայն աշակերտը նվիրվածություն է հայտնում վարպետին, տիրոջը, ուսուցչին և կատարում է օժանդակ աշխատանք չնչին վճարի դիմաց կամ, առհասարակ, առանց վճարվելու՝ արհեստ սովորելու հնարավորության դիմաց: (Ինչը վարպետի համար իսկական աշխատանք է, ուսանողի համար՝ վարժվելու հնարավորություն): Եվ իհարկե, այստեղ պետք է հիշատակել նաև ներգրավված դիտարկման այն տարբերակը, որի պարագայում դիտարկողը նախապես իրեն բացահայտում է:

**Դիտավորություններ և կեղծարարություններ**

Փոխարկումը գործունեության վերափոխման հիմնական եղանակն է՝ մի ֆրեյմից մյուսին հաջորդական անցման մոդելը: Այլ կերպ ասած, փոխարկումները հաստատում են այն կետերը, որոնցում ձևախեղվում է իրականության ընկալումը: Այժմ դիտարկենք ձևախեղման մեկ այլ օրինակ՝ կեղծարարությունը (fabrication): Կեղծարարություն ասելով՝ ես հասկանում եմ մեկ կամ մի քանի անհատների գործողությունները, որոնք ուղղված են իրավիճակը փոխելուն այնպես, որ այլ մարդիկ կեղծ պատկերացում կազմեն տեղի ունեցողի մասին: Ընդ որում, որպես կանոն կեղծարարությունները դիտավորություններ են՝ ինտրիգներ կամ դավադրություններ, որոնց հաջող իրականացումը հանգեցնում է իրականության էական խեղաթյուրմանը: Ամենայն հա-

վանականությամբ, գործունեության ցանկացած ձև, լինելով վերափոխման սկզբնական մոդել, կարող է խառնաշփոթ առաջացնել երկու եղանակով՝ փոխարկման և կեղծման:<>

Կեղծման, ինչպես և փոխարկման համար, անհրաժեշտ է վարքի համապատասխան սխեմա, որը իմաստավորված է ֆրեյմերի առաջնային համակարգում: Տարբերությունը մտադրություններում է. փոխարկումն ուղղված է նրան, որ իրավիճակի բոլոր մասնակիցները նույն պատկերացումներն ունենան տեղի ունեցողի մասին, իսկ կեղծարարությունը նախատեսված է տարբեր պատկերացումների ստեղծման համար: Նրանք, ովքեր մտադրել են խաբեություն, սահմանում են տեղի ունեցողը *հենց* իբրև կեղծիք, այնինչ խաբվածները գործ ունեն այն բանի հետ, ինչ շինծու է: Միայն կեղծարարները գործ ունեն նրա հետ, *ինչը* կեղծված է: Միայն կեղծարարներն են տեսնում, թե ինչպես է ստեղծվում ֆրեյմը:

Ի տարբերություն փոխարկման՝ կեղծումը միշտ կարող է բացահայտվել: Երբ խաբված կողմը գիտակցում է տեղի ունեցածը, այն ամենը, ինչ թվում էր իրական, հանկարծ վերածվում է խաբեության, որը տեղում քանդվում է: «Իրականությունը», ինչպես կարծում է Ջեյմսը, հանգեցվում է իրերի այնպիսի հասկացմանը, որը «գերիշխում է» մնացած բոլոր մեկնաբանությունների նկատմամբ: Ձևակերպեմ այս միտքը ևս մեկ անգամ: Քանի որ ֆրեյմն իր մեջ է առնում ինչպես իրականության ընկալումը, այնպես էլ ընկալվող իրականությունը, ցանկացած սթափ հայացք իրադարձություններին անպայման պետք է պարունակի ռեֆլեքսիա: Հասկանալ դրվագը ճիշտ նշանակում է հասկանալ, թե ինչպես է հասկացվում դրվագը: Այստեղ առաջանում են մի շարք հարցեր՝ կապված «վարկաբեկում» հասկացության հետ: Իրավիճակի սահմանումները դադարում են գործել, երբ ուժի մեջ են մտնում նոր սահմանումները: Հենց դա է ենթադրվում այն դեպքերում, երբ ասում են, որ խաղն ավարտվել է, և ժամանակն է խոսքերից անցնել գործի: Այլ կերպ ասած, ինչ էլ որ կանխամտածվի, վաղ թե ուշ բացահայտվում են կոնկրետ արդյունքները: Իրավիճակը կարող են պայթեցնել արտաքին հանգամանքները, երբ, ասենք, հրդեհի հայտնաբերման դեպքում անմիջա-

պես ընդհատվում է շախմատային խաղը, կամ թատերական ներկայացման ժամանակ անջատվում է էլեկտրականությունը: Նույնը տեղի է ունենում այն ժամանակ, երբ շփման ուրախությունը և լավ տրամադրությունը անսպասելիորեն փոխվում են հիասթափության, և նախկին հաճելի իրավիճակը այլևս վերականգնել չի ստացվում: Վերլուծական առումով կեղծարարությունները կարող են դասակարգվել տարբեր եղանակներով: Դրանք կարելի է կարգաբերել ըստ տևողության, խաբվածների քանակի, մանիպուլյացիայի օբյեկտների: Կարելի է կեղծել խաբեության շարժառիթն ու նպատակը, մտադրությունները, ժեստերը, պնդումները, արդարացումները, իրեղեն ապացույցները, անհատական ինքնությունը, շրջակա միջավայրը, խոսակցությունը, քամու պոռթկումը, ավտովթարը, պատահականությունը, խրամատի զինվորների դասակը, արաբական բանտարկյալների հագուստները, մարդատար ինքնաթիռների պաշտպանության միջոցները, տրոյական ձին: Կեղծարարություն կարող է լինել անգամ սաֆարին ջունգլիներում: Ուղեկցորդը նախապես սովորեցնում է առյուծներին ուտելիք փնտրել որոշակի վայրում (մարդու լսողությամբ չընկալվող բարձր հաճախականության ձայնային ազդանշանի օգնությամբ): Այն բանից հետո, երբ որսորդները ծախսում են երկու շաբաթ՝ անցնելով թավուտ անտառների միջով և որսալով տարատեսակ թռչուններ և կենդանիներ, նրանք այդպես էլ չեն հանդիպում ոչ մի առյուծի: Այդ ժամանակ ուղեկցորդը բերում է որսորդներին հենց այնտեղ, որտեղ առյուծը կսպանվի: Այսպիսով, հաղթանակ տանելով վայրի բնության թշնամական աշխարհի նկատմամբ՝ որսորդները վերջապես խորը բավարարվածություն կզգան:

Սկզբում դիտարկենք բարեմիտ կեղծարարությունները (benign fabrications), որոնք կառուցվում են շփոթության մեջ հայտնվող մարդու հետաքրքրություններից ելնելով և եթե անգամ ոչ իր օգտին, ապա գոնե առանց նրան վնաս հասցնելու: Պատահական բացահայտումը քանդում է կեզծման մտադրությունը և հետագայում կարող է ստիպել միամիտին լինել ավելի ուշադիր, թեև լուրջ բարոյական վնաս նրան չի

հասցնում: Բարեմիտ կեղծարարությունները լինում են մի քանի տեսակի:

1. Ես կարծում եմ, որ բոլոր հասարակություններում կան խաղարկություններ (playful deception), այսինքն՝ մեկ կամ մի քանի մարդկանց հանուն ընդհանուր զվարճանքի մոլորության մեջ գցելը՝ անվնաս, անլուրջ և սովորաբար կարճատև: Բոլորը գիտեն, որ կատակը շուտով կբացահայտվի, և վստահ են, որ զոհը դրան կվերաբերվի «առանց վիրավորվելու», «ինչպես զվարճանքի»: <>
2. Դիտարկենք «փորձարարական խաբեությունը» (experimental hoaxing): Սա կիրառվում է այն ժամանակ, երբ մարդկանց վրա փորձարկումներ անցկացնելու մեթոդիկան պահանջում է, որ փորձարկվողը չիմանա, թե ինչ է ուսումնասիրվում, և ավելի լավ է, որ նա ընդհանրապես գլխի չընկնի փորձարկումների անցկացման մասին: Չնայած դա պահանջվում է գրեթե բոլոր գիտափորձերում: Փորձարկվողի անտեղյակությունը գնահատվում է՝ որպես սեփական արձագանքը գիտակցված խեղաթյուրումից պաշտպանվելու երաշխիք. դա կարող է տեղի ունենալ ինքնահաստատվելու կամ հետազոտողներին օգնելու ցանկությունից դրդված: Գիտափորձի ավարտից հետո փորձարկվողին հայտնում են այն մասին, թե ինչ է տեղի ունեցել «իրականում», և հետին թվով ստանում են փորձին մասնակցելու նրա համաձայնությունը: Նա բարեհաճորեն ընդունում է տեղի ունեցածը, քանի որ ուժերի ներածին չափով ավանդ է ունեցել գիտության զարգացմանը, ինչն ի վերջո նրան ոչ մի վնաս չի հասցրել: <>
3. Որպես հավելում մասնագիտական ուսուցմանը, ստեղծվում է «ուսուցողական խաբեությունը» (training hoax): Նորեկի հետ վարվում են այնպես, կարծես նա ներգրավված է լուրջ աշխատանքում, և միայն ավելի ուշ է բացահայտվում գաղտնիքը, որ նրա բոլոր գործողությունները հուսալիորեն պաշտպանված էին այն աշխարհից, որը, ինչպես նա կարծում էր, իր առջև բացված էր: (Սրա հիանալի օրինակ է բեմականացումը, որտեղ

անգլիացիները, ինչպես պնդում են, հետախուզության գործակալներին սովորեցնում են հարցաքննություններ վարել ցրտի, սովի և բռնության պայմաններում)[129]:

4. Հատուկ դաս են կազմում ուսումնական խաբեություններին շատ նման կեղծարարությունները, որոնց օգնությամբ ոչինչ չկասկածող մարդկանց մոլորության մեջ են գցում՝ ստուգելու համար նրանց հավատարմությունը և բնավորությունը:<> Դասական օրինակ են «կենսական ստուգումները»: Դրանք լավագույնս հայտնի են տեղեկատվական անվտանգության ոլորտում. գործակալին, որի նվիրվածության վերաբերյալ կասկածներ կան, գործընկերը կարող է փոխանցել ռազմավարական կարևորության տեղեկություններ՝ տեսնելու համար, թե արդյո՞ք կլինի տեղեկատվության արտահոսք: Հայտնի է, որ հետախուզական ծառայությունների աշխատակիցները ստուգում են անձնակազմը, և, ինչպես ասում են, նման ստուգումները երբեմն մարդկային կյանքեր են արժենում: Օրինակ, կասկածյալ գործակալին հայտնում են առաջիկա հանկարծակի հարձակման մասին, և նրա հավատարմության կամ անհավատարմության մասին եզրակացությունն արվում է հակառակորդի հարձակումը հետ մղելու պատրաստակամության հիման վրա: <> Կենսական ստուգումներն օգտագործվում են նաև խոշոր կազմակերպությունների կողմից՝ վերահսկելու աշխատակիցների վարքը, նրանց ազնվությունը, արագությունը և քաղաքավարությունը: <>
5. «Պատերնալիստական կառույցները» (paternal constructions) խաբեության և կեղծարարության բավականին մեծ դաս են կազմում: Կարծես, այստեղ ամեն ինչ առվում է hոգուտ զոհի հետաքրքրությունների, բայց եթե նա ի սկզբանե իմանար, թե ինչ է կատարվում իրականում, ապա հավանաբար կհրաժարվեր նման hոգատարությունից: Տվյալ դեպքում սուտը կանխա-

[129] Նկարագրություններից մեկը տե՛ս Wynne, G. (1967) The man from Moscow. London: Hutchinson & Co., pp. 92-95.

> մտածվում և կառուցվում է բացառապես հանուն զոհի հարմարավետության և հանգստության: Կասկածից վեր է, որ նման խաբվածության ամենասովորական, տիպային օրինակը պարզ նրբանկատությունն է. մենք սովոր ենք մյուսից թաքցնել այն, ինչը կարող է առանց անհրաժեշտության նրան տհաճ զգացողություններ պարգևել: Վերջին տարիներին գաղտնիության ապահովման հետ կապված հետազոտական նախագծերի իրականացման կապակցությամբ (ԱՄՆ ազգային անվտանգության գործակալության մասնակցությամբ) զարգացում է ստացել պատերնալիստական խաբեության մեկ հետաքրքիր ձև: Տարբեր մասնագիտությունների աշխատակիցներին պարտավորեցնում են գաղտնի պահել այն ամենը, ինչ կապված է նրանց գործունեության հետ, թաքցնել տեղեկությունները նույնիսկ մտերիմներից: Նրանց պարտավորեցնում են գաղտնի պահել նախագծի ֆինանսավորման աղբյուրների, կոնկրետ մարդկանց, աշխատավայրի գտնվելու տեղի, աշխատակարգի և օգտագործվող տվյալների մասին տեղեկությունները: Արդյունքում նրանք ստիպված են գաղտնի պահել այն ամենը, ինչով զբաղվում են օրվա մեծ մասը: Եվ նրանք դա անում են այն համոզվածությամբ, որ եթե հարևաններն ու ծանոթները իմանային, թե ինչ է իրականում տեղի ունենում, ոչ ոք չէր նեղանա. հետին թվով այդ գաղտնիությունը նրան կներեին, քանի որ այն պահպանվում է հօգուտ բոլորի: <>

Ես դիտարկեցի կեղծարարության այն տեսակները, որոնք կարելի է անվանել բարեմիտ, ըստ էության անվնաս նրանց համար, ովքեր բախվել են դրանց՝ խաղարկությունը, խաբեությունը հանուն գիտության, ուսուցողական խաբեությունը, կենսական ստուգումը և պատերնալիստական կառույցը: Եթե վերջիններս ինչ-որ չափով դադարում են լինել անվնաս, ապա գոնե չի կարելի ասել, որ դրանք խախտում են հիմնարար իրավունքները:<> Ակնհայտ է, որ մենք դիտարկել ենք ոչ միայն ֆրեյմավորված գործունեության կառուցվածքը ու կազ-

մակերպումը, այլև քաղաքացիների բարոյական վերաբերմունքն այդ նախաձեռնությունների նկատմամբ։<>

Այժմ դիտարկենք շահադիտական կեղծարարությունները, որոնց պարագայում կողմերից մեկը մյուս կողմից ներգրավվում է կառուցման մեջ (construction)՝ ուղղակի վնաս հասցնելով նրա «մասնավոր հետաքրքրություններին» կամ նույնիսկ հասարակության հետաքրքրություններին: <>

Ես չեմ պատրաստվում այստեղ մանրամասնորեն կանգ առնել շահադիտական կեղծարարության բազմաթիվ ձևերի վրա: Գրականությունն այդ նմուշների մասին ծավալուն է և հայտնի: Ես ուզում եմ միայն մատնանշել վերջիններիս որոշ տարբերակիչ հատկանիշները: Պարզ է, որ կեղծարարությունները կարելի է բաժանել երկու տեսակի՝ օրենքի շրջանակներում գործող, նույնիսկ ի շահ օրենքի (երբ քննիչների խումբը հարցաքննության սխեման կառուցում է այնպես, որ հասնի խոստովանության), և օրենքը խախտող, որոնց պարագայում զոհերը կարող են հայցով դիմել դատարան: Ի տարբերություն բարեմիտ կեղծարարությունների՝ շահադիտականները կարող են հանգեցնել քրեական կամ քաղաքացիական հետապնդման՝ վստահությունը չարաշահելու, անբարեխիղճ գովազդի, սխալ մակնշման կամ խարդախության համար: Հետաքրքիր կլիներ բացատրել, թե ինչո՞ւ է մի առևտրային գործունեություն հետապնդվում օրենքով, իսկ մյուսը, որը նույնչափ խեղաթյուրում է իրականությունը, չի հետապնդվում, բայց դրա քննարկումը հանգեցնում է բարդ իրավական խնդիրների, որոնք ես անգամ հույս չունեմ լուծելու: <>

Գոյություն ունի թյուր պատկերացում (որը սակայն երբեք բացահայտ կերպով չի արտահայտվում), որ կառուցմանը մասնակցում են միայն երկու կողմեր՝ կեղծարարը, որն իրականացնում է մանիպուլյացիան և խաբեության զոհը, որի աշխարհը կեղծվում է: Սակայն, ըստ էության, հնարավոր է մեկ այլ տարբերակ, որը սովորաբար, թեև ոչ պարտադիր, վերաբերում է շահադիտական կեղծարարություններին: Կեղծարարը կարող է նախագծել երկրորդ կողմի կերպարը՝ նրա մասին սխալ պարկերացումներ ներշնչելով երրորդ կողմին: Ընդ որում,

երկրորդ կողմին՝ զոհին, ընդհանրապես կարելի է չընդգրկել գործունեության մեջ, և դա, ամենայն հավանականությամբ, իրականում տեղի չի էլ ունենա: Անհրաժեշտ է միայն մեկ բան՝ որպեսզի սխալ լույսի ներքո ցուցադրվող անձը երրորդ կողմին համոզիչ հերքում չներկայացնի: Այստեղ կարելի է խոսել « անուղղակի» կեղծարարության մասին, որը տարբերվում է «ուղիղ» կեղծարարությունից:<>

Հանցանշանների կեղծումը անուղղակի կեղծարարության ձևերից մեկն է: Մեկ այլ ձև է հատուկ պայմանների ստեղծումը, որոնցում զոհն իրեն կպահի այնպես, որ ինքն իրեն կվարկաբեկի (կամ այնպես, որ դժվար չի լինի ապացուցել, որ նա վարկաբեկված է), որից հետո արդեն հնարավոր կդառնա հանգամանորեն ամրագրել այդ վարքը: Երրորդ մեթոդը, որն ամենաշահավետն է, պարզապես վարկաբեկող փաստեր հրապարակելն է, քանի որ կարևոր է ոչ թե այն, թե արդյո՞ք զոհը կբռնվի վարկաբեկող արարք կատարելիս, այլ այն, որ կեղծարարների մեղադրանքները համոզիչ հնչեն:

Մինչ այժմ մենք դիտարկում էինք միայն մեկ միջոց, որի օգնությամբ մարդը կարող է կորցնել պատկերացումը իրականում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ավելին, մենք ենթադրում ենք, որ կուրացած մարդուն հեշտ է հիմարեցնել, ընդ որում, իր գործողությունները, որոնք սովորաբար հանգեցնում են աշխարհի իրատեսական պատկերի, միայն ուժեղացնում են խաբեությունը. առողջ բանականությունը հուշում է, որ կա ևս մեկ հնարավորություն, այն է՝ մարդը կարող է խաբվել այն պատճառով, որ «պարզապես սխալվել է»: Մենք ընդունում ենք նաև, որ մարդու զգայարանների գործունեությունը կարող է խոչընդոտել տեղի ունեցողի իրական պատկերը ստանալուն, և դա ներելի է միայն մի պայմանով, որ նրա սխալի մեջ մեղավոր է ինչ-որ յուրահատուկ հանգամանք, և որ մարդը բաց է մնում այն ուղղիչ տեղեկատվության համար, որը աշխարհը (ինչպես մենք կարծում ենք) շուտով կտրամադրի: (Իսկապես, այն համոզմունքը, որ ճշմարտությունը վաղ թե ուշ կբացվի, արևմտյան մարդու տիեզերաբանության հիմնարար տարրն է): Այստեղ կարելի է խոսել «պատրանքի» մասին: Այսպիսով, կան խաբեություններ և պատրանքներ: Եթե խաբեությունը

ներկայացվի որպես խաբեություն, որը դիտավորյալ ստեղծվում է նրանց կողմից, ովքեր չեն հավատում սեփական կեղծարարությանը, իսկ պատրանքը՝ որպես սխալ մեկնաբանության արդյունք, որը ոչ ոք միտումնավոր չի ներշնչել, և որի առաջացումը կարելի է բացատրել կոնկրետ հանգամանքներից ելնելով, ապա ինքնաներշնչանքը կամ հայլուցինացիան կարելի է սահմանել որպես մոլորություն, որը ակտիվորեն խրախուսվում է, եթե ոչ ամբողջությամբ արտադրվում հենց մոլորվածի կողմից:

ՀԵՐԲԵՐՏ ԲԼՈՒՄԵՐ

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԻՄՎՈԼԻԿ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ[130]

«Սիմվոլիկ փոխազդեցություն» եզրույթը վերաբերում է մարդկանց կողմից իրականացվող փոխազդեցության միանգամայն յուրահատուկ տեսակին: Այս փոխազդեցության առանձնահատկությունն այն է, որ մարդիկ մեկնաբանում կամ որոշում են միմյանց գործողությունները, այլ ոչ թե պարզապես արձագանքում են դրանց: Նրանց արձագանքները ուղղակիորեն չեն առաջանում մյուսի գործողություններից, այլ հիմնված են այն նշանակության վրա, որը նրանք տալիս են նման գործողություններին: Այսպիսով, մարդկանց փոխազդեցությունը միջնորդվում է սիմվոլների օգտագործմամբ, դրանց մեկնաբանմամբ կամ մյուսի գործողություններին նշանակություն տալով: Այս միջնորդումը համարժեք է խթանի և արձագանքի միջև մեկնաբանության գործընթացի ներառմանը:

Հասարակ ընդունումն այն բանի, որ մարդիկ մեկնաբանում են միմյանց գործողությունները՝ օգտագործելով դա որպես փոխազդեցությունն իրականացնելու միջոց, ներթափանցում է բազմաթիվ հետազոտողների հայացքների ու աշխատանքների մեջ: Այնուամենայնիվ, նրանցից միայն մի քանիսն են փորձել վերլուծել, թե ինչ է նշանակում նման մեկնաբանությունը մարդուն և մարդկանց հանրույթները հասկանալու համար: Շատերը, սովորաբար, պարզապես բավարարվում են այն խոստովանությամբ, որ հետազոտողը պետք է հաշվի առնի «մեկնաբանությունը», կամ այն, որ մշակութային նորմերը և արժեքները պետք է ներառվեն վերլուծության մեջ: Իմ կարծիքով, միայն Ջ. Հ. Միդն է փորձել խորապես հասկանալ, թե ինչ է նշանակում մեկնաբա-

[130] Блумер Г. (1984) Общество как символическая интеракция // Современная зарубежная социальная психология. М.: Издательство Московского университета, с. 173-179. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի*:

նության ակտը մարդուն, մարդկային գործողությունը և մարդկային հանրույթը հասկանալու համար: Նրա վերլուծության հիմնական դրույթներն այնքան սրաթափանց են, խորն ու կարևոր մարդկանց խմբի կյանքը հասկանալու համար, որ ես կցանկանայի պարզաբանել դրանք:

Միդի վերլուծության հիմնական գաղափարն այն է, որ մարդն ունի «անձնային Ես» (Self): Այս միտքը չպետք է անտեսվի որպես չափազանց բարդ կամ այնքան պարզ, որ ընկալվի իբրև ակնհայտ և ուշադրության ոչ արժանի: Հայտարարելով, որ մարդն օժտված է «անձնային Ես»-ով, Միդը նկատի է ունեցել հիմնականում այն, որ մարդը կարող է սեփական գործողությունների համար ծառայել իբրև օբյեկտ: Մարդը կարող է գործել իր հանդեպ այնպես, ինչպես ուրիշների հանդեպ: Մարդը բարկանում է ինքն իր վրա, ինքն իր հետ պայքարում է, հպարտանում է ինքն իրենով, վիճում է իր հետ, փորձում է աջակցել իր խիզախությանը, ասում է իրեն, որ նա պետք է «անի սա» կամ «չանի սա», նպատակներ է դնում իր առջև, փոխզիջումների է գնում ինքն իր հետ կամ ծրագրավորում է իր անելիքները. մեզանից յուրաքանչյուրին ծանոթ են նման գործողությունները: Այն, որ մարդը գործում է իր նկատմամբ այս կամ հարյուրավոր այլ ձևերով, հաստատվում է պարզ էմպիրիկ դիտարկմամբ:

Միդը դիտարկում է մարդու՝ իր նկատմամբ գործելու այս ունակությունը՝ որպես այն կենտրոնական մեխանիզմի օբյեկտ, որի օգնությամբ մարդը փոխազդում է շրջապատի հետ: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս մարդուն ձևավորել իրեն շրջապատող օբյեկտների արժեքը և այդպիսով կառավարել իր գործողությունները: Այն ամենը, ինչ մարդը գիտակցում է, նա նաև մտովի բնորոշում է՝ ժամացույցի տկտկոցը, դռան թակոցը, ընկերոջ տեսքը, մտերիմի դիտողությունը, խոստովանությունը այն բանի, որ նա պետք է կատարի խնդիրը, կամ նրա մրսածության պատճառի հասկացումը: Եվ հակառակը, այն ամենը, ինչ նա չի գիտակցում, նա, բնականաբար, չի կարող մտովի բնորոշել:

Մարդու գիտակից կյանքը առավոտյան արթնանալու պահից մինչ

երեկոյան քնելը ներկայացնում է այն իրերի արժեքների ձևավորման շարունակական հոսքը, որոնց հետ նա առնչվում է և որոնք հաշվի է առնում: Այսպիսով, մարդը, նրա մարմինը փոխազդում է աշխարհի հետ արժեքների ձևավորման մեխանիզմի միջոցով: Հենց այս մեխանիզմն է ընդգրկված ուրիշների գործողությունների մեկնաբանման մեջ: Մեկնաբանել մյուսի գործողությունը նշանակում է որոշել, թե որ գործողությունն ունի այս կամ այն նշանակությունը, այս կամ այն բնույթը:

Ըստ Միդի՝ արժեքների ձևավորումը առաջնային կարևորություն ունի: Այս կարևորությունը երկակի է: Նախ, ձևավորել ինչ-որ բանի իմաստը նշանակում է առանձնացնել այն շրջակա միջավայրից, վերջինիս իմաստ հաղորդել կամ Միդի տերմինաբանությամբ՝ վերածել այն օբյեկտի: Օբյեկտը, այսինքն՝ այն, ինչ մարդը մտովի բնորոշում է, տարբերվում է խթանից: Օբյեկտի տարբերությունը խթանից նրանում է, որ օբյեկտը չի կարող ուղղակիորեն ազդել անհատի վրա և չի կարող նույնականացվել անհատից անկախ: Օբյեկտի նշանակությունը տրվում է անհատի կողմից: Օբյեկտը անհատի գործելու դիսպոզիցիայի արդյունք է, այլ ոչ թե գործողություն առաջացնող խթան: Անհատը շրջապատված չէ արդեն իսկ գոյություն ունեցող օբյեկտներով, որոնք ազդում են նրա վրա և առաջ են բերում նրա գործողությունները: Իրականում անհատն ինքն է կառուցում իր օբյեկտները սեփական գործունեության հիման վրա: Իր անհամար գործողություններից յուրաքանչյուրում (փոքր, ինչպես, օրինակ՝ հագնվելը կամ մեծ, ինչպես, օրինակ՝ մասնագիտական կարիերայի պատրաստվելը) անհատն իր համար մտովի բնորոշում է տարբեր օբյեկտներ՝ տալով դրանց նշանակություն, սահմանելով վերջիններիս համապատասխանությունը իր գործողությանը և այս գնահատման հիման վրա որոշում կայացնելով: Ահա թե ինչ է նշանակում սիմվոլների հիմքով արվող մեկնաբանություն կամ գործողություն:

Երկրորդ կարևոր եզրահանգումը, որը կարելի է անել այն փաստից, որ մարդը ձևավորում է նշանակություններ, այն է, որ նրա գործողությունները կառուցվում են, այլ ոչ թե պարզապես ընթանում: Ան-

կախ նրանից, թե ինչ գործողություն է ձեռնարկել մարդը, նա միշտ մտովի բնորոշում է այն ամենը, ինչը պետք է հաշվի առնել այս գործողության ընթացքում: Նա պետք է նշի, թե ինչ է ուզում անել և ինչպես պետք է դա անի, նա պետք է նշի իր գործողությանը նպաստող և խոչընդոտող պայմանները, պետք է հաշվի առնի այն պահանջները, ակնկալիքները, արգելքները և սպառնալիքները, որոնք կարող են առաջանալ այն իրավիճակում, որում գործում է: Նրա գործողությունը կառուցվում է քայլ առ քայլ նշանակությունների ձևավորման գործընթացի միջոցով: Անհատը իր գործողությունը միավորում է մեկ ամբողջության մեջ, ինչպես նաև ղեկավարում է այն՝ հաշվի առնելով տարբեր բաներ ու մեկնաբանելով դրանց նշանակալիությունը: Չկա այնպիսի գիտակցված գործողություն, որի վերաբերյալ այս պնդումը արդարացի չլիներ:

Նշանակությունների ձևավորման միջոցով գործողությունների կառուցման գործընթացը չի տեղավորվում ընդունված հոգեբանական կատեգորիաներից որևէ մեկում: Այս գործընթացը տարբերվում է նրանից, ինչը կոչվում է «ego», ճիշտ այնպես, ինչպես այն տարբերվում է ցանկացած հայեցակարգից, որը դիտարկում է «անձնային Ես»-ը բաղկացուցիչ մասերի տեսանկյունից: Իմաստների ձևավորումը զարգացող հաղորդակցման գործընթաց է, որի ընթացքում անհատը նկատում է առարկան, գնահատում է այն, հաղորդում վերջինիս նշանակություն և որոշում է գործել տվյալ նշանակության հիման վրա: Մարդը դիմակայում է աշխարհին և այլ մարդկանց այս գործընթացի միջոցով, այլ ոչ թե պարզապես «էգո»-ի: Հաջորդ, նշանակությունների ձևավորման գործընթացը չի կարող դասվել այն արտաքին կամ ներքին ուժերի շարքին, որոնք, ինչպես ենթադրվում է, ազդեցություն են գործում անհատի վրա և խթանում նրա վարքը: Շրջակա միջավայրի ճնշումը, արտաքին խթանները, մտադրությունները, ցանկությունները, սոցիալական դիրքորոշումները, զգացմունքները, գաղափարները, այս ամենը չի բացատրում նշանակությունների ձևավորման գործընթացը: Անհատը ձևավորում է նշանակություն և մեկնաբանում է նման երևույթները՝ հաշվի առնելով նրան ներկայացվող սոցիալական պահանջները՝

նկատելով, որ բարկանում է, գիտակցելով, որ ցանկանում է գնել ինչ-որ բան, կամ գիտակցելով, որ նրան դուր չի գալիս ճաշել նրանց հետ, ում արհամարհում է. մարդը հստակ հասկանում է, որ մտածում է այս կամ այն բաները կատարելիս: Իր համար նման երևույթները մտովի բնորոշելով՝ անհատն իրեն հակադրում է վերջիններիս՝ ընդունելով կամ մերժելով դրանք կամ փոխելով դրանք՝ համաձայն այն բանի, թե ինչպես է նա սահմանում կամ մեկնաբանում այդ երևույթները: Հետևաբար մարդու վարքը շրջակա միջավայրի, խթանների, դրդապատճառների, շարժառիթների կամ գաղափարների ճնշման արդյունք չէ: Փոխարենը, մարդու վարքը կախված է նրանից, թե ինչպես է նա մեկնաբանում այդ բաները և վարվում դրանց հետ այն գործողության մեջ, որը կառուցում է: Մարդկային գործողությունը կառուցող նշանակությունների ձևավորման գործընթացը չի կարող բացատրվել այն գործոններով, որոնք նախորդել են գործողությանը: Արժեքների ձևավորման գործընթացը գոյություն ունի և պետք է ընդունվի ու ուսումնասիրվի որպես այդպիսին: Հենց այս գործընթացի միջոցով է, որ մարդը գիտակցված գործողություն է կառուցում:

Միդն ընդունում է, որ արժեքների ձևավորման գործընթացի միջոցով անհատի կողմից գործողության կառուցումը միշտ տեղի է ունենում սոցիալական համատեքստում: Քանի որ այս գործընթացը շատ կարևոր է հասկանալու համար սիմվոլիկ ինտերակցիոնիզմը, այն պետք է բացատրել ավելի մանրամասնորեն: Շատ էական է, որ խմբային գործողությունն ընդունում է գործողությունների անհատական գծերի փոխադարձ հարմարման ձև: Յուրաքանչյուր անհատ իր գործողությունը հարմարեցնում է ուրիշների գործողություններին՝ պարզելով, թե ինչ են նրանք անում կամ ինչ են պատրաստվում անել, այսինքն՝ բացատրելով իրենց գործողությունների նշանակությունը: Միդի համար դա տեղի է ունենում ուրիշների «դերի ընդունման» միջոցով՝ որևէ կոնկրետ մարդու դերի, կամ խմբի դերի (միդյան «ընդհանրացված ուրիշի»): Հաշվի առնելով այս դերերը՝ անհատը ձգտում է որոշել այլ մարդկանց մտադրությունները կամ գործողությունների ուղղությունները: Հենց այս կերպ է տեղի ունենում խմբային գործողու-

թյունը մարդկային հասարակության մեջ: Իմ կարծիքով, վերը նշվածը բնութագրում է Միդի վերլուծության հիմնական գծերը և սիմվոլիկ ինտերացոնիզմի հիմքերը: Դրանք ենթադրում են հետևյալը՝ մարդկային հասարակությունը բաղկացած է անհատներից, որոնք ունեն «անհատական Ես», այսինքն՝ իրենք են ձևավորում նշանակություններ: Անհատական գործողությունը գործողության կառուցումն է, այլ ոչ թե պարզապես կատարումը. այն իրականացվում է անհատի կողմից՝ գործողության իրավիճակի մեկնաբանության և գնահատման միջոցով: Խմբային կամ կոլեկտիվ գործողությունը բաղկացած է անհատական գործողությունների համաարեցումից, որը տեղի է ունենում մեկնաբանության և միմյանց գործողությունները հաշվի առնելու միջոցով: Այս դրույթները կարող են հեշտությամբ փորձարկվել գործնականում: Ես չգիտեմ մարդկանց խմբային գործողությունների որևէ դեպք, որոնց նկատմամբ այդ դրույթները կիրառելի չլինեին: Մարդու, հասարակության գրեթե բոլոր սոցիոլոգիական հայեցակարգերը հաշվի չեն առնում, որ հասարակությունը կազմող անհատներն ունեն «անհատական Ես» (վերը նշված իմաստով): Համապատասխանաբար, նման սոցիոլոգիական հասկացությունները մարդկային հասարակության մեջ անհատների սոցիալական գործողությունները չեն դիտարկում որպես մեկնաբանման գործընթացի միջոցով նրանց իսկ կողմից կառուցված: Փոխարենը, գործողությունը դիտվում է որպես որոշակի գործոնների արդյունք, այն գործոնների, որոնք ազդում են անհատների վրա և գործում են նրանց միջոցով: Եթե անգամ տեղ է հատկացվում «մեկնաբանությանը», ապա այն դիտվում է միայն որպես գործողությանը նախորդած այլ գործոնների (ինչպիսիք են՝ շարժառիթները) արտահայտություն, և, հետևաբար, մեկնաբանությունը՝ իբրև ինքնուրույն գործոն, չքանում է: Այսպիսով, մարդկանց սոցիալական գործողությունը դիտվում է որպես արտաքին հոսք կամ ազդող ուժերի արտահայտում, այլ ոչ թե՝ որպես մարդկանց կողմից կառուցվող գործողություն, որը հնարավոր է դառնում շնորհիվ այն իրավիճակների մեկնաբանման, որոնցում նրանք հայտնվում են:

Մարդկային հասարակությունը անհրաժեշտ է դիտարկել՝ որպես

գործող մարդկանցից բաղկացած, և հասարակության կյանքը պետք է դիտարկել՝ որպես այդ գործողություններից բաղկացած: Գործող միավորներ կարող են լինել առանձին անհատները, կոլեկտիվները, որոնց անդամները գործում են համատեղ, կամ խմբի անունից գործող կազմակերպությունները: Սրա օրինակ են առանձին գնորդները շուկայում, թատերախումբը կամ միսիոներների խումբը, գործարար ձեռնարկությունը կամ ազգային մասնագիտական ասոցիացիան: Անշուշտ, հասարակությունը կարելի է դիտարկել նաև այլ կերպ. վերջինիս պատրաղիր չէ մոտենալ միայն այն կազմող գործող միավորների դիտանկյունից: Ես պարզապես ուզում եմ շեշտել, որ կոնկրետ կամ էմպիրիկ գործունեության առնչությամբ մարդկային հասարակությունը պետք է անպայման դիտարկվի գործող միավորների դիտանկյունից, որոնք և կազմում են այն: Ես կհավելեի նաև, որ մարդկային հասարակության ցանկացած մոդել, որը հավակնում է իրատեսական վերլուծության, պետք է հարգի այն էմպիրիկ խոստովանությունը, որ մարդկային հասարակությունը բաղկացած է գործող միավորներից:

Համապատասխան հարգանք պետք է դրսևորվի նաև այն պայմանների նկատմամբ, որոնցում նման միավորները գործում են: Հիմնական պայմաններից մեկն այն է, որ գործողությունը տեղի է ունենում որոշակի իրավիճակում և այդ իրավիճակի նկատմամբ: Ինչպիսին էլ լինի գործող միավորը՝ անհատ, ընտանիք, դպրոց, եկեղեցի, գործարար ընկերություն, արհմիություն, օրենսդիր մարմին և այլն, ցանկացած կոնկրետ գործողություն ձևավորվում է այն իրավիճակի լույսի ներքո, որում այն տեղի է ունենում: Սա հանգեցնում է երկրորդ հիմնական պայմանի ճանաչմանը, այն է՝ գործողությունը ձևավորվում և կառուցվում է իրավիճակի մեկնաբանության միջոցով: Գործող միավորը պետք է անպայման նույնականացնի այն ամենը, ինչը պետք է հաշվի առնի, այն է՝ խնդիրները, հնարավորությունները, խոչընդոտները, միջոցները, պահանջները, անհարմարությունները, վտանգները և այլն. այն պետք է դրանք որոշակիորեն գնահատի և որոշում կայացնի այդ գնահատման հիման վրա: Մեկնաբանել կարող է միայն այն անհատը, որը կառավարում է իր գործողությունները, այն կոլեկտիվը, որում

գործողությունները համաձայնեցված են և խմբի կամ կազմակերպության անունից գործող «ագենտը»: Խմբի կյանքը բաղկացած է այնպիսի գործող միավորներից, որոնք զարգացնում են գործողությունները. վերջիններս կոչված են հաղթահարելու այն իրավիճակները, որոնցում այդ գործող միավորները հայտնվում են:

Սովորաբար իրավիճակների մեծ մասը, որոնց բախվում են մարդիկ տրված հասարակության մեջ, սահմանվում կամ «կառուցվածքայնացվում» են միևնույն կերպ: Նախորդող ինտերակցիաների միջոցով վերջիններս զարգանում են և ձեռք են բերում ընդհանուր ըմբռնում կամ սահմանում, ինչը թույլ է տալիս պատկերացնել, թե ինչպես պետք է գործել այս կամ այն իրավիճակում: Այս ընդհանուր սահմանումները հնարավորություն են տալիս մարդկանց գործել նույն կերպ: Սովորաբար նման իրավիճակներում մարդկանց կրկնվող վարքը չպետք է հետազոտողին հանգեցնի մոլորության, որ այստեղ մեկնաբանության գործընթաց չկա: Ընդհակառակը, նույնիսկ եթե մասնակից մարդկանց գործողությունները նույնն են, այդ գործողությունները կառուցվում են նրանց կողմից՝ մեկնաբանության գործընթացի միջոցով: Քանի որ ձեռքի տակ կան իրավիճակների պատրաստի և ընդունված սահմանումներ, ապա գործողությունների ղեկավարումը, դրանց կազմակերպումը մարդկանցից ավելի մեծ լարվածություն չեն պահանջում: Սակայն շատ այլ իրավիճակներ չեն կարող նույն կերպ որոշվել մասնակիցների կողմից: Այդ դեպքում նրանց գործողությունների գծերը չեն համաձայնեցվում, և կոլեկտիվ գործողությունը արգելափակվում է: Անհրաժեշտ է զարգացնել մեկնաբանությունները և մշակել մասնակիցների արդյունավետ փոխադարձ հարմարումը: Նման անորոշ իրավիճակների դեպքում անհրաժեշտ է առանձնացնել և ուսումնասիրել սահմանումների առաջացման գործընթացը:

Մինչդեռ սոցիոլոգները և մարդկային հասարակության հետազոտողները իրենց ուշադրությունը կենտրոնացնում են գործող միավորների վարքի վրա, սիմվոլիկ ինտերցիոնիզմը «պահանջում է» հետազոտողից, որպեսզի նա հասկանա մեկնաբանության գործընթացը, որի միջոցով նրանք կառուցում են իրենց գործողությունները: Այս գործըն-

թացը չի կարելի հասկանալ միայն անդրադառնալով դրան նախորդող պայմաններին: Նախորդող պայմանները օգնում են հասկանալ այդ գործընթացն այնքանով, որքանով ընդգրկվում են դրանում, բայց ինչպես արդեն նշեցինք, չեն կազմում բուն գործընթացը: Այս գործընթացը չի կարելի նաև հասկանալ՝ դուրս բերելով դրա բնույթը բաց գործողությունից, որը այդ գործընթացի արդյունքն է: Այս գործընթացը հասկանալու համար հետազոտողը պետք է ընդունի այն գործող միավորի դերը, որի վարքը ուսումնասիրում է: Քանի դեռ գործող միավորն իրականացնում է մեկնաբանություն, նշանակությունների ձևավորման, օբյեկտների գնահատման, որոշումների ընդունման միջոցով, գործընթացը պետք է դիտարկվի գործող միավորի տեսանկյունից: Փորձելով հասկանալ մեկնաբանման գործընթացը «օբյեկտիվ» դիտորդի դիրքից և հրաժարվելով ընդունել գործող միավորի դերը՝ հանգում ենք վատթարագույն սուբյեկտիվիզմի դրսևորման ռիսկի, քանի դեռ այդ դեպքում օբյեկտիվ դիտորդը հակված է մեկնաբանման գործընթացում ներառել իր սեփական ենթադրությունները, այլ ոչ թե հասկանալ գործընթացը այնպես, ինչպես որ վերջինս տեղի է ունենում գործող միավորի մոտ: Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի տեսանկյունից սոցիալական կազմակերպությունը մի կառուցվածք է, որի ներսում գործող միավորները զարգացնում են իրենց գործողությունները: Կառուցվածքային առանձնահատկությունները՝ «մշակույթը», «սոցիալական համակարգը», «սոցիալական շերտավորումը» կամ «սոցիալական դերերը», պայմաններ են ստեղծում իրենց գործողությունների համար, բայց չեն որոշում դրանք: Մարդիկ, այսինքն՝ գործող միավորները, չեն գործում մշակույթի, սոցիալական կառուցվածքի և այլնի հանդեպ. նրանք գործում են իրավիճակների հանդեպ:

Սոցիալական կազմակերպությունը գործողության մեջ է մտնում միայն այնքանով, որքանով այն ստեղծում է իրավիճակներ, որոնցում մարդիկ գործում են, որքանով այն տրամադրում է սիմվոլների հավաքակազմեր, որոնք մարդիկ օգտագործում են իրավիճակների մեկնաբանություններում: Սոցիալական կազմակերպության ազդեցության այս երկու ձևերը կարևոր են: Հաստատված, կայունացված հասարա-

կություններում, ինչպիսիք են մեկուսացված պարզունակ ցեղերը կամ գյուղացիական համայնքները, այս ազդեցությունը անկասկած խորն է: Այլ մարդկային հասարակությունների դեպքում, հատկապես՝ ժամանակակից, որոնցում նոր իրավիճակների հոսքեր են առաջանում, իսկ հին իրավիճակները դառնում են անկայուն, կազմակերպության ազդեցությունը նվազում է: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ իրավիճակներում գործող միավորի առջև ծառացած ամենակարևոր տարրը գործող այլ միավորների գործողություններն են: Ժամանակակից հասարակության մեջ գործողությունների փոխհատվող գծերի աճի հետ մեկտեղ սովորական է այն իրավիճակների առաջացումը, որոնցում մասնակիցների գործողությունները մինչ այդ կարգավորված և ստանդարտացված չեն եղել: Այս դեպքում առկա սոցիալական կազմակերպությունը իրավիճակներ չի ձևավորում: Համապատասխանաբար, նման իրավիճակներում գործող միավորների կողմից օգտագործվող սիմվոլները կամ մեկնաբանման միջոցները կարող են զգալիորեն տարբեր լինել: Ուստի սոցիալական գործողությունը կարող է դուրս գալ գոյություն ունեցող կազմակերպության շրջանակից վերջինիս ցանկացած կառուցվածքային բաղադրիչների ներսում: Մարդկային հասարակության կազմակերպումը չի կարելի նույնականացնել իր գործող միավորների կողմից օգտագործվող մեկնաբանության գործընթացի հետ. թեև կազմակերպությունը ազդում է այդ գործընթացի վրա, այն չի ընդգրկում այդ գործընթացը: Ես ուզում եմ ընդգծել, որ ցանկացած սոցիալական փոփոխություն, քանի դեռ այն ներառում է փոփոխություններ մարդկային գործողություններում, անխուսափելիորեն միջնորդվում է փոփոխվող պայմանների մեջ մտնող մարդկանց մեկնաբանությամբ: Այդ փոփոխությունը դրսևորվում է նոր իրավիճակների ձևով, որոնցում մարդիկ պետք է կառուցեն գործողությունների նոր ձևեր:

Նոր իրավիճակների մեկնաբանումները կանխորոշված չեն իրավիճակներին նախորդող պայմաններով, այլ կախված են այն բանից, թե ինչն է հաշվի առնվում և գնահատվում կոնկրետ իրավիճակներում, որոնցում ձևավորվում է վարքը: Մեկնաբանություններում միանգամայն հնարավոր են տարբեր տատանումներ, քանի որ գործող միա-

վորները կոնկրետ իրավիճակներում ուշադրություն են դարձնում տարբեր օբյեկտներին կամ տարբեր կշիռներ են տալիս տարբեր օբյեկտներին, որոնք նկատում կամ միավորում են տարբեր կերպ: Սոցիալական փոփոխությունների խնդրին վերաբերող տեսական դրույթներում խելամիտ կլինի ընդունել, որ ցանկացած սոցիալական փոփոխություն միջնորդվում է գործող միավորներով, որոնք մեկնաբանում են իրենց առջև ծառացած իրավիճակները:

ՌԵՆԴԱԼ ՔՈԼԻՆԶ

# ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՇՂԹԱՆԵՐԸ[131]

**Երկկողմանի կենտրոնացում. հուզական ոգևորության մոդելը**

Փոխազդեցության ծիսակարգի կենտրոնում մասնակիցների ուշադրության երկկողմանի կենտրոնացման զարգացման և միմյանց մարմնական միկրո-ռիթմերով ու զգացմունքներով տարվելու գործընթացն է: Ծիսակարգերը կառուցակցվում են ինտենսիվության տարբեր մակարդակներում գտնվող բաղադրիչների համակցությունից՝ որպես վերջնարդյունք ունենալով համերաշխության, սիմվոլիզմի և անհատական հուզական էներգիայի հետևանքները: Սույն մոդելը մեզ թույլ է տալիս մանրազնին քննել վերոհիշյալ գործընթացի յուրաքանչյուր հատված: Մենք կտեսնենք, թե ինչ պատահականություններ և փոփոխություններ են առաջանում յուրաքանչյուր հատվածում, ցույց կտանք վերջիններիս՝ վերջնարդյունքների վրա ունեցած ազդեցությունները: Ես առաջ կքաշեմ մի տեսություն առ այն, թե ինչպես են փոխազդեցության ծիսակարգերի տարբերակներն արտադրում հասարակական կյանքի անհամար տարատեսակներ:

Իբրև ցուցադրում այն բանի, թե ինչ կարող ենք ստանալ տեսագրությունների տեսական վերլուծություններից, ես կներկայացնեմ Նյու Յորք քաղաքի վրա 2001 թ. սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած հարձակման իրադարձության մեջ ներգրավված հրշեջների և փողոցային ամբոխի մասին պատմող փաստավավերագրական ֆիլմի ուսումնասիրության արդյունքները: Այս հում, չմշակված փաստերը լավագույնս ներկայացնում են, թե ինչպես են փոխազդեցության ծիսա-

[131] Collins R (2004) Interaction Ritual Chains. Princeton, N.J.: Princeton University Press, ch. 2 'The Mutual-Focus / Emotional-Entrainment Model', pp. 47-95. *Թարգմանությունը՝ Գայանե Միքայելյանի*:

կարգերի որոշ պայմաններ հանգեցնում լոկ ժամանակավոր, մյուսներն էլ՝ երկարաժամկետ ազդեցությունների:

### Ծիսակարգի բաղադրիչները, գործընթացները և վերջնարդյունքները

Պատկեր 1-ում փոխազդեցության ծիսակարգերը պատկերվում են որպես գործընթացներ՝ պատճառական կապերով և նրանց միջև առկա հետադարձ հանգույցներով: Ամեն բան մոդելում փոփոխական է:

Փոխազդեցության ծիսակարգը բաղկացած է չորս գլխավոր բաղադրիչներից կամ նախապայմաններից՝

1. Երկու կամ ավելի մարդիկ ֆիզիկապես համախմբված են միևնույն վայրում այնպես, որ իրենց ֆիզիկական ներկայությամբ փոխադարձաբար ազդում են միմյանց վրա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ փաստը վերջիններիս ուշադրության կենտրոնո՞ւմ է, թե՞ ոչ:
2. Կողմնակի անձանց և համախմբվածների միջև առկա են սահմաններ այնպես, որ համակազմի մաս կազմող յուրաքանչյուր ոք կարող է հեշտությամբ սահմանել, թե ովքեր են ներառված համախմբում և ովքեր համախմբի մաս չեն կազմում:
3. Մարդիկ կենտրոնացնում են իրենց ուշադրությունը ընդհանուր օբյեկտի կամ գործունեության վրա և սույն կենտրոնացումը միմյանց միջև հաղորդակցելով՝ դառնում են փոխադարձաբար իրազեկ միմյանց ուշադրության ուղղվածությունների վերաբերյալ:
4. Նրանք կիսում են ընդհանուր տրամադրություն կամ ընդհանուր հուզական փորձառություն:

*Պատկեր 1.*

**Փոխազդեցության ծիսակարգը**




Այս բաղադրիչները սնում են միմյանց: Հարկ է նշել, որ վերոնշյալ կետերից երրորդը (ուշադրության երկկողմանի կենտրոնացումը) և չորրորդը (ընդհանուր տրամադրվածությունը) փոխադարձաբար ուժեղացնում են միմյանց: Սկսած այն պահից, երբ մարդկանց ուշադրության կենտրոնացումը ընդհանուր օբյեկտի կամ գործունեության վրա դառնում է գերակա, և վերջիններս առավել մեծ չափով են իրազեկվում միմյանց գործողությունների և զգացմունքների վերաբերյալ, նրանք սկսում են առավել ինտենսիվ կերպով կիսել թե՛ ընդհանուր տրամադրությունը ու թե՛ հուզական փորձառությունը: Սույն երևույթի դրսևորումները կարելի է տեսնել, օրինակ, թաղման արարողությունների ժամանակ, երբ հոգևոր ծառայություն իրականացնողները սկսում են առավել սրտացավ դառնալ, քան նախքան արարողության սկսվելն էին: Նույնը տեղի է ունենում նաև փոքր ծավալ ու մասշտաբ ունեցող հաղորդակցությունների ժամանակ (միկրո-էմպիրիկ վկայությունները, սակայն կքննենք ավելի ուշ): Այն, ինչ Դյուրկհեյմը անվանում էր

կոլեկտիվ գիտակցություն, ոչ այլ ինչ է, քան միջսուբյեկտիվության դրսևորումների նմանօրինակ միկրո-իրավիճակային արտադրանք:

Կարելի է առանձնացնել փոխազդեցության ծիսակարգերի չորս գլխավոր վերջնարդյունքներ.

1. Խմբային համերաշխությունը, անդամակցության զգացողությունը:
2. Անձի ներսում առկա հուզական էներգիան՝ ինքնավստահության, հպարտության, ուժի, ոգևորության և գործնական նախաձեռնողականության զգացումները:
3. Խումբը ներկայացնող սիմվոլները (բառեր, ժեստեր, պատկերներ), որոնք անդամների կողմից ընկալվում են իբրև նրանց (որպես կոլեկտիվի) հետ ասոցիացիաներ: Սրանք Դյուրքհեյմի «սրբազան առարկաներ» են[132]: «Խմբի զգացմունքներով լցված անձինք մեծ հարգանքով են վերաբերվում սիմվոլներին և պաշտպանում են դրանք ուրիշների և նույնիսկ սեփական խմբի դավաճան անդամների անարգանքից:
4. Բարոյականության և իրավացիության զգացում. այն ինչը վնասում է խմբին, հակասում վերջինիս հետ առնչվող սիմվոլիկային և ներխմբային ոգուն, դուրս է բարոյականության սահմաններից:

### Ֆորմալ ծիսակարգեր և բնական ծիսակարգեր

Ակներև է այն, որ վերոնշյալ շարադրանքում պակասում է «ծիսակարգի» կիրառական սահմանումը: Ինչպես ընդունված է համարել, ծիսակարգը ֆորմալ արարողություն է, որն ուղեկցվում է կարծրատիպացված գործողությունների (ավանդական ժեստեր, ավանդական հանդերձանք և այլն) հերթագայությամբ: Ինչպես կարելի է տեսնել կրոնական ծիսակատարությունների Դյուրկհեյմյան վերլուծություններում, գործողությունների ֆորմալությունը և կարծրատիպայնությունը վճռորոշ բաղադրիչներ չեն. դրանք ընդամենը նպաստում են միջ-

[132] Տե՛ս Durkheim, E. (1965) The Elementary Forms of Religious Life. New York: Free Press.

սուբյեկտիվության և ընդհանուր զգացողությունների ձևավորման և պահպանման գործընթացներին: Սույն դատողության պատկերավոր արտացոլումը կարելի է գտնել արդեն իսկ ներկայացված պատկեր 1-ի ձախակողմյան հատվածում: Կարծրատիպացված բանաձևերը կարող են հանգեցնել սոցիալապես հաջողված ծիսակարգի, իհարկե, մեզ արդեն հայտնի բաղադրիչների առկայությամբ միայն: Առանց վերջիններիս՝ ծիսակարգը լոկ ֆորմալ, նույնիսկ կարելի է ասել՝ մեռած արարողակարգ է:

Ուշադրության երկկողմանի կենտրոնացումը ծիսակարգի վճռորոշ բաղադրիչ է, բայց պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերջինս կարող է երևան գալ ինքնաբուխ և տարերային եղանակով՝ առանց վերջինիս իրականացման ակներևության: Դրա փայլուն օրինակ են Գոֆմանի առօրեական փոխազդեցության ծիսակարգերը[133]: Գոֆմանյան օրինակները դուրս են բերվում փոքրամասշտաբ, վաղանցիկ և կարճատև սոցիալական փոխազդեցություններից: Սակայն տարբերայնության դրսևորումները նկատելի են նաև խոշորամասշտաբ հասարակական խմբերում, օրինակ, ինչպես Դյուրկհեյմն է ցույց տալիս, կրոնական ծիսակատարություններում իրենց դրսևորումներն են ունենում քաղաքական և ռազմական իրադարձությունները[134]: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ ամբոխների համախմբումը հաճախ նոր ծիսակարգերի բարելավմանն էր միտված: Արդյունքում ստեղծվում էին նոր սիմվոլներ, և այդ համակազմերը, չունենալով կարծրատիպացված գործողությունների հենք, հաջողվում էին՝ երկկողմանի կենտրոնացման բարձր աստիճանի և ընդհանուր զգացմունքների շնորհիվ:

Հետայսու առանց ֆորմալ, կարծրատիպացված ընթացակարգերի փոխազդեցությունները կանվանենք «բնական ծիսակարգեր»:<>

---

133 Տե՛ս Goffman, E. (1967) Interaction Ritual. New York: Doubleday; Goffman, E. (1974) Frame Analysis: An Essay on the Organization of Experience. New York: Harper and Row.

134 Տե՛ս Durkheim, E., Mauss, M. (1963) Primitive Classification. Chicago: University of Chicago Press; Durkheim, E. (1965) The Elementary Forms of Religious Life. New York: Free Press.

**Անհրաժե՞շտ է արդյոք ֆիզիկական ներկայությունը**

Ծիսակարգը, ըստ էության, ֆիզիկական գործընթաց է: Մարդկանց մարմինների տեղաշարժը միևնույն ուղղությամբ հիմք է ստեղծում ծիսակարգային գործընթացի մեկնարկի համար: Երբ մարդկանց մարմինները մոտ են միմյանց, առկա է հուզմունքի, ոգևորության կամ գոնե պաշտպանվածության զգացում: Գոֆմանի պնդմամբ, անգամ «երբ իրադարձություններով լի ոչինչ տեղի չի ունենում, մարդիկ միմյանց ներկայության պարագայում միևնույն է հետևում են միմյանց և պահում իրենց այնպես, որ իրենք էլ հետևելի դառնան»[135]: Համաձայն էվոլյուցիոն տեսության՝ թե՛ մարդիկ ու թե՛ կենդանիները ուշադրություն են դարձնում միմյանց՝ պայմանավորված նյարդային համակարգի էվոլյուցիայով:

Արդի ժամանակներում մենք հաղորդակցվում ենք՝ միմյանցից երկար հեռավորության վրա գտնվելով: Հաղորդակցման միջոցները այս դեպքում տարբեր են՝ հեռախոսներից մինչև տեսահոլովակների հեռարձակումներ՝ հեռուստացույցի կամ համակարգչի էկրանով: Մի՞թե հնարավոր չէ կիսվող ուշադրություն կամ զգամունքային տարվածություն առաջացնել հաղորդակցության այս միջոցներով:

Նախ և առաջ, կարո՞ղ են արդյոք ֆորմալ ծիսակարգերը, ինչպիսիք են, օրինակ՝ հարսանեկան կամ թաղման արարողությունները, անցկացվել հեռախոսով: Գաղափարն անգամ առաջին հայացքից տեղին չէ: Ի՞նչը կարող է պակասել: Հետադարձ կապի, այլոց ներկայությունը տեսնելու և այլոց կողմից նկատվելու հնարավորության բացակայությունը, անշուշտ, կբացառեն նաև այս տիպի արարողություններում առհասարակ միմյանց նկատմամբ դրսևորվող հարգանքի զգացումը: Առանց ֆիզիկական ներկայության՝ անհնար կամ առնվազն բավական բարդ է խմբին մասնակցությունը ցույց տալը, իբրև խմբի անդամ ինքնանույնականացվելը, ինչպես նաև հուզական կապը ապահովելը:

Վիզուալ ձևը ավելի լավ չէ՞: Անշուշտ, լիովին հնարավոր է հեռուստատեսությամբ հարսանիքի կամ թաղման արարողություն դիտելը,

[135] Goffman, E. (1981) Forms of Talk. Philadelphia: University of Pennsylvania Press, p. 103.

հատկապես, երբ խոսքը հանրաճանաչ անձանց է վերաբերում: Օրինակ՝ Նյու Յորք քաղաքի վրա 2001 թ. սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած հարձակման իրադարձության մեջ ներգրավված հրշեջների, փողոցային ամբոխի և հատկապես անմեղ զոհերի մասին պատմող փաստավավերագրական ֆիլմերը և հեռուստատեսային եթեր հեռարձակվող հիշողությունները երբեմն իսկապես հուզիչ էին: Այս երկար հեռավորության վրա անցկացվող ծիսակարգերը կարող են զգալականորեն մատչելի դարձնել ընդհանուր զգացմունքայնությունը, համերաշխությունը և հարգանքը սիմվոլիզմի հանդեպ: Իսկ ի՞նչն է ապահովում նման ազդեցությունները: Նախ և առաջ, հիմնական ազդեցությունը բխում է տեսախցիկի օգնությամբ ամբոխի անդամների դեմքերը մոտիկից լուսա և տեսանկարահանելու հնարավորությունից: Այստեղ հեռուստացույցը ապահովում է ֆիզիկական հետադարձ կապի առկայությունը՝ հնարավորություն ընձեռելով լսարանին տեսնել ամբոխի անդամներին այնպես, ինչպես իրենք են իրենց տեսնում: Այստեղ հատկապես կարևոր են արարողության ամենահուզական պահերի վրա ուշադրության կենտրոնացումները: Կարող ենք արդարացիորեն նկատել, որ եթե տեսախցիկը ամրագրի կատարվածի հետ կապ չունեցող, ընդհանուր հուզական կապը չկիսող, ձանձրացած և արարողության մեջ չընդգրկված անձանց, լսարանը կզգա առկա հեռավորությունը, ինչպես նաև արարողությունը կհամարի ձախողված:

*Պատկեր 2.*
*Հաղթանակի տոնումը ծիսականացված մարմնական կոնտակտի միջոցով: Ամերիկյան և ռուսական զորքերը հանդիպում են Գերմանիայում (Ապրիլ, 1945):*



Հեռուստատեսությունը պատկերի և ձայնի համադրություն է: Փորձեք անջատել հեռուստացույցի ձայնը ծիսակարգային իրադարձություն (օրինակ՝ սպորտային խաղ) դիտելիս կամ հեռացեք հեռուստացույցի էկրանից՝ ձայնը միացրած թողնելով: Եթե փորձենք հիպոթետիկ կերպով համադրել փորձարկման արդյունքները, ապա կտեսնենք, որ ներգրավվածության ամենաուժեղ զգացումը առկա է լինելու երկրորդ դեպքում: Ամբոխի ծիծաղից պորթկալը, սկսվելիք արարողության սպասումը բացակա դիտողին կվերադարձնեն հեռուստացույցի էկրանի մոտ: Այդ իմաստով առաջին դեպքում վճռորոշ դերակատարում կունենա ձայնի, մասնավորապես՝ հեռուստամեկնաբանի (տվյալ դեպքում՝ մարզական մեկնաբանի) փոխանցած տեղեկատվության «բացակայությունը», և սա անհամար օրինակներից միայն մեկն է:

Ծիսակարգին ֆիզիկական ներկայությանը նպաստելու մեկ այլ դիտարկման օրինակ է սպորտային կամ այլ բնույթի իրադարձություն-

ներին ֆիզիկապես ներկա գտնվելու չմարող հակումը՝ չնայած հեռուս-
տատեսային հեռարձակմանը, թեև որոշ դեպքերում այն առավել ար-
դյունավետ է, քանզի իրադարձության համապարփակ և ամբողջական
պատկեր է ապահովում: Եթե տոմսերը չես կարողանում ձեռք բերել,
հարմար է լինում հեռուստատեսությամբ հետևել խաղին. այս դեպքում
հանդիսատեսի սպասումները կապված են նրա հետ, թե որքան հու-
զական ինտենսիվություն կստեղծի խաղը հանդիսատեսի շրջանում:
Խաղը հավաքում է երկրպագուների խումբ՝ փոքր բազմություն, որը
հենց իր արձագանքի միջոցով ապահովում է հետաքրքրության ձևա-
վորումը: Նույնիսկ սովորական և լիգայի համար ոչ կարևոր խաղերին
այցելելու հաճույքը ստեղծվում է նրանից, որ հանրույթն ինքն է կառու-
ցում սպասումները, անհամբերություն է դրսևորում և կիսվում է այդ
տրամադրությամբ միջոցառման ժամանակ: Խաղերը ծիսակարգեր են,
որոնք հորինված ու մտածված են ողբերգական, ինչպես նաև հաղթա-
կան իրավիճակներ ստեղծելու համար: Խաղում հաղթելու չափանիշ-
ները և հաշվի վերաբերյալ կանոնները վերամշակվել են տարիների
ընթացքում այն պայմանով, որ ստեղծվի «ավելի լավ խաղ», այսինքն՝
այն, ինչը կապահովի կոլեկտիվի ընդանուր հուզական պահերը:
Սպորտային սիմվոլները դառնում են սրբազան օբյեկտներ, որոնք ըն-
դունում են և որոնց վերաբերվում են հարգանքով: Սպորտում հայտնի
դեմքերը դառնում են սրբազան օբյեկտներ նույն կերպ, ինչպես որ
Դյուրկհեյմն է բացատրում քաղաքական լիդերի սիմվոլիկան այն ամ-
բոխի համար, որի ուշադրության կենտրոնում նա գտնվում է: Խաղում
տրված մրցակցային կանոններով հասնում ես հաղթանակի կամ ցույց
ես տալիս մարզական ունակություններդ, ինչը խաղի մակերեսային
բովանդակությունն է միայն: Այն, ինչն իրապես մոտիվացնում է մարդ-
կանց նայել խաղը, զգացումն է, որ նրանք ներկա կգտնվեն հաջողված
ծիսակարգին: Հաջողված, քանի որ խաղը մտածված է այնպես, որ ծի-
սակարգային բոլոր բաղադրիչները ներառված լինեն ամենաբարձր
մակարդակով, մասնավորապես զգացմունքայնությունը, ինչը առավել
ուժգնացնում է բազմության մեջ ֆիզիկական ներկայութան միջոցով
փոխազդումը:<>

Սպորտային իրադարձությունները չունեն այն նույն կարգավիճակը, ինչպես այլ ֆորմալ ծիսակարգերը, բայց ընդունվում են որպես խաղային ձևեր: Այնուամենայնիվ, դրանք հաջողությամբ ապահովում են բարձր ծիսակարգային պրակտիկա, և շատերը նախընտրում են խաղային ձևերը կրոնական ծեսերից: Խաղերը բնական ծիսակարգեր են, քանի որ դրանք անգիտակցաբար դուրս են բերում հաջողված ծիսակարգի համար անհրաժեշտ բաղկացուցիչները: Սակայն դրանք պլանավորված են և կանխագիտված (քանի որ օգտագործում են ծիսակարգային տեխնոլոգիան՝ ստեղծելու համար այն, ինչը կբերի արհեստական ծիսակարգային ազդեցություն), միավորում են համայնքը, որը չունի այլ նպատակ կամ համաձայնություն, որն ինքնաբերաբար ապահովվում է ծիսակարգի հուզական ազդեցությամբ:

*Պատկեր 3.*
*Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի նշանավորումը (14 օգոստոսի, 1945)*



Տվյալ մեխանիզմը աշխատում է նաև ժամանցի այլ ձևերում: Համերգներին գնալը ստեղծում է պատկանելության զգացում: Արտիստներն ունեն սրբազան օբյեկտի ստատուս, նրանց երկրպագուները հիացմունք են ապրում իրենց մոտիկ լինելու զգացումից, նույնիսկ եթե բեմից շատ հեռու են կանգնած: Փոփ համերգի հիմնական փորձառությունը ուրիշ երկրպագուների տրամադրությունն է. սա մարմնական հետադարձ կապի և դրա բոլոր մոդալությունների միջոցով զգացմունքների կուտակման դասագրքային օրինակ է: Նույնը կիրառվում է դասական երաժշտության համերգին ներկա լինելու ժամանակ, թեպետ տրամադրությունը ավելի հանգիստ է, քանի որ առկա է սոցիալդասային և մթնոլորտային տարբերություն: Այս դեպքում նույնպես առկա է յուրահատուկ իրադարձությանը ներկա լինելու զգացումը: Լռությունը մինչ նվագախմբի սկսելը, կոլեկտիվ կենտրոնացումը երաժիշտների վրա, երաժշտության ունկնդրումը օպերայում ավելի նշանակալի են դարձնում, քան նույնը տանը անելը: Հարցը միայն այն չէ, որ քեզ կտեսնեն բարձր մշակութային իրադարձության ժամանակ (այժմ տվյալ հանրույթները անանուն են՝ ի տարբերություն նախկինում օպերա այցելող բարձր ստատուսային համայքների, որոնք միմյանց ճանաչում էին), այլ այն սուբյեկտիվ զգացմունքները, որոնք տալիս է ծիսակարգային պրակտիկան: Վարկածն այն է, որ մասնակիցները նույնականացնում են իրենց բարձր մշակույթին, եթե հանրույթը ներկայացմանը արձագանքում է բարձր ոգևորվածությամբ, և որ ծիսակարգային ինտենսիվության ազդեցությունը ավելի ուժեղ է, քան այլ մարդկանց կողմից ճանաչված լինելու ազդեցությունը:

*Պատկեր 4.*
*Հաղթանակի ծիսական խառնաշփոթը.*
*հոկեյի դպրոցական առաջնություն (2002)*




Համերգները, որոնք ցուցադրվում են հեռուստատեսությամբ և հեռարձակվում են ռադիոյով, ունեն թույլ ազդեցություն: Նույնը տեղի է ունենում քաղաքական և կրոնական հավաքների ժամանակ: Քաղաքական գործիչների ելույթները հեռարձակվում են ռադիոյով և հեռուստատեսությամբ, այնուամենայնիվ, նրանց մոլի հետևորդներն ուզում են ֆիզիկապես ներկա լինել իրադարձությանը: Վարկածն այն է, որ մասնակցելով քաղաքական իրադարձություններին՝ անհատի մեջ ուժգնանում է նախապատվությունը այն պարագայում, երբ ելույթը լավն է և ներառում է խոսողի և հանրույթի փոխկապվածությունը: Հանրույթը կիսում է ոգևորությունը. նրանք, ովքեր իրենց նույնականացնում են քաղաքական առաջնորդի հետ, մեծ ցանկություն են ցուցաբերում ֆիզիկական մասնակցություն ունենալու քաղաքական իրադարձությանը: Կրոնական արարողությունները ևս հեռարձակվում են ռադիոյով և հեռուստատեսությամբ, օրինակ՝ ԱՄՆ-ում եկեղեցական առաջնորդները ունեն մեդիա ավետարանականների համբավ: Այ-

նուամենայնիվ, հեռարձակվող կրոնական արարողությունները չեն ճնշում դրանցում անհատական մասնակցությունը: Հաջողված հեռարձակումները միայն աղոթելու և եկեղեցու խորանի մոտ կատարվող իրադարձությունների հետ չեն կապված: Նկարահանող սարքերի օգնությամբ փորձ է արվում ամրագրել և ցույց տալ այն համայնքը, որին դիտորդներն իրենց կարող են պրոյեկտել: Հեռարձակվող եկեղեցականները դառնում են մեդիա աստղեր, ինչը հետագայում ամրապնդում է նրանց կերպարը՝ որպես սրբազան օբյեկտների, ում հանդիսատեսը ուզում է մոտ լինել: Այցելությունը արարողակարգերին ուժգնացնում է կրոնական գործողությունների կիզակետում լինելու զգացումը: Անհատական կապի հաստատումը, այնքան մոտիկից, որքան թույլ է տալիս մարդկանց բազմությունը, եկեղեցու կողմից կիրառվող պրակտիկա է, օրինակ՝ Հռոմի Պապի շրջագայությունները հավաքում են բազմաքանակ հանրույթներ:

***Պատկեր 5.***
***Քարոզիչը՝ որպես սրբազան օբյեկտ:***
***Բիլլի Գրեհեմը և նրա երկրպագուները (1962):***



Կրոնական արարողակարգերը այլ ծիսակարգերից տարբերվում են իրենց ինտենսիվությամբ: Հեռահար մեդիան կարող է ապահովել կիսվող ուշադրության և զգացմունքների ինչ-որ մասը՝ ապահովելով գրավչությունը, անդամակցությունը և հարգանքը: Սակայն ամենաուժեղ ազդեցությունը կարող է լինել միայն հավաքին ֆիզիկապես ներկա լինելու պարագայում: <>

Ընդհանուր առմամբ ստացվում է, որ լայնամասշտաբ ֆորմալ ծիսակարգերը ավելի լավ են ստացվում հեռակա հաղորդակցություններով, քան փոքրամասշտաբ բնական ծիսակարգերը: Սա պայմանավորված է նրանով, որ լայնամասշտաբ ծիսակարգերը գործում են հաստատված սիմվոլներով, որոնք կառուցվել են նախորդ փոխազդեցությունների շղթայի միջոցով: Համեմատաբար անդեմ ծիսակարգերը արտահայտում են անդամակցությունը լայն հանրույթներին, որի միայն մի մասն է միշտ հավաքվում մի տեղում, և տալիս են պատկանելիության զգացում: Բայց վերոնշյալ հանգամանքը արդյունավետ է միայն, եթե առկա է գոնե պարբերական անհատական կապի հաստատում այլ անդամների հետ, ովքեր նույն սիմվոլների հետևորդ են: Այսինքն՝ հեռարձակումը պետք է արտահայտի հանդիսատեսի մասնակցությունը: Այսպիսով, հարց է առաջանում, թե ինչպես ենք մենք գնահատում հաղորդակցության այնպիսի ձևերը, ինչպիսիք են էլեկտրոնային փոստը և համացանցը: Վերջիններիս հատուկ չէ կենդանի փոխազդեցությունն իրական ժամանակում: Անգամ եթե հաղորդագրությունը հասնում է րոպեների ընթացքում, այն չի կարող փոխարինել անմիջական ձայնային մասնակցության ռիթմը, որը, ինչպես դեռ կտեսնենք, տեղի է ունենում վայրկյանների ընթացքում: Գրավոր հաղորդագրությունը կարող է փորձել բացատրել զգացմունքը կամ առաջացնել այն, բայց հազվադեպ է լինում, որ էլեկտրոնային հաղորդագրությունը կիրառվում է այս նպատակով:

Վարկածն այն է, որ որքան մոտ է էլեկտրոնային հաղորդագրությունների հոսքը՝ հաղորդագրությունների շատ արագ փոխանակումը րոպեների կամ վայրկյանների ընթացքում, իրական երկխոսային փոխանակմանը, այնքան ավելի հավանական է կոլեկտիվ ներգրավվա-

ծության զգացումը: Բայց անգամ այս դեպքում կասկածելի է, որ կարող է կառուցվել համերաշխության զգացում, կամ սիմվոլը կարող է լիցքավորվել կոլեկտիվ նշանակալիությամբ: <>

**Կոլեկտիվ ներգրավվածության միկրոգործընթացները բնական ծիսակարգերում**

<>Բնական ծիսակարգերում կոլեկտիվ զգացմունքների առաջացման միկրո-երկխոսային օրինակ է համատեղ ծիծաղը: Ծիծաղի ձայնը ֆիզիկապես արտահայտվում է շնչառության ռիթմիկ կրկնողությամբ, ինչը տեղի է ունենում մեր ցանկությունից անկախ: Մեծամասամբ ծիծաղը արտադրվում է կոլեկտիվորեն: Հենց որ սկսվում է ծիծաղը, այն կարող է ինքն իրեն սնել: <>Ծիծաղը ցույց է տալիս միկրո-փոխազդեցության ծիսակարգի կոլեկտիվ և ռիթմիկ ներգրավվածության դիտանկյունը: Մարդկանց գրավում է սոցիալական փոխազդեցություններին սինխրոն եղանակով ֆիզիկապես մասնակցելը: Սրա պատճառով է, որ ծիծաղը այդքան հաճելի է: Այն օրինակ է ավելի ընդհանուր կոլեկտիվ զգացմունքի և բացատրում է, թե ինչու են մարդիկ բարձր ինտենսիվությամբ փոխազդեցության ծիսակարգերով գրավվում և ըստ այդմ ձևավորում համերաշխության զգացում: Այս փոխազդեցությունները ամրապնդում են հաճույքի ենթատեքստը խմբի անդամների համար և դառնում են հիշեցումներ, որոնք նրանք կցանկանան վերականգնել հետագա հանդիպումներում:<>

Սակայն բնական ծիսակարգերում կոլեկտիվ զգացումը չի սահմանափակվում ծիծաղի նման կարճատև պոռթկումներով: Այստեղ մենք գործ ունենք տրամադրությունների կուտակման ավելի երկարատև գործընթացի հետ, որը վերլուծվում է էթնոմեթոդաբանների կողմից: Հրապուրումը հայտնվում է ընդհանուր ռիթմերի մեջ ընկնելու միջոցով՝ խոսքի հերթականությունից մինչև ձայնի պարալինգվիստիկ բարձրությունը կազմող նուրբ ռեզոնանսների մակարդակ: <>

Հերթականության հիմքը օրենքներին հետևելն է. մի մարդը խոսում է, երբ վերջացնում է, մյուսն է խոսում: Մենք նաև պետք է ուշադիր լինենք տեմպին, որով տվյալ երկխոսությունը տեղի է ունեցել:<>

Հաջորդականության կանոնը ցույց է տալիս, որ հաջողված երկխոսությունը չունի դադարներ և համընկնումներ: Հաջողված երկխոսություն ասելով՝ նկատի ունենք, որ այն սոցիալապես հաջողված խոսակցային ծիսակարգ է, որը խոսողների միջև համերաշխություն է ձևավորում: Այստեղ ևս տարբեր է համերաշխության աստիճանը: Որոշ խոսակցություններ համերաշխության պակաս ունեն, քանի որ շատ են դադարները, իսկ այլ դեպքերում կարող են լինել կոնֆլիկտային խոսակցություններ, որոնց ժամանակ մասնակիցները իրար ընդհատում են և փորձում են խաթարել դիմացինի խոսքը: Ստացվում է, որ հաջողված երկխոսության ծիսակարգը ռիթմիկ է: Մեկը խոսում, վերջացնում է, և այնուհետև մյուսը շարունակում է, ինչպես երաժշտության մեջ: Մենք կարող ենք դասակարգել սա՝ որպես բարձր համերաշխությամբ երկխոսության տիպ: Սակայն համերաշխությունը փոփոխական է: Որոշ փոխազդեցություններ ավելի համերաշխ են, քան մյուսները:

Հերթականության կանոնները կարող են խախտվել երկու ուղղությամբ: Երկու կամ ավելի մարդ կարող են խոսել նույն պահին, կամ հերթականությունը կարող է խախտվել, երբ մեկը դադարի խոսել և ուրիշ մեկը անմիջապես չշարունակի իր խոսքը: Իրականում դադարները չպետք է լինեն երկար, քանի որ դրանք ազդանշաններ են, որոնք ցույց են տալիս համերաշխության քայքայումը: Եթե դադարը 0,5 վայրկյանից երկար է, երկխոսությունն արդեն կորցնում է տակտը: Համերաշխության այդպիսի ձախողում է հետևյալ օրինակը.

Ա- Կա՞ ինչ որ բան, որ քեզ անհանգստացնում է:

(1,0 վայրկյան)

Ա- Հա՞, թե՞ չէ:

(1,5 վայրկյան)

Ա- Հը՞:

Բ- Ո՛չ:

Սա ակնհայտորեն լարված հաղորդակցություն է: Ա-ն և Բ-ն կարող են լինել ծնող և երեխա կամ ամուսիններ, որոնք վիճում են: Թեև այստեղ դադարները երկարատև չեն, այնուամենայնիվ խոսակցական

ժամանակում 1,5 վայրկյանը թվում է հավերժություն: Նույնիսկ կարճ դադարը նկատվում է երկխոսության վերլուծաբանների կողմից, քանի որ այն դիտվում է որպես անհարմար դադար, և անհարմարությունը, ինչպես Գոֆմանն է նկատում, նշան է, որ սոցիալական հարաբերությունները այնպես չեն գործառում, ինչպես որ սպասվում է:

Մյուս ճանապարհը, որով համերաշխությունը կարող է քանդվել, «ոչ դադար, ոչ համընկնում» սկզբունքի խախտումն է: Այս երևույթը կարող ենք նկատել զայրույթով լի վեճերի ժամանակ, երբ երկու մասնակիցներն էլ փորձում են խոսել միաժամանակ՝ իրականում խոսելով էլ ավելի բարձր և էլ ավելի արագ՝ դիմացինին շրջանցելու համար: <>

Ծիսական համերաշխությունը խախտվում է նաև, երբ ոչ ոք չի ուզում խոսել. ուշադրության կենտրոնում ոչինչ չի հայտնվում: Դա խախտվում է նաև, երբ մասնակիցներն ուզում են ունենալ ուշադրության առանցք, սակայն չեն համաձայնում այն հարցի շուրջ, թե ով պետք է լինի այդ առանցքում, և հետևաբար՝ ում խոսքերը կդառնան այն սիմվոլիկ օբյեկտը, որը կստանա ծիսական ուշադրություն և հաստատում:

Դիտարկենք այս օրինակը.

Ա. ...մենք անհանգստացած ենք Հարավային Վիետնամի տարածքային ամբողջականության հարցով, այդ պատճառով էլ այնտեղ ենք գնացել: Բայց մեր հիմնական անհանգստության առիթը մեր անձնակազմի հետ է կապված. յուրաքանչյուր սպա ունի այդ հավատարմությունը:

Բ. Մի՞թե մենք այնտեղ չենք գնացել ՄԱԿ-ի դոկտրինի համաձայն:

Ա. Չէ՛:

Բ. Բայց մենք այնտեղ ենք, որովհետև... (հիշեցնում է կանոնակարգի կետը):

Ա. Որտեղի՞ց ես այդ ցնդած գաղափարը գտել:

Բ. Այսի՞նքն:

Ա. ՄԱԿ-ի դոկտրինը:

Բ. Մենք ՄԱԿ-ի ներկայացուցիչներն ենք, դրա համար էլ այն-տեղ ենք: Այդպես չէ՞:

Ա. Գնա ՄԱԿ-ում նույն բանը հարցրու՛, ու քո վրա կծիծաղեն: Իհարկե, այդպես չէ:

Բ. Մենք այնտեղ ենք մեր շահերի համար:

Ա. Այո՛:

Բ. Մենք այնտեղ չե՞նք ծածանում ՄԱԿ-ի դրոշը:

Ա. Չկա ՄԱԿ-ի դրոշ այնտեղ: Դա ՄԱԿ-ի ուժային կառույց չէ: ՄԱԿ-ը երբեք այս հարցով գոնե մեկ քայլ չի արել: (դադար)

Բ. Ո՛չ, կարծում եմ՝ այս անգամ սխալվում եք:

Ա. Ներողություն, պարո՛ն, առաջարկում եմ՝ ստուգեք Ձեր փաս-տերը:

Բ. Ես պետք է անպայման ասեմ, որ...

Ա. Ես չեմ դադարի Ձեզ ասել, որ Դուք գաղափար չունեք, թե ինչ եք խոսում:

Բ. Շատ լավ կլիներ, որ...

Ա. Ես առաջարկում եմ, որ Դուք ստուգեք ձեր փաստերը:

Բ. Շատ լավ կլիներ, որ...որովհետև ահա, թե ինչ եմ կարդացել ամսագրերում,...որ մենք ներկայացնում ենք...

Ա. Դե, էդ դեպքում շարունակե՛ք կարդալ այդ վատ ամսագրերը:

Բ. ...որ մենք ներկայացնում ենք ՄԱԿ-ը այնտեղ:

Ա. Կներեք, բայց ես պետք է գնամ: Կարծում եմ՝ ժամանակն է, որ փոխեք այդ ամսագիրը:

Բ. Հուսով եմ՝ կարող եմ ձեզ հետ զանգել և ուղղել ձեր սխալը:

Ա. Լավ, Դուք ստուգե՛ք և նորից զանգե՛ք ինձ:

Բ. Եղավ:

Ա. Շիմ, բարի գիշեր:

Վեճի զարգացման հետ մեկտեղ խոսողները սկսում են իրար ավե-լի շատ ընդհատել, իսկ հետո՝ խոսել միաժամանակ: Նույնիսկ երբ նրանք փորձում են ամփոփել խոսակցությունը և վերադառնալ քաղա-քակիրթ շփմանը, նրանք չեն կարողանում խուսափել դադարներից և համընկնումներից:

«Ոչ դադար, ոչ համընկնում»-ը կարող է տարբեր լինել՝ կախված մշակույթից: Այսինքն՝ ընդհանրացումը հիմնված է ձայնագրությունների վրա, որոնք արվել են անգլախոսների շրջանում ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, և կարող են վավեր չլինել այլ վայրերի համար: Հետևաբար, կան հասարակություններ, որտեղ ընդունելի են բավականին մեծ դադարները խոսողների միջև, և ավելի արագ խոսելը կարող է իրոք համարվել խախտում: Սա ենթադրում է մոդելի վերաձևակերպում, բայց ոչ անպայմանորեն հերքում: Կարևոր գործընթացը ընդհանուր ռիթմը պահելն է, որտեղ որ հնարավոր է: Այնտեղ, որտեղ սա արվում է, արդյունքում ստեղծվում է համերաշխություն, իսկ որտեղ խախտվում է, արդյունքը ազրեսիվությունն է կամ օտարումը:<>

Գիտնականների ուսումնասիրության համար դյուրին օրինակ է դասախոսության կամ գիտաժողովի վերջում հարցերի համար նախատեսված ժամանակահատվածը: Հաճախ այն սկսվում է երկար դադարով: Լսարանի սուբյեկտիվ փորձն այդ պահին այն է, որ նրանք ոչինչ չունեն ասելու: Սակայն եթե դադարը ընդհատվում է որպես կանոն, երբ լսարանի ամենաբարձրաստիճան անդամը հնչեցնում է իր հարցը, հաջորդ հարցը սովորաբար հետևում է ավելի կարճատև դադարից հետո, իսկ երրորդ կամ չորրորդ հարցից հետո բարձրանում են մի քանի ձեռքեր: Սա ցույց է տալիս, որ հանդիսատեսը չի ունեցել ասելիքի պակաս, փոխարենը այն ունեցել է հուզական էներգիայի պակաս, այդ գաղափարները ձևակերպելու և բարձրաձայնելու վստահության պակաս. խնդիրը նրանում չէ, որ նրանք ոչինչ չունեին ասելու, այլ նրանում է, որ չէին կարող մտածել դրա մասին, քանի դեռ խմբի ուշադրությունը չփոխվեց դեպի լսարանն ընդգրկող փոխազդեցությունը: Եվ բանն այն չէ, որ բանախոսը անհետաքրքիր է. հաճախ հատկապես հաջողակ բանախոսն է դառնում ընթացքը արգելակողը:

Խոսակցության ժամանակ նախաձեռնության փոխանցումը մի խոսողից մյուսին որոշիչ գործընթաց է: Օրինակ, երկխոսությունների վերլուծության Սաքսի դասական մոդելը[136] արտահայտել է այս միտքը

[136] Տե՛ս Sacks, H., Schegloff, E. A. and Jefferson, G. (1974) A Simplest Systematics for the Organization of Turn-Taking for Conversation. Language 50, pp. 696–735.

առավել պարզ եղանակով. վերջին խոսողը սահմանում է հաջորդ խոսողին՝ կա՛մ հղում անելով մեկին, կա՛մ նոր միտք սկսելով: Դեվիդ Գիբսոնը առաջարկում է առավել մշակված մոդել՝ հիմնված մեծ ձեռնարկություններում կազմակերպական հանդիպումների ժամանակ տեղի ունեցող խոսակցություններում անցումների ուսումնասիրության վրա[137]: Գիբսոնը ցույց է տալիս, որ կան մի քանի տիպական ձևեր, որոնցով խոսքը փոխանցվում է մեկից մյուսին: Հիմնականում մի հոգին խոսում է, հետո՝ մյուսն արձագանքում (AB:BA): Եթե սա դիտարկում ենք առավել երկար ժամանակի ենթատեքստում, այն նմանվում է խոսակցական պինգ-պոնգ խաղի, որտեղ երկու հոգի մենաշնորհացնում են խոսակցությունը, իսկ մյուս բոլորը ենթարկվում են իրավիճակին: Մենք կարող ենք հասկանալ այսօրինակ իրավիճակային հարկադրանքը, եթե նկատենք, որ դիտորդները հաճախ փորձում են ներխուժել խոսակցության մեջ, սակայն դա չի հաջողվում, քանի դեռ զույգը տնօրինում է ընթացքը: Խոսողի կողմից կիրառվող հաջորդ տիպիկ հնարներից մեկը ամբողջ խմբին դիմելն է (օրինակ՝ անուղղակի հարցադրում անել օդի մեջ): Գիբսոնը դա նկարագրում է AO:XA տեսքով՝ նշելով, որ առավել տիպիկ հաջորդ քայլը խմբի անդամներից մեկի կողմից նախաձեռնության դրսևորումն է և հետադարձ մեկնաբանության ուղղումն A-ին: Անգամ եթե այս դեպքում տեղի է ունենում ընդհատում (AB:BA-ի փոխարեն ստացվում է AB:XA, որտեղ X-ը ինչ-որ մեկն է, ում չէին դիմել), որպես կանոն՝ ընդհատողը միանում է ընթացող երկխոսությանը՝ դիմելով խոսնակին (AB:XA) կամ վերջին խոսողին (AB:XB), բայց ոչ այլ որևէ մեկին:<>

Նմանատիպ գործընթացը բնորոշ է նաև լայնամասշտաբ հանրային հավաքներին, օրինակ՝ քաղաքական հանրահավաքներին կամ քաղաքական բանավեճերին, որոնց ժամանակ քաղաքական խոսնակի խոսքն ընդհատվում է ծափահարություններով կամ հանրույթի այլ տիպի արձագանքներով: Այս երևույթը խիստ մանրամասնորեն դիտարկելիս նկատելի է, որ խոսնակն ու լսարանը ընկնում են մեկ ռիթ-

---

[137] Տե՛ս David, G. (1999) Taking Turns and Talking Ties: Sequencing in Business Meetings. Ph.D. diss. Department of Sociology, Columbia University.

մի մեջ. խոսողի հռետորաբանությունն ունի շեշտադրումների և դադարների շարք, ինչպես նաև կրկնություններ, որոնք թույլ են տալիս լսարանին հասկանալ, որ ինչ-որ բան է սպասվում, և որոշել, թե որ պահին նրանք կարող են ակտիվություն ցուցաբերել: Նույնը կարելի է դիտարկել լսարանի տեսանկյունից: Ծափահարությունների կամ դժգոհության արտահայտությունների ալիքը ցույց է տալիս, որ լսարանը կառուցում է իր արտահայտչաձևերը որոշակի ռիթմով, քանի որ ծափահարությունը մեծ ալիք չդառնալու դեպքում ձախողում է լսարանի կարծիքի արտահայտումը տվյալ պահին և դուրս մնում է ընդհանուր ռիթմից: Սա հատկապես դրսևորվում է «հուու՜» տիպի դժգոհությունն արտահայտելու դեպքում, քանի որ ավելի բարդ է ողջ ամբոխին մասնակից դարձնել այդ արտահայտչաձևին: <>

Ռիթմիկ համակարգման այս գործընթացները գրեթե միշտ անգիտակցական բնույթի են: Բնական ծիսակարգերի հաջողությունը կամ ձախողումը ավելի շուտ հուզական է, քան մտածված: Այստեղ, սակայն, խորը ուսումնասիրության է ենթակա այն միկրո-մեխանիզմը, որի միջոցով տեղի է ունենում իրավիճակային համերաշխությունը:

Բացի խոսքի փոխանցումից, ինտերակցիայի մյուս դիտանկյունները ևս սկսում են ենթարկվել որոշակի ռիթմի: Խոսակցությունների տեսագրությունները ցույց են տալիս, որ խոսողներն ու լսողները հակված են իրենց մարմնի շարժումները համապատասխանեցնելու խոսքի ռիթմին[138]: Մարմնի շարժումները արագ և աննկատ են՝ գլխի շարժումը, աչքերը թարթոցը և այլ ժեստերը: Հաճախ դրանք այնքան արագ են, որ սովորական աչքի համար անտեսանելի են և նկատելի են միայն, երբ տեսագրվում և այնուհետև դանդաղացված կերպով դիտվում են: Այս հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած է մայրերի և երեխաների միջև փոխազդեցությունների վրա, որոնք համերաշխության բարձր մակարդակ ցույց տվող իրավիճակներ են: Նորածին-

---

138 Տե՛ս Condon, W. S., Ogston, W. D. (1971) Speech and Body Motion Synchrony of the Speaker-Hearer. In Perception of Language, ed. by D. D. Horton and J. J. Jenkins. Columbus, Ohio: Merrill; Capella, J. N. (1981) Mutual Influence in Expressive Behavior: Adult-Adult and Infant-Adult Dyadic Interaction. Psychological Bulletin 89, pp. 101–32; Kendon, A. (1970) Movement Coordination in Social Interaction. Acta Psychologica 32, pp. 1–25.

ները սինքրոնացնում են իրենց ձայներն ու շարժումները մեծահասակների ձայներին և շարժումներին՝ նախքան խոսել սովորելը[139]: Այն հետազոտությունները ցույց են տալիս, որ ռիթմիկ սինքրոնացումը կարող է լինել խոսելու հիմքը: Նորածինները հիվանդանոցի խնամասենյակներում անցկացրած ժամանակահատվածում հաճախ ներգրավվում են վարակիչ լացի գործընթացում, որտեղ նրանք իրենց լացի ձայնը համապատասխանեցնում են այն ձայներին, որոնք լսում են: <>

Հոգեբաններն ապացուցել են, որ ռիթմիկ սինքրոնացումը կորելյացիոն կապի մեջ է համերաշխության հետ: Այն դեպքերում, երբ երկխոսությունները ռիթմիկ առումով համակարգված են, խոսողները ավելի մեծ հավանականությամբ են համակրում միմյանց: Սա կրկնվում է նաև մարմնի շարժումների մակարդակում: Ամենազարմանալի սինքրոնացումը հանդիպում է տղամարդ-կին հարաբերություններում (մասնավորապես ծանոթացման, սիրո զգացմունքի առաջացման ժամանակ), երբ նրանք աստիճանաբար դեպի միմյանց են ուղղում իրենց մարմինները, գրեթե հայելային կերպով կրկնում են միմյանց ժեստերն ու հպումները:

Հոգեբանական գիտափորձերը և մանրամասն դիտարկումները ցույց են տալիս, որ նրբորեն հղկված դիմախաղը և սինքրոնացումը շատ տարածված են մարդկանց շրջանում, սակայն քիչ տեղեկատվություն կա այն մասին, թե երբ են դրանք առավել շատ կամ քիչ դրսևորվում: Այս մեխանիզմն ավելի խորը ուսումնասիրությունների կարիք ունի: <>

Սոցիոլոգ Սթենֆորդ Գրեգորին առաջարկում է մի հուսալի սարք, որը թույլ է տալիս չափել համերաշխության աստիճանը փոխազդեցություններում: Սարքը վերլուծում է մարդկանց արտաբերած հնչյունները ձայնագրված խոսակցություններում: Այս կերպ Գրեգորին և իր կո-

[139] Տե՛ս Condon, W. S., and Sander, L. W. (1974). «Synchrony Demonstrated between Movements of the Neonate and Adult Speech. Child Development 45, pp. 456–62; Condon, W. S., and Sander, L. W. (1974) Neonate Movement is Synchronized with Adult Speech: Interactional Participation and Language Acquisition. Science 183, pp. 99–101; Contole, J., Over R. (1981) Change in Selectivity of Infant Social Behavior between 15 and 30 Weeks. Journal of Experimental Child Psychology 32, pp. 21–35.

լեզաները ցույց են տալիս, որ ակուստիկ ձայնային շարքերը դառնում են համահունչ, երբ խոսակցությունները զարգանում են[140]: Բարձր համերաշխությամբ երկխոսություններում ձայնի տոների միկրոմասնիկները զուգամիտում են ձայնային սպեկտրի հիմնարար հաճախականության մակարդակում, որը ցածր է ճանաչողական նշանակություն ունեցող տեղեկություններ հաղորդող հաճախականության մակարդակից: Եթե ավելի բարձր հաճախականությունները հեռացվում են էլեկտրոնային եղանակով (նրանք, որոնք իրենց մեջ կրում են այն, ինչ ասվում է), ապա ձայնագրությունը հնչում է որպես ցածր աղմուկ. հենց այս ձայնն է բառացիորեն կոչվում «համերաշխության ձայն»: Սա ենթադրում է տարբեր իրավիճակներում համերաշխության ոչ վերբալ դրսևորումների հետազոտություն: <>

Մարմնի շարժումների սինքրոնացումը տարածված է հատկապես մեծամասշտաբ խմբերում, որոնք մոբիլիզացվել են որևէ կոլեկտիվ վարքի շուրջ: Քաղաքական ցույցերից մեկի ուսումնասիրությունը պարզել է, որ ցուցարարների շրջանում մարմնի շարժումների համակարգումը ավելի բարձր է, քան հասարակ հետիոտների մոտ և նույնիսկ նվագախմբի քայլերթում: Սա հատկապես տեղի է ունենում այն ժամանակ, երբ ցուցարարները հուզական միասնականության և խմբային համերաշխության բարձր մակարդակում են գտնվում՝ միավորված լինելով միևնույն ընդհանուր գործողություններով և համատեղ ուշադրությամբ:<>

Սոցիալական երկխոսությունը (զուտ ընկերական կապը պահելու համար տեղի ունեցող խոսակցություն) երկխոսության ծիսակարգերի և դրանց միջոցով համերաշխություն հաստատելու ամենահիմնական ձևն է: Եթե խոսակցության հիմնական նպատակը խոսակցության ընթացքը պահելն է, ուրեմն խոսողը ընտրում է, թե ինչ ասել՝ հիմնվելով դիմացինի ակնկալիքների վրա, այլ ոչ՝ սեփական կարծիքի կամ

---

[140] Տե՛ս Gregory, S. W., Jr. (1983) A Quantitative Analysis of Temporal Symmetry in Microsocial Relations. American Sociological Review 48, 129–135; Gregory, S., Webster, S. and Huang, G. (1993) Voice Pitch and Amplitude Convergence as a Metric of Quality in Dyadic Interviews. Language and Communication 13, pp. 195–217.

մտադրության վրա: Սա խոսակցությունը դարձնում է կրկնակի ծիսակարգային:<>

Ռիթմիկ համակարգումը և հուզական ոգևորությունը միջանձնային հարաբերությունների կարևոր բաղադրիչներ են: Ջորջ Հերբերտ Միդը սա անվանում է ուրիշի դերի ստանձնում, և ըստ նրա՝ դա է կազմում մարդկային գիտակցության հիմքը[141]:<>

**Սիմվոլներում երկարաձգված և կուտակված համերաշխությունը**

Հուզական խրախուսման բարձր մակարդակները՝ կոլեկտիվ ավյունը, անցողիկ է: Ինչքա՞ն կտևի համերաշխությունը և հուզական տրամադրությունը: Սա կախված է կարճաժամկետ զգացմունքների փոխակերպումից երկարաժամկետ զգացմունքների: Սիմվոլները տարբերվում են՝ ըստ նրա, թե ինչ տիպի խմբային համերաշխություն են դրանք ձևավորում, և, հետևաբար, ինչպիսի սիմվոլիկ/հուզական հիշողություններ կամ իմաստներ են դրանք ներդնում խմբային փոխազդեցություններում, ինչպես նաև հետագայում անհատական ինքնություններում:

Պատկերացնենք իրավիճակների շարք, որոնցում կոլեկտիվ զգացմունքներ են առաջ բերվում: Ամենացածր մակարդակում այն իրավիճակներն են, որոնցում մի շարք մարդիկ են ներգրավված, սակայն շատ փոքր ուշադրության թիրախով: Դրա օրինակ է հանրային սպասասրահը, օրինակ՝ օդանավակայանի մեկնման սրահը:

Այստեղ ընդհանուր տրամադրությունը բավականին փոքր է, ավելին, նույնիսկ առկա են անհամբերության և զայրույթի զգացումներ, քանզի տարբեր մարդկանց, ինչպես նաև մարդկանց ենթաբազմությունների կիզակետնտրոնում ընկած են հակադիր նպատակներ:<>

Չնայած այն հանգամանքի, որ նման վայրերում որոշակի փոխազդեցությունները կամ ուշադրության կենտրոնացումը, որպես այդպիսին, բացակայում են, միևնույն է կա այնտեղ ներկա գտնվելուն նպաստող սոցիալական գրավչության որոշակի ձև: Ամբոխի մաս կազմելը

---

141 Տե՛ս Mead, G. H. (1922) A Behavioristic Account of the Significant Symbol. Journal of Philosophy, pp. 157–63.

տալիս է «լինել այնտեղ, որտեղ գործողությունն է» զգացումը, անգամ այն դեպքում, երբ դու ինքդ անձնապես որևէ հստակ սահմանված գործողության չես մասնակցում: Ինչպես Դյուրկհեյմն է մատնանշում, կոլեկտիվ կենսուրախության «էլեկտրականության» ստեղծման առաջին քայլը անցումն է ցրվածությունից դեպի հոծ ֆիզիկական համախումբը: Սակայն, ինչպես կարելի է նկատել, միայն դա բավարար չէ. ճանաչելի խմբի առկայությունը դեռևս չի հավաստում համերաշխության գոյության և ինքնանույնականացման զգացողության առկայության մասին: Պակասող տարրերը սիմվոլներն են, որոնք մի դեպքում օգնում են հստակեցնել, թե ովքեր են ամբոխում, մեկ այլ դեպքում՝ ինքնանույնականացվել վերջինիս հետ:

Համերաշխության առավել բարձր մակարդակը հնարավոր է դառնում այնպիսի խմբերում, որոնք կենտրոնացված և համախմբված են՝ որպես լսարան գործելու գաղափարի շուրջ: Այստեղ համերաշխության ժամանակավոր զգացումը ի զորու է առավել ուժգնանալ, քանզի խումբը մասնակցում է կոլեկտիվ գործողությունների (ինչպիսիք են, օրինակ՝ ծափահարելը, ժպտալը, սուլելը և այլն) իրականացմանը: Այսպիսի ժամանակավորապես համախմբող իրադարձությունները ներառում են ժամանակավոր միկրո-համաձայնեցում: Վերջինս, իր հերթին, կոլեկտիվ ոգևորության այն պայմաններից է, որի խախտման դեպքում խախտողը կարող է անհարմար դրության մեջ հայտնվել (օրինակ, եթե մարդը ծափահարում կամ սուլում է ոչ ճիշտ ժամանակին, այլ կերպ ասած, եթե սույն գործողությունների իրականացմանը այլոք չեն միանում, նա կարող է դժվար կացության և շփոթվածության մեջ հայտնվել): <>

Բավական հաճախ այս տիպի ամբոխները պահանջում են այնպիսի սիմվոլի առանձնացում, որը առավել կուժեղացնի փորձառության զգացումը: Որպես կանոն՝ այդ սիմվոլներն ընտրվում են ամբոխի ուշադրության և գիտակցության կիզակետում եղած սիմվոլներից: Սպորտային երկրպագուների պարագայում որպես դյուրկհեյմյան սրբազան օբյեկտներ են ծառայում երաժշտությունը, ֆիլմերը, ներկայացումները և այլն: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ կենտրոնա-

ցած ամբոխի ունեցած երկարաժամկետ համերաշխությունը խոցելի է: Պատճառն այն է, որ ինչպես արդեն ներկայացվեց, պահանջված սիմվոլները ընտրվում են ամբոխի ուշադրության և գիտակցության կիզակետում եղած սիմվոլներից, սակայն չէ՞ որ ամբոխի անդամների թիվը ընդլայնվում է, և նորեկները, այդ իմաստով, ի սկզբանե ընտրված սիմվոլների կրողը չեն: Նման պարագայում չկա միմյանց ճանաչելու և ամբոխի սահմանները հստակեցնելու այլ տարբերակ, քան հստակեցնել այն, ինչի շուրջ իրականացվել է կոլեկտիվ գործողությունը (բերված օրինակում՝ ծափահարելը, ժպտալը, սուլելը և այլն): Բերվածը ամբոխների երկրորդային ինքնանույնականացման օրինակ է, ամբոխներ, որոնց անդամները անհատապես չեն ճանաչում միմյանց: Բենեդիկտ Անդերսոնը անվանել է դրանք «երևակայական հանրույթներ»[142], ինչն իրականում այնքան էլ ճիշտ չէ: Բանն այն է, որ երբ նրանք պատկերացում են կազմում այն մասին, թե ինչ են պատկերացնում, դա դառնում է սիմվոլ, որի վրա նրանք սևեռում են իրենց ուշադրությունը. «հանրույթը» փոփոխական և դիպվածային փորձառություն է, որն առաջանում է հենց բարձր ծիսական ինտենսիվության պահերին: <>

Հատկանշական է այն հանգամանքը, որ ընտրված սիմվոլներից ոչ բոլորը կարող են կիրառվել ամբոխի անդամների առօրյա կյանքում: Լավագույն դեպքում դրանք ընդամենը կարող են վերաիմաստավորվել և որոշակի փոփոխությունների ենթարկվելով միայն՝ կիրառումներ գտնել ամենօրյա կյանքի անբաժան մաս կազմող ծիսակարգերում: <>

Մարդկանց անուններով դիմելը փոխազդեցությունների անձնային բնույթի շեշտադրման, ընդգծման և վերահաստատման ծիսակարգ է ենթադրում: Որևէ մեկի անվան վկայակոչումը ծիսակարգի իրականացման ժամանակ պարզունակ ցուցադրումը չէ այն բանի, որ վկայակոչողը գիտի տվյալ անձի անունը: Իրականում վերջինս հնարավորություն է ընձեռում մարդկանց փոխազդեցության ծիսակարգերի ընթացքում վկայակոչված անձի մասին մտածել իբրև անհատի՝

142 Anderson, B. (1991) Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism. London: Verso.

մարդու, ով ունի կենսագրություն՝ փոխազդեցությունների որոշակի նախապատմությամբ: Անձնային հասցեագրման ծիսակարգը կոլեկտիվ բնույթ է կրում, քանզի այդ կերպ անհատականացված ծիսակարգերը միախառնվում են: Նման ծիսակարգերը ստեղծում են մի իրավիճակից մյուսին անցման կամուրջը, ինչպես նաև շեշտադրում այն հանգամանքը, որ սիմվոլիկ հիշողության և նույնականացման առավելագույն մակարդակին հասնելու համար պարտադիր նախապայման է անհատի մակարդակում այդ սիմվոլների յուրացումը և ինքնանույնականացման բարձր մակարդակը: Վերջինիս նպաստում են առօրեական հաղորդակցությունների ծիսակարգերը: Այս հաղորդակցությունները ծավալվում են անցյալում կամ ներկայում տեղի ունեցած և ունեցող իրադարձությունների շուրջ, որոնց անդամակցել է զրուցակիցներից յուրաքանչյուրը: Մենք կարող ենք դիտարկել այն որպես մասնավոր մշակութային կապիտալի շրջանառություն՝ ի տարբերություն ընդհանրացված մշակութային կապիտալի, որը լայնորեն ճանաչելի է մեծ խմբերի համար. խմբեր, որոնց անդամները միմյանց չեն ճանաչում: Պարտադիր չէ, որ այս անհատական նարատիվները լինեն ճշմարիտ, կարևոր է, որ դրանք լինեն զվարճալի, արկածային, ողբերգական և առավել կենդանի իրադարձությունների բնույթ ստանան: Այս կերպ կապակցվում և ամրապնդվում են մասնավոր, առանձին սոցիալական փոխազդեցությունների հիմքում ընկած սոցիալական կապերը: Հատկանշական է, որ մարդը ևս կարող է դառնալ սիմվոլ՝ թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի ձևով, և բոլորովին էլ կարևոր չէ, թե ինչ երանգի ներքո՝ դրական, թե բացասական:<>

Թե՛ զանգվածային լսարանների կողմից ընդհանրացված սիմվոլները և թե՛ մասնավոր սիմվոլները երկարատև են դարձնում փոխազդեցության ծիսակարգերի հուզական բեռնվածությունը: Առաջին դեպքում զանգվածային լսարանների կողմից ընդհանրացված սիմվոլները կախված են խմբային ընդհանրացումներից, որոնցում, ինչպես հասցրել եմ ցույց տալ, առանձին անհատները այնքան էլ ընդգրկուն մասնակցություն չունեն: Մյուս կողմից, անձնային ցանցերում կուտակված մասնավոր սիմվոլները, ճանաչելի և ծանոթ լինելով մասնա-

կիցներից յուրաքանչյուրին, կրում են իներտ բնույթ: Դա չի նշանակում, սակայն, որ վերջիններս ամրագրված են և ենթակա չեն փոփոխման, ընդհակառակը, դա հատկապես հնարավոր է, եթե փոխվի տվյալ անձանց միջև հարաբերությունների բնույթը: Անձնային անդամակցության և անանուն ամբոխի ոչ անձնային սիմվոլների միջև հակադրությունը կարելի է տեսնել 2001 թ. սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած իրադարձության օրինակով: Ես ներկայացնելու եմ իրադարձության մասին պատմող փաստավավերագրական ֆիլմի վերլուծությունը:

Հետևելով փոխազդեցության ծիսակարգերի տեսությանը՝ պետք է նշեմ, որ անանուն ամբոխի համար ոչ թե աշխարհահռչակ առևտրի կենտրոնների աշտարակների փլուզումն է դարձել խմբային համերաշխության սիմվոլ, այլ հրշեջները՝ որպես այդպիսին, մինչդեռ վերջիններիս համար հենց առևտրի կենտրոնների ավերված աշտարակներն են վերածվել համերաշխության սիմվոլների: Այժմ առավել հանգամանալից կներկայացնեմ ստորև:

Տեսահոլովակում երևում են մարդիկ առաջին օդանավի՝ աշտարակներին հարվածելու և վերջիններիս փլուզման պահերին: Ֆիլմում հստակ տեսանելի է դառնում մինչ այդ չկենտրոնացված ամբոխի կենտրոնացումը, ինչը դրսևորվում է 10-12 հոգանոց խմբերի համախմբմամբ: Ծուխը գրավում է նրանց ուշադրությունը, և վերջիններիս ուշադրության կիզակետը դառնում է ընդհանուր: Այս ամենը զուգակցվում է միմյանց ֆիզիկապես ավելի մոտենալու միտումմամբ: Նախնական տրամադրվածությունը, որը նրանք ի ցույց են դնում, հետաքրքրվածությունն է, ապա՝ զարմանքը և այս ամենին զուգընթաց աճող ցնցումը: Պարզ է դառնում, որ ամբոխի անդամները միմյանց անհատապես չեն ճանաչում: Սկզբում նրանք ընդամենը պասիվ դիտորդներ են: Ավելի ուշ, երբ փլատակներն ու բեկորները սկսում են սավառնել օդում, տեսնում ենք մարդկանց, ովքեր սրընթաց վազում են փողոցով մեկ: Շատերը, ովքեր անմիջապես աշտարակի մոտ են գտնվում կամ նոր են դուրս եկել աշտարակից, ասես մեխված լինեն իրենց տեղերին և տարբերվում են դեմքի քարացած արտահայտությամբ:

Տեսահոլովակում բացակայում են վառ արտահայտված և սոցիալապես հաղորդակցվող զգացմունքներ, ինչպես չկան նաև վախի դրսևորումներ: Երևում են աշտարակների ներսից դուրս եկող աշխատողները, ովքեր ընթանում են շարքերով՝ առանց խուճապի մատնվելու կամ միմյանց հրմշտելու: Վախի միակ տեսանելի դրսևորումները, ինչպես երևում է փաստավավերագրական ֆիլմում, առկա են փողոցում գտնվող պատահական անցորդների մոտ: Առավել մանրազնին ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ վերջիններս մարդիկ են, ովքեր գտնվում են փողոցում տեղակայված ամբոխի առավել ցրված հատվածներում: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ նրանք ֆիզիկապես մեկուսացված են մյուսներից, այլ կերպ ասած՝ մյուսներից նշանակալի հեռավորության վրա են գտնվում:<>

*Պատկեր 6.*
*Նյու Յորքի հրշեջը հերոսի խորհրդանիշ դառնալու գործընթացում (14 սեպտեմբեր, 2001):*



Ինչ վերաբերում է հրշեջներին, ապա ֆիլմում նրանց կողմից վախի որևէ դրսևորում չի նկատվում: Հետաքրքրական է, որ նրանք չեն դրսևորում նաև քաջության որևէ յուրօրինակ հույզեր: Սույն դատողությունը հիմնված է միայն նրանց վարքի ուսումնասիրության վրա, վարք, որը դիտարկվում է արդեն իսկ տեղի ունեցած իրադարձությունից հետո: Հրշեջները սովորականի պես հետևում են իրենց աշխատանքից բխող կանոններին, ու իրավիճակը ասես ոչնչով չի տարբերվում իրենց աշխատանքային առօրյայի մաս կազմող այլ իրավիճակներից: Այն, որ նրանք հետևում են այդ կանոններին կոլեկտիվ կերպով, նպաստող հանգամանք է հանդիսանում վերջիններիս մոտ վախի զգացման դրսևորման բացակայության համար: Բացի այդ, իրավիճակը սահմանվում է իբրև ոչ արտասովոր, հերթականը՝ սովորական իրադարձություններից:

Ինչպես կարելի է նկատել, օրինակում հնարավորինս ընդգծվում է այն իրողությունը, որ աղետի առկայության պարագայում մարդիկ, ովքեր միտված են ֆիզիկապես առավել մոտ գտնվել միմյանց և ունենալ ընդհանուր կենտրոնացում, դրսևորում են հուզական զսպվածություն, մինչդեռ պակաս համերաշխություն ունեցող խմբերում և ֆիզիկապես մեկուսացված անձանց շրջանում ի հայտ են գալիս վախի տեսանելի դրսևորումներ:

Այնուամենայնիվ, սույն ամբոխը ևս ունի փոխազդեցության ծիսակարգին հատուկ որոշ բաղադրիչներ՝ ֆիզիկական համախմբում, ուշադրության երկկողմանի կենտրոնացում և ընդհանուր տրամադրվածություն: Ինչո՞ւ ամբոխի մեջ գտնվող մարդիկ չեն փոխակերպում ընդհանուր ցնցումը և վախը համերաշխության: Ծիսակարգերը զգացմունքների փոխակերպումներ են և ի վիճակի են վերափոխել բացասական զգացմունքները դրականների: Թեև աշտարակները չափազանց բացասական փորձառություն էին, այնուամենայնիվ դրանք այդպես էլ չդարձան համերաշխության սիմվոլներ: Քրիստոնեության սիմվոլը՝ խաչը, ևս անասելի բացասական փորձառության՝ խաչելության արտացոլումն է, և շնորհիվ իր՝ որպես սիմվոլի ամրապնդման, դարձել է ուշադրության կենտրոնացման կիզակետը քրիստոնյաների համար:

Մինչդեռ քանդվող և փլուզվող աշտարակների լուսանկարները, որոնք հաջորդող օրերին և ամիսներ շարունակ լայնորեն ցուցադրվում էին հեռուստատեսությամբ և թերթերով, այդպես էլ չվերածվեցին սիմվոլի, համենայն դեպս ոչ ականատես ամբոխի համար:<>

Կառուցվածքային իմաստով փողոցային ամբոխները այդպես էլ չվերահամախմբվեցին՝ մեկ, միասնական խումբ դառնալով: Դրանք ոչ միայն անանուն, այլև առանց նույնականացման ամբոխներ էին: Արդյունքում, պատահական անցորդները այդպես էլ չբյուրեղացրեցին իրենց ինքնությունը: Այն, ինչը բյուրեղացվեց, երկակի ինքնությունն էր՝ «նյույորքցիներ», որը մատնանշում էր բոլոր բնակիչների համապարփակ անդամությունը քաղաքին (թեև նրանց ճնշող մեծամասնությունը ներգրավված էին աղետին ոչ ավելի, քան քաղաքից դուրս գտնվող մարդիկ) և «ամերիկացիներ»՝ որպես հարձակման թիրախը դարձած ազգային միավոր: Ահա թե ինչու հաջորդող ժամանակահատվածում մարդիկ սկսեցին ի ցույց դնել այդ երկու ինքնությունները համադրող սիմվոլներ՝ գլխարկներ, տաբատներ և այլ *նյույորքյան* խորհրդանիշներ, ինչպես նաև *ամերիկյան* դրոշներ: Սակայն ամենից առաջ, որպես համերաշխության և խիզախության սիմվոլ ամրապնդվեցին հրշեջները:

Միևնույն ժամանակ, ինչպես երևում է տեսահոլովակից, հրշեջները իրենց որևէ կերպ չդիտարկեցին այն նույն լույսի ներքո, որի ներքո իրենց դիտարկում էին ամբոխները: Բանն այն է, որ սեփական պատկերացումներում նրանք ձախողել էին, քանի որ ոչ միայն չէին հասել կրակին (այն բռնկվել էր աշտարակի 7-րդ հարկում), այլև որևէ մեկին չէին փրկել կրակի ճիրաններից: Ահա թե ինչու վերջիններիս համար ավերված և հրդեհված աշտարակները միմիայն բացասական սիմվոլ դարձան: Տեսահոլովակում ևս նրանք ցանկություն էին հայտնում աջակցել տուժածներին՝ գոնե այդ կերպ իրենց պիտանի զգալու համար:

Ներկայացված վնասի շրջանակներում ծայրահեղ փոքր էր որևէ մեկի ողջ գտնվելու հավանականությունը: Ու չնայած դրան՝ ֆիլմում առանձնացված կադրերում տեսանելի է, թե ինչպես են հրշեջները,

անձայն լալով, անցնում աղետի տարածքով՝ հուսալով գոնե որևէ մեկին ողջ գտնել: Նման դրսևորումները, ըստ էության, միտված են կոլեկտիվ էներգիայի ստացմանը: Չնայած վերջինիս աճին՝ որոշակի ժամանակ անց այն աստիճանաբար սկսում է նվազել: Այնուամենայնիվ, շուրջ 7,5 շաբաթ անց, երբ ոստիկանական գրասենյակը որոշում է կայացնում փակել աղետի հրապարակը հրշեջների հետագա տարերային կամավորական աշխատանքները կանխելու համար, այնպես, որ ծանր տեխնիկան հնարավորություն ունենա տարածքը մաքրելու, հրշեջների և ոստիկանության միջև հուզական վեճեր են բռնկվում. հրշեջները պահանջում էին չեղարկել ընդունված հրամանը: Նրանք աղետի տարածքը ընկալում էին իբրև իրենց պատկանող սրբազան օբյեկտ:

*Պատկեր 7.*
*Նյու Յորքի հրշեջները պայքարում են ոստիկանների հետ WTC-ի տարածք մուտք գործելու համար: Հրշեջները կրում են սիմվոլիկ էֆեկտ առաջացնող ամբողջական համազգեստ, թեև ավելի վաղ փրկարարական աշխատանքներն իրականացնում էին ամենօրյա աշխատանքային հագուստով (2 նոյեմբեր, 2001):*



Թեև նրանք ձեռք բերեցին ծիսակարգային համերաշխություն և խմբային ինքնություն, այնուամենայնիվ առերեսվեցին պաշտոնների իջեցմանը ու անգամ ավելին՝ մասնագիտական արժանապատվության նվազմանը:

Կործանված հրապարակ վերադառնալը և մահացածների մարմինները որոնելը նրանց արարողությունն էր. այդ պահից սկսած հրապարակը անվերապահորեն պատկանում էր միայն նրանց, չկային այլ մարդիկ, որոնց նույնպես թույլատրվում էր գտնվել այնտեղ: Դա մեծապես հաստատում էր իրենց ինքնությունը դեպքի բացառիկ կորիզը և դրա հուզական կենտրոնը լինելու:

Վկաների պասիվ ամբոխները չունեին ինքնության համար անհրաժեշտ լավ կազմակերպված հիմք, բայց նրանց ուշադրությունը շեղվում էր սկզբնական կիզակետից՝ շենքերից դեպի հրշեջներն ու իրենց սիմվոլիկ գործունեությունը: Փլուզումից ժամեր ու օրեր անց հրշեջներին իրենց փրկարարական աշխատանքներից վերադառնալիս ողջունում էին փողոցների երկայնքով շարված ամբոխները՝ ծածանելով Ամերիկայի դրոշը: Սրանք այն պատկերներն են, որոնք հավաքվել էր հեռուստատեսության և լրատվամիջոցների կողմից՝ որպես ազգի կողմից ընդունված սիմվոլներ: Տեսահոլովակում հրշեջները ասում են, որ իրենք իրենց հերոսներ չեն համարում, որովհետև ոչինչ չեն արել, ոչինչ ավարտին չեն հասցրել, փաստորեն ձախողել են իրենց գործի կատարումը: Նրանք անձամբ իրենց համար սիմվոլներ չեն. այն, ինչ նրանք տեսնում են որպես սիմվոլ, իրենցից դուրս է. դա նրանց ավերված աշտարակներն են:

Հրշեջներին վերցնելով որպես հերոսներ՝ ամբոխը կենտրոնանում էր հատկապես նրանց վրա, ովքեր ունեին հուզական էներգիա, վստահություն և նպատակասլացություն: Նրանք, աղետին դիմակայելով, ստեղծում էին կոլեկտիվ համերաշխության սեփական խորհրդանիշները, և դրան մասնակից էին դառնում՝ հրշեջներին ողջունելով: Նրանք նաև համադրում էին մի քանի սիմվոլներ՝ Ամերիկայի դրոշը, Նյու Յորքի խորհրդանիշները և հրշեջներին: Այս սիմվոլները շաբաթներ ու ամիսներ շարունակ համադրաբար արտահայտվել են խոշոր

ծիսական հավաքույթների, սպորտային իրադարձությունների, երաժշտական համերգների, ինչպես նաև քաղաքական ժողովների ժամանակ: Այս տեսանկյունից սիմվոլները շրջանառվում էին ինքնամ-րապնդվող փոխազդեցության ծիսակարգի շղթայում, սիմվոլների առ-կայությունը պահպանվում էր թարմ հիշողություններում դեռևս թարմ զգացմունքներով՝ խթանելով ու հեշտացնելով նոր արարողակար-գային հավաքների ստեղծումը: Դրանով վերականգնվում է ամբոխնե-րի ուշադրությունը այս արարողությունների հանդեպ, և սիմվոլները կրկին վերալիցքավորվում են՝ պատրաստ դառնալով հաջորդ գործա-ծությանը:

Այս վիդեոձայնագրությունները իրենց հաջորդող դեպքերի հա-ղորդումների հետ միասին հաստատում են տարբեր խմբերի երկա-րատև ու կարճատև փոխազդեցության ծիսակարգերը: Մենք տեսանք երկու նախնական հեռանկարներ՝ դիտարկվող ամբոխների հեռանկա-րը և հրշեջներինը: Հաջորդիվ այս փորձառությունները վերափոխվում են սիմվոլների. այստեղ մասնակիցների տարբեր խմբեր ընտրում են իրենց տեսածի վերաբերյալ տարբեր տեսակետներ՝ վերածելով դրանք հուզական հիշողության ու խմբային համերաշխության սիմվոլների: Սրանցից առաջինը պահի և իրավիճակի միջսուբյեկտիվությունն է, երկրորդը ՝ փորձի երկարաձգումն ու վերաստեղծումն է՝ իբրև սիմվո-լիկ կերպով բյուրեղացված միջսուբյեկտիվություն: Ժամանակի ըն-թացքում սիմվոլների ռեֆլեքսիվ գործածությունը դառնում է ավելի արհեստական, ավելի միախառնված կազմակերպված արարողու-թյունների գործնական պատահականություններին, զնալով էլ ավելի միահյուսված ինքնաներկայացման քաղաքականությանը և փաստացի առավելությանը, քանի դեռ նոր սիմվոլները արդեն նորմալ, սովորա-կան սոցիալական կարգում նստվածք են թողնում հին սիմվոլների շերտի վրա: Գործածման այս ավելի լայն համատեքստում հուզական ինտենսիվությունը, որը սիմվոլներն ունեցել են այն ժամանակ, երբ դրանք թարմ էին, սկսում է սառչել. դրանց կյանքը, ինչպես և բոլոր սիմվոլներինը առհասարակ, կախված է այն հավաքների ինտենսիվու-թյունից, որոնցում դրանք կրկին պետք է կիրառվեն:

ԼՅՈՒԿ ԲՈԼՏԱՆՍԿԻ
ԼՈՐԱՆ ՏԵՎԵՆՈ

# ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ[143]

## Կրիտիկական պահը

Այս հոդվածում մենք ուշադրությունը կկենտրոնացնենք հատուկ տեսակի պահերի վերլուծության վրա․ այն պահերի, որոնք կարևոր դեր են խաղում հասարակական կյանքում: Այդ պահերը բնորոշելու համար մենք կօգտագործենք «կրիտիկական պահեր» եզրույթը, որը միաժամանակ արտացոլում է և՛ մարդկանց քննադատական գործունեությունը, և՛ ճգնաժամի պահի արտասովորությունը: Կարևոր նշանակություն ունի այդ կրիտիկական պահի ռեֆլեքսիվությունը: Ի սկզբանե իրավիճակը մոտավորապես այսպիսին է. մարդիկ, որոնք ներգրավված են ամենօրյա հարաբերություններում, «որոնք միասին ինչ-որ բան են անում», ասենք, քաղաքականության մեջ, աշխատանքի վայրում, արհեստակցական կազմակերպության շրջանակներում, և ստիպված են համակարգել իրենց գործողությունները, հասկանում են՝ ինչ-որ բան այնպես չէ, նրանք այլևս չեն կարող իրար հետ լեզու գտնել, պետք է ինչ-որ բան փոխել: «To realize» բառը կրկնակի նշանակություն ունի. այն միաժամանակ մատնանշում է և՛ ներքին ռեֆլեքսիվ շարժումը, և՛ գործողությունը արտաքին աշխարհում: Երբ գիտակցում ենք, որ ինչ որ բան սխալ է ընթանում, պետք է հեռանալ ներկայից և դիմել անցյալին: Հին բաների, ավարտված գործողությունների մասին հիշողությունները, մոռացված խոսքերը վերադառնում են մեր մտքերի մեջ ընտրողական գործընթացի շնորհիվ, որը կապում է դրանք միմյանց հետ և արդյունքում ստեղծում միասնական իմաստային պատկեր: Այս ռետրոսպեկտիվ շրջադարձը դադարեցնում է գործողությունը:

---

143 Boltanski, L., Thévenot, L. (1999) The Sociology of Critical Capacity//European Journal of Social Theory. Vol. 2, No. 3, pp. 359 – 377. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի*:

Սակայն գործողությունը դադարեցնելու համար մեկ այլ պատճառ էլ կա: Մարդը, ով հասկանում է, որ ինչ-որ բան այնպես չէ, հազվադեպ է լռում: Հաճախ նա չի զսպում իր զգացմունքները: Հասկացումը, որ ինչ-որ բան այնպես չէ, ամենից հաճախ մարդու համար նշանակում է այսպես ապրելու անհնարինությունը: Այդ իսկ պատճառով մարդը ձգտում է կիսվել իր խնդիրներով այն մարդկանց հետ, ում հետ նա մինչ օրս համատեղ գործունեություն է ծավալել:

Այդ դժգոհության արտահայտումը կարող է ավարտվել «տեսարանով»: Տեսարանն ընդունում է տարբեր ձևեր: Այն հեշտությամբ կարող է վերածվել բռնության, սակայն այդ տարբերակը մենք չենք դիտարկելու:

Ավելի հաճախ տեսարանը ուղեկցվում է հակաճառություններով, քննադատության փոխանակմամբ, կշտամբանքներով և վիրավորանքներով: Տեսարանը վերածվում է վեճի: «Տեսարան» բառը ենթադրում է ընտանեկան վիճաբանություններ, այնինչ «վեճ» բառը ենթադրում է իրավական գործընթաց: Եթե առաջինը դիտարկվում է իբրև ոչ ֆորմալ, ապա երկրորդը կարգավորվում է իրավական համակարգով: Բայց կան նաև բազմաթիվ միջանկյալ դեպքեր, ինչպիսիք են արտադրամասերում կամ գրասենյակներում հաճախորդների և աշխատակիցների միջև առաջացող վեճերը կամ փողոցային վեճերը վարորդների միջև: Այս շատ տարբեր իրավիճակների ընդհանուր գծերի ուսումնասիրությունից հետո մենք կփորձենք ուրվագծել վեճի գործընթացի վերլուծության ընդհանուր շրջանակները հասարակության մեջ:

Այս իրավիճակների առաջին բնորոշ գիծն այն է, որ դրանցում ներգրավված մարդիկ ենթակա են արդարացման հրամայականին: Նա, ով քննադատում է ուրիշներին, պետք է արդարանա, որպեսզի աջակցի իր քննադատությանը: Նույն կերպ նա, ով քննադատության թիրախ է, պետք է արդարացնի իր գործողությունները, որպեսզի պաշտպանի իր տեսակետը: Այդ արդարացումները պետք է համապատասխանեն ընդունելիության կանոններին (rules of acceptability): Մենք չենք կարող ասել, օրինակ, «ես համաձայն չեմ Ձեզ հետ, քանի որ ինձ դուր չի գալիս Ձեր դեմքը»: Ընդ որում, նրա համար, ով քննադա-

տում է, և նրա համար, ով պետք է պատասխանի քննադատությանը, այդ ընդունելիության կանոնները դժվար թե տարբեր լինեն: Այսպիսով, վեճի գործընթացի վերլուծության համակարգը պետք է հնարավորություն ունենա դիտարկելու ինչպես ցանկացած սոցիալական կամ իրավիճակային կարգի քննադատությունը, այնպես էլ սույն կարգի արդարացումը այդ նույն գործիքների օգնությամբ:

Բացի այդ, նման իրավիճակները ամեն դեպքում ժամանակավոր են, քանի որ դրանք խախտում են գործողության սովորական կարգը. անընդհատ ապրել ճգնաժամի վիճակում անհնար է: Ճգնաժամից դուրս գալու ուղիներից մեկը համաձայնության վերադառնալն է: Հետևաբար վերլուծության համակարգը պետք է ունենա հնարավորություն դիտարկելու և՛ համաձայնությունը, և՛ տարաձայնությունը միևնույն հնարների միջոցով:

Վերջապես, նման վեճերը ոչ միայն լեզվի խնդիր են: Վեճերում ներգրավված են ոչ միայն մարդիկ, այլ նաև զգալի թվով առարկաներ, օրինակ՝ մասնագիտական վեճի դեպքում համակարգիչն է, որի տվյալները ջնջվել են, ժառանգների միջև վեճի դեպքում տունն է կամ հողը, կամ ընտանեկան տեսարանի դեպքում սպասքն է, որը պետք է լվանալ և այլն: Վերլուծության համակարգը պետք է նախատեսված լինի իրական աշխարհի վեճերը դիտարկելու համար, այսինքն՝ նկարագրելու, թե ինչպես են վեճերը միմյանց հետ կապում մարդկանց և առարկաները:

**Համարժեքության հաստատումը**

Եկեք անդրադառնանք այն պահին, երբ մարդիկ վեճի մեջ են մտնում: Այս պահի կարևոր հատկանիշը կապված է համարժեքության հաստատման հետ: Ինչ-որ մեկին քննադատելու համար կամ մյուսին բացատրելու, որ ինչ-որ բան այն չէ, պետք է ի մի բերել մի շարք մարդկանց և առարկաներ՝ նրանց միջև ստեղծելով կապեր: Օրինակ՝ պետք է միավորել անցյալի իրավիճակներն ու պահերը, որպեսզի բացահայտենք նրանց համար ընդհանուր և այս դեպքին հարմար հատկությունները: Տարբեր առարկաների կամ տարբեր փաստերի բացահայտման

գործընթացը պետք է արդարացված լինի համարժեքության սկզբունքի օգնությամբ, որը ցույց է տալիս, թե ինչն է նրանց միջև ընդհանուր:

Նման գործողությունների վրա է հիմնվում ոչ միայն վեճը, այլև՝ համաձայնությունը: Հետևաբար համաձայնության ձգտող մարդիկ պետք է կենտրոնանան համարժեքության շուրջ պայմանավորվածության (convention of equivalence) վրա, որն արտաքին է նրանց նկատմամբ:

Օրինակ, դիտարկենք վեճը երկու վարորդների միջև վթարից հետո: Նրանցից մեկի կատաղի վրդովմունքը կարող է պայմանավորված լինել մի շարք տհաճ իրավիճակներով, որոնք տեղի են ունեցել նրա հետ այդ օրը. կինը հիվանդացել է, որդին վատ գնահատականներ է ստացել, ղեկավարը նկատողություն է արել, անհանգստացնում է կոկորդի ցավը (միգուցե քաղցկե՞ղը), հիմա էլ այս հիմար տիպը բախվում է իր նոր գեղեցիկ մեքենային: Դա արդեն չափազանց է: Բայց երկրորդ վարորդը նույնպես կարող է ունենալ մի շարք անձնական պատճառներ՝ այս սարսափելի աշխարհից բողոքելու համար. միայն երեկ մահացել է մայրը, բարձրացել են հարկերը, հրատարակիչը հրաժարվել է տպագրել իր նոր գիրքը: Իսկ հիմա էլ այդ ապուշը հայտնվեց հենց ճանապարհի մեջտեղում: Դա արդեն չափազանց է: Եթե նրանք ցանկանում են խուսափել բռնությունից, ապա պետք է կարողանան այդ դժգոհության պատճառների մեծ մասը հետ մղել՝ որպես «մասնավոր», և դիմեն իրավիճակին համապատասխանող օբյեկտների (երթևեկության կանոնների, անվադողերի վիճակի և այլն) ընդհանուր սահմանմանը: Բայց որպեսզի համապատասխանող և ոչ համապատասխանող օբյեկտների ընտրությունը համընկնի, նրանք պետք է ունենան ընդհանուր կարողություն՝ հասկանալու, թե ինչը և ինչ չափով է հարմար տվյալ իրավիճակի համար: Այսինքն՝ նրանք պետք է ունենան ընդհանրության ձևի ընդհանուր սահմանում, որը թույլ կտա այս իրավիճակը կապել այլ իրավիճակների հետ, որոնք նույնականացվում են իբրև նման:

Համարժեքության սկզբունքին հղում կատարելու հնարավորությունը նաև նախապայման է նվազագույն հաշվարկի համար: Այսպի-

սով, հետևողականորեն մեղադրելու կամ քննադատելու համար պետք է օժտված լինել հաշվարկելու որոշակի կարողությամբ: Օրինակ, եթե դուք ուզում եք ըժգոհությամբ ասել գործընկերոջը, որի հետ միասին գիրք եք գրում, «ես զբաղված եմ միայն պատճենահանելով և կատարում եմ ամբողջ սև աշխատանքը, իսկ Դուք, հարմարավետ տեղավորվելով աթոռին, կարդում եք հետաքրքիր գրքեր», դուք պետք է համատեղեք և հավասարակշռեք մի շարք բավականին ցրված և տարաբնույթ գործողություններ: Մենք ենթադրում ենք, որ համարժեքության շեշտադրման անհրաժեշտությունը այն եղանակի կամ ռեժիմի հիմնական հատկանիշն է, որով մարդիկ կառավարում են վեճը: Մենք արդարացման այս ռեժիմը կանվանենք արդարության ռեժիմ:

Ամեն ինչ հակառակն է սովորական գործողության բնական ընթացքում, որում համարժեքությունները ենթակա չեն կանխամտածված ռեֆլեքսիայի: Փոխարենը այն համարժեքությունները, որոնք աջակցում են գործողությունների համակարգմանը, կարող են պարունակվել օբյեկտներում կամ օբյեկտիվացված կանոններում: Թերևս առավել հաճախ մեջբերվող օրինակն է ժամանակի և ժամանակացույցի ստանդարտացումը:

Համագործակցության մեկ այլ եղանակով կամ ռեժիմով, որը մենք կոչելու ենք աֆեկտիվ ռեժիմ (régime d 'agapè)[144], քննադատության և մեղադրանքի համար անհրաժեշտ ակումուլյացման և հաշվարկման օպերացիաներով պատասխանելու փոխարեն մարդիկ ակտիվորեն համագործակցում են՝ հեռանալով համարժեքությունից: Հուզական առումով լարված տեսարանը, որում ներգրավված են աֆեկտիվ կապով միավորված մարդիկ, գտնվում է հենց համարժեքության չափման դադարեցմանն ուղղված գործողության և համարժեքության չափմանը ուշադրություն դարձնող գործողության ռեժիմների սահմանագծին: Նման տեսարանները հաճախ են պատկերվում գեղարվեստական գրականության մեջ: Ամենից հաճախ հեղինակները դիմում են դրանց սիրային հարաբերությունները նկարագրելիս: Սակայն, ինչպես ցույց է տալիս դաշտային աշխատանքը, նման տեսարանները հաճախ տեղի

[144] Boltanski, L. (1990) L'amour et la justice comme compétences. Paris: Éd. Métailié.

են ունենում մասնագիտական փոխհարաբերություններում ներգրավված մարդկանց միջև նույնպես: Մեկ ռեժիմից մյուսին անցնելիս մարդը հիասթափված է նայում տեղի ունեցած իրադարձությանը. «Ինչպես ես կարող էի այդքան հիմար լինել, ինչպիսի միամտություն, ինչ տխմար էի, որ թույլ տվեցի ինձ այդպես օգտագործել: Քանի տարի ես զբաղված եմ պատճենահանություններ անելով կամ (այլ դեպքում) սպասքը լվանալով՝ առանց փոխարենը որևէ բան ստանալու: Այ հիմա ես հասկանում եմ...»: Բայց այս տհաճ պահը ճշմարտության պահը չէ, ինչպես համարում են նրանք, ովքեր վերապրել են այն: Հաշվարկի ռեժիմը ո՛չ ավելի ճշմարիտ է, ո՛չ էլ ավելի մոտ է իրականությանը, քան այն ռեժիմը, որում մարդիկ զսպում են իրենց հաշվարկի ձգտումը: Ճշմարտության շլացնող պատրանքը առաջացնում է աշխարհի ընկալման փոփոխություն, որը տեղի է ունենում մի ռեժիմից մյուսին արագորեն անցնելու պատճառով:

Արդարացման ռեժիմը, որի անհրաժեշտ պայմանն են համարժեքության շուրջ հավաքական պայմանավորվածությունները, անհրաժեշտ է միայն անհաջողությունը հաղթահարելու համար, որոշելու համար, թե ինչն է համապատասխանում առիթին, և այն դեպքերում, երբ արդեն բավարար չեն համակարգման ավելի տեղային ռեժիմները՝ հիմնված «անձնական պիտանիության» կամ «կոնվենցիոնալ օգտագործման» վրա[145]: «Մտերմության ռեժիմում»[146] մարդիկ անմիջականորեն համագործակցում են սովորական միջավայրի հետ ինչպես տանը, այնպես էլ աշխատավայրում: Ներգրավվածության դինամիկան հիմնականում կախված է անձնային և տեղային առանձնահատկություններից, որոնք, ամենայն հավանականությամբ, կողմնակի դիտորդին հասանելի չեն: Վարքի բոլոր առանձնահատկությունները տարօրինակ կթվան նրան, ով բավականաչափ լավ չի տիրապետում այն խորապես անձնական գիտելիքին, որը մարդն իր համար կազմում է շրջապատին հարմարվելու՝ երկար և մասամբ փոխադարձ ճանա-

[145] Thévenot, L. (1990) L'action qui convient // Pharo P. and Quéré L. (eds.) Les formes de l'action. Paris: Éd. de l'EHESS. (Raisons pratiques 1).

[146] Thévenot, L. (1994) Le régime de familiarité: Des choses en personnes // Genèses, № 17, pp. 72–101.

պարհով։ Հիմա պատկերացրեք, որ նրան փոխարինում է անծանոթը։ Առաջանում է «տեղը» կարգի բերելու անհրաժեշտություն, հասցնելու այն վիճակին, որը կհամապատասխաներ ներգրավվածության միանգամայն այլ ռեժիմին՝ հիմնված կանոնավոր ծրագրված գործողության վրա, որն իր հերթին հիմնված է ծրագրերի և գործառույթների (functionalities) վրա։ Սա ներառում է բնական միջավայրի (habitat) բարդ ցանցի սովորական հնարավորությունների զգալի մասի ոչնչացում։ Խորապես ծանոթ գործիքակազմը չի համապատասխանում գործառական արտեֆակտներ ունեցող սովորական անանուն ծրագրերի ձևաչափին։ Մարդը պետք է կանխագիտի նորմալ ծրագրերը և նորմալ վիճակի բերի ակտիվորեն օգտագործվող բոլոր առարկաները։ Ներգրավվածության այս ռեժիմը վերահսկելու համար բավական է լեզվի սովորական գործածությունը, որը վերացական եղանակով բնորոշում է գործողությունները և օբյեկտները։ Սա կտրուկ տարբերվում է ինչպես անձնական պիտանիությունից (որի դեպքում լեզուն հիմնականում ինդեքսային և մարմնական բնույթ է կրում), այնպես էլ կոլեկտիվ պայմանավորվածություններից (որոնց պարագայում լեզուն դառնում է խիստ պայմանական)։ Եթե ինչ-որ բան այնպես չգնա, և վեճ ծավալվի, քննարկման մասնակիցները դուրս կգան գործողության նորմալ մտադրության և օբյեկտի լավ վիճակի մասին առկա նախնական ենթադրությունների սահմաններից։ Այժմ սեփական հավակնություններն արդարացնելու համար նրանք կսկսեն վկայակոչել, օրինակ, արդյունավետության և անվտանգության ընդհանուր սկզբունքները։ Նրանք կհիմնեն սեփական փաստարկները շատ լայն կոնվենցիոնալ պահանջների վրա, որոնց մարդիկ կամ անկենդան էությունները պարտավոր են բավարարել՝ որակված (qualified) լինելու համար։ Նրանք կսկսեն ենթարկել որակումները կոնվենցիոն ստուգման։

Վեճի ժամանակ համարժեքության սկզբունքին հղում կատարելը հիմնական գործողությունն է, որն անպայմանորեն կատարվում է պահանջներ առաջադրելու, անարդարությունը մատնանշելու և փոխհատուցում պահանջելու համար։ Դժգոհ մարդը բռնություն թույլ չտալու համար իր պահանջներն արտահայտելիս պետք է դրանք այնպես կա-

պի ապացույցների և արդարացումների հետ, որպեսզի վերջիններս հնարավոր լինի բավարարել:

Եթե համաձայնենք այն գաղափարի հետ, որ արդարացված վեճերը միշտ հիմնվում են տարաձայնությունների վրա, որոնց օբյեկտը իրավիճակում ներկայացված էությունների արժեքի (worth) կամ մեծության հարաբերական կարգն է, ապա կարելի է իրար կապել շատ տարբեր պատմություններ:

Եկեք քննարկենք հաճախ առաջացող նման խնդիր, օրինակ՝ տեսնենք, թե ինչպես պետք է բաշխել ճաշատեսակները հյուրերի միջև ընթրիքի ժամանակ, եթե սեղանը մեծ է, և հյուրերը չեն կարող իրենց սպասարկել ինքնուրույն: Նման ճաշի ընթացքում անկարելի է խուսափել կերակրատեսակներ բաժանելու կարգի հարցից, ընդ որում, այդ հարցը պետք է դրվի հանրայնորեն: Կարելի է, իհարկե, փորձել խուսափել խնդրից՝ հետևելով ժամանակավոր կամ տարածական կարգին, որը չեզոքացնում է առաջին սպասարկման սոցիալական նշանակությունը: Դա այն է, որ հրաժարվելով սպասարկել ըստ որոշակի հերթականության, տանտերը պարզապես հերթով փոխանցում է ուտեստները: Բայց մյուս բոլոր դեպքերում սպասարկման ժամանակային կարգը հեշտ է շփոթել ավագության սկզբունքով սպասարկման կարգի հետ՝ ըստ հյուրերի հարաբերական կարևորության կամ արժեքի: Մինչդեռ այս կարգի կիրառումը կարող է դժվարին լինել, հատկապես, եթե կա արժեքի տարբեր կարգերի միաժամանակյա գոյության հնարավորություն: Ո՞ւմ առաջինը առաջարկել կերակրատեսակը՝ տատիկին, թե տանտիրոջ ղեկավարին: Քանի դեռ նույն իրավիճակում առկա են տարբեր հնարավոր կարգեր, առաջանում է բողոքի հնարավորություն: Ներդաշնակ և հարթ տեսարանի պայմանը մասնակիցների ենթադրյալ համաձայնությունն է այն հատկանիշների վերաբերյալ, որոնք պետք է ընդգծվեն սպասարկման կարգով: Սակայն համաձայնության նախապայմանը կոնվենցիոն համարժեքության ընդհանուր ճանաչումն է, որը կարող է աջակցել ներգրավված մարդկանց հարաբերական մեծության կամ արժեքի մասին դատողությանը: Նույնիսկ եթե այս կոնվենցիային անդրադարձն ակնհայտ չէ, ապա այն պետք է

լինի բավականին թափանցիկ, որպեսզի ստեղծվի մի իրավիճակ, որը կարծես հիմնված է բնական կարգի վրա:

**Լեգիտիմ համաձայնության հնարավորությունը**

Համաձայնության (որը մենք նկատի ունենք) հիմնական հատկանիշներից մեկը դրա ենթարկվածությունն է, ինչպես նաև իրական կամ պոտենցիալ հակադրվածությունը քննադատությանը: Դա է պատճառը, որ հարձակումների դեպքում դիմադրության հնարավորություն ունենալու համար այն պետք է արդարացված լինի: Այսպիսով, մեր նպատակը կլինի ոչ թե փոխադարձ և հանգամանքներից կախված համաձայնությունը անհատների միջև (որը կարելի է անվանել անապացուցելի և, հետևաբար, տրամաբանորեն անհետևողական), այլ արդարացված համաձայնությունը, որն ուղղված է քննադատությանը առերեսվելուն: Կարելի է նկատել նման համաձայնությունների համատեղելիությունը ընդհանրացման անհրաժեշտության հետ:

Մենք կարող էինք, իհարկե, անուշադրության մատնել համաձայնության լեգիտիմության խնդիրը՝ սահմանափակվելով միայն պատահականության, խաբեության կամ հարկադրանքի հիմքերով կառուցված բացատրությամբ, բայց մենք ուզում ենք հանգամանորեն վերլուծել այս խնդիրը՝ առանձնացնելով արդարացման գործընթացը: Իհարկե, չի կարելի թերագնահատել գերիշխանության, հարկադրանքի, շահերի կամ նույնիսկ խաբեության, մոլորության և ինքնախաբեության դերը սոցիալական կյանքում: Բայց սոցիալական աշխարհի պատկերացումը, որն ամբողջությամբ հիմնված է խաբեության և մոլորության վրա, այլևս չէր կարող բացատրել հենց սոցիալական դերակատարների փորձը:

Քննադատական սոցիոլոգիայի հիմնական խնդիրն այն է, որ այն չի կարող բացատրել դերակատարների կողմից ձեռնարկվող քննադատական գործողությունները: Հետևաբար սոցիոլոգիան, որը ցանկանում է ուսումնասիրել դերակատարների քննադատական գործողությունները՝ քննադատության սոցիոլոգիան՝ որպես հատուկ ուղղություն, պետք է հրաժարվի (գոնե մի որոշ ժամանակով) քննադատա-

կան դիրքորոշումից՝ բացահայտելու համար մարդկանց առօրյա քննադատական գործունեության հիմքում ընկած նորմատիվային սկզբունքները: Եթե ուզում ենք հանգամանորեն քննարկել դերակատարների պահանջները, որոնք վերջիններս առաջ են քաշում՝ դատապարտելով սոցիալական անարդարությունը, քննադատելով ուժի հարաբերությունները կամ բացահայտելով իրենց հակառակորդների թաքնված դրդապատճառները, մենք պետք է պատկերացնենք քննադատության և արդարացման լեգիտիմ և ոչ լեգիտիմ ձևերը տարբերակելու ունակությամբ օժտված դերակատարների: Ավելի ճիշտ՝ սա արդարության սովորական զգացումը բնութագրող որոշակի ունակություն է (competence), որով մարդիկ առաջնորդվում են վեճում: Այժմ մենք կփորձենք ներկայացնել այդ ունակության վերլուծությունը: Մեր նպատակն է լինելու դերակատարների արդարության զգացումի նկարագրությունը (կամ, ավելի ճիշտ, անարդարության) և ունակության այնպիսի մոդելների կառուցումը, որոնք պետք է ունենան դերակատարները ամենօրյա քննադատական իրավիճակներին առերեսվելիս: Այսպիսով, այս մոտեցումը տարբերվում է բարոյական փիլիսոփայությունից, որը ձգտում է բացահայտել որոշ նորմատիվային սկզբունքներ և ընթացակարգեր, որոնք հանգեցնում են արդարության, թեև արդարության նորմատիվային մոդելը կարելի է կառուցել և մեր կողմից նկարագրված դերակատարի արդարության զգացման հիման վրա[147]:

Կարելի է լեգիտիմության պահանջը փոխանցել հետևյալ շատ գործնական պնդմամբ. քննադատությունը կամ արդարացումը կարող են լեգիտիմ համարվել կոնկրետ իրավիճակում, եթե խոսողը կարող է

[147] Արդարության այս զգացման և Ջոն Ռոուլզի ու Մայքլ Ուոլցերի արդարության տեսությունների համեմատությունը տե՛ս Thévenot, L. (1992) Un pluralisme sans relativisme? Théories et pratiques du sens de la justice // Justice sociale et inégalités / Ed. J. Affichard and J.-B. de Foucauld. Paris: Éd. Esprit, pp. 221–253, ինչպես նաև «Արդարացում և փոխզիջում» հոդվածում՝ Canto-Sperber, M. (1996) Dictionnaire d'éthique et de philosophie morale. Paris: PUF, 1996, pp. 789–794: Փոլ Րիկյորը համեմատել է, թե ինչ տեղ է հատկացվում քաղաքականությանը Ուոլցերի մոդելում և մեր մոդելում, տե՛ս Ricoeur, P. (1995) La place du politique dans une conception pluraliste des princepes de justice // Pluralisme et équité: Penser la justice dans la démocratie / Ed. J. Affichard and J.-B. de Foucauld. Paris: Éd. Esprit:

հետևել դրանց՝ անկախ նոր ժամանած մարդու սոցիալական բնութագրերից: Հետևաբար, լեգիտիմության պահանջը շարժման մեջ է դնում ընդհանրացման գործընթացը:

**Արդարության զգացման մոդելավորումը**

Արդարացման իրավիճակներում մարդիկ պետք է իրենց դիրքորոշումները հիմնեն լեգիտիմ արժեքի վրա: Բայց դա չի նշանակում, որ վարքի բոլոր ձևերը պետք է հանգեցվեն համարժեքության մեկ սկզբունքի: Մեր աշխատանքն ուղղված է սոցիոլոգիայի դաշտում հետազոտական ռազմավարության կառուցմանը (ճիշտ այնպես, ինչպես Մայքլ Ուոլցերը արեց արդարության փիլիսոփայության մեջ), որը մեզ թույլ կտար խուսափել ֆորմալ ունիվերսալիզմի և անսահմանափակ պլյուրալիզմի միջև այլընտրանքից, որը հաճախ դառնում է էմպիրիկ գիտակարգերի, օրինակ՝ պատմության կամ սոցիոլոգիայի պատասխանը տրանսցենդենտալ դիրքորոշումներին:

Դասական սոցիոլոգիայի համար արժեքների բազմազանությունը սոցիալական խմբերի բազմազանության արդյունք է: Սակայն այս համակարգում տարբեր խմբերի պատկանող մարդկանց միջև համաձայնության հարցին դժվար է պատասխանել առանց բացատրության, որը հիմնված է գլխավորապես տիրապետման, իշխանության կամ ուժի վրա: Ընդհակառակը, բարոյականության տեսությունները, որոնք նվիրված են արդար հասարակության նախադրյալների վերլուծությանը, առավել հաճախ ուղղված են համընդհանուր ընթացակարգի որոնմանը, որը ընդհանուր համաձայնության հիմք է տալիս: Այս կառույցների օգտակարությունը սոցիոլոգիական աշխատանքի համար հիմնականում իրենց շարունակականության և հաջորդականության մեջ է: Սակայն, երբ նրանք բախվում են այն իրավիճակների բազմազանության հետ, որոնց մեջ ներգրավված են բարդ հասարակության անդամները, վերջիններս կարող են ուտոպիական թվալ:

Ֆորմալ ունիվերսալիզմի և անսահմանափակ պլյուրալիզմի միջև այլընտրանքից կարելի է խուսափել՝ հաշվի առնելով քննադատության և համաձայնության ամրապնդման համար կիրառվող համարժեքու-

թյան սկզբունքների սահմանափակ բազմակիության հնարավորությունը[148]: Ընդհանուր բարիքի տարբեր տեսակներին դիմելը հնարավոր է դարձնում մարդու արժեքի որոշման տարբեր ուղիների բացահայտումը: Բացի այդ, այս մոդելում համարժեքության տարբեր ձևերը կապված են ոչ թե տարբեր խմբերի հետ (ինչպես դասական սոցիոլոգիայում), այլ տարբեր իրավիճակների: Սրանից հետևում է, որ մարդը նորմալ գործելու համար մեկ օրվա կամ անգամ մեկ ժամվա ընթացքում պետք է տեղափոխվի համարժեքության տարբեր ձևերին համապատասխանող իրավիճակների միջև: Համարժեքության տարբեր սկզբունքները ֆորմալ առումով անհամատեղելի են միմյանց հետ, քանի որ յուրաքանչյուրը ընդունված է այնպիսի իրավիճակում, որում դրա վավերականությունը սահմանվում է որպես համընդհանուր: Այստեղից հետևում է, որ մարդիկ, գտնվելով որևէ իրավիճակում, պետք է հնարավորություն ունենան անտեսելու կամ մոռանալու այն սկզբունքները, որոնց վրա նրանք հիմնել էին իրենց արդարացումները՝ լինելով այլ իրավիճակում:

Մենք կիրառեցինք այս ռազմավարությունը՝ հայտնաբերելու համար մարդկանց հասանելի լեգիտիմ արժեքը այնպիսի սովորական իրավիճակներում, որոնցում նրանք պետք է հստակեցնեն իրենց հիմքերը և արդարանան: Մենք վերցրեցինք իրարից բավականին հեռու գտնվող երկու տարբեր աղբյուրներ՝ հաջորդաբար դիմելով թե՛ մեկին, թե՛ մյուսին: Ավելի ճիշտ, մենք ունեինք տվյալների երեք խումբ: Առաջին խումբը վեճերի վերաբերյալ դաշտային աշխատանքների ընթացքում հավաքված էմպիրիկ տվյալներն էին: Ուսումնասիրության այս ուղղությունը (մի խումբ ուսանողների կողմից իրականացված և սեմինարի ընթացքում ընդհանրացված) մեզ տվել է զգալի թվով փաստարկներ և իրավիճակային հնարներ, որոնցից հաջողվեց ընտրել առօրյա կյանքում պարբերաբար օգտագործվող արդարացումները: Եկեք հիշենք մեր միջավայրում լավ ծանոթ մի իրավիճակ, օրինակ՝ գործընկերոջ կողմից վերջերս հրապարակված գրքի առավելությունների

[148] Boltanski, L., Thévenot, L. (1991) De la justification: Les économies de la grandeur. Paris: Gallimard.

քննարկումը: Կարելի է պնդել, որ այս գիրքը լայնորեն հայտնի է, կամ, որ այն լավ է վաճառվում: Սակայն կարելի է ի չիք դարձնել այդ գովասանքները՝ պնդելով, որ, օրինակ, նման գիրքը համակարգված կամ իսկապես ստեղծագործական աշխատանքի արդյունք չէ: Մարդկանց կամ օբյեկտներին վերագրվող արժեքները կամ մեծությունները հատկապես նկատելի են դառնում, երբ իրավիճակը վերածվում է վիճելի իրավիճակի, այնպես որ նման իրավիճակների ուսումնասիրությունը շատ հարմար առիթ է այդ մեծությունները բացահայտելու համար:

Տվյալների երկրորդ խումբը ներառում էր քաղաքական փիլիսոփայության մի շարք դասական տեքստեր: Այս ընտրությունը պայմանավորված էր այն փաստով, որ էմպիրիկորեն դիտարկվող վեճերի ընթացքում մարդիկ պարտադիր չէ, որ համակարգված կերպով զարգացնեն իրենց փաստարկները, ուստի վերլուծաբանի համար երբեմն դժվար է հայտնաբերել համարժեքության այն սկզբունքները, որոնք նպաստում են գնահատման և որակավորման գործընթացին: Եվ հակառակը, սկզբունքների պարզաբանմանը հանգեցնող համակարգվածության պահանջները քաղաքական փիլիսոփայության էությունն են: Համոզիչ լինելու համար վերջինս պետք է լավագույնս ցույց տա այն ընդհանուր բարիքի հիմնավորվածությունը, որի վրա հիմնված է: Այսպիսով, համեմատելով քաղաքական փիլիսոփայության տարբեր նմուշներ՝ մենք սահմանեցինք համարժեքության տարբեր սկզբունքներ և կառուցեցինք մի մոդել, որն արտացոլում է այն, թե ինչպես կարող են ապահովվել արդարացման ենթարկվող հավակնությունները: Մենք քաղաքական փիլիսոփայությունն օգտագործել ենք որպես շրջանցիկ ճանապարհ, որպեսզի բարելավենք մեր ըմբռնումն այն ունակությունների վերաբերյալ, որոնք դերակատարները կիրառում են այն ժամանակ, երբ պետք է արդարացնեն իրենց գործողությունները կամ քննադատությունները: Վեճի գործընթացը չի կարող հանգեցվել ո՛չ եսասեր շահերի ուղղակի արտահայտմանը, ո՛չ էլ տարաբնույթ աշխարհայացքների անարխիկ ու անվերջ առճակատմանը: Վեճերի ընթացքին հետևելիս, ավելի ճիշտ՝ այն վեճերի, որոնցում բացառվում է բռնությունը, չի կարելի չնկատել ընդհանուր պարտադրանքները,

որոնք ձևավորում են դրանցում ներգրավված անհատների վարքը: Օրինակ, մարդիկ պետք է հիմնեն իրենց փաստարկները հավաստի տվյալների վրա՝ այդպիսով արտահայտելով տարաձայնությունները հարթելու իրենց ցանկությունը: Քաղաքական կառույցները կարելի է օգտագործել որպես հուսալի գործիքներ՝ պարզելու համար այդ պարտադրանքները և դատողությունների հիմքերը, որոնք հաճախ թաքնված ձևով պարունակվում են այն փաստարկներում, որոնցով մարդիկ փոխանակվում են գործողության ընթացքում: Այսպիսով, այդ կանոնական տեքստերի օգտագործումը զուտ գործիքային էր և, հետևաբար, արմատապես տարբերվող փիլիսոփայական ավանդույթից: Մենք ուսումնասիրել ենք այդ տեքստերը՝ որպես քաղաքական կապի (political bond) ընդհանուր քերականություն՝ առանց անդրադառնալու տեքստերի բուն էությանը կամ սոցիալ-պատմական համատեքստին:

Իհարկե, մենք չենք ենթադրում, որ բոլորը կարդացել են այն աշխատանքները, որոնք մենք օգտագործել ենք վեճի մեջ ներգրավված մարդկանց կողմից օգտագործվող ունակության մոդելներ կառուցելու համար: Բայց այդ քաղաքական փիլիսոփայության մեջ պարզաբանված և ձևայնացված արժեքի կարգերը (orders of worth) նույնպես մարմնավորված են օբյեկտիվացված ձևերում (objectified devices), որոնցից բաղկացած են առօրյա իրավիճակները: Այժմ դրանք կազմում են սովորական ինստիտուտների և սոցիալական ձևերի (քվեարկության տեղամասերը, արտադրամասերը, զանգվածային լրատվության միջոցները, արտիստական շոուները և ընտանեկան տոները) զգալի մասի էությունը:

Հատուկ ուշադրություն դարձնելով արդարացման և քննադատության գործընթացին՝ մենք հետաքրքրվում էինք ոչ այնքան քաղաքական փիլիսոփայության հայեցակարգերով, որոնք հատուկ նշանակություն են տալիս իշխանությանը կամ պարտադրանքին, որքան նրանցով, որոնք նվիրված են քաղաքական և սոցիալական հավասարակշռության ընկալմանը: Այս կառույցները համախմբում են այն, որ դրանք ներկայացնում են մի աշխարհ, որում մարդիկ խիստ առանձնացված են բոլոր մյուս արարածներից և ի մի են բերված հիմնարար

հավասարության միջոցով: Այսպիսով, այս փիլիսոփայական կառույցների տարբերակիչ գիծը հատուկ ուշադրությունն է ընդհանուր մարդկային բնության վրա: Տարբեր նմուշներում, որոնք մենք օգտագործել ենք արդարության սովորական զգացումը բացատրելու համար, մարդիկ հավասար են, քանի որ նրանք բոլորը պատկանում են մարդկությանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս տարբեր ավանդույթներից վերցված տեքստերի համեմատությունը, այդ նմուշներից յուրաքանչյուրն առաջարկում է կարգի կամ համարժեքության հատուկ սկզբունք, որը կարելի է կիրառել՝ որոշելու համար, թե որն է «մեծերի» մեծությունը կամ արժեքը՝ դրանով իսկ սահմանելով արդարացման ենթակա կարգի հիմքը մարդկանց համար:

Քննադատության իրավիճակում ներգրավված մարդը պետք է օժտված լինի արդարացման մի ձևից մյուսին անցնելու ունակությամբ՝ պահպանելով նույն պահանջները: Տարբեր կարգերի համար ընդհանուր այս պահանջները հստակեցնելու փորձը մեզ բերեց ընդհանուր մոդելի բացահայտմանը. այն ներառում է արժեքի բոլոր կարգերը և բացատրում է մեկից մյուսին անցնելու հնարավորությունը կամ փոխզիջման հասնելու հնարավորությունը: Երկու տարբեր հիմնարար սկզբունքների՝ ընդհանուր մարդկային բնույթի սկզբունքի և կարգի սկզբունքի ներկայությունը մոդելի կենտրոնում լարվածություն է առաջացնում: Չէ՞ որ կարգի հատուկ սկզբունքին համապատասխան աստիճանակարգի ներսում տեղադրված լինելով՝ մարդիկ հավասար են՝ ելնելով ընդհանուր մարդկային բնության սկզբունքից: Սրանից հետևում է, որ այս մոդելում որոշիչ է տարբերությունը որակավորման ցանկացած ձևից առաջ առկա մարդկանց դրության (states of persons) և որակավորման գործընթացին վերաբերվող մարդկանց դրության միջև: Դրա համար էլ հայեցակարգը, որում վճռորոշ է մարդկանց դրությունը՝ նրանց արժեքը կամ «մեծությունը», կտարբերվի ընդհանուր մարդկային բնության սկզբունքից[149]: Քննադատական պահը հենց այն պահն

---

[149] Տե՛ս Ալեքսիս Կարելի՝ «cité eugénique» («ավետարանական քաղաք») կառուցելու փորձը և վերջինիս հետևանքները ժողովրդագրության պատմության և վիճակագրու-

է, երբ մարդկանց արժեքի վերաբերյալ տարաձայնություններն ակնհայտ են դառնում: Օրինակ, ինչ-որ մեկը կկառուցի իր քննադատությունը այս կերպ. «Լավագույն համակարգիչը տվել են ոչ լավագույն ծրագրավորողին»: Կամ մեկ այլ իրավիճակում. «Ավագ որդին, որն ունեցվածքի ժառանգորդն է, իրականում չունի այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են այն կառավարելու համար»: Այս տարաձայնության արտահայտումը կասկած է հարուցում ներգրավված անձանց հարաբերական արժեքի հարցում, ինչի պատճառով անհանգստություն է առաջանում: Այս կասկածները փարատելու համար անհրաժեշտ է դատողություն, որը արմատավորված կլինի տրված իրավիճակում: Որպեսզի հասկանանք, թե ինչպես է այդ դատողությունը առաջացել, մենք պետք է ուշադրություն դարձնենք պրագմատիկ պայմաններին, որոնցում մարդուն արժեք է վերագրվում: Այնուհետև մենք պետք է պատասխանենք մեկ այլ հարցի, որը վերաբերում է օբյեկտներին, ինչպես նաև մարդկանց ու իրերի միջև առկա հարաբերություններին: Որպեսզի վերլուծենք այն դեպքը, որում կասկածի տակ է առնվել ծրագրավորողի մասնագիտական կարողությունը կամ այն, որում կասկածի առարկա էին դարձել ավագ որդու բարոյական հատկանիշները, մենք պետք է ուսումնասիրենք մարդկանց և բազմաթիվ օբյեկտների՝ նյութական և ոչ նյութական, (մեքենաները, համակարգչային ծրագրերը, հրահանգները, առաջարկությունները, ժառանգման կանոնները, տեղանքի առանձնահատկությունները և այլն) միջև առկա կապերը: Մենք չենք դիտարկելու այդ օբյեկտները միայն որպես սիմվոլիկ նշանակության կրողներ, ինչպես դա հաճախ անում են սոցիոլոգները: Ընդհակառակը, մենք ցանկանում ենք ցույց տալ, թե ինչպես են մարդիկ, փորձելով փարատել իրենց կասկածները, ապավինում այնպիսի իրերին, օբյեկտներին և հնարներին, որոնք օգտագործվում են որպես կայուն ռեֆերենտներ, որոնց վրա հիմնվում է փորձարկումը կամ իրականության ստուգումը: Իրականության նման ստուգումները դատողություններին հնարավորություն են տալիս հասնել հիմնավոր-

---

թյան համար, Thévenot, L. (1990) La politique des statistiques: Les origines sociales des enquêtes de mobilité sociale // Annales Économie Société Culture, № 6, pp. 1275–1300:

ված և լեգիտիմ համաձայնության՝ այդպիսով ապահովելով վեճի ավարտի հնարավորությունը:

Բացահայտելու համար օբյեկտների աշխարհները, որոնց վրա հիմնվում է իրականության ստուգման իրականացումը, մենք ուսումնասիրեցինք տվյալների երրորդ կորպուսը՝ բաղկացած որոշ ժամանակակից աշխատանքներից, որոնք ծառայում են որպես վարքի կանոնների ուղեցույցներ կամ ձեռնարկներ արդի ընկերություններում: Այս ուղեցույցները գրված են ընթերցողների լայն շրջանակի համար և հավակնում են մանկավարժական գործառույթի: Քանի որ այդ նյութերը նախատեսված են մարդկանց սովորեցնելու համար, թե ինչպես կողմնորոշվել նոր իրավիճակներում և ինչպես գործել արդեն իսկ գոյություն ունեցող իրավիճակներում, դրանք պարունակում են հղումներ բազմաթիվ սովորական օբյեկտների, որոնք, բնականաբար, բացակայում են քաղաքականության փիլիսոփայական տրակտատներում: Մենք ձգտում էինք ընտրել ամենատարբեր ձեռնարկներ: Դրանցից յուրաքանչյուրը նվիրված է արժեքի որոշման հատուկ միջոցի բացահայտմանը, սակայն ենթադրվում է, որ դրանք բոլորը նախատեսված են կիրառվելու նույն սոցիալական տարածության համար, որը, մեր դեպքում, ժամանակակից ընկերության տարածությունն է: Դրա պատճառը հետևյալն է: Երբ մենք առաջ քաշեցինք այն վարկածը, որ նույն մարդիկ նույն օրը և նույն սոցիալական տարածության մեջ մի իրավիճակից մյուսին անցնելիս պետք է օգտագործեն գնահատման տարբեր հնարներ՝ ներառյալ անդրադարձը տարբեր տիպի արժեքներին: Մեր օրերում ընկերությունները շատ հարմար դաշտ են այս վարկածը ստուգելու համար: Հատկապես կարևոր է ժամանակակից ընկերությունում տարատեսակ ռեսուրսների համադրությունը, որը հանգեցնում է համաձայնեցվածության տարբեր ձևերի առաջացմանը և հիմնված է արդարության տարբեր սկզբունքների վրա: Ժամանակի և տարածության մեջ միմյանց մոտ գտնվող իրավիճակները արդարացվում են տարբեր սկզբունքների հիման վրա: Եվ միևնույն մարդիկ պետք է հաղթահարեն այդ իրավիճակները: Վերցնենք, օրինակ, ավիակոնստրուկտորի դեպքը, որը մեկ օրվա ընթացքում պետք է նա-

խազծի նոր ինքնաթիռի փորձարարական լաբորատոր թեստը, ապա հանդիպի առևտրի գծով մենեջերների հետ՝ ներկայացնելու այն տեխնիկական փաստարկները, որոնք ամենահարմարն են նոր ինքնաթիռի վաճառքի համար, ապա գնա ճաշի, ուր հրավիրված է սենատորը (այսինքն՝ հասարակայնության հետ կապերի հնար (device)) և օրվա վերջում հանի փողկապը և այցելի CFDT-ի տեղական ղեկավարների արհմիութենական ժողովը: Այդ նույն մարդը կարող է ուշացումով տուն գալ, լսել կնոջ կշտամբանքները և, վերջապես, գնա վերջերս ճանաչում ստացած երիտասարդ դաշնակահարի համերգին:

Մենք ընտրեցինք առօրեական պրակտիկայի ժամանակակից ձեռնարկները, որոնք կարող էին համադրվել դասական քաղաքական տեքստերի հետ, որոնցից մենք քաղեցինք տարբեր առօրյա իրավիճակներում կիրառվող կարգի սկզբունքները: Այնուհետև մենք իրականացրեցինք բավականին անհարգալից օպերացիա, այն է՝ համադրեցինք պրակտիկ գործողությունների այդ «երկրային» ձեռնարկները քաղաքական փիլիսոփաների անմահ աշխատանքների հետ:

**Ընդհանուր աշխարհներ**

Այժմ մենք համառոտ կուրվագծենք ընդհանուր աշխարհները՝ ուշադրություն դարձնելով նախ դասական տեքստերից վերցված կարգի հիմքում ընկած տարբեր սկզբունքներին, և երկրորդ՝ այդ աշխարհները բնակեցնող այն էություններին (լինեն դրանք մարդիկ կամ իրեր), որոնք նկարագրված են համապատասխան գործնական ձեռնարկներում: «Արդարացման մասին» աշխատությունում[150] մենք առանձնացրել ենք վեց աշխարհներ (աղյուսակ.1): Մենք գտնում ենք, որ այս վեց աշխարհների առանձնացումը բավարար է՝ առօրյա իրավիճակներում ներկայացվող արդարացումների մեծ մասը նկարագրելու համար: Սակայն վեց թիվը ամենևին կախարդական չէ: Առանձնացված աշխարհները պատմական կառույցներ են, որոնցից մի քանիսը ավելի ու ավելի են կորցնում մարդկանց արդարացումներն ամրապնդելու

[150] Boltanski, L., Thévenot, L. (1991) De la justification: Les économies de la grandeur. Paris: Gallimard.

իրենց ունակությունները, և փոխարենը առաջանում են ուրիշները: Կարելի է, օրինակ, հարց տալ, թե արդյոք ներկա պահին կանաչ (էկոլոգիական) արժեք կամ հաղորդակցական արժեք չի սահմանվում:

*Աղյուսակ 1.*

**Արժեքի կարգերը**

| *Արժեքի կարգը* | *Ոգեշնչման աշխարհը* | *Տնային աշխարհը* | *Քաղաքացիական աշխարհը* | *Կարծիքի աշխարհը* | *Շուկայի աշխարհը* | *Արդյունաբերական աշխարհը* |
|---|---|---|---|---|---|---|
| *Գնահատման եղանակը (արժեքը)* | Երանություն, անհարմարվողականություն (nonconformity), ստեղծագործական ունակություն (creativeness) | Հարգանք, համբավ | Կոլեկտիվ հետաքրքրություն | Համբավ | Գին | Արտադրողականություն, արդյունավետություն |
| *Համապատասխան տեղեկատվության ձևը* | Զգացմունքային | Բանավոր՝ հիմնված օրինակների և կյանքից վերցված դեպքերի վրա | Ֆորմալ, պաշտոնական | Սեմիոտիկ | Դրամական | Չափելի՝ չափանիշներ, վիճակագրություն |
| *Հիմնարար հարաբերությունները* | Կիրք | Վստահություն | Համերաշխություն | Ճանաչում | Փոխանակում | Գործառական կապ |
| *Մարդկանց որակումը* | Ստեղծագործականություն (creativity), հնարամտություն | Հեղինակություն | Հավասարություն | Հայտնի լինելը (celebrity) | Ցանկություն, գնողունակություն | Մասնագիտական որակ, արհեստավարժություն |

*Ոգեշնչման աշխարհը*

Այս աշխարհի ստեղծումը հիմնված է Սուրբ Օգոստինոսի «Աստծո քաղաքի մասին» գրքի վրա և նրա այն տրակտատի, որը նվիրված է երանության խնդրին: Այս աշխարհում արժեքը ուղղակիորեն վերաբերում է արտաքին աղբյուրին, որից բխում է ցանկացած հնարավոր արժեք: Այս արժեքը հիմնված է երանության վիճակի հասնելուն և, հետևաբար, բացարձակապես անկախ է ուրիշների կողմից ճանաչվածության խնդրից: Այն առաջանում է մարդու մարմնում՝ հատկապես ասկետիզմով պատրաստված, գլխավորապես զգացմունքների օգնությամբ: Վերջինիս դրսևորումները տարբեր են և բազմազան՝ սրբություն, արարչություն, գեղարվեստական զգայունություն, երևակայություն և այլն: Այնուամենայնիվ, այս աշխարհին միշտ անդրադարձ է արվում այն ժամանակ, երբ մարդիկ հասնում են արժեքին՝ առանց մտահոգվելու ուրիշների կարծիքների մասին: Օրինակ, դա վերաբերում է արվեստագետներին: Պարտադիր չէ, որ արվեստագետները մերժեն հանրային ճանաչման նշանները կամ ֆինանսական աջակցությունը, բայց դրանք ընդունելու համար նրանք պետք է փոխզիջման գնան (որին միշտ բարդ է հասնել) այլ տիպի արժեքի հետ, օրինակ՝ համբավի կամ շուկայի արժեքի: Նույնիսկ այն ժամանակ, երբ այդ մարդիկ հասնում են ճանաչման, նրանք երբեք չեն կապում իրենց աշխատանքի արժեքը կամ իրենց սեփական արժեքը հաջողության հետ:

Որպեսզի բացահայտենք ոգեշնչման աշխարհի օբյեկտները, մենք օգտագործեցինք «Ստեղծագործականությունը գործնականում» ուղեցույցը (գրված «ստեղծագործականության հարցերով խորհրդատուի» կողմից), որի նպատակն էր զարգացնել ղեկավարների ստեղծագործական կարողությունները: Ինչպես և մյուս ձեռնարկների դեպքում, որոնց մասին մենք կխոսենք ստորև, այս աշխատանքից կարելի է հանել մարդկանց, առարկաներ, որակների և հարաբերությունների կառուցման տիպիկ ձևերին առնչվող եզրույթների ցանկը: Առանց մանրամասների մեջ գնալու՝ կարելի է ասել, որ ոգեշնչման աշխարհին համապատասխանում են այնպիսի էակներ, ինչպիսիք են, օրինակ, ոգիները, խելագարները, արվեստագետները, երեխաները: Նրանք

նշանակալի և մեծ են, եթե արտասովոր են, զգացմունքային, և կարող են զարմացնել: Նրանց գործողության տիպիկ եղանակներն են երազանքը, երևակայությունը, բողոքը կամ վառ վերապրումները:

***Տնային աշխարհը***

Տնային աշխարհը վերցված է Բոսյուեի «Սուրբ գրությունից քաղված քաղաքականություն» աշխատանքի մեկնաբանությունից: Տնային աշխարհում մարդկանց արժեքը կախված է վստահության հիերարխիայից, որը հիմնված է անձնական կախվածությունների շղթայի վրա: Էակների միջև քաղաքական կապը դիտվում է որպես ազգակցականության ընդհանրացում և հիմնվում է միջանձնային հարաբերությունների և ավանդույթի նկատմամբ հարգանքի վրա: Այս աշխարհում մարդուց անհնար է խլել առնչությունը սեփական մարմնին, ընտանիքին, ցեղին, դասին: Բոսյուեի քաղաքական մոդելում բարձրագույն էակ հանդիսացող թագավորին կարելի է համեմատել հոր հետ, որն իրեն զոհաբերում է՝ հանուն իրենից կախվածություն ունեցողների: Այս մոդելում որևէ մեկի արժեքը գնահատելու համար պետք է իմանալ նրա տեղը կախվածությունների այն ցանցում, որից տվյալ մարդը քաղում է իր հեղինակությունը:

Այսօրվա տնային աշխարհի օբյեկտները նկարագրելու համար մենք օգտագործեցինք «Բարեվարքության կանոններ և կարիերա» գործնական ձեռնարկը, որը նվիրված է ընկերություններում մարդկանց հաղորդակցության խնդիրներին ու բարեվարքության կանոններին և նախատեսված է սոցիալապես մոբիլ աշխատողների համար: Այս գրքի համաձայն՝ կարևոր և ծանրակշիռ մարդիկ են համարվում ղեկավարները, պետերը կամ նույնիսկ բարեկամները: Հիմնական հատկանիշներն են՝ լավ վարքը, ազնվությունը, նվիրվածությունը և «բնավորության» առկայությունը: Տիպիկ օբյեկտներն են, օրինակ, այցեքարտերը, նվերները, կալվածքները, տները, տիտղոսները: Համապատասխան հարաբերություններ հաստատելու եղանակների շարքում կարելի է նշել, օրինակ, որևէ մեկին խորհուրդ տալը (act of

reccomendation), ծնունդ տալը, դաստիարակելը, վերարտադրելը, հրավիրելը:

*Համբավի աշխարհը*

Համբավի աշխարհը վերցված է Հոբսի «Լեվիաֆան»-ից, հատկապես՝ պատվին նվիրված գլխից: Եթե տնային աշխարհում արժեքը կարևոր է միայն էակների հիերարխիկ շղթայում, ապա համբավի աշխարհում այն այլ մարդկանց կարծիքի արդյունքն է: Մարդու արժեքի չափը կախված է հասարակական ճանաչման կոնվենցիոնալ նշաններից: Այս տեսակի արժեքը կախված է միայն մարդուն ճանաչող անհատների քանակից: Այսպիսով, այն ոչ մի կապ չունի անձնական կախվածությունների ոլորտի հետ և կախված չէ մարդու ինքնագնահատականի հետ: Այդ իսկ պատճառով, եթե անհամապատասխանություն է հայտնաբերվում մարդու ինքնագնահատականի և ուրիշների կողմից ճանաչված լինելու միջև, ապա կարող են ծագել հակասություններ. այս աշխարհի բուն իրականությունը այլ մարդկանց կողմից ճանաչված լինելն է:

Որպես ուղեցույց՝ մենք օգտագործեցինք «Հասարակայնության հետ կապերի սկզբունքները և տեխնոլոգիաները» ձեռնարկը, որը նվիրված է հասարակայնության հետ կապերի հնարներին: Այս աշխարհին համապատասխանող մարդիկ հայտնի անհատներն են, աստղերը, հասարակական կարծիքի առաջատարները, լրագրողները: Իրենք նշանակալի են ու ծանրակշիռ միայն այն ժամանակ, երբ հայտնի են, ճանաչված, հաջողակ կամ համոզիչ: Այս աշխարհի սովորական օբյեկտներն են ապրանքանիշները, տարբերանշանները, տեղեկատվության ստացման և փոխանցման միջոցները, մամլո հաղորդագրությունները և բուկլետները: Հարաբերությունների կառուցման համապատասխան եղանակը ազդեցությունն է, որևէ մեկի հետ ինքնանույնականացումը, ուղերձներ հղելը, որևէ մեկի մասին խոսելը, ինչպես նաև բամբասանքներն ու լուրերը:

*Քաղաքացիական աշխարհը*

Հավանաբար, ոչ մի աշխատանք ավելի լավ պատկերացում չի տալիս քաղաքացիական աշխարհի մասին (առնվազն դրա ֆրանսերեն տարբերակում), քան Ռուսոյի «Հասարակական պայմանագրի մասին» գիրքը: Հանրային քաղաքականության մեջ, ճիշտ այնպես, ինչպես Բոսյուեի ներկանացրած ընտանեկան քաղաքականության, քաղաքացիական աշխարհը կախված է սուվերենի իշխանությունից, որի գերիշխանությունը անհատների եսասեր ցանկությունների նկատմամբ երաշխավորում է ընդհանուր բարիքը: Բայց Ռուսոյի սուվերենը չունի կոնկրետ մարմնավորում: Այն ժամանակ, երբ քաղաքացիական աշխարհում քաղաքացիները հրաժարվում են մասնավոր շահերից և ձգտում են բացառապես ընդհանուր բարիքի, նրանց կամարտահայտությունները համընկնում են մի կետում: Այդպես ձևավորվում է սուվերենը: Քաղաքացիական արժեքը դիմակայում է ինչպես անձնական կախվածություններին, որոնց վրա հիմնվում է ընտանեկան աշխարհի արժեքը, այնպես էլ համբավի արժեքը կազմող ուրիշների կարծիքներին: Քաղաքացիական աշխարհում մարդիկ աննշան են, եթե նրանք դիտվում են որպես միմյանցից առանձնացված անհատներ, որոնք գործում են իրենց եսասիրական կամքի համաձայն: Ընդհակառակը, եթե նրանց համարենք կոնկրետ մարմնավորում չունեցող, բացառապես ընդհանուր շահի մասին հոգացող սուվերենի անդամներ, նրանք նշանակալի են և համապատասխանում են քաղաքացիական աշխարհին: Որպեսզի կազմենք քաղաքացիական աշխարհի հիմնական օբյեկտների, անհատների և հնարների ցանկը և նկարագրենք այս տեսանկյունից դիտարկվող իրավիճակներն ընկերություններում, մենք օգտագործել ենք CFDT-ի կողմից հրապարակված երկու միմյանց փոխլրացնող արհմիութենական ձեռնարկներ՝ «Ինչպես ընտրել կամ նշանակել պատվիրակներ» և «Արհմիութենական բաժին»: Աշխատանքի ոլորտում աշխատուժի կազմակերպման եղանակը կարգավորվում է սոցիալական օրենքներով, որոնք ինքնին հանդիսանում են քաղաքացիական համարժեքության սկզբունքը կիրառելու տասնիններորդ դարի ձգտումների արդյունքը:

Քաղաքացիական աշխարհի առանձնահատկությունն այն է, որ շեշտը դրվում է ոչ թե անհատական, այլ կոլեկտիվ էակների վրա: Առանձին անհատներ կարող են համարվել նշանակալի միայն այն ժամանակ, երբ նրանք պատկանում են որևէ խմբի կամ ներկայացնում են կոլեկտիվ անձի: Հետևաբար, այս աշխարհում կարևոր սուբյեկտները ֆեդերացիաներն են, համայնքները, ներկայացուցիչները կամ պատվիրակները: Նրանց որակներն են պաշտոնականությունը և համապատասխանությունը օրենքին: Համապատասխան օբյեկտները կարող են լինել ինչպես ոչ նյութական (օրինակ՝ կանոնները, կոդեքսները, ընթացակարգերը), այնպես էլ նյութական (արհմիութենական տարածքները կամ քվեատուփերը): Արժանի են համարվում այն հարաբերությունները, որոնք մարդկանց մոբիլիզացնում են կոլեկտիվ գործողության:

### *Շուկայի աշխարհը*

Ադամ Սմիթի «Ժողովուրդների հարստությունը» աշխատությունը (հիմնականում առաջին գլուխները, որոնցում խոսվում է այն մասին, թե ինչպես է գործում շուկան) պարունակում է փաստարկներ, որոնք հիմնավորում են շուկայի կառավարման գաղափարը: Շուկայական կապը համակարգում է անհատներին ապրանքների սակավության շնորհիվ, այն ապրանքների, որոնք բոլորը ձգտում են ձեռք բերել: Անհատների ցանկությունների այս մրցավազքը ապրանքի տիրապետման համար նախատեսված գինը կախվածության մեջ է դնում ուրիշների ցանկություններից: Ինչպես գրում է Ալբերտ Հիրշմանը իր «Կրքերը և հետաքրքրությունը» գրքում[151]՝ մեջբերելով Ֆրենսիս Հաթչեսոնին, «հարստության հանգիստ ցանկությունը» թույլ է տալիս հաստատել ներդաշնակ կարգ, որը հաղթահարում է անհատական շահերի միախառնումը:

Շուկայի աշխարհը չի կարելի շփոթել տնտեսական հարաբերությունների ոլորտի հետ: Հակառակը, մենք կփորձենք ցույց տալ, որ

[151] Hirschman, A. (1981) The Passions and the Interests: Political Arguments for Capitalism before its Triumph. Princeton, NJ: Princeton University Press.

տնտեսական գործողությունները հիմնվում են համակարգման առնվազն երկու ձևերի վրա՝ շուկայական և արդյունաբերական, ընդ որում, դրանցից յուրաքանչյուրը հիմք է հանդիսանում իրականության տարբեր ստուգումների համար։

Մեզ չհաջողվեց գտնել ժամանակակից ֆրանսիական ձեռնարկ, որը կարելի կլիներ օգտագործել ժամանակակից առևտրային աշխարհին համապատասխանող օբյեկտները նկարագրելու համար։ Այդ պատճառով մենք դիտարկեցինք «Ի՞նչ չեն սովորեցնում Հարվարդի բիզնեսի դպրոցում» ամերիկյան պարբերականի ֆրանսերեն թարգմանությունը, որը նվիրված է բիզնեսի արվեստին և նախատեսված է ընթերցողի լայն շրջանակի համար։ Մեզ այս գիրքը հատկապես հետաքրքիր է թվում, քանի որ այն գործարար հաջողության հիմքում է դնում արդյունաբերական արտադրության հետ բոլորովին կապ չունեցող փորձը. հեղինակը հարստացել է՝ գովազդային գործակալություններին վաճառելով հայտնի մարդկանց անունները։ Շուկայի աշխարհի կարևոր սուբյեկտները գնորդներն ու վաճառողներն են։ Նրանք նշանակալի են, երբ հարուստ են։ Նրանց հիմնական որակներն են շուկայի հնարավորությունների հայտնաբերման և օգտագործման պարագայում դրսևորվող օպորտունիզմը, ինչ-որ անձնական կապերով ծանրաբեռնված չլինելը և զգացմունքային զսպվածությունը։ Նրանց միմյանց հետ կապում են մրցակցային հարաբերությունները։

*Արդյունաբերական աշխարհը*

Համարժեքության արդյունաբերական սկզբունքը դուրս է բերվել ֆրանսիական սոցիոլոգիայի հիմնադիր Սեն-Սիմոնի աշխատանքներից։ Այս աշխարհում արժեքը հիմնվում է արդյունավետության վրա։ Այն կարելի է չափել՝ օգտագործելով մասնագիտական ունակությունների սանդղակը։ Նյութական բարիքների արտադրության հետ կապված արդյունաբերական սկզբունքը պահպանվում է ապագա նախագծմանը և ներդրումներին ուղղված կազմակերպական հնարների օգնությամբ։

Արդյունաբերական աշխարհի առարկաները նկարագրելու համար մենք օգտագործել ենք «Արտադրողականությունը և աշխատանքի պայմանները» ձեռնարկը: Արդյունաբերական աշխարհի նշանակալի դեմքերը մասնագետներն են: Եզրույթները, որոնք օգտագործվում են նրանց մասնագիտական որակների նկարագրման համար, կարելի է օգտագործել իրերը որակավորելու համար: Համարվում է, որ նրանք արժեք ունեն, եթե արդյունավետ են և օպերատիվ: Նրանք օգտագործում են գործիքներ, մեթոդներ, չափանիշներ, ծրագրեր, թվեր, գրաֆիկներ և այլն: Նրանց հարաբերությունները համարվում են ներդաշնակ, եթե կազմակերպված են, չափելի, գործառական և ստանդարտացված:

**Քննադատություն և փոխզիջումներ**

Քննադատությունը կարող է լինել ներքին որևէ աշխարհի համար, եթե նշվում են բացթողումները կամ սխալները: Այս դեպքում էակները վերաորակվում են կամ բացահայտվում է դրանց համապատասխանությունը: Սակայն քննադատությունը կարող է լինել ավելի արմատական և հիմնվել որևէ աշխարհի հանդեպ արտաքին դիրքորոշման վրա: Այս դեպքում քննադատությունն իրականացվում է դրսից և կողմնորոշվում է այլընտրանքային աշխարհին: Հենց շնորհիվ նրա, որ մարդիկ, ի տարբերություն իրերի, կարող են գոյություն ունենալ բազմաթիվ աշխարհներում, նրանք միշտ հնարավորություն ունեն դատապարտելու իրավիճակը որպես անարդար (նույնիսկ եթե քննադատությունը հեշտ չէ՝ կախված ընթացիկ սահմանափակումներից, որոնց նրանք ստիպված են բախվել): Մեր կողմից առաջարկված մոդելում քննադատական ունակությունը կարելի է դիտարկել իբրև տիպիկ մարդաբանական դիրքորոշում:

Կարելի է էմպիրիկորեն ցույց տալ, որ սովորական արդի քննադատության մեծ մասը հնարավոր է դառնում երկու (կամ ավելի) տարբեր աշխարհների միացման շնորհիվ, ինչը մենք սխեմատիկ կերպով գծագրել ենք: Սակայն քննադատության նպատակը կարող է ավելի կամ պակաս արմատական լինել: Դրա համար էլ մենք կարող ենք ա-

ռանձնացնել քննադատության երկու ձներ՝ հիմնված տվյալ աշխարհի նկատմամբ արտաքին դիրքորոշման վրա։

Առաջին ձևը որևէ աշխարհին համապատասխանող իրականության ստուգումը քողազերծելու մեջ է (denouncing), ինչն իրականացվում է ինքնին ստուգման մեխանիզմի ներսում այլ աշխարհին պատկանող կողմնակի էակների (կամ առւթսայդերների) բացահայտման ճանապարհով։ Եկեք պատկերացնենք, օրինակ, դպրոցական քննություն, որի նպատակն է ստուգել աշակերտի ունակությունները, և որը, հետևաբար, կարող է դասվել հիմնականում արդյունաբերական աշխարհին։ Կարելի է մեղադրել աշակերտին այն բանում, որ քննության ժամանակ նա ի ցույց է դրել իր ընտանիքի կարգավիճակն ու հարստությունը իր վարվեցողության, գրագետ արտասանության, նրբագեղ բաճկոնի միջոցով և այլն։ Միևնույն ժամանակ, կարելի է դատապարտել ուսուցչին՝ մեղադրելով նրան այն բանում, որ նա գիտակցաբար կամ անգիտակցաբար ուշադրություն է դարձրել հարստության այդ նշաններին, որոնք չեն կարող տեղին լինել դպրոցական գնահատման պարագայում։ Այս դեպքում իրավիճակը քննադատում են որպես անարդարացի, քանի դեռ մի աշխարհին համապատասխանող արժեքը ներմուծվել է մեկ այլ աշխարհ։ Մենք այդ դեպքը կանվանենք արժեքի տեղափոխում (shift of worth)։ Հիմնական սկզբունքը, որի վրա հենվում է ստուգումը, կասկածի չի ենթարկվում։ Այս դեպքում քողազերծել նշանակում է բացահայտել այլ աշխարհին պատկանող արժեքը, որը մարդիկ տեղափոխել են քննության իրավիճակի մեջ։ Այսպիսով, փոխհատուցման գործընթացը կլինի նոր, ավելի «մաքուր» քննություն անցկացնելը։

Սակայն քննադատությունը կարող է լինել ավելի արմատական։ Ցույց տանք մեկ այլ հնարավորություն, որի դեպքում քննադատության օբյեկտ է դառնում ինքնին համարժեքության սկզբունքը, որի վրա հիմնված է իրականության ստուգումը։ Այս դեպքում քննադատության նպատակն է ընթացիկ ստուգման փոխարինումը այլ աշխարհին համապատասխանող ստուգմամբ։ Հիմա վեճն ուղղված է ոչ թե այն հարցին, թե ինչպես կարելի է նախագծել ստուգումը, որպեսզի այն լինի

արդար, այլ այն հարցին, թե կոնկրետ աշխարհին համապատասխանող որ ստուգումը իրոք կհամապատասխանի իրավիճակին: Եկեք նորից ներկայացնենք քննության իրավիճակը: Բայց այս անգամ պատկերացնենք, որ քննությունն անցնում է այն օրը, երբ դպրոցի բակում ուսանողները կազմակերպել են բողոքի ակցիա՝ ուղղված իրենց քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը: Դեպքի վայր է ժամանում ոստիկանությունը: Պատուհանների ետևում աղաղակներ են լսվում: Ուսուցիչը կարող էր մեղադրել իր գործընկերներին, որոնք շարունակում են քննություն անց կացնել այն ժամանակ, երբ ոստիկանությունը բռնություն է կիրառում ուսանողների հանդեպ: Նա կարող էր ասել այսպիսի մի բան. «Հիմա կարևոր է ոչ թե քննություն անց կացնելը, այլ ուսանողների հետ մեր համերաշխությունը ցույց տալը»:

Ինչպես պարզ է դառնում վերջին օրինակից, որքան պակաս հստակ է իրավիճակը (այն իմաստով, որ այն պարունակում է տարբեր աշխարհներին համապատասխանող օբյեկտներ), այնքան ավելի հեշտ է այն դատապարտել: Այսինքն՝ վերջին դեպքում դա մի կողմից ուսուցիչներն են, վահանակները, ժամանակացույցը և այլն, մյուս կողմից՝ բողոքը, իրավունքները, քաղաքական կարգախոսներով պաստառները, համերաշխության պահանջները և այլն: Նման իրավիճակները կանվանենք երկիմաստ իրավիճակներ: Տարբեր աշխարհների օբյեկտներ պարունակող նման իրավիճակները հատկապես ենթակա են քննադատության: Գուցե հենց այդ պատճառով է, որ իրավիճակները, որոնցում իրականանում են իրականության կարևոր ստուգումները, սովորաբար նախագծվում են այնպես, որ լինեն այնքան հստակ, որքան հնարավոր է: Քննադատությանը խանգարելու և ստուգման ժխտումը դժվարացնելու համար, այլ աշխարհին պատկանող օբյեկտները հեռացվում են:

Վերը նշված վեց աշխարհների համադրման միջոցով մենք կազմեցինք մատրիցա, որի հիման վրա բնորոշեցինք մեր հասարակության մեջ ամենատարածված լեգիտիմ քննադատությունը: Այսպես, օրինակ՝ հնարավոր է ապավինել համարժեքության քաղաքացիական սկզբունքին՝ տնային աշխարհի անձնական կապերը դատապարտելու

համար։ Օրինակ, սա այն դեպքն է, երբ արհմիության աշխատողները դատապարտում են պատերնալիզմը արտադրամասում։ Բայց, մյուս կողմից, կարելի է տնային աշխարհի տեսանկյունից քննադատել մարդկանց կապելու քաղաքացիական եղանակը, օրինակ՝ դատապարտել իրավական հարաբերությունների տոտալիտար ազդեցությունը, որը կործանում է անհատների միջև անկեղծ, մարդասիրական և ջերմ վերաբերմունքը։

Այս մատրիցայի էմպիրիկ հետազոտության միջոցով կարելի է նաև բացահայտել, թե վերջինիս որ տարրերն են առավել ծանրաբեռնված։ Ֆրանսիայում, օրինակ, քաղաքացիական տեսանկյունից շատ հաճախ բացահայտում են թաքնված, ընտանեկան կապերը։ Դա հաստատվում է անհամար սկանդալային բացահայտումներով։ Սա այն դեպքն է, երբ, օրինակ, մեկը բացահայտում է ընկերական կամ բարեկամական կապերը, որոնք գաղտնի կերպով կապում են քաղաքապետին ու կապալառուին, որին քաղաքային խորհուրդը վստահել է նոր մարզահրապարակի կառուցումը։

Երբ արմատական քննադատությունը կասկածի տակ է դնում այն սկզբունքը, որի վրա հիմնված է իրավիճակը, վեճը վերածվում է իրականության երկու տարբեր ստուգումների միջև մրցակցության։ Եթե մարդիկ ուզում են դադարեցնել այն, նրանք պետք է փորձեն վերադառնալ մեկ և միայն մեկ ստուգման։

Սակայն պետք է հաշվի առնել նաև վեճն ավարտելու և համաձայնության հասնելու մեկ այլ եղանակ՝ փոխզիջում երկու աշխարհների միջև։ Փոխզիջումների դեպքում մարդիկ գիտակցաբար ձգտում են ընդհանուր բարիքի համագործակցության միջոցով, որպեսզի իրական էությունները շարունակեն համապատասխանել տարբեր աշխարհներին, բայց միաժամանակ չեն ձգտում պարզել այն սկզբունքը, որի վրա հիմնված է իրենց համաձայնությունը[152]։

---

[152] Այս տեսանկյունից մենք կարող ենք դիտարկել կազմակերպությունները՝ որպես տարբեր աշխարհների միջև համեմատաբար երկարաժամկետ փոխզիջումներ հաստատող միավորներ։ Կազմակերպությունները միմյանցից տարբերվում են այն տարբեր աշխարհներով, որոնց վրա մեծապես հիմնվում են, և այն փոխզիջումներով, որոնք վերջիններս պահպանում են։

Բայց փոխզիջումները շատ հեշտ է բացահայտել: Երբ մարդիկ փոխզիջման են գնում, նրանք գործում են այնպես, կարծես թե նրանք կարող էին ապավինել ավելի բարձր կարգի սկզբունքին, որի վրա կարող էր հիմնված լինել համարժեքությունը տարբեր աշխարհներին պատկանող օբյեկտների միջև: Օրինակ, հղումը աշխատողների իրավունքներին փոխզիջում է քաղաքացիական աշխարհի (որում քաղաքացիները իրավունք ունեն) և արդյունաբերական աշխարհի (որում աշխատողները կարևոր և ծանրակշիռ են, քանզի հակադրվում են գործազուրկներին) միջև: Մարդկանց՝ որպես քաղաքացիական աշխարհի քաղաքացիների, իրավունքներին հատուկ բնույթ է տրվել արդյունաբերական աշխարհին պատկանելու պատճառով: Այս թույլ և վիճելի կառուցվածքները (քանի որ նման համադրումը չի դիմանում ստուգման՝ հետևողականության տեսանկյունից) կարելի է ուժեղացնել տարբեր աշխարհներին պատկանող օբյեկտներից ստեղծված և փոխզիջմամբ միավորված օբյեկտներում կամ ինստիտուտներում դրանց օբյեկտիվացման միջոցով (ինչպես, օրինակ, Ֆրանսիայում «Տնտեսական և սոցիալական խորհուրդը», որը օբյեկտիվացված ինստիտուտի շրջանակներում միավորում է քաղաքացիական, արդյունաբերական նույնիսկ տնային աշխարհների տարրերը):

**Ամփոփելով վեճը**

Մեր կողմից նշված երկու հնարավորությունները՝ իրականության ստուգումը և փոխզիջումը, միակ ուղիները չեն, որոնք կարելի է ընտրել՝ քննադատական պահից հեռանալու և գործողության բնականոն ընթացքին վերադառնալու համար: Բավական հաճախ մարդիկ պարզապես դադարեցնում են վեճը՝ առանց իրականության ստուգման միջոցով հաստատված նոր համաձայնության կառուցման: Եթե մենք ուզում ենք հասկանալ այդ տարակուսելի ելքերը, մենք գուցե պետք է թողնենք արդարության ոլորտը, որը կախված է համարժեքության սկզբունքից, և օգտագործենք գործողության այլ տրամաբանություն, որը, ինչպես աֆեկտիվ հարաբերությունների դեպքում, հրաժարվում է հղում կատարել համարժեքությանը: Հենց այս տրամաբանության վրա

է հիմնված ներումը[153]: Մոռացման ու ներման մասին խոսելը չի նշանակում թողնել սոցիալական գիտությունների դաշտը: Անշուշտ, այն հարաբերությունները, որոնք ստեղծվել են առանց համարժեքությանը դիմելու, նույնպես կարող են հստակեցվել սոցիոլոգիական, նույնիսկ էմպիրիկ վերլուծության օգնությամբ, չէ որ քննադատության պակասը միայն բացասական բան չէ, այն պարզապես գերիշխանության և օտարման արդյունք չէ: Հաճախ իրերի ոչ հարթ ընթացքը չնկատելու կամ գոնե չբացահայտելու համար պահանջվում է մարդկանց ակտիվ մասնակցություն և հատուկ հմտություն: Առանց այդ ունակության՝ մարդկանց միջև սովորական հարաբերությունները պարզապես անհնար կլինեին:

[153] Boltanski, L. (1990) L'amour et la justice comme compétences. Paris: Éd. Métailié.

ԹԵՈԴՈՐ ՇԱՑԿԻ

# ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ[154]

**Պրակտիկաները և դրանց մտային կազմակերպումը**

<>Պրակտիկաները գործունեության կազմակերպված կապեր են: Վերջիններիս օրինակներ են խոհարարական պրակտիկաները, կրթական պրակտիկաները, քաղաքական պրակտիկաները, ագարակատիրական պրակտիկաները, բանակցային պրակտիկաները, բանկային պրակտիկաները և հանգստի պրակտիկաները: Յուրաքանչյուրը՝ որպես գործունեության կազմակերպված ցանց, ներառում է երկու ընդհանուր դիտանկյուններ՝ գործունեության և կազմակերպման:

Պրակտիկան նախ *գործողությունների շարք* է: Օրինակ՝ ագարակատիրական պրակտիկաներն ընդգրկում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ ցանկապատերի կառուցումը, հացահատիկի բերքահավաքը, ոչխարներ արածեցնելը, եղանակի քննարկումը, մատակարարման համար կատարվող վճարումները և այլն: Ընդհանուր առմամբ, պրակտիկան կազմող գործողությունները մարմնական անելիքները և ասելիքներն են կամ այդ անելիքներն ու ասելիքները ձևավորող գործողությունները: «Մարմնական անելիքներ և ասելիքներ» ասելով՝ ես նկատի ունեմ այն գործողությունները, որոնք մարդիկ ուղղակիորեն անում են մարմնապես և ոչ որևէ այլ կերպ: (Այդ «վարքերը», ինչպես որ ես դրանք անվանում եմ, հիմնարար գործողություններ են՝ Արթուր Դանթոյի կողմից այս եզրույթի օգտագործման իմաստով): Օրինակներ են մեխելը, գումար հանձնելը, ղեկը պտտելը, վազելը, դիտելը, նայելը, բառեր արտասանելը և դրանք գրելը: Այս մարմնական անելիքների կամ ասելիքների ձևավորած գործողությունների օրինակ-

---

[154] Shatzki, T. R. (2001) Practice Mind-ed Orders// Schatzki, T. R., Knorr-Cetina, K., von Savigny, E. (eds.), The Practice Turn in Contemporary Theory. Routledge. pp. 42-55. *Թարգմանությունը՝ Տատյանա Դարբինյանի*:

ներ են տան կառուցումը, մատակարարման համար վճարելը, ձախ շրջադարձ կատարելը, տուն շտապելը, ժամանակ անցկացնելը, սխալները ստուգելը, ինչ-որ մեկին կանգնել հրամայելը և պոեմ ստեղծագործելը: Ասել, որ գործողությունները ձևավորվում են մարմնական անելիքների կամ ասելիքների միջոցով, նշանակում է ասել, որ մարմնական անելիքների կամ ասելիքների իրականացումը նշված հանգամանքներում հավասարվում է գործողությունների կատարմանը:

Պնդումը, որ պրակտիկաներն ընդգրկում են գործունեություն, ճշմարտացի է: Սակայն ինչն է պրակտիկայում ավելի շատ, քան գործունեության մեջ: Կարելի է ենթադրել, որ գործողությունները կազմում են պրակտիկաներ պատճառական կապերի հիման վրա: Այս ենթադրության համաձայն, օրինակ, բանակցելու, առաջարկ անելու, գնելու ակտերը կազմում են տնտեսական փոխանակման պրակտիկան՝ միմյանց վրա ազդելով և մեկը մյուսին արձագանքելով[155]: Պատճառական կապերը գործողությունների միջև միջնորդավորվում են նրանով, ինչն, իմ պնդմամբ, կազմակերպում է պրակտիկաները, այն է՝ գիտակցությամբ: Ուստի քննարկենք այն գաղափարը, որ պրակտիկաները կազմակերպվում են մտավոր կերպով: Ս. Թերները վերջերս այս գաղափարի դեմ փաստարկներ է բարձրացրել և առաջարկել, որ «պրակտիկաներ» հասկացության օգտագործման միակ ընդունելի տարբերակը անդրադարձն է վարքի նմուշներին: Վերջին եզրակացությանը նա հասնում է երեք քայլով: Նախ, նա պնդում է, որ շատ հեղինակներ պրակտիկաները հայեցակարգում են՝ որպես ընդհանուր, պատճառականորեն արդյունավետ մտավոր օբյեկտներ, ինչպես, օրինակ, թաքնված գիտելիքը կամ ենթադրությունները (որոնք, ըստ վարկածի, ընկած են վարքի հետևում): Այնուհետև նա փաստարկներ է բերում նման ընդհանուր մտավոր էությունների ըմբռնելիության և բացատրական ուժի դեմ: Ի վերջո նա եզրակացնում է, որ միակ բանը, որ «պրակտիկաներ» եզրույթը կարող է նշանակել, վարքի նմուշներն են:

[155] Cf. Habermas, J. (1987) The Theory of Communicative Reason. Vol. 2, Boston: Beacon Press., ch. 6, sec. 2 («համակարգ» հասկացության հակադրումը «սոցիալական ինտեգրում» հասկացությանը):

Նախ նշենք, որ պրակտիկաները չեն կարող կազմված լինել միայն նմուշներից: Գործողությունները, որ կազմում են, ասենք, ագարակատիրական կամ բանկային պրակտիկաները, պարզապես այն գործողությունները չեն, որ ձևավորում են նմուշներ. անկանոն, իրավիճակային և նույնիսկ եզակի գործողությունները նույնպես կարող են լինել ագարակատիրական կամ բանկային գործունեության բաղադրիչներ: Ավելի կարևոր է, որ պրակտիկաների մտավոր կազմակերպման դեմ առաջ քաշված Թերների փաստարկները պարզապես ենթադրում են, որ մտավոր վիճակները պատճառականորեն արդյունավետ օբյեկտներ են: Սակայն բանականության նման հայեցակարգումը հանրնդհանուր չէ: Իսկապես, այն հավանաբար սխալ է: Գիտակցության ժամանակակից տարբեր տեսություններ գտնում են, որ մտքի ընդհանուր իդիոմներով բնութագրվող հանգամանքները վարքի ո՛չ օբյեկտներ են, ո՛չ էլ պատճառական դետերմինանտներ: Օրինակներն ընդգրկում են բոլոր այն տեսությունները, որոնք պնդում են, թե գործողության թելեոլոգիական կամ հիմնավորող բացատրությունները պատճառական բացատրություններ չեն[156]: Մեկ այլ օրինակ է Վիտգենշտեյնից առաջ եկած կարծիքը գիտակցության մասին, որը ներկայացվում է ստորև:

Ըստ այդ տեսակետի՝ մտավոր երևույթները, ինչպես, օրինակ՝ ցանկանալը, հույս ունենալը, զգալը, հավատալը, ակնկալելը, տեսնելը և ցավ զգալը, վերացական կամ իրական խորքային կառուցվածքների վիճակներ կամ գործընթացներ չեն: Փոխարենը դրանք մեկի կյանքի վիճակներ են՝ իրերի դրությունը կամ ընթացքը աշխարհի հետ նրա ընթացիկ ներգրավվածության մեջ: Օրինակ՝ շոկոլադե պաղպաղակ ցանկանալը այդ շոկոլադե պաղպաղակի լինելն է՝ իբրև ինչ-որ ունենալու բան (ինչ-որ մեկի համար)[157]: Համանման կերպով՝ x-ին հավատալը ինչ-որ մեկի համար x-ի փաստ լինելն է, այնպես, ինչպես զայրանալը ինչ-որ բանի վրա մեկին զայրացնելն է: Ինչպես այս ձևակեր-

[156] Երկու նոր օրինակների համար տե՛ս Brandom, R. (1994) Making it Explicit: Reasoning, Representing, and Discursive Commitment. Cambridge MA: Harvard University Press; Heal, J. (1995) Replication and Functionalism// M. Davies and T. Stone (eds) Folk Psychology: The Theory of Mind Debate, Oxford: Blackwell.

[157] cf. Sartre, J.P. (1962) Sketch for a Theory of the Emotions. London: Methuen.

պումներն են ենթադրում, մտավոր վիճակները ոչ թե օբյեկտներ կամ գործընթացներ են, այլ իրավիճակներ, որոնք առկա են մարդու հետ հարաբերակցության մեջ. այն, որ սա և սա զայրացնող է, փաստ է, ունենալու կամ իրականացնելու ինչ-որ բան է: <>

Այս կերպ ընկալվող մտային վիճակների մի կարևոր հատկանիշն այն է, որ դրանք *արտահայտված* են վարքում. «արտահայտված» նշանակում է, որ վարքը բացահայտում կամ ցույց է տալիս դրանք (ինչպես ուրախությունը դրսևորվում է բացականչության մեջ կամ հավատն առ Աստված՝ աղոթքում): Մտային վիճակների երկրորդ կարևոր հատկանիշն այն է, որ վերջիններս չեն սահմանում գործունեությունը՝ առաջացնելով այն: Փոխարենը, դրանք սահմանում են գործունեությունը՝ որոշակիացնելով, թե մարդկանց համար հատկապես ինչն իմաստ ունի անել: Օրինակ՝ նպատակը, համադրվելով հավատալիքների և զգացմունքների հետ, կարող է բնորոշել տվյալ գործողությունը՝ որպես մի բան, որը կատարելն իմաստ ունի տվյալ մարդու համար: <> Ես պետք է կրկնեմ, որ պրակտիկ ըմբռնելիությունը նույնը չէ ինչ ռացիոնալությունը, թեև իրագործելու համար ընտրված գործողությունները կարող են համընկնել ռացիոնալ գործողությունների հետ: Եթե փոքր եղբայրը հավատում է, որ նա կպատժվի եղբոր գնացքը փչացնելու համար, դա ջարդելը չի լինի ռացիոնալ: Սակայն նրա զայրույթը, որն առաջացել է եղբոր ուրախ խաղերի պարճառով, գնացք կոտրելը բնորոշում է որպես գործողություն, որ պետք է կատարել: Պրակտիկ ըմբռնելիության հրամանները շեղվում են հատկապես (սակայն ոչ բացառապես) այն ժամանակ, երբ զգացմունքները, տրամադրությունները և հույզերը օգնում են սահմանել, թե ինչն իմաստ ունի անել:

Գիտակցության այս քննարկման արդյունքն այն է, որ ինչ-որ մեկին մտավոր վիճակներ վերագրելը, ըստ Թերների, չի նշանակում հայտարարել, որ որոշակի թաքնված օբյեկտներ առաջ են բերել այս կամ այն բացառիկ վարքը: Փոխարենը, սա պարզ ցույց է տալիս, թե ինչպիսին էր իրերի դրությունը և ընթացքը տվյալ մարդու համար, ով տվյալ հանգամանքներում այսինչ վարքն է դրսևորել: Հետևաբար, գիտակցությունը չի ընդգրկում այնպիսի ներկայացուցչական էություն-

ներ, ինչպիսին վարքի հանգեցնող թաքնված գիտելիքն է, այլ փոխարենը՝ այն վարքում դրսևորվող իրադրությունները պայմանավորող պրակտիկ ըմբռնելիության մեջ է:

Հարկավոր չէ ավելի զարգացնել այս գիծը: Կարևոր կետն այն է, որ գիտակցությունը չպետք է հայեցակարգվի՝ որպես իր կամ կառուցվածք, որն առաջ է բերում վարքը: Արդյունքում, Թերների փաստարկներն ընդհանուր, պատճառականորեն արդյունավետ, մտավոր օբյեկտների ըմբռնելիության և բացատրական կարողության դեմ չեն կարողանում ցույց տալ, որ պրակտիկաները չեն կարող կազմակերպվել, *inter alia*[158], մտքի միջոցով: Այսպիսով, դրանք չեն կարողանում հերքել հնարավորությունը, որ գիտակցությունն այն միջնորդն է, որի միջոցով պրակտիկան ձևավորող գործողությունները ոչ պատճառականորեն կազմակերպվում են:

Այդ ժամանակ ինչպե՞ս է գիտակցությունը անելիքների և ասելիքների շարքը վերածում պրակտիկայի: Ես կաշխատեմ այդ հարցին պատասխանել՝ նախ բացատրելով, որ պրակտիկան անելիքների և ասելիքների շարք է, որը կազմակերպվում է ըմբռնումների խմբի, կանոնների հավաքածուի և մի բանի միջոցով, որը ես կոչում եմ «թելեոաֆեկտիվ կառուցվածք»:

«Ըմբռնումներ» ասելով՝ ես նկատի չունեմ այն պրակտիկ զգայունակությունը, որ պրակտիկայի որոշ հայտնի տեսաբաններ մեջբերում են՝ բացատրելու համար մարդկային վարքի մեծ մասը, եթե ոչ այն ամբողջությամբ՝ անմիջական միջավայրի և ավելի լայն համատեքստի հանդեպ ունեցած իր նուրբ զգայունությամբ: Այդ տեսակի զգայունության օրինակներ են Բուրդյոյի հաբիթուսը (պրակտիկ իմաստ) և Գիդենսի պրակտիկ գիտակցությունը: Բուրդյոն և Գիդենսը համակարծիք չեն մարդկային գործունեության շրջանակի վերաբերյալ, որը պայմանավորվում է այս զգայունություններով: Մինչդեռ Բուրդյոն պնդում է, որ դերակատարների «խաղի զգացողությունը» սահմանում է մարդկային ողջ գործունեությունը, Գիդենսը գտնում է, որ պրակտիկ գիտակցությունը սահմանում է միայն առօրյա գործողությունները: Սա-

[158] Ի թիվս այլ բաների – *խմբագրի ծանոթագրություն*:

կայն նրանց միավորումը պայմանավորված է այն ինտուիցիայով, որ մարդկային գործունեությունը կառավարելու գործառույթը, որն ավանդաբար վերագրվել է գիտակցությանը, ընդհանուր առմամբ պետք է վերագրվի ինչ-որ պրակտիկ զգայունության:

Պրակտիկ զգայունությունը մարդկանց առօրեական գործողությունները որոշելու կարողությամբ օժտելը խնդրահարույց է: Նախ՝ պրակտիկ ըմբռնելիությունն ինչ-որ անբացատրելի բան է: Ասել, որ Ջոնն x գործողությունը կատարեց z իրավիճակում, որովհետև նա գիտի ինչ անել z-ի պարագայում կամ որովհետև նա ունի այդտեղ խաղացվող «խաղի զգացումը», չի բացատրում, թե ինչու նա x գործողությունը կատարեց: Դա միայն ցույց է տալիս, որ նա z-ի նման իրավիճակներում գործելու հարցում փորձառու է, և որ իր փորձառությունն իրեն ևս մեկ անգամ օգնել է: Այլ կերպ ասած՝ դա ցույց չի տալիս, թե այն, ինչ հատկապես եղել է Ջոնի և z իրավիճակի պարագայում, նույն կերպ կկրկնվի մեկ ուրիշի պարագայում, ով Ջոնի նման տեղյակ է z իրավիճակներին և կանի x գործողությունը: Ջոնի x կատարելը z-ում պայմանավորված է Ջոնի և z-ի որոշակի առանձնահատկություններով և ոչ թե տրված իրավիճակում ճիշտ վարվելու մասին նրա ունեցած գիտելիքով: Դեռ ավելին՝ իմանալը, թե ինչպես վարվել, կարող է բացատրել Ջոնի ցանկացած արարք: Հետևաբար այն չի կարող բացատրել, թե ինչու նա x գործողությունը կատարեց y-ի փոխարեն, դեռ ավելին՝ ինչու նա ընդհանրապես ինչ-որ բան արեց: Ի վերջո, մարդկանց գործողությունները բացատրելիս հաբիթուսը կամ պրակտիկ գիտակցությունը կրկնողաբար վկայակոչելը դժվարությամբ է տեղավորվում կողք կողքի այն փաստի հետ, որ մարդիկ մեծ հաշվով կարող են բացատրել իրենց գրեթե բոլոր գործողությունները (ինչը չի նշանակում ասել, որ նրանց բացատրությունները երբեք սխալ չեն): Կարճ ասած, պրակտիկ իմաստը և պրակտիկ գիտակցությունը զուրկ են այն բազմազանությունից, որը պահանջվում է վերջիններս մարդկանց կողմից որոշակի գործողությունները պայմանավորելու կարողությամբ օժտելու համար:

Ըմբռնումները, որ կապում են պրակտիկան կազմող գործողությունները, ավելի լավ են մեկնաբանվում որպես ունակություններ, որոնք վերաբերում են այդ գործողություններին: Նման ունակություններից մեկն իմանալն է, թե ինչպես կատարել x-ը, երբ այն պրակտիկա ձևավորող գործողություններից մեկն է: «Իմանալ ինչպես կատարել x-ը» ասելով՝ ես նկատի ունեմ իմացությունն այն բանի, թե հատկապես որ անելիքներն ու ասելիքները, որոնք մարդն ունակ է կատարել, կկազմեն x գործողությունը տրված պայմաններում: Օրինակ, մարդը գիտի, թե ինչպես կառուցել ցանկապատ, երբ նա գիտի, որ ցանկապատ կառուցել նշանակում է մեխել, տախտակներ բարձրացնել, սյունը փոսի մեջ ամրացնել և այլն: Այս համատեքստում երկու այլ կարևոր ունակություններն են՝ իմանալ ինչպես ճանաչել ու խթանել x-երը և ինչպես դրանց արձագանքել: Հետևաբար գործողությունները, որ կազմում են տվյալ պրակտիկան, կապվում են փոխադարձաբար խաչվող և անկախ «իմանալ-ինչու»-ներով, որոնք այդ գործողությունները արտահայտում են իրենց կատարման, նույնականացման, խթանման և արձագանքման վերաբերյալ: Գործողությունները, որ կազմում են ագարակատիրական պրակտիկաները, օրինակ, կապված են ոչխարներ արածեցնելու, եղանակը գնահատելու, խոտը հավաքելու, ոռոգում իրականացնելու, ցանկապատ կառուցելու, պաշարներ գնելու և նման այլ ակտերի իրականացման, նույնականացման, խթանման և արձագանքման արտահայտված ունակություններով:

Ըմբռնումը երբեմն օգնում է որոշել, թե մարդկանց համար հատկապես ինչն իմաստ ունի կատարել: Օրինակ՝ իմանալը, որ մեկ ուրիշն անում է ինչ-որ բան, օգնում է որոշել ինչպես արձագանքել նրան: <> Պրակտիկ ըմբռնելիությունը, սակայն, նախապես սահմանվում է ոչ թե ըմբռնման, այլ կանոնների, թելեոլոգիայի և աֆեկտիվության միջոցով: Կանոններ ասելով՝ ես նկատի ունեմ որոշակի ձևակերպումներ, որոնք սովորեցնում կամ արգելում են այս կամ այն գործողությունները: Նման ձևակերպումները չպետք է համարվեն պարզապես նախապես գոյություն ունեցող ըմբռնման արտահայտումներ: Թեև որոշ ձևակերպումներ (օրինակ՝ քերականական կանոնները) մո-

տենում են այդ կարգավիճակին, մյուսները՝ ոչ (օրինակ՝ նրանք, որ ընկալվում և ներկայացվում են որոշակի գործողություններ հարուցելու կամ առկա գործողությունները կանոնավորելու համար): Կանոնադրությունը, «կիրառական կանոնները» և բացահայտ նորմատիվ կարգավորումները օրինակ են նրա, ինչ ես անվանում եմ «կանոն»: Այն, ինչ մարդիկ անում են, հաճախ արտացոլում է այն ձնակերպումները, որոնցից նրանք տեղյակ են: Այն, ինչ նրանց համար իմաստ ունի անելը, հաճախ արտացոլում է որոշակի կանոնների ըմբռնումը (կամ շրջանցելու ցանկությունը և այլն): Իսկապես, պրակտիկաները թաքցնում են կանոնների ամբողջություններ, որոնք պետք է ուսումնասիրվեն: Օրինակ, ագարակատիրական պրակտիկաները ներառում են տարբեր, թեև համընկնող հրահանգների և ցուցումների շարքեր ֆերմերների, վարձու աշխատուժի և երեխաների համար: Այսպիսով, պրակտիկան կազմող գործողությունները փոխկապված են կանոնների ամբողջությունների միջոցով, ավելի ճիշտ՝ դրանց ըմբռնման միջոցով:<>

Ես կարծում եմ, որ պրակտիկ ըմբռնելիության թելեոլոգիական և աֆեկտիվ պայմանավորումը իրականում գիտակցական պայմանավորում է: Ըմբռնելիության պայմանավորումը, ըստ էության, պայմանավորումն է զգացմունքների և տրամադրությունների միջոցով: Ավելին, բնորոշումը, թե ինչ-որ մեկն ինչպես կվարվի հանուն որոշակի նպատակների, կապված է նրա հավատալիքների, հույսերի և սպասելիքների հետ: Եվ այն, ինչ մարդու համար նշանակում է նպատակներին հետևել և իրագործել ծրագրեր ու առաջադրանքներ հանուն այդ նպատակների, այն ցանկալի իրավիճակների և գործունեության համար է, որոնք նրա ցանկությունների, հույսերի և ձգտումների օբյեկտներն են: Օրինակը կօգնի հստակեցնել այս պնդումները: Նախորդ բաժնում ես նկարագրել եմ մի դեպք, որում երեխայի ցանկությունը ստանալ ավելի շատ ուշադրություն ծնողների կողմից, նրա բարկությունը եղբոր վարքի վրա և նրա հավատը, որ եղբայրն իր ծննդյան առթիվ նոր զնացք է նվեր ստացել, միասին բնորոշում են գնացքը կոտրելը՝ որպես նրա համար իմաստ ունեցող գործողություն: Այս օրինակում ծնողների

կողմից ավելի շատ ուշադրություն ստանալը երեխայի նպատակն է, և գնացքը կորտելն այն գործողությունն է, որին նա ձգտում է և ceteris paribus[159], փաստացի իրականացնում է իր նպատակին հասնելու համար: Նրա ցանկությունները, հավատալիքները, և ձգտումները, այդպիսով, ներառում են պրակտիկ ըմբռնելիության թեոլոգիական պայմանավորումը: Երեխայի զայրույթը միաժամանակ աֆեկտիվության մի բաղադրիչ է, որը նաև օգնում է որոշել, թե ինչը կատարելն իմաստ ունի նրա համար: Նման դեպքերում պրակտիկ ըմբռնելիության գիտակցական պայմանավորման բոլոր ձևերը կարող են ներկայացվել թելեոլոգիապես և աֆեկտիվորեն, և ընդհակառակը՝ ըմբռնելիության ողջ թելեոլոգիական և աֆեկտիվ պայմանավորումները կարող են ներկայացվել իբրև գիտակցական: <>

Թելեոլոգիան և աֆեկտիվությունը համարելով բանալի՝ կարելի է բնորոշել պրակտիկայի կազմակերպման երրորդ դիտանկյունը՝ որպես «թելեոաֆեկտիվ կառուցվածք»՝ ընդունելի կամ ճիշտ նպատակների շարք, այդ նպատակներին հասնելու համար նախատեսված ընդունելի կամ ճիշտ առաջադրանքների ամբողջություն, ընդունելի կամ ճիշտ հավատալիքներ, հանուն որոնց այդ առաջադրանքներն իրականացվում են նպատակի իրագործման համար, և նույնիսկ ընդունելի կամ ճիշտ զգացմունքներ: Օրինակ՝ ագարակատիրական պրակտիկաները ներառում են այնպիսի նպատակների ընդունելի և ճիշտ համադրություններ, ինչպիսիք են՝ եկամտի մեծացումը, հողի պահպանումը, ընտանիք պահելը, այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են՝ ցանելը, հավաքելը, ցանկապատ կառուցելը, և այնպիսի հավատալիքներ, որոնց համաձայն՝ դաշտերը պետք է հրկիզվեն, և անասնագոմերը պետք է կառուցվեն որոշակի ձևերով: Ի տարբերություն դաստիարակչական պրակտիկաների, սակայն, ագարակատիրական պրակտիկաները շատ բան չեն բացահայտում աֆեկտիվ կառուցվածքայնացման հետ կապված: Այսպիսով, երրորդը՝ պրակտիկան կազմող գործողությունները կապված են թելեոաֆեկտիվ կառուցվածքով:

---

[159] Այլ հավասար պայմաններում – *խմբագրի ծանոթագրություն*:

Ամփոփելով՝ պրակտիկան ըմբռնումների շրջանակով կազմակերպված անելիքների և ասելիքների շարք է, մի շարք կանոնների ամբողջություն և թելեոաֆեկտիվ կառուցվածք: Ի դեպ, ոչ թե հենց ներառված անելիքներն ու ասելիքները, այլ ըմբռնումները, կանոնները և թելեոաֆեկտիվությունները, որ կազմում են դրանք, կարող են ժամանակի ընթացքում փոփոխվել՝ ի պատասխան համապատասխան իրադարձությունների: Իհարկե, պրակտիկաները բացահայտում են հետագա «կառուցվածքային» հատկանիշներ, օրինակ՝ կանոնավորություններ և պատճառական կապեր իրենց բաղկացուցիչ գործողությունների միջև, ինչպես նաև դասավորություններ և կապեր այն նյութական միջավայրում, որում դրանք տեղի են ունենում: Սակայն որոշակի ըմբռնումներ, կանոններ, նպատակներ, ծրագրեր, հավատալիքներ և զգացմունքներ (և այլն) արտահայտելու շնորհիվ է, որ վարքերը կազմում են կազմակերպված պատկեր: Բացի այդ, քանի որ կազմակերպող երևույթները տարրալուծվում են մտավոր վիճակներում, գիտակցությունը այն միջավայրն է, որի միջոցով պրակտիկաները կազմակերպվում են: Ձեռքի տակ ունենալով պրակտիկաների և մտային կազմակերպման այս հայեցակարգը՝ ես եզրափակում եմ այս ակնարկը՝ վերադառնալով այն դրույթին, որ սոցիալական կարգը հաստատվում է պրակտիկաների ներսում:

**Կարգի հաստատումը**

Սոցիալական կարգերը մարդկանց, առարկաների, օրգանիզմների, իրերի դասավորություններ են, որոնց շնորհիվ դրանք համագոյակցում են, որոնցում դրանք հարաբերվում են և ձեռք են բերում ինքնություն և իմաստ: Ասել, որ կարգերը հաստատվում են պրակտիկաներում, նշանակում է ասել, որ դասավորությունները՝ նրանց հարաբերությունները, ինքնությունները, իմաստները, այնտեղ են սահմանվում: Այս պայմանավորման մի առանցքային դիտանկյունը դասավորությունների առաջացումն է մարդկային գործունեության միջոցով: Մեկ այլ դիտանկյուն է մարդկանց և ոչ մարդկանց ունեցած իմաստների և ինքնությունների հաստատումը՝ որպես դասավորությունների

բաղադրիչներ: Երկու «գործընթացներն» էլ կախված են պրակտիկանե-րի կազմակերպումից: Ի միջի այլոց, ես պետք է նշեմ, որ դասավորու-թյունները հաստատվում են ոչ թե հենց անհատական պրակտիկանե-րի ներսում, այլ նաև դրանց միջով: Մինչ պրակտիկաների ներսում դասավորությունները հենվում են անհատական պրակտիկաների գործողությունների և կազմակերպումների վրա, պրակտիկաների մի-ջով դասավորությունները հենվում են տարբեր պրակտիկաների գոր-ծողությունների և կազմակերպումների վրա: Դասավորությունները հաստատվում են պրակտիկաների միջով, երբ, օրինակ, անհատները, որոնք կատարում են տարբեր պրակտիկաներ, ասենք՝ ագարակատի-րական և առևտրային, փոխազդում են և այդպիսով ձևավորում դասա-վորություններ, օրինակ՝ ընդհանուր շուկայում, կամ երբ գործողու-թյունների շղթաները անցնում են տարբեր պրակտիկաներով, օրինակ՝ ագարակատիրական, առևտրային, խահարարական, պետական հսկողության, և կազմում ագարակատերերին, խանութպաններին, ամուսիններին, և Ներքին եկամուտների ծառայության պաշտոնյանե-րին ընդգրկող դասավորություններ:

Ինչպես Լակլաուն և Մուֆֆն են նկատում, սոցիալական կարգերը առաջանում են (հիմնականում) մարդկային գործունեության միջոցով: Իսկապես, մարդկային գործունեությունը հարուցում է այն փոխա-դարձ կախվածությունների և նստվածքների մեծ մասը, որոնց գոյու-թյունը բնորոշվում է սոցիալական համակարգերին, ինստիտուտնե-րին և կառուցվածքներին առնչվող հասկացություններում, օրինակ՝ «տնտեսություն», «պետություն», «բարեկամություն»: Դեռ ավելին, ինչ-պես արդեն նշեցինք, այն, ինչ մարդիկ անում են, ղեկավարվում է նրա-նով, թե ինչն իմաստ ունի նրանց համար անել: Նախորդ բաժնում ներ-կայացված մտքերում թաքնված է այն փաստը, որ երբ մարդիկ մաս-նակցում են որոշակի պրակտիկայի, նրանց գործողությունները ար-տահայտում են ըմբռնումներ, կանոններ, թելեոլոգիաներ և աֆեկտի-վություններ, որոնք կազմում են պրակտիկան: Սա նշանակում է, որ այն, ինչ նրանց համար իմաստ ունի կատարել, առնվազն մասնակիո-րեն որոշվում է այս երևույթներով: Օրինակ այն, ինչ իմաստ ունի

ագարակատերերի համար ագարակատիրական պրակտիկաներ իրագործելիս, որոշվում է այնպիսի նպատակներով, ինչպիսիք են՝ եկամուտի ավելացումը, հողի պահպանումը, ընտանիք պահելը, այնպիսի առաջադրանքներով, ինչպիսիք են՝ ցանելը, հավաքելը, ցանկապատեր կառուցելը, և այնպիսի հավատալիքներով, ինչպիսիք են՝ հողի իրկիզումը և անասնագոմերի կառուցումը որոշակի եղանակով: Հաճախ, սակայն, այն գործոնները, որոնք պայմանավորում են, թե ինչ անելն իմաստ ունի մարդկանց համար, չեն պարունակվում այն պրակտիկայի կազմակերպման մեջ, որը նրանք իրականացնում են: Օրինակ՝ ագարակատերը կարող է մշակել հավելյալ տարածք՝ գյուղի մյուս կողմում ապրող այրի կնոջ վրա տպավորություն գործելու համար: Ամեն դեպքում, երբ մարդիկ իրականանցում են որևէ պրակտիկա, վերջինիս կազմակերպումը մասնակիորեն պատասխանատու է մարդկանց գործողությունների համար, հետևաբար՝ նաև այն կարգերի, որոնց վրա դրանք ազդեցություն են ունենում: Մարդիկ միշտ իրականացնում են այս կամ այն պրակտիկան: Իսկապես, գործողությունները ենթադրում են պրակտիկաներ[160]: Հետևում է, որ և՛ այն, ինչ մարդիկ ընդհանրապես անում են, և՛ կարգերը, որ նրանց գործունեությունն առաջացնում է, պարտական են պրակտիկաների կազմակերպմանը: Այսպիսով, պրակտիկաները հաստատում են սոցիալական կարգ, քանի որ դրանք օգնում են ձևավորել գործնական ըմբռնելիություն, որը կառավարում է նրանց գործողությունները և հետևաբար օգնում որոշել, թե որ դասավորություններն են մարդիկ ձևավորում: Եվ կրկնենք, քանի որ ըմբռնումները, կանոնները և թելեոաֆեկտիվությունը գիտակցական երևույթներ են, միտքը առանցքային է պրակտիկաների ներսում կարգի հաստատման հարցում:

Այն, ինչը սահմանում է իմաստը, որն ամեն դեպքում ըմբռնելիության սահմաններում է, պատասխանատու է նրա համար, որ էություններն են ունենում այս և ոչ թե այլ իմաստները: <> X-ի հայեցակարգային ըմբռնումն այն է, թե ինչ է x-ը, և դա այն ըմբռնումների հիմքում

[160] Տե՛ս Schatzki, T. (1996) Social Practices: A Wittgensteinian Approach to Human Activity and the Social. New York and Cambridge: Cambridge University Press, ch. 4, sec. 2:

է, որոնք սահմանում են, թե որ x-ը, y-ը, z-ը և այլն կարող են լինել կամ կան այն, ինչը որևէ բանը կսահմանի՝ իբրև մի x, մի y կամ մի z: Օրինակ, ինչ-որ մի բանը կարող է լինել անասնագոմ կամ բերք միայն եթե տրված է, թե ինչ են անասնագոմը և բերքը: Ես պնդում եմ, որ հայեցակարգային ըմբռնումները, որոնցում տրված է, թե որ դասավորություններն բաղադրիչներն ունեն հենց տվյալ և ոչ թե այլ իմաստները, պրակտիկաների հատկանիշներ են: Այսպիսով, երկրորդը՝ պրակտիկաները սոցիալական կարգի համատեքստն են, որոնք ընդգրկում են այն, ինչը հարուցում է դասավորված էությունների իմաստները:

Վիտգենշտեյնի տեքստերը ենթադրում են, որ ըմբռնել x հասկացությունը, նշանակում է իմանալ, թե ինչպես ճանաչել x-ը և ինչպես (պատշաճ կերպով) արձագանքել այն երևույթներին, որոնք որակվում են որպես x: Այլ կերպ ասած՝ հայեցակարգային ըմբռնումը «իմանալ-ինչպեսն» է: Ավելին՝ այս «իմանալ-ինչպես»-ը արտահայտվում է x արտահայտության գործածություններում և բացատրություններում, այն գործողությունների հետ միասին, որոնք իրագործվում են՝ ուղղված այն երևույթներին, որոնց x-ը վերաբերում է[161]: Ինչպես քննարկվեց նախորդ բաժնում, ըմբռնումները, որ օգնում են կազմակերպել պրակտիկաները, ընդգրկում են տարբեր «իմանալ-ինչպես»-ներ, ներառյալ՝ իմանալը ինչպես կատարել x-ը, իմանալը ինչպես ճանաչել x գործողությունները, իմանալը ինչպես հրահրել և պատասխանել նման ակտերին: Նշենք, որ «իմանալ-ինչպես»-ները, որ կազմում են գործողությունների հայեցակարգային ըմբռնումները, կազմակերպում են պրակտիկաները: Ավելի կոնկրետ՝ գործողությունների հայեցակարգային ըմբռնումները, որոնք կազմում են պրակտիկան, պարունակվում են այն ըմբռնումներում, որոնք այդ պրակտիկան կազմակերպում են: Ինչպես նշվեց, օրինակ, ագարակատիրական պրակտիկաները կազմակերպվում են այնպիսի գործողություններ իրականացնելու, ճանաչելու, հրահրելու և պատասխանելու կարողությունների միջո-

[161] Wittgenstein, L. (1967) Zettel. Berkeley: University of California Press, sec. 513; Wittgenstein, L. (1980) Remarks on the Philosophy of Psychology. Vol. 1, Oxford: Blackwell, sec. 910.

ցով, ինչպիսիք են՝ ոչխարներ արածեցնելը, եղանակը գնահատելը, չոր խոտ հավաքելը և այլն: Լինելով այդպիսին՝ այս պրակտիկաները մեքենայաբար ընդգրկում են այդ գործողությունների ըմբռնումները: Ավելին, քանի որ պրակտիկաներ իրականացնելը նաև ներառում է գործելը և խոսելը գործող մարդկանց և պրակտիկայի գործողություններում ընդգրկված իրերի առնչությամբ և մասին, պրակտիկաները կրում են նաև ըմբռնումներ այն մարդկանց և ոչ մարդկանց իմաստների վերաբերյալ, որոնք կապված են պրակտիկայի և դրա դասավորությունների հետ (ագարակատիրական պրակտիկաներում՝ ագարակատերերը, վարձու աշխատուժը, անասնագոմերը, բերքը, բերքի վնասը, գյուղատնտեսական գործիքները և այլն): Կարճ ասած, պրակտիկան կազմակերպող ըմբռնումներում ներառված են այն հայեցակարգային ըմբռնումները, որոնց միջոցով պրակտիկայում դասավորված էությունների իմաստները հաստատվում են: Սակայն սա պատմության մի մասն է միայն այն մասին, թե ինչպես են անհատական պրակտիկաները հաստատում դրանցում առկա էությունների իմաստները:

Ինչպես են բազմաբնույթ պրակտիկաներում ցրված էությունների իմաստները նույնպես հաստատվում պրակտիկաներում, նմանապես մեկ այլ պատմություն է: Սակայն սա բավական է ենթադրելու համար, որ սոցիալական կարգի առանցքային համատեքստը, տեղը, որտեղ այն հաստատվում է, միահյուսված պրակտիկաների բարդ և փոփոխվող ցանցն է:

# ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

# ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ. ՕԲՅԵԿՏԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ԲՐՈՒՆՈ ԼԱՏՈՒՐ

# ԵՐԲ ԻՐԵՐԸ ՀԱԿԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ. «ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀՆԱՐԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ[162]

**Ներածություն**

Չեմ հիշում, թե հատկապես որ հայտնի փիլիսոփան է սրամտորեն նկատել, որ հասարակական գիտությունների հետ ամեն ինչ գերազանց է՝ բացառությամբ երկու փոքրիկ բառերի՝ «հասարակական» և «գիտություններ»: Թեև հազարամյակների փոփոխությունը չունի մեծ նշանակություն (բացառություն են քրիստոնյաները, որոնց համար այն Փրկության պատմության իրադարձություն է), հազարավոր տարիները չափազանց լուրջ ժամկետ են երիտասարդ հասարակական գիտությունների համար, որոնք առավելագույնը միքանիդարյա պատմություն ունեն, այնուամենայնիվ 2000 թվականը լավ առիթ է ևս մեկ անգամ խորհելու հասարակական գիտությունների՝ հենց հասարականի մասին գիտություններ լինելու հավակնության մասին:

Դրա ժամանակը եկել է՝ հատկապես հաշվի առնելով, որ վերջին քանիինգ տարիներին սոցիոլոգիայի փոքր ենթաբաժինը՝ «գիտության և տեխնոլոգիաների հետազոտությունները» (Science and Technology Studies), մի փոքր հստակեցրին, թե ինչ են բնական գիտությունները, և կասկածի տակ դրեցին «հասարակություն» հասկացությունը: Հետևաբար հասարակական գիտությունների մասին հարցն այժմ կարող է նորովի հնչել. ի՞նչ են վերջիններս իրենցից ներկայացնում բնական և հասարակական գիտությունների սոցիոլոգիայի լույսի ներքո: Հետազոտությունների ի՞նչ պարարտ ոլորտներ են դրանք խոս-

[162] Latour, B. (2000) When things strike back. A possible contribution of ‘science studies’ to the social sciences// British Journal of Sociology N 51, pp. 107-123. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի*:

տանում: Խնդիրը դյուրին չէ, քանի դեռ STS-ը թռիչքաձև զարգացում է ունեցել, որը համեմատելի է զուցե դինոզավրերի շրջանում առաջին կաթնասունների հայտնվելու հետ: Նրանք սկզբում աննկատորեն ապրում էին իրենց համեստ խորշերում, որպեսզի, սպասելով բարենպաստ պահի, ներխուժեն բազմաթիվ նոր տարածքներ: Չնայած նրան, որ ես չեմ կարծում (և հույս էլ չունեմ), որ զիսաստղը կոչնչացնի «դինոզավրերին», ես վստահ եմ, որ STS-ը կսկսի ավելի նշանակալի դեր խաղալ հասարակական գիտությունների ոչ դյուրին էկոլոգիայում, երբ գոնե մի քանի ավանդական Կարևոր Խնդիրների մահը որոշակի տեղ կհատկացնի վերջինիս տարածման համար: Այժմ STS-ը դեռևս հազիվ տարբերակելի է, ուստի վերջինիս ներդրումը գերակա հասարակագիտության մեջ այնքան էլ հեշտ չէ նկատել[163]:

Դիտարկենք STS-ի պաշտոնական տարբերակը: STS-ը ընդլայնում է «սոցիալապես մեկնաբանվող» երևույթների շարքը՝ ավելացնելով նրանք, որոնք նախկինում դուրս էին բերվում սոցիոլոգիական գիտակարգերի սահմաններից: Այստեղ խոսքը վերաբերում է այնպիսի երևույթների, ինչպիսիք են՝ նյութը, արտադրողականությունը, օբյեկտիվությունը, որոնք ավանդաբար չէին տեղավորվում սոցիոլոգիական հետազոտության շրջանակներում, քանի որ լավ հայտնի էր, որ հասարակագետների աշխատանքը սահմանափակվում է սոցիալապես տեղին (relevant) թեմաներով: Օրինակ, եթե հեծանվորդը, քարին բախվելով, ընկնում է հեծանիվից, հասարակագետներն այս կապակցությամբ, իրենց իսկ խոստովանությամբ, ոչինչ չունեն ասելու: Բայց հենց որ բեմին հայտնվում են ոստիկանը, ապահովագրական գործակալը, սիրեկանը կամ բարի սամարացին, անմիջապես ծնվում է սոցիոլոգիական դիսկուրսը, քանի որ այստեղ մենք ստանում ենք մի շարք հասարակական նշանակալի իրադարձություններ, այլ ոչ միայն երևույթ-

[163] Հիմնախնդրի ներածության համար տե՛ս Jasanoff, S., Markle, G. E., Peterson, J. C., Pinch, T. (1995) Handbook of Science and Technology Studies. London: Sage, հետագա ընթերցանության համար տե՛ս Biagioli, M. (1999) The Science Studies Reader. London: Routledge, նորագույն ամենակարևոր արդյունքներին ծանոթանալու համար տես Knorr-Cetina, K. (1999) Epistemic Cultures. How the Sciences Make Knowledge. Cambridge, Mass: Harvard University Press:

ների պատճառական հերթափոխ: STS-ի ներկայացուցիչները համաձայն չեն նման մոտեցման հետ: Նրանք սոցիոլոգիապես հետաքրքիր և գործնականորեն հնարավոր են համարում վերլուծել հեծանիվի մեխանիզմը[164], ճանապարհային ծածկույթը, քարերի երկրաբանությունը, վիրավորության հոգեբանությունը և այլն՝ առանց նյութականի և հասարականի երկատման տրամաբանության վրա հիմնված բնական և հասարակական գիտությունների միջև աշխատանքի բաժանումն ընդունելու: Չնայած այն հանգամանքի, որ նման հավասարակշռությունը (օգտագործելով մասնագիտական ժարգոնը՝ «սիմետրիան») կատաղի քննարկումներ է առաջացնում մեր ճամբարում, բոլոր STS-ի մասնակիցները համկարծիք են, որ հասարակական գիտությունները պետք է դուրս գան այն ոլորտից, որը մինչ օրս համարվում էր «Հասարակականի» ոլորտ[165]: Եվ այսպես, այն սիմվոլների փոփոխության առիթով, որոնցով մենք (որոշ հարուստ հասարակությունների զարգացած մասը) տարիներն ենք հաշվարկում, ես ուզում եմ բարձրացնել այն հարցը, թե որքա՞ն կփոխվի հասարակական գիտությունների սովորական առարկան, եթե նրանք զբաղվեն բնական երևույթներով:

### Անհաջողությունների հաջողությունը

Առաջին դժվարությունը հասարակականի սահմաններից դուրս գալն է՝ բնական և նյութական օբյեկտները տեսնելու համար: Չեմ կարող դիմադրել պարադոքսի օգնությամբ իրավիճակը արտահայտելու գայթակղությանը: Եթե բնական գիտությունների և տեխնոլոգիաների սոցիոլոգիական մեկնաբանությունը տեղի է ունեցել, ուրեմն այն ձախողվել է, և դրա հետ միասին՝ ձախողվել են բոլոր հասարակական գիտությունները: Իսկ եթե այն չի հաջողվել, ապա դա հետաքրքիր է, բայց այնքան անբովանդակ, որ մենք կորցնում ենք ուսումնասիրության առարկան և դժվար թե կարող ենք մեզ գիտնական համարել: Եր-

---

164 Bijker, W. (1995) Of Bicycles, Bakelites, and Bulbs. Towars a Theory of Sociotechnical Change. Cambridge, Mass: MIT Press.

165 Bloor, D. (1991) Knowledge and Social Imagery (second edition with a new foreword). Chicago: University of Chicago Press; Law, J. (1986) Power, Action and Belief. A New Sociology of Knowledge? Keele: Sociological Review Monograph.

կու դեպքերում էլ STS-ը դառնում է հասարակական գիտությունների fatum[166]։ Ես պատրաստվում եմ պաշտպանել այս պարադոքսը նախքան հաջորդ բաժնում հասարակական գիտություններում STS-ի ներդրման դրական (թեև անտրամաբանական) բնութագրերին անցնելը։

Ի՞նչ կնշանակեր պատկառելի հասարակական գիտությունների համար տալ բնական երևույթներին սոցիալական մեկնաբանություն։ Ցույց տալ, որ քվարկը, մանրէները, թերմոդինամիկայի օրենքը, վարման իներցիալ համակարգը և այլն իրականում այն չեն, ինչ թվում են, որ դրանք ոչ թե արտաքին բնության իսկապես օբյեկտիվ էություններ են, այլ ինչ-որ այլ բանի պահոցներ, ինչը դրանք թաքցնում են, արտացոլում, քողարկում կամ կոտրում։ Այս «ինչ-որ բանի» դերում հասարակական գիտությունների ավանդույթում անպայման հանդես են գալիս որոշակի սոցիալական գործառույթներ և գործոններ։ Այսպես, սոցիալական մեկնաբանությունը, վերջին հաշվով, ենթադրում է բնությանը պատկանող որոշակի օբյեկտի *փոխարինում* այլ օբյեկտով՝ հասարակությանը պատկանող. դրանից հետո պետք է անպայմանորեն ցույց տալ, որ հենց դա է առաջինի ճշմարիտ էությունը[167]։ Հասարակագետների մոտ բավարար հիմքեր կան հենվելու այդ ռազմավարության արդյունավետության վրա. չէ որ այն, նրանց կարծիքով, աշխատել է XIX դ.-ում կրոնի հարացուցային օրինակով, երբ ձևավորվում էին հասարակական գիտությունները։ Հասարակագետներն առանց մեծ դժվարության համոզեցին իրենք իրենց, որ ծեսերը, հավատալիքները, տեսիլքները կամ հրաշքները բացատրելու համար (այսինքն՝ տրանսցենդենտալ օբյեկտները, որոնց հեղինակները վերագրում են որևէ գործողության սկզբնապատճառը լինելու հատկությունը) միանգամայն թույլատրելի է (թեև միշտ չէ, որ հեշտ է) այդ օբյեկտների բովանդակությունը *փոխարինել* հասարակության գործառույթներով, որոնք թաքնված

---

[166] Ճակատագիրը – *խմբագրի ծանոթագրություն*։

[167] Բարձրագույն աստիճանի արհեստավարժ և մատչելի վերլուծությունը տե՛ս Hacking, I. (1999) The Social Construction of What? Cambridge, Mass: Harvard University Press, ծագումնաբանությունը տե՛ս Pietz, W. (1985) The Problem of the Fetish// Res, 9, pp. 5-17։

են այդ օբյեկտներում և նմանակված են նրանց կողմից: Օբյեկտների նման տեսակները կոչվել են ֆետիշներ, այսինքն՝ ուրիշ բանի նշաններ: Հենց որ տեղի ունեցավ հավատալիքներին վերաբերող կեղծ օբյեկտների նենգափոխությունը հասարակությանը վերաբերող ճշմարիտ օբյեկտների, կրոնում չմնաց ուշադրության արժանի ոչինչ, բացի այդ սոցիալական ուժերից, որոնք այն հմտորեն թաքցնում է և խորհրդանշում: Այնպես որ, երբ մեր գործընկերները լսում են իրենց գիտակարգում նման բաժնի գոյության մասին, որն ուղղված է գիտության և տեխնոլոգիայի երևույթներին, իրենց ուրիշ ոչինչ չի մնում՝ բացի ենթադրելուց, որ STS-ը ցանկանում է անել նյութականության և օբյեկտիվության համար նույնը, ինչ արվել է սկզբում կրոնի, և այնուհետև մի շարք այլ առարկաների հետ՝ փոփ մշակույթի, մուլտիմեդիայի հետազոտությունների, քաղաքականության, արվեստի, օրենքի, գենդերային երևույթների և այլն, այսինքն՝ վերաուղղել ուշադրությունը կեղծ օբյեկտից դեպի ճշմարիտը, որը դուրս է բերվում հասարակությունից: Սակայն, տվյալ դեպքում, իհարկե, չի կարելի չնկատել, որ STS-ի առարկան՝ լինի դա գիտությունը, օբյեկտիվությունը, թե ունիվերսալությունը, նման չէ հասարակական գիտությունների բոլոր մյուս առարկաներին. այն միակն է, որը հեշտորեն թույլ չի տալիս փոխարինում: Քանի դեռ մի կողմից այն հանդես է գալիս որպես բացատրության օբյեկտ, իսկ մյուս կողմից՝ որպես բացատրության ելակետ:

Հասարակագետներն ասում են (ինքնին ամենաասպանիչ խոստովանությունը), որ, ի տարբերություն մնացած այլ բաների, գիտության հետ այնքան էլ հեշտ չէ գործ ունենալը (ենթադրվում է, որ մնացածը նրանք պատրաստ են հաղթահարել հեշտությամբ), չէ որ այն կազմում է հենց հասարակական գիտությունների էությունը, միակ նպատակը, որն արդարացնում է նրանց գոյությունը, այն է՝ սոցիալականի բնույթի մասին գիտելիքի հասնելը:

Ըստ այդմ՝ իրենց տիրապետման տակ գտնվող ոլորտների ընդլայնման առիթով ուրախանալու փոխարեն (չէ որ STS-ը ավելացրել է նոր ոլորտ կրոնագիտությանը, քաղաքային, գենդերային, դասակարգային և այլ նմանատիպ ուսումնասիրություններին) հասարակական

գիտությունները անմիջապես զգացին այս նախաձեռնության թունավոր ազդեցությունը և ստիպված եղան մերժել մի բաժակ թույնը՝ հանուն սեփական փրկության:

Հիմնախնդրի պատճառները հասկանալը դժվար չէ: Հոգու խորքում հասարակագետները խիստ կասկածում են իրենց մեկնաբանություններին և չեն ուզում, որ դրանք մշակվեն նույն վնասակար միջոցներով, ինչպես որ իրենք են մշակում բոլոր մյուս առարկաները: Ահա այն ռեֆլեքսիայի ծուղակը, որն STS-ը այդքան լավ է վերլուծել[168]: Մենք կարող ենք սոցիալական մեկնաբանության ենթարկել ամեն ինչ (ներառյալ հասարակական գիտությունները), բայց միայն այնքան ժամանակ, քանի դեռ չենք սկսել զբաղվել բնական գիտություններով: Ինչո՞ւ: Այո, քանի որ բազմաթիվ հասարակագետների համար սոցիալական մեկնաբանությունը նշանակում է մեկնաբանվող օբյեկտի ոչնչացում, դրա մասին սխալ պատկերացումների բացահայտում (ինչպիսին սովորական մարդկանց պատկերացումներն են) և այդ կուռքերի փոխարինում գիտության ճշմարիտ օբյեկտներով, կամ նման փոխարինման անհնարինության մատնանշում, քանի որ պատրանքի (կամ կեղծ գիտակցության) որոշակի չափն անհրաժեշտ է սոցիալական կարգի գործառման համար[169]:

Հասարակագետի մասին առ հավատ ընդունված modus operandi-ն[170] մտահոգիչ է, երբ խոսքը վերաբերում է STS-ի նյութերին: Քանի դեռ հասարակագետներն իրենք են հավատում, որ սոցիալական մեկնաբանությունը ոչնչացնում է օբյեկտը, ինչը տեղի կունենա, եթե նման արմատական մշակման ենթարկվեն բնական գիտությունները: Արդյո՞ք դրանք չեն անհետանա ճիշտ այնպես, ինչպես կրոնը: Կամ ավելի վատ, եթե բնական գիտությունները դնենք նենգափոխման դիետայի վրա, որքա՞ն կդիմանա հասարակական գիտությունների օբյեկտիվությունը: Այդ դեպքում ստիպված չե՞նք լինի տեսնել, թե ինչպես է

[168] Woolgar, S. (1988) Knowledge and Reflexivity. New Frontiers in the Sociology of Science. London: Sage.

[169] Bourdieu, P., & Wacquant, L. (1992) An Invitation to Reflexive Sociology. Chicago: The University of Chicago Press.

[170] Գործողության եղանակը – *խմբագրի ծանոթագրություն*:

հեղափոխությունը սպանում իր զավակներին, ինչպես է փլուզվում գիտության շինությունը (բնական կամ հասարակական): Իրադրությունն ավելի վատ է. քանի դեռ սոցիալական մեկնաբանությունը ենթադրում է երևակայական օբյեկտի փոխարինում սոցիալական գործառույթով, ապա լուսավորականության վերջնական աղբյուրը ամբողջովին պահվում է այն հասարակագետների փխրուն ուսերին, որոնց խնդիրն է հասարակության ցանկացած երևույթի վերաբերյալ անհերքելի գիտելիքներ տրամադրելը և ոչ միայն Աստծո մասին (խնդիր չկա՞), այլև՝ բնության օրենքների: Արդյո՞ք հասարակագետներն իսկապես պատրաստ են պատասխանել մարտահրավերին: Եթե ո՞չ, եթե նրանց գիտելիքը բավարար չէ՞, ապա ինչպե՞ս պահպանել արդիականության նախագիծը, որը պահանջում է անհերքելի օբյեկտիվության բացարձակ հիմք՝ մարդկանց էմանսիպացման և նրանց գործի դնելու համար: Այս ամենը այսպես կոչված «գիտական պատերազմների» հարցերն են: Բայց եթե սա է STS-ի կողմից բացված ճիճուներով անոթը, ավելի ապահով կլիներ փակել այն և հնարավորինս արագ: Թվում է, թե երբ STS-ը ընդլայնում է հասարակական գիտությունները՝ հասցնելով Բանականության ոլորտին, վերջիններս ստիպված են լինում հրաժեշտ տալ բանականությանը:

Դրա համար STS-ի ներդրումը գերակա հասարակական գիտություններում այդքան սահմանափակ էր. վերջինիս մշտապես հետապնդում էր վատ համբավը: Եթե դուք զբաղվում եք այդ հարցերով, չի ստացվի խուսափել ամենալուրջ փիլիսոփայական հիմնախնդիրներից, որոնց հետ ձեր իրավիճակային հետազոտությունները կապվում են: Եթե նույնիսկ դուք ընտրեք այնպիսի անվնաս առարկաներ, ինչպես մաթեմատիկական ապացույցները, հաշվարկները Մոնթե-Կարլո մեթոդով կամ ավտոմատացված ստորգետնյա անցումը, դուք ստիպված կլինեք գործ ունենալ ռելյատիվիզմի, անհամաչափության, սուբյեկտիվիզմի, հետմոդեռնիզմի հետ: Ամենաանմեղ դաշտային հետազոտություններից անպայման կերևա երկատված սատանայական սմբակը: Դժվար չէ ցույց տալ, որ Ռեմբրանդտը եղել է շուկայում շահարկումներով զբաղվող փականագործների ղեկավարը, որ ապրանք-

ների երկրպագությունը խորը գաղութային հիասթափություն է արտահայտում, որ դասակարգային շահերը և արտադրության աճը որոշում են homo academicus-ի կարիերայի յուրաքանչյուր քայլը, սակայն փորձեք ներառել Բրիտանական կայսրությունը լորդ Քելվինի ֆիզիկայում[171] կամ ամբողջ իմպերիալիզմը՝ պրիմատների տեսողական ընկալման համակարգում[172], և փոքր սկանդալը ապահոված է: Այդ առարկաների համար և միայն նրանց համար, չգիտես ինչու, բացառություն է արվել. հասարակությունն ու հասարակականը օրենքից դուրս են հայտարարված:

Այստեղ STS-ը ոչ միայն բախվում է խոչընդոտի, այլև ընկնում է վտանգավոր ծուղակը ավանդաբար հասկացվող սոցիալական մեկնաբանության երկրորդ առանձնահատկության մեղքով՝ այն կամ ոչնչացնում է օբյեկտը, կամ ընդհանրապես անտեսում է այն: Զգուշավոր հասարակագետը կարող էր հարցնել, թե ինչու չսահմանափակել STS-ին պատկանող գիտական պրակտիկայի շրջանակը, ինչպես որ խելամտորեն արեցին 50-ական թթ. «գիտնականների և ինժեներների սոցիոլոգիայի» (այլ ոչ թե գիտության և ինժեներիայի) հիմնադիրները[173]: Դրանով բոլոր դժվարությունները կվերանան: Այո, բայց դժվարությունների հետ միասին կվերանա նաև հասարակական գիտությունների նպատակը: Իհարկե, ոչ մի սարսափելի բան տեղի չէր ունենա, եթե բոլորը համակարծիք լինեին, որ սոցիալական մեկնաբանությունը պետք է ուղղված լինի բացառապես այն տարրերին, որոնք նույնիսկ գիտության մեջ և, առավել ևս, տեխնոլոգիայում համարվում են հանրային ոլորտին պատկանող «ուժային հարաբերություններ», լեգիտիմություն, գաղափարախոսություն, հակումներ, փող և «սիմվոլիկ կապիտալի» բաշխման նման մի բան: Բայց դրանից հետևում է, որ STS-ը անդրադառնում է ֆիզիկայի, մաթեմատիկայի, նյարդաբանության

[171] Smith, C., Wise, N. (1989) Energy and Empire. A Biographical Study of Lord Kelvin. Cambridge: Cambridge University Press.
[172] Haraway, D. (1989) Primate Visions. Gender, Race and Nature in the World of Modern Science. Londres: Routledge and Kegan Paul.
[173] Merton, R. K. (1973) The Sociology of Science. Theoretical and Empirical Investigations. Chicago: The University of Chicago Press.

կամ էթիկայի միայն առավել մակերեսային դիտանկյուններին: Երբ գործը հասնում է էական առարկային, հասարակական գիտությունները ստիպված են *հանձնվել*: Այո, STS-ը որպես հասարակական գիտությունների ոլորտի bona fide[174] ճանաչելու հիմնախնդիրը կվերանա: Բայց գիտության և տեխնոլոգիայի հետազոտությունների նման մանրէազերծումը կհայտնաբերի, որ *ցանկացած օբյեկտի* սոցիալական մեկնաբանությունը հավասարազոր է օբյեկտիվի դաշտից դեպի *միայն* հասարակականի դաշտ հեռանալուն: Ձեզ թույլ կտան մտնել հասարակական գիտությունների սրահներ, բայց միայն այն պայմանով, որ հրաժարվեք ձեր առարկայի մեկնաբանությունից: Այն, ինչը աննկատ անցավ մնացած բոլոր բաժիններում, որոնցում սոցիալական չափումը սպառիչ էր թվում, պարզաբանվում է բնագիտական փաստերի սոցիոլոգիայում:

Դժվարությունը, որը ես նշեցի այս բաժնի սկզբում, այժմ լիովին բացահայտված է: Ենթադրենք, որ STS-ի նպատակներն ամենահամարձակն են. այդ դեպքում, ըստ երևույթին, կքանդվի գիտության հիմքը՝ բնական կամ հասարակական: Իսկ եթե նպատակները համեստ են, ապա քանդվելու է սոցիալական մեկնաբանության այն գաղափարը, որը խուսափում է հասարակականի ոլորտից: Եթե STS-ը կարողացել է ներկայացնել սոցիալական մեկնաբանություն, այն դառնում է անհաջողություն կամ առնվազն սամսոնյան մահ անխոհեմ խարխլված տաճարի փլատակների տակ: Ի վերջո, հասարակագետները ճիշտ են, երբ հրաժարվում են գործ ունենալ այն տարածության հետ, որը ոչնչացնում է բոլոր գիտությունների գիտականությունը՝ փորձելով առաջարկել իրենց սոցիալական մեկնաբանությունը: Եթե այդպիսի «սոցիալական մեկնաբանությունը» չի հաջողվում, STS-ը հեշտությամբ զբաղեցնում է իր տեղը հասարակական գիտությունների շարքում, որոնք կարող են առաջարկել միայն երևույթների մակերեսային բացատրություններ (լինի դա կրոնը, նորաձևությունը, փոփ մշակույթը, արվեստը կամ չբացահայտված թռչող օբյեկտների տիպերը), որոնց իրական էությունը թաքնված է իրենցից ընդմիշտ:

174 Բարի կամքը – *խմբագրի ծանոթագրություն*:

STS-ի ներկայությունը միայն բավական է, որպեսզի մնացած հասարակական գիտությունները ճանաչեն թաքնված կասկածները սեփական գիտականության հարցում: Եթե մենք վարվենք բնական գիտությունների հետ այնպես, ինչպես վարվում ենք այլ առարկաների հետ, ապա մենք կոչնչացնենք դրանք, և դա այնքան վտանգավոր է, որ պատասխան կրակ կառաջացնի: Կամ այլընտրանքն այսպիսին է. բնական գիտություններին դիմելը կարող է միանգամայն անվտանգ լինել, եթե սովորական մարտավարություն կիրառելով՝ մենք չանդրադառնանք դրանց էական դիտանկյուններին, որոնք խուսափում են հասարակականից: Սակայն այս դեպքում էլ մենք չենք խուսափի պատասխան հարվածից, որովհետև հայտնաբերվելու է, որ երբ հասարակագետները ցանկանում են հասկանալ ինչ-որ բան, նրանք ստիպված են հետ շպրտել այն, ինչը փաստացի կազմում է վերջինիս իրայնությունը: Նրանք կամ ոչնչացնում են իրենց առարկան, կամ անտեսում այն (մի ուշագրավ օրինակ է արվեստի պատմությունը[175]): Զարմանալի չէ, որ առանցքային հասարակագիտությունը հազվադեպ է դիմում է STS-ի նյութերին:

Չնայած STS-ի որոշ կողմնակիցների և հակառակորդների մեծ բանակի բազմաթիվ հայտարարությունների՝ վերջինս *երբեք* չի առաջարկել բնական գիտությունների սոցիալական մեկնաբանություն: Որոշ նոր օբյեկտների անհամատեղելիությունը սոցիոլոգիական մեթոդի հետ, ընդհանուր առմամբ, հայտնաբերեց սոցիալական մեկնաբանության մեթոդի թերարժեքությունը[176]: Ահա թե ինչու եմ ես կրկին ասում՝ միլենիումի առիթով դիմելով ավետարանական մետաֆորին, որ բնական գիտությունների մեկնաբանության հետ կապված STS-ի կրած անհաջողությունը դարձավ felix culpa՝ նախածին մեղք, որը կարող է հանգեցնել հասարակական գիտություններում ուժերի այլ դասավորվածության շնորհիվ երկու բառերի նշանակության շտկմանը՝ «հասարակական» և «գիտություն»:

---

[175] Hennion, A. (1993) La passion musicale. Une sociologie de la médiation. Paris: A.-M. Métailié.

[176] Այս հարցերի շուրջ քննարկումների համար տե՛ս Pickering, A. (1992) Science as Practice and Culture. Chicago: Chicago University Press:

**Ինչպե՞ս նմանակել բնական գիտություններին**

Այն հանգամանքից, որ բնական օբյեկտները դիմադրում են սոցիալական մեկնաբանություններին, կարելի է երկու հակադիր եզրահանգումներ անել՝ զգուշավոր և համարձակ: Զգուշավորությունն այն է, որ բնության «սոցիալական բացատրության» նախագիծը դատապարտված էր ձախողման, քանի որ բնական փաստերը չեն տեղավորվում սոցիալական կարգի շրջանակներում: Այս դիրքում են գիտության փիլիսոփաների և «գիտական պատերազմների» մասնակիցների մեծամասնությունը: Մեկ այլ եզրակացություն, որին ես ինքս հետևում եմ, փիլիսոփաների, սոցիոլոգների և մարդաբանների մի քանի համախոհների հետ միասին, այն է, որ felix culpa-ն օգնեց պարզաբանել *բոլոր օբյեկտների* ընդհանուր հատկությունը. դրանք այնքան յուրահատուկ են, որ չեն կարող փոխարինվել որևէ այլ բանով (ինչի փոխարինողը դրանց ենթադրաբար համարում են):

Այս «եզակի բավականաչափությունը», որն այդքան ակտիվորեն պաշտպանում են էթնոմեթոդաբանները, ընդհանուր սկզբունք է, որը կտրականապես արգելում է դիմել ցանկացած այլ իրի, օրինակ՝ սոցիալական գործառույթի՝ որևէ օբյեկտի համառությունը կամ անզիջողականությունը արդարացնելու համար[177]: Այս հատկության կարևորությունը դժվար է գերագնահատել: Եթե սոցիոլոգը ժխտում է թերմոդինամիկայի երկրորդ օրենքը որևէ սոցիալական գործոնով փոխարինելու գաղափարը (որը, իբր, կարելի է «արտահայտել» այս օրենքի միջոցով), ապա նույնը, ըստ երևույթին, արդարացի կլինի բոլոր մյուս օբյեկտների նկատմամբ, որոնք մենք ցանկանում ենք բացատրել: Նրանք նաև ընդդիմանում են փոխարինիչ լինելուն, և դա ոչ պակաս ճիշտ է հրաշքների համար[178], նորաձևության, զենդերային երևույթների, արվեստի, շարժիչի կամ քիմիական բանաձևի համար: Ահա, թե որն է STS-ի ներդրումը հասարակական գիտություններում: Պահանջ-

[177] Lynch, M. (1994) Scientific Practice and Ordinary Action. Cambridge: Cambridge University Press.

[178] Claverie, E. (1990) La Vierge, le désordre, la critique// Terrain (14), 60-75.

վեց օբյեկտի այլ սահմանում[179]. մի անգամ հասարակագետներն արդեն փորձություն են անցել կրակով՝ փորձելով արտահայտել սոցիալական հասկացություններում հասարականանին չպատկանող երևույթների բուն էությունը և այրվել են: Իհարկե, այդ ներդրումը անմիջապես կկորցվեր, եթե մենք նորից սկսեինք օբյեկտները բաշխել երկու ճամբարներում՝ մեկը ֆետիշների համար, որոնք իրենց թեթևաքաշության պատճառով կարող են և պետք է համարվեն «պարզապես սոցիալական կառուցվածքներ», իսկ մյուսը՝ այն փաստերի, որոնք էական են և ի սկզբանե խուսափում են բոլոր սոցիալական մեկնաբանություններից[180]: Այդ ժամանակ ես հորինեցի «factish» նորաբանությունը, որպեսզի հիշեցնեմ նման երկատման անիմաստությունը[181]:

Օբյեկտների եզակի բավականաչափության այս նոր ճանաչումը հասարակական գիտություններում երկու հետևանք է առաջ բերում. առաջինը վերաբերում է «հասարակություն» հասկացությանը, երկրորդը՝ այն բանին, թե ինչ պետք է վերարտադրվի, երբ հասարակագետները փորձում են նմանակել բնական գիտությունները:

Առաջինի հետ կապված ես հակիրճ կլինեմ, քանի որ հասարակության՝ իբրև մեկնաբանության աղբյուրի մերկացմամբ զբաղված են ոլորտի տարբեր հեղինակներ[182]: Վերջին տարիներին պարզ դարձավ, որ հասարակության գոյությունը խնդրի մի մասն է, այլ ոչ թե դրա լուծումը: «Հասարակությունը» կազմված, կառուցված, հավաքված, կազմակերպված, քանդակված և մոնտաժված է: Այն այլևս չի կարող դիտվել որպես պատճառականության թաքնված աղբյուր, որը, իբր, պետք է ներգրավել՝ բացատրելու համար որևէ այլ գործողության կամ վարքի

[179] Thévenot, L. (1996) A paved road to civilized beings? Moral treatments of the human attachments to creatures of nature and artifice. Paris: Ecole des hautes études en sciences sociales; Pickering, A. (1995) The Mangle of Practice. Time, Agency and Science. Chicago: The University of Chicago Press.

[180] Latour, B. (1996). Petite réflexion sur le culte moderne des dieux Faitiches. Paris: Les Empêcheurs de penser en rond.

[181] Տե՛ս Latour, B. (1999) Pandora's Hope. Essays on the reality of science studies. Cambridge, Mass: Harvard University Press, ch. 9 և ծաղրանկարային հակադրությունը՝ Searle, J. (1998) La construction de la réalité sociale [The construction of social reality]. Paris: Gallimard:

[182] Տե՛ս Ուրի, Բեք, Կասթելս:

գոյությունը և կայունությունը (սա է ակտոր-ցանցային տեսության հետևողական աշխատանքի էությունը[183]): Եզրույթների դիֆուզիան, ցանցը[184] և հոսուն միջավայրը[185] ցույց են տալիս համապարփակ հասարակության գաղափարի վերաբերյալ կասկածների աճը: Ինչ-որ իմաստով մեկ դար անց մենք ականատես ենք լինում Գաբրիել Թարդի ռևանշի Էմիլ Դյուրքհեմի հանդեպ. հասարակությունը ոչինչ չի բացատրում, այլ ինքը պետք է բացատրվի[186]: Եվ այդպիսի բացատրության հնարավորությունը պայմանավորված է մի շարք այլ մանր իրերի գոյությամբ, որոնք ոչ թե իրենց բնույթով են հասարակական, այլ այն իմաստով, որ կարող են *հաղորդակցվել* միմյանց հետ:

«Հասարակական» ածականն այժմ նշանակում է ոչ թե նյութ կամ իրականության ոլորտ (որը հակադրվում է, օրինակ, բնական, տեխնիկական, կամ տնտեսական ոլորտներին), այլ տարասեռ հանգույցները միասին կապելու եղանակ, մեկ տիպի էությունները մյուսի վերածելու միջոց («վերածումը» հակառակ է «փոխարինմանը»[187]): Հասարակական գիտություններին զգալի ծառայություն մատուցեցին տեխնոլոգիայի հետազոտությունները, երբ հայտնաբերեցին, թե նախկին հասարակության որքան հատկություններ (կայունության, էքսպանսիայի, մասշտաբի, շարժունակության) գոյություն ունի՝ շնորհիվ արտեֆակտերի՝ սոցիալական կարգը կառուցելու ունակության[188], որը ներառում

---

[183] Callon, M., Latour, B. (1981) Unscrewing the Big Leviathans How Do Actors Macrostructure Reality// K. Knorr, A. Cicourel (Eds.), Advances in Social Theory and Methodology. Toward an Integration of Micro and Macro Sociologies, London: Routledge, pp. 277-303; Law, J. (1993) Organizing Modernities. Cambridge: Blackwell.

[184] Callon, M. (1992) Techno-economic Networks and Irreversibility// J. Law (Ed.), Sociological Review Monograph, London: Routledge Sociological Review Monograph, Vol. 38, pp. 132-164.

[185] Mol, A., Law, J. (1994) Regions, Networks, and Fluids: Anaemia and Social Topology// Social Studies of Science, 24(4), pp. 641-672.

[186] Tarde, G. (1999) réédition. Les lois sociales. Paris: Les empêcheurs de penser en rond:

[187] Callon, M. (1986) Some elements of a sociology of translation domestication of the scallops and the fishermen of St Brieux Bay// J. Law (Ed.), Power, Action and Belief. A New Sociology of Knowledge?, pp. 196-229; Latour, B. (1988) The Pasteurization of France. Cambridge Mass.: Harvard University Press.

[188] Latour, B. (1996). Aramis or the Love of Technology. Cambridge, Mass: Harvard University Press.

է ագենտ-կառուցվածք տիրաիռչակ երկընտրանքը[189]: Արտեֆակտերը չեն «արտացոլում» հասարակությունն այնպես, ասես «արտացոլված» հասարակությունն ինչ-որ այլ տեղ էր գտնվում և բաղկացած էր ինչ-որ այլ մատերիայից: Նրանք հիմնականում ներկայացնում են այն նույն նյութը, որից ձևավորվում է «սոցիալականությունը»[190]: Նույնը կարելի է ասել գիտության հետազոտությունների լայն գրականության մասին: Ժողովրդագրությունը, տնտեսությունը, ֆինանսական հաշվառումը, քաղաքականությունը և իհարկե իրենք՝ բազմազան հասարակագետները չեն գտնվում հասարակությունից դուրս, որպեսզի կարողանան ուսումնասիրել այն: Վերջիններս հենց հասարակությանը տալիս են մարմնականություն, գոյություն և տեսողական ընկալելիություն (այդ մասին ավելի մանրամասն՝ ստորև): Վաղուց արդեն պարզունակ դարձած սոցիալական կառուցակցման խնդիրը գլխիվայր է շուռ եկել. գիտնականները փորձում են պարզել այս կամ այն հասարակական կարգի հիմքում ընկած բաղադրատարրերը: Այն, ինչը պատճառն էր, դարձավ նախնական հետևանք: Հասարակությունը կազմված չէ սոցիալական գործառույթներից և գործոններից: «Հասարակականի» նկատմամբ հետաքրքրությունը չի հանգեցնում հասարակությանը՝ որպես մեկնաբանության ելակետի[191]:

Երկրորդ դիտանկյունը՝ գիտության սահմանումը, պակաս հայտնի է, բայց քանի որ գիտության սահմանումը կարող էր հստակեցնել հասարակության սահմանումը. ես ավելի մանրամասն կանդրադառնամ այս հարցին[192]: Մինչ օրս Հասարակական գիտությունների ընդո-

---

[189] Latour, B. (1996) On Interobjectivity -with discussion by Marc Berg, Michael Lynch and Yrjo Engelström// Mind Culture and Activity, 3(4), pp. 228-245.

[190] Latour, B., Lemonnier, P. (1994) De la préhistoire aux missiles balistiques - l'intelligence sociale des techniques. Paris: La Découverte.

[191] Strum, S., Latour, B. (1987) The Meanings of Social: from Baboons to Humans// Information sur les Sciences Sociales/Social Science Information, 26, pp. 783-802.

[192] Այստեղ ես հետևում եմ Stengers, I. (1996) Cosmopolitiques - Tome 1: la guerre des sciences. Paris: La découverte & Les Empêcheurs de penser en rond, անգլերեն նախաբանը տե՛ս Stengers, I. 1997a. Cosmopolitiques - Tome 7: pour en finir avec la tolérance. Paris: La Découverte-Les Empêcheurs de penser en rond:

րինակումը բնական գիտություններին սխալների կատակերգություն էր։

Բնական օբյեկտներից առանձնացված հասարակագետները, որոնք հավատում էին, որ գիտության փիլիսոփաները և որոշ գիտնականներ խոսել են «գիտական մեթոդի» մասին, կաթվածահար եղան «ֆիզիկայի հանդեպ նախանձով»։ Նրանք երևակայեցին, որ «ֆիզիկոսների» մեծ առավելությունը պայմանավորված է նրանով, որ վերջիններս գործ են ունենում իրենց ամբողջովին ենթարկվող և վերահսկելի օբյեկտների հետ։ Այդ իսկ պատճառով նրանք, ովքեր ուսումնասիրել են սոցիալական երևույթները, մեծամասամբ փորձել են առավելագույնս մոտենալ այդ առասպելական բնագիտական պատկերին. նրանք ցանկացել են նմանվել անկողմնակալ գիտնականների, որոնք ունակ են իրենց ցանկությամբ կառավարելու օբյեկտներն ու բացատրելու դրանք խիստ պատճառահետևանքային կապերի միջոցով։ Որոշ հասարակագետներ այլ կերպ էին խաղում «ով ում» խաղը։ Նրանք պնդում էին, որ սոցիալական սյուժեները, ի տարբերություն ֆիզիկայի, քիմիայի և երկրաբանության, պահանջում են գիտականության բոլորովին այլ տիպ՝ հերմենևտիկ, մեկնաբանական բնույթի (մի կողմ թողնենք նրանց, ովքեր ընդհանրապես չէին հավատում հասարակական գիտությունների ունակությանը ինչ-որ բան ուսումնասիրելու)։ Կարճ ասած, նրանք, ովքեր ուսումնասիրում էին սոցիալական առարկաները, պետք է կամ ամբողջությամբ պատճենեին բնական գիտությունները, կամ դառնային դրանց լրիվ հակադրությունը։ Սակայն երկու դիրքերն էլ (անվանենք դրանք «քանակական» և «հասկացող»՝ բազմաթիվ նրբությունների վրա կանգ չառնելու համար) կիսում են բնական գիտությունների մասին պաշտոնական վարկածը, որը տարածված էր «մինչև STS-ը դարաշրջանում»։

Բայց մոդելը, որը հասարակագետներն ընտրել են ընդօրինակման համար, կփոխվի անճանաչելիորեն, եթե նրանք դիմեն STS-ի նյութերին, որոնք նկարագրում են լաբորատորիաների և այլ գիտական հաստատությունների գիտական պրակտիկան, որն այստեղ դարձել է պատմաբանների, մարդաբանների և սոցիոլոգների մանրամասն ու-

ուսումնասիրության առարկան: Իհարկե, այս ուսումնասիրության արդյունքները պետք է ընդունվեն այնպիսին, ինչպիսին դրանք կան, քանզի STS-ը առաջարկում է որոշակի այլ բան, քան ուսումնասիրվող երևույթների սոցիալական մեկնաբանությունն է (թեև անգամ գիտության որոշ սոցիոլոգներ դա չեն հասկացել[193]):

Օբյեկտների վերահսկողությունը, անկողմնակալությունը, համեբաշխությունը և չեզոքությունը լաբորատոր կյանքի պարտադիր նշանները չեն: Բայց ոչ թե այն պատճառով, որ գիտնականները և ինժեներները կողմնակալ են, փառասեր, եսասեր կամ շահամոլ (չնայած դա ևս գործընթացի մի մասն է), այլ որովհետև օբյեկտիվությունը, որի հետ գիտնականներն ու ինժեներները գործ են ունենում, բոլորովին այլ բնույթի է: «Օբյեկտիվություն» նշանակում է ոչ թե գիտակցության հատուկ որակ, ոչ թե վերջինիս ներքին ճշգրտություն և մաքրություն, այլ օբյեկտների ներկայություն, երբ դրանք «ունակ են» («able» բառը ծագումնաբանորեն շատ ուժեղ է) առարկել (to object) նրան, ինչ դրանց մասին ասվում է[194]: Լաբորատոր փորձարկումը օբյեկտների համար ստեղծում է հազվագյուտ, արժեքավոր, տեղային և արհեստական պայմաններ, որտեղ դրանք կարող են հայտնվել իրենց իրավունքում գիտնականների պնդումների առջև[195]: Իհարկե խոսքը սուբյեկտիվի և օբյեկտիվի հակադրության մասին չէ: Ընդհակառակը, հենց լաբորատորիայում (լայն իմաստով), ոչ թե հակառակ, այլ շնորհիվ փորձարարական իրավիճակի արհեստականության և սահմանափակության՝ հնարավոր է դառնում հասնել բառերի և իրերի մոտիկության առավելագույն աստիճանին: Այո, իրերը կարելի է դարձնել լեզվին արժանի: Բայց այդ իրավիճակները այնքան էլ հեշտ չէ գտնել. դրանք այնքան

---

193 Տե՛ս Bloor, D. (1999) Anti-Latour// Studies in History and Philosophy of Science, 30(1), pp. 81-112 և իմ պատասխանը՝ Latour, B. (1999). For Bloor and beyond - a response to David Bloor// Studies in History and Philosophy of Science, 30(1), pp. 113-129:

194 Ուշագրավ օրինակների համար տե՛ս Rheinberger, H.-J. (1997) Toward a History of Epistemic Things. Synthetizing Proteins in the Test Tube. Stanford: Stanford University Press:

195 Գիտության այսպիսի իրատեսական սոցիալական փիլիսոփայության մանրամասն զարգացումը տե՛ս Latour, B. (1999) Pandora's Hope. Essays on the reality of science studies. Cambridge, Mass: Harvard University Press:

անսովոր են, եթե չասենք «զարմանահրաշ», որ նոր արձանագրության մշակումը, նոր գործիքի գյուտը, ցանկալի դիրքի հայտնաբերումը, նմուշառումը, ընդունումը, գիտափորձը հաճախ արժանի են Նոբելյան մրցանակի: Ոչ մի բան ավելի դժվար չէ, քան գտնել մի ճանապարհ, որը թույլ կտա օբյեկտներին արժանապատվորեն հակադարձել իրենց մասին մեր ասելիքին: Պարադոքսը նրանում է, որ ձգտելով պատճենել բնական գիտությունները՝ քանակական հասարակագիտության կողմնակիցները աչքից բաց են թողել օբյեկտների հենց այդ հատկությունները, որոնք կարող են իրենց գիտակարգն իրապես օբյեկտիվ դարձնել: Պարադոքսը ուժեղանում է, երբ տեսնում ես, որ հասկացող դպրոցի կողմնակիցները բնական գիտություններին մեղադրել են այն մեղքի մեջ, որը նրանք չեն կատարել՝ պնդելով, որ վերջիններս օբյեկտների հետ վարվում են այնպես, կարծես դրանք «պարզապես իրեր» են: Լավ կլիներ (կարող էր ասել ինչ-որ մեկը), եթե հասարակագետները կարողանային իրենց առարկաներին վերաբերվել այնպես, ինչպես ֆիզիկոսները՝ իրենց առարկաներին[196]: Սթենգերսը և Դեպրեն[197] հոգեբանության օրինակով ցույց են տվել, որ բոլոր այդ թյուրիմածությունների պարճառը արմատավորված է անհայտ կառուցվածքի մասին պատկերացումներում. առաջին հայացքից անտրամաբանական թվացող փաստարկը, ավելի խորը հայացք գցելիս բավականին ողջամիտ է երևում:

Իրենց պատկերացումներում օբյեկտիվության հասնելու համար հասարակագետները ձգտում էին առավելագույնս նվազեցնել մարդկային սուբյեկտների ազդեցությունը գիտական արդյունքի վրա: Խնդրի միակ լուծումը մարդկանց անտեղյակ պահելն է, թե ինչն է կառավարում նրանց գործողությունները, ինչպես, օրինակ, Միլգրամի հայտնի գիտափորձում, որում ուսումնասիրվում էր ամերիկացի ուսանողների հոգեկան խստասրտությունը: Երբ դերակատարը զաղտնի

[196] Պրիմատների ուսումնասիրման աղոտ ոլորտից օրինակների համար տե՛ս Strum, S., Fedigan, L. (2000). Primate Encounters. Chicago: University of Chicago Press:

[197] Stengers, I. (1997). Cosmopolitiques - Tome 7: pour en finir avec la tolérance. Paris: La Découverte-Les Empêcheurs de penser en rond; Despret, V. (1999). Ces émotions qui nous fabriquent. Ethnopsychologie de l'authenticité. Paris: Les empêcheurs de penser en rond.

ուժերի խաղալիք է, միայն գիտնականը, լինելով «թեմայի մեջ», կարող է առաջարկել փորձարկվողների սուբյեկտիվ արձագանքներով չարատավորված հուսալի գիտելիք: Չէ որ գիտնականը անկողմնակալ է, իսկ սուբյեկտը *անտարբեր* է այն բանի հանդեպ, ինչն, ըստ էության, անհայտ է: Պայմանները իդեալական են. մարդկային սուբյեկտները ոչ մի կերպ *չեն ազդում* արդյունքի վրա, նշանակում է՝ մենք ստեղծում ենք մարդկանց մասին նույնքան խիստ գիտություն, որքան բնական օբյեկտների մասին գիտությունն է:

Ցավոք, թեև «գիտական մեթոդաբանության» այս ամենազնացները հասարակագետներին արտաքուստ նմանեցնում են իրական գիտնականներին, հենց որ մենք վերադառնում ենք օբյեկտիվության մեր սահմանմանը՝ դիտարկելով այն որպես իր մասին ասվածին արժանապատվորեն ընդդիմանալու ունակություն, դրանք վերածվում են կեղծ ու էժանագին նմանակման: Եթե մենք կորցնենք գիտական արդյունքի վրա ազդելու օբյեկտի այս ունակությունը (ինչով հպարտանում են քանակական մեթոդների կողմնակիցները), մենք կկորցնենք օբյեկտիվությունը: Եթե մանրէները, էլեկտրոնները և ժայռային շերտերը չպետք է զրկվեն փորձարկման արդյունքների վրա ազդելու ունակությունից, ապա ոչ թե այն պատճառով, որ նրանք լիովին ենթարկվում են գիտնականներին, այլ այն պատճառով, որ լիովին անտարբեր են իրենց ասելիքի նկատմամբ: Դա չի նշանակում, որ նրանք «պարզապես օբյեկտներ են», ընդհակառակը, նրանք իրենց պահում են այնպես, ինչպես ուզում են՝ առանց հաշվի առնելու գիտնականների հետաքրքրությունները՝ կանգնեցնում են փորձերը, հանկարծակի անհետանում են, մահանում, հրաժարվում են պատասխանել կամ անգամ պայթեցնում են լաբորատորիաները: Բնության օբյեկտները *չեն ենթարկվում* բնությանը: Ո՞ր գիտնականը կասի, որ դրանք լիովին կառավարելի են: Ընդհակառակը, օբյեկտները միշտ դիմադրում են վերահսկողությանը և շփոթություն են առաջացնում մեր ծրագրերում: Եթե մարդկային սուբյեկտների հետ պետք է շատ ավելի զգույշ լինել, ապա ոչ թե այն պատճառով, որ մարդիկ չպետք է դիտարկվեն որպես ինտենցիոնալությունից, գիտակցությունից և ռեֆլեքսիայի ունակությունից զրկված «պարզա-

պես իրեր» (հասկացող դպրոցների դիրքորոշումը), և ոչ թե այն պատճառով, որ մարդիկ կարող են ազդել գիտական արդյունքի վրա (քանակական դպրոցների տեսակետ), այլ ընդհակառակը, քանի որ սուբյեկտները արագորեն *կորցնում են* դիմադրության ուժը, երբ *զիջումների են գնում* գիտնականների ակնկալիքներին: Մանրէները և էլեկտրոնները երբեք չեն հրաժարվի *դիմադրությունից*, քանի որ հեշտությամբ չեն ենթարկվում փորձի ազդեցությանը, որի հետաքրքրություններն այնքան հեռու են իրենց սեփական *ձգտումից* (եթե չասենք հետաքրքրությունից): Սուբյեկտները, ի տարբերություն օբյեկտների, այնքան արագ են հանձնվում, որ գերազանց կերպով խաղում են բութ օբյեկտի դեր. երբ «սպիտակ խալաթներով մարդիկ խնդրում են նրանց զոհաբերել դիմադրողականությունը՝ հանուն բարձր գիտական նպատակների (դա տեղի է ունեցել Միլգրամի փորձարկումներում, որն ապացուցել է միայն, որ հոգեբանը իսկապես կարողանում է տանջել ուսանողներին):

Եթե հասարակագետներն ուզում են օբյեկտիվ դառնալ, նրանք պետք է գտնեն այնպիսի հազվագյուտ, արժեքավոր, տեղայնացված, հրաշալի իրավիճակ, որում կկարողանան առարկային տալ առավելագույն հնարավորություն՝ առարկելու այն ամենին, ինչ նրա մասին ասվում է, ամբողջ ուժով դիմադրելու արձանագրությանը և դնելու սեփական հարցերը, այլ ոչ թե խոսելու գիտնականների անունից, որոնց հետաքրքրություններն այն պարտավոր չէ կիսել: Այդ ժամանակ մարդկանց պահվածքը հասարակագետների ձեռքում նույնքան հետաքրքիր կդառնա, որքան իրերի պահվածքը «ֆիզիկոսների» ձեռքում: Համեմատե՛ք, օրինակ, տնային տնտեսուհիներին և գենդերային դերերին նվիրված նախաֆեմինիստական սոցիոլոգիական գրականությունն այն ուսումնասիրությունների հետ, որոնք, հայտնվելով ֆեմինիզմից հետո, կարողացան իրենց պոտենցիալ հարցվողների մեծամասնությանը անհնազանդ դարձնել: Դուք կտեսնեք տարբերությունը միայն արտաքինից գիտություն երևացող կեղծ օբյեկտիվ գիտության և զարմանալի գենդերային հայտնագործությունների միջև: Վերջիններս միշտ չէ, որ կիսում են արտաքին ատրիբուտները բնական գիտու-

թյունների հետ, բայց, անկասկած, ունեն սեփական օբյեկտիվությունը, այսինքն՝ «առարկելու ունակությունը»: Այն դրսևորվում է նրանում, որ օբյեկտներն ինքնին բեմ են հանում նոր արարածներ, դնում են նոր հարցեր, դրդում հասարակագետներին, ինչպես նաև «ֆիզիկոսներին», վերազինել ունեցած ինտելեկտուալ ողջ գործիքակազմը: Չնայած «գիտական պատերազմների» մասնակիցների տագնապներին՝ հենց այն ժամանակ, երբ ուսումնասիրության օբյեկտները հետաքրքիր են, ակտիվ, անհնազանդ և լիովին ներգրավված են դրանց մասին ասելիքում, հասարակական գիտությունները և սկսում են ընդօրինակել լավագույն բնական գիտությունների վառ նորույթները (հենց դա են արել STS-ի ներկայացուցիչները իրենց օբյեկտների հետ. նրանք թույլ են տվել դրանց առարկել, ընդ որում՝ բարձր ձայնով): Ինչ վերաբերում է բնական գիտությունները պատճենող և օբյեկտիվությունը կորցնող մյուս հասարակական գիտություններին, ապա դրանք ավելի ազնիվ կլինեին, եթե լռեին:

Այս փաստարկը (ես այն կոչում եմ Stengers-Depre ճշմարտություն, քանի որ այն լիովին փոխում է դիսցիպլինար նորմերը) չի ծառայում հասարակական գիտությունների քանակական կամ հասկացող դպրոցների արդարացմանը: Թե՛ առաջինների, թե՛ երկրորդների էներգիան ավելի լավ կիրառություն կգտներ, եթե երևակայական բնագիտական մեթոդաբանության դեմ պայքարի փոխարեն (որը կարծես ապահովում է «պարզապես օբյեկտների» կառավարումը), նրանք իսկապես փորձեին բացահայտել այնպիսի հազվագյուտ և երբեմն սարսափելի իրավիճակներ, որոնցում ո՛չ ինտենցիոնալությունը, ո՛չ ինքնագիտակցությունը, ո՛չ էլ ռեֆլեքսիայի ունակությունը չեն որոշում մարդուն: Հանգամանորեն պաշտպանելով հերմենևտիկ մեթոդները՝ հասարակագետները ակնթարթորեն հայտնվեցին մեթոդաբանությունից դուրս. նրանք փակագծերի մեջ առան ոչ մարդկային դերակատարներին, որոնք էապես կարևոր են հենց մարդկային բնությունը որոշելու համար: Հասկացողական դպրոցի կողմնակիցների կողմից արված հսկայական աշխատանքը՝ ուղղված մարդկանց և օբյեկտների առանձնացմանը, ոչ ավելի բարոյական է (չնայած այն բարձր բարոյա-

կան դիրքորոշումների, որոնց հետ հերմենևտները գնում էին մարդկանց բնագիտական օբյեկտիվացումից պաշտպանելու), քան առավել գռեհիկ ռասիզմը, որը պահանջում է՝ «ոչ մարդիկ մեր գիտության մեջ տեղ չունեն»[198]:

Ամփոփենք արդյունքները: Որքան ես տեսնում եմ, իրերը անարդարացիորեն մեղադրվում են պարզապես «իրեր» լինելու մեջ: Ճշգրտեմ. մեզ համար ավելի օգտակար կլիներ վերադառնալ այս բառի անգլո-սաքսոնական և ռոմանական ծագումնաբանությանը՝ հիշելու համար, որ բոլոր իրերը (լատիներեն՝ res, ինչպես նաև causa[199]) նշանակում են դատական բնույթի համակազմ, որը հավաքված է քննարկման առարկայի շուրջ: Մի քանի դար հետո STS-ը պարզապես մեզ վերադարձնում է իրի՝ իբրև համակազմի սովորական սահմանմանը, և այդ սահմանումը ստիպում է տեսնել, որ սահմանները բնության և հասարակության, անհրաժեշտության և ազատության, բնական և հասարակական գիտությունների ոլորտների միջև շատ յուրահատուկ մարդաբանական և պատմական դետալներ են[200]: Բավական է պարզապես նայել այսօրվա թերթերի էջերը լրացնող կեղծ օբյեկտներից որևէ մեկին՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներից մինչև գլոբալ տաքացում կամ վիրտուալ բիզնես, որպեսզի համոզվենք, որ հասարակագետների և «ֆիզիկոսների» համար միայն ժամանակի հարց է մոռանալ այն մասին, թե ինչն է նրանց բաժանում և միավորվել «իրերի» համատեղ ուսումնասիրությունների շուրջ, որոնք, լինելով բնույթով հիբրիդներ, *արդեն* (շատ տասնամյակներ) միավորում են նրանց գործնականում:

---

198 Բժշկական պրակտիկայում օբյեկտիվությունների բազմաթիվ տեսակներ ներկայացված են Berg, M., Mol A.-M. (1998) Differences in Medicine: Unraveling Practices, Techniques and Bodies, Durham: Duke University Press:

199 Thomas, Y. (1980) ‘Res, chose et patrimoine (note sur le rapport sujet-objet en droit romain)', Archives de philosophie du droit 25, pp. 413-26.

200 Latour, B. (1993). We Have Never Been Modern. Cambridge, Mass: Harvard University Press; Descola, P., Palsson, G. (Eds.). (1996). Nature and Society. Anthropological Perspectives. London: Routledge.

**Հասարակական գիտությունների ոսկե դա՞րը**

Ո՞ր տարօրինակ պատճառով են հասարակական գիտությունները փորձում այդքան սխալ կերպով նմանակել բնական գիտություններին: Հետաքրքիր պատասխան է տալիս Բաումանը՝ բնութագրելով հասարակագետին որպես «օրենսդիր»[201]: Հասարակական գիտությունների մեծ մասը ստեղծվել է 19-րդ դարավերջին, երբ տարիներ շարունակ տևած ծանրագույն քաղաքացիական պատերազմներից ու հեղափոխական պայքարից հետո անհրաժեշտություն էր առաջացել պարզեցնելու քաղաքական գործընթացները: Եթե մենք ունենք Հասարակությունը՝ որպես արդեն պատրաստի ամբողջություն, որի միջոցով կարելի է բացատրել այն դերակատարների վարքը, ովքեր չգիտեն, թե ինչ են անում, հասարակությունը, որի գաղտնի կարգը բացվում է մարզված հասարակագետի փորձառու հայացքին, ապա կարող ենք սոցիալական ինժեներիայի իսկայական խնդիր դնել մեր առջև և անցնել համընդհանուր բարիքի արտադրությանը՝ քաղաքական մեթոդներով այդ ընդհանրությունը ջանասիրաբար ստեղծելու փոխարեն: Ահա, թե որտեղից է սկիզբ առնում այն նույն հասարակությունը, որի մահն այժմ համատարած է երևում ոչ այնքան ցանցերի և գլոբալ մարքեթինգի առաջացման պատճառով, որքան այն պատճառով, որ այն վարկաբեկվել է և՛ քաղաքական, և՛ գիտական առումներով: Կոնտից մինչև Բուրդյո, Դյուրքհեյմի և Պարսոնսի ջանքերով օրենսդրության երազանքով էր որոշվում հասարակագետների մեծամասնության հիմնական խնդիրը (բացի հասկացող սոցիոլոգիայի, էթնոմեթոդաբանների և «սիմվոլիստների» մի քանի դպրոցներից, որոնց Բաումանը դասում է այլ ուղղության շարքին): Նրանք ուզում էին շրջանցել անտանելի անհանգիստ քաղաքական ասպարեզը՝ կիրառելով հասարակության մասին գիտելիքը, որը մանիպուլյացնում է մարդկանց՝ հակառակ իրենց կամքի:

Քաղաքականության պարզեցման տարօրինակ քաղաքական երազանքում մենք հայտնաբերում ենք ոչ միայն վերը քննարկվող «հասարակություն» հասկացությունը, այլև ծայրահեղ սցիենտիզմը, որը մենք

[201] Bauman, Z. (1992) Intimations of Postmodernity, London: Routledge.

նույնպես քննադատության ենք արժանացնում: Երբ հասարակագետները ձգտում են գտնել ագենտներին առանց նրանց իմացության «մանիպուլյացիայի» ենթարկող անտեսանելի կառուցվածքը, նրանք համոզված են, որ պետք է պատճենեն վտանգավոր բնագիտական զյուտը, այն է՝ առաջնային և երկրորդային որակների երկատումը (եթե օգտագործենք հին, բայց այստեղ հարմար փիլիսոփայական տերմինաբանությունը): Առաջնային հատկանիշները որոշում են բնության իրական հյուսվածքը (տարրական մասնիկներ, շղթաներ, գեներ, ատոմներ՝ կախված գիտակարգից), մինչդեռ երկրորդականները որոշում են այն ճանապարհը, որով մարդիկ սուբյեկտիվ կերպով ներկայացնում են միևնույն ունիվերսումը (աշխարհին՝ իբրև ամբողջ): Օրինակ, սեղանը երևում է շագանակագույն, նուրբ, հնացած և, ըստ էության, այն բաղկացած է ատոմներից և վակուումից: Համակարգիչը բաժանվում է բիթերի և տրանզիստորների, բայց ես տեսնում եմ միայն հարազատ ինտերֆեյսը: Այս անմեղ թվացող բաժանման իմաստը նրանում է, որ այն խորամանկ քաղաքական հնարք է: Մեր այս ընդհանուր աշխարհը (այն, ինչից իրականում բաղկացած է ունիվերսումը) հայտնի է գիտնականներին, բայց թաքնված է հասարակ մարդկանցից: Այն ամենը, ինչ կարելի է տեսնել, վերապրել և զգալ, իհարկե, սուբյեկտիվորեն նշանակալի է, բայց, միևնույն ժամանակ, բոլորովին անէական է, քանի դեռ այն չի համապատասխանում տիեզերքի կարգին: Ուստի, երբ գալիս է քաղաքական աշխատանքի ժամանակը *par excellence*[202], այսինքն՝ համատեղ տիրապետվող աշխարհի ինչպիսին լինելը որոշելու ժամանակը, գիտնականները կարող են ասել, որ հարցն արդեն փակված է, բոլոր առաջնային հատկանիշների արդյունքն արդեն միասնական Բնության մեջ է: Իհարկե, դեռ մնում են երկրորդական որակները, բայց դրանք միայն մասնատում են մեզ բազմաթիվ կարծիքների՝ սուբյեկտիվորեն գուցե իմաստալից, բայց օբյեկտիվորեն (ավանդական իմաստով) անէական: Այսպիսով, մենք ձեռք ենք բերում մեկ Բնություն և բազմաթիվ անհամաչափելի մշակույթներ[203]:

---

[202] Առավելապես – *խմբագրի ծանոթագրություն*:

[203] Մանրամասն փաստարկման համար տե՛ս Latour, B. (1999) Politiques de la nature.

Այժմ մենք կարող ենք հասկանալ, թե որքան մեծ է հասարակագետների գայթակղությունն օրենսդիրների դեր խաղալու՝ հասարակության համար անելու այն, ինչ (նրանք կարծում են) արել են «ֆիզիկոսները» Բնության համար: Լարված քաղաքական գործընթացում հասարակությունը քայլ առ քայլ ստեղծելու փոխարեն եկեք ավելի լավ է ենթադրենք առաջնային հատկանիշների՝ տնտեսական ենթակառուցվածքների, ուժային հարաբերությունների, էպիստեմաների, անգիտակցականի, հարկադրանքի ձևերի, անտեսանելի ձեռքերի (կախված գիտակարգից) գոյությունը: Հետո ենթադրենք, որ դերակատարները տեղյակ չեն այն նյութից, որից, ըստ էության, հյուսված է իրենց հասարակական կյանքը, այնպես, ինչպես ես չգիտեմ, թե ինչպիսին է այս սեղանի ատոմային կառուցվածքը: Եվ այն ժամանակ, երբ գա մեր ընդհանուր աշխարհը ստեղծելու ժամանակը, հասարակագետը կարող է ասել՝ մշակութային հարիֆներ, դուք ուշացաք: Մենք արդեն ունենք ընդհանուր աշխարհ, և այն կոչվում է հասարակություն: Այն միշտ եղել է այնտեղ, այն ընկած էր ձեր բոլոր գործողությունների հիմքում, նույնիսկ եթե դուք չեք տեսել այն: Իհարկե, ձեր սուբյեկտիվ զգացողությունները նույնպես գոյություն ունեն, բայց դրանք ոչինչ չեն ավելացնում հասարակության դաժան իրականությանը: Ավելի ճիշտ՝ ինչ-որ բան ավելացնում են՝ պատրանքի ծածկույթ, որը Ձեզ պաշտպանում է այս սարսափելի ճշմարտությունից, որը մենք հստակ տեսնում ենք, որովհետև հասարակագետ ենք:

Բայց կարելի է գնալ ավելի հեռուն ու հասնել նոր եվրոպական երազանքին (թեև այն փշուր-փշուր է եղել վերջին պատմությամբ, ինչպես նաև շնորհիվ STS-ի որոշ միջամտության): Ինչու միանգամից չկիրառել *երկու* ավանդական մեթոդները, որոնք հրահանգում են ստեղծել ընդհանուր աշխարհը անհրաժեշտ քաղաքական զարգացումը կրճատելու միջոցով, այն է՝ Բնությունն ու Հասարակությունը: «Ֆիզիկոսները» զբաղված են բնական աշխարհի առաջնային հատկանիշներով, իսկ հասարակագետները՝ հասարակության առաջնային որակ-

Comment faire entrer la science en democratie [Politics of Nature: How to Bring the Sciences into Democracy], Paris: La Decouverte:

ներով: Աշխարհի կազմակերպման մասին գիտելիքը թույլ կտա «ֆիզիկոսներին» բոլոր երկրորդական հատկանիշները համարել իռացիոնալ, մասնավոր, սուբյեկտիվ կամ մշակութային փաստեր (կախված ռազմատենչության աստիճանից): Միևնույն ժամանակ, այդ գիտելիքը թույլ կտա մերժել դերակատարների ցանկացած առարկություններ՝ դրանք հայտարարելով չափազանց սուբյեկտիվ, մասնավոր, խեղաթյուրված, այլասերված, ոչ էական կամ մշակութային պատրանքներ (կրկին կախված ամբարտավանության աստիճանից): Այնպես որ սարկազմը, որից ես սկսեցի, ավելի շատ հատուկ է զզվյուն փիլիսոփայի: Այո, հասարակական գիտությունները գերազանց են՝ բացառությամբ «գիտություն» և «հասարակական» բառերի: Եթե «հասարակականը» ենթադրում է Հասարակություն, իսկ Գիտությունները նշանակում են անհրաժեշտ զարգացման պարզեցում առաջնային և երկրորդային որակների արդեն պատրաստի բաժանման միջոցով, և եթե այդ ամենը իրավունք է տալիս հասարակագետներին և «ֆիզիկոսներին» ծաղրել մյուս մարդկանց իրենց իռացիոնալության համար, ապա հասարակական գիտությունները ջարդած գրոշ (կամ գուցե Եվրո) չարժեն:

Բայց դրանք կարող են ունենալ բոլորովին այլ նշանակություն այն պայմանով, որ շնորհիվ հատկապես STS-ի՝ մերժեն երկատումը առաջնային և երկրորդային հատկությունների միջև (որը Ուայթհեդը արտահայտիչ կերպով կոչեց «բնության բիֆուրկացիա»[204]) և վերադառնան «իրերին»՝ վերը նշված իմաստով: Իրերը («կեղծ օբյեկտները» կամ «ռիսկը»՝ բառը կապ չունի) օժտված են առաջնային և երկրորդային որակների *անբաժանելիության* հատկությամբ: Նրանք չափազանց իրական են, որպեսզի լինեն պատկերացումներ և շատ հակասական են, վիճելի, հավաքական, փոփոխական և հանդուգն, որպեսզի խաղան անփոփոխ, ամաչկոտ, սառած և տխուր առաջնային հատկությունների դեր, որոնցով մեկընդմիշտ զինված է Ունիվերսումը:

Այն, ինչ հասարակական գիտությունները կարող էին անել բնական գիտությունների հետ միասին, իրերը մարդկանց ներկայացնելն է՝ իրենց բոլոր հետևանքներով և անհստակություններով: Յոթանասուն

[204] Whitehead, A. N. (1920) Concept of Nature, Cambridge: Cambridge University Press.

տարի առաջ հասարակական գիտությունների առջև հենց Դյուին իր ամենակարևոր աշխատանքներից մեկում[205] այդպիսի խնդիր էր դրել, այն է՝ չորոշել մեր գործողությունների անտեսանելի կառուցվածքը (թե իբր հասարակագետը *ավելի շատ* գիտի, քան ինքը՝ դերակատարը), այլ նախևառաջ թողնել հասարակականը ինքն իրեն, քանի որ ո՛չ «ժողովուրդը» (բառ, որն օգտագործում էր Դյուին՝ նշելու այն, ինչ մենք այսօր անվանում ենք «ռիսկի հասարակություն»), ո՛չ էլ հասարակագետը հաստատ չգիտեն, թե կոնկրետ ինչ փորձի միջով ենք մենք անցնում: Այս տեսանկյունից ճիշտ հասարակական գիտություններ կլինեին ոչ թե նրանք, որոնք ստեղծում են ենթակառուցվածքներ՝ խաղալով բնական գիտությունների (երևակայական) խաղը, այլ նրանք, որոնք կարող են փոխել ժողովրդի պատկերացումն իր մասին *այնքան հստակ*, որ մենք վստահ լինենք՝ այս պատկերացմանը առարկությունների հնարավոր առավելագույն քանակը արդեն հնչել է: Այդ ժամանակ հասարակական գիտությունները կսկսեն նմանակել բնական գիտություններին: Ավելին, նրանք կարող են «իրերը» վերադարձնել նրան, ինչին վերջիններս պատկանում են՝ այն համակազմին, որը պատասխանատու է ընդհանուր աշխարհի ստեղծման համար և պետք է իրավամբ կոչվի քաղաքականություն[206]:

«Հետ-STS-յան դարաշրջանի» հասարակական գիտությունների ծրագրի նման սահմանումը կարող է թեթևացնել անվերջանալի բանավեճերը հոսունության, փոփոխականության, բազմազանության, հատվածայնության, թափանցիկության մասին, որոնք այնքան բնորոշ են այսօրվա դիսկուրսին[207]: Եթե մենք դուրս գանք մոդեռնիզմի առաջարկած «գիտական հասարակության» նախագծից, դա ամենևին չի նշանակի, որ մենք կընկնենք ցանցերի, հոսքերի և հատվածների՝ հետմոդեռնիստական զովերգման ալիքի մեջ: «Կապիտալիզմի նոր ոգին» (օգ-

[205] Dewey, J. (1954 [1927]) The Public and Its Problems, Athens: Ohio University Press.
[206] Latour, B. (1999) Pandora's Hope. Essays On the Reality of Science Studies, Cambridge, Mass: Harvard University Press.
[207] Castells, M. (1996) The Rise of the Network Society? Oxford: Blackwell.

տագործելով հայհոյական արտահայտությունը)[208] համահունչ կլիներ նիցշեական բազմազանության պահանջին, թեև այն պարզեցնում է անհրաժեշտ քաղաքական զարգացումը այնպես, ինչպես դրանից առաջ՝ բնության և հասարակության երկատումը։ Մոդեռնիզմի առաջին նախագիծը մերժեց ընդհանուր աշխարհի շարունակական ստեղծումը՝ համարելով Բնությունը և Հասարակությունը արդեն համալրված։ Երկրորդ նախագիծը՝ հետմոդեռնիզմն իր ցանցերով չի ցանկանում որոնել *ընդհանուր աշխարհը:* Մենք կհայտնվենք Հարիբդայի և Սքիլայի միջև, եթե էլ ավելի հոսուն և ապակենտրոնացված շուկայի կոչեր անենք և դրանով իսկ կրկին արժեզրկենք հասարակական գիտությունները։ Ի՞նչ օգուտ կա ամբողջատիրության ուրվականից ազատվելու մեջ, եթե մենք ընկնում ենք «գլոբալիզմի» մեջ: STS-ի կողմից հասարակական և բնական գիտություններին իբրև ցնցող մարտահրավեր նետված իրերը չունեն միասնություն, ինչը որ դրանց վերագրել էին մոդեռնիստները, բայց նրանք չունեն նաև բազմազանություն (վերջինը դուր կգար հետմոդեռնիստներին): Նրանք ապրում են նոր համակազմերում՝ սպասելով անհրաժեշտ զարգացման, որի *արդյունքում* (այլ ոչ թե նախապես) կմիավորվեն։

**Եզրակացություն**

Այս հոդվածում ես նախընտրեցի օգտագործել «հասարակական գիտություններ» եզրույթը «սոցիոլոգիայի» փոխարեն: Ոչ թե իմպերիալիստական ինչ-որ *մեծամտության* պատճառով, այլ պարզապես նրա համար, որ յուրաքանչյուր հասարակական գիտություն *բացի սոցիոլոգիայից* ունի իր բնագիտական նմանակը։ Ավելի ճիշտ, «STS-ից առաջ ընկած ժամանակաշրջանում» յուրաքանչյուր հասարակական գիտություն իր մեջ պարունակում էր «իրի» բնույթով պայմանավորված կոնֆլիկտ։ Միայն սոցիոլոգիան չկիսեց ընդհանուր ճակատագիրը։ Այսպիսով, գոյություն ունեն ֆիզիկական և մարդկային աշխարհագրություններ, ֆիզիկական և սոցիալական (կամ մշակութային) մար-

[208] Boltanski, L., Chiapello, E. (1999) Le nouvel esprit du capitalism [The new spirit of capitalism], Paris: Gallimard.

դաբանություններ: Հոգեբանությունը կտրված է անհամար շերտերով՝ ուղեղի էլեկտրական պարպումներից մինչև հոգեբուժի դեղատոմսեր և շրջանով վազող առնետներ: Լեզվաբանությունը ճանապարհորդում է իր գերատեսչությունում՝ համակարգչային մոդելավորումից մինչև խոսքային ակտեր՝ անցնելով էվոլյուցիոն սցենարների, ստուգաբանության և հիմնարար հնչյունաբանության միջով: Ժողովրդագրությունը զբաղված է առավել խճճված գենետիկ հիբրիդներով, սեռի երևույթներով, վիճակագրությամբ, բարքերով և բարոյականության խնդիրներով: Նույնիսկ տնտեսության ներսում կա բաժանում շուկայի նատուրալիզացման և բնության տնտեսականացման միջև: Այս ամենը չի վկայում այդ գիտակարգերի ներքին ներդաշնակության մասին: Ընդհակառակը, նրանցից յուրաքանչյուրը պարունակում է իրերի դիտարկման տարբեր եղանակների կոնֆլիկտ, որոնք բախվում են միևնույն միջանցքում, միևնույն հավաքներին, դիտումներին և այլն:

Կա սոցիալական սոցիոլոգիա, իսկ ո՞ւր է ֆիզիկական սոցիոլոգիան: Սոցիոկենսաբանությունը, ցավոք, պիտանի չէ. այն չափազանց ռազմատենչորեն է հակադրվում հասարակական գիտություններին և չափազանց ոչ ռեֆլեքսիվ է, որպեսզի արտադրի քաղաքականապես նշանակալի «իրեր»: Ես կենթադրեի, որ սոցիոլոգիայի փնտրվող նմանակը պետք է դառնա հենց STS-ը, որն ունակ է պահպանել գիտակարգն «իր սահմաններում»: Այն «հասարականանի» և «սիմվոլիկի» մեջ խորասուզված իր գործընկերների ուշադրությունը կսևեռի օբյեկտների դիտարկման սարսափելի բարդության վրա, որը պահանջում է հասարակագետներից ընդունել առարկաների ծայրահեղ խառնումը, ինչը կապահովի գիտակարգի նմանությունը մնացած հասարակական գիտություններին: Հասարակականը տարածություն չէ, այլ միայն ձայներից մեկն է այն համակազմերում, որոնք իրեր են հավաքում այս նոր (շատ հին) քաղաքական ֆորումին՝ ընդհանուր աշխարհի աստիճանական ստեղծման:

## ՋՈՆ ԼՈ

# ՕԲՅԵԿՏՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ[209]

**Ներածություն**

Ի՞նչ է օբյեկտը: Ակտոր-ցանցային տեսության (ANT) սկզբնական տարբերակում կա այս հարցի շատ կոնկրետ պատասխան: Օբյեկտները որոշակի կայուն ամբողջությունների և ցանցային հարաբերությունների «ածանցյալներն են»: Մեր հիմնարար ենթադրությունն այն է, որ օբյեկտները պահպանում են իրենց ամբողջականությունը, քանի դեռ հարաբերությունները նրանց միջև կայուն են և անփոփոխ:

Ակտոր-ցանցային տեսության առաջարկած մոտեցումը շատ հարցերում պարտական է հետկոնստրուկտիվիստական սեմիոտիկային: Սեմիոտիկան (եվրոպական սինխրոն լեզվաբանության սոսյուրյան տարբերակում) ցույց է տալիս, որ ցանկացած բառի նշանակություն հարաբերական է, այսինքն՝ կառուցակցված է կոնկրետ բառի և վերջինիս հետ կապված այլ բառերի միջև առկա տարբերակման հարաբերություններով: Օրինակ՝ «շուն» և «կատու» բառերը: Այս բառերից յուրաքանչյուրը նշանակություն է ձեռք բերում մյուսի հետ ունեցած տարբերության շնորհիվ, և նրանցից յուրաքանչյուրը հարաբերակցելի է այլ անունների հետ՝ «շուն», «կատու», «գայլ», «ձագ» և այլն: Բառի իմաստը կամայական է (arbitrary), թեև հստակ որոշված է տարբերության հարաբերությունների ցանցով: Ըստ էության, այն իրենից ներկայացնում է այդ հարաբերությունների արդյունքը:

Ստրուկտուրալիստները, որպես կանոն, պնդում են, որ լեզվի նման կամայական բնույթը մարդկային մտածողության օպերացիաներում ինչ-որ համընդհանուր բան է բացում: Մարդիկ որոշակի եղանակներով կառուցվածքայնացնում են հարաբերությունները և անում

---

[209] Law, J. (2002) Objects and Spaces// Theory, Culture & Society, 19 (5/6), pp. 91-105. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի*:

են դա իրենց գլուխներում պարունակվող մեխանիզմների միջոցով: Համապատասխանաբար ենթադրվում է, որ բոլոր լեզուներն ունեն միևնույն «խորքային կառուցվածքը»: Ի տարբերություն խորքային կառցվածքի համընդհանրության վերաբերյալ ստրուկտուրալիստական թեզին՝ հետստրուկտուրալիզմը հռչակել է կայացման գործընթացում գտնվող տարբեր խորքային կառուցվածքների գոյությունը, որոնք ստեղծվում և պահպանվում են տարբեր սոցիալական չափումներում: Այս կառուցվածքները արտադրում են տարբեր տիպի օբյեկտներ և այդ օբյեկտների մասին տարբեր գիտելիքներ, ինչը լավ երևում է Միշել Ֆուկոյի կողմից ձեռնարկված մարմնականության վերլուծության օրինակով: Դասական էպիստեմայում մարմինը սիմվոլիկ իշխանության (օրինակ՝ խոշտանգումների կիրառման մեջ դրսևորվող) հարաբերությունների դաշտն է, մինչդեռ ժամանակակից էպիստեմայում մարմինը վերածվում է գործառութային և (ինքնա) կարգապահ մեքենայի կամ կարգաբերված և արդյունավետ հարաբերությունների ամբողջության: Համապատասխանաբար, Ֆուկոն առանձնացնում է նման կապերի կարգաբերման մի քանի «խորքային ռազմավարություններ»[210]:

Ակտոր-ցանցային մոտեցումը նման է Ֆուկոյի մոտեցմանը այն հարցում, որը վերաբերում է նյութականի շեշտադրման նշանակալիությանը: Խոսքը, մարմինը, ժեստերը և նյութերը, ինչպես և շենքերը, նավերը, ինքնաթիռները կամ զենքը, դիտարկվում են իբրև ռազմավարական տրամաբանության դրսևորումներ. դրանք բոլորը մասնակցում են ամենի պահպանմանը: Ամենը ստեղծված է հարաբերություններով և մասնակցում է դրանց ստեղծմանը: Ակտոր-ցանցային տեսության տարբերությունը հետստուկտուրալիստական մոտեցումից նրանում է, որ այն պակաս հետաքրքրված է արդիականությամբ հաստատված «հնարավորի սահմաններով» (իսկ որոշակի տարբերակներում ընդհանրապես անտարբեր է այդ հիմնախնդրի հանդեպ): Դրա փոխարեն, ակտոր-ցանցային տեսությունը ուսումնասիրում է այն կոնկրետ ռազմավարությունները, որոնք ռեկուրսիվ կերպով և արդյունավետորեն

[210] Foucault, M. (1979) Discipline and Punish: The Birth of the Prison. Harmondsworth: Penguin.

ներկառուցված են օբյեկտների, կազմակերպությունների, սուբյեկտնե-րի և այլնի արտադրության հարաբերություններում: ANT-ն թույլատրում է ոչ թե մեկ, այլ բազմաթիվ «կարգաբերման եղանակների» գոյությունը:

Ի՞նչ է նշանակում այս տարբերությունը Մ. Ֆուկոյի մոտեցման և ակտոր-ցանցային վերլուծության միջև: Ենթադրենք, որ օբյեկտներն իսկապես իրենցից ներկայացնում են պարզապես «հարաբերական անորոշություններ» («կոնտինգենտություններ»): Դա նշանակում է, որ նրանց կազմավորման մեթոդները և այն, թե ինչպես են նրանց ձևավորած հարաբերությունները ձեռք բերում կայունություն, հիմնականում էմպիրիկ հարց է: Իր հերթին, ինչպես ընդգծում են ակտոր-ցանցային մոտեցման տեսաբանները, աշխարհի հնարավորությունների ամբողջությունը սահմանափակ է, բայց այն սահմանափակված է պատահական եղանակով, և քանի դեռ Տիեզերքը կարող է մեր առջև դնել իրերի տարատեսակ բազմություններ, դրանց կարգաբերման եղանակները չեն գումարվում մեծ էպիստեմիկ բլոկերում:

Որքանո՞վ է հաջող մեր ընտրած մտածողության եղանակը: Մի կողմից կարելի է վերը ասվածը դիտարկել որպես ազատում Ֆուկոյի մռայլ մոլուցքից հնարավորի պայմանների սահմաններով, ազատում նրա նախապաշարմունքից այն ամենի հանդեպ, ինչը վերջին երկու հարյուր տարիների ընթացքում մեզ աննկատորեն զրկում էր ազատությունից ժամանակակից էպիստեմայի[211] տրամաբանության և ռազմավարության միջոցով: Սակայն կա նաև այլ հնարավորություն՝ ասել, որ նման մտածողությունն ընդամենը կուրության ձև է: Այդ դեպքում ակտոր-ցանցային տեսությունը ներքաշվում է հնարավորի սահմաններից դուրս հայացք գցելու փորձերի դեմ տարվող մտավոր և քաղաքական պայքարում:

Պետք է գտնել չհայտնաբերված մայրցամաք և հետազոտել թաքնված, հետերոտոպիկ վայրերը՝ Այլի վայրերը, որոնք ընկած են

[211] «Արդիականությունից դուրս» հետերոտոպիաների բացառիկ հետաքրքիր վերլուծություն է առաջարկում Քեվին Հեթերինգթոնը, տե՛ս Hetherington, K. (1997) The Badlands of Modernity: Heterotopia and Social Ordering. London: Routledge:

այսօրվա հնարավորություններից անդին[212]:

Սույն աշխատանքը նվիրված է «այլության» (alterity) այդ թերությանը: Իմ հարցը հետևյալն է՝ *ի՞նչ է օբյեկտը, եթե մենք սկսում ենք լրջորեն մտածել «այլության» մասին»:* Այստեղ ես կփորձեմ դիտարկել նշված թեման տարածականորեն կամ ավելի ճիշտ՝ տոպոլոգիապես: Առաջին հերթին, ես պնդում եմ, որ օբյեկտների արտադրությունն իսկապես ունի տարածական հետևանքներ, որ տարածությունն ինքնակնհայտ ու միավոր չէ, և կարելի է խոսել *տարածականության բազմաթիվ ձևերի* մասին: Երկրորդը, ես ենթադրում եմ, որ օբյեկտների օգտագործումն ինքնին ստեղծում է *հնարավորության և անհնարինության տարածական պայմանները:* Տարածականությունները առաջանում և գործի են դրվում իրենցում տեղակայված օբյեկտներով. հենց սրանով են որոշվում հնարավորի սահմանները: (Հետևելով առաջին պնդմանը՝ հարկ է նշել, որ տարածական հնարավորություններն իրենց բնույթով բազմակի են): Կան տարածականությունների տարբեր ձևեր. նրանք, որոնց մասին մենք խոսում ենք, ներառում են տարածաշրջանները, ցանցերը և հոսքերը: Երրորդը, ես ենթադրում եմ, որ այս *տարածականությունները և դրանք լցնող և ստեղծող օբյեկտները վատ համադրելի են, այսինքն՝ զտնվում են լարված հարաբերություններում:* Դրանք Այլ են միմյանց հանդեպ: Օբյեկտայնությունը դրանց անհամադրելիության ծնունդն է և արտացոլումը, տարբեր տարածական հնարավորությունների փոփոխման արդյունքը:

### Պորտուգալացիներ

«Գիտությանը, տեխնիկային և հասարակությանը» (STS ուսումնասիրություններ) նվիրված հետազոտություններում, տեսական վերլուծությունը, որպես կանոն, հենվում է մի շարք էմպիրիկ օրինակների

---

212 Նման քննադատություն են արտահայտել Նիք Լին և Սթիվ Բրաունը՝ Lee, N., Brown, S. (1994) Otherness and the Actor Network: The Undiscovered Continent// American Behavioural Scientist, 36, pp. 772–90, ինչպես նաև Սյուզեն Լի Ստարը Star, S. L. (1991) Power, Technologies and the Phenomenology of Conventions: on being Allergic to Onions// Law, J. (ed.), A Sociology of Monsters? Essays on Power, Technology and Domination, London: Routledge, pp. 26–56:

դիտարկման վրա: Մեր վերլուծության պահանջներից ելնելով՝ մենք կանդրադառնանք բավականին նկատելի և լայնամասշտաբ պատմական երևույթի՝ պորտուգալական գաղութային էքսպանսիայի տեխնոլոգիաների օրինակին[213]:

Ինչպես հայտնի է, պիրենեյան ծովագնացային տեխնիկան՝ նոր նավերը և վարման պրակտիկաները, կենտրոնական դեր խաղացին Եվրոպայի գաղութային գերիշխանության հարցում: Քրիստոֆոր Կոլումբոսը հասավ Կենտրոնական Ամերիկա 1492 թ., իսկ Վասկո դա Գաման մոտեցավ Հնդկաստանի ափերին 1498 թ.:

Էքսպանսիայի վաղ շրջաններում օգտագործված նավերի նկարագրությունը թույլ է տալիս առանձնացնել մի քանի տեխնիկական առանձնահատկություններ: Այդ նավերը վարման տեսանկյունից հարմարավետ էին (փոքր նավերը քամու փոփոխության պարագայում շատ արագ վերազինվում էին), հարաբերականորեն պաշտպանված էին ներխուժումից (նույնիսկ եթե հարձակվողներին հաջողվում էր բարձրանալ նավամատույց, նրանց դիմավորում էին մահացու կրակոցները), ինքնավար էին (շնորհիվ առաջադեմ նավիգացիոն տեխնոլոգիաների, որոնք թույլ էին տալիս նավերին զգալիորեն հեռանալ ցամաքից և օգտվել համընթաց քամիների և հոսանքների բոլոր առավելություններից), ինչպես նաև ունեին էական տրանսպորտային հնարավորություններ և սպասարկվում էին փոքրաթիվ թիմերի կողմից (այսինքն, ի տարբերություն թիավարվող նավերի, կարող էին գտնվել ծովում ամիսներ շարունակ):

Այսպիսով, պորտուգալական և իսպանական վաղ էքսպանսիայի պատկերում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հսկայական նավերը՝ գալեոնները, որոնք գնում էին ծով, անց էին կացնում ցամաքից հեռու մինչև տասնութ ամիս և վերադառնում էին (եթե վերադառնում էին) համեմունքների և թալանված ոսկու պաշարներով: Չնայած նոր ծովագնացային տեխնիկայի հաջողությանը՝ իր յուրատիպ սարքերով

[213] Այս հետազոտությունը նկարագրված է Law, J. (1987) Technology and Heterogeneous Engineering: The Case of the Portuguese Expansion// Wiebe E. Bijker, Thomas P. Hughes and Trevor Pinch (eds) The Social Construction of Technical Systems: New Directions in the Sociology and History of Technology, Cambridge, MA: MIT Press, pp. 111–34.

և նոր նավիգացիոն տեխնիկաներով հագեցված նավերը նաև խորտակվում էին, կորցնում ճանապարհը, իսկ նավաստիները մահանում էին սովից կամ տրոպիկական հիվանդություններից: Ինչպես ասում էին պորտուգալացիները. «Եթե ուզում ես աղոթել սովորել, գնա ծով»:

**Ակտոր-ցանցային տեսությունը օբյեկտների մասին**

Ակտոր-ցանցային տեսության դիտանկյունից վերը նկարագրված տեխնոլոգիան իրենից ներկայացնում է ցանց, ընդ որում, ցանցային վերլուծությունը կիրառելի է վերջինիս ուսումնասիրման տարբեր մակարդակների համար: Օրինակ, նավը կարող է ներկայացվել նավակմախքի, առագաստների, պարանների, թնդանոթների, սննդի պահեստների, նավախցիկների և ինքնին թիմի միջև հարաբերությունների տեսքով: Մյուս կողմից, ավելի ընդհանրացված դիտարկմամբ, նավիգացիոն համակարգը՝ իր բոլոր միջատներով, աստղադիտակներով, անկյունաչափերով, հաշվարկների աղյուսակներով, քարտեզներով, նավաստիներով և աստղերով, նույնպես կարող է դիտվել որպես ցանց: Այնուհետև ավելի հեռացված դիտարկման պարագայում ողջ պորտուգալական իմպերիական համակարգն իր ամբողջության մեջ՝ նավահանգիստներով, նավերով, ռազմական դիսպոզիցիաներով, շուկաներով և առևտրականներով, նույնպես կարող է նկարագրվել միևնույն կատեգորիաներով[214]:

Վերը նշվեցին բազմաթիվ օբյեկտներ: Ակտոր-ցանցային տեսության փաստարկը սա է՝ օբյեկտը (օրինակ՝ նավը) մնում է օբյեկտ այնքան ժամանակ, քանի դեռ իր և իր հետ կապված օբյեկտների հարաբերությունները կայուն են, և ամենը պահպանվում է իրենց տեղերում: Եթե նավաստիների, արագ հակառակորդների, քամիների և հոսանքների, պահեստների, զենքի զանգը պահպանում է կայունությունը, ապա նավը շարունակում է մնալ նավ՝ այն չի խորտակվում, չի քանդվում արևադարձային ստորջրյա ժայռերին բախվելով, չի գրավվում ծովահենների կողմից: Այն չի անհետանում այնքան ժամանակ, քանի

[214] Մասշտաբի հարցն այստեղ առանձնակի կարևորություն ունի և պահանջում է առանձին դիտարկում:

դեռ թիմը չի քայքայվում սովից և հիվանդություններից: Նավը սահմանվում է այլ օբյեկտների հետ ունեցած իր հարաբերություններով, և ակտոր-ցանցային վերլուծությունն ուղղված է այն ռազմավարությունների ուսումնասիրմանը, որոնք արտադրում (և իրենց հերթին արտադրված են) այդ օբյեկտայնությամբ, շարահյուսությամբ և դիսկուրսով, որոնք սահմանում են նավի տեղը հարաբերությունների ցանցում:

Բրունո Լատուրը այս պատմության բավականին հետաքրքիր տարբերակ է առաջարկում: Նա խոսում է *անփոփոխ մոբիլություններ*ի մասին[215]: Նավերն իրենցից ներկայացնում են «մոբիլություններ», որովհետև իսկապես տեղափոխվում են Լիսբոնից Կալկաթա: Բացի դրանք՝ նաև «անփոփոխ» են, քանի որ տեղաշարժման հետ մեկտեղ պահպանում են իրենց ձևը՝ իբրև ցանցային միասնություններ: Այսպիսով, ցանցային մետաֆորն աշխատում է երկու ուղղությամբ կամ վերը նշված վերլուծության երկու մակարդակներում: Լինելով օբյեկտներ՝ անփոփոխ մոբիլություններն ինքնին հարաբերությունների համակազմեր կամ ցանցեր են: Բայց դրանք ներառված են նաև այլ օբյեկտների հետ հարաբերություններում: Եթե այս ցանցը պատռվում է, ապա նավը դադարում է նավ լինել, կորցնում է իր ցանցային ձևը՝ վերածվելով ինչ-որ այլ բանի:

**Տոպոլոգիայի ներածություն**

Ողջ վերը ասվածը դասական ակտոր-ցանցային վերլուծության օրինակ է: Պակաս սովորական է մեկ այլ գաղափար՝ օբյեկտների կառուցումն անպայմանորեն ենթադրում է տարածական հարաբերությունների ներառում: «Անփոփոխ մոբիլություններ» լատուրյան եզրույթը հղում է կատարում շարժման հասկացությանը՝ շարժում տարածության միջով: Մենք դեռ կանդրադառնանք դրան քիչ ուշ: Հիմա նշենք, որ ցանցի գաղափարը (կամ օբյեկտների գոյությունն իբրև ցան-

[215] Latour, B. (1990) Drawing Things Together// Michael Lynch and Steve Woolgar (eds) Representation in Scientific Practice, Cambridge, MA: MIT Press, pp. 19–68.

ցային ամբողջություններ) տարածականորեն չեզոք չէ[216] և մատնանշում է որոշակի տիպի տարածության արտադրությունը: Այս փաստարկը հստակեցնելու համար մեզ պետք է հակիրճ անցում կատարել դեպի տոպոլոգիա:

Տոպոլոգիան մաթեմատիկայի ենթաբաժին է, որը զբաղվում է տարածության մեջ օբյեկտների բնույթի ուսումնասիրություններով: Ինչպե՞ս է այն աշխատում գործնականում: Այս հարցի ոչ մաթեմատիկական պատասխանը կարող է ձևակերպվել այսպես՝ տոպոլոգներն ուսումնասիրում են տարածականությունը պատկերների անընդհատության դիտանկյունից: Պատկերները պահպանում են անընդհատության հատկությունը նույնիսկ ձևախախտման (դեֆորմացիայի) պարագայում: Օրինակ, տոպոլոգիայում հաստատվում է, որ պատկերը պահպանում է իր ձևի անընդհատությունը, եթե այն սեղմված է, թեքված կամ ձգված, բայց ոչ այն դեպքերում, երբ այն պատռված է կամ ջարդված: Պատռման կամ մակերևույթի վնասման պարագայում այն փոխակերպվում է, այն է՝ դադարում է լինել *հոմեոմորֆ*: Օրինակ՝ տոպոլոգիական խորանարդը նույնական է գնդին. երկուսն էլ հոմեոմորֆ են: Սակայն այս երկու պատկերները սկզբունքորեն տարբերվում են օղաբլիթի պատկերից, քանի դեռ գնդից կամ խորհանարդից հնարավոր է օղաբլիթ ստանալ՝ միայն նրանցում բացվածք անելով: Երկչափ տարածության մեջ շրջանը և քառակուսին հոմեոմորֆ են, բայց տարբերվում են կորից. կոր ստանալու համար շրջանը կամ քառակուսին կազմող գիծը պետք է կտրվի:

Բերված օրինակները համապատասխանում են նրան, ինչ ասվում է տարածության մասին եվրոպաամերիկյան առօղջ բանականությամբ. տարածությունն իր բնույթով աշխարհագրական է, էվկլիդեսյան: Բայց սա խաբուսիկ զգացողություն է, քանի դեռ էվկլիդեսյան երկրաչափությունը նկարագրում է տարածական հնարավորություններից միայն մեկը: Տոպոլոգները ստեղծում և հետազոտում են տար-

---

[216] Այս գաղափարը զարգացվում է իմ և Անն-Մարի Մոլի համատեղ աշխատանքում Mol, A., Law, (1994) Regions, Networks and Fluids: Anaemia and Social Topology// Social Studies of Science24, pp. 641–71:

բեր հավանականային տարածություններ կամ (ինչը որ նույնն է) տարբեր պայմաններ, որոնցում օբյեկտները կարող են ձևախեղվել առանց վնասվելու: Այս հարցի կոնվենցիոնալ բնույթն ավելի ակնհայտ կդառնա, եթե մենք դիմենք Պատկեր 1-ում ներկայացված օրինակին:

*Պատկեր 1. Հոմեոմորֆ թե՞ ոչ հոմեոմորֆ ձևափոխում*



*Դիրք A* *Դիրք B*

Տոպոլոգիապես այս երկու պատկերները համարժեք չեն. եթե մենք ցանկանանք փոխակերպել A դիրքը B դիրքի, միայն ձևախեղումը բավարար չի լինի: Մենք ստիպված կլինենք կտրել մեծ շրջանը՝ փոքրը «դուրս» հանելու համար: Ուստի մեծ շրջանի անընդհատությունը կխախտվեր, իսկ հոմեոմորֆիզմը կվերանար: Սակայն սա ճիշտ է միայն այն դեպքում, երբ մենք խոսում ենք երկչափ տարածության մասին և ստիպված ենք մեր ձևափոխումներն իրականացնել հարթության վրա: Եթե մենք սահմանափակված չենք երկու չափումներով, ապա բավական է տեղափոխել մի շրջանը մյուսի միջով իրենց հատման կետով, և A դիրքը կվերափոխվի B դիրքի՝ առանց հոմեոմորֆիզմի կորստի: Օբյեկտի անընդհատությունը չի տուժի:

Բերված օրինակը ցույց է տալիս մեզ հետաքրքրող հիմնախնդրի երկու դիտանկյունները. առաջինը, այն ցույց է տալիս, որ տարածականությունը կոնվենցիա է, երկրորդը, որ վերջինիս համարժեք նկա-

բազրության համար էվկլիդեսյան երկրաչափությունը բավարար չէ[217]: Բացի այդ, շրջանների օրինակը ցույց է տալիս, թե որքան են տարածականության և օբյեկտների անընդհատության հարցերը սերտորեն փոխկապված: Ո՞ր հանգամանքներում է օբյեկտը կարող ձևափոխվել (օրինակ՝ տեղափոխվել տարածության մեջ այլ օբյեկտների հարաբերակցությամբ)՝ առանց ձևի փոխակերպման: Այս հարցով զբաղվում է տոպոլոգիան՝ որպես մաթեմատիկայի ենթաբաժին, որը կոչված է ուսումնասիրելու տարբեր օբյեկտների փոխակերպման հնարավորությունները (և տարբեր տարածությունները, որոնք այդ փոխակերպումները հնարավոր են դարձնում): Հետևաբար կան ձևի անընդհատության և տարածության որոշման բազմաթիվ եղանակներ:

**Էվկլիդեսյան և ոչ էվկլիդեսյան տարածություն**
**կամ «ի՞նչ ասել է նավ»**

Ինչպես արդեն նշեցինք, եվրոպաամերիկյան առողջ բանականության համար տարածության առավել ակնհայտ ձևն է էվկլիդեսյան տարածությունը: Պատկերն այստեղ ընկալվում է իբրև երեք օրթոգոնալ առանցքներից կազմված կոորդինատային համակարգում տեղակայված ինչ-որ բան, իսկ օբյեկտը համարվում է անփոփոխ, եթե դրա կոորդինատները եռաչափ տարածության մեջ պահպանում են կայունությունը միմյանց նկատմամբ: Փոփոխությունը, օրինակ, օբյեկտի տեղաշարժը մի տեղից մյուսը կամ դրա տեղաշարժն այլ օբյեկտների համեմատությամբ չի նշանակում հոմեոմորֆիզմի կորուստ, միայն եթե կոորդինատների հարաբերությունը մնում է նույնը: Այսպես, նավը մնում է միևնույն նավը, եթե նավարկելով ծովում՝ պահպանում է իր ձևը՝ իբրև ֆիզիկական օբյեկտ: Բայց ակտոր-ցանցային տեսությունն աշխատում է տարածականության այլ, շատ ավելի պակաս ակնհայտ ձևի հետ: Կարող ենք հարցնել, թե ի՞նչն է կազմում օբյեկտի՝ իբրև ցանցային ամբողջականության անընդհատությունը: *Օբյեկտը շարունա-*

[217] Նրանք, ովքեր դրանում կասկածում են, կարող են փորձել պատկերացնել նման օրինակ՝ շրջանների փոխարեն դիտարկելով գնդեր: Կարո՞ղ է արդյոք փոքր գունդը լքել մեծ գնդի սահմանները՝ առանց պատռելու այն: Այո, բայց միայն չորրորդ չափման միջով:

*կում է մնալ միևնույն օբյեկտն այնքան ժամանակ, քանի դեռ պահպանում է իր տեղը այլ իրերի հետ հարաբերությունների կայուն ցանցում:* Հետևաբար, այս հարցի պատասխանն է՝ հարաբերությունների կարգի կայունությունը: Որպեսզի կարողանանք մատնացույց անել օբյեկտը և ասել «սա նավ է» (ընդ որում, նորմալ գործառող նավ), նավակմախքը, առագաստը, կայմը, ղեկը, թիմը, ջուրը, քամին և այլն պետք է պահպանեն իրենց գործառութային կապերը: Բոլոր մասերը պետք է լինեն «իրենց տեղերում» և անեն իրենց գործը: Ակտոր-ցանցային տեսության լեզվով կարելի էր ասել, որ այս տարրերը պետք է լինեն «ընդգրկված» (enroll) և մնան «ընդգրկված»: Այնպես որ նորմալ գործառող նավը վերցնում է քամու ուժը, հոսանքի թեթևությունը, թիմի էներգիան և այդ ամենն ընդգրկում իր մեջ:

Ուշադրություն դարձրեք՝ էվկլիդեսյան տարածության մեջ նավը *օրթոգոնալ կոորդինատների* կայուն ամբողջություն է, այն կոորդինատների, որոնք նկարագրում են նավի տարբեր մասերի դիրքը միմյանց հանդեպ. երբ նավը լողում է, այս մասերը մեկ միասնություն են կազմում: Ցանցերի տարածության մեջ նավը նս հանդես է գալիս իբրև կայուն և անընդհատ օբյեկտ, «*ցանցային ձև*», որի ամբողջականությունը կախված է իր հետ առնչվող բոլոր համապատասխան օբյեկտներից: Այսպես պահպանվում է նավի օբյեկտային էությունը: Սա նշանակում է, որ նավերը *տարածականորեն և տոպոլոգիապես բազմակի են*, այսինքն՝ գտնվում են միաժամանակ և՛ էվկլիդեսյան տարածության մեջ, և՛ ցանցային հարաբերությունների: Տարածություններից յուրաքանչյուրում նավերը հոմեոմորֆ են, քանի որ պահպանում են իրենց ձևը՝ մի դեպքում ֆիզիկական, մյուս դեպքում՝ գործառական կամ շարահյուսական: Սակայն տեղափոխվում են այս օբյեկտները միայն էվկլիդեսյան տարածության մեջ, իսկ ցանցերի տարածության մեջ դրանք չեն շարժվում: Նավերը՝ իբրև օբյեկտներ, կազմող տարրերի միջև հարաբերություններում որևէ փոփոխություն տեղի չի ունենում: Իսկ եթե այդպիսի փոփոխություններ տեղի են ունենում, ապա ինչ որ բան այն չէ. դա նշանակում է, որ վերջիններիս ցանցային ձևը «պատռված է»: Միևնույն ժամանակ, հենց ցանցային տարածության մեջ նավի ան-

շարժությունն է հնարավոր դարձնում վերջինիս տեղափոխումը էվկլիդեսյան տարածության մեջ՝ թույլ տալով հաղթահարել հեռավորությունը Կալքաթայի և Լիսբոնի միջև առանց կորուստների:

Այսպիսին է «անփոփոխ մոբիլության» լատուրյան հասկացության անատոմիան: Անփոփոխությունն այստեղ վերաբերում է ցանցային տարածությանը, այնինչ մոբիլությունը էվկլիդեսյան տարածության ատրիբուտ է: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ օբյեկտներն ունակ են տեղաշարժվելու միայն շնորհիվ տոպոլոգիական կոմպլեքսայնության՝ շնորհիվ այն բանի, որ դրանք գոյություն ունեն միաժամանակ տարբեր տարածական համակարգերում և արտադրված են իբրև այդ տարածականությունների հատումներ: Առաջ անցնելով և չափազանց շուտափույթ եզրահանգումներ անելու ռիսկի դիմելով՝ ճշգրտենք օբյեկտի՝ վերը բերված սահմանումը. *օբյեկտներն իրենցից ներկայացնում են ձևի անփոփոխության բնութագրերի հատումներ տարբեր տոպոլոգիաներում*[218]:

**Տարածականության ստեղծումը**

Եվրոպաամերիկյան առողջ բանականությանը հատուկ է «անվերջ էվկլիդեսյան տարածության» զգացումը. թվում է, որ տարածությունը նախորդում է օբյեկտներին՝ կանխորոշելով վերջիններիս հնարավորության պայմանները: Մենք զգում ենք, որ տարածությունը հայտնվել է մեզնից շատ ավելի վաղ և իրենից ներկայացնում է չեզոք «արկղ», որի ներսում մեր մարմինները (կամ պորտուգալական նավերը) ստիպված են գտնվել: Մասամբ դա այդպես է: Անկասկած գոյություն ունեն առանձին տարածական կազմաձևեր, որոնք նախորդում են որոշ օբյեկտների էվկլիդեսյան տարածության մեջ: Բայց, ինչպես արդեն նշեցինք, տոպոլոգիայում տարածականության և հոմեոմորֆիզմի հարցերն անքակտելիորեն փոխկապված են: Իրոք, տոպոլոգիապես

[218] Այս եզրակացությունը մեզ կարող է տանել զուտ սպեկուլյատիվ դատողությունների դաշտ: Հաջորդիվ ես կփորձեմ խուսափել նման սպեկուլյատիվությունից՝ մատնանշելով օբյեկտների և տարածությունների փոխադարձ արտադրությանը և այն հանգամանքին, որ օբյեկտներն ուղղակի չեն կարող գրագիտորեն նկարագրվել՝ առանց վերջիններիս միջտոպոլոգիական ծագմանը բավարար ուշադրություն դարձնելու:

օբյեկտները և տարածությունները *ստեղծված են միասին:* Հայտնագործելով օբյեկտները և որոշելով, թե ինչն է ամեն առանձին դեպքում համարվելու ձևի անփոփոխություն, տոպոլոգիան դրա հետ մեկտեղ հայտնագործում և որոշում է դրանց հնարավորության տարածական պայմանները: Մենք կարող ենք զարգացնել այս փաստարկը տոպոլոգիայից դուրս: Մեր առօրյա կյանքից վերցված օբյեկտը, որը ձևավորված, ձևախեղված կամ ձևի անընդհատության պահպանմամբ տեղափոխված է էվկլիդեսյան տարածության մեջ, *միևնույն ժամանակ ստեղծում է այդ տարածությունը*: Կամ, եթե ձևակերպենք այս թեզը ավելի ընդհանուր և հակիրճ, ապա *տարածությունները ստեղծված են օբյեկտների օգնությամբ:*

Առողջ բանականության տեսանկյունից այս պնդումն անթույլատրելի է այն պատճառով, որ մենք չենք տեսնում տարածության արտադրությանը բերող *աշխատանքը*: Տարածականությունը նյութականացվում է մի շարք նստվածքային պնդումներում: Եթե էվկլիդեսյան տարածությունն անցյալում ընդունվում էր՝ իբրև անվերջ և անփոփոխ, ապա տարածության՝ որպես նախագոյություն ունեցող արկղի մասին պնդումը բավականին ընդունելի է թվում: Դժվար է հավատալ տարածության ստեղծելիությանը: Սակայն այստեղ (ավելի շուտ պատահաբար, քան միտումնավոր) ակտոր-ցանցային տեսությունը կարող է օգտակար լինել: Պատկերացնել միմյանց հետ հարաբերակցելի օբյեկտների ցանցերի ստեղծումը շատ ավելի հեշտ է, քան էվկլիդեսյան տարածության ստեղծումը պատկերացնելը (գոնե այն պատճառով, որ օբյեկտների արտադրության մեջ ներգրավված է քիչ թե շատ տեսանելի ինժեներիա): Իսկապես, սա ակտոր-ցանցային տեսության հին տարածքն է, որն ի սկզբանե նախատեսված էր տարասեռ ցանցերի ինժեներիայի, անփոփոխ մոբիլությունների շրջանառության հետազոտման համար, ինչպես նաև հարաբերությունների այն կառուցվածքների, որոնք կարող են երաշխավորել, որ Նյուտոնի օրենքները (ինչպես նշում է Բրունո Լատուրը) նույնը կլինեն Լոնդոնում և Հաբոնում[219]:

[219] Latour, B. (1988) The Pasteurization of France. Cambridge, MA: Harvard University Press, p. 227.

ANT-ի փաստարկը հետևյալն է․ երբ ստեղծվում է (ցանցային) օբյեկտ, ստեղծվում է նաև ամբողջ (ցանցային) աշխարհը՝ իր տարածականությամբ, հոմեոմորֆիզմի սեփական սահմանմամբ և ձևի անընդհատությամբ[220]:

**Ցանցերը ստեղծում են տարածաշրջաններ, տարածաշրջանները ստեղծում են ցանցեր**

Սակայն դա դեռևս առաջին քայլն է: Ամեն ինչ շատ ավելի բարդ է, քանի որ ցանցային տարածությունների կազմավորումը ենթադրում է նաև էվկլիդեսյան տարածականության արտադրություն[221]: Մասամբ սա բավականին ակնհայտ փաստարկ է: Օբյեկտները (օրինակ՝ նավերը), տարածաշրջանները (օրինակ՝ երկրները), հեռավորությունների չափումները (օրինակ՝ Լիսբոնից Կալքաթա) *արտադրված են ցանցային միջոցներով*: Օրինակ, սահմանները և տարածությունները արտադրված են հետազոտողների կողմից, որոնք գիտեն, թե ինչպե՞ս է պետք օգտագործել թեոդոլիտները՝ եռանկյունաչափական կետերի միջև անկյունները չափելու համար, անել այդ չափումների հստակ գրառումները, բերել այդ գրառումները քարտեզագրական կենտրոն, որտեղ արդեն եղած չափումների հիման վրա երկչափ մակերևույթին կնկարվի քարտեզը[222]:

Անն-Մարի Մոլը նկատել է, որ ակտոր-ցանցային մոտեցումն իրենից ներկայացնում է տարածաշրջանների հետ պայքարելու միջոց: Եթե լինենք ավելի հստակ, սա տարածաշրջանի «բնականության» լղոզման, ինքնակնհայտության քայքայման եղանակ է: Մեր խնդիրն է

[220] Ահա թե ինչու են ANT-ի որոշ տեսաբաններ երբեմն ասում, որ ցանցից դուրս ոչինչ գոյություն չունի: Այս թեզը բերում է «ցանցային գաղութատիրությանը» կամ ցանցային տարածության՝ իբրև առաջնայինի գաղափարին, որն ինքնին սխալ է:

[221] Այս փաստարկը զարգացնում են ոչ միայն ակտոր-ցանցային մոտեցման կողմնակիցները: Օրինակ, տե՛ս Դ. Հարվիի և Ն. Թրիֆթի աշխատանքները՝ Harvey, D. (1989) The Condition of Postmodernity: an Enquiry into the Origins of Cultural Change. Oxford: Blackwell; Thrift, N. (1996) Spatial Formations. London: Sage:

[222] Այս ամենը մանրամասնորեն հետազոտված է այս աշխատանքում՝ Latour, B. (1990) Drawing Things Together// Lynch, M., Woolgar, S. (eds) Representation in Scientific Practice, Cambridge, MA: MIT Press, pp. 19–68:

ցույց տալ, որ տարածական հնարավորության կամ անհնարինության էվկլիդեսյան պայմանները տրված չեն ինքնին իրերի կարգով: Հակառակը, ոչ միայն ցանցային օբյեկտներն ու տարածություններն են արտադրված, այլև էվկլիդեսյան տարածությունն է արտադրության արդյունք: Ավելի ճիշտ, կայուն օբյեկտների արտադրության շարքի և հոմեոմորֆիզմի՝ իբրև հարաբերական օրթոգոնալ կոորդինատների անփոփոխության զուգահեռ սահմանման արդյունք, ինչպես նաև արտադրությունների շարքի արդյունք, որոնք գոնե մասամբ տեղի են ունենում ցանցային տարածության մեջ:

Բայց եթե ցանցերը նպաստում են տարածաշրջանների կազմավորմանը, ապա գոյություն ունե՞ն արդյոք ցանցերն «իրենք իրենցով»՝ առանց էվկլիդեսյան տարածությունից փոխադարձ կախվածության: Արդյո՞ք, ինչպես հակված են մտածել ANT-ի տեսաբանները, դրանք տարածականորեն ինքնավար են: Կան այս հարցին բացասաբար պատասխանելու մի քանի հիմքեր: Օրինակ՝ վերը բերված պնդումը ցանցային օբյեկտի, ինչպես նաև տարբերվող ու միմյանց լրացնող տոպոլոգիական համակարգերում արտադրությունների շարքերի միջև առկա կապի մասին: (Մենք դեռ կվերադառնանք այդ թեզին): Սակայն մեզ ավելի ակնհայտ է թվում մեկ այլ փաստարկ՝ ցանցային օբյեկտների ստեղծումն ուղղակիորեն կախված է էվկլիդեսյան տարածության մեջ վերջիններիս հոմեոմորֆիզմի պահպանումից:

Վերադառնանք պորտուգալական նավերին: Ինչպես տեսանք, վերջիններս իրենցից ներկայացնում են ցանցային օբյեկտներ, որոնց անփոփոխությունը պայմանավորված է որոշակի շարահյուսությամբ կամ հարաբերությունների կարգով: Այսպես թե այնպես, *նավը կարող է լինել ամբողջական ցանցային օբյեկտ միայն այն դեպքում, եթե չվնասված էվկլիդեսյան օբյեկտ է:* Եվ այստեղ է, որ առաջանում է դժվարությունը: Ցանցերի տարածության մեջ հոմեոմորֆ օբյեկտ ստեղծելու համար ստիպված ենք գործ ունենալ էվկլիդեսյան տարածության հետ, այն է՝ ստեղծել օբյեկտ (տվյալ դեպքում նավի ձև ունեցող օբյեկտ), որի հարաբերական էվկլիդեսյան կոորդինատները հաստատուն են:

Որո՞նք են այս պնդման հետևանքները: Դրանք երկուսն են․

1. Առաջինը, ակտոր-ցանցային տեսության հին հիերարխիկ մոտեցումը՝ իբր ցանցերի տարածությունը և ցանցային օբյեկտները էվկլիդեսյան տարածականության և էվկլիդեսյան օբյեկտների հիմքն են, սխալական է: Հակառակը, հարաբերություններն այս արկու տիպի տարածականությունների և օբյեկտայնությունների միջև երկկողմանի են:
2. Երկրորդը, օբյեկտի արտադրումը մի տարածության մեջ ենթադրում է փոփոխություն մեկ այլ տարածության մեջ: Այլ խոսքերով, ինչպես արդեն նշեցինք, *օբյեկտների արտադրումը միշտ բազմատոպոլոգիական բնույթի է*. իրենց անընդհատության համար օբյեկտները պարտական են տարբեր տարածություններին համտմանը:

### *Սռնակալային պոմպը իբրև «փոփոխական տեխնիկա»*

Մինչ այժմ մենք խոսում էինք միայն էվկլիդեսյան և ցանցային տարածությունների մասին, բայց կան նաև այլ հնարավորություններ: Դրանցից մեկի հետազոտման համար ես կանդրադառնամ մեկ այլ էմպիրիկ օրինակին՝ զիմբաբվեական սռնակալային պոմպի, որը նկարագրված է Մարիաննե դե Լեթի և Անն-Մարի Մոլի աշխատանքում՝ իբրև ոչ ստաբիլ տեխնիկայի օրինակ[223]: Այս սարքն անկայուն է դարձնում իր սահմանների անորոշությունը և անհստակությունը:

Ի՞նչ է իրենցից ներկայացնում զիմբաբվեական սռնակալային պոմպը: Արդյո՞ք սա գետնի տակից ջուրը դուրս քաշելու սարք է, որը կոչվել է իր մեխանիզմի ամենակարևոր մասի անունով: Թե՞ սա հիդրավլիկայի տեսակ է, որը համապատասխան քանակների և համապատասխան աղբյուրներից ջուր է «արտադրում»: Իսկ գուցե սանիտարական սա՞րք է, որը, շնորհիվ բետոնային սալիկի, կողապատվածքի, մանրախճի և խողովակների, թույլ չի տալիս երբես բարձրանալ վարակված և կեղտոտ ջրին: Այդ դեպքում պոմպի «կազմում» պետք է նե-

[223] De Laet, M., Mol, A. (2000) The Zimbabwe Bush Pump: Mechanics of a Fluid Technology// Social Studies of Science 30, pp. 225–263.

բառել ինքը հորատանցքը, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ չափումները, ցուցումները և փորձումները: Առանց դրանց՝ պոմպը պիտանի չէ: Իսկ ինչպե՞ս վարվենք տեղական համայնքի հետ: Պոմպը չի կարող գոյություն ունենալ գյուղական տարածքներից դուրս, քանի որ այդ դեպքում ո՞վ պետք է պահպանի այն աշխատանքային վիճակում. գուցե արժի և տեղի բնակչությունը գումարել պոմպի սահմանմանը: Այս դեպքում, հավանաբար, պոմպի սահմանման սահմանները կհամընկնեն Զիմբաբվեի սահմանների հետ. նույնիսկ ամենահամեստ չափումներով զիմբաբվեական սռնակալային պոմպը Զիմբաբվեի ստեղծման մեջ ոչ պակաս ներդրում ունի, քան Զիմբաբվեն՝ սռնակալային պոմպի ստեղծման[224]:

Արդյո՞ք պոմպը կազմող մասերը չեն որոշում իր օբյեկտայնությունը և պահպանում վերջինիս «ինքնությունը»: Սակայն հեղույսները, որոնցով պոմպն ամրացվում է իր հիմքին կամ բռնակը՝ պոմպին, հաճախ պետք չեն լինում: Կան պոմպեր, որոնք հիանալի գործածում են առանց դրանց: Սարքի ներսի կաշվե մեկուսացումը հաջողությամբ փոխարինվում է հին ծածկադողով: Գուցե *գոյություն ունի* պոմպի «հաստատուն միջուկ»՝ բաղկացած սարքի որոշակի էական մասերից, բայց այդ միջուկն անընդհատ լղոզվում է: «Էութենական» մեխանիզմները դառնում են ոչ էութենական և հեշտ փոխարինելի:

Իսկ եթե մենք դիտարկենք պոմպը որպես բնակիչներին մաքուր ջրով ապահովող սա՞րք: Սա նույնպես բավականին անհստակ չափանիշ է: Երբեմն պոմպը դուրս է քաշում այնպիսի ջուր, որում աղիքային ցուպիկների ինդեքսը 100 մլ ջրում 2,5 միկրոօրգանիզմներից քիչ է, բայց ոչ միշտ: Երբեմն այդ ցուցանիշն աճում է 10 անգամ՝ ընդ որում առանց բնակչության շրջանում հիվանդությունների մակարդակի նկատելի աճի: Ամեն ինչ կախված է նրանից, թե ով է օգտագործում պոմպը: Ջուրը կարող է լինել «կեղտոտ», բայց այնուամենայնիվ շատ ավելի մաքուր, քան բնակիչներին մոտակա առվից հասանելի ջուրը: Այս դեպքում մենք նույնպես կարող ենք խոսել «նորմալ գործառող պոմպի» մասին: Եվ կրկին, եթե մենք ի վիճակի չենք ամրագրելու ջրի

[224] Ibid.

բակտերիոլոգիական աղտոտվածությունը, մեր միակ չափանիշն է դառնում բնակիչների շրջանում հիվանդությունների բացակայությունը:

Սոնակալային պոմպի փոփոխական բնույթի դիտարկումը կարելի է շարունակել: Արդյո՞ք մենք կստանանք փնտրվող «կայունացնող» սահմանումը, եթե ասենք, որ պոմպը սարք է, որը ներգրավված է (իբրև զիմբաբվեական պետական քաղաքականության մաս) տեղական համայնքների կառուցման գործում: Պատասխանն է՝ ոչ: Գյուղական համայնքները հաճախ են խրախուսվում իրենց տարածքում նման պոմպեր տեղադրել, բայց ամենևին ոչ երբեք: Պոմպերը կառուցվում են տարերայնորեն ընտանիքների սակավաթիվ խմբերի կողմից և հետևաբար չեն կարող դիտարկվել իբրև զիմբաբվեական պետության սոցիալական ինժեներիայի գործիք: Ավելին, պոմպի փոփոխականությունը, վերջինիս «ոչ ամրագրվածությունը» դառնում է վերջինիս արդյունավետության կարևոր պայման: Ոչ մի ամրագրված կառուցվածք, ոչ մի հստակ սահմանում: Լինելով տեղադրված և օգտագործվող՝ պոմպն անընդհատ փոխակերպվում է, փոխում իր ձևը, աշխատում տարբեր եղանակներով: Սրանում որոշակի նմանություն կա սարքի և դրա հայտնագործողի միջև, որը հրաժարվում է ընդունել սեփական հայտնագործության հեղինակությունը:

«Մորգանը՝ այն մարդը, որը սկիզբ դրեց այս *բաշխված գործողությանը* … վստահ է վերահսկողությունից հրաժարվելու անհրաժեշտության հարցում: Նա համարում է, որ իրականացման հաջողությունը կախված է նրանցից, ովքեր անմիջականորեն օգտագործելու են սարքը: Հետևաբար պետք է տեղ բացել նրանց սեփական մեթոդների և ինտուիցիայի համար: Հակառակ դեպքում ցանկացած նորարարություն դատապարտված է: Մորգանն ասում է, որ ջրամատակարարման ոլորտին հատկապես բնութագրական է, որ ամեն նորը և անհայտը պարզապես չի աշխատում, իսկ վառ և պսպղուն սարքավորումները վերածվում են ժանգոտված և անօգուտ տեխնիկայի կույտի»[225]:

[225] Ibid, p. 251.

**Փոփոխական անընդհատություն**

Այսպիսով, և՛ էվկլիդեսյան, և՛ ցանցային տարածություններում սռնակալային պոմպը անկայուն օբյեկտ է: Հավանաբար վերջինիս հոմեոմորֆիզմն անհետանում է անընդհատ փոխակերպումներում: Սակայն այս եզրահանգումը մեզ խնդրի առաջ է կանգնեցնում. արդյոք խոսքը «ջարդված» օբյեկտի մասի՞ն է, թե՞ պոմպը պահպանում է իր հոմեոմորֆությունը որոշակի այլ տարածության մեջ: Դե Լեթը և Մոլը կողմ են երկրորդ լուծմանը: Պոմպը՝ իբրև փոփոխվող սարք, հատուկ տիպի տարածականության՝ հոսուն տարածականության մաս է (և մասնակցում է դրա արտադրմանը):

Որո՞նք են ձևի փոխակերպման կանոններն այս տարածության մեջ: Ինչպե՞ս է օբյեկտը պահպանում ձևի անընդհատությունն այս տարածության մեջ: Պոմպի օրինակից մենք կարող ենք դուրս բերել չորս եզրահանգում.

1. Առաջինը, *հարաբերությունների ոչ մի կոնկրետ կառուցվածք արտոնյալ չէ*: Սա նշանակում է, որ նոր հարաբերությունների ձևավորման՝ արդեն գոյություն ունեցող տարրերի վերադասավորման կամ նոր տարրերի ավելացման գործընթացում հոսուն օբյեկտները պահպանում են իրենց ինքնությունը: Սակայն այստեղից հետևում է բավականին ուժեղ հետևություն՝ հոսքերի տարածության մեջ փոփոխությունն անհրաժեշտ է հոմեոմորֆիզմի պահպանման համար: Օբյեկտները, որոնք ամրագրված են կայուն ցանցային տարածության մեջ, հոսուն տարածության մեջ ջարդված են երևում: Դրանք այլ են վերջինիս հանդեպ:
2. Սրա հետ մեկտեղ՝ չարժե մոռանալ անընդհատության մասին: Ուստի մեր երկրորդ եզրահանգումն է՝ *հոսքերի տարածության մեջ օբյեկտը ձևավորող հարաբերությունները փոխվում են, բայց ոչ թե միաժամանակ, այլ աստիճանաբար:* Փոփոխականության տարածության մեջ «տոպոլոգիական պատռվածքը» և ամբողջականության կորուստը տեղի են ունենում ոչ միայն օբյեկտի «սառչելու»՝ բոլոր փոփոխությունների դադարի պարագայում, այլև վերջինիս չափազանց մասշտաբային փոխա-

կերպումների, որոնք նույնպես քայքայում են հոմեոմորֆիզմը: Եթե ամեն ինչ միաժամանակ ապամոնտաժվում է, հետևանքը կլինի ձևի անընդհատության և օբյեկտի ինքնության կորուստը: Հնարավոր է, որ արդյունքում կհայտնվի որոշակի այլ, այլընտրանքային օբյեկտ, բայց այն այլևս չի լինի առնակալային պոմպ:

3. Երրորդը, բերված օրինակից հետևում է, որ փոփոխական օբյեկտի սահմանն ամրագրված չէ: Օբյեկտի մասերը կարող են հեռացվել կամ փոխարինվել ուրիշներով: Անհնար է ավազի վրա գիծ նկարել (տարածաշրջանային մետաֆոր) և ասել, որ հոմեոմորֆիզմը կախված է այդ սահմանից: Իսկապես, հաստատել խիստ ամրագրված սահման նշանակում է կործանել փոփոխական օբյեկտը, քանի որ հոմեոմորֆիզմը հոսքերի տարածության մեջ կախված է սահմանների շարժունությունից: «Ներքինի» և «արտաքինի» կոպիտ հաստատումը խորթ է հոսուն օբյեկտայնությանը:
4. Սակայն, նրանց ողջ շարժունության հետ մեկտեղ, սահմաններն անհրաժեշտ են հոսքերի տարածության մեջ օբյեկտի գոյության համար: Ինչ-որ պահի տարբերություններն ավելի ուժեղ են գտնվում, և հոմեոմորֆիզմը կորցվում է. օբյեկտը փոխվում է շատ կտրուկ և առնակալային պոմպից վերածվում, օրինակ, մխոցային պոմպի: Կամ էլ լուծարվում է ինչ-որ մեծ օբյեկտում՝ դադարեցնելով իր ինքնուրույն գոյությունը: Այսպիսով, հոսքերի տարածության մեջ չի գործում «ամեն ինչ թույլատրելի է» (anything goes) սկզբունքը: Հոսուն օբյեկտները ստեղծվում են պրակտիկաներով, որոնք խիստ զգայուն են «խզման», անընդհատության կորստի նկատմամբ: Պարզապես խզման ընկալումն այստեղ այլ է, քան ցանցային կամ էվկլիդեսյան տարածության մեջ:

Դե Լեթը և Մոլը հոսուն օբյեկտի այս տեսլականը տեղափոխում են առնակալային պոմպից վերջինիս հեղինակի վրա՝ Մորգանի, որը հրաժարվում է ընդունել իր հայտնագործությունը և ձևակերպել իր հեղինակային իրավունքները: Մորգանը պնդում է, որ պոմպը հայտնա-

բերվել է բազմիցս տարբեր վայրերում, որտեղ այն օգտագործվել է:

Մորզանը ստեղծում է չստեղծող սուբյեկտ, տարրալուծված «Ես»: Ոչ այն իմաստով, որ նա ինքն է տարրալուծվում և անհետանում տարածության մեջ: Ցրված և տարրալուծված է դառնում իր հայտնագործությունը: Գուցե իր վարքը մեզ այդքան գրավիչ է թվում, որովհետև այն չափազանց հեռու է արդի սուբյեկտի վարքից, որը կողմնորոշված է դեպի առավելագույն վերահսկողություն, այն սուբյեկտի, որը հեշտությամբ ընդունում է զինվորի, գեներալի, նվաճողի դեր կամ անսասան և ուժեղ հեղինակության ցանկացած այլ կերպարանք: Հրաժարվել վերահսկողությունից, ծառայել մարդկանց, հաշվի նստել ջուր փնտրող շամանների հետ, տեսնել, թե ինչպես է քո հայտնագործությունը փոխվում՝ հարմարվելով տեղի կարիքներին, ինքնիրավ տիրոջ վարք չէ: Սա իդեալական տղամարդու մասին ֆեմինիստական երազանքն է[226]:

Այստեղից հետևում է մեկ հերաքրքիր եզրահանգում: Տարբերությունը արդի սուբյեկտի (մեկը կավելացնի՝ արդի օբյեկտի) և ոչ արդի սուբյեկտի/օբյեկտի միջև ցույց է տալիս, որ շատ այսպես կոչված «հոսքեր» ամենևին էլ չեն պատկանում հոսուն տարածականությանը: Օրինակ, նավի նման անփոփոխ մոբիլությունները անփոփոխ են՝ շնորհիվ այն բանի, որ պահպանում են իրենց ձևը միաժամանակ և՛ ցանցային, և՛ էվկլիդեսյան տարածություններում: Դրանք տեղաշարժվում են («լողում են») էվկլիդեսյան տարածության մեջ, սակայն հոսքերի տարածության հետ որևէ առնչություն չունեն: Ուստի «գլոբալ հոսքերի»՝ տեղեկատվության, կապիտալի, մարդկանց մասին ասվող շատ բաներ ևս պատկանում են ցանցային տարածությանը և նույնքան քիչ են վերաբերում փոփոխական հոսքային իրականությանը:

Իսկապես, ինչպես մենք արդեն տեսանք, հոսող օբյեկտները կորցնում են իրենց հոմեոմորֆիզմը. լինելով ամրացված և ամրագրված՝ այդ օբյեկտները դուրս են գալիս հնարավորի սահմաններից ցանցային տարածության մեջ: Նույնը վերաբերում է կենտրոններին: Հակիրճ էմպիրիկ էքսկուրս. 19-րդ դարի վերջում Ֆրանսիայում ձևավորվեց մի պրակտիկա՝ եթե ցանկանում էիք փրկել ձեր կովը սիբիրախտից, դուք

[226] Ibid, p. 251-252.

ստիպված էիք դիմել Լուի Պաստերի լաբորատորիա[227]: Արդյունքում, լաբորատորիան կարողացավ կուտակել ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ էին՝ իր անվիճելի առավելությունը ամրապնդելու համար: Այսպիսով, Պաստերի ինստիտուտը՝ որպես *օբյեկտ ցանցային տարածության մեջ*, դարձավ կուտակման կենտրոն, վերջինիս հարաբերությունները այլ «վայրերի» հետ ամրացվեցին և ամրապնդվեցին:

Բայց դա հենց այն է, ինչից ձգտում էր խուսափել Մորգանը: Ընդ որում, նրա հորինած սռնակալային պոմպը մեծ հաջողություն է վայելում: Պարզապես այդ հաջողությունը չի բերում շահույթ և պարգևներ մեկ կոնկրետ մարդու: Չկա ռազմավարական վայր, որտեղ ռեսուրսները կուտակվում են, չկա կենտրոն և ծայրամաս: Մորգանը իսկապես «տիեզերական հոսքերի սուբյեկտ է». ինչպես և փոփոխական օբյեկտները, նա դուրս է ցանցային սահմանափակումներից: Այդ պատճառով նա քիչ թե շատ անհասկանալի է: Այլ:

**Հատումներ**

Օրինակների վերլուծությունը մեզ ստիպում է առանձին տարածականությունների նկարագրությունից անցում կատարել դեպի վերջիններիս հատումների խնդիրը: Մենք արդեն ենթադրեցինք, որ օբյեկտները գոյություն ունեն և պահպանում են ձևի անընդհատությունը մի քանի տարածական համակարգերում և, ինչպես հետևում է դիտարկված օրինակներից, հոսունությունությունը հաճախ խորթ է ցանցերի տարածությանը: Բայց ինչպե՞ս է պետք այդ դեպքում մտածել տարածականությունների հատման մասին:

Այդ հարցը լրջորեն պարզաբանելու համար մեկ հոդվածը բավարար չէ: Ուստի այստեղ ես կսահմանափակվեմ չորս հակիրճ դիտարկումներով, որոնք վերաբերում են ցանցերի և հոսքերի տարածությունների հատմանը:

1. Քանի դեռ ցանցային օբյեկտները կարող են վերածվել հոսուն օբյեկտների, պետք է խուսափել փոփոխականության ավելորդ

[227] Latour, B. (1988) The Pasteurization of France. Cambridge, MA: Harvard University Press.

ռոմանտիզացումից: Ցանցային օբյեկտներից հեշտ չէ (եթե ընդհանրապես հնարավոր է) ձեռբազատվել: Նորմալ գործառող օբյեկտը երբեմն պետք է ընդունի ցանցային օբյեկտի ձև. այստեղ, իհարկե, հիշում ենք պորտուգալական նավերը, բայց անգամ սռնակալային պոմպն է օժտված կայուն ցանցային հարաբերությունների միջուկով՝ ուղղահայաց խողովակների, բռնակների, փականների և այլնի հարաբերություններ: Պոմպը գոյություն ունի նաև էվկլիդեսյան տարածության մեջ և ստեղծում է այդ տարածությունը: Ինչպես և այլ օբյեկտները, այն առաջանում է հոմեոմորֆ հարաբերությունների հատման կետում: Կարճ ասած, անգամ հոսքերի փոփոխական աշխարհում ցանցը բացառիկ կարևոր դերակատարություն ունի:

2. Եվ հակառակը, ցանցային օբյեկտները և իրողությունները *կախված են հոսքերի տարածության փոփոխականությունից*: Օրինակ, պորտուգալական նավերի վերը բերված ցանցային նկարագրությունը հավանաբար ամբողջական չէ. այն փակագծերից դուրս է թողնում նավային տեխնիկայի ողջ «յուրահատուկ փոփոխականությունը», որն անհրաժեշտ է դեպի Ինդիա և հետ տասնութամսյա ճանապարհորդության ընթացքում նավը ջրի երեսին պահելու համար: Այլ խոսքերով, ցանցային հոմեոմորֆիզմը, որը բացահայտվում է հետազոտողի կողմից կուտակման (accumulation) յուրաքանչյուր կենտրոնում, թաքցնում է պատահական, հոսուն, իրավիճակային փոփոխականությունների անվերջ բազմազանություն:
3. Այստեղից հետևում է, որ «հոսքերի այսպիսի աշխատանքը» հաճախ *անտեսանելի* է մնում. այն պարզապես հոմեոմորֆ չէ ցանցերի տարածության մեջ և ուստի աննկարագրելի է: Ցանցերն արտադրված են անփոփոխ մոբիլություններով (որոնք, իրենց հերթին, արտադրված են ցանցերով)՝ ապրանքներով, կարգապահ կատարողներով և, հատկապես, տվյալներով, որոնք ամուր կապված են միմյանց հետ ցանցի հանգուցային կենտրոնում՝ կուտակման կենտրոնում: Ցանցային տարածա-

կանությունը կախված է ցանցային օբյեկտներից, որոնք պահպանում են իրենց ամբողջականությունը անընդհատ իրականացվող գործառույթների կարգի շնորհիվ (որը նույնական է շարահյուսությանը)։ Հետևաբար այն, ինչն արտադրված չէ այսպիսի ինվարիանտ գործառութային շարահյուսության շրջանակներում, *ընդհանրապես չի կարող ներկայացված լինել ցանցի որևէ հանգուցային կենտրոնում*։ Փոխաբերականորեն ասած, փոփոխականությունը «ընթանում է» ցանցի միջով։

4. Իսկ այն դեպքերում, երբ հոսքերի միևնույն տարածությանը պատկանող օբյեկտները/սուբյեկտները տարբերակելի են դառնում ցանցային տարածության մեջ, դրանք վտանգավոր կերպով անորոշ, անհստակ և լղոզված են երևում։ Ի տարբերություն Պաստերի՝ Մորգանը չի թողնում այնպիսի մարդու տպավորություն, որի գործողությունները կազմակերպված են և փոխկապակցված։ Առողջապահության ոլորտի մասնագետները, հաշվապահները, ճարտարապետները, մարդիկ փողոցից, նրանք բոլորը դիտվում են այնպես, կարծես չեն կարողանում հետևել համապատասխան արձանագրություններին (protocols). բուժքույրերն ինքնուրույն են իրականացնում վիրահատությունները, մայրերն իրենց երեխաներին չեն քնացնում, լաբորանտներն անտեսում են հրահանգները, երկաթուղային կայարանների սլաքավարները իրենց պարտականությունները կատարում են թերի։ Մեր վարկածը հետևյալն է՝ ցանցերն աջակցում են դրանցում ներառված օբյեկտների հոմեոմորֆիզմին, և այն ամենը, ինչը խոչընդոտում է դրա պահպանմանը, այդ թվում՝ վերը նկարագրված փոփոխականությունը, դառնում է միաժամանակ և՛ տեսանելի, և՛ օտար, ճանաչվում է որպես ցանցային հոմեոմորֆիզմի կորստի հավանականություն և, հետևաբար, որպես սպառնալիք։

**Եզրակացություն**

Տոպոլոգիան տարածություններ է ստեղծում կանոններ հաստատելու միջոցով, որոնք և տալիս են այն հարցի պատասխանը, թե «հատկապես ի՞նչը կարող է համարվել հոմեոմորֆ օբյեկտ»: Հնարավոր կանոնների թիվը (հետևաբար նաև հնարավոր տարածությունների) անսահմանափակ է: Ակտոր-ցանցային տեսությունը պնդում է օբյեկտների տարածական հասկացումը, ինչպես նաև այդ օբյեկտներով բնակեցված ու ստեղծված տարածությունների օբյեկտային հասկացումը: Ակտոր-ցանցային տեսության որոշ տարբերակներ նպատակ ունեն հաստատելու տարածական (և քաղաքական) հնարավորության սահմանային պայմանները[228]: Փոփոխականությունների ուսումնասիրությունը, ընդհակառակը, ցույց է տալիս, որ հոսքերի տարածության մեջ հոմեոմորֆ օբյեկտները դիմադրում են ցանցային տարածականության պայմաններին և միաժամանակ պաշտպանում են այն: Եղանակները, որոնցով օբյեկտները դա անում են, հեռու են կատարելությունից և թվում են անկանոն, չկազմակերպված, բայց դրանք այդպիսին են երևում միայն ցանցային տարածության հեռանկարում: Հաճախ փոփոխական ձևերը ներկայացվում են իբրև «ցանցի սխալներ». այս տրամաբանությամբ՝ եթե հնարավոր լիներ վերադարձնել օբյեկտների ցանցային կազմակերպումը, իրերն ավելի լավը կլինեին: Սա տարածված մոլորություն է:

Այս հոդվածի նպատակն է ստեղծված և ածանցյալ ցանցային տարածության և ցանցային օբյեկտների ապանատուրալիզացիան և կենտրոնացումը տոպոլոգիապես բազմակի օբյեկտների վրա, որոնք գոյություն ունեն որպես տարբեր տարածությունների՝ տարածաշրջանների, ցանցերի, հոսքերի հատումներ կամ ինտերֆերենցիայի կետեր: Մասնավորապես, ես ենթադրում եմ, որ օբյեկտները կարող են հասկացվել իբրև ձևի անընդհատության տարբեր սահմանումների՝

---

228 Սրա մասին ավելի մանրամասն տե՛ս Haraway, D. (1994) A Game of Cats Cradle: Science Studies, Feminist Theory, Cultural Studies// Configurations 1, pp. 59–71; Strathern, M. (1996) Cutting the Network// Journal of the Royal Anthropological Institute 2, pp. 517–535, ինչպես նաև որոշ աշխատանքներ այս ժողովածուում՝ Law, J., Hassard, J. (1999) Actor Network Theory and After. Oxford: Blackwell:

էվկլիդեսյան, ցանցային և հոսուն հատումներ:

Վերջապես, ես փորձեցի առաջարկել այլության (alterity) տարածական ընկալում: Անկախ նրանից, թե ինչ է սովորաբար ասվում կամ արվում, կան օբյեկտներ և տարածություններ, որոնք ցանցերից անդին են: Ես կցանկանայի ավարտել իմ տեքստը մի պնդմամբ՝ տարածական համակարգերը *քաղաքականապես չեզոք չեն:* Դրանք քաղաքական են, որովհետև ստեղծում են որոշակի տիպի սուբյեկտներ և օբյեկտներ, որոնք օժտված են որոշակի տիպի հոմեոմորֆությամբ: Որովհետև հաստատում են օբյեկտների գոյության պայմանների սահմանները: Որովհետև ձևակերպում են «այլության» այս կամ այն ձևերի արգելքներ: Եվ որովհետև (ինչպես ցանցային տարածության պարագայում) ձգտում են այդ «այլությունները» վերացնել: Այսպիսով, ցանցերը արտահայտում և արտադրում են «քաղաքականը», որը քողարկված է՝ իբրև «գործառութային»:

Միևնույն ժամանակ, ցանցային տարածականությունը չի կարող մերժվել, ավելի շուտ այն կարող է չափավորվել: Սրա հետևանքը կդառնա հոսուն տարածականության հասկացումը, այն է՝ տարածության՝ իբրև հոսքերի, որոնք մարմնավորում և արտադրում են օբյեկտների ամբողջականության այլընտրանքային քաղաքականությունը. քաղաքականություն, որը կապված չէ գործառութայնության, կենտրոնացման, շարահյուսական կայունության կամ կապիտալացման հետ: Ինչպես տեսանք, այդ քաղաքականությունը խորթ է ցանցային տարածականությանը, այն Այլ է վերջինիս հանդեպ: Հենց այս պատճառով է, որ քաղաքական ընտրության կայացման կարգում անհրաժեշտ է հետազոտել օբյեկտներն իրենց տարածական բազմակիության և այլության մեջ, ստեղծել ու շրջանառել այլընտրանքային տարածականությունները և, մասնավորապես, վերակենդանացնել հոսքերի տարածության փոփոխականությունը:

ՌՈՄ ՀԱՐԵ

# ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ[229]

**Էություններ. նյութի մասնիկները և նյութական առարկաները**

Փիլիսոփաները «էություն» բառն օգտագործում են երկու տեսակի օբյեկտների համար: Անհատական էությունները կամ ուղղակի պարզ էությունները նրանք են, որոնք ճանաչելի կամ վերաճանաչելի են միևնույն դասի այլ օբյեկտների տիրույթում: Անհատները առնվազն ինչ-որ տեսակի մշտական հատկանիշների կիսամշտական կրողներ են: Սակայն փիլիսոփաները և համանման ձևով ոչ մասնագետները այդ բառն օգտագործում են նաև նյութերի համար՝ պինդ մարմինների, հեղուկների և գազերի: Ի՞նչ է «կառավարվող նյութը», եթե ոչ այն, ինչ մարդիկ չպետք է պատրաստեն, ունենան կամ «օգտագործեն»:

Այն կատեգորիան, որին այս հոդվածը նվիրված է, սովորական նյութական օբյեկտն է, անկենդան անհատը, որը զբաղեցնում է տարածություն ու ժամանակ և ունակ է փոխազդել մարդկանց հետ: Որոշ նյութական իրեր պասիվ են մարդկանց նկատմամբ, մյուսները՝ ակտիվ: Արդյոք ինչ-որ բան պասիվ է, թե ակտիվ, մեծապես կախված է իրավիճակից: Իրերն այս հոդվածում հանդես են գալիս են միայն այնքանով, որքանով ընդունում են մասնիկների, հատվածների, բծերի, նմուշների տեսք և այլն:

**Սոցիալական իրականություն**

Կան «սոցիալական» հասկացությունը սահմանող երկու ենթադրություններ, որոնք հանգեցնում են հետևյալ վերլուծությանը.

[229] Rom Harré (2002) Substances: Bits of Stuff and Material Things// Theory, Culture & Society, 19 (5/6) pp. 23-33. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի և Տաթյանա Դարբինյանի*:

1. Սոցիալական աշխարհը որոշակի մշակութային միջավայրի համաձայնություններին իրազեկ, ակտիվ մարդկանց սիմվոլիկ փոխազդեցությունների հոսքի անցողիկ ատրիբուտ է: Ժամանակակից մարդկանց համար սիմվոլիկ փոխազդեցության հիմնական ձևը դիսկուրսիվ է, ինչը ենթադրում է իմաստալից գործողությունների իրականացում, ինչպես, օրինակ՝ ձեռածությունը, նյութական իրերի տեղաշարժումը ու ձևավորումը, լեզվաբանական ձևերի օգտագործումը և այլն: Միասին վերցված՝ անհատական գործողությունների հոսքը բյուրեղացվում է սոցիալական գործողություններում, ինչպես, օրինակ՝ խոստանալը, խնդրելը, զվարճացնելը, գնելը, վաճառելը և այլն: Սոցիալական աշխարհը հենց որոշակի՝ ազատորեն կապված և անկայուն տիպաբանությանը համաձայնեցված գործողությունների խմբերի հարաբերականորեն համահունչ և տևական կազմաձև է:
2. Այս հոդվածը հիմնվում է Վիգոտսկիի[230] այն գաղափարի վրա, որ անհատական ճանաչողության մեջ անհնար է գտնել ավելի բարձրակարգ մտավոր գործառույթ, որը գոյություն չի ունեցել նախկինում այն խմբի սոցիալական գործունեության մեջ, որին պատկանում է ճանաչող անհատը: Անհատական հուշերը՝ իբրև հիշողության ակտեր, հնարավոր են միայն այն պատճառով, որ անհատը, օրինակ, մի ընտանիքի անդամ է և մասնակցում է խոսակցությունների, որոնցում մարդիկ քննարկում են անցյալը: Հենց այս ճանապարհով են հաստատվում այնպիսի կարևոր տարբերություններ, ինչպիսիք են տարբերությունները հիշողության և երևակայության միջև: Դասակարգելու մեր ունակությունները ունեն միևնույն աղբյուրը. դասակարգումն իրականացվում է այլ մարդկանց կողմից մեզ հետ միասին և մեր փոխարեն:

Այս ենթադրությունները, միասին վերցված, մոտ են Գիդենսի կառուցվածքի կրկնակիության սկզբունքին՝ սոցիալ-հոգեբանական

[230] Vygotsky, L.S. (1986) Thought and Language. Cambridge, MA: MIT Press.

նմուշ, որն առաջանում է կառուցվածքայնացման պարբերական գործընթացի արդյունքում: Իրազեկ մարդիկ արտադրում են սոցիալական աշխարհներ, որոնցից հասարակության նոր անդամները ձեռք են բերում դրանք քիչ թե շատ հստակ վերստեղծելու ունակություն: Սոցիալական գործողությունների հոսքը կարող է ունենալ սոցիալական ակտորների համար անհայտ և նրանց կողմից չմտադրված ատրիբուտներ:

Հնարավոր են «սոցիալական»-ի այլ հասկացություններ, որոնք կարող են կարևոր լինել հասկանալու համար, թե ինչպես են մարդիկ ապրում խմբերում, բայց սոցիալական օբյեկտների վերլուծության համար վերը ներկայացված նկարագրությունը բավական է:

**Ի՞նչ կարող է նշանակել սոցիալական էությունը**

«Սոցիալական էություն» ասելով՝ ես նկատի կունենամ իրեղեն նյութերը, որոնք պատկանում են այն կատեգորիային, որը կարող է սահմանվել վերը ներկայացված եղանակով հասկացվող որոշակի սոցիալական աշխարհի հատկանիշների առումով: Այսպիսով, «ալկոհոլ» կատեգորիան սոցիալական էություն չի սահմանում, մինչդեռ «հաղորդության գինի» կատեգորիան դա անում է:

Վերջինս իրենից ներկայացնում է նաև որոշ սոցիալական գործողությունները սահմանող կատեգորիաների համակարգի տարր. իրենց ամբողջության մեջ այդ գործողությունները կազմում են այնպիսի բարդ և անընդհատ փոփոխվող սոցիալական երևույթ, ինչպիսին է «քրիստոնեական եկեղեցի» սոցիալական երևույթը:

**Քերականական մոդելները**

Ինչպե՞ս ենք մենք հանգում այն մտքին, որ կան «սոցիալական էություններ»: Էության գոյության համար բնութագրական քերականական նշանը տվյալ տիրույթի դիսկուրսում գոյականի /գոյական անուն/ գործածությունն է: Սակայն Վիտգենշտեյնը մեզ նախազգուշացրել է, որ արտաքին քերականական ձևերը չպետք է դիտվեն իբրև իրականության մեջ գոյություն ունեցող ամենի վավերական մոդելներ: Ամենօրյա

սոցիալական խոսքային շփումները, էլ չասենք սոցիալական տեսությունը, լի են քերականական գոյականներով, բայց ես կփորձեմ ցույց տալ, որ դրանցից միայն նրանք, որոնք վերաբերում են դիսկուրսիվ գործողություններին, այն են, ինչ թվում են: Այնպիսի գոյականներ, ինչպիսիք են «դրոշը» կամ «դոլարը» կամ «խանութը» տարբերվում են այնպիսի գոյականներից, ինչպիսիք են՝ «ջուրը», «ավազը», «բազուկը» և այլն: Վերջինները իրենց իմաստն ամբողջացնելու համար չեն պահանջում որևէ հատուկ սոցիալական միջավայր, մինչդեռ դա անում են առաջին թվարկվածները: Դրանք ինդեքսային են[231]: Սոցիալական էությունները հասկացվում են արտահայտություններով, որոնց իմաստները թերի են, եթե կապված չեն սոցիալական գործողությունների որոշակի հոսքի կամ որոշակի սոցիալական աշխարհի հետ:

**Կառուցվածքային ծագման սկզբունքը**

Սոցիալական աշխարհում ոչինչ չի առաջանում, քանի դեռ այն չի ներմուծվում այդ աշխարհի մարդու սոցիալական և կառուցվածքային ակտի միջոցով: Սա ասելով՝ ես նկատի ունեմ մի գործողություն, որը ամրագրում է տվյալ էության կատեգորիան, օրինակ՝ որոշակի ժեստը՝ որպես ողջույնի նշան, բառերի որոշակի առոգանությունը՝ որպես մահապատժի դատավճռի կայացման ակտ և այլն: Այս հոդվածի խնդիրն է փորձել ցույց տալ, որ նույնը ճշմարիտ է նաև գունավորված կտորի համար, որը ծառայում է որպես ազգային դրոշ, փոքր մետաղյա սկավառակի համար, որը հանդես է գալիս դրամի տեսքով և այլն: Ինչպես Մարքսն է նշում, սոցիալական աշխարհը ձևավորվում է ոչ թե տեխնոլոգիաներով, այլ սոցիալական պայմանավորվածություններով, որոնք պահանջվում են կամ անհրաժեշտ են դրանք կիրառելու համար: Բայց հակառակ նրան, ինչ ես մտածում եմ, Մարքսը կարծում էր, թե կան անորոշ կերպով շատ սոցիալական պայմանավորվածություններ, որոնց միջոցով տեխնոլոգիան՝ սահմանված ֆիզիկական առումով, կարող է իրականացվել մարդկանց արդյունաբերական կամ գյուղատնտեսա-

[231] Տվյալ դեպքում ինդեքսայնությունը մատնանշում է արտահայտության անքակտելի կապը համատեքստի հետ - *խմբագրի ծանոթագրություն*:

կան գործունեությամբ, որն ունի սեփական պատմությունը և սեփական ավանդույթները:

**Կառուցողական գործընթացի առաջին բնութագիրը**

Հաջորդող քննարկումը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա. *սեփական նախապատմությունը չունեցող նյութի սովորական կտորից իրեղեն օբյեկտը կարող է վերածվել սոցիալական օբյեկտի՝ նարատիվում ներառվելու շնորհիվ:*

Հեքիաթները լի են նման օբյեկտներով: Որևէ անթույլատրելի բան չկա փոխակերպման այսպիսի օրինակների համար հեքիաթներին և բանահյուսությանը անդրադառնալու մեջ: Այս պատմությունները նարատիվ համաձայնությունների որոշակի զտված ներկայացումներ են, որոնք անցել են թարգմանությունների և փոփոխությունների միջով, գոյատևել են, իհարկե մասնակիորեն, որովհետև բոլորս ծանոթ են մեր մշակույթին հատուկ համաձայնություններին: Միայն մեկուսացման մեջ դաստիարակված երեխան կարող է լսած չլինել Սպիտակաձյունիկի կամ Մատնաչափիկի մասին: Հնդիկները գիտեն Կրիշնայի արկածների մասին պատմությունները, Մաորիները գիտեին Մաուիի մասին՝ չնայած հավանաբար նրանք մեր օրերում ավելին գիտեն Ոսկեծամիկի մասին, և այլն: Սպիտակաձյունիկի հեքիաթում կա մի կարևոր հայելի, Մաուին ուներ ձկան կարթ: Իսկ ես դրամապանակումս ունեմ պլաստիկի մի կախարդական կտոր: Անդրադարձն այս պատմություններին տանում է դեպի մեկ այլ սկզբունք, այն է՝ *նյութական իրերն ունեն կախարդական ուժ միայն այն նարատիվների համատեքստում, որոնցում դրանք զետեղված են:*

«Կախարդական ուժ» ասելով՝ ես նկատի ունեմ այն հզորությունը, որը տվյալ իրի ֆիզիկական հատկությունների արդյունքը չէ, ինչպես, օրինակ՝ դրա ձևը, կառուցվածքը, քիմիական բաղադրությունը և այլն: «Կախարդական ուժը» բառերով պատերազմ առաջացնելու հզորությունն է: Նույն ուժով են օժտված պլաստիկի կտորները կամ գրոտած թղթի կտորները (իմ կողմից ստորագրված), որոնք ունակ են առաջ բե-

րել Մազերատի Քվաթրոպորտի (Maserati Quattroport) հայտնվելն իմ ավտոտնակում:

Հիմա ես կներկայացնեմ հեքիաթներից վերցված որոշ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող են վերը ձևակերպված սկզբունքները կիրառվել նարատիվում նյութական օբյեկտների արմատավորման եղանակների վերլուծության շրջանակներում:

**Նարատիվորեն պայմանավորված կատեգորիաներ**

1. Նյութական իրերը պատմելու պահին և պատմելու համատեքստում կարող են ծառայել որպես իմաստ կրողներ. օրինակ՝ շիլան «Երեք արջերի» հեքիաթում:
2. Նյութական իրերը կարող են առանձնակի հատկություններ ձեռք բերել պատմվածքի համատեքստում. օրինակ՝ ասեղը «Քնած գեղեցկուհին» հեքիաթում:
3. Գործնականում նյութական իրերը կարող են այնպիսի դերեր խաղալ, որոնք դրանց ի սկզբանե հատուկ չեն. օրինակ՝ Ռապունցելի մազերը:
4. Նյութական իրերը կարող են պատմության ընթացքում անցնել մի կատեգորիայից մյուսին. օրինակ՝ ծղոտը «Ռումպելշտիլցհեն» հեքիաթում օրգանականից դառնում է մետաղյա:
5. Պատմվածքներում նյութական իրերը կարող են հանդես գալ իբրև պատշաճ գործողությունների կատարման խոչընդոտներ. օրինակ՝ աշտարակը Ռապունցելի հեքիաթում:

Նշենք, որ նույն տեսակի նյութական իրը կարող է հանդես գալ բազմաթիվ դերերում, օրինակ՝ ասեղը կարող է կապված լինել կար անելու հետ, խոտի դեզի, ուղղություն գտնելու, մատի փուշը հեռացնելու, մատը ծակելու և այլնի հետ: Սրանցից յուրաքանչյուրին կարող է վերագրվել կախարդական ուժ: Որպես կանոն՝ ուտելիքը նման պատմվածքներում բավականին վտանգավոր է լինում, ինչը մենք լավ գիտենք Լյուիս Քերոլի շնորհիվ:

**Կապակցումները նարատիվում**

Ի՞նչպես են իրերը կապակցվում նարատիվներում: Ահա երեք միանգամայն ակնհայտ, բայց ոչ միակ հնարավոր եղանակները:

1. Շատ դեպքերում կապակցումն ապահովվում է *առաջադրանք-գործիք ձևաչափով*: Նարատիվը մատնանշում է առաջադրանքը, և դա նախասահմանում է այն կատեգորիան, որը պետք է ծառայի՝ որպես այդ առաջադրանքի իրագործման գործիք: Այս ձևաչափը թույլ է տալիս, որ ինչ-որ մեկի մարմնի մասերը ներառվեն նարատիվում: Ձեռքերը՝ չար աչքը կանխելու համար (Ֆաթիմայի ձեռքերը իսլամական երկրներում), սեռական օրգանները՝ զվարճանքի համար (Լեդի Չաթերլեյի սիրեկանը), զգայարանները՝ առարկաներ գտնելու համար (Սողոմոն Թագավորի հանքերը), ուղեղը՝ հաշվարկներ անելու համար (Պիկվիկյան ակումբի հետմահու հուշերը) և այլն: Այս բոլորը կախված են պատմվածքից: Նույն մարդու նույն օրգանը կարող է օգտագործվել մեկ այլ բանի համար այլ պատմության մեջ կամ միևնույն պատմության այլ դրվագում:
2. Մի շարք այլ դեպքերում կապակցումն ապահովվում է *հաստատված համաձայնություններով*: Օրինակ, գունավոր կտորները դառնում են դրոշներ, հագուստը դառնում է համազգեստ և այլն: Գունավոր կտորի հատվածները, որոնք կազմում են «Յունիոն Ջեք» դրոշը, կարող են այլ կերպ «գնահատվել» եռագույնը կազմողների կողմից, բայց որպեսզի նարատիվում այդ կտորները այլ դերեր ունենան, ստեղծվող առարկան պետք է լինի հենց Բրիտանական դրոշը: Օրինակ, երբ մի խումբ բողոքողներ պատրաստվում են այրել գունավոր կտորի հատվածներ, նրանք կզգերադասեն, որ դրանք կազմեն սոցիալապես հաստատված սիմվոլ, այլ ոչ թե լինեն պարզապես կտորի հասարակ հատվածներ:
3. Բազմաթիվ են նաև *ոչ ֆորմալ սովորությունների* դեպքերը: Օրինակ՝ գենդերային հարաբերություններին առնչվող պատմվածքներում շոկոլադի դերը (հիշե՛ք «Սև կախարդանքի» գո-

վազդը) արտացոլում է կանանց ճաշակի և նախասիրություննե-րի մասին բրիտանացի տղամարդկանց ունեցած բանահյուսա-կան իմաստությունը:

Օբյեկտների կապակցման այս եղանակների ընտրության համա-տեքստը չի պայմանավորվում միայն նարատիվով: Սա նաև մշակու-թապես պայմանավորված համատեքստայնություն է: Կան մշակույթ-ներ, որոնք առհասարակ չունեն դրոշներ, կան այդպիսիք, որոնցում չար աչքը չի համարվում վտանգ և այլն: Կան նաև մշակույթներ, որոն-ցում շոկոլադը ներկայանում է միայն իբրև հնդկահավի սոուսի բա-ղադրատարր:

**Ի՞նչ է «օբյեկտը»**

Այս ամենն ինձ ուղղորդում է վիճարկել «օբյեկտի» գաղափարը, ինչպես նաև այն ողջամիտ ենթադրությունը, որի համաձայն նարատի-վի միասնությունը պայմանավորվում է դրվագի ընդհանուր բնույթով: Այս գծի հետագա զարգացման համար պահանջվում է մի նոր հասկա-ցություն՝ «թույլատրելիությունը» (affordance): Այն թույլ կտա իր նյու-թական ատրիբուտներով ճանաչվող իրին լինել ոչ թե մեկ սոցիալա-կան օբյեկտ, այլ մի քանի սոցիալական օբյեկտներ, որոնցից յուրա-քանչյուրը բնութագրվում է ըստ նարատիվում ունեցած իր դերի:

**Մի փոքր քերականություն**

Կան տրամաբանության համար բաց մի քանի հնարավորություն-ներ՝ նյութական իրի ունեցած հատկությունները նկարագրող հասկա-ցությունն ընտրելու համար նարատիվում՝ իբրև սոցիալական օբյեկտ գործառելու նրանց ունակության դիտանկյունից: Դրանցից ամենաօգ-տակարն է թվում դիսպոզիցիայի մի հատուկ տեսակը բնորոշող հաս-կացությունը, որն առաջարկել է հոգեբան Ջ. Գիբսոնը (1979): Դա «*թույ-լատրելիություն*» հասկացությունն է:

**Թույլատրելիություններ**

Գիբսոնի ընկալմամբ՝ թույլատրելիությունը նյութական դիսպոզիցիա է, որի հետևանքները նկարագրվում են մարդկային աշխարհի առումով: Նույն նյութական իրը կարող է ունենալ օգտագործման շատ տարբեր հնարավոր ձևեր: Յուրաքանչյուրը մի թույլատրելիություն է: Թույլատրելիությունները տարածաժամանակայնորեն տեղայնացված են ճանաչելի նյութական իրերի և սոցիալական իրավիճակների համեմատությամբ: Այսպիսով, հատակը թույլատրում է քայլել, պարել, կահույք դնել, պատուհանը թույլ է տալիս տեսնել լիճը, փախչել սպառնալիքից, փնտրել գաղտագողի նայող Թոմին, դանակն ի վիճակի է կտրել, սպառնալ, բացել պատուհանի բռնակը և շատ այլ բաներ:

Վերադառնալով սոցիալական օբյեկտներին՝ կարևոր է նշել, որ դրանք սովորաբար ունենում են բազմաթիվ թույլատրելիություններ՝ այդպիսով նարատիվներում ապահովելով իրենց բազմակի դերերը: Օրինակ, ասեղը թույլ է տալիս կար անել, այդպիսով արքայադուստրը կարող է այն ձեռքը վերցնել, բայց այն նաև կարող է մատը ծակել, այսպիսով՝ արքայադուստրը կարող է կախարդական կերպով քուն մտնել: Գործնական թույլատրելիությունները ապահովում են սյուժեի զարգացումը՝ տեղ բացելով կախարդականի գործառման համար: Տորթերը ուտելու համար են, բայց «Ալիսան հրաշքների աշխարհում» հեքիաթում դրանք նաև թույլ են տալիս փոքրանալ կամ մեծանալ:

**Համատեքստին հարաբերող բազմաթիվ թույլատրելիություններ**

Քանի որ բազմակի սյուժետային գծեր ունեցող ցանկացած հայտնի պատմվածքում սովորաբար կա մեկից ավելի հաղորդվող նարատիվ, նյութական իրերը՝ որպես պոտենցիալ սոցիալական օբյեկտներ, իրենց դրսևորում են Նիլս Բորի մոդելի համաձայն, այն է՝ ունեն համատեքստով պայմանավորված բազմաթիվ թույլատրելիություններ: Ես դրանք կոչում եմ բորյան, որովհետև ինչպես ենթաատոմային մակարդակի թույլատրելիությունները, դրանք ունեն հակասական դրսևորումներ: Օրինակ, մի մակարդակում կարող են դիտարկվել կա՛մ մասնիկներ, կա՛մ ալիքներ, բայց ոչ երկուսը միաժամանակ և

միևնույն տեղում: Յուրաքանչյուր դեպքում կա ենթաատոմային մակարդակի ընդհանուր նկարագրություն՝ ամբողջովին մաթեմատիկական և ամբողջովին ֆիզիկական՝ նյութական օբյեկտների:

**Կրկնակի նարատիվի տիպերը**

***Տիպ 1***

Երկու նարատիվներն էլ օգտագործում են նույն քերականությունը, այսինքն՝ սյուժեի գծերը կառուցվածքայնացնող նույն համաձայնությունները: Մեր օրինակում կրկնակի նարատիվում ներառված նյութական օբյեկտի դերում հանդես է գալիս մետաղյա օղակը, որում նկատելի են հանքային փոքր մասնիկներ: Ժամանակին շատ տարածված այս տիպի առարկաները մինչ օրս շատ հաճախ են հանդիպում: Այս օբյեկտները հիշատակող պատմություններում դրանց ժողովրդական անվանումն է «նշանադրության մատանի»:

1. Տղամարդու նարատիվը. սա հեռու կպահի ուրիշ տղաներին: Փող ունեմ, համենայն դեպս այն արժե ավելի քիչ, քան իմ Վիզա քարտի վարկի սահմանաչափն է: Սրանով ես կհաստատեմ այն, ինչ նա իմ մասին ասաց անցած գիշեր: Եվ այլն:
2. Կնոջ նարատիվը. սա գրասենյակի մյուս աղջիկներին և բարեկամներից ոմանց ցույց կտա, որ ես կարող եմ տղամարդ գտնել: Այն թանկարժեք է, ուստի նա մեր հարաբերություններին լուրջ է վերաբերվում: Եվ այլն:

Ես շատ լավ գիտակցում եմ, որ այս նարատիվում իմ օգտագործած սյուժետային գծերը այս հոդվածը ընթերցողներից շատերին կարող են հնաոճ, կյանքից հետ ընկած և նույնիսկ սեքսիստական թվալ: Ես նաև գիտեմ, որ այս «քերականությունը» դեռևս բավականին արդիական է շատերի համար: Նման քերականությունը ընդհանուր ռեպերտուար է ապահովում բոլոր գործող անձանց համար: Յուրաքանչյուրը կատարելապես կարող է հասկանալ մյուսի մտքերը՝ անկախ նրանից այդ մտքերն բացահայտ կերպով բարձրաձայնվում են, թե ոչ:

Այդ հարաբերությունները սխեմատիկ կերպով կարող են արտահայտվել այնպես, ինչպես ցույց է տրվում Գծագիր 1-ում:

***Գծագիր 1. Մետաղյա օղակի բազմակի իմաստները***

*Տղամարդու նարատիվ. Nտ* ⟶ *Քերականություն* ⟵ *Կնոջ նարատիվ. Nկ*

*Օբյեկտի ընդհանուր նկարագրություն*

Այս մակարդակը Բորի մակարդակը չէ, քանի որ տղամարդու և կնոջ նարատիվները, թեև մատնանշում են տվյալ մետաղյա օբյեկտի տարբեր սոցիալական թույլատրելիությունները, այնուամենայնիվ փոխադարձաբար հակասող չեն:

***Տիպ 2***

Յուրաքանչյուր նարատիվ հիմնված է սեփական «քերականության» վրա, իսկ զույգի ձևավորումը տեղի է ունենում ընդհանուր նյութական օբյեկտի շնորհիվ, որի վերաբերյալ գոյություն ունի երկու հեղինակների համար հասկանալի ընդհանուր նկարագրության հնարավորությունը: Առարկայի նկարագրման ընդհանրությունը պատկանում է ընդհանրության այն տիպին, որը օգտագործվում է ինչ-որ նյութ՝ իբրև «դեղ» նկարագրելիս: Բայց այս նկարագրությունների հետևում կարող է թաքնվել տարբերությունների մի ամբողջ աշխարհ, քանի դեռ պատկերացումները «դեղերի» կամ «հաբերի» մասին ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական դիսկուրսների տարրեր են: Այստեղ մենք մոտենում ենք Բորի՝ թույլատրելիությունների փոխլրացման հատկությանը:

1. Բժշկական նարատիվ. այս բազմաֆազ ինհիբիտորը[232] կկասեցնի սերոտոնինի արտադրությունը և կնվազեցնի տագնապայնության ընդհանուր մակարդակը:

[232] Նյութերի ֆիզիոլոգիական և ֆիզիկաքիմիական (հիմնականում ֆերմենտիվ) ընթացքը ճնշող կամ հետաձգող գործընթացների ընդհանուր անունը - *խմբագրի ծանոթագրություն*:

2. Ոչ մասնագիտական նարատիվ. գուցե այս հաբերը ինձ կօգնեն հաղթահարել անհանգստությունս, տագնայապնությունս և լացկոտությունս:

Ամեննին էլ ակնհայտ չէ, թե ամեն տրված պահին այս երկու նարատիվների միջև որ հարաբերություններն են առկա: Միավորված լինելով մեկ միասնական պատմության մեջ՝ դրանք կարող են անհամատեղելի լինել: Այսպիսով, «տագնապային» և «տագնապ» հասկացությունները կարող են լինել հակասող. օրինակ՝ բժշկական նարատիվում կարող է չգտնվել այդ բառերի հետ զուգակցվող մարմնական զգացում:

Համիլթոնը, Թուրեթի համախտանիշի վերաբերյալ հավաքված նյութերի հիման վրա հետազոտելով հարաբերությունները պացիենտների, մասնագետների և աջակցող խմբերի միջև, ցույց է տվել, թե ինչպես է բժշկական նարատիվի քերականությունը անցնում ոչ մասնագիտական նարատիվի: Սա երկփուլ գործընթաց է: Վերջինս սկսվեց այն պահից, երբ երկու ոչ մասնագիտական խմբեր ծանոթացան հայհոյախոսության և նյարդային կծկումների պատճառների նեյրոֆիզիոլոգիական նկարագրությանը, որն իրենց գիտակցությունից արտամղեց ոչ մասնագիտական նկարագրությունները: Ավելի ուշ այդ հիվանդության ժառանգական հակվածության մասին իմացությունը հանգեցրեց նրան, որ ոչ մասնագիտական խմբերը էլ ավելի հեռու գնացին այն սկզբնական ոչ մասնագիտական նկարագրություններից, որոնց վրա Ժիլ Դը Թուրեթը հիմնել էր իր ախտորոշման չափանիշները: Ճեղքը մասնագիտական և ոչ մասնագիտական նկարագրությունների միջև այնքան լայնացավ, որ շատերը կարողանում էին իրենց մոտ ինքնուրույն ախտորոշել «Թուրեթի համախտանիշ»՝ հիմնվելով բացառապես ժառանգականության գործոնի վրա՝ առանց տիպական ախտանիշներն ունենալու: Այսպիսով, այս կառուցվածքի երրորդ տարրը, այսպես ասած՝ materia medica -ն, բարդ և ոչ միանշանակ կերպով կապվում է կրկնակի նարատիվին, քանի դեռ փոխվել է ինքը քերականությունը: Ենթադրենք, որ այս դեպքում խնդիրը սերոտոնինի մեջ է, բայց սոցիալական աշխարհի՝ որպես սոցիալական նյութ ներ-

մուծվելուն զուգահեռ, դրա քերականությունը սկսում է ազդել նարատիվի ընդհանուր համատեքստի վրա՝ դառնալով Թուրեթի համախտանիշի բացատրման միջոց:

Այս կառուցվածքը սխեմատիկ կերպով ներկայացված է Գծագիր 2-ում:

***Գծագիր 2. Փոքրիկ կլոր իրերի հակասող իմաստները***




Համիլտոնի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երբ նյարդային կծկումները Թուրեթի համախտանիշի իմաստաբանության մեջ սկսեցին կորցնել իրենց կենտրոնական դիրքը, բժշկական պատմության քերականությունը սկսեց ավելի ու ավելի շատ օգտագործվել պատմության մեջ ներգրավված բոլոր կողմերի՝ պացիենտների, աջակցող խմբերի և բժշկական մասնագետների կողմից:

**Նարատիվի առաջնահերթությունները**

Թուրեթի համախտանիշի դեպքում մենք գործ ունենք մի օրինակի հետ, որը ցույց է տալիս տեխնիկական քերականության՝ ոչ մասնագիտական քերականությունը արտամղելու ունակությունը: Այն նաև ցույց է տալիս, թե ինչքան անկայուն են արտասովոր նյութական երևույթի առօրեական նկարագրությունները: Սակայն այն դեպքերում, երբ էությունները ոչ թե նյութական են, այլ դիսկուրսիվ, ինչպես, օրինակ՝ Ալցհեյմերի հիվանդությունը, ոչ մասնագիտական և մասնագիտական քերականությունների առաջնահերթության կարգը, ինչպես վերջերս ցույց տվեցին որոշ հեղինակներ[233], կարող է փոխվել: Բայց

233 Sabat, R. (1994) Excess Disability and Malignant Social Psychology: A Case Study of Alzheimer’s Disease// Journal of Community and Applied Social Psychology, 4.

շատ համատեքստերում, որոնցում իրերը ներմուծվում են նարատիվների մեջ, պահպանվում է տեխնիկական նարատիվների քերականությունը: Մենք սա կարող ենք տեսնել հեռուստացույցով՝ այգեպանության և խոհարարության նվիրված հեռուստածրագրերում:

**Նարատիվների ինքնության չափանիշները**

Ամեն անգամ, երբ մենք մտածում ենք «միևնույն բանի» նշանակության մասին, առաջանում է ինքնությանը վերաբերող երկու հարց: Ո՞ր չափանիշներով ենք մենք որոշում տարբեր էությունների ինքնության պահպանումը ժամանակի մեջ: Ի՞նչ չափանիշներով ենք որոշում մեր առջև եղածի միանմանությունը կամ տարբերությունը: «Միևնույն» բառի տարբեր իմաստները, որոնք անգլերենում փոխանցում են մեկ բառով, իսպաներենում արտահայտվում են երկու բառով՝ «igual» և «mismo»: «Նույնական» բառի իմաստը երկու լեզուներում էլ փոխանցվում է նույն կերպ՝ «identical» - «identico»:

Ե՞րբ ենք հասկանում՝ շարունակվո՞ւմ է արդյոք դրվագը, թե՞ արդեն սկսվել է նորը: Ե՞րբ է պատմությունը սկսվում, և ե՞րբ է այն ավարտվում: Արդյո՞ք շարունակությունը մեկ այլ պատմություն է, թե՞ պարզապես նույն պատմությունն է: Արդյո՞ք «Ջեդայի վերադարձը» նույն պատմությո՞ւնն է, ինչ «Աստղային պատերազմները»: Այստեղ որպես տարբերակման չափանիշ կարող են ծառայել Պրոպի առաջարկած գործառույթները[234]: Պատմության ավարտը գալիս է մոտ երեսուն տարբեր գործառույթներ անցնելուց հետո. այս դեպքում, անգամ միևնույն հերոսների պահպանման պարագայում, Պրոպի առաջին գործառույթին վերադառնալիս, սկսվում է նոր պատմություն (ընտանիքի անդամներից մեկի բացակայությունը):

Ե՞րբ են ըստ որևէ չափանիշի տարբեր երկու պատմությունները, այնուամենայնիվ, կազմում մեկ միասնական պատմություն: Արդյո՞ք «Աննա Կարենինան» քիչ թե շատ նույն պատմությունն է, ինչ «Մադամ Բովարին»: Լևի Ստրոսն օգտագործել է երկյակ հակադրությունները և հակադրության նմուշների ձևական վերափոխումները՝ ցույց տալու

[234] Propp, V. (1968) The Morphology of the Folk Tale. Austin, TX: University of Texas Press.

համար, որ առաջին հայացքից տարբեր պատմությունները ըստ էության նույնն են: Այս իմաստով Աննայի և Էմմայի պատմությունները նույնն են: Երկուսն էլ տարբերվում են «Հպարտություն և նախապաշարմունք» պատմությունից, մինչդեռ բոլոր երեքը տարբերվում են «Ռոմեո և Ջուլիետ»-ից:

Ինչո՞ւ էր մեզ պետք այս շեղումը: Եթե նյութական իրերը դառնում են սոցիալական օբյեկտներ այնքանով, որ զետեղված են նարատիվներում, այդ ժամանակ այն, թե արդյոք սա նույն կամ տարբեր սոցիալական օբյեկտն է, կախված է նրանից, թե արդյոք սա նույն պատմությունն է, թե՝ ուրիշ: Եթե ինչ-որ մեկը հարցներ. «Ո՞րն է կամուրջի՝ որպես սոցիալական օբյեկտի իմաստը», ապա կպահանջվեր ճշտել՝ արդյոք այն անցնում է Սենի՞, թե՞ Քվայ գետի վրայով:

Այժմ մենք պետք է վերադառնանք և կապենք այս դատողությունները «թույլատրելիություն» հասկացության հետ: Ենթադրենք որ նյութական իրը՝ որպես սոցիալական օբյեկտ, հենց այն թույլատրելիությունների ամբողջությունն է, որն այդ օբյեկտը ներառող նարատիվը հասանելի է դարձնում իր հերոսներին: Այս դրույթը կարող է ծառայել իբրև գլխավոր մեթոդաբանական բանաձև, որը թույլ կտա ներմուծել նյութական օբյեկտները և կառուցվածքները միկրոսոցիոլոգիա:

Բերենք մեկ այլ օրինակ. ինչպե՞ս ենք մենք *սոցիոլոգիապես* հասկանում բանտի պատերը: Վերոնշյալ քննարկումները ենթադրում են, որ հարցին չկա որևէ ընդհանուր պատասխան: Դա կախված է սյուժեից: Նրա համար, ով իրեն համարում է անարդարացիորեն ազատազրկված, այդ պատերը արտաքին աշխարհ մտնելու արգելքներ են: Նրա համար, ով կարծում է, թե բանտը ապաստան է, «միևնույն» նյութական պատերը պաշտպանում են արտաքին աշխարհի վտանգներից: Սա բավականին տրամաբանական դիտարկում է, բայց զարմանալի է, թե որքան հաճախ է այն անտեսվում: Նույնիսկ Ֆուկոն (1986) չի ներկայացնում այս դիտանկյունների լիարժեք վերլուծություն: Պանոպտիկոնի պատուհանները միշտ թույլ են տալիս հսկողություն, բայց երբեք բանտարկյալին հնարավորություն չեն ընձեռում հայացք գցել այլ մարդկանց:

**Փոխակերպումների սահմանները**

Մինչ այժմ այս քննարկման մեջ անտեսվում էր սիմվոլիկ համակարգում նյութական օբյեկտի ներառման սահմանափակումների հարցը: Կարո՞ղ է արդյոք ցանկացած բան դառնալ ցանկացած բան: Էվերեստ սարը և Օլիմպուսը Տիբեթի և Հոմերոսական Հունաստանի համապատասխան պատկերներում ներկայանում էին իբրև Աստվածների կացարաններ: Արդյո՞ք այս դերին կհամապատասխանեին Լազայի շուկայական տարածքը կամ Պիրեոսի ծովափը: Դրանցից ոչ մեկը չունի այն անհասանելիությունը և ներկայացուցչականությունը, որոնք նշված լեռները պիտանի են դարձնում այդ սիմվոլիկ դերի կատարման համար: Այս էություններն օժտված են որոշակի նյութական ատրիբուտներով, որոնք ենթադրում են նրանց գործածումը՝ իբրև սոցիալական օբյեկտներ, և միևնույն ժամանակ սահմանափակում են այդ գործածման բնույթը: Իրերի նյութական հատկությունները սահմանափակում են այն գործածությունները, որ այդ իրերը կարող են ունենալ տեղային սոցիալական նարատիվներում:

Այս տեսակետը առանձնակի զգուշություն է պահանջում: Ճիշտ է, այն, թե որ էակներն են դիտվում որպես անհատական էություններ և որ հատկություններն են համարվում կարևոր բնագիտական հետազոտության համար, հավատալիքների համապատասխան համակարգի արդյունք է: Գուդմանի կարծիքով (1978) անգամ մեր պատկերացումը տիեզերքի՝ իբրև առանձին աստղերից կազմված էության մասին հիմնված է այն համաձայնության վրա, որը մեզ ստիպում է տեսնել երկնային մարմինները միմյանց հետ փոխկապված հենց այսպես, այլ ոչ թե այլ կերպ: Սակայն ճիշտ է նաև այն, որ նման համաձայնությունը կդառնա էակների դասերը այդքան հստակ տարբերակելու միջոց միայն այն դեպքում, եթե գոյություն ունեցող ամեն ինչի առկա նյութական սահմանազատումը դա թույլ տա: Այսպես, օվկիանոսը թույլատրում է իր հոսանքների տարբերակումը, բայց ոչ՝ աստղերի: Երբ մեկը երկնքին նայելիս փնտրում է համաստեղություններ և ուրեմն՝ աստղեր, սա կանխորոշում է նարատիվի հետագա զարգացումը: Արաբ աստղագուշակները ունակ էին նշմարել այնպիսի համաստեղություն-

ներ, որոնք այլ նարատիվում ներգրավված հույները տեսնել չէին կարող, բայց բոլոր այս տարբերությունները հաշվի առնելով՝ և՛ արաբ, և՛ հույն աստղագուշակները ունեին ընդհանուր պատկերային հիմք (գեշտալտ), որի վրա, սակայն, դրվում էին չհամընկնող նարատիվ նշանակություններ: Նույնիսկ հիմա այն, ինչը հյուսիսային կիսագնդի որոշ բնակիչների Օրիոնն է, հասարակածից հարավ գտնվողներին երևում է Երկաթե Կաթսայի տեսքով:

Կա փաստարկման մեկ այլ գիծ, որը կարծես վիճարկում է այս հոդվածի գլխավոր դրույթը: Ես պնդում էի, որ սոցիալական օբյեկտների ծագումնաբանության հարցում իրերի սիմվոլիկ կարգաբերումը առաջնահերթ է նյութականի նկատմամբ: Ես հայտարարեցի, որ նյութական միջավայրի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ատրիբուտները հանդես են գալիս սահմանափակումների դերում այն սոցիալական կարգերի նկատմամբ, որոնք կոչված են արդյունավետ եղանակով հարմարեցնել այդ միջավայրը մարդկային պահանջմունքներին: Իմ փաստարկի հիմքում այն միտքն էր, որ նյութական միջավայրի անհամար հատկություններից առավել նշանակալիների ընտրությունը կախված է որոշակի տարածաժամանակային համատեքստում գերիշխող նարատիվներից: Ի հակադրություն ասվածին՝ կարելի է պնդել, որ, օրինակ, քահանաների՝ իբրև Նեղոսի տարեկան վարարումը կանխատեսողների դերը իր ազդեցությունն էր ունենում Հին Եգիպտոսում գյուղատնտեսական արտադրության սոցիալական կառուցվածքի վրա: Նեղոսի հովտի աշխարհագրությունը փարավոնական սոցիալական կարգի անուղղակի աղբյուրն է:

### Սոցիալական շարժառիթները նյութական իրերի շուրջ

Ինչպես ես փորձել եմ ցույց տալ, սոցիալական կանոնների համակարգերի իմ ուսումնասիրության մեջ[235], ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ: Ինձ թվում է, որ մարդիկ միշտ ապրել են երկակի սոցիալական կարգի պայմաններում: Դրա մի բաղադրիչն իրենից ներկայացնում էր այս կամ այն միջավայրում կենսապահովման պայմանների պահպանու-

[235] Harré, R. (1993) Social Being, 2nd edn. Oxford: Blackwell.

մը: Այս դեպքում խոսքը գործնական կարգի մասին է. այս կարգում բոլոր մարդիկ ունեին սեփական տեղային պայմաններին համապատասխանող դերերը: Նրանց կյանքն ուներ նաև հակառակ կողմը, այն է՝ մեծարանքի և դիրքերի աստիճանակարգերի ձևավորման համար պատասխանատու սոցիալական սահմանումների: Սա էքսպրեսիվ կարգն է: Եվ այսպես, հասկանալ, թե ինչ նշանակություն ունեն նյութական իրերը մարդկանց համար, կարելի է միայն այդ երկու դերերի բովանդակությունները դուրս բերելով: Maserati Biturbo Quattroporte-ն օգտակար միջոց է շաբաթվա մթերքը սուպերմարկետից տուն բերելու համար: Այն նաև հարստության, ոճի և այլնի նկատելի արտահայտում է: Գրեթե ցանկացած նյութական իր, որը կարևոր տեղ ունի այս կամ այն մշակույթի գործնական կարգում, իր տեղն ունի նաև էքսպրեսիվ կարգում: Նարատիվները, որոնցով այս կարգերը պահպանվում են, շատ տարբեր են. դա պարզ է առանց ասելու: Հարկ է նշել, որ գործնական կարգին պատկանող ինչ-որ թանկարժեք և դժվար պատրաստվող օբյեկտներ կարող են որևէ արժեք չունենալ էքսպրեսիվ կարգում, եթե ընկալվեն իբրև կոպիտ և գռեհիկ:

Այս տարբերակումը Թորստեյն Վեբլենի[236] մեծ ներըմբռնումն էր: Ճիշտ է նաև այն, որ էքսպրեսիվ կարգում տեղ գտնող ամեն բան չէ, որ իր տեղն ունի նաև համապատասխան գործնական կարգում: Ինչպես Վեբլենը նշել է, ժամանակին որսորդության համար նախատեսված շների ցեղատեսակները կարող էին զատվել այդ դերից և ծառայել որպես ոճային հանդերձի մաս: Ինչ վերաբերում է նյութական իրերի շուրջ գոյություն ունեցող սոցիալական շարժառիթներին, կարծում եմ, որ դրանք մեծամասամբ խոսում են գործնական կարգի նկատմամբ էքսպրեսիվ կարգի առաջնահերթության մասին[237]: Ես այլևս կանգ չեմ առնի այս հարցի վրա սույն քննարկման շրջանակներում:

Ողջ սոցիալական աշխարհը պարզապես սիմվոլիկ փոխանակումների ամբողջություն է, ինչպես նաև իմաստների համատեղ կառուցում ու կառավարում՝ ներառյալ իրերի իմաստները: Մարդկային

236 Veblen, T. (1899) A Theory of the Leisure Class. New York: Macmillan.
237 Ibid, pp. 192-203.

կյանքին համապատասխան դառնալու համար նյութական իրերը պետք է մեկնաբանվեն և դառնան մարդկային նարատիվի մաս: Մեկնաբանությունները պահանջում են քերականություններ, որոնք պատմականորեն և մշակութապես տեղային են: Վիգոտսկին (1986) ցույց է տվել, թե ինչպես են քերականությունները փոխանցվում սերնդեսերունդ, ինչն ապահովում է միևնույն մեկնաբանությունների պահպանումը դարեր ի վեր: Սա ստեղծում է պատրանք, թե իբր որևէ *իր* նույնքան իրական է, որքան, օրինակ, որևէ տարածություն եզերող լեռնաշղթան: Վերցնենք փողի օրինակը: Թղթադրամների թողարկումն ու օգտագործումը միայն ցուցադրական ակտ է, խոստում: Դրանով փողը չի տարբերվում հաղորդության գինուց, Stop նշանից և այլն: Այս բոլոր իրերը սոցիալական օբյեկտներ են միայն սյուժետային գծերի՝ դինամիկ կերպով փոփոխվող ֆրեյմերի ներսում: Դրանք ամենավաղանցիկ և ամենաանտեսանելի արդյունքն են մարդկային գործունեության բոլոր արդյունքներից: Դրանք նարատիվներ են, որոնք գործածելի են միայն համապատասխան սոցիալական կազմակերպման պայմաններում: Համաձայն գինեգործական նարատիվի՝ շամպայնը խաղողի ֆերմենտավորված հյութ է: Խավիարի հետ մատուցվելիս այն դառնում է վեհության արտահայտում, իսկ գյուղական կարկանդակի կողքին՝ հավակնոտության դրսևորում:

# ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ԲՐՈՒՆՈ ԼԱՏՈՒՐ

# ՄՏՔԻ ԸՆԹԱՑՔՆԵՐԸ. ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱԴՐՈՒՄԸ[238]

**Նախաբան**

Այս առավոտ Նևշատել (Neuchâtel) լճի մոտ արևոտ է, քամոտ և ցուրտ: Այն ի՞նչ պայծառ փոքրիկ ուրվագիծ է: Ա՜, այնտեղ քամու մեջ առագաստանավ է (սպորտային): Այն արագ է շարժվում: Որքա՞ն արագ: Ես կարող էի օգտագործել նավամատույցի երկայնքով ձգվող լապտերասյուները՝ չափելու համար այն ժամանակը, որը նրան անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրի դիմացով անցնելու համար: Եթե ունենայի լավ շվեյցարական ժամանակաչափ, իմանայի առագաստանավի՝ ցամաքից ունեցած հեռավորությունը, նրա երթուղու անկյունաչափը (ոչ հեշտ խնդիր՝ հաշվի առնելով տախտակամածի ոչ հաստատուն շարժումները), ես կկարողանայի իմանալ արագությունը, որը հեռավորության հարաբերությունն է ժամանակին: Իհարկե, իրականում ես չէի կարողանա, որովհետև բավականին վատ եմ հաշվարկներ անելու գործում, նույնիսկ ավելի վատ, քան նավարկելու: Ես կարող եմ միայն կողքից դիտարկողի դեր ունենալ: Օ՜յ, ահա նա ջրի մեջ է: Դարձյալ նա այնտեղ է, ավելի արագ է ընթանում ալիքների միջով, որոնց կատարներն այժմ ուժգին քամուց պատվել են սպիտակ փրփուրով: Հիմա, երբ նա ինձ ավելի մոտ է, ես նրա դեմքին տեսնում եմ լայն ժպիտ: Սերֆինգորդը, կարծես, չափազանց մեծ հաճույք է զգում: Նա չի նկատում անցնող ժամանակը: Պիաժեին նվիրված հանդիպման ընդմիջման ընթացքում լճի երկայնքով ճեմելիս տարօրինակ է փորձել հաշվարկել ժամանակը: Ավելի տարօրինակ է կողմնակի դիտարկողի

---

[238] Latour, B. (1997) Trains of thoughts - Piaget, Formalism and the Fifth Dimension// Common Knowledge Winter, vol. 6, N 3, pp. 170-191. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի և Արմինե Ղալամդարյանի*:

դեր ստանձնելը: Իհարկե, ես կարող էի հաշվել սերֆինգի հետագիծը և ստանալ հարաբերություն, ձև, արագություն, ինչ-որ բան, որը չէր լինի ո՛չ ժամանակի, ո՛չ տարածության մեջ: Անժամանակ թիվ: Ես կարող էի նաև ամենապինդ և ամենակայուն շվեդական քաղաքի ապահով և ամուր հողից հասնել ֆորմալիզմի վստահ ըմբռնման: Բայց արդյո՞ք հետո ինչ-որ մի բան չէր մոռացվի: Ի՞նչը, կոնկրետ ի՞նչը կմոռացվեր: Այստեղ մի՛ շտապեք: Չշտապե՛ք: Հանդիպմանը ներկա են բազում հոգեբաններ, ֆենոմենոլոգներ: Նրանք խոսում են «ապրված» ժամանակի մասին: Ուշադի՛ր: «Նրանք կացին ունեն մանրելու համար»: Նրանք ցանկանում են քննադատել գիտական ժամանակը, անժամանակ և անտարածություն կոորդինատներն այն բանի, ինչն իրենք անվանում են գիտություն: (Ահա, նա կրկին ընկած է, նրան հարվածել է հանկարծակի փոթորիկը: Ահա, նա այժմ դարձյալ սլանում է հեռվում): Արդյո՞ք սերֆինգորդը նետի նման շարժվում է «ապրված» ժամանակի և տարածության մեջ: Դժվար թե: «Ապրված». այն դատարկ բառերից է, որ չունեն իրենց հակառակը, որին խաբուսիկ խորություն է հաղորդվում, որը հայտնվում է մեռած մեկնաբանության անժամանակ ու անտարածություն ապարատի վրա հարձակվելու համար: Եթե ինձ հաջողվեր հաշվել այդ սրընթաց սերֆինգորդի արագությունը, ինչպե՞ս կկարողանայի լքել Նկշատելի այս արևոտ օրվա «ապրված» աշխարհը: Ինձ անհրաժեշտ կլիներ ժամացույց, ուղենիշ, սյուներ, քանոններ, օգնականների խումբ, թեոդոլիտներ, բոլոր այն սարքավորումները և անձնակազմը, որ Էդ Հաթչինսն այդքան լավ նկարագրում է, երբ ցույց է տալիս Սան Դիեգո նավահանգստում «դրեդնոութ»[239] վարելու համար անհրաժեշտ գործողությունների թիվը[240]: Ի՞նչ առումով են այս գործողությունները ոչ «ապրված»: Վերջում ես պետք է ստացած լինեի արագությունը, որը անժամանակ անտարածության կերպարանք է, ձև, հարաբերություն թղթի կտորի վրա, որը ես պահում եմ իմ ձեռքում, իմ աշխարհի ներսում, ափի երկայնքով, արևի տակ, համալսարանի տարածքում: Այսինքն՝ ես ոչ մի կետում աշխարհը լքած չէի լինի: Ես

---

[239] «Աներկյուղ», նավի տեսակ է – *թարգմանչի ծանոթագրություն*:

[240] Hutchins, E. (1995). Cognition in the wild. Cambridge, MA: MIT Press.

Նշատել լճին կավելացնեի մի ուրիշ մաս, մի ուրիշ հատկություն՝ առագաստանավի արագությունը հաշվելու համար գործիքներ ստեղծող դիտարկողը: Բայց այդ դեպքում սերֆինգորդը (այժմ՝ պարզապես մի կետ հորիզոնում) հաշված արագությանը «ուրախություն» չի ավելացնում: Նա «ապրվածի» զգացողություն չի հաղորդում արևոտ առավոտին, անժամանակ և անտարածություն ակնթարթի և տեղի ճշգրիտ սահմանմանը: Ինչո՞ւ են այս բոլոր հոգեբանները համեմատում «ապրված» ժամանակը «իրական» ժամանակի հետ, «սուբյեկտիվ» ժամանակը՝ «օբյեկտիվ» ժամանակի հետ: Արագության իմ հաշվարկը (նկատի ունեմ իմ գործիքները, արագությունը սերֆինգորդից դուրս բերելու մտադրությունը) այն աշխարհում է, որտեղ նա արագորեն նավարկում է. սա այն խորը առանձնահատկությունը չէ, որի վրա կարող էր հիմնվել նրա սեփական հոգեբանական աշխարհը: Ես ինչպե՞ս կարող էի այնքան գոռոզ լինել, որ երևակայեի, թե իմ հաշվարկը որոշում է ցանկացած այլ բանի հիմնային հատկությունը: Ես ինչպե՞ս կարող էի մոռանալ ժամացույցների, անձնակազմի, սյուների, քանոնների, նավակազմի, կողմնացույցների և լուրջ շվեյցարացի օգնականների մասին: Հատկապես այստեղ Լա Շո դը Ֆոնում Ժամանակի թանգարան այցելելուց մի քանի ժամ անց: Ո՛չ, ժամացույցը հորիզոնի խորը հատկությունը չէ, այլ ավելացված է աշխարհին, ինչպես նաև լեռնային հովիտներում քողարկված համառ և անկեղծ արդյունաբերությունը, որն այս տիկնիկային տուն հիշեցնող համալսարանին այսքան հարստություն է բերում: Այդ դեպքում, եթե ես ճիշտ եմ, ապա ի՞նչ տիպի աշխարհում է սերֆինգորդը շարժվում: (Այժմ նրա մուգ կետը և եռանկյունաձև թևը կրկին արագորեն սլանում են ուղիղ դեպի ինձ): Ո՛չ, ո՛չ, նա մարդկային, սուբյեկտիվ, հոգեբանական, մտային ժամանակ-տարածության մեջ չէ: Ես ոչ մի կտոր չեմ ուզում այս կտավից, որում «ապրված» աշխարհը՝ ստեղծված չափումներով, իրական, բայց մռայլ իրականությանն ավելացնում է կեղծ, բայց տաք գույներ: (Նա դեռևս լայն ժպտում է՝ արագորեն սլանալով դեպի ափը, կարծես ցանկանում է անմիջապես լճից հավեսով նավարկել դեպի համալսարանի տարածք: Վերջին վայրկյանին նա կտրուկ հեռանում է և կրկին այստեղ

չէ): Սա այն տարածություն-ժամանակն է, որում բնակվում է և շարժվում: Նա ավելի շատ տարածության մեջ չի շարժվում, քան ժամանակի: Նա իրական առավոտներին չի ավելացնում սուբյեկտիվ առավոտներ, իրական լճերին՝ սուբյեկտիվ լճեր: Նա ուսումնասիրում է գոյության ձևերի բազմազանությունը, նա մի քանիսից գնում է դեպի շատը, որևէ ձանձրալի բանից դեպի աշխույժը, թույլ քամուց դեպի ուժգին փոթորիկը, ցածր ինտենսիվությունից դեպի բարձր ինտենսիվությունը: Այո՛, դա այդպես է, նա շարժվում է դեպի հաճույք, ինտենսիվություն, գոյության ձևեր, փոփոխություններ: Եվ եթե ես ցանկանում եմ հաշվել նրա արագությունը, ես կարող եմ, բայց չեմ որոշի նրա աշխարհի խորությունը, ողջ գոյության ետին պլանը. ես պարզապես արդեն եղած բազմաթիվ գույներին կավելացնեմ մեկը, միգուցե մոխրագույնը կամ այլ մի մուգ գույն, ամեն դեպքում՝ մի գույն: Եվ այսպես, ի՛մ սիրելի հոգեբան գործընկերներ, կարիք չկա դառնալ դեպի միտքը կամ սուբյեկտիվությունը՝ սառը և օբյեկտիվ ժամանակից խուսափելու և իմաստի հարուստ «ապրված» աշխարհը գտնելու համար: Հարստությունը գտնելու համար պետք է միայն դառնալ դեպի ինքը աշխարհը, դեպի քամին, ծովը, ետևի ձյունածածկ լեռները, նավահանգստի դիմացի շատ փոքրիկ քաղաքը: «Օբյեկտիվ» ժամանակը և «սուբյեկտիվ» ժամանակը ասես հարկեր լինեն, որ զանձվում են այն ամենից, ինչը մարդացնում է աշխարհը (peoples the world), դրանք ամենևին այն չեն, ինչն անում և տեսնում և իմաստավորում և ցանկանում են այս (մարդկային) զանգվածները: Մենք ստիպված չենք մշտապես ընտրություն կատարել, թե ինչը կորցնենք՝ ժամանակի զգացողությո՞ւնը, թե՞ աշխարհի կառուցվածքային առանձնահատկությունները: Գործընթացներն այլևս ժամանակի մեջ չեն, այլ՝ տարածության: Գործընթացը երրորդ եզրույթ է դառնում, եթե պատկերացնենք, որ սերֆինգորդը շարժվում էր դեպի գոյության ձևերը՝ բացահայտելով դրանց տարբերությունները և փոփոխությունները: Երրորդ եզրույթ: Ի՛մ խեղճ ընկեր, չե՞ս հոգնել երրորդ եզրույթներ փորձարկել, միայն թե լսես լսարանիդ առարկությունը. «Այո՛, բայց արդյո՞ք ժամանակը պարզապես սոցիալական կառույց չէ»: Ո՞վ ասաց նման բան: Համենայն դեպս ոչ ես, բայց

ոչ ոք չի լսում: Գիտության հետ նրանց սեր-ատելություն կապը թույլ չի տալիս տեսնել այլ հնարավորություններ: Եթե դա սուբյեկտիվ չէ, ապա օբյեկտիվ է: Հնարավոր է, որ եթե նրանք հասկանային, որ ես սոցիալական կոնստրուկտիվիստ չեմ, ապա սարսափած կբացականչեին. «Սա խղճուկ մետաֆիզիկա է»: Լավ, շատ եմ ցավում, բայց վախենամ, որ դա այդպես է: (Սերֆինգորդը այժմ վերադարձել է, ծալում է իր սարքավորումը, այն կապկպում է, նա ուրախ է երևում): Ժամանակն է ամփոփել այս հատվածը և լսել ավելին «ապրված» ժամանակ և «իրական» ժամանակ հասկացությունների միջև առկա բազում տարբերությունների մասին:

**Զույգ ճամփորդների պարադոքսը**

Ժան Պիաժեի հարյուրամյակը նշելու նպատակով միասին հավաքվելու համար մեզ անհրաժեշտ է ժամանակի որոշակի *չափում*, օրինակ՝ նրա ծննդյան վկայականը՝ արձանագրված Նևշատելի լավ կազմակերպված բյուրոկրատիայի կողմից, աստղագետների տարեգրքերում և տարբեր գրասենյակներում ներկայացված օրերի և ամիսների հաշվարկները: Մենք պետք է նաև հենվենք արևմտյան ավանդույթի վրա, որը շեշտում է տարեդարձները և 100-ի կամ 1000-ի նման լավ, կլոր թվերը գերադասում է 88-ի, 133-ի կամ 666-ի նման ավելի տարօրինակ թվերից: Այն հատուկ շեշտադրում է ինչ-որ մեկի ծննդավայրը, օրինակ՝ այն քաղաքը, որտեղ հրատարակվել են նրա առաջին գրքերը, կամ որտեղ շնորհվել է նրա առաջին մրցանակը... Պարզապես ճիշտ ժամանակին (1996) և ճիշտ տեղում (Նևշատել) հավաքվելու համար արդեն պարզ է, որ մեզ անհրաժեշտ են քարտեզներ, ինստիտուտներ, արձանագրող սարքեր և ավանդական ծեսեր:

Այն, որ ես լսարանին հիշեցնում եմ այս աննշան մանրամասները, դա հենց սիմպոզիումի սկզբին անքաղաքավարի լինելու և դրա խորագիրը (Միտք և ժամանակ) քննադատելու համար չէ, այլ շեշտելու, որ «ժամանակը» ինչ-որ բան չէ, որը «մտքում է» կամ «մտածված է». այն արմատացած է գրառումների պահպանման տեխնիկական և նյութական երկարատև պրակտիկայում, ինչպես նաև միահյուսված է ինստի-

տուտներին և տեղային պատմություններին: Ժամանակի մասին փիլիսոփայական քննարկումներում ժամանակ*ների* (հոգնակի թվով) արձանագրման և արտադրման աշխատանքը շատ հաճախ է մոռացվում: Ժամանակը արձանագրելու համար մենք պետք է փորփրենք այն հաշվարկող մեքենան, ինչի համար Նևշատելը և դրա տարածաշրջանը հայտնի են ամբողջ աշխարհում: Մեր միջազգային կոնֆերանսի հետաքրքիր պարադոքսն այն է, որ, ի պատիվ տեղացի հերոսի, պետք է ընտրված լիներ ժամանակների չափման, գրանցման և արտադրման թեման, որը լավ հայտնի է շվեդական տնտեսությանը, բայց որը Պիաժեն ամեն կերպ անտեսում էր, անգամ ճնշում իր ողջ գիտական կյանքի ընթացքում: «Ինչպե՞ս ստացվեց, որ ժամանակի արտադրման թեման այդպես էլ *երբեք* չմտավ Պիաժեի ուղեղը» կարող էր լինել իմ՝ մի փոքր շփոթված հիշատակի ելույթի վերնագիրը: Ես չեմ խոսի՝ որպես Պիաժեի գիտակ, քանի դեռ այդպիսինը չեմ, փոխարենը ես կխոսեմ որպես գիտության փիլիսոփա, ում հետաքրքրում է, թե ինչու գիտության մեջ մեծ ուշադրություն չի դարձվում ժամանակի և տարածության արտադրման պրակտիկային, և թե ինչու տեխնոլոգիան չի արել ավելին՝ ժամանակի փիլիսոփայությունը նորացնելու համար: Այս առումով, Պիաժեն ձեռնարկել է դարի ամենաուժեղ ինտելեկտուալ նախաձեռնությունը, այն է՝ անտեսել ժամանակի արտադրությունը և դրա ազդեցությունը փիլիսոփայության վրա:Հոդվածիս առաջին մասում ես պարզապես ուզում եմ ներկայացնել այն, ինչ անվանում եմ զույգ ճանապարհորդների պարադոքս և ուրվագծել մի քանի դասեր, որոնք կարելի է քաղել այս փոքրիկ մտային գիտափորձից՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ ժամանակների միջև երրորդ ուղին բացելու համար: Երկրորդ մասում ես կօգտագործեմ գիտության և տեխնոլոգիայի ուսումնասիրումներից որոշ արդյունքներ՝ տեսնելու համար այն ազդեցությունը, որ դրանք կարող էին ունենալ տարածության և ժամանակի ձևավորման մեխանիզմի վրա: Վերջում ես կանդրադառնամ ֆորմալիզմի և անժամանակության միջև կապին և կփորձեմ պատկերացնել այն պատճառները, որոնք Պիաժեին դրդեցին այդքան շատ կենտրոնանալ ձևերի վրա: Պատկերացրեք երկու երկվորյակներ: Առաջին ճանապարհորդը

մեկնում է խորը ջունգլի և կացնով բացում իր ճանապարհը հազիվ տեսանելի արահետի երկայնքով: Յուրաքանչյուր րոպե նա բացում է ճանապարհի մի քանի սանտիմետր, բայց ծերանում է ավելի քան մեկ րոպեով: Նա քրտնում է: Նրա մարմինը կրում է այդ ջանքերի հետևանքները: Յուրաքանչյուր մետրը կարող է զգացվել փշերից և վայրի ձարխոտից առաջացած արյունոտ սպիներում: Որքան նա հեռանում է, ճանապարհը բացվում է, սակայն նրա մարմնի վրա կտրվածքներ են մնում: Տառապող մարմինը ջանքեր է թափում այլ տառապող մարմինների՝ որթատունկերի, խոտի և փայտերի հետ միասին: Անկասկած, նա իր ողջ կյանքում կհիշի ջունգլիով այս անտանելի ուղևորության ամեն րոպեն: Դա հիշելու պատճառն այն է, որ նա հաղթահարում էր յուրաքանչյուր սանտիմետրը՝ «բանակցելով» այլ մարմինների (ճյուղեր, օձեր, փայտի կտորներ) հետ, որոնք գնում էին այլ ուղղությամբ և ունեին այլ նպատակներ:

Համեմատության համար տեսեք, թե ինչ հարմարավետ էր ճանապարհը մյուս ճանապարհորդի՝ նրա երկվորյակ եղբոր համար, ով, օրինակ, ինձ նման այս կոնֆերանսին եկավ TGV-ով[241]: Նա հանգիստ նստեց առաջին դասի, օդորակիչով ապահովված վագոն և կարդաց իր ամսագիրը՝ ուշադրություն չդարձնելով արագընթաց գնացքի անցած տեղերին, որոնք նրան երևում էին միայն որպես կինոէկրանին արտացոլված բնապատկերներ: Նա ծերացավ երեք ժամով, հենց այնքան, որքան տևեց ուղևորությունը: Նրա մարմինը չզգաց ճանապարհորդության ազդեցությունը, բացի տաբատի վրայի մի քանի «կնճիռներից» և մի փոքր նեղվածքից, քանի որ նա բավականաչափ չէր կարողացել ձգել իր երկար ոտքերը: Նա ոչինչ չի հիշի, բացի օդանավի փոխարեն գնացքով գալու հանգամանքից: Միայն նրա կարդացած հոդվածները կարող են մասամբ վերհիշվել: Ուղևորությունը նրա համար նման էր ոչնչի: Պողպատի բոլոր ատոմները, բոլոր էլեկտրոնները, բոլոր ելքերը, բոլոր անջատիչները, գնացքի անձնակազմի բոլոր ջանքերը, SNCF-

[241] Ֆրանսիական արագաշարժ էլեկտրական գնացքներ – *թարգմանչի ծանոթագրություն*:

ը և CFF-ը[242] *համաձայնեցված* էին *միևնույն* ուղղությամբ՝ արագ ընթանալով ժամանակի մեջ եղած տարածության միջով՝ ենթարկվելով աշխարհահռչակ շվեյցարական ճշտապահությանը մինչև միլիվարկյանը և գրեթե նույնքան հայտնի ֆրանսիական TGV-ի սպասարկման որակին: Ճանապարհին ոչ մի բանակցություն, ոչ մի իրադարձություն, հետևաբար՝ ոչ մի հիշելու բան: «Առանց իրադարձությունների ճանապարհորդություն», ինչպես ասաց նա իր ընկերոջը գնացքից իջնելիս: Ինչո՞ւ եմ ես համեմատում այս երկվորյակներին և նրանց ծերանալու ձևերը: Որովհետև ես ցանկանում եմ մեր ուշադրությունն ուղղել մի երևույթի վրա, որը տրամաբանորեն *նախորդում է* ժամանակի արտադրությանը և կայանում է *տեղափոխման* և *փոխակերպման* հարաբերության մեջ:

Կին ճանապարհորդը յուրաքանչյուր շարժման հետ փոփոխվում է և ծերանում՝ գուցե ընդհուպ կյանքը կորցնելը: Տղամարդ ճանապարհորդը ուղևորությունից ընդհանրապես չի փոխվել: Եվ միայն անհայտ ռումբը կամ, ինչպես կտեսնենք, գործադուլը կարող են ընդհատել նրա սահուն և արագ ընթացքը: Այսպիսով, առաջին ճանապարհորդը տեղափոխումը կնույնացնի ձևափոխման, ծերանալու, պատմության, փոխակերպման, մետամորֆոզի հետ: Երկրորդը կտարբերակի երկու ակնհայտորեն տարաբնույթ երևույթներ. մի կողմից տարածության միջով ժամանակի մեջ շարժվելը, մյուս կողմից՝ ծերանալը, ապրելը, տառապելը, իրադարձությունների մասնակից լինելը: Քանի որ տեղափոխման և փոխակերպման միջև հարաբերությունը երկու դեպքում էլ տարբեր է, ես ուզում եմ համաձայնել, որ ժամանակի և տարածության արտադրությունն *ամբողջությամբ* կտարբերվի: Առաջին ճանապարհորդը չի տարբերակի տարածությունը, ժամանակը և ծերացումը: Մենք նրան կանվանենք գործընթացային չտարբերակում (indifferentiation processual): Նրա զույգ եղբայրն առանց որևէ դժվարության կտարբերակի, թե ինչն է տեղափոխված անփոփոխ շրջանակից, *որի մեջ* այն տեղափոխված է:

[242] Շվեյցարական ֆեդերալ երկաթուղիներ – *թարգմանչի ծանոթագրություն*:

Մի կողմից, ժամանակի և տարածության, մյուս կողմից, ամբողջությունների, էակների կամ իրադարձությունների տարանջատումը հիմնարար տարբերակում *չէ*, բայց ստեղծված է *որոշ* ճանապարհորդների կողմից շատ յուրահատուկ և պատմականորեն տեղակայված տեղափոխման միջոցներում (օրինակ՝ սա դժվար է գտնել չինական մտածողության մեջ՝ ըստ Ժուլյենի[243]): Հետևաբար ժամանակը քննարկելիս մենք ստիպված չենք բացառիկ ուշադրություն դարձնել երկու հիմնական դիրքերի վրա, որոնք զբաղեցրել են ժամանակակից փիլիսոփաները: Ժամանակը և տարածությունը նյուտոնյան *սենսորիաները* չեն, որոնցում դեպքերը տեղի են ունենում, և մոլորակներն ընկնում են էլիպսների երկայնքով: Բայց նրանք նաև մեր ընկալման ձևերը կամ համընդհանուր *ապրիորիները* չեն, որոնք մեր ուղեղը ստիպված են օգտագործել գոյության և ամբողջությունների բազմազանությունը շրջանակավորելու կամ տեղակայելու համար: Դրանք պարզունակ եզրույթներ չեն, այլ ընդհակառակը՝ մարմինների փոխհարաբերման ձևերի *հետևանք* են: Այսպիսով, մենք մեր խորհրդածությունը կկապենք երրորդ ավանդույթի հետ՝ Լեյբնիցյան, որը տարածությունը և ժամանակը դիտարկում է՝ որպես տարբեր կազմավորումների միջև որոշակի փոխհարաբերության արտահայտություն: Բայց մեկ Տարածություն-Ժամանակի փոխարեն մենք կստեղծենք այնքան տարածություն*ներ* և ժամանակ*ներ*, որքան այդօրինակ հարաբերությունների տիպերն են: Այսպիսով, արահետներով առաջ ընթանալը չի ստեղծի միևնույն տարածություն-ժամանակը, ինչպես հանդարտ տեղափոխումը ցանցերի միջով: Հսկայական տարբերություն է ստեղծվում՝ կախված նրանից՝ այդ մարմինները տառապո՞ւմ են արդյոք այլ տառապող մարմինների շրջանում, թե՞ հանգիստ տեղափոխվում են հարմարավետ, օդորակիչներով հագեցված արագընթաց գնացքով:

Ինչո՞ւմն է այդ տարբերությունը: Արդյո՞ք մենք կարող ենք այն էլ ավելի որոշակիացնել: Այո՛, որովհետև ես սխալ նկարագրեցի տղամարդու ուղևորությունը: Իր հանգիստ ճանապարհորդության ժամանակ տեղի ունեցավ այն, ինչը ցնցեց նրան և խախտեց ուղևորության

[243] Jullien, F. (1992). La propension des choses [The propensity of things]. Paris: Le Seuil.

ընթացքը՝ դարձնելով այն հիշարժան: Գնացքն անցնում էր 150 կմ/ժ արագությամբ՝ առանց կանգնելու անգամ Կյուլոզում՝ վայր, ուր Ալպեր և Շվեյցարիա ընթացող գնացքները սովորաբար կանգնում էին մի քանի տարի առաջ: Նա հիշեց իր մանկության ճաշարանը, տախտակամածը, որը ճանապարհ էր բացում դեպի Բուրժե լիճը, որտեղ փոքր ժամանակ սիրում էր լողալ ընտանիքի հետ միասին: Այն, ինչ ժամանակին կարևոր *վայր* էր, դարձել էր գոյություն չունեցող, չտարբերակվող *անթարթ* գնացքի ճանապարհին: Մեր ճանապարհորդի համար իրադարձություն էր հենց այն փաստը, որ այս կայարանում այլևս ոչինչ չէր կարող դարձնել այս վայրը իրադարձային, հիշարժան, նշանակալի ուղևորներից որևէ մեկի կյանքում: Նրանք պարզապես սլացան դրա միջով ուժեղ աղմուկով: Ավելին, այս փոքրիկ քաղաքի տեղաբնիկներն, ովքեր նախկինում պատիվ ունեին գնացքը կանգնեցնելու, նստելու կամ դրանից իջնելու, այժմ իրենց քաղաքը բաժանել էին երկու մասի և այլևս չէին կարող հատել կամ կանգնեցնել գնացքը: Կայարանի երկայնքով տարածված նրանց կապերը, որոնք նման են մեր առաջին ճանապարհորդի լիանաներին, փակում են ճանապարհը՝ ստիպելով ճանապարհորդին շրջանցել, ընդունել հետաձգումները, սպասել ավելի ուշ գնացքներին: Այժմ նրանք ավելի շատ են նմանվել բաց ջունգլիի միջով անցնող արահետի, որը կինը հաղթահարում էր՝ ծառերը և լիանաները կտրելով: Այս փոքր կայարանը, որը հաշվի էր առնվում, այլևս հաշվի մեջ չէ: Եթե առաջ այն ընդհատում էր ուղևորությունը, ապա այլևս չի ընդհատում: Եթե առաջ այն կայարան էր, ապա այլևս կայարան չէ: Հավասար շարված ռելսերը այժմ ընթանում են միայն մեկ ուղղությամբ՝ Փարիզից դեպի Ժնև:

Այսինքն, մեր երկու ճանապարհորդների տարբերությունը գալիս է *ուրիշների քանակից*, որը նրանք պետք է հաշվի առնեն, և այդ ուրիշների *բնույթից*: Նրանք անաղմուկ, պատմություն չստեղծող, իրենք իրենց սահուն ուղևորությանը հանձնող և լավ համաձայնեցված *ուղեկցորդնե՞ր* (intermediaries) են, թե՞ իրենց սեփական հասկացություններում ճանապարհները և ճակատագրերը սահմանող ամբողջական *միջնորդներ* (mediators): Արդյո՞ք նրանք քիչ թե շատ նույնն են, ինչ

ուղեկցորդները, թե՞ իսկապես ուրիշ են, ասել է թե՝ միջնորդներ: Ժամանակի ընտրությունը կախված է այս տիպի գոյաբանական տարբերությունից, այլ ոչ թե գիտակցությունից: Եթե մեր գոյության համար այլ կազմավորումներ են անհրաժեշտ (զարմանալի է), ապա տարածությունները և ժամանակները կշատանան: Հակառակ դեպքում, ժամանակները և տարածությունները կնվազեն մինչև մեկ ժամանակ-տարածություն կամ նույնիսկ, ինչպես կտեսնենք վերջում, մինչև ո՛չ ժամանակ և ո՛չ տարածություն, այլ միայն *ձևեր*:

Այսինքն՝ այժմ մենք կարող ենք մեր զույգին տեղադրել մեկ չափման մեջ, որը հաշվի է առնում փոխակերպման հարաբերությունը տեղափոխման վրա կամ այլ կերպ ասած՝ միջնորդների թվի համեմատությունը ուղեկցորդների թվին: Բայց եթե մենք ցանկանում ենք խուսափել սուբյեկտիվ և օբյեկտիվ ժամանակի միջև սովորական հակադրությունից, կարող ենք ավելի հեռուն գնալ և պատկերացնել երկրորդ չափման գոյությունը՝ ժամանակ-տարածության արտադրման շուրջ մեր քննարկումը զարգացնելու համար: Այս երկրորդ չափումը սահմանելու համար մենք կարող ենք մեր երկվորյակների կենսագրությունները միավորել նույն սցենարում և պնդել, որ մի դիրքից մյուսին հասնելու համար անհրաժեշտ է *աշխատանք*: Պատկերացրեք, օրինակ, որ կինը մի ընկերության կողմից ուղարկված հետազոտող է, ով ուսումնասիրում է արագընթաց գնացքի ապագա ճանապարհը, որը մի քանի տարի անց կպլանավորվի, կնախագծվի, կորոշվի, կկառուցվի, հաջողությամբ ավարտին կհասցվի և վերջում կօգտագործվի իր մոռացկոտ երկվորյակ եղբոր կողմից հարմարավետ համարում երթևեկելիս: Յուրաքանչյուր տեղանք, յուրաքնաչյուր վայր, որը նախկինում արգելակում կամ դանդաղեցնում էր քրոջ շարժումները՝ ստիպելով նրան ծերանալ և տառապել ճանապարհը բացելիս, հետագայում կվերածվի լավ համաձայնեցված ուղեկցորդի, որն իր ուժերը, նպատակները, կամքը կծառայեցնի հեռվից եկող և լույսի նման արագ սլացող գնացքի ճանապարհին: Յուրաքանչյուր ծառ, տուն, խրճիթ, որթատունկ արագընթաց գնացքի ճանապարհով բաժանված է երկու մասի, և այդ *պատճառով* է, որ գնացքն արագ է գնում: Ինչո՞ւ: Որովհետև

նրան ոչինչ չի ընդհատում կամ դանդաղեցնում: Արագությունը սկզբունքորեն կախված է միջնորդների թվի ուղեկցորդների թվի վրա ունեցած հարաբերությունից: Գնացքի արագությունը և ուղևորի՝ առանց իրադարձությունների ուղևորությունն ամբողջությամբ կախված են այն վայրերի ամբողջական *հնազանդությունից*, որտեղով անցնում է, և իհարկե նաև լավ կազմակերպված երկաթուղային ընկերությունների սահուն գործառությունից, որը, ինչպես ասվում է, «աշխատում է ժամացույցի պես»:

Լավ, սա այնքան էլ ճիշտ չէ, քանի որ մեր պատմությունը կարող է նաև այլ ուղղությամբ ընթանալ: Գծով երկու մասի բաժանված քաղաքի բնակիչները կարող են որոշել բողոքել և ցույց անել՝ նստելով երկաթուղու վրա կամ նույնիսկ ռելսերի վրա գերաններ գցելով և դրանք կրակի տալով (իհարկե, ոչ Շվեյցարիայում, ինչն անհավատալի կլիներ, այլ, ասենք, ֆրանսիական հատվածում): Հետո ի՞նչ կլիներ: Գնացքի ուղևորները հանկարծակի կսկսեին ծերանալ: Նրանք կարգելափակվեին նախկինում անիմաստ համարվող այս գյուղակում, որը հենց այս ապստամբության պատճառով է դարձել վայր, տեղ, որը մենք կարող էինք անվանել իրադարձություն արտադրող *տոպոս*: Ճակատագրի գերիներ դարձած ուղևորները կսկսեն հիշել ուղևորությունը: Նրանք կսկսեն զգալ ժամանակի ընթացքը, կսկսեն զգալ՝ ժամանակը դանդաղ է գնում, թե արագ: Նրանք կսկսեն ունենալ «ապրված» ժամանակի և տարածության տպավորություն, որը նախկինում չեն զգացել, երբ գնացքն արագ, առանց իրադարձությունների էր սլանում: Ավտոբուսները նրանց հեռու կտանեն կայարանից, և նրանք ժամեր կկորցնեն զայրացած ցուցարարների պատճառով, ովքեր էլ, մյուս կողմից, «պատմություն կերտելիս», կհպարտանան իրենց ուժով և կրկին կգիտակցեն, որ չէին ապրում «ոչ մի տեղ» վայրում, որը կարելի է այնպիսի արագությամբ անցնել, իբրև թե այն պարզապես առաջ տանող ճանապարհ է, կհասկանան, որ այն հիշարժան կետ է, որի հետ պետք է հաշվի նստել և բանակցել: Օգտագործենք մեկ այլ կլիշե՝ բարկացած ցուցարարները հպարտ կլինեն, որ իրենց գյուղը նշել են «քարտեզի վրա»: Թույլ տվեք մեր պատմություն հասցնել իր ավարտին: Պատկերացրե՛ք

ապստամբություններ ուղնորության բոլոր կետերում, երկաթուղու յուրաքանչյուր կայարանում, իսկ հետո նաև յուրաքանչյուր ճանապարհին գործադուլավորներին շրջանցելու համար բերված ավտոբուսներ: Ի՞նչ կպատահեր: Լավ, մենք *հետ* կվերադառնայինք ջունգլի, որից սկսեցինք: Յուրաքանաչյուր սանտիմետր պետք կլիներ հաղթահարել, և ցանկացածի համար անհնար կլիներ ուղիղ գնալ դրա միջով՝ առանց խորապես և տևականորեն փոփոխվելու: Յուրաքանչյուր տեղափոխման համար պետք կլիներ վճարել մեծ փոխակերպմամբ, տևական և հիշվող մետամորֆոզներով: (Չնայած իմ պատմությունը հորինված զիտափորձ է, ես Ամազոնում տեսել եմ ջունգլիով պատված նախկին մայրուղի, որն ավելի անանցանելի էր, քան այն իրական արահետը, որով հնդկացիները վախեցել են քայլել):

Այժմ իմ փոքրիկ պատմությունը հարստացված է չորս իրավիճակով.

1. կին ճանապարհորդը ջունգլիներում,
2. տղամարդը արագընթաց գնացքում,
3. հաջորդական *անցումը* արահետից դեպի արագընթաց երկաթուղային ցանց, և, վերջապես,
4. *հակադարձ* անցումը ցանցից դեպի ջունգլի, որտեղ յուրաքանչյուր շարժում պետք է լինի կանխամտածված և դժվարությամբ հաղթահարված:

Ստացվում է, որ այժմ տարածության և ժամանակի կառուցումը քննարկելիս մենք պետք է հաշվի առնենք երկու չափումներ: Առաջինը որոշում է փոխակերպման հարաբերությունը տեղափոխման վրա, իսկ երկրորդը՝ տեղափոխվելու համար անհրաժեշտ աշխատանքի հարաբերական *տեսանելիությունը*: Սա մեզ տալիս է Պատկեր 1-ում ներկայացված դիագրամը:

*Պատկեր 1*

<u>Փոխակերպում</u>




Առաջին ճանապարհորդը ստեղծում է միջնորդություններ (mediations), նա տեսնում և զգում է փոխակերպման աշխատանքը և անկարող է տարբերակել մի կողմից տարածությունն ու ժամանակը, մյուս կողմից՝ շարժվող մարմինները: Նա չի տարբերակում իր սեփական տանջվող մարմինը մյուս բոլորից, որոնց միջով անցնելու համար աշխատանք է կատարում: Ինժեները տեղյակ է հաշվարկներ անելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակի, չափման համակարգերի, սահուն տեղափոխման մասին, բայց նրա ողջ էներգիան ուղղված է նրան, որ սովորական ինստիտուտները, որոնցից կախված են այս տեղափոխումները, աշխատեն «ժամացույցի պես»: Երկրորդ ճանապարհորդը առանց դժվարության տարբերակում է շարժվող մարմինը սահուն գործառող հաշվարկման համակարգերից, քանի որ ուրիշների աշխատանքը իր համար անտեսանելի է, և քանի որ ոչ մի փոխակերպում չի ստիպում վճարել իր տեղափոխության համար, իհարկե, բացի տոմսի գնից: Նրա համար, ինչպես բոլոր այն հրեշտակային ֆիզիկայի փիլիսոփաների համար, որոնք խաղում են Գիշերվա թագուհու դերը[244], «ժամանակը նման է ոչնչի»: Զանգվածային բողոքի պատճառով հանկարծակի կանգ առած գնացքի ուղևորը տեսնում է միջնորդության

[244] Stengers, I. (1996). Cosmopolitiques. Tome 2, L’invention de la mécanique: pouvoir et raison [The invention of mechanics: Power and reason]. Paris: La Découverte & Les Empêcheurs de penser en rond.

աշխատանքը այնքան, որքան նյուտոնյան փիլիսոփան: Բայց նա զգում է ժամանակի ընթացքը և տարածության կարևորությունը: Նա, տեղյակ լինելով, որ անցյալի անժամանակության և անտարածության մեջ ինչ-որ բան սխալ է գնացել, ուշադրությունը կենտրոնացնում է իր «ապրված» ժամանակի և տարածության վրա, ասես սա ինչ-որ հոգեբանական, մարդկային, սուբյեկտիվ երևույթ էր: Ժամանակի փիլիսոփայության շրջանակներում ծավալվող բանավեճերի մեծ մասը կիսակադրի գնացքի երկու ուղևորներին (դիագրամի ուղղահայաց աջ կողմում)՝ առանձնացնելով նրան, ում համար ժամանակ չկա, և նրան, ով թաքցնում է ժամանակի սուբյեկտիվ զգացողությունը: Բայց եթե մենք իջնենք գնացքից և մեր ուշադրությունը կենտրոնացնենք նաև գնացքի ճիշտ ժամանակին մեկնելու համար պատասխանատու ինստիտուտների, տարածությունը և ժամանակը տեղում որոշող ցուցարարների և այն գործընթացների վրա, որոնց միջոցով այդ ինստիտուտները կառուցվում են կամ այդ շարժումները լռեցվում են[245], մենք կկարողանանք բանավեճերին ավելացնել մեկ այլ չափում: Որո՞նք են դասերը, որ կարող ենք քաղել մեկի փոխարեն երկու չափումով մտածելու պարագայում:

1. Առաջին, սուբյեկտիվ և օբյեկտիվ ժամանակի տարբերակումը պատմության (story) միայն մի մասն է: Այն անհանգստացնում է միայն գնացքի ուղևորներին: Օբյեկտիվ կամ գիտական ժամանակի գաղափարի մեջ իրար են խառնված երկու ամբողջությամբ տարբեր երևույթներ. ինժեների սովորական աշխատանքը խոշոր ինստիտուտներում և դրա արդյունքներից օգտվողի զգացողությունը, ում *թույլատրված է* ամբողջությամբ *մոռանալ* ժամանակ ստեղծելու աշխատանքի մասին, *որովհետև* ինժեներները օր ու գիշեր հետևում են իր ուղևորության անվտանգությանը: Նույն կերպ սուբյեկտիվ կամ «ապրված» ժամանակի գաղափարի մեջ երկու բացարձակապես տարբեր հարց է

[245] Lolive, J. (1997). La mise en oeuvre controversée d'une politique de réseau: Les contestations du TGV Méditerranée [Establishing a network policy: The challenges to the TGV Méditerranée]. Thèse de doctorat, Université Montpellier I.

խառնված. օգտվողի զգացած զարմանքը, երբ ժամանակի մեքենայի սահուն ընթացքն ընդհատվում է, և այդ գործընթացներում ընդգրկվածների աշխատանքն այնքան տեսանելի է դառնում, որ սուբյեկտիվության և օբյեկտիվության տարբերությունը հնարավոր չէ անգամ նկատել:

2. Երկրորդ, ժամանակն ինքնին առաջնային երևույթ չէ: Ժամանակն անցնում է կամ *ոչ*, կախված է այլ կազմավորումների համաձայնեցվածությունից: Ուղեկցորդների ստեղծված աշխարհում՝ առանց փոխակերպման տեղափոխության, գոյություն ունի տարածությունից անջատված ժամանակ, տեղափոխությունները չափելու անփոփոխ փրեյմ և, ըստ էության, ոչ մի գործընթաց: Միջնորդի ստեղծած աշխարհում՝ տեղափոխում ձևափոխման միջոցով, գոյություն ունեն շատ ժամանակ*ներ* և տեղ*եր*: Ժամանակից ավելի խորն է մարդկանց կամ ոչ մարդկանց հնազանդության և անհնազանդության հարցը:

3. Երրորդ, *իրադարձության* գաղափարը չի կարող բաժանվել տարածական և ժամանակային բաղադրիչների: Եթե տեղը համարվում է ոչ տեղ, այն համարվում է նաև ոչ իրադարձություն: Տեղը ժամանակից ավելի հեշտ հասկանալի հատկություն չէ: Երբ տեղը համարվում է *topos*, այն համարվում է նաև *kairos*: Ժամանակից և տարածությունից մեկ այլ, ավելի խորը հարց կա՝ ո՞վ կամ ի՞նչն է համարում: Ո՞ր ակտանտները ո՞ր ուրիշներին կարող են ընդհատել, ձևափոխել, միջամտել, հետաքրքրել՝ այդպիսով բազմաթիվ *topoi-kairoi* ստեղծելով:

4. Չորրորդ, եթե խոսենք սեմիոտիկների նման, ապա կարող ենք ասել, որ յուրաքանչյուր հաշվարկում միշտ միաժամանակ *երեք* անցում է արվում՝ անցում տարածության մեջ, անցում ժամանակի մեջ և անցում դերակատարի կամ ակտանտի մեջ. վերջինը փիլիսոփայական կամ հոգեբանական քննարկումներում միշտ մոռացվում է: Օրինակ, երբ ես ձեզ պատմեցի ջունգլիում կին ճանապարհորդի մասին փոքրիկ պատմությունը, ես ձեզ՝ ունկնդիրներիդ, ուղարկեցի միանգամից երեք տարբեր

առանցքներով. մեկ այլ ժամանակ, մեկ այլ վայր, ինչպես նաև մեկ ուրիշի բնավորության մեջ[246]: Ժամանակի և տարածության հարցից ավելի խորն է հենց *անցման*, պատվիրակման, ուղարկման, փոխանցման գործողությունն ինքնին: Մենք պետք է խոսենք ոչ թե ժամանակի, տարածության կամ ակտանտի մասին, այլ ժամանակայնացման, տարածքայնացման, ակտանտայնացման (temporalization, spaciatization, actantialization) մասին (բառերը սարսափելի են) կամ ավելի նրբագեղորեն՝ ժամանակը հաշվարկելու, տարածականացնելու և գործելու (tim*ing*, spac*ing*, act*ing*):

5. Հինգերորդը և վերջինը. ժամանակը հաշվարկելու, տարածականացնելու և գործելու հարցը միշտ պետք է միահյուսվի նրանց *ինտենսիվության* հարցի հետ: Դա իրադարձությո՞ւն է, թե՞ ոչ իրադարձություն: Գործընթացն ինքնին ժամանակի հետ ավելի շատ կապված չէ, քան տարածության: Դա ոչ թե չորրորդ, այլ *հինգերորդ* չափումն է: Մենք դա շատ լավ գիտենք ժամանակի վերաբերյալ, քանի որ օգտագործել ենք (առնվազն Հյուսերլից սկսած) «պատմականության» գաղափարը՝ այն ժամացույցով չափվող ժամանակի սովորական ընթացքից տարբերակելու համար (սրա մասին ավելի ուշ կխոսենք): Սակայն նույնը պետք է արվի նաև տարածության համար, թեև, ի տարբերություն ժամանակի, տարածության համար չկա այդպիսի լայն և ընդունված եզրույթ: Տարածության մեջ՝ *topoi-kairois*-ում, գոյության ինտենսիվությունը տարբերակելու համար քարտեզի վրա սովորական կերպով տեղակայված լինելու փոխարեն մեզ անհրաժեշտ կլիներ մի այնպիսի հստակ եզրույթ, ինչպիսին պատմականությունն է: Երբ, ինչպես վերը նշված միջադեպում, ոչ տեղը դառնում է կենտրոնական տեղ՝ *chief-lieu*, տոպոս, մենք պետք է կարողանանք ասել, որ այն ձեռք է բերում «տարածա-

[246] Greimas, A. J., Courtès, J. (Eds.). (1979). Sémio- tique. Dictionnaire raisonné de la théorie du langage [Semiotics. Analytical dictionary of language theory]. Paris/Bloomington: Hachette/Indiana University Press.

կանություն» («specificity»՝ «a»-ով կամ «*mèdiance*» ինչպես առաջարկել է Ավգուստին Բերկը[247]) կամ «տեղակայվածություն» («situatedness»): Նույնը վերաբերում է նաև ակտանտության անցմանը: Մենք պետք է կարողանանք ունենալ բառ, որը մի ակտանտից դեպի մյուսը շարժումը (էքստենսիվ կրկնություն) կտարբերակի բոլոր ակտանտների ձևափոխումից (ինտենսիվ կրկնություն): Ցավոք, այդպիսի եզրույթ գոյություն չունի: Քանի որ մենք չունենք հասկացությունների նման եռյակ, ես կօգտագործեի իմ փոքրիկ պատմության մեջ օգտագործված պարզ հակադրությունները՝ արահետի ստեղծում և ցանցային հետևում, տեղափոխմանը *զուգահեռ* փոխակերպում և *առանց* ձևափոխման տեղափոխություն, ինչպես նաև կօգտագործեմ «ինտենսիվություն» բառը՝ այս հինգերորդ չափումը հայտնաբերելու համար:

Այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Բերգսոնը, որը տարբերակում է տարածականությունը և տևողությունը, Պեգին, որը հակադրում է պատմաբանների պատմությունը և իրադարձությունների պատմությունը[248], Ուայթհեդը, որը շեշտը դնում է գործընթացի վրա[249], Դելյոզը, որն իր վաղ աշխատանքներում անդրադառնում է տարբերությանը և կրկնությանը[250], մտահոգված էին ժամանակի *ինտենսիվության* և դրա *տարածման* միջև հակադրության հարցով: Գործընթացի հինգերորդ չափումը հայտնաբերելու համար նրանց պատկերացումներն օգտագործելու դժվարությունն այն է, որ նրանք պայքարում են այն բանի հետ, ինչը դիտարկում են որպես ժամանակի և տարածության գիտական սահմանում, ինչպես նաև խուսափելու համար նրանից, ինչը դիտարկվում է որպես գիտության կողմից ստեղծված անօտարելի տա-

---

[247] Berque, A. (1993). Du geste à la cité. Formes urbaines et lien social au Japon [From gesture to city. Urban forms and social ties in Japan], Paris: Gallimard.

[248] Péguy, C. (1961). Clio dialogue de l’histoire et de l’âme païenne. Oeuvres en prose [Clio dialogue on history and the heathen soul. Prose works]. Paris: Gallimard.

[249] Whitehead, A. N. (1929/1978). Process and Reality. An Essay in Cosmology. New York: Free Press.

[250] Deleuze, G. (1968). Différence et répétition [Difference and repetition]. Paris: PUF.

բածականացում, նրանք միշտ անարդարացիորեն ժամանակը գերադասում են տարածությանը, ասես գործընթացն ինչ-որ կերպ ավելի հեշտությամբ կապված է առաջինի, այլ ոչ թե վերջինի հետ: Այս հոդվածի երկրորդ մասում ես ցանկանում եմ ուշադրությունը տեղափոխել տարածության և ժամանակի արտադրման աշխատանքի վրա՝ գնալով վերը բերված դիագրամի աջ կողմից դեպի ձախը՝ հրաժարվելով գիտական պրակտիկայից այն նույն պատճառով, որով հրաժարվեցինք օբյեկտիվ ժամանակից և տարածությունից: Ես նաև ցանկանում եմ կարգավորել տարածության և ժամանակի միջև առկա անհավասարակշռությունը՝ օգտագործելով տեխնոլոգիայի ուսումնասիրություններում արված վերջին աշխատանքները:

**Մշակելով ժամանակը և տարածությունը**

Եթե ես վերցրած լինեի գնացքի դեպքը և հորինեի զույգ ճանապարհորդներին ներառող մեկ այլ պարադոքս, դա այն պատճառով չէր լինի, որ ես TGV-ի կամ Վերին Էնգադինի Նիցշեյան հովիտ տանող «Rätische Bahn»-ի մեծ երկրպագու եմ, ոչ էլ դա կլիներ ի պատիվ Ցյուրիխից ամենահայտնի շվեյցարացի ինժեներ Ալբերտ Էյնշտեյնի, ով տարված էր փամփուշտներով, գնացքներով և ժամացույցներով: Այն, ինչ ես պատրաստվում եմ ասել, պարզ կլինի La-Chaux-de-Fonds ժամացույցների խանութին, Ժնևի երկաթուղային ընկերության կառավարիչներին, Ցյուրիխի բանկիրներին: Տարածություն-ժամանակ-դերակատար որոշակի տիպի արտադրությունն, ըստ էության, կախված է ինտերվալները *հաշվելու* մեր կարողությունից՝ հենվելով մարմինների վրա, որոնք միջնորդության միջոցով *անփոփոխ* մնալու տարօրինակ յուրահատկություն ունեն՝ մոլորակներ, ընկնող քարեր, ճոճանակներ, փամփուշտներ, սանդղակներ, երկրաչափական մարմիններ և, իհարկե, գնացքներ, ավտոմեքենաներ, արբանյակներ, հաշիվներ: Ինչպես դա ուսումնասիրվել է բազում տարբեր գիտնականների կողմից, ինչպիսիք են՝ Դեյվիդ Լանդեսը[251], Օտտո Մայերը[252], Դենիել Հեդրիքը[253],

[251] Landes, D. (1983). Revolution in time: Clock and the making of the modern world. Cambridge MA: Harvard University Press.

Սայմոն Շաֆերը[254], Վոլֆգանգ Շիվելբուշը[255], Էվիատար Զերուբավելը[256] և Ջեֆրի Բոուքերը[257], մեր քաղաքակրթության համար առանձնակի կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես կարելի է լավագույնս տեղափոխել ինչ-որ բան առանց այն ձևափոխելու. սա այն է, ինչ ես անվանում եմ «անփոփոխ մոբիլություններ»[258]: Հաստատուններ (constants) գտնելու համար այն ամենի, ինչը վերցնում ենք մեզ հետ և ինչը դիմադրում է ձևափոխմանը տեղափոխության պայմաններում, ամեն ինչ կարելի է զոհաբերել, անգամ, ինչպես Էյնշտեյնի հարաբերականության դեպքում էր, հենց Էվկլիդեսյան տարածության և ժամացույցային ժամանակի սահմանումը: Պիաժեն, իհարկե, կիսում է ոգևորությունը այնքանով, որքանով տեղափոխության միջոցով հաստատունները պահպանելու կարողությունը վերածում է գիտակցության սահմանմանը և դրա հաջողված փուլերը տարբերակելու լավագույն եղանակի: Ինչպես կտեսնենք վերջում, նա ամեն ինչ, իսկապես *ամեն ինչ*, կզոհաբերի հանուն հաստատունների այս պահպանմանը:

Տեղափոխումն առանց ձևափոխման՝ որպես աշխարհի ակնհայտ հատկություն վերցնելու փոխարեն, ինչպես բազմաթիվ ժամանակի փիլիսոփաներ և գնացքի ուղևորներ հակված են անելու, ես պարզապես ցանկանում եմ ժամանակի և տարածության արտադրման վերաբերյալ այս հարուստ գրականությունն օգտագործել ժամանակի հինգերորդ չափումն իր սուբյեկտիվ և օբյեկտիվ մեկնաբանություններից

252 Mayr, O. (1986). Authority, liberty, an automatic machinery in early modern Europe. Baltimore: John Hopkins University Press.

253 Headrick, D. R. (1988). The tentacles of progress: Technology transfer in the age of imperialism, 1850-1940. Oxford: Oxford University Press.

254 Schaffer, S. (1994). Barbage's intelligence: Calculating engines and the factory system. Critical Inquiry, 21, pp. 202-227.

255 Schivelbusch, W. (1977). The railway journey. The industrialization of time and space in the 19th century. Berkeley: California University Press.

256 Zerubavel, E. (1985). The Seven Day Circle. The History and Meaning of the Week. London: Collier MacMillan.

257 Bowker, G. (1995). Second nature once removed: Time, space and representations. Time and Society, 4, pp. 47-66.

258 Latour, B. (1987). Science in action: How to follow scientists and engineers through society. Cambridge MA: Harvard University Press.

ազատելու համար: Ինչպե՞ս է փոխվում քննարկումը, երբ դարձյալ տեսանելի է դառնում գիտական փաստեր և տեխնիկական արտեֆակտեր կառուցելու համար անհրաժեշտ աշխատանքը: Նախևառաջ, պետք է *spacing*-ը բարձրացնել նույն փիլիսոփայական պատվավոր դիրքին, ինչպես *timing*-ը:

*Spacing*-ը և *timing*-ը հեռու են առողջ բանականության հասկացություններ լինելուց, և իրականում բավականին բարդ է դրանց մասին առանձին-առանձին պատմելը: Տարածության և ժամանակի միջև տարբերությունն ի՞նչ տիպի աշխատանքի միջոցով ենք մենք ստեղծում: Հարցն այնքան պարզունակ չէ, որքան թվում է: Օրինակ, լեգենդար հրեա ճամփորդը չի կարող տարբերակել այս երկուսը. նրա ճանապարհի ամեն մի կետ նաև ժամանակ է: Քանի որ նա երբեք նույն ճանապարհով ետ չի գնում, երբեք նույն տեղում չի մնում, երբեք չի հաստատվում, երբեք չի վերադառնում, նրա համար «տեղի» և «ամսաթվի» գաղափարների տարբերակումը իմաստ չունի. բացառություն է միայն Երուսաղեմ քաղաքը, ուր նա կհասնի «հաջորդ տարի»: Նրա երթուղին կազմված կլիներ շարունակական իրադարձությունների «ժամանակ-տեղեր»-ից: Միայն այն պատճառով, որ մենք նորից ու նորից *հետ* ենք դառնում նույն տեղը, մենք երաշխավորում ենք տեղի, *տոպոսի* գաղափարի գոյությունը. այն շարունակվում է և մնում նույնը, մինչդեռ մենք շարժվում ենք: Շատելպերոնի ամրոցի չափը հեռավորության վրա անդառնալիորեն փոքրանում է, երբ շրջող ճանապարհորդը դրանից հեռանում է: Այսպիսով, դա նույնքան ժամանակի մաս է, որքան այն մեկ ժամը, որ ճանապարհորդն անցկացրեց քայլելով: Միայն երբ քայլողը շրջվում է և ետ գնում, ամրոցի չափը շրջվում է և կրկին սկսում մեծանալ. միայն այդ ժամանակ է, որ ճանապարհորդը կարող է եզրակացնել, որ սա տեղ է, այլ ոչ թե միայն ժամանակ: Նրա ծերացող մարմնի անդառնալիության և ամրոցի չափի փոփոխելիության համեմատության մեջ է, որ տարածություն *և* ժամանակ արտահայտությունն իմաստ ունի ինչպես տարածության՝ իբրև «համագոյությունների շարքի» և ժամանակի՝ իբրև «հաջորդականությունների շարքի» սովորական սահմանումներում: «Ես փոխվել եմ, իսկ ամրոցը՝

ոչ, այսպիսով, գոյություն ունի տարածություն, ինչ-որ ավելի երկարատև տեղանք, որում ես շարժվում եմ և ծերանում». տարածությունը չափում է առաջարկում ժամանակի համար, իսկ ժամանակը՝ տարածության:

Վերը նշված մեր սկզբունքի համաձայն՝ մենք չենք կարող ասել, որ ամրոցը տարածության մեջ է, քանի որ մենք պնդում ենք, որ ժամանակները և տարածությունները (դիագրամի աջ կողմը) առաջանում են որոշակի տիպի աշխատանքից կամ սովորաբար անտեսանելի մնացող որոշ տեսակի մարմինների տեղափոխությունից: Պետք է ասենք, որ ճանապարհորդի տեղափոխությունը՝ վերադարձը, ամրոցը դրեց տարածության մեջ՝ հանելով այն ժամանակից, ուստի այս տիպի շարժումն, այսպես ասած, «տարածականացրեց» այն: Բայց ինչո՞ւ է ամրոցը նույնությամբ շարունակում համա-գոյություն (co-exist) ունենալ այնտեղ երկու ժամ անց, երբ ճանապարհորդն արդեն հասցրել էր անցնել լեռան ստորոտը: Անշուշտ, սա նույնպես պետք է հաշվի առնել: «Իսպանիայի ամրոցները», «ամպերի ամրոցները» այս կարողությունը չէին ունենա: Եթե ամեն ինչ նույն *արագությամբ* փոխվեր, ինչ ճանապարհորդի տեղափոխությունը, նա երբեք չէր կարողանա չափել ձևի շրջելիությունը, նույնսիկ եթե ետ շրջվեր: Նա ծերացած կլիներ, բայց ամրոցը նույնպես այնքան տարբեր կլիներ, որ նա երբեք չէր կարողանա վստահ լինել, որ դա մեկ այլ ամրոց, ժամանակ-տարածություն չէ: Անգամ Հերակլիտի հանրահայտ գետը չէր հոսում նույն արագությամբ, ինչ գետափը: Այստեղ մենք բախվում ենք այն տեխնիկաների կարևորությանը, ինչը ես կսահմանեմ որպես ժամանակների և տարբեր որակներ ու արագություններ ունեցող ակտանտների *վրադրման* (folding) շատ յուրահատուկ եղանակ[259]:

Շատելպերոնի ամրոցն այն արահետի երկայնքով, որ քայլողն անցավ մեկ ժամ առաջ, վերանորոգվել է չորս տարի առաջ, կառուցվել է ութ դար առաջ հազար տարի առաջ վեր բարձրացած հողե բլրի վրա,

---

[259] Latour, B. (1994). On technical mediation. Common Knowledge, 3, pp. 29-64; Latour, B. (1996). On interobjectivity. With discus- sion by Marc Berg, Michael Lynch and Yrjo Engelström. Mind Culture and Activity, 3, pp. 228- 245.

հարյուր միլիոնավոր տարիներ առաջ առաջացած քարերով: Մենք երկու րոպեով մի կողմ կթողնենք այս տարբեր ժամանակային սանդղակների չափման հարցը: Այլ կերպ ասած, ճանապարհորդին տեղին, *տոպուսին* ստիպում է բախվել մի շարք ակտանտների կողմից տարբեր տեղերում և ժամանակներում կատարվող գործողությունների կապակցումը: Հսկայական քարերը տաշող և դրանք տեղը դնող ֆեոդալական սնագործների բարդ աշխատանքն այսօր դեռևս գոյություն ունի այնքան, որքան երկրաբանական անցյալի անտիկ ծովերը և երկրագործությունը, որքան խիզախ սեփականատիրոջ աշխատանքը, ով բոլորովին վերջերս ամրացրեց տանիքը և միացրեց պատերը, էլ չենք ասում քարանձավում ապրող նեանդերթալյան մարդկանց մասին, ովքեր Շատելպերոնը տեղադրեցին հնէաբանների քարտեզներում: Չլինելով իզոտոպիկ տարածությունում մի կետ՝ վերադարձող ճանապարհորդին հանդիպած «տեղակայված» («sp*a*cific„) վայրը դառնում է ժամանակի, տարածության ու գործողության մեջ ցրված փոխազդեցությունների *կապակցում* և վերահավաքվում է պահպանված, հաստատված իրադարձություն ստեղծող *տոպուսում*: Անտիկ, հսկայական և շարունակական այն աշխատանքի աһռելի քանակի շնորհիվ, որը դարաշրջանների ընթացքում իրար է կապել տարբեր փոխհարաբերություններ, ամրոցը դեռևս պահպանում է, ստեղծում տարածությունը և պատմությունը, շեղում է ուշադրությունը, ընդհատում ուղևորների ճանապարհորդությունները, ձևավորում է աստիճանակարգեր, և, այսպիսով, դրա ստորոտում կանգնած ճամփորդը իրապես զգում է, որ այն տարբերվում է իր սեփական արագ ծերացող մարմնից: Նա անցնում է, իսկ ամրոցը՝ ոչ: Ամրոցը գոյակցում է, պահում է իր հիմքը, տարածություն է զբաղեցնում, ստեղծում է բնապատկեր, դառնում է *chef-lieu* ոչ այն պատճառով, որ այն կետ է տարածության «մեջ», այլ որովհետև այն իրադարձություն է, որը առաջանում է փոխազդեցությունների կապակցման արդյունքում, որոնք լայնորեն տարածվում են ժամանակ-տարածություն-ակտանտների վրա: Այստեղ ստեղծվել է տեղային պատմությունը, և ավանդույթներն էլ շարունակաբար պահվել են տեղում: Այնպես որ, կա մի տեղ:

Մի զուգե տարօրինակ թվա, եթե տեխնիկաները սահմանենք որպես այն, ինչը կապում է տարբեր ժամանակների, վայրերի և ակտանտների փոխազդեցությունները, բայց սա բխում է պատվիրակության և անցման երևույթների շեշտադրման տրամաբանությունից: Թույլ տվեք բերել մկան թակարդի շատ պարզ օրինակը, որը ես տեղադրել եմ Շատելպերոնի ամրոցի ստորոտում գտնվող իմ տանն ապրող բազում մկների դեմ պայքարելու համար: Դրանք անցյալ տարի իրենց արհեստանոցում պատրաստելու համար կորեացի տնային տնտեսուհիներից պահանջվեց տասը րոպե, ներկրող/արտահանող առևտրային ընկերությունից դրանք ֆաքսով պատվիրելու համար՝ մեկ րոպե, դրանք բեռնարկղով Հեռավոր Արևելքի առևտրային երթուղիներով փոխադրելու համար՝ երեք ամիս: Անցյալ շաբաթ տեխնիկայի խանութից դրանք գնելու համար ինձնից պահանջվեց մի քանի րոպե և մի քանի ֆրանկ: Այժմ ես մի կտոր շվեյցարական պանիր եմ դնում մեխի վրա, զգուշությամբ կարգավորում եմ զսպանակը՝ համոզվելով, որ դա իմ մատը չէ, որ կտրվում է փոքրիկ գիլյոտինով... Այսօր իմ զգուշավոր գործողությամբ տեղադրված զսպանակի կինետիկ էներգիան արագորեն կարձակվի, հենց որ զուրման մուկը սկսի հոտոտել հյութեղ շվեյցարական պանիրը իմ բացակայությամբ: Միանգամից քանի՞ դերակատար է ներկա: Կորեացի աշխատողները, ֆրանսիացի առևտրականները, անտառափայտը, ալպիական պանիրը, իմ երեկվա գործողությունները՝ պատվիրակումից մինչև զսպանակ, որոնք մարմնավորվում են այս հնագույն տեխնիկայի՝ մկան թակարդի մեջ: Իզոտոպիկ տարածության մեջ տեղակայված կետից ավելի պարզ, ավելի հիմնարար բան կա՝ տարբեր տեղերի, ժամանակների և նյութի տեսակների փոխազդեցությունների այս նուրբ և անորսալի միահյուսումը՝ յոթօրական մկան մարմինը, մեկ-ամսեկան պանիրը, դարավոր պատմությամբ թակարդը, հինգ տարեկան փայտը, դրանք բոլորը պահպանում են այս շատ հասարակ *topos-kairos*-ը՝ այս իրադարձությունը ստեղծող կետը (իսկ դա իրոք իրադարձություն է մկան համար, որը հանդիպելու է իր մահը, հուսամ՝ այսօր...):

Մենք երբեք չենք բախվում ժամանակին և տարածությանը, փոխարենը մենք բախվում ենք սեփական *timing*-ը, s*pacing*-ը, նպատակներն ու իմաստները ունեցող ակտանտների հետ ունեցած փոխազդեցությունների բազմազանությանը: Մտքում ոչինչ չկա, ոչինչ, բայց շատ բան կա նրանց «իմանալ-ինչպես»-ում (know-how), ովքեր խելացի տեխնիկական գործողությամբ կարող են միահյուսել այն ակտանտներին, որոնք դեռ մեկ րոպե առաջ անհամակցելի էին: Ինչը՞ կարող է ավելի հեռու լինել, քան կորեական արհեստանոցներն ու շվեյցարական պանիրը: Սակայն այժմ նրանք իրար են միացված մկան թակարդի կարճ ճանապարհով: Մենք ամեն օր հանդիպում ենք այս տիպի կապերի, կարճ միացումների, փոխակերպումների, ասոցիացիաների և միջնորդությունների, և սա տեղի է ունեցել տարածության և ժամանակի մասին խոսելուց շատ ավելի վաղ:

Բայց ինչպե՞ս ենք մենք գրանցում *timing*-ների և հարաբերական դիմադրության այս բազում տարբերությունները: Դրանք արձանագրելու և փաստաթղթավորելու համար մի շարք գիտակարգերում (բառի ամենալայն իմաստով) ստեղծված տարբեր *գործիքների* միջոցով և այստեղ է, որ մենք տեխնոլոգիայի հետազոտություններից պետք է անցում կատարենք դեպի գիտության հետազոտություններ: Օրինակ՝ Բերգսոնը քննադատել է գիտնականներին ժամանակի տնողությանը, «*la durée*»-ին ուշադրություն դարձնել չկարողանալու համար՝ նշելով, որ գիտնականներն այն, որպես կանոն, վերածում են անիմաստ և անժամանակ տարածական սահմանազատումների: Բերգսոնն այս կոնֆերանսի թեմային (Միտք և ժամանակ) պակաս քաղաքավարությամբ կվերաբերվեր, քան ես, քանի որ, ըստ նրա, կա մի բան, որի մասին միտքը երբեք չի կարող մտածել, և դա ժամանակն է: Էքստրավագանտ պնդում, քանի որ գիտնականները միակն են, ովքեր հնարավոր դարձրեցին «*longue durée*»-ի, ինչպես նաև կենսաբանության և երկրաբանության միլիարդավոր տարիների մասին խոսելը, ինչից նույն ինքը Բերգսոնն ստեղծեց իր «ստեղծարար էվոլյուցիան»: Առանց Լինեյի, առանց Կյուվիեի, առանց Լամարկի, առանց Դարվինի Բերգսոնի համար գոյություն չէր ունենա կյանքի երկար պատմություն, որի օգնու-

թյամբ նա կպայքարեր երկրաչափության և տարածության հանդեպ մոլազարության դեմ: Միլիարդավոր տարիներ ընթացող էվոլյուցիայի գաղափարն է, որ ի հայտ է գալիս ոչ այլ տեղ, բացի ազգային պատմության թանգարաններից և երկրաբանների հավաքածուներից: Բերգսոնը ժամանակի ջերմ ու հարուստ տևողության և մտքի սառը և աղքատ տարածականության միջև ապարդյուն հակադրություն ստեղծելով՝ մի կողմ է թողնում տարբերություններն արձանագրելու աշխատանքը, խելացի գիտնականների աշխատանքը, ինչպես նաև մեկ այլ աշխատանք, որը փիլիսոփաներն անտեսել են, այն է՝ արհեստավարժ ինժեներների աշխատանքը: Թույլ տվեք անդրադառնալ Էյնշտեյնի և Բերգսոնի ժամանակցին, այն խելացի գիտնականներից մեկին, ով մկան թակարդ է հորինում ոչ միայն մկան, այլև ժամանակի համար, և ով առանձնակի կարևորություն ունի (ինձ համար)՝ որպես իմ հայրենակիցը Բոնից: Երբ Էտյեն-Ժյուլ Մարեն ստեղծեց թռչող աղավնիների ճշգրիտ շարժումները վիզուալացնող լուսանկարչական հրացանը, դա անշուշտ արված չէր ժամանակի ընթացքը «երկրաչականացնելու» համար[260]: Դա արվեց, որպեսզի ստեղծվի *այնքան* ժամանակ, որքան և տարածությունն է: Ավելի ճիշտ, դա երկուսից էլ ամբողջությամբ տարբեր ինչ-որ բան ստեղծելու համար էր, ինչը մենք անվանում ենք *սինօպտիկություն* (synopticity): Նույն կերպ, ինչպես տեխնիկական «իմանալ-ինչպես»-ի վրա դարձրած ուշադրությունն է ամբողջությամբ քայքայում ժամանակի և տարածության սահմանումը, քանի դեռ մեծապես վնասում է փոխազդեցություններին՝ ստեղծելով իրադարձություններ և topoi, *սինօպտիկության* հանդեպ ուշադրությունը, ասել է թե՝ այն ամենի, ինչը միանգամից կարող է երևալ գիտնականի աչքին, ամբողջությամբ վերաբաշխում է գիտնականի մտքի կարողությունը՝ իմանալու, տեսնելու, երևակայելու և ընդհանրապես ինչ-որ բանի մասին մտածելու[261]:

---

[260] Dagognet, F. (1992). Etienne-Jules Marey. A passion for the trace. Cambridge, MA: MIT Press.

[261] Lynch, M., Woolgar, S. (Eds.). (1990). Representation in scientific practice. Cambridge, MA: MIT Press.

Շրջանաձև արծաթապատ սկավառակի վրա տպավորված թռչող աղավնու հաջորդված նկարներին նայող Մարեյի վերաբերյալ կարևորն այն չէ (չնայած Բերգսոնի քննադատությանը), որ նա կորցրել է ժամանակի տևողության ընթացքը, որովհետև հենց այն կորցնելու համար է, որ նա մեծ տանջանքների գնով հայտնագործեց իր լուսանկարչական հրացանը: Ընդհակառակը, նա կուշտ էր «*durée*»-ից, աղավնիների անկառավարելի, անտեսանելի, անորոշ նախշերից, որոնք օդում սավառնելու ընթացքում անհնար է ամրագրել, բռնել (ի դեպ, դա է պատճառը, որ նա երբեք ֆիլմի տեսախցիկ չհայտնագործեց. այն, ինչ Մարեյը ցանկանում էր հայտնագործել *հակա*-ֆիլմային տեսախցիկն էր: Ինչ-որ բան, որը շարժումը կվերածեր պատկերների հաջորդականության, որը տեսանելի կլիներ սինօպտիկորեն, այլ ոչ՝ հաջորդաբար):

Թռչող աղավնին, մինչև «տարածության մեջ» հրացանով սպանված լինելը, չէր ապրում «ժամանակի մեջ»: Լուսանկարչական հրացանը չի սպանում. սա է խորամանկությունը: Մարեյի համար կարևոր է, որ թռչող աղավնու իրադարձությունները պատահեն հենց հիմա շատ անգամներ, այնտեղ՝ գեղեցիկ ամառային երկնքում, բայց նաև հարյուրավոր անգամներ (ըստ ցանկության) այնտեղ ներքևում՝ Collège de France-ի *Station physiologique*-ում: Մարեյը չի կորցնում աղավնու ապրված և հարուստ *durée*-ն նրա աղքատ և սառը երկրաչափության օգտին: Ընդհակառակը, նա աղավնու թռիչքին *ավելացնում է* մի բան, որ աշխարհում նախկինում երբեք ոչ ոքի կողմից չի դիտարկվել. սկավառակի վրա, համագոյակցող ձևերի փոխակերպված հաջորդական շարժման հիացնող դիտումը: Ինչպես կասեր Հայդեգերը, նա երբեք ժամանակը չի «ստորադասել» տարածությանը, այդ թռիչքը դրանից շատ ավելի նորարարական և համարձակ է. աղավնու թռիչքի մի քանի փայլուն վայրկյանները փոխակերպվել են մշտական արծաթյա լուսանկարի, որը կարող է ժամերով ուսումնասիրվել և նորից ու նորից արագ սկանավորվել Մարեյի աչքով՝ գտնելու համար այն կառուցվածքային առանձնահատկությունները, որոնք կբացատրեն մկանների դիրքը և էներգիայի հավասարակշռությունը: Գիտնականներին աշխատանքի մեջ դիտարկող մեկի համար այլևս չկա մեկ ժամանակ և

տարածություն: Երևույթները շատ ավելի ցնցող են. նրանք կախված են տարածական, ժամանակային և դերակատարներին առնչվող հատկությունների միջև հարաբերությունների քայքայումից, անջատումից, տեղափոխումից, վերադասակարգումից, անցումից[262]: Գիտությունն աշխարհից ետ չի վերցնում ժամանակը, այն աշխարհին ավելացնում է շատ տարածություններ և ժամանակներ՝ անընդհատ ձևափոխվող սանդղակներով, երկարություններով, միավորներով, որոնք ծնվում են շատ տարօրինակ վայրերում՝ լաբորատորիաներում, ինստիտուտներում, հավաքածուներում, որոնք բացարձակապես տարբերվում են «մտքից»:

Եթե սա է դեպքը, ապա ուր է գնում ժամանակ-տարածություն ֆրեյմի այս մոլուցքը: Ոչ մի աշխատանքի միջոցով արահետ բացող տառապող մարմինը, ինչպես իմ ավելի վաղ պատմած միջադեպում էր, երբեք չի ստեղծի այդպիսի տարածություն և ժամանակ: Բայց չի ստեղծի նաև *ոչ մի* ինժեներ *և ոչ մի* գիտնական իր աշխատանքում: Եվ այս պահին անօգուտ է հակադրել (ինչպես դա հաճախ արվում է) մարդկային սուբյեկտիվության «ապրված աշխարհը»՝ մտադրությունների և զգացմունքների հարուստ գույներով տարածությունն ու ժամանակն ընկալող, գիտական ու տեխնիկական օբյեկտիվ աշխարհին, որն անընդհատ հաղթում է իզոտոպիկ և իզոքրոնիկ անիմաստ տարածություն-ժամանակը: Քարտեզների, դիագրամների, բնակարանների, թակարդների, խորամանկությունների և ճարպկությունների միջոցով տարածությունների և ժամանակների քայքայման գիտական և ինժեներական պրակտիկան շատ է գերազանցում ֆենոմենոլոգների կողմից նկարագրված ցանկացած սուբյեկտիվ ժամանակին և տարածությանը: Տարածության և ժամանակի սուբյեկտիվությունը չէ, որ բաց է թողնված օբյեկտիվ տարածություն-ժամանակի մանրակրկիտ մեկնաբանություններում: Միայն որոշ առանձնահատուկ հանգամանքնե-

---

[262] Schaffer, S. (1988). Astronomers mark time: Discipline and the personal equation. Science in Context, 2, pp. 115-145; Latour, B. (1995). The «pédofil» of Boa Vista: A photo-philosophical montage. Common Knowledge, 4, pp. 144-187; Lynch, M. (1991). Laboratory space and technological complex: An investigation of topical contextures. Science in Context, 4, pp. 51-78.

րում է, որ այս երկուսը կարող են տարբերակվել: Միայն TGV-ում գտնվող տղամարդը կարող է տարբերակել տեղափոխությունը և փոխակերպումը, այլ ո՛չ իր փոքրիկ կացինով արահետ բացող կինը, ո՛չ երկաթուղային ընկերությունների ինժեներները, ովքեր համոզվում են, որ գնացքները միաժամանակ չեն ընթանում, ո՛չ ատոմային ժամացույցների կոորդինատներին նայող գիտնականները և ո՛չ էլ Մարեյը, ով սարսռում էր այն մտքից, որ իր լուսանկարչական հրացանը կարող էր տալ մշուշոտ, աղոտ և համընկնող պատկերներ:

Բայց չէ՞ որ, անկասկած, տարածություն-ժամանակը, որն օգտագործվում է բոլոր իրադարձությունների շրջանակը պատկերացնելու համար, ինչ-որ մի տեղից պետք է գա: Թվում է՝ դրա արմատներն *օբյեկտների* յուրահատուկ բնույթի մեջ են, որոնք օգտագործվում են գիտակարգերի կողմից՝ իրենց չափման գործիքներն ստեղծելու համար[263]: Ուայթհեդը մեկ անգամ նշել է, որ շատ լավ է Գալիլեյին գովաբանել թեք հարթությունների ուսումնասիրության համար, բայց ի՞նչ կլիներ, եթե նա բիլիարդի գնդաձև գնդակների փոխարեն փորձարկեր ցորենի պարկերը: <> Ինչպես արդեն նշեցի, լաբորատոր սարքավորումներում չափազանց մեծ քանակությամբ կոշտ մարմիններ կան: Բայց սա չի նշանակում, որ գիտնականներն *իրենք* կոշտ մարմիններ են կամ որ ունեն կոշտ երկրաչափական ուղեղներ: Դա նշանակում է, որ լաբորատորիայում տարբերությունները հայտնաբերելու համար նրանք օգտագործում են ուղենիշներ: Այդ կոշտ մարմինների շրջանառությունը տեղում ստեղծում է տարածություն-ժամանակի յուրահատուկ տեսակ, ինչպես ցանկացած այլ տարբեր հատկություններով մարմինների շրջանառություն ստեղծում է այլ տարածություններ-ժամանակներ-ակտանտներ: Սա չի նշանակում, որ մենք իզոտոպիկ տարածության և իզոքրոնիկ ժամանակի *մեջ* ենք, սա նշանակում է միայն, որ տեղային, չափագիտական շղթաների *մեջ* գոյություն ունեն իզոքրոնիայի և իզոտոպիայի *ազդեցություններ*, որոնք առաջանում են այն

263 Stengers, I. (1996). Cosmopolitiques. Tome 2, L’invention de la mécanique: pouvoir et raison [Cosmopolitics. Vol. 2, The invention of mechanics: Power and reason]. Paris: La Découverte & Les Empêcheurs de penser en rond.

լավ վերահսկված և դժվարությամբ ինստիտուտցիոնալացված օբյեկտների շրջանառությամբ, որոնք տեղափոխությունից հարաբերականորեն անփոփոխ են մնում. արագընթաց գնացքներ, քանոններ, չափորոշիչներ, կանոններ, կշիռ, կայուն հարաբերություններ, փամփուշտներ, բալիստիկ հրթիռներ, ընկնող քարեր, հաշվարկներ և այլ տարբեր ձողեր, ժամացույցի սլաքներ, մեխանիզմներ և կառուցվածքային իզոմորֆոզներ: Այդ ամբողջ գործիքակազմը, լինելով շատ գործնական, շատ խելացի, շատ նյութական, շատ տեղային, ոչինչ չի ասում մտքի ներքին աշխատանքների մասին, ինչպես նաև չի բացատրում այն եղանակները, որոնցով ոչ տեղը դառնում է իրադարձություն, կամ իրադարձությունները դառնում են ոչ իրադարձություն: Տարածության և ժամանակի համար չափագիտական ցանցերի կառուցումը արևմտյան պատմության գլխավոր հատկությունն է: Դա պետք է փաստաթղթավորվի, ուսումնասիրվի, դիտարկվի, բայց այն *չպետք է* շփոթվի մեր մտքի զարգացման ձևի հաշվարկման կամ աշխարհաստեղծման գոյաբանության հետ:

Ես լավ գիտեմ, որ մենք իմ շարադրանքի շրջադարձային կետում ենք (կամ գուցե բաժանարար կետում): Քանի դեռ տեխնիկական գործողությունների և գիտական լաբորատորիաների կողմից գործարկված ժամանակների և տարածությունների հերթափոխի հանդեպ այս հետաքրքրությունը և ուշադրության տեղափոխումը դրանց արդյունքից դեպի կատարում և գործիքներ ոչ մի օրինակով չեն կարող արդարացվել, մենք պետք է այժմ ընտրություն կատարենք տարբեր փիլիսափայությունների միջև: Առաջին տարբերակում տարածությունն ու ժամանակը իրենց իզոտոպիկ և իզոքրոնիկ բնույթում կդիտարկվեն իբրև տիեզերքը ստեղծող կամ, այլ կերպ ասած, կորակվեն իբրև այն, ինչը անհրաժեշտ է մտքին՝ տիեզերքին իմաստ հաղորդելու համար: Ավելացնեմ, որ այն մարդկային սուբյեկտիվության համար կարող էր հատկացնել հարաբերությունների ինչ-որ ուրիշ տեսակ, որը կբացատրեր, թե ինչպես ենք մենք իրադարձություններին վերաբերվում զգացմունքայնորեն և կողմնորոշվում տարածության մեջ, բայց այս ողջ սուբյեկտիվությունը կհասկացվեր բացառապես օբյեկտիվ տարածու-

թյուն-ժամանակի հետ հակադրման մեջ: Զգացմունքայնությունն ու արդյունավետությունը հստակորեն կհակադրվեին: Կքննարկվեր միայն դիագրամի ձախ կողմը, իսկ աջ կողմը կդիտարկվեր որպես ոչ զուտ գործիքային կողմ, որը որևէ փիլիսոփայական շարունակություն չէր ունենա աշխարհի կամ մտքի մշակման տեսանկյունից:

Երկրորդ լուծումն է սկսել երևույթից, որն ինքնին կապված չէ սուբյեկտիվության *կամ* օբյեկտիվության հետ և անտեսում է հակամարտությունը տարածություն-ժամանակի՝ որպես *սեննսորիումի* և տարածություն-ժամանակի՝ որպես գիտակցության ֆրեյմի միջև, և որն սկսվում է *այլ ամբողջությունների* հետ կապից, նրանց, որոնք անհրաժեշտ են գոյությունը պահպանելու համար: Դա այս այլության (otherness) հատկությունն է և ուրիշների «քանակն» է, որոնք այս փիլիսոփայության մեջ դառնում են էութենական հատկություններ: Այսպիսով, կենտրոնական հարցն է իմանալ, թե արդյո՞ք փոխադրման, տեղափոխման, փոխակերպման, հետագծման այսպիսի աշխարհում «պետք է վճարել» փոքր կամ մեծ ձևափոխումներով, փոխակերպումներով, մետամորֆոզներով: Երկու աշխարհայացքների հիմնական տարբերությունն այն է, որ այս երկրորդ տեսակետում առաջինի նորմալ դեպքը դառնում է երկրորդի արտառոց, հազվադեպ հանդիպող *բացառությունը*: <> Այս երկրորդ աշխարհում ժամանակների և տարածությունների չափումը ստեղծում է տարածություններ և ժամանակներ, մինչդեռ առաջինում գործիքը միայն տարածության և ժամանակին հասնելու գործնական միջոց է, որն ունի անկախ գոյություն՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Երկրորդում գործիքները միջնորդներ են և փոխարկիչներ, առաջինում՝ սովորական միջոցներ և ուղեկցորդներ. տեսականորեն դրանցից կարելի էր հրաժարվել: Երկու աշխարհներում էլ մտքի, ինչպես նաև էթիկայի, քաղաքականության և կրոնի դերը լրիվ տարբեր կլինի: Եվ սա այն է, ինչի վրա ես այժմ ցանկանում եմ կենտրոնանալ այս հոդվածի մնացած մասում: Ինչո՞ւ է ժամանակ-տարածության հինգերորդ չափումն արձանագրելը այդքան բարդ:

**Ֆորմալիզմ. պրոֆեսիոնալ վտանգը**

Ի՞նչ կլինի, եթե շրջանառվող կոշտ մարմինների, գործիքների, լաբորատոր վայրերի, սանդղակների փոփոխության, ժամանակի և չափորոշիչների, ժամանակի և տարածության համար պատասխանատու ինստիտուտների, փորձառական «իմանալ-ինչպես»-ների վրա կենտրոնանալու փոխարեն կենտրոնանանք այդ սահուն տեղափոխման *արդյունքների* վրա: Շարունակելով իմ սիրելի օրինակը՝ ի՞նչ է պատահում, երբ TGV-ի առաջին դասի խցիկում գտնվող տղամարդն անտեսում է ոչ միայն «գետափի վրայի մարդուն», այլ նաև հավասար շարված կայարանների և քաղաքների բնակիչներին, երկաթուղային ընկերության ողջ մեխանիզմը և վարչակազմը: Նա իրոք կմտածի, որ գոյություն ունի ժամանակ-տարածության մեջ տեղափոխության նման ինչ-որ բան, որը չի պահանջում որևէ ծերացում, որևէ փոխակերպում: Նա անգամ կսկսի մտածել, որ իզոքրոնիկ ժամանակը (չափված իր ժամացույցի և գնացքի ժամացույցի հարաբերությամբ) և իզոտոպիկ տարածությունը (չափված ռելսուղու երկայնքով կանոնավոր սլացող համարակալված նշաններով) աշխարհի նորմալ հատկություններն են: Խնդրում եմ, նորից նկատեք, որ սա չի պատահի, եթե նա նստի իտալական գնացք, թողնենք իտալական գնացքը, հիշե՛ք, դա պարզապես չի պատահի, անգամ եթե գործադուլ լինի, որևէ պատահար կամ նույնիսկ եթե օդափոխության համակարգն սկսի մի փոքր վատ աշխատել: Բայց եթե ամեն բան հարթ ընթանա, այս ճանապարհորդը երկաթուղային ընկերության աշխատանքի *արդյունքը* (ժամանակի մեջ տարածության միջով սահուն ճանապարհորդությունը) կընդունի որպես այդ խոշոր կազմակերպվածության նորմալ *գործը*: Այն բանից հետո, երբ նա հրաժարվի ռելսերից, գնացքներից, անջատիչներից, ստանդարտների բյուրոներից, ժամացույցի աշխատանքից, կարգավորումներից, ժամատախտակից և այդ ողջ գազանանոցից, նա չափազանց կուզենա հավատալ, որ իզոքրոնիկ և իզոտոպիկ այս ամբողջ համակարգի կոորդինատները կարող էին տեղակայվել: Որտե՞ղ. *իր մտքում*: Գնացքով ուղևորության իրական մեծ վտանգը չափազանց հարմարավետությունն է, համենայնդեպս, Շվեյցարիայում: Իմացաբա-

նությունը առաջին դասի օդակարգավորվող գնացքով ճանապարհորդողների մասնագիտական վտանգն է: Այն պետք է կոչվեր «Ուղեղի ճանապարհորդություններ», ասել է թե՝ արդիականության հիվանդություն և փորձարկման պակաս, որը շատ նման է անհուսալի թիկունքի:

Ավելի լուրջ ասած, գիտությունը գովերգվում կամ քննադատվում է նրա համար, ինչ ինքը զուգե *չի կարող* ապահովել, այն է՝ անժամանակ ֆորմալիզմը: Ինչպես մենք ավելի վաղ տեսանք, իհարկե, կան գիտնականներ, որոնք աշխատում են ձևերի, չափիչների, քարտեզների, կոորդինատների, կառուցվածքների վրա, բայց նրանց աշխատանքն ինքնին ֆորմալ, չափված, քարտեզագրված, կոորդինացված և կառուցվածքայնացված չէ: Ֆորմալիզմը շրջանառվում է գիտական ցանցի ներսում. այն նույնքան կարգավորված, արդյունավետ, նրբագեղ և խնայող է, որքան «Rätische Bahn»-ի գնացքները: Բայց ճիշտ այնպես, ինչպես ոչ ոք չէր կարող անգամ պատկերացնել, որ գնացքները կանոնավոր կերթևեկեն առանց երկաթուղային ընկերությունների չվացուցակի, այնպես էլ ոչ ոք չի կարող պատկերացնել, որ ֆորմալիզմը կարող էր շարունակել սահուն շրջանառվել՝ առանց ծախսատար ինստիտուտների, որոնք հայտնի են որպես «Հետազոտություն և զարգացում» (Research and Development): Իզոքրոնիան և իզոտոպիան մտավոր կամ բնական կատեգորիաների վերածելը նույնքան տարօրինակ է, որքան համարելը, որ միտքը ուժեղ է հաստատունների հաստատման գործում: Ապաուսցիալականացված գիտնականի չսպառազինված միտքը անմիջապես անկարող կլինի երկարաձգել որևէ հաստատունի կյանքը: Այդ պատճառով հետազոտողները, լավ տեղյակ լինելով այս գործնական սահմանափակումների, անընդհատ մշակվող գործիքների, ժամանակը և տարածությունը քայքայողների, սանդղակ փոփոխող արձանագրությունների մասին, իրենց սեփական գիտություններում ստեղծում են հետաքրքիր առասպելային պատմություններ: Նրանք ավելի շատ նման են գնացքի ընկերության անհանգիստ կառավարչի, քան անհոգ, կուշտ, անտեղյակ ճանապարհորդի:<>

Այն գաղափարը, որ միտքը կարող էր ստեղծել ֆորմալ փաստարկում, նույնքան տարօրինակ կլիներ, որքան հայտնագործություն անող միայնակ գիտնականի կամ սեփական ուժերով 300կմ/ժ արագությամբ Փարիզից դեպի Նևշատել գնացող մերկ ճանապարհորդի մարմին պատկերացնելը: Միայն «Սուպերմենը» կամ «Ֆլեշը» կարող էին դա անել: Միևնույն ժամանակ, «գենետիկ իմացաբանության» գաղափարն ավելի հեռուն է գնում, քան այս մտային գիտափորձը: Այն պատկերացնում է ոչ միայն այն, որ միտքը ֆորմալ իմաստների միջոցով ձեռնարկում է ֆորմալ փաստարկում, այլև այն, որ կենսաբանական կյանքի ողջ պատմությունը՝ ամենավաղ նախաքեմբրյան ձարխոտերից մինչև բարձրագույն պրիմատներ, մոլեգնաբար ձգտում է միայն այս հարաբերությունների պահպանմանը[264]: Այսպիսով, ֆորմալիզմը չի դիտարկվում միայն որպես մարդկային փաստարկման գագաթնակետ, այլ ինքնին կյանքի, որը ոչ մի այլ նպատակի ուղղված չէ: Ահա իմանենտիստ Պիաժեն զբաղեցնում է սպիրիտուալիստ Բերգսոնի հակառակ դիրքը, ում համար կյանքը միշտ օտար կմնա *Homo faber-ի* ՝դեպի երկրաչափություն ձգտմանը: Այնուամենայնիվ, ըստ էության, նրա դիրքը ելնում է նույն սկզբունքից. կարելի է ասել, որ ժամանակը և տարածությունը վերաբերում են ինքնին կյանքին: Բայց, եթե մենք ճիշտ ենք եղել ժամանակների և տարածությունների ստեղծումը շրջանառության, արձանագրման և գործիքների որոշակի տեսակների մեջ տեղակայելիս, որևէ մեկը, անշուշտ, չի կարող ինքնին կյանքին վերագրել *timing*-ը, որը մեծամասամբ գոյություն ունի կենսաբանների և էվոլյուցիայի տեսաբանների պրակտիկայի շնորհիվ[265]: Նևշատելի լճում գտնվող խխունջի և Պիաժեի հավաքածուում գտնվող միևնույն խխունջի միջև իսկայական տարբերություն կա: Առաջինն ավելի շատ նման է իմ պատմության կին ճանապարհորդին. այն տառապող մարմին է այլ

---

[264] Piaget, J. (1967 [1992]). Biologie et connaissance. Essai sur les relations entre les régulations organiques et les processus cognitifs [Biology and insight. Essay on the relations between organic regulations and cognitive processes]. Lausanne: Delachaux et Niestlé (réédition).

[265] Kohler, R. E. (1994). Lords of the Fly. Drosophila genetics and the experimental life. Chicago: University of Chicago Press.

տառապող մարմինների շրջանում, որը չունի իր տառապանքը, մետամորֆոզները, ձևափոխումները և ողջ մնալու համար հաղթահարվող բոլոր ռիսկերը արձանագրելու որևէ գործիք: Փոքր ինչ տարբեր գույներ և ձևեր ունեցող այլ խխունջների մեջ միայն երկրորդն է, որ սինոպտիկության նոր ձև հայտնագործելու միջոցով սկսում է արձանագրել ձևափոխումները՝ փոփոխվող միջավայրի համեմատությամբ, որն ինքնին ներկայացված է միլիմետրանոց թղթի վրայի գույներով, պիտակներով, երկարություններով: Ինչպես Սթիվեն Ջեյ Գուլդն է շատ գեղեցիկ կերպով ցույց տվել, հնարավոր չէ կյանքի պատմությունը հասկանալ առանց կյանքի մասին գիտությունների պատմության[266]: Գործիքներից, հավաքածուներից, բնության պատմության թանգարաններից ուղղակիորեն անցում կատարել նրան, ինչին ուղղված է կյանքը, վստահ ճանապարհ է դեպի ձախողում, դեպի բոլոր կենդանի օրգանիզմներին «կենսաձև» շնորհելու մոլորություն, կայունության մոլուցք, կառուցվածքների խելահեղ փնտրտուք, կենտրոնացում պահպանման վրա. դա կարող էր վերաբերել (համարձակվում եմ դա ասել) շվեյցարացի ժամագործներին, շվեյցարացի կառավարիչներին, շվեյցարացի բանկային կոլեկտորներին, բայց չէր կարող (ամեն դեպքում առանց հավելյալ հետազոտության) հեշտությամբ վերագրվել խխունջներին, թռչուններին, ստամոքսներին, ուղեղներին, երեխաներին, մաթեմատիկոսներին, փղերին կամ կետերին… Թույլատրելի է մեկ րոպեով մոռանալ, որ ժամանակի և տարածության մեջ սահուն տեղափոխությունը ինչ-որ այլ տեղում վճարվում է այլ մարդկանց կողմից, բայց ոչ հավերժ: Անգամ եթե զնացքով ուղևորության ընթացքում և խցիկի ներսում «ժամանակը նման է ոչնչի», մտածել, որ դա ճիշտ է նաև զնացքից դուրս, նման կլիներ առավելագույն արագությամբ ընթացող TGV-ից հանկարծակի ցատկելու փորձի…

Ֆերնանդո Վիդալը ցույց է տվել Պիաժեյի մտքերի մեկնաբանումը նրա միջավայրի հետ կապելու պարադոքսը[267]: Եթե մենք հավատանք

---

[266] Gould, S. J. (1989). Wonderful life. The Burgess Shale and the nature of history. New York: Norton.

[267] Vidal, F. (1994). Piaget before Piaget. Cambridge, MA: Harvard University Press.

միամիտ կոնտեքստուալիստներին, կարող ենք ասել, որ Նեշատելում ծնված շվեյցարացի կենսաբանը, ով շատ երկար տարիներ աշխատում էր բնության պատմության հավաքածուների վրա բանկիրների և ժամագործների հարուստ երկրում՝ ակոսված գնացքներով, ավտոմեքենաներով, բեռնատարներով, որը հետո խանդավառվեց երեխաների վարքի, նրանց ֆիզիկական մանիպուլյացիների, սոցիալական փոխհարաբերությունների ուսումնասիրություններով, պետք է դիտարկեր հասարակությունները, երեխաների խմբերը և գիտակարգերը՝ իբրև *ժամանակ ստեղծող բազմաթիվ կոլեկտիվներ*, և պետք է մեկ առ մեկ ապակառուցեր (deconstruct) ֆորմալիզմի ապասոցիալական, անժամանակ բնույթի վերաբերյալ գոյություն ունեցող արևմտյան հավատալիքների մեծ մասը: Նա մտքից պետք է հաներ այն բոլոր հասկացությունները, որոնք շատ ակնհայտորեն հենվում են նյութական, սոցիալական և գործնական միջնորդությունների վրա: Քանի որ նա ունեցել է բավականին լավ կենսաբան դառնալու արտառոց հնարավորություն, նա և միայն նա (դուրս լինելով Գիտության՝ մեծատառ Գ-ով, հանդեպ ակնածանքից) պետք է տեսած լիներ, թե որքան մոտ են երեխաների հակասությունները գիտական հակասություններին: Այսպիսով, հոգեբանության չափազանցված էթնոցենտրիզմից խոցված լինելով, նա հայտնաբերած կլիներ «կոգնիտիվ մարդաբանությունը» և ոչ միայն ցույց կտար այն բացը, որ առկա է գործնական կոգնիտիվ մշակույթների միջև, ինչպես Էդ Հաթչինսը[268] վերջերս ցույց տվեց իր հիմնարար գրքում, այլ, գնալով ավելի հեռուն, նա կսկսեր նաև ուսումնասիրել, թե ինչ ժամանակներ և ինչ տարածություններ կհայտնաբերեին տառապող կենսաբանական մարմինները սեփական պայմաններով:

Այնուամենայնիվ, ինչպես մենք բոլորս գիտենք, սա այն չէ, ինչ տեղի է ունեցել: Չափազանց վատ է մտքի սոցիալական պատմության համար: Այն հերոսական ջանքը, որ մենք նշում ենք այս սիմպոզիումի շրջանակներում՝ «Միտք և ժամանակ» պարադոքսալ խորագրի ներքո, ուղղված է մտքի, գիտության արտադրման, օնտոգենետիկ զարգացման, գիտության պատմության և, հատկապես, ինքնին կյանքի պատ-

[268] Hutchins, E. (1995). Cognition in the wild. Cambridge, MA: MIT Press.

մության, ցանկացած պատմական հետքի, ժամանակի ստեղծման պրակտիկայի բացառմանը: Ժամանակի փիլիսոփա Իզաբել Սթենջերը Ժիլ Դելյոզից հետո առաջարկեց վիրտուալությունները տարբերակել պոտենցիալություններից: Պոտենցիալությունը «ժամանակի մեջ» այն բանի իրականացումն է, որն արդեն գոյություն ունի *in potential*: Ժամանակը բացահայտում է պայմանավորումները (determinations), բայց իրականում ոչինչ տեղի չի ունենում, ճիշտ այնպես, ինչպես հնարավոր է հաշվել ճոճանակի բոլոր դիրքերը՝ ելնելով իր նախնական դիրքից՝ առանց ճոճանակի փաստացի անկման, ինչը կարող էր նոր տեղեկատվություն ավելացնել: Նույնը ճիշտ է նաև զարգացման դեպքում, եթե զարգացումը հասկացվում է իբրև պոտենցիալությունների բացահայտում՝ մի խնդիր, որին ինչպես լավ հայտնի է, Պիաժեն երկու անգամ անդրադարձել է կակղամորթների աճի և երեխայի ինտելեկտի զարգացման ուսումնասիրություններում: Վիրտուալությունն ընդհանրապես ուրիշ բան է: Այն կախված է այլությունից (otherness), գործընթացի հինգերորդ չափումից, այլ ակտանտների հետ կապվելու հատկությունից, որին ես այս հոդվածում ավելի վաղ անդրադարձա ժամանակի և տարածության ավելի խորը սահմանման շրջանակներում, այն է՝ ժամանակի և տարածության ինտենսիվության: Այսպիսով, հարցը նրանում է, որ մենք պետք է որոշենք, թե արդյո՞ք ժամանակը պոտենցիալությունների իրականացումն է, թե այն առաջանում է վիրտուալությունների՝ զարմանալի տարբերությունների կազմավորումից, ի հայտ գալուց: <>

Իմ կարծիքով, *աստվածաբանությունը* պետք է որ հսկայական դեր ունեցած լինի Շվեյցարիայի, արևմտյան գիտության, մտածողության, գիտակցության, օնտոգենեզի, ֆորմալիզմի և կյանքի այս համապատասխանեցման գործում: Այսպիսով, ստեղծված անժամանակությունն ուներ *աշխարհիկ* բողոքական աստվածաբանության անժամանակության բոլոր հատկանիշները: Հակառակ լայն տարածված կարծիքի՝ աստվածաբանները հաճախ ավելի շատ ռացիոնալիստ են, քան իմացաբանները, հատկապես որովհետև նրանք պատկերացնում են, որ Աստված ինչ-որ բան պետք է անի *նույն* ժամանակի և տարածության

հետ, որն արտադրվում է անփոփոխ մոբիլություններով. տարբերությունը միայն այն է, որ Նա վերևում է: Բայց քանի որ աստվածաբանները կենտրոնանում են ոչ թե այդ մոբիլությունների ստեղծման աշխատանքի, այլ միայն դրանց արդյունքի վրա (շատ նման է նրան, ինչ անում են գնացքի ուղևորները և իմացաբանները)՝ դիտարկելով իզոտոպիան և իզոքրոնիան՝ իբրև աշխարհի հատկություններ: Ինչպես կասեր Հայդեգերը, նրանք գործում են մետաֆիզիկների մեղքը: Այսպիսով, նրանց համար չկա այլ ճանապարհ, քան համարել Աստծուն մի երևույթ, որը տարածություն-ժամանակից այն կողմ է, տրանսցենդենտալ «այլ աշխարհում»: Եթե որևէ մեկը երիտասարդ Պիաժեի նման ցանկանում է պահպանել այն կողմում և վերևում գտնվող Աստծո կողմից ապահովվող ապապատմականությունը, բայց, միևնույն ժամանակ, ուզում է իրեն հեռացնել քրիստոնեական աստվածաբանության հետ եկող ամոթալի բեռից, լուծումներից մեկն է համոզվել, որ *այս* աշխարհին ինքնին ունի հաստատունության, ֆորմալիզմի, «այլ» աշխարհի ապապատմականության բոլոր հատկանիշները:

Այս նախաձեռնությունը նմանվում է ատոմների շարժումները աստիճանաբար դանդաղեցնելով բացարձակ զրոյի հասնելու գիտափորձին: Հոգեբանության, պատմության, կյանքի, տրամաբանության, մաթեմատիկայի և մանկավարժության միահյուսումն ստեղծում է սահմանափակ տարածություն, որում այս արտառոց փորձը կարող է կատարվել. պատմության դանդաղեցումը, վիրտուալությունների սահուն փոխարինումը պոտենցիալություններով, գործընթացի փոխակերպումը հաստատունների ակտուալացման այս դարի ամենահամարձակ գիտական հավակնություններն են, որոնք արդեն հարստացվել են նման նախաձեռնություններում՝ համոզված լինելու համար, որ (ինչպե՞ս կարող եմ սա որքան հնարավոր է քաղաքավարի արտահայտել) ոչ մի անսպասելի կամ անցանկալի բան տեղի չի ունենում, որ յուրաքանչյուր փուլ կկարգավորվի համաձայն չվացուցակի, որ օնտոգենեզը կամփոփի ֆիլոգենիան, որ այս աշխարհը կկարգավորվի այնպես, ինչպես կորսված այլ աշխարհը, որ հավասարակշռությունները և հաշիվները կպահպանվեն՝ անկախ բոլոր անհավասարակշռություններից,

որ հաստատունությունը միշտ կպահպանվի՝ չնայած պատմության ցնցումների և համաշխարհային պատերազմների, որ կապիտալիզացիան հավերժ կշարունակվի առանց կորուստների կամ ծախսերի… Ա՜հ, գուցե վերջ ի վերջո կոնտեքստուալիստները ճիշտ են, և շվեյցարական երազանքը (եթե այն կա) ժամագործների պարադոքսալ անժամանակությունն է: Պասիվ պաշտպանության բանակի համար կատարյալ է: Աշխարհը ժամացույցի պես սահուն ընթանում է, զնացքները, քոլեջները և դասասենյակները ընթանում են ժամանակին. աշխարհ, որում ոչինչ չէր պատահի: Միտք և ոչ ժամանա՞կ… Այո՛, հոյակապ գիտափորձ է թեթևությամբ ցույց տալու, թե մինչ այժմ ինչ է մոռացվել timing-ի, spacing-ի և acting-ի մասին:

ՊՅԵՐ ԲՈՒՐԴՅՈ

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ ԵՎ ՅՈՒՐԱՑՈՒՄ[269]

**Ներածություն**

Սոցիոլոգիան պետք է գործի՝ ելնելով այն կանխադրույթից, որ մարդկային էակները միաժամանակ և՛ կենսաբանական անհատներ են, և՛ սոցիալական ագենտներ, որոնք կառուցակցված են որպես այդպիսիք սոցիալական տարածության, ավելի ստույգ՝ դաշտերի հետ հարաբերությունների միջոցով: Որպես մարմիններ և կենսաբանական անհատներ՝ նրանք, ինչպես և առարկաները, տեղակայվում են որոշակի տարածության մեջ (քանի դեռ չունեն ամենազոյության ֆիզիկական կարողություն, որը թույլ կտար գտնվել միաժամանակ մի քանի վայրերում) և զբաղեցնում են որևէ մի տեղ: Տեղը, *topos-ը* կարող է սահմանվել բացարձակաբար իբրև վայր, որտեղ գտնվում է ագենտը կամ առարկան, որտեղ նա «ունի տեղ», գոյություն ունի, կարճ ասած, իբրև «տեղայնացում», կամ հարաբերականորեն՝ իբրև որոշակի կարգում զբաղեցվող դիրք: Զբաղեցվող տեղը կարող է սահմանվել իբրև մակերես, մակերևույթ և ծավալ, որը զբաղեցնում է ագենտը կամ առարկան, իսկ ավելի հստակ՝ իբրև նրա չափերը (ինչպես երբեմն խոսում են կահույքի կամ մեքենայի մասին):

Սակայն ֆիզիկական տարածությունը սահմանվում է իրեն կազմող մասերի համատեղ արտաքին կողմերով, իսկ սոցիալական տարածությունը՝ վերջինս կազմող դիրքերի փոխբացառմամբ (կամ տարբերակմամբ): Սոցիալական ագենտները, ինչպես և նրանց կողմից յուրացված և ուստի իբրև սեփականություն կառուցված առարկաները

---

[269] Бурдье, П. (2005) Социология социального пространства. СПб.: Алетейя; М.: Институт тэкспериментальной социологии: Алетейя, с. 49-64. *Թարգմանությունը՝ Արմինե Ղալամդարյանի*:

տեղակայված են սոցիալական տարածության որևէ տեղում, որը կարող է բնութագրվել այլ տեղերի հանդեպ վերջինիս ունեցած հարաբերական հեռավորությամբ, որը տարբերում է այդ տեղն ուրիշներից: Իրականում սոցիալական տարածությունն այս կամ այն չափով ձգտում է վերափոխվել ֆիզիկական տարածության՝ որոշ մարդկանց բացառման կամ արտաքսման՝ անխուսափելիորեն թանկարժեք օպերացիաների օգնությամբ: Այսպիսով, սոցիալական տարածության կառուցվածքն իր արտահայտումն է ստանում ամենատարբեր համատեքստերում: Աստիճանակարգված հասարակության մեջ գոյություն չունեն տարածություններ, որոնք աստիճանակարգված չեն, չեն արտահայտում աստիճանակարգ ու սոցիալական հեռավորություն՝ քիչ թե շատ աղավաղված և հատկապես քողարկված տեսքով՝ նատուրալիզացման գործողության օգնությամբ, որն առաջ է բերում սոցիալական իրողությունների կայուն ներմուծումը ֆիզիկական աշխարհ: Սոցիալական տրամաբանության միջոցով արտադրված տարբերությունները կարող են այդպիսով թվալ իբրև իրերի բնությունից ծնված (բավական է մտածել «բնական սահմանների» գաղափարի մասին): Այսպիսով, քաբիլյան տան (որը ես մանրամասնորեն վերլուծել եմ ավելի վաղ աշխատանքներում) ներքին տարածության բաժանումը երկու մասի, անկասկած, սահմանում է ընդհանուր մակերեսի (եկեղեցու, դպրոցի, հանրային վայրերի և հենց տան) ցանկացած բաժանումների հարացույցը, այն բաժանումների, որոնց մեջ նորից ու նորից, թեև գնալով ավելի թաքնված տեսքով, տեղափոխվում է սեռերի միջև աշխատանքի բաժանման կառուցվածքը: Սակայն նույն հաջողությամբ կարելի է վերլուծել նաև դպրոցական տարածության կառուցվածքը, որն իր բազում տարբերակներում միշտ ձգտում է առանձնացնել ուսուցչի (ամբիոնի) նշանավոր տեղը կամ քաղաքային տարածության կառուցվածքը: Այսպես, օրինակ, Փարիզի տարածությունը բացի կենտրոնական թաղամասերի, ծայրամասային թաղամասերի և արվարձանների միջև բնակարանների տարածական բաշխման մեջ տնտեսական և մշակութային տարբերությունների հիմնական հակադարձ ձևափոխությունը լինելուց, իրենից ներկայացնում է նաև երկրորդային, բայց

ավելի քան տեսանելի հակադրություն «աջ ափի» և «ձախ ափի» միջև, որը համապատասխանում է իշխանության դաշտի հիմնական բաժանմանը, գլխավորապես՝ արվեստի և բիզնեսի միջև: Այստեղ կարելի է տեսնել, որ սոցիալական բաժանումը, որն օբյեկտիվացված է ֆիզիկական տարածության մեջ, ինչպես ես ավելի վաղ ցույց եմ տվել, միաժամանակ գործառում է որպես պատկերացման և բաժանման սկզբունք (vision and division), որպես ընկալման և գնահատման կատեգորիա, կարճ ասած, որպես մտային կառուցվածք: Եվ կարելի է մտածել, որ հենց յուրացված ֆիզիկական տարածության կառուցվածքներում նման դրսևորման միջոցով են սոցիալական կարգի խուլ հրամանները և օբյեկտիվ աստիճանակարգի պահպանման կոչերը վերածվում նախընտրությունների համակարգերի և մտային կառուցվածքների: Ավելի ճիշտ, սոցիալական կարգի կառուցվածքների աննկատ ներթափանցումը մարմին մեծամասամբ կատարվում է մարմնի տեղափոխությունների ու շարժումների, մարմնի դիրքի միջոցով, որոնք սոցիալական կառուցվածքների վերափոխված այդ տարածական կառուցվածքները կազմակերպում են և սոցիալապես որակում որպես վերելք կամ վայրէջք, մուտք (ներառում) կամ ելք (բացառում), մոտեցում կամ հեռացում կենտրոնական և արժեքավոր վայրի համեմատությամբ (բավական է մտածել «օջախի» մետաֆորի՝ քաբիլյան տան գերիշխող կետի մասին, որը Հալբվաքսը ընտրել է, որպեսզի խոսի «մշակութային արժեքների օջախի» մասին): Ես մտածում եմ, օրինակ, այն հարգալից աջակցության մասին, որին դիմում են մեծությունը և բարձրությունը (օրինակ՝ հուշարձանի, բեմի կամ տրիբունաների), կամ նաև քանդակագործության և նկարչության աշխատանքների հակադրության մասին կամ, ավելի նրբին, ակնածանք և ռևերանսներ ենթադրող վարքի բոլոր դրսևորումների մասին, որոնք թաքնված եղանակով հաստատում են պարզ սոցիալական որակումը (qualification) տարածության մեջ (պատվավոր տեղ, առաջնայնություն և այլն) և տարածության հատվածների ցանկացած գործնական աստիճանակարգերում (վերին մաս/ստորին մաս, պատվավոր հատված/անարժան հատված, բեմահարթակ/ետնաբեմ, ճակատ/հետնամաս, աջ կողմ/ձախ կողմ և այլն):

Յուրացված տարածությունն այն վայրերից է, որտեղ իշխանությունը հաստատվում և իրականացվում է, անկասկած, իր ամենասրամիտ ձևով՝ որպես սիմվոլիկ կամ աննկատ բռնություն. Ճարտարապետական տարածություններ, որոնց անձայն հրամաններն ուղղվում են անմիջականորեն մարմնին, տիրապետում են նրան ճիշտ այնպես, ինչպես պալատական հասարակությունների էթիկետը, ինչպես ակնածանքը և ռևերանսները, որոնք ծնվում են հեռավորությունից (*e longinquo reverentia*, ինչպես լատիներեն է ասվում), ավելի ճիշտ, փոխադարձ անցումից հարգալից հեռավորության: Այդ ճարտարապետական տարածությունները, անշուշտ, իշխանության սիմվոլիկության առավել կարևոր բաղադրիչներն են՝ դրանց աննկատելիության շնորհիվ (նույնիսկ հենց վերլուծաբանների համար, ովքեր ինչպես և պատմաբանները (Շրամից հետո), հաճախ կապված են առավել տեսանելի նշաններին, զավազաններին և թագերին):

Սոցիալական տարածությունն, այսպիսով, միաժամանակ ներկառուցված է օբյեկտիվ տարածական կառուցվածքներին և սուբյեկտիվ կառուցվածքներին, որոնք մասամբ օբյեկտիվացված կառուցվածքների ներառման արդյունք են: Օրինակ, ինչպես ես արդեն գրել եմ, Սենայի (որի տակ այսօր գործնականում հասկացվում են նաև արվարձանները) «ձախ ափի» հակադրությունը «աջ ափին», որն արտահայտվում է քարտեզների վրա և վիճակագրական հետազոտություններում (թատրոններ այցելող հանրության մասին կամ այս կամ մյուս ափին ցուցադրվող նկարիչների առանձնահատկությունների), ներկայացված է պոտենցիալ հանդիսատեսի «գլուխներում», բայց նաև թատերական պիեսների հեղինակների, նկարիչների կամ քննադատների «գլուխներում» առկա հակադրությունների տեսքով, որոնք գործառում են որպես ընկալման և գնահատման կատեգորիաներ. ավանգարդ թատրոնի և բուլվարային, հարմարվողական, կրկնվող թատրոնի հակադրում, երիտասարդ հանդիսատեսի և ծեր, բուրժուական հանդիսատեսի հակադրում, կինոյի՝ որպես արվեստի և որպես փորձարարության հակադրում և այլն:

Ինչպես կարելի է տեսնել, չկա ավելի բարդ բան, քան նյութականացված սոցիալական տարածությունից դուրս գալը՝ հենց սոցիալական տարածությունից զատ այն ըմբռնելու համար: Ընդ որում, ճիշտ է, որ սոցիալական տարածությունը՝ որպես այդպիսին, թույլ է տալիս տեսնել իրեն տարածական սխեմաների ձևով, իսկ սոցիալական տարածության մասին խոսելու համար ամենուր օգտագործվող լեզուն լի է ֆիզիկական տարածությունից փոխառված մետաֆորներով:

**Ֆիզիկական տարածություն և սոցիալական տարածություն**

Այսպիսով, պետք է սկսել ֆիզիկական և սոցիալական տարածությունների հստակ տարբերության սահմանումից, որպեսզի այնուհետև անդրադառնանք այն հարցին, թե ինչպես և ինչում են տեղայնացումը ֆիզիկական տարածության (որն անբաժանելի է դիտակետից) որոշակի կետում և ներկայությունը այդ կետում կարող ստանալ սոցիալական տարածությունում ագենտների՝ իրենց դիրքի մասին ունեցած պատկերացումների տեսքը և դրա միջոցով էլ՝ հենց իրենց պրակտիկաների:

Սոցիալական տարածությունը ֆիզիկական տարածություն չէ, բայց այն փորձում է դրանում քիչ թե շատ ամբողջապես և ճիշտ իրացվել: Դա բացատրում է այն, թե ինչու է մեզ համար այդքան բարդ ըմբռնել այն հենց որպես ֆիզիկական:

Այն տարածությունը, որում մենք ապրում ենք և որը մենք գիտենք, սոցիալապես բնորոշված և կառուցակցված է: Այս հատկություններն ունեցող ֆիզիկական տարածության մասին կարելի է մտածել միայն վերացարկման միջոցով (ֆիզիկական աշխարհագրություն), այսինքն՝ վճռականորեն անտեսելով այն ամենը, ինչին այդ տարածությունը պարտական է՝ լինելով բնակելի և յուրացված: Այլ կերպ ասած, ֆիզիկական տարածությունը սոցիալական կառույց է և սոցիալական տարածության պրոյեկցիա, օբյեկտիվացված սոցիալական կառուցվածք (ինչպես, օրինակ՝ քաբիլյան տունը կամ քաղաքի նախագիծը), նախկին և ներկա սոցիալական հարաբերությունների օբյեկտիվացում և նատուրալացում:

Սոցիալական տարածությունը վերացական տարածություն է, որը կառուցակցված է ենթատարածությունների կամ դաշտերի (տնտեսական դաշտ, ինտելեկտուալ դաշտ և այլն) համակազմով, որոնք իրենց կառուցվածքով պարտական են տարբեր տիպի կապիտալների անհավասար բաշխմանը: Այն կարող է ընկալվել տարբեր տիպի կապիտալների բաշխման կառուցվածքի ձևով, որոնք գործառում են միաժամանակ որպես գործիքներ և որպես պայքարի նպատակներ տարբեր դաշտերում (այն, ինչ «Տարբերակման» մեջ բնորոշվել էր՝ որպես կապիտալի ընդհանուր ծավալ և կառուցվածք): Ֆիզիկապես իրացված սոցիալական տարածությունն իրենից ներկայացնում է տարբեր տեսակի բարիքների և ծառայությունների, ինչպես նաև անհատական ագենտների և խմբերի (որպես մշտական վայրին՝ ամրագրված բնակության վայրին կամ բնակվելու հիմնական վայրին կապված մարմիններ) բաշխումը ֆիզիկական տարածության մեջ: Վերջիններս ֆիզիկապես տեղայնացված են և հնարավորություն ունեն յուրացնելու այդ քիչ թե շատ նշանակալի բարիքներն ու ծառայությունները (կախված իրենց ունեցած կապիտալից, ինչպես նաև այդ բարիքներից բաժանող ֆիզիկական հեռավորությունից, որն էլ, իր հերթին, կախված է նրանց կապիտալից): Ագենտների՝ որպես կենսաբանական անհատների, և բարիքների այդպիսի կրկնակի բաշխումը տարածության մեջ սահմանում է իրացված սոցիալական տարածության տարբեր ոլորտների տարբերակված արժեքը:

Ֆիզիկական տարածությունում ծառայությունների և բարիքների բաշխումները, որոնք համապատասխանում են տարբեր դաշտերին կամ, եթե կարելի է ասել, տարբեր ֆիզիկապես իրացված սոցիալական տարածություններին, ձգտում են գոնե մոտավորապես համընկնել իրար. դրա հետևանքն առավել սուղ բարիքների և դրանց սեփականատերերի կենտրոնացումն է ֆիզիկական տարածության կոնկրետ տեղերում (Հինգերորդ պողոտա, Ֆոբուր դե Սեն-Օնորեյի փողոց), որոնք բոլոր առումներով հակադրվում են բոլոր այն վայրերին, որոնք միավորում են հիմնականում, իսկ երբեմն բացառապես ամենաթշվառներին (գետտո): Այդ վայրերը հետազոտողի համար թակարդ

են, քանի որ դրանք, ընդունելով որպես այդպիսին, անզգույշ դիտարկողն (օրինակ՝ նա, ով նպատակ ունի վերլուծելու Մեդիսոն Պողոտայի և Հինգերերդ Պողոտայի վրա գտնվող շքեղության ապրանքների առևտրին բնորոշ սիմվոլիկան, ֆրանսերինց փոխառնված սեփական կամ հասարակ անունների օգտագործումը, նախնիների հիշատակման երևույթը և այլն) իրեն դատապարտում է սուբստանցիոնալ և ռեալիստական մոտեցումների՝ բաց թողնելով գլխավորը. ինչպե՞ս են Մեդիսոն Պողոտան, Ֆոբուր դե Սեն-Օնորե փողոցը միավորում առևտրային ձեռնարկությունների ողջ խումբը՝ նկարները, հնաոճ իրեր վաճառողներին, «բարձր նորաձևության» տները, կոշիկի դիզայներներին, նկարիչներին, ձևավորողներին և այլն, որոնք իրենց դաշտում (կամ սոցիալական տարածության մեջ), ընդհանուր առմամբ, զբաղեցնում են բարձր (հետևաբար՝ միմյանց նկատմամբ համասեռ) դիրքեր և որոնք չեն կարող հասկացվել այլ կերպ, հենց իրենց յուրահատկության մեջ՝ սկսած անվանումից, այլ կարող են հասկացվել միայն միևնույն դաշտին պատկանող, սակայն փարիզյան տարածության այլ ոլորտներ զբաղեցնող ձեռնարկությունների հետ հարաբերակցության մեջ:

Օրինակ՝ Ֆոբուր դե Սեն-Օնորե փողոցի ձևավորողները հակադրվում են (առաջին հերթին իրենց հանրահայտ անունով, բայց նաև բոլոր հատկություններով, բնույթով, առաջարկվող ապրանքների որակով և գներով, հաճախորդների սոցիալական որակներով և այլն) նրանց, որոնց Ֆոբուր Սեն-Անտուանում անվանում են ատաղձագործկահույքագործներ. սանրվածքի դիզայներները նմանատիպ հարաբերակցության մեջ են սովորական վարսահարդարների հետ, կոշիկի դիզայներները՝ սովորական կոշկակարների և այլն:

Այնքանով, որքանով այս տարածությունը միայն կենտրոնացնում է բոլոր դաշտերի դրական բևեռները (այնպես, ինչպես գետտոն կենտրոնացնում է բոլոր բացասական բևեռները), այն իր մեջ ճշմարտություն չի պարունակում: Նույնը վերաբերում է նաև մայրաքաղաքին, որը (առնվազն Ֆրանսիայում) կապիտալի վայր է, այսինքն՝ վայր ֆիզիկական տարածության մեջ, որտեղ կենտրոնացված են բոլոր դաշ-

տերի բարձր դիրքերը և այդ գերիշխող դիրքերն զբաղեցնող ազենտների մեծ մասը։ Հետևաբար մայրաքաղաքը չի կարող իմաստավորվել այլ կերպ, քան գավառների հետ հարաբերակցության մեջ։

**Յուրացված ֆիզիկական տարածության ծագումնաբանությունը և կառուցվածքը**

Տարածությունը, ավելի ճիշտ, նյութականացված սոցիալական տարածության կամ յուրացված ֆիզիկական տարածության վայրերը և հարթակները իրենց սղությամբ և արժեքավորությամբ պարտական են նրան, որ իրենք տարբեր դաշտերում տեղի ունեցող պայքարի նպատակն են այնքանով, որքանով դրանք այդ պայքարում քիչ թե շատ վճռորոշ առավելություն են բնորոշում կամ ապահովում։

Յուրացված տարածությունում գերիշխելու կարողությունը, հատկապես դրանում բաշխվող սուղ բարիքների յուրացման (նյութապես և սիմվոլիկ առումով) հաշվին, կախված է կանխիկ կապիտալից։ Կապիտալը թույլ է տալիս հեռու պահել անցանկալի մարդկանց ու առարկաները և միաժամանակ մոտենալ ցանկալի մարդկանց ու առարկաներին՝ այդ կերպ նվազագույնի հասցնելով դրանց յուրացման համար անհրաժեշտ ծախսերը (հատկապես ժամանակի)։ Ընդհակառակը, նրանց, ովքեր զրկված են կապիտալից, կա՛մ ֆիզիկապես, կա՛մ սիմվոլիկ եղանակով հեռու են պահում սոցիալական առումով առավել հազվագյուտ բարիքներից և դատապարտում են շփվելու առավել անցանկալի և պակաս հազվագյուտ մարդկանց և առարկաների հետ։ Կապիտալի բացակայությունը վերջավորության փորձը հասցնում է ծայրահեղ աստիճանի. այն գամում է տեղին։ Եվ հակառակը, կապիտալին տիրապետելը, բացի սուղ բարիքներին ֆիզիկական մոտիկությունն ապահովելուց (բնակության վայր), ապահովում է կարծես թե մի քանի տեղում միաժամանակյա ներկայության հնարավորությունը՝ շնորհիվ տրանսպորտի և հաղորդակցման միջոցների հանդեպ ունեցած տնտեսական և սիմվոլիկ իշխանության (որը հաճախ կրկնապատկվում է պատվիրակման էֆեկտով, այն է՝ հեռավորության վրա

երրորդ անձի միջոցով գոյություն ունենալու և գործելու հնարավորությամբ)։

Հասանելիության և յուրացման հնարավորություններն, ինչպես արդեն տեսանք, սահմանվում են որպես տեղայնացված մարմիններ և որպես կապիտալի սեփականատերեր՝ վերցված ագենտների տարածական բաշխման և սոցիալական հարաբերություններում ազատ բարիքների կամ ծառայությունների բաշխման հարաբերակցության միջոցով։ Այստեղից հետևում է, որ իշխանության տարածական բաշխման կառուցվածքը, այլ կերպ ասած, կայուն կերպով և լեգիտիմորեն յուրացված միջոցներն ու ագենտները՝ օժտված անհավասար հասանելիությամբ բարիքներին կամ դրանց յուրացմանը՝ ինչպես նյութական, այնպես էլ սիմվոլիկ առումներով, իրենից ներկայացնում է տարածական շահույթների համար տարվող սոցիալական պայքարի վիճակի օբյեկտիվացված ձև։

Այդ պայքարը կարող է ընդունել անհատական ձևեր՝ տարածական շարժունություն (ներսերնդային և միջսերնդային), տեղափոխումներ երկու ուղղություններով, օրինակ՝ կենտրոնի (մայրաքաղաքի) և ծայրամասի միջև կամ մայրաքաղաքի աստիճանակարգված տարածության ներսում տեղակայված հաջորդական հասցեների միջև, որոնք այդ պայքարում կամ, ավելի ընդհանուր, ամբողջ սոցիալական հետագծում (այն բանը հասկանալու պայմանով, որ տարբեր տարիքի և տարբեր սոցիալական հետագծեր ունեցող ագենտները, ինչպես նաև, օրինակ, վերին օղակի երիտասարդ ղեկավարները և միջին օղակի տարեց աշխատակիցները կարող են ժամանակավորապես գոյակցել միևնույն դիրքերում, և, նույն կերպ, նրանք կարող են լինել նաև հարևաններ՝ ըստ բնակավայրի՝ դարձյալ ժամանակավորապես) ձեռք բերված հաջողության կամ պարտության լավ ցուցիչ են։

Տարածության համար պայքարը կարող է իրականանալ նաև կոլեկտիվ մակարդակում, մասնավորապես քաղաքական պայքարի միջոցով, որը ծավալվում է՝ սկսած պետական մակարդակից (բնակարանային քաղաքականություն) մինչև տեղական ինքնակառավարման

մակարդակ՝ շինարարության և հանրային բնակարանների տրամադրման կամ կոմունալ ծառայությունների ընտրության միջոցով:

Պայքարը կարող է ընթանալ՝ ելնելով տարածականորեն համասեռ խմբերի կառուցման նպատակներից, այն է՝ սոցիալական սեգրեգացիայի, որը միաժամանակ տարածության և ծառայությունների բացարձակ տիրապետման պատճառ և արդյունք է, որն անհրաժեշտ է այդ տարածությունը զբաղեցնող խմբի և դրա վերարտադրության համար: (Տարածական գերիշխանությունը գերիշխանության գործադրման ամենաարտոնյալ ձևերից մեկն է, իսկ տարածության մեջ խմբերի բաշխման մանիպուլյացիան միշտ ծառայել է խմբերին մանիպուլացնելուն, ինչը մասնավորապես կարող է վերաբերել տարածության օգտագործմանը, որը իրագործվում է գաղութացման տարբեր ձևերի պարագայում):

Տարածական շահույթները կարող են ընդունել տեղայնացման շահույթների ձև, որոնք, իրենց հերթին, կարող են դիտարկման ենթակա լինել երկու տեսանկյուններից: Առաջինը օգուտն է իրավիճակից, որը կապված է հազվագյուտ կամ ցանկալի իրերին (բարիքներին կամ ծառայություններին, օրինակ՝ կրթական, մշակութային կամ սանիտարական սարքավորումներին) և ագենտներին (որոշակի հարևանություն, որը բերում է որոշակի օգուտներ, օրինակ՝ հանգիստ միջավայր, անվտանգություն և այլն) մոտ գտնվելու կամ անցանկալի առարկաներից և ագենտներից հեռու մնալու հանգամանքների հետ: Երկրորդը, դիրքի կամ աստիճանի շահույթներն են (օրինակ՝ նրանք, որոնք ապահովվում են հեղինակավոր համարվող հասցեներով), որոնք տարբերվելու հանգամանքից ստացվող սիմվոլիկ շահույթների, այն է՝ տարբերվող սեփականության մենաշնորհային տիրապետման մասնավոր դեպքն են: (Ֆիզիկական հեռավորությունները, որոնք կարելի է չափել տարածության չափման միավորներով կամ, ավելի ճիշտ, ժամանակի չափման միավորներով, օրինակ՝ ժամանակի տևողությամբ, որն անհրաժեշտ է տեղափոխման համար՝ կախված հանրային կամ մասնավոր տրանսպորտի միջոցների հասանելիությունից, այլ կերպ ասած, այն իշխանությունը, որը տալիս է կապիտալն իր տարբեր տեսակներում

տարածության հանդեպ, ըստ էության իշխանություն է նաև ժամանակի հանդեպ): Դրանք հետագայում կարող են ընդունել տարածության (կամ չափերի) զրավումից ստացած շահույթի ձև, այն է՝ ֆիզիկական տարածության (հսկայական այգիների, մեծ բնակարանների և այլն) տիրապետման՝ դառնալով անցանկալի ներխուժումներից հեռավորության պահպանման միջոց (դա անգլիական տնային տնտեսությունների՝ աչքին հաճո «տեսարաններն» են, որոնք, ինչպես նշել է Ռայմոնդ Վիլյամեն «Քաղաքը և գյուղը» գրքում, գյուղական վայրը և նրա գյուղացիներին վերածում են սեփականատիրոջ զոհունակությունն առաջացնող բնապատկերի, իսկ ոչ ֆոտոգենիկ անկյունները՝ անշարժ գույքի գովազդի): Տարածության հանդեպ իշխանության առավելություններից մեկը հեռավորություն (ֆիզիկական) պահպանելու հնարավորությունն է կաշկանդող կամ վարկաբեկող առարկաներից և մարդկանցից, որոնք դա անում են մասնավորապես բախումներ պարտադրելու միջոցով (որոնք վերապրվում են իբրև կուտակվածության դրսևորումներ, որպես ապրելու կամ գոյության սոցիալապես անընդունելի ձևեր), կամ նույնիսկ ընկալվող տարածության զրավման միջոցով՝ ներկայացումներով կամ աղմուկներով, որոնք իրենց սոցիալական պայմանավորվածության և բացասական գնահատման պատճառով անխուսափելիորեն ընկալվում են որպես միջամտություն կամ նույնիսկ ագրեսիա:

Բնակավայրը՝ որպես սոցիալապես որակված ֆիզիկական վայր, տրամադրում է տվյալ պահին տրամադրության տակ գտնվող տարբեր նյութական և մշակութային բարիքների և ծառայությունների յուրացման միջինացված շանսեր: Յուրացման շանսերը մասնավորեցվում են այդ գոտու տարբեր բնակիչների համար ըստ յուրաքանչյուր ագենտի ունեցած նյութական (գումար, մասնավոր փոխադրամիջոց և այլն) և մշակութային կարողություններից (Փարիզի 16-րդ զանգվածի հսպանացի սպասուհին չունի տվյալ զանգվածի կողմից առաջարկվող բարիքները և ծառայությունները յուրացնելու այն նույն հնարավորությունները, որոնք ունի նրա գործատուն): Կարելի է ֆիզիկապես զբաղեցնել տունը, սակայն փաստացիորեն չապրել այդ տանը, եթե չես

տիրապետում անհրաժեշտ միջոցների՝ սկսած որոշակի հաբիթուսից): Դա հատուկ է այն ալժիրցի ընտանիքներին, որոնք զետնախորշից տեղափոխվելով HLM շրջան, հայտնաբերում են, որ, հակառակ բոլոր սպասումներին, նրանք «հարված են ստացել» նոր և այդքան սպասված բնակարան ստանալով՝ չունենալով հնարավորություն իրագործելու բոլոր պահանջները, որոնք այն թաքնված կերպով պարունակում է, օրինակ՝ ի հայտ եկած ծախսերը (գազի, էլեկտրականության, ինչպես նաև տրանսպորտի, սարքավորումների և այլնի) հոգալու համար ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և այլն:

Կարճ ասած, հաբիթուսը (habitus) ձևավորում է բնակության վայրը (habitat) այդ վայրի քիչ թե շատ համարժեք սոցիալական օգտագործման միջոցով: Այսպիսով, մենք հանգում ենք նրան, որ կասկածի տակ պետք է դրվի հավատն առ այն, որ տարածական մոտիկությունը, կամ, ավելի ճիշտ, սոցիալական տարածությունում խիստ հեռու գտնվող ագենտների համակեցությունը կարող է ինքնին հանգեցնել սոցիալական մերձեցման. իրականում ոչինչ իրարից ավելի հեռու և անհամադրելի չէ, քան սոցիալապես միմյանցից հեռու գտնվող մարդիկ, որոնք կողք կողքի են հայտնվել ֆիզիկական տարածության մեջ: Եվ պետք է նաև հարց դնել բնակելի տարածության սոցիալական կառուցվածքի և վերջինիս ենթադրյալ բնակիչների մտային կառուցվածքների անտեսման (ակտիվ կամ պասիվ) մասին: Այդ հարցը այդքան ճարտարապետների ուղղորդում է վարվել այնպես, թե իբրև նրանք կարող են պարտադրել շենքերի և սարքավորումների սոցիալական օգտագործումը. նրանք վերջիններիս վրա են պրոյեկտում սեփական մտային կառուցվածքները, այլ կերպ ասած, այն սոցիալական կառուցվածքները, որոնց արդյունքը նրանց մտային կառուցվածքներն են:

Կարելի է բերել այն ընտանիքների մասնավոր օրինակը, որոնք իրենց տրամադրված տարածության մեջ զգում են կամ իրականում գտնվում են «ոչ իրենց տեղում»՝ ըստ այն հարացույցի, որի համաձայն վտանգի ես ենթարկվում ամեն անգամ, երբ ներթափանցում ես տարածություն՝ չկատարելով բոլոր պայմանները, որոնք տարածությունը թաքնված կերպով ներկայացնում է իր բնակիչներին: Այդպիսի պայ-

ման կարող է լինել որոշակի մշակութային կապիտալին տիրապետելը՝ մուտքի իրական վճարը, որը կարող է խոչընդոտել հասարակական կոչվող բարիքների իրական յուրացմանը կամ հենց դրանք յուրացնելու ցանկությանը: Ակնհայտ է, որ այստեղ նկատի են առնվում թանգարանները, բայց դա վերաբերում է նաև այն ծառայություններին, որոնք ակամա ընդունվում են՝ իբրև համընդհանուր անհրաժեշտություն ունեցող (օրինակ՝ բժշկական կամ իրավաբանական հաստատությունները), կամ մեծ հասանելիություն ունեցողները (սոցիալական ապահովագրություն և անվճար օգնության տարբեր տեսակներ): Փարիզը կարելի է գնահատել իր տնտեսական կապիտալի համար, կարելի է նաև մշակութային և սոցիալական կապիտալների համար, սակայն Բոբուր ժամանակակից արվեստի թանգարան մտնելը քիչ է մշակութային արժեքները յուրացնելու համար, չի կարելի նաև վստահ լինել նրանում, որ անհրաժեշտ և բավական է մտնել ժամանակակից արվեստի դահլիճ (ակնհայտ է, որ այդպես են անում ոչ բոլոր այցելուները) բացահայտելու համար, որ այն տիրապետելու համար բավական չէ այնտեղ մտնելը…

Որոշ տարածություններ, մասնավորապես՝ առավել փակերը, առավել «ընտրյալները», տնտեսական և մշակութային կապիտալներից բացի, պահանջում են նաև սոցիալական կապիտալի առկայություն: Այդ տարածություններն իրենց կարող են ապահովել սոցիալական և սիմվոլիկ կապիտալով միայն «ակումբի էֆեկտի» օգնությամբ, որը առաջանում է միևնույն տարածության խորքերում (շքեղ թաղամասեր կամ հրաշալի առանձնատներ) մարդկանց և առարկաների հաստատուն միավորումներից, այն մարդկանց և առարկաների, որոնք իրար նման են նրանով, ինչը նրանց տարբերում է ուրիշների հսկայական բազմությունից, ինչն ընդհանուր է նրանց համար՝ չհամարվելով ընդհանուր: Ակումբի էֆեկտը գործում է այն չափով, որքանով մարդիկ բացառում են օրենքով (*numerus clausus*[270]-ի քիչ թե շատ հայտնի ձևերի օգնությամբ) կամ փաստացի (օտարը դատապարտված է որոշակի ներքին բացառման, ինչը կարող է նրան զրկել սեփականությունից

[270] Քանակության սահմանափակում – *խմբագրի ծանոթագրություն*:

ստացվող որոշակի շահույթից) բոլոր նրանց, ովքեր չեն դրսևորում ցանկալի հատկություններ կամ դրսևորում են անցանկալի հատկություններից մեկը:

Գետոյի էֆեկտը ակումբի էֆեկտի ճիշտ հակառակն է: Այն դեպքում, երբ շքեղ թաղամասերը, որոնք գործառում են որպես անցանկալի դեմքերի ակտիվ բացառման վրա հիմնված ակումբներ, սիմվոլիկ կերպով ընդունում են իրենց բնակիչներից յուրաքանչյուրին՝ թույլ տալով նրանց մասնակցել բոլոր բնակիչների կողմից կուտակված կապիտալում, գետոն սիմվոլիկ կերպով քայքայում է իր բնակիչներին: Այն որոշակի ռեզերվացիայում միավորում է ագենտների մի ամբողջություն, որոնք, զրկված լինելով տարբեր սոցիալական խաղերում մասնակցելու համար անհրաժեշտ բոլոր հաղթաթղթերից, կարող են կիսվել միայն իրենց բացառվածությամբ: Բացի «պիտակավորման» էֆեկտից՝ իրենց զրկվածությամբ միմյանց նման մարդկանց միավորումը մեկ տեղում բերում է նաև այդ զրկվածության կրկնապատկմանը, հատկապես մշակույթի և մշակութային պրակտիկայի ոլորտում (և հակառակը՝ «պիտակավորման» էֆեկտը ամրապնդում է առավել ապահովվածների մշակութային պրակտիկաները): <>

Ցույց տալու համար, թե ինչպես է իշխանությունը, մասնավորապես տարածության նկատմամբ իշխանությունը, որը կապիտալի տարբեր տեսակների տիրապետման հնարավորություն է ընձեռում, հետ վերադարձվում յուրացված ֆիզիկական տարածություն՝ մասնավոր կամ հանրային սուղ բարիքների և ծառայությունների հասանելիության և տիրապետման տարածական բաշխման տեսքով, ես մի քանի տարի առաջ Մոնիկ դե Սեն-Մարտենի հետ փորձել եմ ի մի բերել ֆրանսիական յուրաքանչյուր գերատեսչության մակարդակում առկա վիճակագրական տվյալների ամբողջությունը՝ ըստ տնտեսական, մշակութային, սոցիալական կապիտալների ցուցանիշների, ինչպես նաև ըստ այս մակարդակում ենթադրվող բարիքների և ծառայությունների: Այս նախաձեռնության նպատակն էր փորձել որսալ այն ամենը, ինչին հաճախ վերագրում են ֆիզիկական կամ աշխարհագրական տարածության գործառման արդյունքը՝ անգիտակցորեն ենթարկ-

վելով սոցիալական տարածության վերափոխումը յուրացված ֆիզիկական տարածության վերածող նատուրալիզացման ազդեցությանը: Իրականում դա կարող է և պետք է վերագրվի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ռեսուրսների և բարիքների տարածական բաշխման կառուցվածքի գործառման արդյունքին: Այդ կառուցվածքը ոչ այլ ինչ է, քան ժամանակի տրված պահին տեղային հիմքով (տարածաշրջան, գերատեսչություն և այլն) միավորման ողջ պատմության բյուրեղացումը, ինչպես նաև պետական տարածության մեջ վերջինիս դիրքի բյուրեղացումը և այլն: Չնայած այս հետազոտությունը ժամանակի բացակայության պատճառով չի ավարտվել, այն ամենաքիչը թույլ տվեց եզրակացնել, որ տարածաշրջանային տարբերություններից գլխավորը, որը հաճախ վերագրում են աշխարհագրական դետերմինիզմի ազդեցության արդյունքին (օրինակ՝ հյուսիսի և հարավի հակադրության տրամաբանությամբ), պատմության մեջ իր վերարտադրությամբ պարտական է շրջանաձև ամրապնդման էֆեկտին, որը շարունակաբար իրականացվում է պատմության ընթացքում: Քանի դեռ ձգտումները, հատկապես՝ կապված բնակավայրի և ավելի լայն՝ մշակույթի հետ, մեծամասամբ համարվում են յուրացված ֆիզիկական տարածության մեջ բարիքների և ծառայությունների բաշխման կառուցվածքի արդյունքներ, դրանք փոփոխվելու միտում ունեն (այդ ձգտումները բավարարելու ունակության հետ միասին), և այդ պատճառով է, որ ձգտումների անհավասար բաշխման ազդեցության արդյունքը բերում է ժամանակի յուրաքանչյուր պահին դրանց բավարարման միջոցների և շանսերի անհավասար բաշխման ազդեցության արդյունքի կրկնապատկմանը:

Սահմանելով և չափելով այն երևույթների ամբողջությունը, որոնք թեև արտաքինից կապված են ֆիզիկական տարածության հետ, բայց իրականում արտացոլում են տնտեսական և սոցիալական տարբերությունները, մեզ մնում է միայն տարբերակել անբաժանելի մնացորդը, որն ամբողջությամբ պետք է վերագրվի զուտ ֆիզիկական տարածությունում մոտիկության կամ հեռավորության էֆեկտին: Օրինակ՝ էկրանի էֆեկտին, որը առաջանում է ֆիզիկական տարածության ինչ-որ

կետում տեղայնացումից և այն մարդաբանական արտոնությունից, որ պատկանում ես ոչ միայն անմիջականորեն ընկալելի ներկային, այլև ներկա առարկաների և ագենտների (հարևաններ և հարևանություն) տեսանելի և շոշափելի տարածությանը: Այսպիսով, կարելի է տեսնել, որ ֆիզիկական տարածության մեջ մոտիկության հետ կապված թշնամությունը (օրինակ՝ հարևանների միջև կոնֆլիկտները) ստվերում է այն համերաշխությունը, որը ասոցիացվում է պետական կամ միջպետական սոցիալական տարածության մեջ զբաղեցրած դիրքի հետ, կամ որ պատկերացումները, որոնք ներշնչված են տեղական սոցիալական տարածության մեջ զբաղեցրած դիրքից բխող տեսակետներով, կարող են խոչնդոտել պետական սոցիալական տարածության մեջ իրապես զբաղեցրած դիրքի ընկալմանը:

### ԱՆՐԻ ԼԵՖԵՎՐ

## ԱՌՕՐԵԱԿԱՆԸ ԵՎ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ[271]

**Ներածություն**

Մինչ մի շարք հեղափոխությունները նշանավորեցին, այսպես կոչված, արդիականության գալուստը, կացարանը, հագուստը, սնունդը և խմիչքը (կարճ ասած՝ ապրելակերպը) չափազանց բազմազան էին. ենթարկված չլինելով որևէ մեկ համակարգի՝ ապրելակերպը տարբերվում էր՝ կախված տարածաշրջանից և երկրից, բնակչության շերտից և դասակարգից, բնական ռեսուրսների մատչելիությունից, տարվա եղանակից, կլիմայից, մասնագիտությունից, տարիքից և սեռից: Այս բազմազանությունը երբեք լիովին չի գիտակցվել և չի ճանաչվել որպես այդպիսին. այն դիմադրում էր ռացիոնալ բացատրությանը, որը ծագել է միայն մեր ժամանակներում՝ հենց բազմազանության ոչնչացման շնորհիվ: Այսօր մենք ականատեսն ենք համաշխարհային միտումների միասնականացման: Գերիշխում է միայն ռացիոնալը, որին ուղեկցում, սակայն որը չի զանազանում իռացիոնալը. նշանները (յուրովի ռացիոնալ) կցվում են իրերին՝ վկայելով իրենց սեփականատերերի հեղինակության և սոցիալական աստիճանակարգում նրանց զբաղեցրած տեղի մասին:

**Ձևեր, գործառույթներ և կառուցվածքներ**

Ի՞նչ է տեղի ունեցել: Գոյություն ունեն (և միշտ գոյություն են ունեցել) ձևերը, գործառույթները և կառույցվածքները: Իրերը և ինստիտուտները, «օբյեկտները» և «սուբյեկտները» զգացմունքների առջև են հայտնվում հասանելի և լավ ճանաչելի ձևերում: Մարդիկ՝ առանձինառանձին կամ խմբերում, կատարում են տարբեր գործառույթներ, ինչ-

[271] Lefebre, H., Levich, C. The Everyday and Everydayness//Yale French Studies, No. 73, Yale University Press, 1987, pp. 7-11. *Թարգմանությունը՝ Սոնա Սաղաթելյանի:*

պես ֆիզիոլոգիական (սնունդ, խմիչք, քուն), այնպես էլ սոցիալական (աշխատանք, ճանապարհորդություն): Կառույցվածքները՝ բնական և սոցիալական, թույլ են տալիս այդ գործառույթները կատարել հանրային կամ մասնավոր եղանակներով, սակայն այստեղ կա մի արմատական տարբերություն՝ այդ ձևերը, գործառույթներն ու կառույցվածքները նախկինում ճանաչման և անվանակոչման առարկա չեն եղել: Միաժամանակ լինելով միմյանց հետ կապված և տարբերվող՝ դրանք ոչ տարբերակված ամբողջի մի մասն էին կազմում: Հետկարտեզիական վերլուծական մտածողությունը հաճախ է հիմնախնդրավորել այդ կոնկրետ «ամբողջությունները». բնական կամ սոցիալական իրականության յուրաքանչյուր հետազոտություն ենթադրում էր վերլուծությանը դիմադրող որոշակի մնացորդի առկայություն, և մարդկային մտքի համար անանցանելի ու անհաղթահարելի նման երևույթների ամբողջությունը անսահման իմաստավորման օբյեկտ էր՝ աստվածային մտքի պահոց: Յուրաքանչյուր բարդ «մի ամբողջ»՝ ամենապարզ գործիքից մինչև արվեստի և գիտության մեծագույն գործեր, ուներ սիմվոլիկ նշանակություն, որը կապում էր վերջինս սահմանային արժեքներին՝ աստվածային և մարդկային, իշխանության և իմաստության, բարու և չարի, երջանկության և դժբախտության, հավերժի և անցողիկի: Այս մեծագույն արժեքները, ըստ էության, տարբերվում են՝ կախված սոցիալական դասակարգերի, կառավարողների և ուսուցիչների պատմական հանգամանքներից: Այսպիսով, յուրաքանչյուր օբյեկտ (աթոռ և հագուստի առարկա, խոհանոցային պարագաներ և շենք) նշանավորվում էր որոշակի «ոճով» և, համապատասխանաբար, որպես արտադրանք, ձեռք էր բերում (միաժամանակ թաքցնելով դրանք) ավելի լայն գործառույթներ և կառուցվածքներ, որոնք իր ձևի անբաժանելի մասն էին:

Ի՞նչ փոխվեց: Գործառական տարրերը բաժանվեցին, ռացիոնալացվեցին, սկսեցին արտադրվել արդյունաբերական եղանակով, ապա հարկադրաբար փոխվեցին և պարտադրվեցին գովազդի և հզոր տնտեսական ու քաղաքական լոբբիի միջոցով: Ձևի, գործառույթի և կառուցվածքի փոխկապակցվածությունը չանհետացավ: Ընդհակառակը, այն

սկսեց հոչակվել, արտադրվել *որպես այդպիսին*՝ իբրև ավելի ու ավելի տեսանելի ու հստակ, իբրև հոչակված ու այդ տարրերի թափանցիկ հարաբերություններում ներկայացվող: Արդիականության դարաշրջանի օբյեկտը հստակ ասում է, թե *ինչ* է այն՝ նշելով իր դերը և տեղը: Բայց դա չի կանխում վերջինիս վերագնահատումը, դրա նշանակալիության նշանների թվի ավելացումը, այն է՝ բավարարվածության, երջանկության, որակի, նյութական արժեքի նշանների: Լինի դա մի բազկաթոռ, սրճեփ կամ մեքենա, այսօր ձևի, գործառույթի և կառուցվածքի հաղթանակը ակնհայտ է և հստակ:

Այս պարամետրերի շրջանակներում առաջացան բազմաթիվ համակարգեր և ենթահամակարգեր, որոնցից յուրաքանչյուրը իր սեփական եղանակով է սահմանում քիչ թե շատ կայուն, քիչ թե շատ մշտական օբյեկտների հավաքակազմը: Օրինակ, ճարտարապետության մեջ բազմաթիվ տեղային, տարածաշրջանային, ազգային ճարտարապետական ոճեր իրենց տեղը զիջեցին «ճարտարապետական ուրբանիզմին»՝ կառուցվածքների ու գործառույթների համընդհանուր համակարգին, որն, ընդհանուր առմամբ, մարմնավորված է ռացիոնալ երկրաչափական ձևերում: Նույնը ճիշտ է նաև արդյունաբերական եղանակով արտադրված ապրանքների համար. համակարգը խմբավորում է դրանք գործառական առումով համեմատաբար տարբեր հատուկ կենցաղային իրերի (սառնարան, սառնախցիկ վառարան և այլն) նկատմամբ: Եվ իհարկե, ավտոմեքենայի շուրջ ստեղծված ամբողջականացնող համակարգը, ըստ երևույթին, պատրաստ է զոհաբերել ողջ հասարակությունը՝ հանուն սեփական տիրապետության: Տեղի է ունեցել այնպես, որ այդ համակարգերը և ենթահամակարգերը հակված են հնանալ և շարքից դուրս գալ: Եվ արդյո՞ք ավտոմեքենաների դարաշրջանը չի մոտենում իր ավարտին:

Ինչ-ինչ պատճառներով բնակարանը, հագուստը, սնունդը հակված էին և հակված են ձևավորելու ինքնավար ենթահամակարգեր, որոնք իրարից փակ են: Դրանցից յուրաքանչյուրը ձգտում է ստեղծել գերագույն բազմազանության նույն տպավորությունը, որը հատուկ էր նախկին կյանքի ոճերին՝ նախաարդիական դարաշրջանի կյանքի ոճե-

րին: Բայց դա միայն թվացյալ բազմազանություն է: Հենց որ այդ տարբերին համակցման հնարավորություն տվող իշխող ուժերը ճանաչվեն, դրանց խմբավորման արհեստական մեխանիզմը կդառնա ակնհայտ, իսկ բազմազանության անհեթեթությունը՝ անհանդուրժելի: Համակարգը կործանվում է:

Նման բոլոր համակարգերը միավորում է ֆունկցիոնալիզմի ընդհանուր օրենքը: Հետևաբար առօրեականը կարող է սահմանվել որպես գործառույթների հավաքակազմ, որոնք կապում և միավորում են տարբեր թվացող համակարգերը: Հասկանալի է, որ առօրեականությունը մի արդյունք է, կարևորագույն արդյունքն այն դարաշրջանի, որում արտադրությունը առաջացնում է պահանջարկը, որում արտադրողները շահարկում են սպառողներին. ոչ թե «աշխատողները», այլ կառավարիչները և արտադրության (խելացի, գործիքային, գիտական) միջոցների սեփականատերերը: Ուստի առօրեականությունը ամենահամեստ և միաժամանակ իր տեսակի մեջ միակ պայմանն է՝ առավելապես սոցիալական և միաժամանակ առավել անհատականացված, առավել ակնհայտ և լավագույնս թաքնված: Այն պայմանը, որն անհրաժեշտ է ձևերի հարմարավետության համար, նախատեսված է գործառույթների միջին արժեքներով, որը ներգրված է կառուցվածքներում. առօրեականությունը ձևավորում է մի հարթակ, որի վրա կառուցվում է վերահսկվող սպառողականության բյուրոկրատական հասարակությունը:

## Ընդհանուր հայտարարը

Հետևաբար առօրեականությունը հասկացություն է: Այսպիսին դառնալու համար իրականությունը, որն այն բնորոշում է, պետք է սկսեր գերակայել, իսկ դեֆիցիտի նախկին վախերը («թող մեզ մեր հանապազօրյա հացը վայր ընկնի») անհետանային: Մինչև վերջերս իրերը, կահույքը, շենքերը ստեղծվում էին անհատապես կամ խմբերով, և ամեն բան կապ ուներ ընդունված բարոյական և սոցիալական հարաբերությունների, սիմվոլների հետ: XX դարում բոլոր այդ կապերն անհետացան, այդ թվում՝ Հոր (լինի դա հավերժական, թե ժամանակի մեջ

գտնվող, աստվածային կամ երկրային) մեծագույն և հնագույն կերպարը: Ինչպե՞ս հասկանալ այդ արտակարգ և դեռևս բավարար չափով չհասկացված իրերի դրությունը: Բարոյականության, պատմության, բնության, կրոնի, քաղաքների, տարածության հետ կապի լիակատար տապալում, անգամ տարածականության հեռանկարի տապալում (իր դասական իմաստով), երաժշտության մեջ տոնայնության տապալում… Առատությունը՝ ռացիոնալ, ծրագրավորված առատությունն ու ապրանքների ծրագրավորվող «բարոյական հնացումը» եկան փոխարինելու դեֆիցիտին Առաջին աշխարհում. տեղի ունեցավ Երրորդ աշխարհի ավերիչ գաղութացում և, ի վերջո, բուն բնության... նշանների ամենուրեքությունը; համընդհանուր պատերազմն ու բռնությունը; հեղափոխությունները, որոնք բռնկվում են մեկը մյուսի հետևից միայն նրա համար, որ ընդհատվեն կամ ուղղվեն իրենց իսկ դեմ…

Հաստատված և սառեցված առօրեականությունը միակ պահպանված ռեֆերենտն է և առողջ բանականության հաշվարկային կետը: Իսկ «մտավորականները» իրենց կոորդինատային համակարգն են փնտրում այլ տեղերում՝ լեզվում, դիսկուրսում, երբեմն՝ կուսակցականության մեջ: Այստեղ մենք փորձում ենք առօրեականության կոդի օգնությամբ վերծանել ժամանակակից աշխարհը՝ այդ արյունոտ հանելուկը: Առօրեականության հասկացությունը նշանակում է ոչ թե համակարգ, այլ ավելի շուտ հայտարար, որն ընդհանուր է գոյություն ունեցող համակարգերի համար՝ իրավական, պայմանագրային, մանկավարժական, ֆինանսական, իրավապահ: Պարզունա՞կ է: Բայց ինչո՞ւ պետք է պարզունակի ուսումնասիրությունը պարզունակ լինի: Արդյո՞ք զարմացնող և անգամ կախարդական գերբնականը իրականի մասը չէ: Ինչո՞ւ «առօրեականություն» հասկացությունը չի կարող բացահայտել անսովորը սովորականում:

**Կրկնությունը և փոփոխությունը**

Այս կերպ սահմանված «առօրեականություն» հասկացությունը անցյալն ավելի հասկանալի է դարձնում: Առօրյա կյանքը միշտ գոյություն է ունեցել, նույնիսկ եթե դրա ձևերը խիստ տարբերվում էին մեր

սեփականներից: Առօրեականության էությունը միշտ եղել է կրկնելիությունը և քողարկվել է ցանկություններով ու վախով: Առօրեականության ուսումնասիրության մեջ մենք բացահայտում ենք կրկնության լուրջ խնդիր, մեր առջև ծառացած ամենադժվարին խնդիրներից մեկը: Առօրեականությունը գտնվում է երկու տիպի կրկնությունների խաչմերուկում՝ ցիկլային, որը գերիշխում է բնության մեջ, և գծային, որը գերակշռում է «ռացիոնալ» կոչվող գործընթացներում: Մի կողմից, առօրեականությունը ենթադրում է ցիկլեր՝ օրը ու գիշերը, տարվա եղանակները և գյուղատնտեսական սեզոնները, գործունեությունն ու հանգիստը, սովը ու հագեցվածությունը, ցանկությունն ու բավարարվածությունը, կյանքը ու մահը, մյուս կողմից այն իր մեջ է ներառում աշխատանքի ու սպառման կրկնվող գործողությունները: Ժամանակակից կյանքում այս կրկնվող գործողությունները քողարկում և ոչնչացնում են ցիկլերը: Աօրեականությունը բերում է միապաղաղություն: Միապաղաղությունը հաստատունն է այն փոփոխությունների, որոնք առօրեականությունն ընդգրկում է. օրը հետևում է օրվան, մեկը չի տարբերվում մյուսից, և, այնուամենայնիվ, դրանում մարմնավորվում է առօրեականության հիմնարար հակասությունը՝ ամեն ինչ փոխվում է: Սակայն, փոփոխությունը տեղի է ունենում ըստ ծրագրի. հնացումը ծրագրված է: Արտադրությունը կանխագործում է վերարտադրությունը. արտադրությունն արտադրում է փոփոխություններն այնպես, որպեսզի առաջացնի արագության տպավորություն միապաղաղության մեջ: Ոմանք բողոքում են, որ ժամանակն ավելի ու ավելի արագ է վազում, մյուսները՝ որ ոչինչ չի փոխվում: Երկու տեսակետներն էլ ճիշտ են:

**Ընդհանուր և հատուկ պասիվությունը**

Առօրեականությունը՝ գործունեության տեսակների ընդհանուր հայտարարը, լոկուսը և մարդկային գործառությունների միջավայրը, կարելի է նաև վերլուծել՝ իբրև սոցիալական կյանքի հիմնական ոլորտները (աշխատանք, ընտանիք, անձնական կյանք, ժամանց) միօրինակացնող ինչ-որ բան: Այս ոլորտները, թեև դրանց ձևերը տարբեր են,

գործնականում ունեն կառուցվածքային նմանություն, որը մեզ թույլ է տալիս բացահայտել այն, ինչը վերջիններիս միավորում է, այն է՝ կազմակերպված պասիվությունը: Ազատ ժամանցի պարագայում խոսքը կերպարների և բնապատկերների առջև հանդիսատեսի պասիվության մասին է: Աշխատավայրում տեսանելի է պասիվությունը որոշումների առջև, որոնց ընդունմանը աշխատողը չի մասնակցում, մասնավոր կյանքում դա նշանակում է սպառման պարտադրանք, քանի որ մեր ընտրությունը կառավարվում է, և կարիքները ստեղծվում են գովազդով ու մարքեթինգային հետազոտություններով: Բացի այդ, այս ընդհանուր պասիվությունը բաշխված է անհավասար: Այն ավելի ուժեղ ճնշում է գործադրում կանանց վրա, ովքեր դատապարտված են առօրյա կյանքի, ինչպես նաև՝ աշխատանքային դասի, ոչ տեխնոկրատ աշխատողների, երիտասարդության, կարճ ասած, այն ճնշում է գործադրում մարդկանց մեծ մասի վրա, չնայած որ երբեք նույն ձևով, նույն ժամանակում և երբեք ոչ բոլորի վրա միաժամանակ:

**Արդիականությունը**

Առօրեականությունն ընկած է մակերևույթի տակ՝ արդիականության մակերևույթի: Թերթերում ներկայացվող նորությունները, արվեստի փոթորկոտ ազդեցությունը, նորաձևությունը և սենսացիաները թաքցնում են առօրեականության անիմաստությունը՝ երբեք չոչնչացնելով այն: Կերպարների արդյունաբերությունը, կինեմատոգրաֆը, հեռուստատեսությունը «մերժում» են առօրեականությունը՝ ժամանակ առ ժամանակ վերջինիս առաջարկելով իր իսկ պատկերը, երբեմն էլ իրենից արմատապես տարբերվող տեսարաններ՝ բռնության, մահվան, աղետների, թագավորների և «աստղերի» կյանքի, այսինքն՝ նրանց, ովքեր, ինչպես մեզ ձգտում են համոզել, մարտահրավեր են նետում առօրեականությանը: Արդիականությունը և առօրեականությունը կազմում են խորքային մի կառուցվածք, որը քննադատական վերլուծությունը կարող է բացահայտել:

Առօրյա կյանքի այսպիսի քննադատական վերլուծությունը ինքնին շրջանառվում է իրար հակասող մի քանի եղանակներով: Ոմանք

անհանդուրժողականություն են ցուցաբերում առօրյա կյանքի նկատմամբ՝ ցանկանալով «փոխել կյանքը» և անել դա անմիջապես. նրանք ցանկանում են ամեն ինչ և միանգամից: Մյուսները կարծում են, որ սովորական կյանքի փորձը ո՛չ կարևոր է, ո՛չ էլ հետաքրքիր, և առօրեականությունը հասկանալու փոխարեն, այն պետք է նվազագույնի հասցնել, փակագծերի մեջ առնել՝ գիտության, տեխնիկայի, տնտեսական աճի և այլ խնդիրների հետազոտությունների համար «տեղ մաքրելու» նպատակով:

Առաջիններին կարող ենք պատասխանել այսպես. առօրեականության փոփոխությունը պահանջում է որոշակի պայմաններ: Չի կարելի վերջ տալ առօրեականությանը ինչ-որ հուզավառության միջոցով ՝ լինի դա խաղաղ, թե բռնի: Կյանքը փոխելու համար պետք է փոխել հասարակությունը, տարածությունը, ճարտարապետությունը, նույնիսկ քաղաքը: Երկրորդներին կարելի է պատասխանել հետևյալ կերպ՝ անթույլատրելի է «ապրվող փորձի» նշանակությունը զրոյացնելը. հասկանալ քաղքենիական մարդասիրության անհամաչափությունը չի նշանակում նայել մարդկանց որպես միջատների: Այն պատճառով, որ մեր տրամադրության տակ են գտնվում հսկայական տեխնիկական միջոցներ, և այն սարսափելի վտանգների պատճառով, որոնք սպասում են մեզ ապագայում, մենք «մարդկային» մարդասիրությունից հրաժարվելու ռիսկի ենք դիմում՝ «գերմարդկայինի» ոլորտ մտնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՄՈՆԱ ԿԱՐԵՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 14.04.2022:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 30.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am